

Գ. ԳԻՒԶԱԼԵԱՆ

**Պ Ա Տ Մ ՈՒԹ Ի Ի Ն
ՄԵՐԶԱԻՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ
Ե Ի
Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի**

Ա. Հ Ա Տ Ո Ր

**ՀՆԱԳՈՅՆ ՇՐՋԱՆՆԵՐԷՆ ՄԻՆՁԵԻ
ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ԱՆԿՈՒՄԸ**

—

**Տ Պ Ա Ր Ա Ն
ՀԱՐՈՍԱԳՈՒՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
Պ Է Յ Ր Ո Ւ Թ
1 9 5 1**

ԵՐԿՈՒ ԻՕՍՔ

Հրատարակութեան կու տանք մեր «Մերձաւոր Արեւելիքի եւ Հայաստանի Պատմութեան» առաջին հատորը: Այս նիւթը երկար տարիներ մեզ դասաւանդեր ենք Պէյրութի Հայ ձեմարանին մէջ: Այսպէս ենք ըրեր, որովհետեւ խորապէս համոզուած ենք, որ Հայաստանի պատմութիւնը անբաժանելի մասն է Մերձաւոր Արեւելիքի պատմութեան, որ ան մեկուսացած, կղզիացած երեւոյթ մը չէ, այլ հազար ու մեկ կապերով զօգուած է արեւելեան ժողովուրդներու պատմութեան հետ: Անոնց հետ կապուած ենք մեր ծագումով, մեր լեզուով, մեր քաղաքական հոլովոյթով, մեր հոգեկան հարստութեամբ: Այս ձեռնարկի մէջ մենք փորձենք մեկ կողմէն գծել Մերձաւոր Արեւելիքի ժողովուրդներու պատմութեան ընթացքը՝ համառօտ ձեւով, միւս կողմէն ուշադրութիւն ենք դարձուցեր այն բանի վրայ, թէ ինչով անոնք կապուած են Հայաստանի պատմութեան՝ անոր ընթացքի, մտակոյթի, կրօնի հետ: Եւրոպական միջնակարգ դպրոցներու մէջ արեւելիքի պատմութեան դասաւանդումը՝ այս առումով՝ չի հասկցուիր, ուստի եւ մեզի համար անոնց ծրագիրը անբաւարար է ու թերի: Արեւելիքի պատմութիւնը անոնց համար լոկ մեկ գլուխ է արեւմուտքի՝ Եւրոպայի պատմութիւնը ընդարձակ ձեւով դասաւանդելու համար: Մեզի համար ան պէտք է ըլլայ գլխաւոր առարկան: Հայաստանի պատմութիւնը անբաժանելի մասը համարելով Մերձաւոր Արեւելիքի պատմութեան՝ համոզուած ենք, որ անոր քաղաքական եւ մտակութային դիմագիծը անելի լուսաբանուած կ'ըլլայ: Ասոր հետ միասին Արեւմտեան Եւրոպայի պատմութեան դասաւանդումը մեր դպրոցներու մէջ հիմնովին պիտի փոխուի:

Մենք չենք կրնար դեկավարուիլ Ֆրանսական կամ անգլիական դպրոցներու ծրագրով: Անոնք յարմարցուած են իրենց պահանջներուն: Հայ ուսանողութիւնը պիտի ձեռք բերէ հիմնաւոր ծանօթութիւններ Եւրոպայի պատմութեան մասին. անոր ծանօթ պիտի ըլլայ Եւրոպայի քաղաքական եւ քաղաքակրթական հոլովոյքը, իր հիմնական գծերով: Դասաւանդման ընթացքին ուսուցիչը համեմատութեան եզր պէտք է դնէ արեւելիք եւ արեւմուտքի պատմութեանց մէջ:

Այս հասարակ չկրցանք հրատարակել այնպէս ինչպէս կ'ուզէինք: Կը պակսին նկարները: Թէ Համազգային Ընկերութիւնը եւ թէ Հայ ձեմարանի Հրատարակչականը կարելիք պիտի ընեն երկրորդ հատորը օժտել անհրաժեշտ նկարներով: Գրքին կը կցենք շարք մը քարտեր: Ասոնք մեծ մասամբ վերցուցեր ենք *Jacque Pirenne*-ի *Les Grands Courants de L'Histoire Universelle* — մեծ գործի առաջին հատորէն: Մեկու քարտեր վերցուցեր ենք Հայաստանի մէջ հրատարակուած «Հայ Ժողովրդի Պատմութիւն» ձեռնարկի առաջին հատորէն: Իսկ Տիգրան Մեծի կայսրութեան քարտեր վերցուցեր ենք *Grousset*-ի «Հայաստանի Պատմութիւն» գրքէն:

Գիտենք այս գործի դժուարութիւնները. գիտենք նաեւ անոր պակասութիւնները: Բայց եւ այնպէս կը հրատարակենք այս հատորը՝ համոզուած ըլլալով, որ ներկայ ձեւին մէջ ալ ան կրնայ պիտանի ըլլալ: Ներկայ գիրքը կազմելու ատեն մենք ինկատի ենք ունեցեր, որ ան պիտի ծառայէ նաեւ իբրեւ ընթացանութեան գիրք մեր ժողովուրդի աւելի լայն խաւերուն ինչպէս եւ ձեռնարկ մեր ընկեր ռուսացիչներու եւ ուսանողութեան համար:

Այս հատորին պիտի հետեւի երկրորդը, որ, յոյս ունինք այս տարուայ վերջը յանձնելու տպագրութեան: Ան պիտի ընդգրկէ Մերձաւոր Արեւելքի եւ Հայաստանի պատմութիւնը Հռոմ-պարթեւական պայքարէն սկսած մինչեւ Սելջուկներու արեւելքի մէջ երեւալը՝ այսինքն XI-րդ դարու կէսերը:

Գ. Գ.

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

ՄԵՐՉԱԻՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ԳԱՂԱՓԱՐԸ

Մարդկային հնագոյն քաղաքակրթութիւնները ստեղծուելի են Միջերկրականի տրեւելեան աւազանի շուրջը տարածուող երկիրներուն մէջ՝ Փոքր Ասիոյ, Սիւրիոյ, Փիւնիկէի, Պաղեստինի, Եգիպտոսի մէջ: Հնագոյն ժամանակները՝ այս երկիրներու ժողովուրդները կ'ապրէին մեկուսացած և մեկուսացման մէջ ալ կը մշակէին իրենց քաղաքակրթութիւնները: Բայց աստիճանաբար անոնք դուրս ելան առանձնացումէն, մօտեցան, ճանչցան իրար: Մովը կը միացնէր, կը կապէր այդ երկիրները, հաղորդակից կ'ընէր իրարու: Միջերկրականի շուրջն ապրող ժողովուրդներու քաղաքակրթութիւնը կը թափանցէր հարեւան ժողովուրդներու մէջ, կ'իւրացուէր, կը վերամշակուէր, և կ'ըստեղծուէր, այդպէսով ընդհանուր գծեր, առաջ կու գար Միջերկրականեան քաղաքակրթութիւնը: Ասոր մշակման և տարածման մէջ մասնակից էին ոչ միայն այն ժողովուրդները, որոնք կ'ապրէին ծովեզերեայ երկիրներուն մէջ, այլ նաեւ անոնք, որոնք կը գտնուէին անոնց թիկունքը՝ Հայաստանի, Իրանի, Միջագետքի մէջ: Ասոնք ալ մաս կը կազմէին Միջերկրականեան աշխարհին: Իրենց հասունութեան շրջանին այս երկիրներու ժողովուրդները և տէրերը ճիգ են ըրեր հասնիլ Միջերկրականին, տէր դառնալ անոր արեւելեան աւազանին, իւրացնել անոր բարիքները և մասնակից ըլլալ անոր քաղաքակրթութեան ստեղծումին և վայելքին: Այսպէս են ըրեր Սումէր-Ակադացիները, Բաբելացիները, Կսուրները, Պարսիկները, Հայերն ու Պարթեւները:

Այն երկիրները, որոնք համախմբուած են Միջերկրա-
կանի արեւելքի մէջ և անոր թիկունքը մենք կը կոչենք
Մերձաւուր Արեւելի: Ասոնց շարքէն մենք դուրս կը ձգենք
Եգէյեան կղզիները, Յունաստանը, որոնք մէկ ուրիշ պատ-
մական և քաղաքակրթական աշխարհի մաս կը կազմեն:
Եգէյեան կղզիներու հնագոյն պատմութիւնը առաջին գլու-
խըն է յունական պատմութեան: Ի հարկէ ասոնց պատմու-
թիւնը շատ բաներով կապուած է Փոքր Ասիոյ հետ. բայց
քաղաքական և քաղաքակրթական տեսակէտէն ան Յու-
նաստանի պատմութեան մաս կը կազմէ: Իսկ այս վերջինն
ալ Եւրոպայի պատմութեան առաջին գլուխն է:

ԵԳԻՊՏՈՍԻ ՏԵՂԸ.— Ատոր փոխարէն Եգիպտոսը անբա-
ժանելիօրէն միացած է Մերձաւոր Արեւելքի հետ: Ըլլալով
ափրիկեան երկիր ան իր դէմքը դարձուցած է դէպի Պա-
ղեստին, Փիւնիկէ, Սիւրիա, Եփրատ: Ան Սահարայի և Լի-
պիայի անապատներով կտրուած է Ափրիկէէն. հարաւէն ան
սահմանակից է Նուբիային և Բուշին, այսօրուայ Սուտա-
նին և Հապէշիստանին, որոնց հանդէպ ան միշտ պաշտպա-
նողական դիրք է բռնել կամ անոնց ուժերէն օգտուել է
իր ռազմական հզօրացման և նիւթական հարստացման հա-
մար: Անոր քաղաքականութիւնը ձգտել է Մերձաւոր Ա-
րեւելքի արեւմտեան մասի՝ Արգաապրե Կիսալուսնի տի-
րապետութեան. անոր մշակոյթը խորապէս ներշնչուել է
Միջագետքի քաղաքակրթութենէն. անոր բնակչութիւնը
ամենէն քիչ ափրիկեան էր. ափրիկեան երկիրներէն թէեւ
ամենէն աւելի ծովայինն էր, բայց ան երբեք ծովերու վրայ
այն հզօրութեան չհասաւ, ինչ որ Փիւնիկէն, Կրէտէն, Յու-
նաստանը:

ԻՒՆԱՆ.— Մերձաւոր Արեւելքի ամենէն արեւելեան մասը
իրանն է, որ սահմանակից է Հնդկաստանին և Միջին Ա-
սիոյ՝ արիական Հնդկիներուն և Միջին Ասիոյ թուրանա-
կաններուն: Անոր արեւելեան սահմաններուն վրայ տեղի
են ունեցել իրանի և թուրանի դարաւոր կռիւնները: Իրա-
նի բարձրաւանդակի արեւմտեան մասն է միայն, որ հղեր

է օրրանը քաղաքակիրթ կեանքի՝ նախապատմական ժամանակներէն սկսած: Այդ մասը կից է Միջագետքին և անոր վրայով ալ Միջերկրականին: Երբ Իրանի մէջ ստեղծուեր է անկախ և հզօր պետութիւն՝ ապա անոր առաջին քայլերէն մէկն եղեր է՝ Միջագետքին տիրել և դէպի Միջերկրական ուղղուելը: Եւ այս մէկ քանի անգամներ: Այսպէս կ'ընէին էլամներն ու Մարերը, Աքէմէնեան Պարսիկները, Արշակունի Պարթեւները և Սասանեան Պարսիկները: Իրանի պատմութիւնը սերտօրէն կապակցութիւն ունի Մերձաւոր Արեւելքի երկիրներու քաղաքական և քաղաքակրթական պատմութեան հետ:

ՍԱՀՄԱՆՆԵՐԸ.— Այժմ որոշենք Մերձաւոր Արեւելքի սահմանները: Արեւելքէն անոր սահմանը Հինդուկոշ և Սողոմոնեան լեռնաշղթաներն են: Հոս ան կը բաժնուի Միջին Ասիայէն: Այդ սահմանէն այն կողմը լեզուական, ազգագրական և մշակութային ուրիշ աշխարհ է՝ թուրանական աշխարհը, որուն հանդէպ Իրանը հետեւեր է պաշտպանողական քաղաքականութեան: Իրանը, հարաւ-արեւելքէն, Ինդոս գետով կը բաժնուի Հնդկաստանէն, ուր կ'ապրէին Պարսիկներուն լեզուակից և ցեղակից Հնդիկները: Իրանի բարձրաւանդակի միջին մասերը ընդարձակ անապատ մըն է, իսկ անոր շուրջ կը տարածուի տափաստան մը շատ աւելի ընդարձակ: Անջրդի անապատին կը յաջորդէ սակաւաջուր տափաստանը, ուր միայն գարնանային աճիւններուն կեանք կայ:

Այս վայրերու մէջ և իր արեւելեան սահմաններու վրայ Իրանը ունի վաչկատուն, թափառիկ կենցաղ ունեցող ցեղեր, որոնք պատմութեան մէջ միայն արշաւողներ են և աւարողներ: Հիւսիսէն՝ Մերձաւոր Արեւելքի սահման կը կազմեն Կասպից և Սեւ ծովերը և անոնց մէջ ինկած Կովկասեան լեռնաշղթան: Այսպէս՝ անոր մէջ կը մտնեն Հայաստանը, Վրաստանը և Ատրպէյճանը, հին Աղուանից աշխարհը: Այս երեքը միասին՝ Մերձաւոր Արեւելքի հիւսիսային սահմանին կից՝ կը կազմեն ուրոյն մշակութային

աշխարհ մը, Կովկասեան ասիաերհը: Կովկասեան լեռներէն զէպի հիւսիս կը տարածուին Հարաւային Ռուսաստանի տափաստանները, Դանուբէն մինչեւ Վոլկա և աւելի արեւելք, ուր շատ հին ժամանակներէն աճեր ու բազմացեր են վաշկատուն և անասնապահ ժողովուրդները: Ասոնք ծովերով և լեռնային կիրճերով շարունակ կը թափանցեն հարաւ, կամ հարուստ աւար ձեռք բերելու, կամ բարեբեր հողեր գրաւելու համար: Հարաւեան Մերձաւոր Արեւելքի սահմանն է Պարսից ծոցը, Օմանի և Կարմիր ծովերը: Ասոնք Հնդկաց Ովկիանոսի մասերն են, որ մխրճուեր են ցամաքի մէջ, կազմելով Արապիա թերակղզին: Այս վերջինը անապատային աշխարհ մըն է և դեր մը չէ խաղացեր հին արեւելքի պատմութեան մէջ: Անոր ծովամերձ շրջանները միայն առեւտրական կապերով միացած են եղած կարաւանային և ծովային ճամբաներով Եգիպտոսի և Արգասաբեր Կիսալուսնի երկիրներուն հետ: Ափրիկէի մէջ Եգիպտոսը սահմանակից է Հապէշիստանին և Սուտանին, որոնց հետ ան մշակեր է տնտեսական-առեւտրական յարաբերութիւն: Արեւմուտեան Մերձաւոր Արեւելքի սահմանը Միջերկրական ծովն է իր բաժանմունքներով՝ Եգէյեան և Մարմարա ծովերով: Ան թէպէտ կը բաժնուի Պալքաններէն, սակայն միւս կողմէն այս ծովերը հատման, բաժանման գիծ չեն: Եգէյեան ծովը, իր բազմաթիւ կղզիներով, կամուրջ մըն է Փոքր Ասիայէն Յունաստան անցնելու: Իսկ Միջերկրականի արեւելեան ջուրերը կը միացնեն Եգիպտոսը՝ Պաղեստինի, Փիլնիկէի, Կիպրոսի և Կրէտէի հետ: Ծովն է, որ արեւելքի մէջ ստեղծեր է մշակութային և քաղաքական միասնութիւն, անոր փերուն վրայ են կառուցուեր, բարձրացեր և քայքայուեր մեծ կայսրութիւնները: Միջերկրականի արեւելեան փերուն է տեղի ունեցեր ազգերու, լեզուներու, ժողովուրդներու հանդիպումը, միաւորումը և նոր ազգերու, ժողովուրդներու յառաջացումը: Ասոնք իրենց հոլովոյթի նախնական-մեկուսացած շրջանը ապրելէն և հասունալէն յետոյ կու գան հանդիպելու, միանալու, Միջերկրական ծովուն շուրջ և

ատնդծելու Արեւելեան ժողովուրդներու մէկ և ընդհանուր պատմութիւն:

Երկու գօթի.— Այս սահմաններուն մէջ տարածուող ընդարձակ երկիրները մակերեսի, կլիմայի, ջրաբաշխութեան, տնտեսական հարստութեան, ինչպէս և ժողուրդներու, լեզուներու, կրօններու և քաղաքական կառոյցի բազմապատկութիւն կը ներկայացնեն: Շատ մը տեսակէտներով տարբեր են հիւսիսը և հարաւը, արեւելքը և արեւմուտքը, բայց բնական-աշխարհագրական տեսակէտէն այս երկիրները մենք կրնանք բամնել երկու գօտիներու: Հարաւը՝ Անապասայի գօթին Է, հոն անապատն է որ կ'իշխէ: Մերձաւոր Արեւելքի անապատային գօտին մեկուսացած աշխարհ չէ, այլ մէկ մասն է այն մեծ անապատային շղթային, որ կ'ըսկսի Հիւսիսային Ափրիկէի արեւմուտքէն, Ատլանտեանի մօտերէն և կը շարունակուի գէպի արեւելք: Ան կ'ընդմիջուի Նեղոսի շուրջը, Եգիպտոսի մէջ: Հոս՝ Նեղոսը ընդարձակ հողաչերտ մը կ'անջատէ, կ'ապատարէ անապատէն, կը դարձնէ այդ արգաւանդ երկիր: Բայց Նեղոսի ազդեցութեան գիծէն այն կողմը նորէն կ'ըսկսի անապատը. Ափրիկեան հողի վրայ՝ մինչև Կարմիր ծով՝ ան կը կազմէ արապական անապատը և ասիական հողի վրայ աւելի ընդարձակ չափով՝ Արապիա անապատային թերակղզին: Արապիան եռանկիւնաձեւ մխրճուած է հիւսիս, գրեթէ մինչև Եփրատ: Անոր հիւսիսային մասը կը կազմէ Սիւրիական մեծ անապատը: Այս լայնատարած աւազուտ և անջուր աշխարհը նորէն կ'ընդհատուի Միջագետքի մէջ՝ Եփրատի և Տիգրիսի ջրերով, որոնք կու գան Հայաստանի լեռներէն: Հոս կ'ըստեղծուի բնակելի և հարուստ քնդարձակ հողաչերտ մը: Ան հնագոյն ժամանակներէն՝ եղած է մարդկային հաւաքման և աճումի վայրերէն մէկը: Դէպի արեւելք՝ Իրանի կեդրոնական մասին մէջ, կը տարածուի Լուխ անապատը, որ կը բաժնէ Իրանը՝ արեւմտեան և արեւելեան թիւերու, Միջագետքի և այդ անապատի մէջ ինկած Լեռնային աշխարհի մէջ է, որ սաղմուաւորուեր է Իրանի մշակոյթը: Զապրոչեան

զուգահեռ լեռնաշղթաները, անոնց մէջ ինկած գետահովիտ-
ները, ջրոտատ լանջերը, բնական արօտատեղիները՝ այն
վայրերն են, ուր կեդրոնացեր է Իրանի բնակչութիւնը և
սաղմնաւորեր է հին քաղաքակրթութիւնը: Իրանի արեւ-
մրտեան այս «քաղաքակիրթ գաւառները» կտրուած են
բարձրաւանդակի արեւելեան մասերէն և մօտ են արեւմտ-
եան քաղաքակիրթ երկիրներուն՝ Միջագետքին, անոր հետ
ալ Միջերկրականի եզերքներուն: Աւելի արեւելք՝ Միջին
Ասիոյ մէջ ստեղծուեր է լայնածաւալ լեռնային աշխարհ մը,
ընդարձակ դաշտերով, որոնք աստիճանաբար վերածուեր են
տափաստաններու և անապատներու. ասոնցմէ է Մոնղոլա-
կան անապատը մինչեւ Մանչուրիոյ սահմանները և տեղ
տեղ մինչև Խաղաղ ովկիանոս:

Այսպէսով անապատային մէկ մեծ գօտի կը ձգուի Ատ-
լանտեան ովկիանոսէն մինչև Խաղաղ ովկիանոս՝ առնելով
իր մէջ Հիւսիսային Աֆրիկէն և Հարաւային ու Միջին
Ասիան: Անապատային այս գօտին մենք կը կոչենք Ափրիկ-
ասիական գօտի: Ան միապաղաղ, չընդմիջուող տարածութիւն
մը չէ. քանի մը տեղեր ան կ'ընդհատուի, կազմելու
համար օազիսներ: Այդպիսի օազիսներ են՝ Նեղոսի հովիտը,
Եփրատի և Տիգրիսի հովիտը, Միջին Ասիոյ մէջ Սիր-Տա-
րիայի և Ամու-Տարիայի հովիտները: Եթէ չըլլային այս
մեծ գետերը չէին ըլլար նաեւ օազիսները և ովկիանոսէն
ովկիանոս կը տարածուէր անապատային միապաղաղ աւա-
զուտ և անջրդի տարածութիւն մը՝ անապատային գօտի:
Բայց գետերը, մթնոլորտային տեղումները, ղաղբերները,
հոս առաջացուցեր են ջրոտատ շրջաններ, աճելավայրեր,
որոնք հնագոյն մշակոյթի բնագաւառներ են եղեր:

ԱՐԳԱՍԱՐԵՐ ԿԻՍԱԼՈՒՍԻՆ.— Մերձաւոր Արեւելքի մէջ
անապատային այս գօտին օղակուած է պայտածեւ, կիսա-
լուսնի ձևու ունեցող արգասաբեր տարածութեամբ մը: Ան
երեք կողմերէն իր մէջ կ'առնէ, կը սեղմէ սիւրբական ա-
նապատը: Այս կիսալուսնի արեւմտեան թեւը կը կազմեն
Պաղեստինը, Փիւնիկէն, Սիւրիոյ այն մասերը, որոնք բնա-

կելի են, ունին բուսական և կենդանական հարուստ աշխարհ: Ասոր մէջ են Յորդանանը, Որոնդէսի հովիտը Քնահարիան: Արգասաբեր կիսալուսնի այս թեւը իր արգասաբերութիւնը կը պարտի Միջերկրականին, ուրկէ հսկայական գոլորշիացում կը կատարուի, կը խտանայ շրջապատող լեռներու վրայ և որպէս անձրեւ կը թափի եղբայրներուն վրայ և երկրի խորքերը: Այս անձրեւները կ'ըսկսին Նոյեմբերին և կը շարունակուին մինչեւ Ապրիլ: Այս անձրեւային եղանակն է՝ աշնան և ձմրան ամիսները և մինչեւ գարնան սկիզբները: Միջերկրականի այս կենսատու շունչը կ'ըզգացուի Պաղեստինի, Փիւնիկէի ամբողջ տարածութեան վրայ Միւրիոյ մէջ. անոր մեծ քաղաքները կառուցուած են մըթնոլորտային տեղումներու գիծէն ներս կամ անապատային գիծի վրայ, որով անոնք կը դառնան անապատին կից մէկ մէկ օազիսներ: Ամանոսի շրջանը, Տաւրոսի լանջերը, մինչեւ Եփրատի միջին հոսանքը՝ կեանք կ'ըստանան Միջերկրականի ջուրերէն: Այսպէսով Միջերկրականը մշտական կը պայքարի անապատի հետ, ինչպէս Եգիպտոսի մէջ Նեղոսը, Միջագետքի մէջ Եփրատը և Տիգրիսը: Բնութեան մէջ տեղի ունեցող այս կռիւը, մրցութիւնը կ'արտացոլայ հոն ապրող ժողովուրդներու գրականութեան, կրօնական գաղափարներու, աստուածներու և հերոսներու շուրջ ստեղծած առասպելներու և աւանդութիւններու մէջ: Արգասաբեր կիսալուսնի արեւմտեան այս թեւը Եփրատի վրայով կ'էջնէ հարաւ-արեւելք և հոն՝ Միջագետքի մէջ կը կազմէ Կիսալուսնի արեւելեան թեւը, որ իր մէջ կը պարփակէ ամբողջ Միջագետքը մինչեւ Պարսից ծոց: Միջերկրականի անձրեւները հոս չեն հասնիր, բայց կեանքի և մշակոյթի աղբիւրը հոս Եփրատի և Տիգրիսի ջուրերն են: Այս երկու գետերը կը պայքարին սիւրիական և արապական անապատներուն դէմ իրենց ջուրերով, տիզմերով: Այս երկու թեւերը իւրաքանչիւր կը միանան Եփրատեան գիծով՝ կազմելու համար կիսալուսնի ձեւ ունեցող տարածութիւն մը, որ կ'օղակէ իր մէջ արեւմտաքէն, հիւսիսէն և արեւելքէն սիւրիական ա-

նապատը: Հիմ Արեւելիի պատմութեան թելերը կը հիշատելն Արգասաբեր կիսալուսնի շուրջը: Ան հիւսիսէն կրթնած է Տաւրոսեան լեռնաշղթային: Ասոր և Եփրատի մէջ ինկած է ընդարձակ քափասաւանային գօտի մը, ուր բնակչութիւնը հաւաքուած է բազմաթիւ աղբիւրներու, գետակներու, ջրհորներու շուրջը: Եփրատի երկու եզերքներուն նստած այս տափաստանները կը ծածկուին եղանակային բուսականութեամբ. դարնան՝ ամին տեղ կը ծածկուի խոտերով, ծաղիկներով: Տափաստանը բնական արօտատեղի է: Անապատի վաշկատուները դարնան իրենց հօտերով հարաւէն կը բարձրանան հիւսիս: Մայիսի վերջերուն խոտը կ'ընապոփտափաստանները կը դառնան անապատ, ջուրը կը պակսի, անձրեւներ չեն գար, արեւը կը կիզէ ամին ինչ, վաշկատուները կը դիմեն աւելի հիւսիս՝ մինչեւ Տաւրոսեան լեռնաշղթան: Միայն աղբիւրներու, գետերու և ջրհորներու շուրջը համախմբուած փոքրիկ հասարակութիւն մը կը մնայ հոն բնակուելու տարուայ բոլոր եղանակներուն:

Լեռնային գօտի.— Տաւրոսը բաժանման գիծ մըն է՝ անկէ հիւսիս կը տարածուի Մերձաւոր Արեւելքի Լեռնային գօտին: Անոր մէջ կը մտնեն Փոքր Ասիան, Հայաստանը, Իրանի բարձրաւանդակը: Այս գօտին ալ մեկուսացած չէ՝ ան միջին օղակն է Յւրոպ-ասիական մեծ լեռնաշղթային որ կ'ընկսի Ատլանտեանի մօտերէն և կը վերջանայ Խաղաղականի ավերուն: Անոր գլխաւոր մասերն են հարաւային Նորոպայի լեռնաշղթաները, Փոքր Ասիոյ լեռները, Հայաստանի լեռնահանգոյցը, որ զանազան թեւերու բաժնուելով կը մխրճուի դէպի Իրանի բարձրաւանդակը և կ'առնէ իր թեւերուն մէջ արեւմուտքէն, հարաւէն և հիւսիսէն: Ապա այս լեռնագօտիները նորէն կու գան, կը համախմբուին, կը միանան Միջին Ասիոյ մէջ Հինդուկուշ, Սողոմոնեան լեռներու մօտ. ապա հոսկէ ալ նոր թեւերու բաժնուած կ'ընթանան դէպի արեւելք, հիւսիս-արեւելք և հարաւ-արեւելք և կը վերջանան Խաղաղական ովկիանոսի ավերուն: Հայաստանի մէջ այս լեռները կը ծաւալին զանազան ուղղու-

Թեամբ ստեղծելով Հայկական լեռնաշխարհը, որու միջին բարձրութիւնն է 1500 մետր ծովի մակերեւոյթէն. այս միջին բարձրութեան չի հասնիր ոչ Փոքր Ասիան ոչ ալ Իրանը: Հայաստանը լեռնակղզի մըն է՝ լեռնային զօտիին ճիշդ կեդրոնը: Ահա թէ ինչ որ կը կազմէ անոր արժէքը ռազմաքաղաքական տեսակէտէն: Այդ դիրքին շնորհիւ է նաեւ անոր ջրաբաշխական արժէքը: Ան Մերձաւոր Արեւելքի ջրաբաշխութեան կեդրոններէն մէկն է. ան ջուր կը մատակարարէ Միջագետքին, Կասպից ծովին, Փոքր Ասիոյ վրայով՝ Սեւ ծովին: Փոքր Ասիան, ինչպէս և Իրանը իրենց եզրային մասերու վրայ շրջապատուած են լեռներով, որոնք իրենց զրոշմը կը դնեն անոնց կլիմայի, բուսական աշխարհի, և մարդկային կեդրոնացումներու վրայ: Կասպից ծովի հարաւային ափերուն լեռները ծածկուած են անտառներով. հիւսիս-արեւմուտքը՝ լեռնահովիտներ և դաշտեր շատ կան, հարաւը՝ Պարսից ծոցի և ծովու ուղղութեամբ ձգուող լեռները լերկ են, ժայռոտ. կեդրոնը՝ ընդարձակ անապատ է. հոն երբեք մթնոլորտային տեղումներ չեն ըլլար: Ասոր հետեւանքով Պարսից պատմութեան խոշոր դէպքերը, Իրանի մշակոյթի զարգացումը առաջ են եկեր Կասպից ծովու, Զագարոսիան լեռներու և Պարսից ծոցի մէջ ինչպէս պայտածեւ շրջանին մէջ, այսինքն լեռնային, գետային և դաշտային մասերու մէջ, ուր առատ ձիւն կը տեղայ, ուր մեծ ու փոքր գետեր կան, աղբիւրներ, հովիտներ ու դաշտեր: Աշխարհագրական-քնական այս պայմաններու հետեւանքով է, որ Պարսկաստանը իր դէմքն ուղղեր է Եփրատի վրայով դէպի Միջագետք՝ և դէպի Արգասաբեր Կիսալուսին և Միջերկրական: Փոքր Ասիան ալ օղակուած է լեռնաշղթաներով, որոնք աստիճանաբար կ'իջնեն Եգէյան ծովու ափերը, կը վերածուին դաշտերու. ուրկէ, պատմութեան ընթացքին, մարդկային մեծ թափանցումներ տեղի են ունեցեր դէպի Փոքր Ասիոյ խորքերը: Սեւ ծովի եզրային լեռնաշղթաները թոյլ չեն տար որ հիւսիսէն հովերը խոր թափանցեն երկրի ներսը. ինչպէս և նոյն դերը կը կատարեն Միջերկրականի եղև-

րային լեռները: Ասոր հետեւանքով Փոքր Ասիոյ կեդրոնը անկենդան տափաստան է: Մինչ Հայաստանը լեռնաշխարհ մըն է, Իրանի կեդրոնը անապատ է, Փոքր Ասիան տափաստան է, և Եւրի հարաւ Միջագետքը՝ դաշտագետին: Այս երեքին՝ օսփաստանի, անապատի, դաշտագետնի վրայ կ'իջնէ լեռնակղզիք: Ոչ միայն կ'իջնէ, այլեւ կենդանութիւն կուտայ, ջուր կը մատակարարէ անոնց: Մերձաւոր Արեւելքի այս երկու գօտիները, մին լեռնային միւսը հարթ, սերտօրէն կապուած են իրարու հետ. այդ կապը աշխարհագրական է, ջրաբաշխական, տնտեսական և ազգագրական:

ՏԱՓԱՍՏԱՆԱՅԻՆ ԳՕՏԻ.— Այս գօտին զուբս է Մերձաւոր Արեւելքի աշխարհագրական սահմանէն, բայց կապուած է անոր պատմութեան հետ սերտօրէն: Կովկասեան լեռներէն հիւսիս, Դանուբէն մինչեւ Ուրալ, Կասպից ծով և Վոլկա դետը կը տարածուի անհուն տափաստաններու գօտի մը, որ հնագոյն ժամանակներէն աճելավայրն է եղեր վաչկատուն անասնապահ ժողովուրդներու: Այս տարածութեան վրայ դարերու միասնական կեանքի հետեւանքով առաջացեր է լեզուական, քաղաքակրթական և ազգագրական միութիւն մը: Դանուբ-Վոլկայի ցածրադիր այս տարածութիւնը, տափաստանը նոյնպէս մեկուսացած երեւոյթ մը չէ, այլ մասն է դաշտային այն տարածուն գօտիին որ կ'ըսկսուի Ատլանտեանի մօտերէն, Ֆրանսայէն, կը շարունակուի Գերմանիոյ մէջ, ապա կը բռնէ ոռոսական ամբողջ դաշտագետինը, Սիպերիան և կը վերջանայ Խաղաղակի արեւելին: Ամեն տեղ ան արգաւանդ հող է, տեղ մը ծածկուած ձիւնի հաստ շերտերով, ուրիշ տեղ մը «սեւ հողերով», երբեմն մեծ ու փոքր գետերէ ողողուած դաշտերով, երբեմն ալ անծայրածիր տափաստաններ կը ներկայացնէ: Սեւ և Կասպից ծովի հիւսիսային եզերքները տափաստաններ են: Երկրաբանական հնագոյն ժամանակներէն ան կորսնցուցեր է իր աճման կարողութիւնները, և դարձեր է մեռած հողամաս: Նախապատմական շրջանին այդ տափաստանները եղեր են հաւաքման կեդրոն բաղմամբ և բաղմերանդ ցեղերու, որոնք միախառ-

նուեւլով ստեղծեր են լեզուական միութիւն մը : Բնական աճման հետեւանքով այդ ցեղերէն շատերը լքեր են իրենց հայրենիքը : Այս վերջիններէն զգալի մաս մը դիմեր է հարաւ՝ դէպի Մերձաւոր Արեւելքի լեռնային գօտին, և հարաւի մեծ գետահովիտները, ուր իրենց կը քաշէին մեղմ կլիման, արագասաբեր հողերը, Միջերկրականի գեղածիծաղ ամերը : Տափաստանային գօտին մարդկային մեծազանգուած հասարակութեան շտեմարան մըն է, ուրկէ պարբերաբար դուրս կուգան մեծ ու փոքր հոսանքներ՝ ողողելու, աւարելու հարուստ բարձր մշակոյթի երկիրները : Մերձաւոր Արեւելքի լեռնային գօտին, Արգասաբեր կիսալուսնին հետ եղեր է նշանակէտը հարաւէն և հիւսիսէն եկող վաչկատուներու, անասնապահներու : Ասոնք իրարու կը հանդիպէին Միջերկրականի եղերքներուն, Եփրատի ամերուն, Տաւրոսի և Զագրոսեան լեռներու լանջերուն

—————

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ե Գ Ի Պ Տ Ո Ս

Ա. ԳԼՈՒԽ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՄԻՋՍՎԱՅՐԸ

ՍԱՀՄԱՆՆԵՐ.— Եգիպտոսը Մերձաւոր Արեւելքի Անապատային Գօտիի երկիրներէն մէկն է: Ան կը գտնուի Ափրիկէի հիւսիս-արեւելեան անկիւնը: Հիւսիսէն ան շրջապատուած է Միջերկրական ծովով արեւելքէն Կարմիր ծովով: հիւսիսէն նեղ հողաշերտով մը ան միացած է ասիական երկիրներուն՝ Պաղեստինին և Սինայի անապատին: Հարաւէն ան սահմանակից է հին Նուբիային, այժմեան Սուտանին Եգիպտոսը՝ Նուբիայի բնական շարունակութիւնն է. երկուքն ալ տարածուած են Նեղոսի ասփերուն, երկուքն ալ անոր կը պարտին իրենց գոյութիւնը: Հարաւային մասին վրայ Նուբիայի և Եգիպտոսի բաժանման գիծին վրայ Նեղոսի առաջին սահանքն է: Արեւմուտքէն ան սահմանակից է Լիպիական անապատին: Լիպիան և Նուբիան Եգիպտոսին կուտային մարդուած վարձկան զինուորներ, իսկ Նուբիան իր և հարաւային Ափրիկէի նիւթական բարիքները: Արապիան և Լիպիան վաչկատուն անասնապահներու ու որսորդներու հայրենիքն են եղեր միշտ և վտանգաւոր դրացիներ Եգիպտոսի համար: Անոնց բնակիչները նախանձոտ աչքերով են դիտեր Նեղոսի շուրջը զարգացող

բարձր քաղաքակրթութիւնը և երբեմն ալ յարձակեր են Եգիպտոսի վրայ՝ սկիզբը աւարելու և աւերելու, իսկ հետագային՝ նաեւ տիրապետելու համար:

ՆՆՂՈՍԸ.— Եգիպտոսը հարուստ օազիս մըն է, որ տարածուած է Նեղոսի ստորին հոսանքի շուրջը: Նեղոսը մօտաւորապէս 6200 քիլոմետր երկայնութիւն ունի, որուն միայն մօտ 1200 քիլոմետրն է, որ կը պատկանի Եգիպտոսին: Ան սկիզբ կ'առնէ Ափրիկէի հարաւ-արեւելիան լիճերէն, կը հոսի Սուտանի մէջէն, ուր բազմաթիւ մեծ ու փոքր գետեր կ'ընդունի իր մէջ, կը կտրէ Սահարան, կը մտնէ Եգիպտոս և կը թափի Միջերկրական ծով: Կէս ճանապարհին, ան՝ Հապէշիստանի լեռներէն կ'ըստանայ մեծ գետ մը՝ Կապոյտ գետը: Այդ գետն է, որ Հապէշական լեռներէն կը բերէ մեծ քանակութեամբ տիղմ բուսահող կը խառնէ Նեղոսի ջուրերուն և կը տանի, կը տարածէ Եգիպտոսի հողերուն վրայ: Այս գործողութիւնը կատարուեր է հարիւր-հազարաւոր տարիներու ընթացքին, որու հետեւանքով ստեղծուեր ու կառուցուեր է Եգիպտոսը, յատկապէս անոր Հիւսիսային մասը՝ Տելլահն և ծածկուեր է հողի հաստ շերտով, որ տեղ տեղ կը հասնի մինչեւ երեսուն մետր խորութեան:

ՎԵՐԻՆ ԵԳԻՊՏՈՍ.— Աշխարհագրորէն Եգիպտոսը կը բաժնուի երկու մասի՝ Վերին և Ստորին Եգիպտոս: Վերին Եգիպտոսը կ'ըսկսի Ասուանի մօտերէն. առաջին սահանքէն և կը հասնի մինչեւ Մեմֆիսին, Եգիպտոսի հին մայրաքաղաքին, որ կը գտնուէր երկու Եգիպտոսներու միացման կէտին վրայ: Շուրջ 950 քիլոմետր երկարութիւն ունինեղ հովիտի մը ձևով, որու լայնութիւնը երբեմն միայն կը հասնի երեսուն քիլոմետրի, իսկ երբեմն կը նեղնայ, չորահինգ քիլոմետրի: Հոս Նեղոսը կը հոսի զուգահեռ լեռնաշղթաներու մէջէն, որոնք արեւմուտքէն և արեւելքէն կը սեղմեն զայն իրենց մէջ և թուժք կը կանգնին անոր ծաւալման դէմ: Վերին Եգիպտոսի տարածութիւնը շուրջ 9000 քառ. քիլոմետր է: Այդ նեղ շերտը միայն շահագոր-

ծելի է, մնացեալ մասը անուպատ է: Հոս Նեղոսը չըջապատող լեռները բարձր չեն, հազիւ երկու հարիւր մեթրի կը հասնին: Վերին Եգիպտոսը կլիմայով կատարեալ Ափրիկէ է. տաք է և չոր. երբեք անձրեւ չի տեղար. արեւը կը կիզէ, կը խանձէ ամեն ինչ. ինքն է այդ չըջանի տէրն ու տիրականը: Երկինքը ջինջ է և պայծառ. ոչ մէկ ամպ՝ տարուայ բոլոր եղանակներուն:

ՏԵԼԴԱՆ.— Հիւսիսը՝ Մեմֆիսի մօտերը Նեղոսը չըջապատող լեռները կ'իջնան, կը հաւասարուին հարթութեան և ան այլեւս իր տարածման, լայնացման առաջ արգելքներ չի գտներ, և կը հօսի հարթ և հաւասար տարածութեան վրայ: Հոս անոր ջուրերը բազմաթիւ թեւերու կը բաժնուին, բայց միայն երեք գլխաւոր թեւերն են որ կը հասնին ծով: Տելզայի մէջ անոր երկարութիւնը երկու հարիւր յիսուն քիլոմեթր է: Երկրաբանական շատ հին շըրջանին Հիւսիսային կամ Ստորին Եգիպտոսը եղեր է Միջերկրական ծովի մէկ մասը, ընդարձակ ծովախորշ մը: Աստիճանաբար միայն ան կազմուեր է, դարձեր է հողաչերտ մը՝ շնորհիւ Նեղոսի բերած տիղմերուն: Հողը լեցունելով ծովախորշին մէջ, Նեղոսը պայթարեր է ծովուն հետ և հազարաւոր դարերու աշխատանքով ստեղծեր է այսօրուայ Տելզան: Այս առումով ճիշդ է հիներու որակումը՝ թէ «Եգիպտոսը Նեղոսի ընձան» է, անոր կառուցածը: Տելզան մօտ 23.500 քիլոմեթր տարածութիւն ունի: Ան վերին Եգիպտոսի շարունակութիւնն է, բայց ամեն տուեալներով տարբեր է անկէ: Ան Միջերկրականեան երկիր է, կլիման ծովային է. երբեմն անձրեւներ կը տեղան. ընդարձակ է և մեծ. հարուստ է և առատ, այս պատճառով ալ աւելի վտանգուած է: Վերին Եգիպտոսը Ափրիկեան երկիր է. փակ է դուրսի համար. Տելզան ընդհակառակը կը նայի ծովուն և անոր վրայով ալ կը միանայ Մերձաւոր Արեւելքի երկիրներուն և յունական կղզիներուն:

ՆԵՂԱՍԻ ՀՈՍԱՆՔԸ.— Նեղոսի ջուրերէն է կախուած Եգիպտոսի կեանքը. Յունիսի 20-ին Նեղոսի հեղեղումները կը

հասնին Եգիպտոսի սահմանը: Բովանդակ ժողովուրդը անոր
ժամանումը կը դիմաւորէ ցնծութեամբ: Նեղոսի յորդում-
ներու քանակէն է կախուած Եգիպտոսի բարգաւաճումը:
Հոռոմէացի Պլինոսը այսպէս կը գրէր այդ մասին. «Տաս-
ներկու արմաւնկալափ ջուրը սով կը բերէ. տասերեքը՝
բաւարար է, տասչորսը՝ ուրախութիւն կը պատճառէ, տաս-
նըհինգը՝ ապահովութիւն, տասնըվեցը՝ առատութիւն»:
Յորդացած Նեղոսը Տելդայի մէջ դուրս կուգայ իր ավի-
րէն, կը ծածկէ ջուրի տակ ամբողջ երկիրը: Անոր ջուրե-
րէն ազատ կը մնան միայն գիւղերն ու քաղաքները, որոնք
կը կառուցուէին բնական կամ արհեստական բարձրունքնե-
րու. բլուրներու վրայ: Հեղեղումներու ժամանակ անոնք
կը նմանէին մէկ մէկ փոքր կղզիներու, իսկ Նեղոսն ալ
մէկ տարածուն ծովի. ինչպէս իրենք՝ Եգիպտոսիք կ'ըսէին:
Գետի յորդացումը իր բարձր աստիճանին կը հասնէր Սեպ-
տեմբերին. ան կը բերէր իր հետ առատ ջուր, խոտ, տիղմ,
ձկներ, կենդանական մասեր, բուսահող և այդ բոլորը կը
տարածէր Տելդայի հողի վրայ, շերտ մըն ալ աւելցնելով
արգասաբեր հողին: Սեպտեմբերի կէսէն կ'ըսկսի ջուրի
քաշուիլը և Նոյեմբերին կը հասնի իր բնական հունին:
Ատկէ ետքն է, որ կ'ըսկսի մարդու աշխատանքը, առանց
որուն Նեղոսի յորդացումն աւելի վնասներ կը պատճառէ,
քան օգուտ: Կ'ըսկսի վարուցանքը: Ամենէն նախնական
չրջանին հողը չէին հերկեր, այլ թոց, խոնաւ հողին մէջ կը
նետէին հատիկները և անասունները դուրս կը հանէին և
կը տորէին այդ սերմերը: Այդ կերպով հացահատիկները
խոր կը թաղուէին հողի մէջ: Յետոյ միայն աւելի ուշ մար-
դը հողը կը փորէր բրիչով, իսկ աւելի ետքը բահ ու բրիչը
փոխարինեց արօրը՝ իր լծկան ձգներով: Ան աւելի խոր կը
փորէր, աւելի շատ գործ կը տեսնէր և մարդու համար
նուազ յոգնեցուցիչ կը դառնար գործը, աշխատանքի
մէկ մասը լծկան եզները կ'ընէին: Չորս ամիսէն մարդը
կ'ըստանար առատ բերք: Եգիպտոսը միայն երեք եղանակ-
ներ կը ճանչնար՝ համաձայն Նեղոսի ջուրերու յորդացման

և մարդու աշխատանքին. յորդումի, ցանքի և կալսի եղանակ: Բերքի հասունացումէն և հաւաքումէն յետոյ կ'ըսկսին տաքերը, կը փչէ անապատի խորշակը, կը խանձէ, կը մեռցնէ ամեն կենդանութիւն: Նեղոսի ջուրը կը պակսի, կը նուազի: Կարծէք անապատը կոիւ կը յայտարարէ օաղիսին դէմ: Սակայն Յունիսին Նեղոսը նորէն կ'ըսկըսի յորդիւ և նորէն Եգիպտոսը կեանք կ'ըստանայ, կը վերածնուի: Մահը՝ կը պարտուի, բուսականութիւնը, հացահատիկը նորէն կ'աճին, մարդիկ կ'ուրախանան և աշխատանքը կ'եռայ:

ԱՆՎՐԱՒԱՐՁՈՒՄԸ. — Այս գործողութիւնը, անապատի և Նեղոսի յաւիտենական այս պայքարը, տեղ է գտեր եգիպտական ժողովրդական վէպերու մէջ, ստեղծեր է գեղեցիկ պատմութեանքներ կրօնական երգեր, շարականներ՝ նուիրուած Նեղոսին՝ կենդանութեան և բարութեան ուժին:

Նեղոսի հետ զուգընթաց՝ մայր հողն է արգասաբերութեան ուժը, ան է անուցողը մարդուն: Նեղոսը և Մայր հողը կեանքին աղբիւրներն են, իսկ անապատը քայքայման և մահուան ուժն է: Եթէ Նեղոսը և հողը բարութեան սկզբունքներն են ապա ուրեմն անապատը չարի մարմնացումն է: Երկու բարութեան սկզբունքին միացաւ Արեւը. առանց որու կեանքը չի ստեղծուիր: Ամենէն հին, նախապատմական շրջանէն, եգիպտացին կը տեսնէր բնութեան երկնութիւնը իր իսկ շուրջը:

Եթէ հին եգիպտացին բան չէր գիտեր Նեղոսի ծագման մասին, բայց շատ լաւ կը հասկնար, որ ան իր գոյութեան, կեանքի աղբիւրն է: Անոր կը վերագրէր գերբնական զօրութիւն, ան Աստուած էր, որուն պէտք էր երկրպագել, զո՞հ մատուցանել, Նեղոսը կը փառաբանէին իրենց շարականներու մէջ «Փաււ քեզ Նեղոս, կ'ըսէին որ աշխարհ եկար — Եգիպտոսի կեանք պարգեւելու համար: Ալիքներդ կը լեցնեն այգիներ, որոնք սեղծեր է արեւը. դուն կը յագեցնես բոլորն երկնայիմ խոնաւութեամբ. դուն երկիր կ'իջնաս, որ վարդոց հացահատիկ աստ. քեզմով կ'ըսկսի աշխատանքները

արհեստանոցներու մեջ: Դուն հասցնուց ես ցորենի եւ զարիի, քեզմով է, որ կանգուն են քանարները: Եթէ քու բուերը յոգնին աշխատելին կամ դուն անգորանաս, ամեն արատած, աստուածներ եւ մարդիկ կ'ոչնչանան, անասուններ կը հառաչեն, բովանդակ երկիրը, ամեն ինչ, մեծ թէ փոքր՝ կը օձապին: Իսկ երբ դուն լսես մեր աղօթքները, եւ նորէն զաս, այն ասեմ հոյը կ'ըսկսի խալալ ուրախութեան, ամեն ինչ կը խնդայ... Դուն բոլորին երջանկութեան ալբիւրն եւ եւ երբեք չես մերժեր քու շնորհներդ: Դուն արեայ եւ եւ քու հրամաններդ կը քարածուին ամբողջ երկրի վրայ:

ԿԵՆՒԱՆԱԿԱՆ ՆԻ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԵՆԱՐԷ.— Եգիպտական հողը յարմ ր է հոգահատիկներու մշակութեան համար և ամենէն հին շրջանէն Եգիպտացին երկրագործ էր և անասնապահ: Սկիզբը Նեղոսի պարբերական յորդումները արգելք էին թէ կենդանիներուն և թէ մարդոց հոն հաստատուելուն: Անոնք կ'ապրէին Լիպիսայի բարձրաւանդակի և արաբական հարթութեան վրայ: Շատ հին ժամանակներէն այս վայրերը ջրառատ էին և ծածկուած առատ բուսականութեամբ: Միայն Հիւսիսային Գօտիի սառոյցներէն ազատուելէն ետքը Հիւսիսային Ափրիկէն կ'ենթարկուի կլիմայական խիստ փոփոխութիւններու: Արգասաբեր դաշտերը կը վերածուին նախ տափաստաններու, յետոյ անապատներու:

Աստիճանական չորացման հետեւանքով Սահարայի, Լիպիսայի բնակիչները լքեցին իրենց աճելաւայրերը և հաստատուեցան Նեղոսի ափերուն, դեռ չէին համարձակեր սարածուելու Եգիպտոսի խորքերը: Անապատէն հոս գաղթեցին վայրի կենդանիները ջուր և սնունդ գտնելու համար: Նոր հաստատուող ցեղերը կռուեր են հոս ճահճային գազաններու դէմ, ոչնչացուցեր են կամ կրկին ետ քշեր, հալածեր դէպի անապատները: Հին Եգիպտացին պահեր է և ընտելացուցեր բուսակեր կենդանիներ՝ ոչխար, կով, եզրիսկ էջը հնագոյն բնակիչ կենդանիներ էր՝ հին արեւելեան ժողովուրդները ծանօթ էին իրեն՝ ուղաէն և ձիէն առաջ:

Երկար ժամանակ էջն էր, կարաւաններու բեռնակիր անասունը: Նեղոսի հովիտին մէջ կար նաեւ ընծիւղ, ջտյլամ, փիղ, կոկորդիլոս, ջրաձի, առիւծ և յովազ: Նեղոսը միշտ ձկնառատ է եղեր, մասնաւանդ յարդուճն՝ որւ եղանակին: Զուկը կը կազմէր Եգիպտացոց անունդի գլխաւոր միջոցներէն մէկը: Այս կենդանիներու մեծ մասը կ'ապրէր Տել-դալի ճահիճներուն մէջ, որ այնքան ընդարձակ տարածութիւն կը բռնէր Նեղոսի գետաբերանին: Մէկ մասը տեղ է գտեր նաեւ եգիպտական կրօնքին մէջ — իրբեւ ոգիներու և գերբնական ուժերու մարմնացումներ, մէկ մասը նիւթ է ծառայեր եգիպտական արուեստին: Եգիպտացիներու՝ Նեղոսին ուղղուած փառաբանութեանց մէջ ան կը կոչուէր նաեւ «ձուկ պարգեւող»:

Բացի ցորենէն, գարիէն, Եգիպտոսի մէջ տարածուած անունդի միջոցը արմաւենի ծառն է, որու պտուղէն բազմատեսակ անունդ կը պատրաստեն և կորիզն ալ որպէս վառելանիւթ կը գործածեն: Որոշ առումով թէ Եգիպտոսի և թէ Միջագետքի մէջ արմաւենին և արմաւն են մարդկային մեծ համախմբումներու պատճառը: Միայն արմաւով և անով պատրաստուած ուտելիքներով կարելի է անունդ ստանալ և ապրիլ: Տելդալի ճահիճներուն մէջ կը բուսնին երկու ճահճային բոյսեր՝ լոտուսը և պապիրուսը: Պապիրուսը հնագոյն նիւթն է, որուն վրայ կը գրէին. իսկ լոտուսը տեղ գրաւեց եգիպտական արուեստի մէջ և դարձաւ Եգիպտոսի խորհրդանշան բոյսը: Սաղողը կը մշակուէր Տելդալի մէջ, թէ անձրեւներու անբաւարար ըլլալը և թէ գետին բերած հողին տիղմային բնոյթը յարմար չէին ծառամշակութեան: Եգիպտոսը անտառազուրկ էր, ան չունէր չին սրարական փայտ: Եգիպտոսը աղքատ էր նաեւ հանքերով, մետաղներով. չունէր պղինձ, անագ, երկաթ: Լիպիական և արապական աւազոտ հողերու մէջ թէեւ ոսկի կար, բայց անոր շահագործումը մեծ աշխատանք կը պահանջէր: Իսկ երկաթը, պղինձը անհրաժեշտ էին Եգիպտոսի շինարարութեան և վերաշինութեան, ինչպէս և փայտը նաւաշինու-

Թեան համար: Այս բոլորը եգիպտացիք կ'ըստանային դուրսէն՝ անտառաշատ և մետաղաշատ երկիրնեքէն: Բայց անոնց վրասարէն Եգիպտոս հարուստ էր քարերու գանազան տեսակներով: Տելդան քար չունէր սակայն լիպիական և րապական լեռնաշղթաները կը հայթայթէին լաւագոյն շինաքարերը՝ տաճարներու, դամբարաններու, բուրգերու, արձաններու շինութեան համար: Քարերու բազմազանութիւնը և առատութիւնը արտակարգօրէն նպաստեց եգիպտական արուեստի թուրջքին: Այսպէսով մենք կը տեսնենք, որ Եգիպտոսը շատ առաւելութիւններ և դիւրութիւններ կ'ընծայէր հոն իր մէջ ապրող ժողովուրդին, բայց և շատ մեծ պակասութիւններ ալ ունէր: Մարդու կեանքը հանգըստաւէտ և յարստեւ դարձնելու համար, Եգիպտացին երկրին մէջ գոյութիւն ու եցող բաներու վրայ պիտի աշխատէր, իսկ պակասող ամեն ինչ պիտի ճարէր, գտնէր: Ուրիշ խօսքով ան պէտք է յամառօրէն աշխատէր և պայքարէր: Եգիպտոսի մշակոյթը և պատմութիւնը կերտողը ոչ միայն անոր բնական նպաստաւոր պայմաններն են եղած, այլ և ինքը մարդը և իր աշխատանքը:

ԵԳԻՊՏԱՅԻՆ.— Ո՞վ էր այդ աշխատաւոր մարդը, ի՞նչ ծագում ունէր Եգիպտացին: Հին Եգիպտացիներու, աւելի շուտ քրմական դասի մէջ մշակուեր էր մէկ տեսակէտ. թէ Եգիպտացին բնիկ է, դուրսէն, ոչ մէկ տեղէն եկած չէ, սկիզբէն իսկ ապրեր է այնտեղ: Եգիպտացին ստեղծողը Պտահ աստուածն է, որ կաւէն և ջուրէն կենդանութիւն է տուեր առաջին մարդուն: Եւ ընդհանրապէս եգիպտական քուրմերը ինքնուրոյն ձեւով մշակեր են տիեզերածնութեան, մարդու ստեղծման և ջրհեղեղի մասին այնպիսի պատմութիւններ, որոնք շատ կը յիշեցնեն Միջագետքի նոյնիմաստ բանահիւստութիւնը: Գիտենք, որ Եգիպտոսի նախնական բնակիչները անապատային շրջանէն իջան Նեղոսի հովիտը և որսորդ վաչկատուն կեանքէն անցան երկրագործութեան ու նստակեաց կեանքին: Հնագոյն բնակիչները կուգային Լիպիայէն և արապական անապատէն,

իսկ ասոնք լեզուակից և ցեղակից էին Նուբիացիներուն , Սոմալացիներուն և այսօրուայ Պէրպէրներուն : Այս բոլորը միասին կը կազմէին մէկ լեզուական ընտանիք , Համիսակահր : Այս լեզուական ընտանիքը մաս կը կազմէր աւելի մեծ միութեան՝ Միջերկրականեան ընտանիքն , որ ոչ միայն լեզուական ընտանիք մըն էր , այլ և ուրոյն ազգագրական ճիւղ , որու ենթաբաժանումն էր համետական-ափրիկեան խումբը : Հաւանօրէն համետականներէն առաջ Եգիպտոսի մէջ հաստատուած էին սեւամորթ ցեղեր , որոնք կուգային Ափրիկէի խորքերէն : Անոնք տարածուեր էին նաեւ Մերձաւոր Արեւելքի անապատային գօտիին մէջ : Բայց ասոնք հետք չեն թողած այս վայրերու մէջ . մի գուցէ ասոնք ոչնչացուեցան կամ ձուլուեցան համետեան լեզուախմբի ժողովուրդներէն : Այս վերջինները աւելի բազմաթիւ էին ու իշխող Վերին Եգիպտոսի մէջ . պատմական շրջանին անապատներէն և Նուբիայէն նորանոր գաղթող հոսանքներ կուգային համետեաններու բնակավայրերը և կը զօրացնէին բնակչութեան թիւը , կը պահպանէին անոր ֆիզիքական յատկութիւնները և լեզուն : Տելուայի հին բնակիչները ափրիկեան համետականներն էին , բայց այս շրջանը կը թափանցէին ազգագրական նոր տարրեր՝ սեմականները : Ասոնք ալ մէկ ուրիշ ստորաբաժանումն էին Միջերկրականեան մեծ ցեղին : Սեմականները բուն էին Մերձաւոր Արեւելքի անապատային գօտին , ազգակից և լեզուակից էին Ափրիկէի համետեաններուն : Շատ հին , դեռ նախապատմական ժամանակներէն , անոնք արեւելքէն կը թափանցէին Տելուա ու հոնկէ ալ կը դիմէին Միջին և Հարաւային Եգիպտոս : Սեմականներու այս թափանցումը շարունակուեցաւ ամբողջ պատմութեան ընթացքին : Թէ իրենց թիւով , թէ կրօնական գաղափարներով , թէ Եգիպտոսին մատուցած իրենց տնտեսական նպաստով , սեմական ցեղերը դարձան Եգիպտոսի բնակչութեան կառուցանող տարրերէն ամենէն կարեւորը : Այս երկուքը՝ համետականը և սեմականը մշակեցին Եգիպտոսի նոր քարէ դարի քաղաքակրթութիւնը , բացի

մետաղի գիւտէն և գործածութենէն, որ արեւելք և Եգիպտոս մուծեցին լեռնային կամ ասիական ժողովուրդները: Ասոնք Եգիպտոսի բնակչութեան կազմիչ երրորդ տարր են: Իրենց բնավայրը Մերձաւոր Արեւելքի լեռնային գօտին է. հոս անոնք ինքնորոշուել են, մշակել են իրենց ուրոյն լեզուն, զարգացուցել իրենց մարդաբանական կազմը. յետոյ ցրուել են զանազան ուղղութիւններով: Անկասկած անոնց մեծ զանգուածը մնացել է լեռնային գօտիին մէջ և առաջացուցել քանի մը ժողովուրդներ՝ Հաթի, Սուբարիներ, Սումէրներ: Աս վերջիններն են որ իջան Միջագետք:

Ազիանիկներու ֆիզիքական յատկանիշները մնացել են լաւապէս Հայերու մէջ, ահա թէ ինչու անոնք կը կոչուին նաեւ հայասիալ: Այս հայասիայերը կամ լեռնայինները կ'երեւան Եգիպտոսի մէջ նախաթագաւորական շրջանին՝ մօտ 3300 թուին: Ասոնք բերին մետաղի գործածութիւնը. ասոնք՝ աւելի լաւ զինուած, նուաճեցին Տելլահն և միացուցին Եգիպտոսը իրենց իշխանութեան տակ. դարձան իշխող, վարիչ դաս, ասոնցմէ դուրս եկան առաջին թագաւորները:

Կարելի է ըսել, որ շուրջ 3000 թուականին Եգիպտոսին արդէն կազմաւորուած էր իր հիմնական զիծերով: Ան իր մէջ ունէր ասիական՝ համետեան տարրը, որ քանակ էր. սեմականը, որ մշակոյթ ստեղծելու մեծ հակում ունէր, ազիանիկը, որ թէեւ քանակով փոքր էր, բայց ներքնապէս լաւ կազմակերպուած էր, զինուած և ռազմունակ: Այս երեք տարրերը պատմութեան ընթացքին աստիճանաբար համաձուլուեցան և կազմեցին նոր ժողովուրդ մը՝ Եգիպտացին: Ան յառաջ եկաւ միասնական աշխատանքի, կրօնական գաղափարներու, ընդհանուր պայքարի և նոյն պետութեան շրջանակի մէջ, ցեղերու լեզուներու ձուլման հետեւանքով: Եգիպտացիի մարմնակազմը իր բնորոշիչ յատկանիշներով մինչեւ մեր օրերը մնացել է Ֆէլահի մէջ, որ բարձրահասակ է, բարեկազմ, թխաւուն, նուրբ զիմազիծերով և օժտուած բարձր մտաւոր և հոգեկան կարողութիւններով:

Բ. ԳԼՈՒԽ

ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Ե Ի

ՅԻՆԻՍԵԱՆ ՄԻԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Եզրպտոս իր լնակչութիւնն ունէր քարէ դարէն սկսած : Սնանց հետքերը, տաշած քարէ գործիքներ, զէնքեր, ոսկրէ կտորներ, զարդեր, մենք կը գտնենք Եզրպտոսին կից բարձրաւանդակներու և բլուրներու վրայ : Քարէ դարի մարդու հետքերը նկատելի են նաեւ Վերին Եզրպտոսի մէջ, ուր անոնք կառուցեցին իրենց հիւղակները՝ եղէգով և ցելսով : Հիւղակներու խումբերէն կը կազմուէին գիւղերը, աւանները՝ բարձր տեղերու և բլուրներու վրայ՝ գետի հոսանքէն հեռու : Այգպիսի հիւղակներու պատկերները մենք կը տեսնենք նախապատմական շրջանէն մեզի հասած կաւանօթներու վրայ : Քարէ դարի մարդը որսորդ էր, անասնապահ : մերձակայ անապատներուն մէջ ան շարունակ կը հետապընդէր որսը և գազանները : Բայց շուտով ան կը զառնար երկրագործ, կը ցանէր դարի, կորէկ : կը կառուցէր ապաստաններ, իրեն և իր անասուններուն համար հեղեղումներու և վտանգի զէմ :

ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԸ. — Նեղոսը իր պարսկերական յորդումներով կը հարկադրէր մարդոց միանալ, միասնական աշխատանքի շնորհիւ : Ան թէեւ բարերար և անուցիչ ուժ էր, սակայն կրնար դառնալ վտանգաւոր և վնասակար, եթէ անոր չմիանար մարդու աշխատանքը, ճիշդ : Մարդն է որ պէտք է կարգաւորէր, ուղղէր գետի ըն-

Թացքը, թուճբեր կառուցէր անոր ջուրերուն առաջ, ջըրանցքներ շինէր և ջուրը հասցնէր այնպիսի տեղեր, ուր իր բնական ընթացքով չէր կրնար հասնիլ: Կառուցած ջըրանցքները պէտք էր պարբերաբար մաքրել, վերաշինել, եթէ հեղեղումներէ քանդուէին, պէտք էր աշխատիլ, որ յաւելիալ ջուրը չկորչի, հաւաքելով արհեստական լիճերու մէջ՝ հետագային կարենալ օգտագործելու համար: Պէտք էր չորցնել ճահիճները, որ այնքան ընդարձակ տարածութիւն կր բռնէին Նեղոսի ճիւղերուն շուրջ: Անոնց ջուրերը ջրանցքներու միջոցով պէտք էր հոսեցնել դէպի ծով: Եգիպտոսի մէջ ջրաբաշխական գործը ամենէն կենսականն էր: Բայց այս բոլոր աշխատանքը մէկ անհատի գործը չէր, ոչ ալ մէկ փոքր համայնքի: Ջրաբաշխութիւնը համաեգիպտական խնդիր էր:

Կար և մէկ ուրիշ հարց նոյնքան կարեւոր որքան առաջինը: Նեղոսի շուրջը համախմբուած մեծ ու փոքր հասարակութիւնները շարունակ ենթակայ էին անապատներու մէջ թափառող և Ասիայէն ու Նուբիայէն թափանցող ցեղերու յարձակումներուն: Անհրաժեշտ էր հաւաքական, համախումբ աշխատանք փորձառու և ընդունակ մարդոց ղեկավարութեամբ թէ դրսեկներու դէմ պաշտպանուելու և թէ Նեղոսի ջրաբաշխական գործը կանոնաւորելու համար: Երբ անապատի և տափաստաններու որսորդն ու անասնապահը հաստատուեցան Նեղոսի ափերուն՝ անոնք տոհմական ապրելակերպ ունէին: Տոհմապետը կը վարէր իր տոհմի բոլոր գործերը, կ'առաջնորդէր իր տոհմը կոուի հարեւան տոհմերու դէմ: Տոհմի մէջ բոլորը հաւասար էին, բոլորը զինուոր էին ու աշխատաւոր: Սեփականութիւն չկար. արօտատեղիներն ու հօտերը ընդհանուրի սեփականութիւն էին: Տոհմապետն ալ իշխան մը, տիրող մը չէր, այլ հաւասարներու մէջ առաջինը: Ան դատաւոր էր, ներքին խաղաղութեան վրայ հսկող, կոուի ժամանակ հրամանատար: Ան տոհմի հովանաւոր ոգիին հետ կը խօսէր, անոր կ'աղօթէր, դո՛հ կ'ընէր և անկէ պատգամներ կ'ըստանար:

ՆՈՄ.— Այդ տոհմերը՝ նոր պայմաններու մէջ՝ նուիրուեցան երկրագործութեան, դարձան նստակեացներ, սկսան ապրիլ գիւղախմբերով: Ստեղծուեցաւ նստակեացներու սուղին կազմակերպութիւնը. Նոմը: Ամեն Նոմ արիւնակիցներու միութիւն էր. ունէր իր հովանաւոր ոգին, աստուածը, որուն անունով ալ կը կոչուէր Նոմը: Հովանաւոր ոգին տեսանելի և շօշափելի կը դառնար որեւէ կենդանիի, բոյսի կամ առարկայի մէջ: Եգիպտացիք նախնական շրջանին մէջ՝ ոչ թէ այս կենդանիները կը պաշտէին, այլ անոնց մէջ մարմնացած գերբնական ուժը, ոգին: Անոնք այն համոզումն ունէին, թէ իրենք ծագած են այդ հովանաւոր ոգիէն և անոր միջոցով է, որ միեւնոյն տոհմի պատկանողները ազգակից են իրարու: Այդ գերբնական ուժը ճոթմն էր, Նոմն ալ տոտեմական միութիւն էր: Այդ ոգին Եգիպտոսի մէջ կը մարմնաւորուէր տեղ մը կոկորդիլոսի, ուրիշ տեղ մը բագէի, կովի, շնագայլի, եզան և ուրիշ շատ կենդանիներու մէջ: Ան ծառ մըն էր, կամ անոր կոճղը միայն երբեմն ետաժանի, սլաք... Նոմի մէջ իշխանութեան ազբիւրն ու տէրը Տոտեմն է, հովանաւոր ոգին: Բայց ան կը սործէր նոմարքոսի՝ նոմի առաջնորդի միջոցով: Իր ուժերը, գերբնական զօրութիւնը, Տոտեմը կը փոխանցէ նոմարքոսին, որ իբրև հետեւանք կը բարձրանայ իր հասարակութենէն, կը դառնայ արտակարգ զօրութեան տէր, կախարգ տոտեմի ներկայացուցիչ: Տոհմական ոգիներն ունէին իրենց սրբավայրերը, մատուռները, որոնց պատկերը մենք կը տեսնենք նախնական յիշատակարաններու վրայ. այդ յիշատակարանները հետագային վերածուեցան փայտաչէն կամ քարաչէն տաճարներու, ուր տեղաւորուեցան կենդանակերպ աստուածները: Այն կենդանին, որու մէջ մարմնացած էր տոտեմը, ոգին՝ սուրբ էր, անմասելի, որուն սպաննելը մեղք էր, անոր միսն ուտելը արգիւրուած: Ան ճաբու էր:

Սկիզբը Եգիպտոսի մէջ միայն ցամբէր կային, այսինքն՝ նեղոսի երկու ակերուն ցրուած կ'ապրէին բազմաթիւ մեծ

ու փոքր մարդկային խմբեր, իրարմէ անկախ, մեկուսացած: Վերին Եգիպտոսը ունէր 22 նոմ, իսկ Տիլդայի ս'էջ կտր 20 նոմ: Ամեն նոմ ունէր իր կեդրոնը՝ քաղաքը, որուն շուրջը կը տարածուէին գիւղեր և աւաններ: Այսպէսով կ'ըստեղծուէին իւրայատուկ քաղաք-պետութիւններ: Քաղաքը պէտք է ունենար երկու բան՝ մատուռ կամ տաճար՝ հովանաւոր Աստու համար, պալատ կամ դղեակ՝ կառավարիչ նոմարքոսի համար: Տաճարն ու պալատը կը կառուցուէին բարձրագիւր վայրի մը վրայ և կը շրջապատուէին պարիսպներով: Անոնց անհրաժեշտ մասերը կը կազմէին արհեստանոցներ, շտեմարաններ, զինանոցներ, պահականոցներ և պալատական ու տաճարական մարդկանց ու պաշտօնէութեան համար բնակարաններ: Քաղաքն ունէր իր հրապարակը, ուր պարբերաբար կը հաւաքուէին բոլոր զէնք կրելու ընդունակ մարդիկ խրախճանքի և խորհրդակցութեան համար: Քաղաքը սմրոց էր և սրբաւայր. իսկ նոմն ալ կրօնական, տնտեսական և քաղաքական միաւոր էր: Նոմարքոսը բոլոր ռազմական ուժերուն պետն էր, հովանաւոր Աստու քուրմը: Անոր գործառնութեան մէջ կախարդականը մեծ դեր ունէր: Ան կրնար գերբնական ուժերու միջոցով հասնիլ իրեն ցանկալի նպատակներուն: Այս ուժի աղբիւրը ոգին էր, որու ներկայացնողը և մարմնացնողը ինքը՝ նոմարքոսն էր: Նոմի հաստատութիւններու՝ պալատի և տաճարի վրայ կը ծածանուէր տոտեմը խորհրդանշող դրօշը: Հոսկէ ալ այն բազմաթիւ կենդանակերպ դրօշազարդ շէնքերը, որ մենք կը տեսնանք Եգիպտական նախապատմական քանդակներու վրայ:

ՆՈՄԵՐՈՒ ՄԻԱՅՈՒՄԸ.— Այս բազմաթիւ նոմերը տեւական կռիւներու մէջ էին իրարու հետ. անոնք կը կռուէին հողի, հօտերու, արօտատեղիներու, դաշտերու, ջուրի և ջրանցքներու համար: Ջուրի հարցը ամենէն կարեւորն էր. երբեմն քանի մը նոմեր կը միանային ընդհանուր ջրանցք կառուցելու, Նեղոսի ընթացքը կանոնաւորելու

համար: Բայց գետի ջուրէն սգտուիլը միայն մէկ կամ քանի մը նոմերու չէր վերաբերիր, այլ բովանդակ Եգիպտոսին: Ընդհակառակն առանձին նոմերը իրենց մասնակի շահերը հետապնդելով յաճախ կը վտանգէին հեռու և մօտիկ նոմերու շահերը, ուստի ջրաբաշխութեան գործի կարեւորութիւնը կը թելադրէր ստեղծել նոմերէն վեր կեդրոնական իշխանութիւն մը ամբողջ Եգիպտոսի համար: Այդ միութիւնը խաղաղ ճանապարհով կազմուիլ չէր կրնար, սրովհետեւ ամեն նոմ իր Աստծուն կը համարէր ամենէն կատարեալը, իմաստունը, հօրը և ուրիշ զնով ուրիշներուն գիջիլ չէր կրնար: Միայն կոռուով, զէնքով կրնար լուծուիլ քաղաքական միութեան հարցը: Նոմերու մէջ շարունակ առաջ կուգային սահմանային վէճեր, վէճերը առաջ կը բերէին կռիւներ կսիւներ՝ նուաճումներ, որու հետեւանքով կ'ըստեղծուէին չրջանային միութիւններ՝ յաղթական նոմի աստծուն և նոմարքոսի ղեկավարութեան տակ:

Այդ միութիւնը կը համարուէր հովանաւոր աստծու յաղթանակը, ուստի անոր պաշտամունքն ալ պարտադիր կը դառնար պարտուած նոմերու համար: Չորրորդ հազարամեակի կէսերուն այս կռիւները իվերջոյ յանգեցան երկու մեծ միութիւններու կազմութեան: Հարաւի 22 նոմերը կազմեցին Վեդիքի սփիւսոսի պետութիւնը, հիւսիսի 20 նոմերը Տելդայի մէջ ստեղծեցին առանձին պետութիւն: Եգիպտոսի քաղաքական միութիւնը գլուխ եկաւ զոյգ շրջաններու մէջ. այս կը համապատասխանէր երկու վայրերու աշխարհագրական և ցեղագրական տարբերութեան: Հարաւի ցեղերը Ափրիկեան էին, անոնք լեզուակից էին. Հիւսիսի՝ Տելդայի ցեղերը մօտ էին Լիպիային և սեմական աշխարհին և մասամբ ալ սեմականացած էին: Չորրորդ հազարամեակի կէսերուն Նեկինքը դարձաւ վերին Եգիպտոսի կեդրոն. անոր նոմարքոսը իւրացուցեր էր միւս նոմարքոսներու քաղաքական իրաւունքները և կրօնական իշխանութիւնները ու կախարդական զօրութիւնները: Քուրմ,

թագաւոր և կախարդ՝ ահա նոր իշխանութեան երեք էական յատկանիշները, որոնցմով ան ոչ միայն կը բարձրանար իր հպատակներէն վեր, այլեւ կը համարուէր գերբնական ուժերու տէր, Աստուած: Այս յատկութիւնները հետագային պիտի անցնէին միացեալ Եգիպտոսի տիրոջ՝ Փարաւոնին:

Հարաւի թագաւորութեան խորհրդանիշը Հոտուան էր, թագաւորը կը կոչուէր Նսուտ, և կը խորհրդանշուէր Հոտուսի պատկերով. ան ճերմակ թագ ունէր գլխուն և կը գտնուէր Անգղ աստուածուհիի հովանիին տակ: Տելբայի մէջ կազմուած թագաւորութեան կեդրոնը Բուսոն էր, անոր նոմարքոսն էր, որ կեդրոնական իշխանութեան տէր էր դարձեր: Իր արքայական ուժի պատկերացումը Պապիրուան էր. թագաւորը կը կոչուէր Բիթի և իբր խորհրդանշան ունէր մեղուի պատկերը. գլխուն կարմիր թագ ունէր, որու ճակտին օձ էր նկարուած՝ Բիթի հարստութեան հովանաւորը:

ՄԻԱՅՅԱԼ ԵԳԻՊՏՈՍ.— Բայց երկու պետութիւններու կազմուելը միայն առաջին քայլն էր ամբողջական միութեան: Նոյն պատճառները որոնք ստեղծեցին նախ շրջանային և յետոյ երկու պետութիւններ, առաջ բերին Միացեալ Եգիպտոսի պետութիւնը: Տելբայի նոմարէն մէկը, որու հովանաւոր աստուածը Հոուսն էր, նախ միացուց հիւսիսը՝ Տելբան, ապա նուաճեց հարաւային Եգիպտոսը: Հորուս աստծու խորհրդանիշը բազէն էր: Հորուս աստծու հետեւողները գուցէ Տելբայի մէջ հաստատուած սեմականներն էին կամ բնիկ տոհմերէն մէկը, որ տեւական հազորակցութեան մէջ էր արեւելքի հետ և իւրացուցեր էր անոնցմէ շատ բան՝ ազիւսներու գործածութիւնը, գլանակնիքը և մետաղները: Անոնք զինուած էին մետաղէ զէնքերով, երբ հարաւի նոմարը քարէ զէնքեր միայն ունէին: Այս է որ առաջիններուն առաւելութիւն տուաւ հարաւի նուաճման մէջ: Բայց սկիզբը Հորուսեան ծագումով երկու հարստութիւններ մէջտեղ եկան՝ հիւսիսի և հարաւի

մէջ և Այս ցոյց կու տայ, որ անջատողական և տեղական շահերը շատ ամուր էին և հաստատուն: Իւրաքանչիւրն ունէր իր թագաւորը, վարչութիւնը, քաղաքական կեդրոնը: Ընդհանուր էր միայն Հորուս Բազէ աստծու պաշտամունքը: Միութեան համար մղուող պայքարը կը շարունակուէր Եգիպտոսը միացնող առաջին երեք հարստութիւններու ժամանակ: Շուրջ 3200 թ. հարաւի հորուսականները արշաւեցին հիւսիս, գրաւեցին Տելուան և հիմք դրին Միացեալ Եգիպտոսի թագաւորութեան: Այսպէս մէկ թագաւոր միացուցեր էր երկու թագը՝ կարմիր և ճերմակ: Երկու Եգիպտոսներու այս միութիւնը կայունացաւ միայն Մէնէսի իշխանութեան ժամանակ, որուն եգիպտական աւանդութիւնը կը համարէ հիմնադիրը միացեալ թագաւորութեան: Անոր և իր յաջորդներուն օրով հարաւային Եգիպտոսն է քաղաքական կեդրոնը: Հիւսիսը ենթակայ է անոր: Առաջին երեք հարստութեան թագաւորները կը նըստէին Թիբիս քաղաքին մէջ, ուստի Եգիպտոսի պատմութեան այդ շրջանը՝ չորս դարէն քիչ մը սւելի՝ 3315—2895 անուանենք Թիբիսեան միապետութեան շրջան: Թագաւորանիստ քաղաքի անունովը: Անոր մօտ քիչ մը աւելի ուշ կառուցուեցաւ Աբիդոսը, Օզիրիսի սրբազան քաղաքը:

ՓԼՐԱԽՈՆԸ.— Իր ծագման օրէն իսկ Թիբիսեան թագաւորութիւնը կապուեցաւ նոր աստուածներու հետ: Ան Հորուս աստծու հովանիին տակ էր. թագաւորն ալ «կենդանի» Հորուսն էր, կը մարմնաւորէր Հորուս աստուածը. ան թագաւորն էր «Հորուսի մարդոց», այսինքն սկզբնական այն տոհմական միութեան, որ կը հետեւէր Հորուսի պաշտամունքին: Որպէս աստուած՝ թագաւորին կը պաշտէին, կը մօտենային ծնկաչոք, երկիւղածութեամբ: Անոր անունը յաճախ յիշելը կը համարուէր սրբապղծութիւն: Փարաւոն կը նշանակէր «բարձրագոյն դուռ», պալատ: Թագաւորին կը կոչէին իր պալատով, ոչ թէ իր անունով: Թագաւորը միայն աստուած չէր. ան ոչ միայն մարմնաւորած էր Հորուսը, այլ և բազմաթիւ աստուածներուն,

որոնք ուրիշ ցեղերու հովանաւոր աստուածներն էին, և որոնց յաղթել էր, հպատակեցուցեր իրեն և անոնց տոհմերու կամ աստուածներու ուժը ծառայեցուցեր էր, ինչպատ իրեն: Սրբապատ այսպիսի հեղինակութեամբ հզօրացած Փարաւոնը կը դառնար ճեմ կախարդ: Եգիպտոսի մտածողութիւնը անոր կը վերագրէր կախարդութեան մեծ կարողութիւն և ուժ, որ յատուկ է միայն աստուածներուն: Ան կը հրամայէ բնութեան ուժերուն, չար և բարի ոգիներուն: Թագաւորէն է կախուած ամբողջ երկրի բարօրութիւնը, ապագան: Ան մասնաւոր անձ մը չէր: Անոր ամեն շարժումը, անոր առողջութիւնը, կենցաղը կ'ըստանար հանրային նշանակութիւն: Որով անոր կեանքը տեւական սահմանափակումներու տակ էր դրուած: Մշակուեցան որոշ ծէսեր, արարողութիւններ անոր սնունդի, ժամանցի, ընդունելութեան համար: Եթէ ան մեծ կախարդ է, որուն կ'ենթարկուին բոլոր բարի և չար ոգիները, աստուածներն անգամ եթէ անկէ է կախուած՝ Եգիպտոսի բախտը, ուրեմն տն ենթակայ է բարոյական պատասխանատուութեան: Ան իր շինարար և կառուցիչ գործը գլուխ բերելու համար պէտք է որ խնայէ իր ֆիզիքական և հոգեկան ուժերը, պէտք է մնայ առողջ և երիտասարդ: Ան պատասխանատու է հունձքի, առատ բերքի, ջուրի, ջերմութեան, թշնամիներէն պաշտպանուելու համար: Այս բոլորի համար է, որ ան պէտք է պահէ իր երիտասարդութիւնը, կենսական ուժերը: Անոր ծերանալը չարիք մըն էր ոչ միայն իրեն Փարաւոնին, այլ և ամբողջ Եգիպտոսի համար: Նոմերու անջատ իշխանութեան ժամանակ՝ սրբազան կենդանին՝ տոտեմը և նոմարքոսը պատասխանատու էին հիւանդութիւններու, սովի և ուրիշ չարիքներու համար: Միացեալ թագաւորութեան ժամանակ տոտեմներու և նոմարքոսներու բոլոր գաղտնի և կախարդական զօրութիւնները անցան թագաւորին, ատոր հետ նաև բոլոր պատասխանատուութիւնները:

Թագաւորը ուրիշ բան ուստի չէր կրնար բացի հորթի և սագի միսէն. գինին խստօրէն արգելուած էր իրեն: Ան

կրնար հաց ուտել և զարեջուր խմել առաւօտեան լոգանքէն ետքը: Աւելի ուշ Փարաւոնի սնունդի մէջ բազմազանութիւն մտաւ, բայց միշտ ան մնաց որոշ սահմանափակումներու ենթակայ:

Հաւանաբար Եգիպտոսի մէջ ալ հնագոյն շրջանին գործադրուել է ծիսական սպաննութեան սովորութիւնը, որ բոլոր վայրի ժողովուրդներու մէջ ալ եղեր է: Յետագային՝ Միացեալ թագաւորութեան շրջանին՝ այս երեւոյթը փոխարինուեցաւ ուրիշ ծէսով մը՝ նախ փարաւոնի փոխարէն կ'ըսպանէին որեւէ սրբազան կենդանի, որ համարժէք ըլլար թագաւորի կեանքին. և յետոյ զանազան արարողութիւններով, ծէսերով կը ջանային վերանորոգել, վերակառուցել ծերացած թագաւորի կենսունակութիւնը:

ԱՔԻԴՈՍԻ ԴԱՄԻԱՐԱՆՆԵՐԸ.— Թինիսի մօտերը գտնուեցան թինիսեան թագաւորներու գերեզմանները, որոնք մեզի լրիւ կերպով կը պատկերացնեն, չորրորդ հազարամեակի վերջերուն՝ հասարակութեան, կրօնական ըմբռնումները և նիւթական հարստութիւնը: Գտնուեցան քարէ և պղինձէ գործիքներ, զէնքեր, կարասիներ, քարէ թասեր. կճուճներ, կարասներ, որոնց վրայ արձանագրուած էին մեռած թագաւորներու անունները: Այդ մամանակաշրջանին արդէն գործածութեան մէջ է մտած պատկերագիրը, կ'արձանագրուին թագաւորներու գործերը և աստուածներու արկածները: Այս շրջանին կ'ըստեղծուին վէպեր, պատմութիւններ, առասպելներ, երգեր հերոսներու, աստուածներու և թաղաւորներու մասին, որոնք գրի կ'առնուին դպիրներու կողմէն, կը պահուին տաճարներու եւ պալատներու մէջ: Թինիսի թագաւորները հարուստ են. անոնք ծանօթ են մետաղներու՝ պղինձի գործածութեան. այդ մետաղները անշուշտ ստացուած են դուրսէն: Անոնք ունին ոսկէ զարդարանքներ: Կարաւանային առևտուրը սկսեալ է Եգիպտոսի և Սիւրիոյ մէջ: Միջագետքը ալ կը կապուի Սիւրիոյ վրայով Եգիպտոսի հետ:

Աբիդոսը մեռելներու քաղաքն է. ան Անուբիս Շնա-

գայլ աստծու կենդրոնն է: Եգիպտոսի բոլոր թագաւորները կը ջանային հոն ունենալ իրենց մատուռը, գերեզմանը, նոյնիսկ այն ժամանակ, երբ իրենք այնտեղ չէին թաղուելու: Այս դամբարաններու մէջ գտնուած զարդեղէնները ոսկիէ, փերիւզէ շինուած, ինչպէս և կարծրաքարեէ շինուած գործիքները՝ փորձուած վարպետներու գործ են: Դամբարաններուն կից սենեակներու մէջ գտնուեցան ուտելիքի և խմելիքի մեծ քանակութիւններ, ամաններու, կարասներու մէջ: Թէպէտ պղինձը գործածութեան մէջ է, բայց գործիքներու մեծ մասը դեռ քար էին. կան և փղոսկըրէ իրեր, զարդեր: Քանի մը թագաւորներու դամբարանները շրջապատուած են իրենց ազգակիցներու գերեզմաններով: Թագաւորը իր մահէն յետոյ կը վերապրի, ան կը շարունակէ իր գոյութիւնը, որպէս աստուած և իր երկրի հովանաւորը: Այս հաւատքի հետեւանքն այն կ'ըլլայ, որ անոր երկրային բնակավայրը, պալատը շատ աւելի պակաս կարեւորութիւն կ'ըստանայ քան յաւիտենականը, դամբարանը: Սովորութիւն էր, որ ամեն փարաւոն ունենայ իր պալատը և դամբարանը՝ մէկը երկրային գոյութեան, միւսը յաւիտենական կեանքի համար: Պալատը կը կառուցուէր թեթև, 'կորնչելի նիւթերէն, աղիւսներէն: Թաճախ փարաւոնը երկու պալատ կ'ունենար՝ երկու մայրաքաղաքներու մէջ: Դամբարանները կը շինուէին տոկոսն, կարծր, դիմացկուն նիւթերով՝ քարէ և կիրէ:

ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ. — Հասարակական կեանքի մէջ ալ կատարուեր էր որոշ փոփոխութիւն: Նախնական պարզունակ տոհմային հասարակութիւնը փոխուեր էր. նոմերու, նոմարքոսը և իր գերդաստանը բարձրացեր էին տոհմէն, իւրացուցեր էին անոնց շարժական և անշարժ հարստութիւնը, ստեղծուեր էր ընկերային անհաւասարութիւն և իրաւունքներու տարբերութիւն: Նոմարքոսը տոտեմաթոտու ներկայացուցիչն էր և անոր կախարդական զօրութեան տէրը: Հասարակական հոլովոյթը կը շարունակուէր, նոմարքոսներէն կը բարձրանար փարաւոնը, նո-

ժերէն կ'ըստեղծուէր մէկ եգիպտական իշխանութիւն: Կը կազմուէր ուժեղ կեդրոնաձիգ պետութիւն, ուր թագաւորը կ'իւրացնէր աշխարհիկ և հոգեւոր իշխանութիւնը: Նոմարքոսները իրենց իրաւունքներէն շատ բան զիջեր էին փարաւոնին, սակայն պահեր էին իրենց ընկերային-նիւթական արտօնութիւնները նոմերու մէջ:

Թագաւորի ամենէն կարեւոր հասարակական գործը Նեղոսի ջրաբաշխութեան կազմակերպումն էր, անկէ օգտուելու մէջ կարգ հաստատելը, ջրանցքները կանոնաւոր գրութեան մէջ պահելը, հեղեղումներու դէմ նախազգուշական միջոցներ ձեռնարկելը: Այս բոլորին համար աստիճանաբար մէջտեղ կուգան փորձուած պաշտօնեաներու, ճարտարապետներու, երկրաչափներու, կառուցող վարպետներու մեծ բանակ մը: Նեղոսի պարբերական յորդումները կը նպաստէին ջրաբաշխական գիտութիւններու զարգացման, ջրաչափութեան: Թագաւորներու տարեգրութեանց մէջ մեծ տեղ կը գրաւէր Նեղոսի քանի տօք, քանի արմուկներ քարձրանալը, երբ և ուր հասնիլը: Նեղոսի յորդումներու մասին վերին եգիպտոսէն միշտ յատուկ սուրհանդակներու միջոցով իմաց կուտային կեդրոն՝ օրը օրին:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ.— Փարաւոնը մայրաքաղաքէն կը կառավարէր երկիրը՝ օգնական ունենալով բազմաթիւ և բազմաստիճան պաշտօնեաներ: Անոնցմէ իւրաքանչիւրն ունէր ախտոս և համապատասխան լիազօրութիւն: Սկիզբը պաշտօնեաները ժառանգական չէին: Յետոյ միայն բարձր պաշտօնէութիւնը կը ջանար իր ընտանիքի մէջ պահել պատուի և շահաւէտ պաշտօնները: Բոլոր բարձր պաշտօնները կը տրուէին թագաւորի ազգականներուն, անոր որդիներուն: Ասոնք աւելի վտահելի էին: Ասոնցմէ և քանի մը հաւատարիմներէ կը կազմուէր «մասնաւոր խորհուրդը»: Ամենէն բարձրը «վէչիրն» էր, առաջին մարդը թագաւորէն ետքը. ան է, որ կը կառավարէր երկիրը: Ան կը հսկէր երկու եգիպտոսներու գործերուն վրայ՝ շըրջապատուած բազմաթիւ օգնականներով: Պաշտօնեաներէն

ոմանք կը վարէին տնտեսական գործերը, ոմանք զինուորականի, ոմանք ալ արտաքին յարաբերութիւնները կը ղեկավարէին, ուրիշներ հարկերը կը հաւաքէին բնատուրօք: Գոյութիւն ունէին նաև պալատական պաշտօնեաներ, որոնք կը ծառայէին փարաւոնին, արքունիքին. ասոնք «փարաւոնի սրտին մօտիկները» կը կոչուէին: Երոյնպէս մօտ էին փարաւոնին՝ անոնք, «ովքեր կը փառաբանեն աստուածներուն ամեն օր», այսինքն քուրմերն ու քրմապետը: Զօրքերու հրամանատարութիւնը կը յանձնուէր վստահելի, «պալատին մօտիկ» մարդոց: Թէև Եգիպտոսը միացած էր և կը կազմէր մէկ պետութիւն, բայց անոր բոլոր գործերը բաժնուած էին երկու վարչութիւններու մէջ: Վերին և ստորին Եգիպտոսներու պայքարը միշտ մնաց թշնխեան թագաւորներու օրով. անջատուական, պառակաման ձգտումը չեղած էր երկու մասի մէջն ալ: Ասոր պատճառով Եգիպտոսի ղեկավարները միշտ պահեցին երկու իրարմէ անջատ գործող վարչութիւններ. մէկ փարաւոնի և մէկ վէզիրի հսկողութեան տակ:

ՏԵՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ. — Տեղական վարչութիւնը յանձնուած էր նոմարքոսներուն: Կորսնցնելով իրենց քաղաքական կշիռը՝ նոմերը Եգիպտոսի ամբողջ հին պատմութեան մէջ մնացին որպէս վարչական միաւոր: Նոմարքոսները դարձան արքայական պաշտօնեաներ, կեդրոնական իշխանութեան գործակալներ: Պետութեան շատ մը վայրերուն մէջ կառուցուեցան պահեստներ, շտեմարաններ, ուր կը հաւաքէին բնատուրքերը և որոնք կը կառավարուէին յատուկ պաշտօնեաներու ձեռքով: Ամբողջ գործառնութիւնը, հրահանգները, զեկուցումները տեղի կ'ունենային գրաւոր: Ասոր համար ստեղծուեր էր դպիրներու մէկ մեծ դաս, որ գրել և կարդալ գիտէր, հմտացեր էր բարդ պատկերագրերու ընթերցման: Պետական պաշտօնեաները կը պատրաստուէին քրմական-տաճարական և արքայական դպրոցներու մէջ: Պաշտօնեաներու ընտրութեան մէջ կ'առաջնորդուէին, ոչ թէ դասակարգը կամ ծագումը ի նկատ

տի ունենալով, այլ ընդունակութիւնը և հաւատարմութիւնը: Որպէս վարձատրութիւն պաշտօնեան կ'ըստանար արքայական պահեստներէն միջերփներ, սննդեղէն. երկար ծառայութենէն ետքը ան կը վարձատրուէր հողով, որ հարստութեան մեծագոյն աղբիւրն էր: Հողով կը վարձատրուէին պալատական ծառայողները, բանակի հրամանատարները, քրմական դասը, տաճարները: Հողի մէկ մասն ալ նոմարքոսներունն էր: Հողը կը պատկանէր մասնաւորներուն, հասարակութեան ղեկավար դասերուն, յաճախ կը կատարուէր հողերու, մետաղներու, անասուններու պարբերական վիճակագրութիւն: Այս վիճակագրութիւնները կը ծառայէին պետութեան հասնելիք բաժնի ճշգրտմին և պահեստներու մէջ հաւաքման վերստուգումին:


ՄԵՄՖԻՍԵԱՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

2895—2360

1. ՊԵՏԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՓՈՒԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ.— Երբորդ հարստութիւնը թինիսէն կը փոխադրուի հիւսիս՝ Մեմֆիս. ան աւելի կը մօտենայ Տելլաւային: Եգիպտոսի երկու առանձին մասերը կը միանան Մեմֆիսի մօտ, «ուր երկու Եգիպտոսները կը հաւասարակշռուին»: Քաղաքական կեդրոնի տեղափոխման երկու պատճառներ կային: Նախ՝ Տելլաւան հարուստ էր. ան «սեւ հողերու» շրջանն էր. կապուած էր Արեւելքի հետ: Տելլաւայով կ'անցնէին արտաքին առեւտուրի գլխաւոր ուղիները. անոր վրայով սեմական արեւելքը կը կապուէր վերին Եգիպտոսի և Ափրիկէի հետ: Երկրորդ՝ Եգիպտոսի ասիական սահմաններուն վրայ կ'երեւային սեմախօսները, վաչկատուն և անասնապահ ցեղեր, որոնք թէ խաղաղ թափանցումով և թէ կռիւներով կը փորձէին մտնել Եգիպտոս: Նոյն բանը կ'ընէին նաեւ Տելլաւայի արեւմուտքէն՝ չիպիական ցեղերը: Ասոնք արդէն մտեր էին Տելլաւ և անոր արեւմտեան սահմաններու վրայ ստեղծեր էին քանի մը նոմեր իրենց նոմարքոսներով: Պէտք էր այս բոլորին հակադդել, աւելի ուշագիւր ըլլալ Տելլաւայի շուրջն հասունցող զէպքերուն:

ՆՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ, ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ — Թինիսեան Եգիպտոսը ափրիկեան գունաւորում ունէր,



ԵԳԻՊՏՈՍԸ 3-րԴ ԵՒ 4-րԴ ՀԱՅՍՐԱՄԵԱԿԻՆ

իսկ հիմա արդէն ան կը մօտենար Միջերկրական ծովուն, կը դառնար Միջերկրականեան պետութիւն, սերտօրէն կը կապուէր Կրէտէի, Կիպրոսի, Արգասաբեր Կիսալուսնի արեւմտեան թեւին հետ և անոր վրայով ալ Միջագետքի հետ: Մեմֆիսեան միապետութեան արտաքին քաղաքականութիւնը նուաճողական չէ, այլ պաշտպանողական. պէտք է պաշտպանել Եգիպտոսի անմիջական սահմանները: Առաջին թագաւորները կը նուիրուին այդ գործին: Լիպիայի սահմաններու պաշտպանութիւնը կը յանձնուի յատուկ հրամանատարի մը:

Այս ճակատին վրայ կը կառուցուին ամրութիւններ: Պարտուած Լիպիացիք կը մտնեն փարաւոնի ծառայութեան մէջ կը դառնան անոր վարձկան զօրքը և կը ղըրկուին պաշտպանելու ուրիշ ճակատներ: Հարուը Եգիպտոսի կը հասնին մինչև երկրորդ սահանքը: Ասէր փարաւոնը՝ երրորդ հարստութեան մեծագոյն ղէմքը, հոս կը կազմակերպէ սահմանապահ փոխարքայութիւն: Թէ հարուը և թէ Լիպիական կախներու մէջ փարաւոնները հարուար գերիներ կը վերցնեն, որոնք կը դառնան սարուկներ և կը վաճառուին. անոնք կ'աշխատին տաճարական և արքայական կալուածներուն վրայ: Նոր գրուուած շըրջաններու մէջ Նուբիացիք և Լիպիացիք կ'իւրացնեն եգիպտական բարձր մշակոյթը և կը տարածեն իրենց ազգակիցներուն մէջ: Մեմֆիսեան շրջանին եգիպտական քաղաքակրթութեան տարածման հորիզոնը կ'ընդարձակուի:

Արեւելիան սահմանին կը կառուցուին մեծ ամրութիւններ: Սուէզի պարանոցի հաղորդակցութեան ուղիները կ'առնուին հակակշռի տակ: Կը վերագրուեն Սինայի պղնձահանքերը. հոն կ'աշխատին տեղացիներ և գերիներ. պահակախումբ մը կը հսկէ ճանապարհներու ապահովութեան: Եգիպտական բանակ մը տեւականօրէն կը մնայ Սինայի մէջ Հոս կը կառուցուին տաճարներ եգիպտական և տեղական աստուածներու նուիրուած: Ակամ Մեմֆիսեան թագաւորութեանէն Սինայը միշտ մնաց Եգիպտոսին

կցուած: Հոն հաստատուեցաւ եգիպտական գաղութ մը և դանդաղորէն այս թերակղզին եգիպտացաւ:

Փիլիսիպէի ՀԵՏ ԿԱՊ.— Փիլևիկեան քաղաքներէն Եգիպտոսը կապուած էր Բիբլոսի հետ, յետոյ տարածուեցաւ այդ կապը մինչև Որոնդէս: Բիբլոսը միջագոյսին առեւտրական կեդրոն էր դեռ 3000ական թուականներէն: Եգիպտոսցիք հոն կը հանդիպէին Միջագետքի առեւտրականներուն, որոնք արեւելքէն կուգային՝ կը հասնէին Միջերկրականի օփերը: Փիլևիկէն Եգիպտոսցիք կը տանէին մայրիի փայտ, գանազան իւղեր, ձիթապտուղ, անասուններ: Երբորդ հազարամեակի սկիզբներուն Եգիպտոսցիք կապուած էին Կրէտէի հետ, անոր շուկաներուն համար կը տանէին օփրիկեան բարիքներ՝ փղոսկր, ուլունքներ, կնիքներ, կենդանիներ, թանկագին քարեր, իսկ Եգիպտոսցիք Կրէտէն կը գնէին գէնք, պղինձ, ընտիր տեսակի կաւանօթներ: Անոնք սերտ հաղորդակցութեան մէջ էին Կիպրոսի հետ, որու պղինձի լաւագոյն գնողներն էին:

Այսպէսով՝ երբորդ հազարամեակի սկիզբներուն՝ երբորդ և չորրորդ հարստութեան թագաւորները կը կազմակերպեն Եգիպտոսի ապահովութիւնը, կը կառուցանեն ամրոցներ սահմաններու վրայ, պահակազօրք կը դնեն այնտեղ: Եգիպտոսի բուրգերէն մէկու հիմին մէջ այդ մասին կայ հետեւեալ արձանագրութիւնը: «Եգիպտոսի դուռները եւ ամուրթիւնները նոյնքան հաստատուն են որքան ասուածներու սիւները եւ անոնք երբեք չեն բացուիր արեւմուտքիցիներու առաջ, ոչ ալ արեւելքիցիներու, ոչ ալ հիւսիսայինցիներու ու հարաւայինցիներու համար, ոչ ալ կեդրոնի մարդոց համար, ալ միայն Հորուս աստու համար»: Մեմֆիսեան փարաւոնները կը բուականանան այսքանով: Սինայի զրաւուամը, մինչև երկրորդ սահանքին հասնիլը, Տելլաւայէն լիպիտցիներուն դուրս քշելը և բոլոր սահմաններու վրայ բանակներ պահելը միայն ինքնապաշտպանութեան միջոց մըն էր: Իսկ ասկէ դուրս ելող աշխարհներու

հետ Եգիպտոսի կապերը առեւտրական էին: Մեմֆիսեան փարաւոնները աւելի սերտ գործակցութեան մէջ մտան Միջերկրականի արեւելիան սււազանի երկիրներու և ժողովուրդներու հետ: Անոնք իրենց դէմքը դարձուցին արեւելք, հետագային դառնալու համար Մերձաւոր Արեւելքի անբաժանելի մէկ մասնիկը:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՅՔԸ. — Երրորդ, չորրորդ և հինգերորդ հարստութիւններու օրով Եգիպտոսը կը հասնի իր հզօրութեան, բարգաւաճման բարձր աստիճանին: Երրորդ հարստութեան մեծ դէմքը Ջուսուր էր, որ ամեն կողմէն Եգիպտոսի սահմանները պաշտպանեց, ամրութիւններ կանգնեց և կարգ ու կանոն վերահաստատեց: Անոր կ'օժանդակէր իր առաջին նախարարը Իմֆեօկալը. ան բազմապիսի տաղանդով օժտուած մարդ մըն էր, բժիշկ էր, կախարգ, ճարտարապետ. անոր հսկողութեան տակ շինուեցաւ Չէսէր թագաւորի դամբարանը: Ընդ հօրստութեան հիմնադիրը Սեֆթուհէն է, որ կը կանգնէ առաջին բուրգը: Անոր թողած բուրգերէն մէկը շինուած է Դաշուբայի մէջ, իսկ երկրորդը Սակարայի մէջ: Այս երկու բուրգերը կը տարբերուին իրարմէ կառուցուածքով: Դաշուբայի բուրգը գրեթէ կէսէն կը բեկուի և չորս քմերը կը միանան կեդրոնին: Բայց այս հարստութեան ամենամեծ փարաւոնները երեք բրգաշէն փարաւոններն են՝ Քեոփսը, Քեֆրէն և Միկերինը: Անոնց անուանները սերտօրէն կը կապուի հին Եգիպտոսի ամենէն մեծ բուրգերու շինութեան հետ: Քէոփսի կառուցած բուրգը 255 մեթր երկարութեամբ կողքի գիծ ունի, 147 մեթր բարձրութիւն: Այս ամենէն բարձր շէնքն է, որ գոյութիւն ունի երկրի վրայ: Այս բուրգերը թագաւոր աստու յաւիտենական բնակութեան տուններն են, անոնց դամբարանը: Ան կը կառուցուի ամբողջ ժողովուրդի աշխատանքով՝ զերծ պահելու համար փարաւոնի մարմինը քայքայումէն, փթումէն: Ոչ մէկ բան կրնայ աւելի կենդանի ապացոյց ծառայել փարաւոնի ամենակարող ու աստուածային ըլլալուն, որքան այս բուրգերը: Անոնք կա-

ռուցուած են անապատի սահմաններուն մօտիկ Գիղէի դաշտին մէջ, որ բարձր է Նեղոսէն և հեղեղումի վտանգէն ազատ: Իսրէգերլն ոչ հեռու քանդակուած է մարդու գըլխով և առիւծի մարմնով մէկ հսկայ կենդանի, որ կը նայի ծագող արեւին: Այդ նշանաւոր մեծ Սֆիքսն է, հաւանօրէն Քեֆրէնի փարաւոնի դիմագծով: Այս մեծ բուրգերու մօտիկ կը գտնուին շատ աւելի համեստ մեծութեամբ դամբարաններ, ուր փարաւոններու թոյլատրութեամբ թաղուած են իր ազգականները և նշանաւոր գործակիցները:

Չորրորդ հարստութիւնը իշխեց Եգիպտոսի վրայ հարիւր վաթսուն տարի (2840 - 2680): Այդ ժամանակամիջոցին ան շարունակեց նախկին փարաւոններու գործը՝ կազմակերպեց երկրի պաշտպանութիւնը. կանգնեց նոր ամրոցներ, արգիլեց օտարականներու զանգուածային տեղաւորուիլը Եգիպտոսի մէջ: Ներքին կեանքի մէջ՝ ան արքայական միապետութիւնը հասցուց իր բարձր աստիճանին: Փարաւոնը կրնար ըսել, որ պետութիւնը ինքն է:

Նոր մայրաքաղաք՝ Մեմփիսի հետ կը մեծնայ նաև Հելիոպօլիսը: Առաջինը քաղաքական կեդրոն է, իսկ երկրորդը՝ կրօնական: Այնտեղ կը գտնուէր արևի աստուած՝ Ռայի տաճարը: Երրորդ հարստութիւնէն սկսած Հելիոպօլիսի քուրմերը կը մշակեն՝ կրօնական ուսմունք մը, որու կեդրոնական դէմքը Ռա աստուածն էր: Հինգերորդ հարստութեան ժամանակ ան կը դառնայ գործ, իրականութիւն: Ռան աստուածներու մէջ առաջնութիւն կը վայելէ և այդ առաջնութիւնը կը պահէ Եգիպտոսի ամբողջ պատմութեան ընթացքին:

Հինգերորդ հարստութեամբ կը վերջանայ հին պետութեան փառաւոր և շինարար շրջանը շուրջ 2500 թուին: Վեցերորդ հարստութեան թագաւորները դեռևս կըրնային կառավարել Եգիպտոսը յենուելով իրենց մեծ հեղինակութեան վրայ:

Պեպի I մեծ և հզօր փարաւոններէն էր, ան շինարար և ռազմասէր թագաւոր էր, միառժամանակ կը սանձահարէր

տեղական իշխանները: Անոր անունը փորագրուած էր ձրկու Եգիպտոսի բոլոր յուշարձաններու վրայ, որ նշան է անոր իշխանութեան ճանաչման բոլոր նոմերու կողմէն: Պեպի II Թագաւորեց 94 տարի և նոյնքան հեղինակաւոր էր և հզօր միապետ, որքան իր մեծ հայրը՝ Պէպի I-ը: Վերջինիս օրով եգիպտացիք կը հասնին երրորդ սահանքին, կը մտնեն կուշի երկիրը, այսօրուան Հապէշիստանը: Եգիպտացիք գաղութներ կը հաստատեն հարաւի մէջ: Այստեղ անոնք կը հանդիպին սեւամորթ ցեղերու և համիտեան ժողովուրդներու: Նուբիան և կուշը կ'ընդունին Եգիպտոսի հովանաւորութիւնը: Նեղոսի հովիտի միջին և հիւսիսային մասերը կը միանան մէկ իշխանութեան տակ: Հարաւային Ափրիկէի նիւթական հարստութիւնը կ'ուղարկուի դէպի Եգիպտոս՝ փարաւոններու պալատը: Անոնք փարաւոնին կուտան նաև զինուորներ և սարուկներ:

ՓԱՐԱԻՌՆԻ ՀԶՕՐՈՒԹԻԻՒՆԸ.— Փարաւոնները երբեք այնքան հզօր չեն եղեր, որքան երրորդ-վեցերորդ հարստութեանց ժամանակ: Անոնք բացարձակ միապետներ են իրենց պետութեան մէջ: Անոնք կը թագաւորեն որպէս աստուածներ: Որպէս աստուած, անոնց կը պատկանի երկրի նիւթական ամբողջ հարստութիւնը՝ հողը, ջուրը, առևտուրը, արհեստները: Փարաւոնը ամեն իրաւունք ունի բոլոր եգիպտացիներու անձի և գոյքի վրայ: Հասարակութիւնը բաժնուած է դասերու, կար անտեսական անհաւասարութիւն, գոյութիւն ունի զիրքի, աստիճանի տարբերութիւն, բայց ասոնք բոլորը փարաւոնի առաջ հաւասար են. անոնց կեանքը, ստացուածքը, դիրքն ու աստիճանը կախում ունի միայն փարաւոնէն: Փարաւոնը կենդանի աստուած է և որպէս այդպիսին ան ոչ ոքի առջև պատասխանատու չէ: Ան է զեկավարը Եգիպտոսի բովանդակ կեանքին՝ հանրային աշխատանքներուն, երկրի պաշտպանութեան, դատի և դատաստանի, պաշտամունքին: Տեսանք որ Թինիսեան շրջանին փարաւոնի երկրային կեանքը, անունը ենթակայ է սահմանափակումներու: Այդ բանը կը շարունակուի նաև

Մեմֆիսեան շրջանին: Ան Եգիպտոսի տէրն է ու հովանաւորը, կեանքի աղբիւրը, գոյութեան պայմանը, ուստի ան պիտի պահէ իր ոգեկան կարողութիւնները, առողջութիւնը և կախարդական գորութիւնը:

Փարաւոնը ամեն տեղ ըլլալ չի կրնար, ան ունի իրեն հաւատարիմ ծառաները, պաշտօնեաները, որոնք անոր անունով կը կառավարեն երկիրը: Ինչպէս թիւիսեան շրջանին, ասոնք մեծ մասամբ իր ազգակիցներն են. մասամբ նախկին ինքնիշխան նոմարքոսներ, մասամբ օտարամուտ տարրեր: Այս բոլորը հաւատարմութեամբ կը ծառայեն փարաւոնին. իրենց բարձրացումն և անկումը անկէ է կախուած, ինչպէս իրենց զիրքն ու հարստութիւնը:

Փարաւոնին զոհ կը մատուցանեն ինչպէս աստուծոյ. իր մահէն յետոյ ան կը դասուի աստուածներու շարքը և վերէն ալ կը հսկէ իր ժողովրդի բարօրութեան վրայ: Փարաւոն-աստուծոյ համար կը կանգնեն դամբարաններ, ուր յաւիտենապէս պիտի հանգստանայ ան. մեզ հասած դամբարանները, բուրգերը նշան են, որ ժողովուրդը կը հաւատար փարաւոնի աստուածութեան, ան իր գոյութեան հիմքն է և երկրի հովանաւորը: Առանց այս խոր հաւատքին և համոզման, դժուար թէ միայն բռնութեամբ կարելի ըլլար բարձրացնել այս հսկայ կոթողները:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ.— Եգիպտոսի վարչութիւնը, որու հիմնական սկզբունքները մշակուած էին թիւիսեան միապետութեան ժամանակ՝ Մեմֆիսեան շրջանին աւելի կը զարգանայ, կը կատարելագործուի. թագաւորէն յետոյ առաջին դէմքը և պաշտօնեան նորէն վեզիրն է, որու ձեռքն է դատավարութիւնը: Անկէ ետքը պալատի և քաղաքական կեանքի մէջ մեծ դեր ունին քուրմերը, որոնք տաճարական գործեր կը վարեն փարաւոնի անունով: Բոլոր տաճարներու և աստուածներու գլուխը կանգնած է փարաւոնը, որպէս աստուած՝ ան տէրն է բոլոր տաճարներու հարստութեան: Գուրմերէն ետքը կուգան դատաւորները, պետական գանձատան վարիչները, պահեստներու և կալուածներու կառա-

վարիչները, նոմերու և բանակի պետերը, որոնք փարաւոնի անուսնով կը կատարեն իրենց պաշտօնները: Այս բարձր պաշտօնէութիւնը մէջտեղ կուգար կամ արքայական ընտանիքէն, անոր մօտիկ ազգականներէն, կամ մասնագիտացած, իրենց գործը հմտօրէն իմացող դպիրներու քանի մը ընտանիքներէն, որոնք սորվեր և կազմուեր են տաճարական դպրոցներու մէջ: Ասոնք է որ կը կազմեն «արտօնեալներու դասը»: անոնց ապրուստը կը հայթայթեն թագաւորի կալուածները: Փարաւոնը յաճախ ասոնց ծառայութեան փոխարէն հողեր կուտայ: Իբրև բարձր բարեհայեցողութեան նշան թագաւորը թոյլ կուտայ, որ «արտօնեալները» թաղուին արքայական դամբարանի կամ բուրգի շուրջը: Այս կը նշանակէ, որ անոնք մասնակից են նաև միւս կեանքի առաւելութիւններուն, որ վերապահուած է միայն փարաւոնին: Բարձր և վարիչ այս պաշտօնէութեան թիւը կը հասնէր մօտ հինգ հարիւրի: Ասոնք՝ արքայական ընտանիքի հետ կը կազմեն տեսակ մը փարաւոնի աւագ սպասուորները՝ պալատի մէջ ապրող և մասնակից՝ կրօնական և քաղաքական արտօնութիւններուն: Բնակչութեան միացած մասը կ'ապրի և կ'աշխատի կամ գիւղերու, կամ քաղաքներու մէջ, աստուածներու տաճարներու, թագաւորի ու պալատի համար:

ԻՇԵԱՆՈՒԹԵԱՆ ՁԵՒԱՓՈՅՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՊՈՒՄԸ.— Փարաւոնի այս անսահման իշխանութիւնը կ'ըսկսի թուլանալ: Այդ բանը նկատելի է Բուրգերու շինուածքէն: Վեցիորորդ հարստութեան փարաւոններու բուրգերը հազիւ երեսուն մետր բարձրութիւն ունին: Ընդհակառակը Հելիոպոլիսի քուրմերու ուսմունքի մէջ Ռա աստուածը արտակարգօրէն մեծ հեղինակութիւն է ստացած: Անոր նուիրուած տաճարները կը մեծնան, կը հարստանան, երբ փարաւոններու բուրգերը կը փոքրանան: Այս՝ քրմական դասի յաղթանակն է փարաւոնի իշխանութեան վրայ: Թագաւորի իրաւունքները կը կրճատուին: Հինգերորդ հարստութիւնէն սկսած Ռան է, որ մեծ պատիւներու և զոհարերու

Թեան կ'արժանանայ. փարաւոնի հեղինակութիւնը կը նսեմանայ, մինչ աստուածներունը կը մեծնայ, յատկապէս Ռախնը: Վերջինիս համար փարաւոնները կը շինեն մեծ և շքեղ տաճարներ, որու թագն ու պսակը կը կազմէ հսկայ ճառագայթաձև սիւն մը, Ռա աստուծոյ խորհրդանիշ՝ Օբէ-լիսկը: Փարաւոնը այժմ աստուած է, այլ ճեպի ուղիւ: Իր մահէն ետքը ան հաշիւ պէտք է տայ ըրած գործերուն համար աստուածներու դատարանի առջև՝ որուն կը նախագահէ Ռան:

ՔՐՄԱԿԱՆ ԴԱՍԻ ՀԶՕՐԱՅՈՒՄԸ.— Փարաւոնի դիրքի և հեղինակութեան անկումի պատճառը քրմական դասն է, որ այժմ քաղաքական և ընկերային կեանքի ղեկավարն է. ան կը պայքարի փարաւոնի դէմ և կը յաղթանակէ: Ան ձեռք կը բերէ նաև նիւթական մեծ հարստութիւն աստուածներու տաճարներու և իր դասը համար: Փարաւոնը իր կալուածներէն մաս մը կուտայ աստուածներուն: Այս կալուածները կը գտնուին քուրմերու տրամադրութեան տակ. անոնք կը մշակեն, կը շահագործեն տաճարական հարստութիւնը և կը գործադրեն իրենց դասային շահերու համար: Ամբողջ երկիրը աստուածներուն կուտայ տասնորդո-այս բոլորը կը հաւաքուին տաճարական շտեմարաններու մէջ: Անոր մէկ մասը կը գործադրուի զպրօցներ պահելու համար, մէկ մասը աստուծոյ սպասարկութեան և քրմական դասի պահպանման համար: Տաճարական կալուածները և հասոյթները ազատ էին պետական սուրբերէ, ինչպէս և տաճարական հողերու զիւղացիներն ու ստրուկները:

ԱՐՅՈՆԵԱԼ ԴԱՍԻ ԱԶԱՏՈՒԻԼԸ.— Քրմերու տարած այս յաղթանակէն կեդրոնական իշխանութեան վրայ, օգտուեցան հասարակութեան ճարտօնեալք դասը, ան որ փարաւոնի անմիջական սպասարկութեան մէջ էր և կը վայելէր անոր առատաձեռն նուէրները: Փարաւոնին դէմ կը ծառայան իր ազդականները, բարձր պաշտօնեաները, նոմարքոնները: Ասոնք կը ջանան հին քաղաքական ազատութիւնները ձեռք բերել: Բարձր արտօնեալ դասը կը փորձէ ան-

կախանալ՝ թագաւորին հարկ չտալ, տուրք չտալ: Երկրի միութիւնը կը քայքայուի: Նոմարքոսները, քուրմերը, փարաւոնի ազգականները թոյլ թագաւորներէն ձեռք կը բերեն հարկ չի վճարելու և ազատութեան հրովարտակներ: Կ'ըստեղծուի տասնեակներով մեծ ու փոքր իշխանութիւններ՝ իրենց բանակով, հարկային միաւորներով, դատարաններով: Ասոնք իշխանութիւնը կը դարձնեն ժառանգական իրենց տոհմերու մէջ: Փարաւոնի որդիները, եղբայրներն ալ անջատման միտում կը սնուցանեն: Երբեմնի պետական վարչական մէկ միաւորը՝ կը դառնայ այս կամ այն իշխանի, քուրմի անձնական կալուածը: Պատասխանատու պաշտօնեան՝ իր պաշտօնի սեփականատէրը: Մէկ փարաւոնի փոխարէն առաջ կուգան բազմաթիւ մեծ ու փոքր փարաւոններ: Ասոնք մեծ դամբարաններ կը կառուցեն իրենց համար, կը ջանան անմահութեան տիրանալ, միւս կեանքի մէջ աստուածներու շարքին դասուիլ:

ՌԱԶՄԱԿԱՆ ՈՒԺԻ ԹՈՒԼԱՅՈՒՄԸ.— Ներքին այս բաժանականութեան հետ ռազմական ուժն ալ կը թուլնայ: Սահմաններէն ներս կը խուժեն օտարականներ, ասոնք կը հաստատուին Տելդայի մէջ, ուր օտար տարրը կը մեծնայ: Լիպլացիք նորէն կ'ըսպառնան Եզրիպտոսին: Պէպի 11-ի երկար տասնամեակներու իշխանութիւնը նպաստեց ռազմական տկարացման: Նոմերը այլեւս զինուոր չեն տար, վարձկանները կը դառնան անվստահիլ սահմանապահներ: Ասոնք երբեմն կ'ապստամբին, կ'աւերեն ու կը կողոպտեն: Երկիրը կը մատնեն անիշխանութեան: Անջատողական և անիշխանական այս շարժումը վերի դասերէն, քուրմերէն և բարձր պաշտօնեաներէն կ'անցնի խոնարհ խաւերուն: Ասոնք կը յարձակին տաճարական կալուածներու վրայ, կը կողոպտեն և կ'ըսպանեն քուրմերը: Չեն խնայեր անգամ արքայական դամբարանները: Ամբողջ հասարակութիւնը յեղափոխական շարժման մէջ կ'իյնայ: Այս շարժման զոհ կ'երթայ Մեմփիսեան միապետութիւնը շուրջ (2360 թուին): Ընկերային և քաղաքական այս անիշխան

նութիւնը որ տեւեց երկու դար (2360—2100) հիմքէն յեղաշրջեց Եգիպտոսի ընկերային յարաբերութիւնը: Իվերջոյ իշխանութիւնն ինկաւ — Հեռակլիոպոլիսի սզնուական ընտանիքներէն մէկուն ձեռքը: Պետութեան կեդրոնը փոխադրեց Միջին Եգիպտոս. Տելլահան լքեց, ան մնաց արեւելքէն և արեւմուտքէն խուժող վաչկատուններու հարուածներու տակ: Բայց հարաւը այնքան ալ ենթակայ չէ՛ք Հիւսիսի այս քայքայման: Հոն կային ուժեր, որոնք կրնային կարգ ու կանոն հաստատել, ուժեղ իշխանութիւն ստեղծել: Թէքէն պայքարեցաւ Հեռակլիոպոլիսի իշխանութեան դէմ և յաղթեց շուրջ 2100 թուին: Մայրաքաղաքը նորէն վերին Եգիպտոս փոխադրուեցաւ: Սկսաւ Թեբէյսաց միապետութիւնը:

2. ՄՇԱԿՈՅՅ

Հին Եգիպտոսի Մեմֆիսեան շրջանի մշակոյթը մեզի ծանօթ է բուրգերու, դամբարաններու նիւթական մնացորդներէն և կրօնական գրականութենէն: Այս մշակոյթը սերտորէն կապուած է կրօնի հետ: Եգիպտացիները ամենէն կրօնական ժողովուրդն են: Կեանքը և մահը տեւականօրէն գաղեցողներ են անոր միտքը: Կրօնը կարգաւորեր է անոր կենցաղը, տուեթ է անոր բարոյական պատուէրներ, ստեղծեր է մեծ գրականութիւն:

ՀԱՆԳՈՅՆ ՊԱՇՏԱՄԱՐՈՒՆԻՅԸ. — Հին Եգիպտացիք բնութիւնը լեցուցեր էին չար և բարի ոգիներով, ասոնք կ'ապրէին երկնային մարմիններու, բոյսերու, կենդանիներու մէջ: Անոնք կը հաւատային, որ մարդու մէջ կայ բան մը, որ յաւիտենական է, նիւթէն բարձր է և իր մահով չի կորսուիր, այլ կ'ապրի: Այս անմահը զանազան անուններով կը կոչուէր: Այս ըմբռնումը մարդուն կը հասցնէր անդրշիրմեան կեանքի գաղափարին: Բնութեան մէջ տեղի ունեցող ամեն երեւոյթ պաշտամունքի առարկայ էր:

Այդ շատ յաճախ կ'ըստանար խորհրդաւոր երեւոյթ: Մար-
դը կը ջանար ոգիներու հետ խաղաղութեամբ ապրիլ,
անոնց հետ հաշտ ըլլալ, մարդկային իւրաքանչիւր խմբակ-
ցութիւն՝ բնութեան այս կամ այն առարկան, բոյսը, կեն-
դանին, եւայլն, պաշտամունքի առարկայ կը դարձնէ, կը
կապուի անոր հետ խորհրդաւոր կապերով, ազգակցու-
թեամբ: Ամեն խումբի մէջ առաջ կու գան ընտեաններ,
ընդունակ ու ճարպիկ մարդիկ, որոնք աւելի շատ բան գի-
տեն աստուածներու, ոգիներու մասին, քան սովորական
մարդիկ: Անոնք ծէսերու, արարողութիւններու միջոցով,
հմայութեամբ, կախարդութեամբ կը փորձեն «տիրել» ո-
գիին, անոր խորհրդաւոր զօրութեան տէր դառնալ և օգ-
տագործել իրենց համայնքի համար: Անոնք են, որ կը
մշակեն ծէսեր, արարողութիւններ, աղօթքի բանասէներ,
աստուածներու մասին պատմութիւններ: Այս բոլորը կը
բարձրացնէ այդ մակդոց հեղինակութիւնը հասարակու-
թեան մէջ: Այսպէսով կ'ըստեղծուի կախարդներու, քուր-
մերու դասը: Ոգիներու գտնուած վայրերը կը դառնան
սրբատեղիներ: Մարդիկ կ'ըսկսին պաշտել աղբիւրները՝ ուր
յաւերժահարսեր կ'ապրին, լեռներու գագաթները, ուր
աստուածներ կը բնակին և ուր երկիրն ու երկինքը կը
միանան, անտառները, ուր հոգիներ կը հաւաքուին, կը
խօսին իրարու հետ, գետերը, որ մարդոց ջուր կու տան,
հողը, որ կը կերակրէ: Կը վախնան անապատէն, ուր շար
ոգիներ կ'ապաստանին և կախարդութեամբ կը պայքարին
անոնց դէմ: Երբեմն ալ արհեստական սրբատեղիներ կը հիմ-
նեն բարի աստուածներուն համար: Այս վայրերուն մէջ
մարդիկ կը հաւաքուին, միասին կ'աղօթեն, կը զոհաբերեն:

Քուրմերը և կախարդները աւելի մօտ էին աստուծոյ,
անոնք կը կատարէին միջնորդի դերը, կը յայտարարէին
աստուծոյ կամքը: Հին մարդիկ կ'ուզէին, որ աստուած,
ոգի, իրենց մօտ ըլլայ, միշտ իրենց հետ: Կը քանդակին
աստուծոյ կերպարանքը, կու տային անոր կենդանիի, բոյ-
սի կամ մարդու ձեւ: Սկիզբը՝ կրօնական այս պատկերա-
ցումները անկատար էին ու թերի:

Եգիպտացիք ունէին քանի մը տասնեակ ծառեր, հարիւրէն աւելի կենդանիներ, որոնք կը պաշտէին, և կը համարէին ճտուրբ և անհպելի: Անոնք ոգիներու խտացումն էին: Ասոնցմէ քանի մը հատը համաեգիպտական հուշակատացան և ընդհանուր պաշտամունքի առարկայ դարձան: Այդպէս էին բազէն, շնագայլը, կոկորդիլոսը, ապիս եզը: Շատերը մնացին մեկուսացած, և միայն տեղական պաշտամունքի առարկայ: Աստուածներու բազմազանութեան մէջ քուրմերը մտցուցին կարգ: Առաջ եկաւ աստուածներու համակարգութիւն մը: Նախնական՝ թէ Թինիսեան և թէ՛ Մեմֆիսեան շրջանին՝ աստուածները մարդոցմէ շատ ալ բարձր չէին: Ունէին նոյն կիրքերը, շահերը, կենցաղը: Մարդիկ անոնցմէ կատարելութիւն չէին պահանջեր: Անոնք խնճոյքներ կ'ընէին, կը պայքարէին, կը դաւադրէին իրարու դէմ, կը մեռնէին: Անոնք ալ մահկանացու էին, միայն թէ կախարդական միջոցներով կրնային յարութիւն առնել:

Աստուածներու համակարգութեանց մէջ՝ մէկը կ'ըլլար առաջին աստուած, միւսները ավգակցական, ընտանեկան կապերով կապուած կ'ըլլային անոր հետ: Կը դառնային անոր օգնականները, գործակիցները: Ամենէն մեծ գործերը կը վերագրուէին առաջին աստուծուն, ան՝ թովորաբար կ'ըլլար բնութեան՝ արեւի, լուսնի, երկրի աստուածը: Պետական իշխանութեան հզօրացման հետ ան նոյնացաւ մայրաքաղաքի աստուծոյն հետ և անոր հետ միասնաբար նպաստեց Եգիպտոսի բարգաւաճման: Եգիպտացիք իրենց աստուածներու անուան հետ կը կապէին Եգիպտոսի հնագոյն պատմութիւնը: Ըստ աւանդավէպերու՝ փարաւոններէն առաջ հոն կ'իշխէին աստուածները: Յետոյ անոնց իշխանութիւնը փոխանցուեցաւ հերոսներու կառավարութեան, և ասոնց աւելի յետոյ յաջորդեցին փարաւոնները:

ՌԱ ԱՍՏՈՒԱԾԸ. — Առաջին աստուածը, որ կը թագաւորէ երկրի վրայ Ռան է: Անոր պաշտամունքը գոյութիւն ունէր Թինիսեան միապետութեան ժամանակ, բայց ան բացառիկ դիրք ունեցաւ և ընդհանուր պաշտամունքի առար-

հայ դարձաւ միայն, չորրորդ հարստութեան և անոր յաջորդող շրջանին: Սկիզբը ան բազմաթիւ տեղա- կան աստուածներէն մէկն էր, բայց Հէլիոպոլիսի Ռա աս- տրծոյն քուրմերը անոր հետ կապուած նոր ուսմունք մշա- կեցին և ընդհանրացուցին: Բաւրմերու մէջ կային գիտուն մարդիկ, որոնք շատ էին բարձրացեր ժողովուրդը պար- զունակ հաւատքի մակարդակէն և աստուածներու շօշափե- լի, նիւթեղէն պատկերացումէն: Անոնք շատ անգամ կը փորձէին մաքրել Եգիպտոսի կրօնը աւելորդ և սեռօտի մա- սերէն և անջատել մարդկային բարքերէն ու կիրքերէն, աւելի բարձր, բարոյական յատկանիշներ տալով անոնց: Այս աշխատանքը կատարուեցաւ քանի մը տաճարներու և անոնց քուրմերու շրջանակին մէջ, բայց ամենէն մշակուա- ծը Հէլիոպոլիսի քուրմերունն էր: Ասոնց շրջանակէն դուրս եկաւ իմենակը, այսինքն ինը աստուածներու համակարգու- թիւնը, որու գլուխը կանգնած էր Ռա աստուածը: Միւս- ները անոր օգնականներն էին, անոնցմէ իւրաքանչիւրը իր գործն ունէր տիեզերաշինութեան մէջ: Ռայի առաջնու- թիւնը՝ քուրմերու ճնշման տակ՝ ընդունեցին նոյնիսկ փա- րաւոնները, իրենք ալ դարձան անոր որդիները: Ռան հայր աստուած էր: Հինգերորդ հարստութենէն սկսած Եգիպտոսի ըլոր քաղաքներուն մէջ Ռայի համար տաճարներ կառու- ցին: Անոնք Ռայի հետ միացուցին իրենց տեղական աստ- ուածները անոր մէկ յատկութիւնը վերագրելով իրենց աստուածոյն: Օրինակ, Թէբէի Ամոն աստուածը դարձաւ Ամոն-Ռա, Մեմֆիսի Պտաճ՝ Պտա-Ռա:

Ռան սկիզբը երկրի վրայ կը թագաւորէր, Հէլիոպոլիսի քուրմերու ուսմունքին համաձայն՝ ան յետոյ թագաւորեց Կրկինքի մէջ, ուրկէ ան կը հովանաւորէր «Եգիպտոսի իր որդին», փարաւոնին: Ռան դարձաւ երկինքի և տիեզերքի աստուած, իր նաւակը նստած՝ ան շրջանը կ'ընէ տիեզեր- քին: Անոր անուան հետ կապուեցաւ տիեզերածնութիւնը, որուն մէջ իբրեւ օգնական ունի իր ազգակից աստուած- ները: Ամենուրեք ան կը սփռէ լոյս, արդարութիւն և ճշ-

մարտութիւն. քուրմերը Հորուս-Բազէ աստուծոյն շուրջ հիւսուած պատմութիւններն ալ կ'ապեցին Ռայի հետ, Ռան դարձաւ արեգակնային գունդով թագադրուած աստուած — Հորուս-Ռա, որ կը մարմնաւորէր բազէի գլուխով մարդը, վերջինս խորհրդանիշն էր փարաւոնի:

Վուրմերը շարականներ կը հիւսէին Ռային փառաբանելու համար, և որոնք միաժամանակ կենսատու արեւին գովքը կ'ընէին: «Կենդանի արեւ, քու ամբողջ գեղեցկութեամբդ կը ծագիս երկնային հորիզոնին վրայ: Վու հառազայքներդ կ'իյնան քու սեղծած բովանդակ աշխարհիդ վրայ: Դո՛ւն, մե՛ծ Ռա, կը նուանես ամենք քու սիրովդ: Դո՛ւն սեղծեցիր երկիրը քու կամովդ, եւ անոր հետ նաեւ բոլոր կենդանիներու հոսերը, բոլորը իճշ որ կայ եւ կ'ապրի երկրի վրայ, իճշ որ կը լողայ ջուրի մէջ, կը թռչի թւերով: Դո՛ւն սեղծեցիր Նեղոսը, իր խորութեամբ եւ հասցուցիր մեզի քու կամովդ, որպէսզի ան սնուցանէ մարդիկը: Բոլոր հեռաւոր երկիրներուն դուն սնունդ հայրաքեցիր եւ Նեղոսը տղաւորեցիր երկիւնին մէջ, որ ան՝ անձրեւին հետ վար թափի անոնց վրայ: Ա՛ն ք որ կը բարձրացնէ երկնային ջրվեժներու այլիք. ները իճշպէս ովկիանոս եւ խոնաւութիւն կը բաշխէ դառնութեան: Ուրքան գեղեցիկ են քու հաստատած կարգերդ, ո՛վ տես յաւիտեանականութեան»:

ՕՁԻՐԻՍԻ ԴԻՑԱՎԷՊԸ.— Օգիրիսը՝ ամենէն ժողովրդապան աստուածն էր Եգիպտոսի մէջ: Հելիոպոլիսի քուրմերու դիցաբանութեան մէջ, ան կը համարուէր Ռա աստուծու ժառանգներէն մէկը: Ան երկրի և երկինքի որդին էր, իր մէջ կ'անձնաւորէր նախ Նեղոսի կենսարար ջուրը, հետագային ան արարչագործութեան, կեանքի սկզբունքն դարձաւ, որով նաև երկրի աստուածը: Ան սկիզբը Տելուայի արևմտեան կողմերը նոմի մը աստուածն էր միայն, բայց հաւանաբար այդ նոմի հզօրացումով, ան ալ իրեն մէջ առաւ Ստորին Եգիպտոսի բոլոր մեծ աստուածները: Իզիսը դարձաւ անոր կինը, Հորուսը անոր որդին. Թոթը, Սնուսը անոր դաշնակիցները և գործակիցները: Օգիրիսը բա-

րեգուլթ, ստեղծիչ թագաւոր-աստուած է. ան կը սորվեցնէ իր հպատակներուն քաղաքակրթութեան տարրերը, դուրս կը բերէ բարբարոսութենէն և կ'առաջնորդէ աւելի կատարեալ կեանքի մը, ուր գոյութիւն կ'առնէ մետաղագործութիւն, երկրագործութիւն, դանազան արհեստներ, ջր-րանցքաշինութիւն: Թոթ աստուածոյ հետ՝ ան կը հնարէ գիրն ու գրականութիւնը, իր կնոջ՝ Իզիսի հետ ան կանանց կը սորվեցնէ տնային գործեր, հիւսելը, մանելը: Իզիսը մարդոց կ'ուսուցանէ կախարդութեան արուեստը, ամ-մահութիւն պարզեող ծէսերը, հիւանդութիւններու դէմ պայքարելու միջոցները: Իր ամուսնին՝ Օզիրիսի գիշերային ճամբորդութիւններու բացակայութեան Իզիսը կը հըս-կէ աշխարհի կարգ ու կանոնին վրայ:

Օզիրիսը ունէր եղբայր մը՝ Սէթը: Ան կ'ըսպաննէ Օզիրիսը եթանասուներկու դաւակիցներով: Անոր մարմինը կը կտրատեն և կը նետեն Նեղոսի ջրերը: Սէթը կը թագաւորէ աշխարհի վրայ իր եղբոր փախաբէն: Ամբողջ տիեզերքը կը մասնուի չարութեան ոգու մենատիրութեան: Գիցարանութիւնը չի յիշէր սպանութեան պատճառը, բայց կ'ըսէ, որ այդ բանը տեղի է ունեցեր նոյնմբերին, այսինքն երբ Նեղոսի ջրերը կը նուազին, երբ Եգիպտոսը կ'ընկրկի անապատին առաջ, երբ ջուրի պակասէն կենդանի, բոյս մահանալու սպառնալիքի տակ կը գտնուին: Օզիրիսի մարմնի մասերը ջրերերու մէջ և արևուն տակ կը քայքայուին, կը նեխուին, եթէ օգնութեան չը հասնէր իր կինը՝ Իզիսը: Ան կախարդութեան աստուածուհին է: Միայն ան գիտէ անմահութեան գաղտնիքը: Ան Նեղոսի ջրերուն մէջէն կը հաւաքէ Օզիրիսի մարմնի մասերը, կը միացնէ, կը կցէ իրարու և ամբողջութեամբ կը վերակազմէ: Ապա իր բարեկամ աստուածներու՝ Թոտի, Անուբիսի հետ՝ կը շինէ առաջին մոմիան: Ան կ'անջատէ, կը հանէ մարմնէն անոր՝ գիւրութեամբ նեխումի ենթակայ մասերը ուղիղը, փոքրտիքը՝ կը լուայ, կը մաքրէ մարմինը՝ արմաւի գինիով. զանազան անուշահոտ իւղերով, ապա

դիակը կը դնէ ազի ջուրի մէջ, ուր կը պահպանուի երկար ժամանակ, յետոյ կը զմրսէ և կը փաթթէ ու կը կապէ երիզակապերով: Յետոյ կը դնէ փայտէ դագաղին մէջ, իսկ աս ալ քարէ մեծ դամբարանի մը մէջ: Օզիրիսի վրայ Իզիսի գործադրած կախարդութեան առաջին մասն է այս: Այս բոլորը Օզիրիսին կուտայ միայն մարմնի ամբողջակաշունթիւն և միութիւն: Յետոյ Իզիսը կը քանդակէ Օզիրիսի արձանը անոր երիտասարդութեան, կենսունակութեան տարիքին և այդ արձանին կեանք կը ներշնչէ: Զեոքերուն և ոտքերուն շարժում կուտայ, բերան, աչքեր և ականջներ կը բանայ: Այսպէսով՝ արձանը կ'ըստանայ քալելու, խօսելու, տեսնելու և լսելու-ընդունակութիւն: Օզիրիսը յարութիւն կ'առնէ, ան կը դառնայ յարուցեալ աստուած: Բայց ան այլևս չի վերադառնար այս աշխարհը. այլ կ'անցնի յաւիտեանական աշխարհը և հոնկէ կը հովանաւորէ Եգիպտոսը: Իզիսը կը յաղթէ մահուան: Օզիրիսը կը խորհրդանշէ միշտ և պարբերաբար վերածննդ կեանքը: Ան կը մեռնի, անոր մարմնը մասերը կը ցրուեն ամբողջ Եգիպտոսի մէջ: Ինչպէս հատիկը. որ պիտի մեռնի, որ իրմէ նոր կեանք առաջանայ, այնպէս ալ Օզիրիսը երկրի ընդերքէն նոր կեանքի կը կոչէ բուսականութիւնը: Առանց մահուան կեանք չկայ: Բոյսն ու կենդանին պիտի մեռնին կեանքի յաւերժացման համար: Օզիրիսը բոյսին, հատիկին կեանք տուող ստուռածն է: Ան նաև տառապող, շարժաւող աստուծոյ խորհրդանշն է: Բնութիւնն է, մայր հողը, որ կեանք կուտայ բոյսին ու կ'աճեցնէ: Բոյսը կը մեռնի, մահը կը տիրէ աշխարհին, մինչև որ հողի, երկրի խորքերէն նոր կեանքը կը ծնուի: կեանքի և մահուան յաւերժական այս շրջանառութիւնը Օզիրիսի մահուան և յարութեան միջոցով կ'արտացոլայ:

ՎԵՐՋԻՆ ԳԱՏԱՍԱՆԸ ԵՒ ՄԵՌԵԼՆԵՐՈՒ ԳԻՐՔԸ.— Բայց Օզիրիսի կրօնը այս սահմաններու մէջ չ'մնաց: Քիչ մը ուշ, Թէպէեան միապետութեան շրջանին, քաղաքական և տնտեսական յեղափոխութիւններու մէջ, աստիճանաբար

Ֆշակուեցաւ Օգիրիսեան կրօնի բարոյական սկզբունքները: Մեմֆիսեան շրջանին Օգիրիսեան ծէսերու գործադրութիւնը բաւական էր անմահանալու, յաւերժական կեանքով ապրելու: Անմահութիւնը առանձնաշնորհեալ սեփականութիւնն էր արքայական ընտանիքին և անոր ազգակիցներուն: Թէպէտեան թագաւորութեան ժամանակ անմահանալու համար կը պահանջուէր ոչ միայն ծէս, այլ և բարոյական կեանք: Պէտք է, որ ամեն մարդ այս աշխարհի մէջ ունենայ, ապրած լինի առաքինի և արդար կեանք: Օգիրիսը կը դառնայ մեռելներու դատաւոր և իր քառասուն երկու ընկերակից աստուածներու ու Անուբիսի և Թոտի հետ կը դատէ բոլոր մեռելները: Ամեն Եգիպտացի նախ քան անդրշիրիմեան կեանքի մէջ մտնելը հաշիւ պիտի տայ իր կեանքի մասին, ըրած բարի և չար գործերու մասին:

Օգիրիսի նախագահութեամբ կը կազմուի «մեռելներու դատարանը» և բոլորի հոգիները առանց դասի խտրութեան պիտի անցնին անոր քննութեան բովէն: Միայն անոնք, որոնք արդար և առաքինի կեանք են վարած, արժանի կ'ըլլան անդրշիրիմեան կեանքի պալատներուն և ռարախութիւններուն և հոն ալ կը վարեն երջանիկ և ճոխ կեանք:

Վերջին դատաստանի այս քննութիւններէն անցնելու համար մեռածի հետ գերեզման կը դնէին պապիրուսի թերթեր, ուր յիշուած կ'ըլլային կրօնական և բարոյական պատուէրներ, ինչպէս և կախարդական անհրաժեշտ գրութիւններ, բանաձեւեր: Այս բոլորի ամբողջական ժողովածուն կը կազմէր մեռելներու գիրքը: Այս գիրքը եգիպտական կրօնի սրբազան գիրքն էր և անոր իմաստութեան ու բարոյական ըմբռնումներու համագումարը: Եգիպտոսը չունեցաւ իր իրաւական գաղափարներու հաւաքածոն, օրէնքներու ժողովածուն, բայց դարերու փորձառութեամբ ստեղծեց, մշակեց իր «մեռելներու գիրքը», որ միաժամանակ բարոյական սկզբունքներու հրահանգներ են այս աշխարհի մէջ ապրող մարդոց համար: Մեմֆիսեան շրջանին «մեռելներու գիրքը» ունէր 453 գլուխ, աստիճանաբար

ան ամփոփուեցաւ, կրճատուեցաւ և Եգիպտոսի պատմութեան վախճանին կը բաղկանար միայն 165 գլուխներէ: Թէ ինչ կը պահանջէր Օգիւրիսեան արդարութիւնը իրեն հետեւորդներէն ցոյց կուտայ հետեւեալ պարբերութիւնը «մեռելներու գրքէն»: Մեռեալը Օգիւրիսի դատարանին առաջ կ'արդարացնէր իրեն ըսելով՝ «ես աւխաբի մեզ չարիք չեմ գործեր, բռնութիւն չեմ բեր, դաւաճանօրէն ես մարդոց չեմ սպաներ, ես չեմ կրնա՛ս ասուածներու գոհեր. նուէրներ. ես սուս չեմ խօսեր, պաճառ չեմ եղեր ուրիշներու արցունքին, անմաքուր չեմ եղեր, սրբազան կեանքանքներ չեմ սպաներ, մեակուած դաճեր չեմ փնացուցեր... իմ մեղքները չեմ հարստահարեր, չեմ ստիպեր աւելի աւխաճելու, քան ինչ որ անհրաժեշտ էր: Ես չեմ բեր ինչ որ հանելի չէր ասուածներուն... Ես երբեք չեմ խլեր երեխաներէն իրենց կաթը, չեմ կտրեր իմ դրացիիս արօին ջուրը»:

Բարոյական այս ըմբռնումներով եգիպտական կրօնը կը հասնի իր կատարելութեան. ան կ'ազատագրուի բնութեան ուժերու պաշտամունքէն, կը թեւակոխէ կրօնի բարոյական օրէնքներու աշխարհը, ինչ որ ընկերային մեծ յեղաշրջումներու հետեւանքն էր նախ Մեմփիսեան, յետոյ Թէպէլեան միապետութեանց շրջաններուն: Եգիպտական կրօնի բարոյական պատուիրանները առաջին գլուխն է մեծ գաղափարներու մշակման, որ քիչ յետոյ պիտի զարգանար Իսրայէլի, ապա Զրադաշտի և հետագային քրիստոնէութեան մէջ:

ԱՆԴՐՇԻՐԻՄԵԱՆ ԿԵԱՆՔԸ, ՄԵՌԵԼՆԵՐՈՒ ՊԱՇՏՈՒՄՈՒՆՎՈՒԹՅԱՆ ԵԳԻՊՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵՆԷՆ Ե ԿԱՌՈՒՄՈՒՄՆԵՐԷՆ Կը տեսնենք, որ հին Եգիպտացիին կը մտածէր անդրշիրմեան կեանքի մասին: Դամբարանները շատ ընդարձակ էին, մուր կառուցուած, անոնց պատերը ունէին գծագրութիւններ, արձանագրութիւններ, նկարներ, աղօթքներ, պատմութիւններ: Գերեզմաններէն հանուած են զարդեր, պնակներ, գէնքեր և գործիքներ, կահկարասիներ: Այս բոլորը

ցոյց կու տան, որ Մեմֆիսեան շրջանէն շատ առաջ Եգիպտոսացիք ունէին շատ որոշ պատկերացումներ անդրշիրիմեան կեանքի մասին: Այս գիւտերը մեզի որոշ գաղափար կու տան նաեւ Եգիպտոսացիներու այս աշխարհի մէջ վարած կեանքի, կենցաղի, առօրեայ նիստ ու կացի, նիւթական հարստութեան և արուեստի մասին:

Եգիպտոսացիներու ըմբռնումով կեանքը կապուած է Եուլիշին հետ: Կեանքը կ'արտայայտուի շարժումներու, սրտի բարաստումի, շնչառութեան մէջ: Շունչը կտրել՝ կը նշանակէ մահանալ: Քնած ժամանակը շունչը կը լքէ մարմինը Մահը շունչի, ոգիի մշտական բաժանումն է մարմինէն: Մարմինը լքելէն յետոյ ոգին կը թափառի երկար ժամանակ. բայց ան հանգիստ չի գտներ, առանց իր մարմնի մէջ տեղաւորուելու: Ուրեմն՝ անհրաժեշտ է, որ մարմինը պահուի անաղարտ դրութեան մէջ, պէտք է, որ ան շնչառուի, չքայքայուի: Ահա թէ ինչու մարմինը կը վերածուէր մոմիայի: Երբ ոգին, շունչը կամ կրկնակը տեղաւորուի իր մարմնի մէջ, անհրաժեշտ է անոր ուտելիք, լսմելիք մատուցանել որ ան դժգոհ չմնայ: Անդրշիրիմեան կեանքի մէջ ալ ան նոյն կեանքը պիտի սպրի, նոյն պահանջները պիտի ունենայ, ինչ որ այս աշխարհի մէջ:

Անդրշիրիմեան կեանքի այս պատկերացումը շատ նիւթական էր, բարձր գաղափարներէ զուրկ: Որու որ մարմինը ենթարկուէր մոմիացման, որուն վրայ որ կատարուէր Իգիսեան՝ անմահութիւն պարգեւող ծէսերը, կատարուէր թիւնները, ան ալ կ'ըստանար յաւիտեանական կեանք: Մեռածէն բան մը չէր պահանջուեր, բացի Օգիրիսեան ծէսերու ամբողջական գործադրութիւնը: Իսկ այս ծէսերը թագաւորական շրջանէն սկսած կը գործադրէին միայն փարաւոններու վրայ: Յարութիւն առնելը, անմահութիւնը, Օգիրիսի մօտ երթալը, միայն փառաւոնի մենաշնորհն էր:

ԻՒՄԻՆԱՐԱՆՆԵՐԸ.— Կրօնական այս պատկերացումներէն կը բխէր դամբարաններու շինութիւնը: Բուրգերը կառուցուած են փարաւոններու մոմիաները,

արձանները պահելու համար: Դամբարաններն ալ արտօնեալ հասարակութեան բարձր խաւի համար էր: Իսկ ժողովրդական զանգուածներու համար ոչ դամբարաններ կը շինէին, ոչ ալ անոնք կրնային Օգիբիսեան ծէսերով անմահանալ: Անոնք շատ հին շրջաններուն իրենց մեռելները կը փաթթէին խսիրի կամ գազաններու մորթին մէջ և կը թաղէին աւազներու տակ: Աւելի ուշ, բարձր, արքունիքին մօտ մարդոց դամբարանը կը շրջապատէին աւելի փոքր սենեակներով, որոնք կը դրուէին մեռեալի տրամադրութեան տակ:

Արքայական շրջանին փարաւոններու դամբարանները աստիճանաբար կը մեծնան, կը դառնան հսկայ բուրգեր: Թի նիսեան փարաւոններու ժամանակ դամբարանը կը ծածկուի հողով, կը կազմէ բարձր հողակոյտ, անոր գլխակողմը կը դրնէին մեծ քարակոթող մը, որուն վրայ կ'արձանագրուէր փարաւոնին անունը: Մեծֆիսեան շրջանին այս հողակոյտերը կը փոխուէին քարաշէն գերեզմաններու, որոնք կը բարձրանան հողի մակերեսէն վեր: Ասոնք մասսաբանցերն են: «Մաստաբան» քառանկիւնի քարակոյտ մըն է. ամենէն բարձրը տասներկու մեթր է: Ամեն դամբարան պէտք է ունենայ հետեւեալ մասերը՝ հոր մը, օւր կը դրուի մոմիան. դէպի հորը կը տանի առանձին և երկար միջանցք մը, որ կ'ըսկաի հողի մակերեսէն և կ'իջնայ խորքը: Գետնի տակ ընդարձակ փոսի մը մէջ կը տեղաւորեն մոմիան դապաղներու մէջ, ապա մուտքը ամուր կը փակեն: Հողի մակերեսին հաւասար անցք մը կը տանի դէպի ընդարձակ դահլիճ մը, ուր գըրուած կ'ըլլայ մեռեալի արձանը, հոս՝ ան «կ'ապրի»: Անկէ ոչ հեռու սեղան մը, որուն վրայ այցի եկող ընտանիքի անդամները կը դնեն իրենց նուէրները, մեռելի համար բերած ուտելիքները և խմիչքը, որ անհրաժեշտ է յարութիւն առնողին: Այս դահլիճի մէջ ալ կը կատարուին ազօթքներ, մաղթանքներ: Դամբարաններու պատերը քանդակաւոր, նկարազարդուած են: Պատերու վրայ կը գրեն և կը պատմեն մեռածի աշխարհային կեանքը: Նկարն ու

գիրք կը ներկայացնեն անոր կեանքի զանազան դրուագ-
ները: Դամբարաններու մէջ կը տեսնենք մեծ արուեստով
նկարուած պտուղներ, ծաղիկներ, զգեստներ, ամենօրեայ
գործածութեան առարկաներ:

Հարուստները, արտօնեալները, մեռած ազգականի
դամբարանին մէջ կը դնէին փայտէ կամ քարէ արձանիկ-
ներ: Կը տեսնենք մեռած կալուածատիրոջ աշխատաւորնե-
րը դաշտերու մէջ աշխատանքի վրայ, անոր անասուննե-
րու հօտերը՝ դաշտի մէջ արածելու ատեն: Մեռածին ամեն
տեսակ յարմարութիւն, ուրախ ժամանց և զուարճութիւն
տալու համար կը նկարէին անոր հաճոյալից կեանքի դըր-
ուագները, որքը նեղոսի ճահճուտներուն մէջ, խրախճանք-
ները, պարերը: Դամբարանային այս արուեստը կը պատ-
կերացնէ մեռածի ընտանեկան կեանքը՝ ժամանցը իր ըն-
տանեկան շրջանակի մէջ. անոր հարստութիւնը, ծառա-
ներու, ստրուկներու աշխատանքը, որմնադրութիւնը. գի-
նիի, գարեջուրի պատրաստութիւնը, թանկագին քարերու
յղկումը, կահկարասիներ պատրաստելը: Այս բոլորը վերին
աստիճանի արժէքաւոր նիւթեր են եգիպտական հասարա-
կութիւնը ճանչնալու համար: Եւ այս բազմադէմ կեանքը
կը ներկայացուի վերին աստիճանի կենդանի, գունեղ ձե-
ւով: Մենք կը տեսնենք իրապաշտ և մեծատաղանդ նկա-
րիչներու, փորագրիչներու աշխատանքը, որով կրցեր են
տալ եգիպտացիի ամենօրեայ կեանքը կտտարեալ հարա-
զատութեամբ: Մեմֆիսեան շրջանի այս արուեստը ցոյց
կուտայ, որ ան պէտք է անցած ըլլայ նախապատրաստ-
կան երկար շրջանէ մը, նախաթիփիսեան և Թիփիսեան ժա-
մանակաշրջանին:

Գի՛՛՛՛՛՛՛.— Տաճարներու, դամբարաններու պատկերները
ունին բացատրական գրութիւններ: Աւելի ուշ յոյները այդ
գրութիւնները կոչեցին հիեթոգլիֆներ, այսինքն սրբագաճ
գրեր: Անոնք կը կարծէին թէ այդ գրերը ինչ որ խորհըր-
դաւոր նշաններ են մարդկային մտածումները ծածկող,
թագսնող: Բայց իրօք անոնք եգիպտացիներու գրերն էին,

միայն աւելի բարդ և դժուար հասկնալի, քան մեր այրու-
բենը: Մեզի հասեր են եզրպտական գրութեան քաղմահա-
զար նմուշներ թէ տաճարական պատերու, սիւներու, թէ
արձանաքարերու և թէ պապիրուսի վրայ գրուած: Եզրպ-
տացիք այս գիր երբ գտեր էին Թինիսեան շրջանէն առաջ,
չորրորդ հազարամեակին: Գրութեան այս ձեւը՝ պատկե-
րագրերը մեր մտածումները կ'արտայայտեն այնպիսի նը-
շաններով, որոնք կը պատկերացնեն առարկաներ, մարդիկ,
բոյսեր, կենդանիներ: Պատկերը գիր մըն է, որով մեր մը-
տածածը կը բացատրենք: Դիւրութեամբ կարելի է գծել
առարկայի կամ կենդանիի պատկերը և ատով հասկնալ
իրական կենդանին: Բայց պէտք է արտայայտել նաև շար-
ժում, վերացական գաղափարներ, օրինակ աղօթք, ուժ,
բաներ մը, որոնց նկարը չկայ: Ընդհանրապէս հոգեկան
վիճակները՝ պարզ պատկերներով արտայայտել դժուար է
ուստի եզրպտացիք լրացուցին պատկերը պայմանական
նշաններով, կամ որոշ գիրքի մէջ նկարելով, որոշ նշաններ
կցելով անոնց: Պատկերը կ'ըստանար այդ կերպով տարբեր
խորհրդաւոր իմաստ: Օրինակ օրը, արեւը կը ներկայացնէին
չրջանակով մը, մէջտեղը կէտ մը: աղօթքը արտայայտելու
համար կը նկարէին մարդ մը՝ ձեռքերը վեր բարձրացու-
ցած, ուժի գաղափարը կը պատկերացնէին ցուլի նկարով:
Այս ձեւով ամեն պատկեր կ'ըստանար երկու իմաստ՝ մէկ՝
առարկան, մէկ ալ խորհրդանշած գաղափարը: Բազէն, որ
չորուս աստուծոյ խորհրդանիշն էր՝ կը նշանակէր թագաւոր
կամ աստուած, ջայլամի վեհաւորը՝ արդարութեան խորհրդ-
դանիշն էր:

Գրութեան այս ձեւը շատ անկատար միջոց մըն էր
մարդկային բարդ և հարուստ մտածումները արտայայտե-
լու: Շատ մը պատկերներ, նշաններ էին պէտք: Այս պատ-
կերներէն կարելի էր ուրիշ ձեւով ալ օգտուել: Պատկերը
ոչ միայն կը տեսնէին, այլ և կը հնչէին: Միեւնոյն պատ-
կերը ամեն տեղ նոյն հնչիւնը կ'ունենար, բայց տարբեր
իմաստ կ'ըստանար: Աստիճանաբար պատկերները կրճատե-

ցին, պահեցին միայն անոր բնորոշիչ մէկ մասը: Գրու-
թիւնը գիւրացաւ, բայց հասկնալը նոյնքան դժուար էր,
որքան առաջ: Կրճատուած պատկերը կամաց կամաց կոր-
սընցուց իր կապը ամբողջ պատկերին հետ և դարձաւ մի-
այն նշան մը, որուն եգիպտացիները կուտային որոշ հըն-
չիւն: Եգիպտական գիրը պատկերագրէն մօտեցաւ հնչիւ-
նագրի, բայց բոլորովին հնչիւնագիր չդարձաւ: Ուստի
արձանագրութիւններուն մէջ գոյութիւն ունին երեք տե-
սակ գրութիւններն ալ:

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Այս բարդ և բազմազան գիրերով
եգիպտացիք ստեղծեցին հսկայ գրականութիւն: Այս գրա-
կանութիւնը թէև բազմազան է, բայց մեծ մասամբ բնուի-
րուած է կրօնական հարցերուն: Տաճարներու սիւներու և
պատերու վրայ գրուած կան Եգիպտոսի քաղաքական կեան-
քին վերաբերող արձանագրութիւններ, որոնց միջոցով կը
վերականգնուի Եգիպտոսի քաղաքական և ռազմական պատ-
մուտիւնը: Ասոնցմէ նշանաւորներն են Թութմէս III-րդի
և Ռամսէս II-րդի երկար արձանագրութիւնները իրենց
արշաւանքներու և ճակատամարտներու մասին: Քաղաքա-
կան պատմութեան համար շատ նիւթեր կուտան նաև
Պպիրներու և քուրմներու գրութիւնները. օր. Ռամսէս III-ի
քաշխած նուէրներու ցուցակը եգիպտական սաճարներուն:
Վէ. Ամարնայի զիւանատան գրութիւնները շատ կարեւոր լոյս
կը սփռեն արեւելքի պատմութեան վրայ՝ Ամինոֆիս III-ի և
Ամինոֆիս IV ի շրջանին՝ (1410—1360): Բայց ասոնք գըր-
ուած են օտար լեզուներով, գլխաւորաբար բարեկական
լեզուով, որ ժամանակի միջազգային լեզուն էր:

Իսամբարաններու մէջ եղած արձանագրութիւններն ալ
մեծապէս կը նպաստեն Եգիպտոսի պատմութեան ուսում-
նասիրութեան, մանաւանդ եթէ այդ արձանագրութիւնները
կը վերաբերին պետութեան մէջ ղեկավար գիրք ունեցող
մարդոց կեանքին:

Դ. ԳԼՈՒԽ

ԹԷԲԷԱՆ ՄԻԱՊԵՏՈՒԹԻՒՆ

2160—1700

ՍԿՋԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ.— Մեծֆիսեան վերջին հինգ հարստութիւններու պատմութիւնը հոթերորդէն մինչև տասնմէկերորդ, մեզ յաւ ծանօթ չէ։ Անոնց տիրապետութեան շրջանը կեդրոնական իշխանութեան թուլացման և անկման շրջանն է։ Անոնց յաջորդները՝ Հերակլիոպոլիսի իշխանները ոչ մէկ հեղինակութիւն ունէին Տելլապին մէջ, ուր առաջ էին եկեր օտար և բնիկ ծագումով աւատական իշխանութիւններ։ Նոյնիսկ վերին Եգիպտոսը անոնց իշխանութիւնը ամբողջութեամբ չճանչցաւ։ Թէբէեան իշխանական տուն մը, կը մրցէր անոնց հետ գահի համար։ Այս մրցակցութիւնը վերջացաւ շուրջ 2160 թուականին, Թէբէի յաղթանակով։ Մեցնուհեպ IV փարաօնը դարձաւ Թէբէեան նոր միապետութեան հիմնադիրը։ Ան ընդունեց «Շամսուի» անունը, այսինքն «երկու երկիրները միացնող»։ Երկու դարի անիշխանութենէն, աւատական պատակտումէն ետքը ան մէկ իշխանութեան տակ հաւաքեց ամբողջ Եգիպտոսը։ XII-րդ հարստութեան փարաւոնները վերաշինող, նորոգողներ էին։ Այդ հարստութիւնը մի քանի նշանաւոր, տաղանդաւոր դէմքեր տուաւ, Ամեցեմհես I-ին (2000 1981), Սեցուսեհ I (1981 1936), Ամեցեմհես II. (1936—1904), Սեցուսեհ II. (1904—1888), Սեցուսեհ III (1888—1850), Ամեցեմհես III (1850—1801), ապա Ամեցեմհես IV. (1801—1792)։ Ասոնց պատմութիւնը մեզ յաւ ծանօթ է։ Այս փարաւոնները բոլորն ալ մեծ կարողութեան տէր, ռազմունակ և շինարարական հակումներով օժտուած մարդիկ էին։ Մեցնուհեպ IV-րդ XI-րդ հարստութեան վերջին

Թագաւորն էր: Անոր յաջորդները՝ Թէեւ Թէրէեան ծագու-
մով՝ հաստատուեցան Իզաուի քաղաքը, աւելի հիւսիս,
Տելզայի մօտ ըլլալու համար:

ՆՈՐ ՄԻԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԲՆՈՑԹԸ.— Եզրպտոսն անցեր էր
քայքայումի եւ անիշխանութեան երկար շրջան մը, որ
տեւեր էր երկու դար: Այս ժամանակամիջոցին կեդրոնական
իշխանութեան հեղինակութիւնը ինկեր էր, երկիրը աղքա-
տացեր, աւերուեր էր. ջրանցքները քանդուեր էին: Պէտք
էր շինարարական հսկայ աշխատանք կատարել: Երկարատե-
այս անիշխանութենէն ետքը վերականգնուած միապետու-
թիւնը նախկինը՝ Մեմֆիսեան շրջանինը ըլլար չէր կրնար:
Մեմֆիսեան միապետութիւնը կառուցուած էր կրօնի, զա-
նազան ծէսերու և արտօնութիւններու վրայ: Գաղաքական
յեղափոխութիւնը, ընկերային շարժումները յեղաշրջեր էին
ոչ միայն դասային յարաբերութիւնները, այլ և միտքերը:
Ազատագրուեր էին հասարակութեան վարիչ խաւերը՝ աշ-
խարհիկ և հոգեւոր աւատատէրերը, անոնց հետ նաև խո-
նարհ խաւերը: Վերակառուցուած նոր պետութեան մէջ
փարաւոնները կ'իշխէին, որովհետև անոնք կը թագաւո-
րէին «արդար օրէնքներու անուեով»: Թէրէեան փարա-
ւոնները գահակից կը դարձնէին իրենց որդիները իբրև
նախագլուցութիւն իրենց մահէն ետքը լինելիք հակապե-
տական շարժումներուն: Նոմարքոսները կը ճանչնային փա-
րաւոնի իշխանութիւնը, անոնք նոմերու մէջ թագաւորի
գործակալներն էին, պաշտօնեաները, անոնք իրենց եկա-
մուտներու մէկ մասը կ'ուղարկէին «արքայական տունը»:
Իրենց բանակներն ալ կը միանային արքայական բանակին:
Տեղական այդ իշխանները թագաւորի հետ միացած կ'եր-
թային կոռելու արտաքին թշնամիին դէմ: Այդ բոլորի
փոխարէն փարաւոնն ալ կը ճանչնար անոնց ժառանգական
իրաւունքները հողի և պաշտօններու վերաբերմամբ: Մի-
այն անոնք միշտ պիտի հաստատուէին փարաւոնի կողմէն,
իրենց պաշտօններու մէջ:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ.— Կը կազմակերպուէր նաև վարչու-

Թիւնը: «Մեծ վէզիրը» նորէն իշխանութեան ղեկավարն էր: Բայց նոր, փոխուած պայմաններու մէջ անոր գործը նոր իմաստ կ'ըստանար: «Վէզիր, կասի ըլլալ, ըսուած է ժամանակի մէկ գրութեան մէջ, չի նեանակեր ըլլալ մեղմ, ալլ ամուր, ուժեղ: Կը նեանակէ հսկել, որ ամեն մտաւ իր իրաւունքը ստանայ: Երբեք մի լիք արդարութիւնը, որուն օրհնեմերը դուն գիտես»: Մեծ վէզիրէն և բոլոր պաշտօնեաներէն հանրային գիտակցութիւն կը պահանջուէր, որ ան պէտք է սերմանէր արդարութիւն, հսկէր արդարութեան գործադրութեան վրայ:

Մեծ վէզիրը ներքին և արտաքին քաղաքականութեան վարիչն է. նաև մայրաքաղաքի կառավարիչը: Փարաւոնի մօտ կազմուած է «վեց տան ատեանը», վեց ատաջնակարգ դատաստանական ատեաններ, որոնց կը նախագահէր մեծ վէզիրը: Ան կը կոչուէր «կառավարիչ ամբողջ երկրի՝ հիւսիսի և հարաւի»: Ամենէն կարեւորը ելեւմտական վարչութեան կարգաւորումն էր. այդ գործը կը ղեկավարէին երկու աւան գանձապահներ, մեծ վէզիրի անմիջական հսկողութեան տակ: Տուրքերը և ամեն տեսակ եկամուտները կը հաւաքէին մթերքներով. իւրաքանչիւր շրջան, կուտար այն, ինչ որ կը մշակէր: Երկրի բոլոր մասերը ունէին պետական շտեմարաններ, լեր կը հաւաքուէր բնատուրքը: Պետական ծառայութեան մէջ էին հազարաւոր զպիրներ, որոնք կը ցուցակագրէին շտեմարաններու, պահեստներու կլիմաւորքը. կը ցուցակագրէին նոյնպէս արտաքին առևտուրէն ստացուած եկամուտը, ինչպէս և պետութեան և թագաւորին համար հայթայթուող շինանիւթերը՝ փայտը, քարը, մետաղները: Արքայական, պետական հողերուն վրայ կ'աշխատէին տասնեակ հազարաւոր բանուորներ. ասոնք կասուցումներու՝ տաճարներու, բուրգերու, դամբարաններու վրայ կ'աշխատէին, ճանապարհներ կը շինէին, ջրանցքներ կը բանային, ամրութիւններ կը կառուցանէին: Վարպետները և արհեստաւորները նաևեր և նաւակներ կը շինէին թէ Նեղոսի վրայ երթեկելու, թէ ծովերու վրայ նաւար-

կհյուռ : Պաշտօնեաներն ու բանուորները կը վարձատրուէին մթերքներով և երկրի արտադրութիւններով :

Ամբողջ երկրին մէջ պարբերաբար վիճակագրութիւն կը կատարուէր հողի, ոսկրի և շարժական հարստութեան : Ատոր համապատասխան ալ կը հաւաքուէին սուրքերը : Հասարակութեան ըլլոր խաւերը զարձեւալ հարկի ենթակայ էին : Պետական պաշտօնեաները կը մտնէին տեղական իշխաններու կազուածները և պետութեան բաժինը կը գանձէին : Թագաւորը նոմերու մէջ կը շինէր տաճարներ, կը նշանակէր քուրմեր, դպիրներ, կ'ապահովէր անոնց նիւթականը : Այդ տաճարներու մէջ կ'աղօթէին ոչ թէ տեղական իշխաններուն, այլ փարաւոնին համար : Իրմէն յետոյ միայն կը յիշուէին նոմարքոսներու և տեղական կառավարիչներու անուաները : Նոմերու և հեռաւոր գաւառներու մէջ կատարուող գէպքերը կը յիշատակուէին ոչ թէ տեղական կառավարիչներու անուան ժամանակագրութեամբ, այլ փարաւոնի անուան հետ կապակցուած : Շուրջ 1900 թուականին անիշխանութեան շրջանն արդէն անցեր էր և եգիպտական հասարակութիւնը թեւկոխեր էր խաղաղութեան և բարգաւաճման նոր շրջան մը :

ԿՐԹՆԱԿԱՆ ՅՅՂԱՇՐՋՈՒՄ. — Քաղաքական-վարչական այս յեղաշրջման հետ տեղի կ'ունենար կրօնական և ընկերային յեղափոխութիւն : Մեմփիսեան միապետութեան շրջանին Օգիրիսեան ծէսերով անմահութիւն ստանալը միայն փարաւոնի արտօնութիւնն էր : Մէսերն ու արարողութիւնները կը գործադրուէին միայն անոր վրայ և անոր համար : Մահէն յետոյ ան կը միանար աստուածներուն և կը դասուէր անմահներու շարքը : Աս անոր արժանիքիւն քրիստոս : Մեմփիսեան միապետութեան անկումով նոմերու տէրերը, բարձր պաշտօնեաները, տոհմիկները՝ քաղաքական իշխանութիւն ձեռք անցնելէ յետոյ՝ տիրացան նաև Օգիրիսեան ծէսերով անմահանալու արտօնութեան : Անոնք տեղական աստուածներու քուրմերը դարձան : Իրենց ձեռքը կեդրոնացուցին աշխարհիկ և հոգեւոր

իշխանութիւնը. կը թաղուէին Օզիրիսեան ծէսերով և կը միանային Օզիրիսին և միւս աստուածներուն: Անոնց դամբարաններու քով, որ աւելի մեծ էր և ընդարձակ քան առաջ, տեղ կը գտնէին իրենց ազգականները, բարեկամները: Անմահութեան շնորհը անոնց ալ կը բաշխուէր: Այսպէս՝ անմահութիւնը կը դառնար բարձր դասի մեծաշնորհը: Ան այս աշխարհի մէջ ուժի, իշխանութեան տէրն էր, և միտածմանակ կ'ապահովէր իրեն համար յաւիտենական կեանքի մէջ նոյն գիրքը և տեղը: Այս արդէն աշխարհիկ աւատատէրերու յաղթանակն էր փարաւոններու առանձնաշնորհումներուն վրայ:

ԽՈՆԱՐՀ ԽԱՒԵՐՈՒ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ. — Բայց ընկերային-կրօնական զարգացումը հոս կա՞ր չառաւ. խոնարհ խաւերն ալ ազատագրուեցան: Անոնք ալ կրօնական արտօնութիւններու տէր դարձան: Եւ այդ բանը անոնք ձեռք ձգեցին կռիւով: Շատ հաւանական է, որ Թէբէի փարաւոնները բարձր դասի նմարքոսներու և քրմերու դէմ պայքարելու առեւ յենուած ըլլային խոնարհ խաւերու՝ վաճառականներու, արհեստաւորներու, ստորին պաշտօնեաներու, գիւղացիներու վրայ. անոնք դարձան ժողովրդական փարաւոններ, և զիջեցին շնորհել կրօնական իրաւունքներ և ընկերային ազատութիւններ խոնարհ խաւերուն: Հիմա բոլորը, փարաւոնէն սկսած մինչև ամենէն յետին եգիպտացին կը յայտարարուէին իրենց մահէն ետքը ռադարացուած եւ անմահացած Օզիրիսի «եմոսիլ»: Բոլոր գերեզմանակոթողները նոյն բանաձեւն ունին. աստուածները իրենց բոլոր հետեւողներէն՝ անմահութեան արժանանալու համար նոյն պահանջները կ'ընեն: Օզիրիսեան ծէսերն այժմ բոլորի վրայ կը գործադրուին: Մարմնի մաքրումն, մոմիացումն, կախարդական միջոցներով անոր շարժում, կեանք տալը հիմա բոլորին մատչելի է, պայմանով, որ մէկն ըլլայ եգիպտացի և ազատ: Հասարակութեան մէկ զգալի խաւը՝ ստրուկներն ու գերիները այս իրաւունքներէն զուրկ են: Այս ձեւով Մեմֆիսեան միապետութեան վերջին շրջ-

Չանի անիշխանութիւնը և յեղաշրջումները ստեղծեցին հրօնական ազատութիւն և հաւասարութիւն: Չկայ դատ, արտօնութիւններ. աստուածներու առաջ բոլորը հաւասար են նոյն իրաւունքներու տէր:

ՀԵՏԵԻԱՆՔՆԵՐԸ.— Օգիբիսի դատաստանին բոլորը ենթակայ են, փարաւոնէն սկսած ժինչեւ ամենէն խոնարհ եգիպտացին: Օգիբիսը՝ իբրև գերագոյն դատաւոր կը պահանջէ բարոյական կատարելութիւն: Անմահութիւնը վարձատրութիւն է այս աշխարհի մէջ բարոյական պատուէրներու համաձայն ապրողներուն: Իսկ կատարելութիւնը չի կապուելը դատի, դիրքի, պաշտօնի հետ: Այս տեսակէտը կը յեղաշրջէ հասարակական յարաբերութիւնը. բոլորի համար բաց են պետական պաշտօնները, բարձր դիրքի հասնիլը, կրօնական և քաղաքական մարզի մէջ տեղ գրաւելը: Արժէք կ'ըստանան ոչ թէ ծագումը, այլ ընդունակութիւնը, բարոյական կեցուածքը, անձնական առաքինութիւնները: Մեքեպտայ փարաւոնը իր տղուն կը թելադրէ. «Տարբերութիւն մի դնե՛ր ազնուականի զակիցն եւ խոճաբն ծագում ունեցողից մեզ: Ընդունե՛՛ր եւ ծառայութեանդ մեզ բարին, բոս իրենց ընդունակութեան»:

Դասերն ալ ազատագրուած են. անոնք այլեւս փարաւոնինը չեն, պետութեանը չեն: Ոմանք ազատագրուած են, թէպէտ հող չունին, բայց իբրև ազատ մարդիկ կը վարձեն հողը: Անոնք մեծ մասամբ տեղաւորուած են հողի վրայ. կրնան կտակել, բաժնել իրենց զաւակներուն մէջ, պայմանով որ հողատիրոջ հանդէպ կատարեն իրենց պարտականութիւնը: Արհեստաւորներն ալ ազատագրուած են. անոնք այլեւս փարաւոնի կալուածներու կամ տաճարներու հետ կապուած չեն, ունին իրենց արհեստանոցները, կ'աշխատին, կ'արտադրեն ազատ շուկայի համար:

Այս բոլորը, իհարկէ՝ վերջ չի տուաւ տնտեսական անհաւասարութեան, դասակարգերուն: Կային և մնացին աշխարհիկ և հոգեւոր խոշոր կալուածատիրութիւնը, կային ատրուկներ որոնք ընչազուրկնիրու շատ մեծ թիւ մը կը

կազմէին: Ամենէն բարձր կանգնած է փարաւոնը, որ արդարութեան պահապանն է, երկրի գերագոյն վարիչը: Բոլորը անոր հանդէպ պարտաւորութիւններ ունին: Ան Եգիպտոսի բարգաւաճման խորհրդանիշն է, և կը պահէ իր կապերը աստուածներու հետ, բայց մէկ աստիճան վար է աստուածներէն, աւելի մօտեցած է մարդոց, մարդկայնացած է:

ԲԱՆԱԿԸ.— Այս ուժերով և այս կազմակերպութեամբ Թէբէեան փարաւոնները կը շարունակեն Մեմֆիսեան միապետներու արտաքին քաղաքականութիւնը: Գլխաւորը՝ Եգիպտոսի սահմաններու պաշտպանութիւնն էր: Ատոր համար պէտք է ունենալ մեծ բանակ: Նոմերու բանակները թագաւորի հրամանատարութեան տակ կը դրուին: Անոնք պատերազմի ժամանակ նոմարքոսներու գլխաւորութեամբ կ'երթային միանալու թագաւորական բանակին: Այս՝ արդէն տեսակ մը ազգային բանակ կը դառնայ, բայց կէս աւատական հիմերով: Ատոր վրայ կուգայ աւելնալու վարձկան բանակը, որ կազմուած է Լիպիացիներէն, Նուբիացիներէն, ասիական ցեղերէն, որոնք ցկեանս զինուորնէր են, փարաւոնի բանակներուն մէջ: Ասոնց մեծ մասը տեղաւորուած են սահմաններու վրայ:

Հարաւային շրջանին մէջ, փարաւոնի բանակները հասան մինչև երրորդ սահանքը, աւելի մեծ չափով կազմակերպուեցաւ Նուբիական բղեշխութիւնը, որուն գլուխը նշանակուեցաւ զինուորական լիազօր մը:

Այդ շրջանին մէջ Եգիպտոսը նիւթական շահեր ունէր: Նուբիայէն և հարաւ-արեւելեան երկիրներէն ան կ'ըստանար փղոսկր, ոսկի, կենդանիներ, կապիկներ, ստրուկներ: Նուբիայի վրայով Եգիպտացիք կը մօտենային Կարմիր ծովուն և հոնկէ ալ Ափրիկէի հարաւ-արեւելեան ուղիներուն կը ծանօթանային: Հարաւի առևտրական գիծը կը պահէին Նուբիացիներու, Քուշերու յարձակումներուն դէմ: Ամենահմեծ I քանի մը անգամ արշաւեց հարաւ, ջարդեց նուբիական ուժերը: Սիմուրեոս I յաղթեց սեւամորթներու դաշ-

նակցութեան և Եգիպտոսի սահմանները հասցուց երկրորդ սահանքին այն կողմը: Հոն բարձրացուց յաղթական կոթող մը և շինեց ամբուլթիւններ: Սինուսեթ III արգիլեց սեւամորթներուն մուտքը Եգիպտոս ճրացի այն պարագային երբ անասուններ կը փոխադրեն: Գրաւուած վայրերուն մէջ եգիպտական աստուածներու համար տաճարներ կառուցին, անոնց պաշտամունքը պարտադիր դարձուցին տեղացիներու համար: Զօրքէն և քուրմերէն յիտոյ կուգային վաճառականներ, արհեստաւորներ, նոր գրաւուած մարզերու մէջ հաստատուելու:

ԱՍԻԱԿԱՆ ՃԱԿԱՏ.— Հոս փարաւոնները կը ջանային կասեցնել սեմական թափանցումները, որ սպառնալից չափերու էին հասած: Սեմականները միշտ արշաւողներ չէին, երբեմն, և շատ յաճախ, խաղաղ գաղթականներ էին. անապատի տեւական անապահով չորութենէն մղուած կը մտնէին Եգիպտոս աշխատանք գտնելու, ապրուստի միջոց որոնելու: Անոնք կուգային իրենց կին ու երեխայով և սահմանապահ կառավարիչներուն նուէրներ կը բերէին:

Եգիպտոսի ազգեցութիւնը կ'ըզգացուէր Փիւնիկէի մէջ. Բիբլոսը եգիպտական մշակոյթի կեդրոնն էր. հոն կանգնեց էին եգիպտական աստուածներուն նուիրուած տաճար. հոն կար եգիպտական գաղութ մը: Եգիպտացիք կենդանի հաղորդակցութեան մէջ էին Կիպրոսի, Կրէտէի, Կիլիկիայի հետ: Այդ վայրերու մէջ, պեղումներու միջոցով գտնուած են եգիպտական արհեստի և արուեստի ու պաշտամունքի առարկաներ: Առեւտուրը կապեր է Փոքր Ասիան, Կիպրոսը, Փիւնիկէն և Եգիպտոսը իրարու հետ. հաւանական է որ այդ միացման կապը և միջնորդները եղած ըլլան Փիւնիկեան վաճ աւականները:

Եգիպտացիք քանի մը դարէ ի վեր հաստատուեր էին Սինայի մէջ: Կը շահագործէին անոր պղնձահանքերը: Թէրէեան փարաւոնները աւելի մեծ չափով կազմակերպեցին այդ հանքամշակութիւնը: Այս ձեւով Միջերկրականի արեւելեան աւազանը մտաւ Եգիպտոսի տնտեսական և քաղաքական ազգեցութեանց շրջանակի մէջ: Կարմիր ծովէն

եգիպտական նաւերը կը հասնէին մինչև Սոմալի, որ կը կոչուէր Պուլնո: Եգիպտական նաւերը կ'երեւային Միջերկրականի ջրերուն վրայ: անոնք կը մրցէին Փիւնիկեան նաւերու հետ, թէպէտ այնքան հոռուոր ուղիներ չէին կտրեր որքան աւելի ուշ փիւնիկեան նաւերը: Անոնք բնոնաւորուած կ'ըլլային Ափրիկեան բարիքներով, իսկ Կրէտէն, Կիպրոսէն կը փոխադրէին Եգիպտոս հիւսուածեղէն, ընտիր և գունաւոր ու զարդարուն կաւանօթներ, զէնքեր, զարդեր:

Սաղաղութեան մէջ փարաւոններն իրենց ճիգերը կը նուիրեն հանրային շինարարութեան: Ամենեմես III Նեղոսի վրայ հիմնեց ջրաչափ, որ ցոյց կուտար ջուրի աստիճանական բարձրացումը: Ան շինել տուաւ նաև մէկ մեծ ջրամբար, արուեստական լիճ մը, Մեոբիս, որ Նեղոսի հետ միացած էր ջրանցքներով: Հեղեղումի ժամանակ, գետի յաւելեալ ջուրը կը հաւաքէին ատոր մէջ, իսկ յետոյ լիճէն ջրանցքներով ջուրը կը տանէին ամեն կողմ, դաշտերը ջրելու: Այդ լիճի ափին հոյն փարաւոնը շինել տուաւ մեծ պալատ մը, որ յոյները կոչեցին «Լաբիւրինթոս»:



ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Ա. ԳԼՈՒԽ

ՀՆԴԵՒՐՈՊԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼԻՔԸ ՀՆԴԵՒՐՈՊԱՑԻՆԵՐԷՆ ԱՌԱՋ.—
Մինչև երրորդ հազարամեակի վերջերը Մերձաւոր Արեւ-
ելքի պատմութեան մէջ առաջնակարգ դեր կը խաղան սե-
մական ժողովուրդները: Եգիպտացիները պարփակուած են
իրենց բնական սահմաններու մէջ, Նեղոսի ափերուն, կը
գրաւեն Սինայի թերակղզին, առեստուր կ'ընեն Բիբլոսի և
Կիպրոսի հետ: Եգիպտական նուաճողականութիւնը դեռ չէր
սկսեր: Ինքն իր մէջ ամփոփուած՝ մշակութային հսկայ
վերելք կը կատարէր, շատ քիչ ազդեցութիւններ կրելով
դուրսի աշխարհէն: Պատմական դէպքերը և քաղաքակր-
թական զարգացումը կեդրոնացած էր անապատային գո-
տիին մէջ, որու ամբողջ տարածութեան վրայ կը բնակէին
միայն սեմական ժողովուրդներ: Անոնցմէ ոմանք նստակ-
եաց էին, զարգացուցեր էին տնտեսութիւն, պետութիւն,
անցեր էին նուաճումներու: Ուրիշներ տափաստաններու և
անապատներու մէջ շարունակ շարժման մէջ էին, կը կըտ-
րէին հազարաւոր քիլոմետր տարածութիւն, կ'որոնէին ա-
րօտատեղիներ իրենց հօտերու համար և հայրենիք իրենց
համար: Մինչև երրորդ հազարամեակի վախճանը արեւել-
քի պատմութիւնը այս վաչկատուն, շարունակ տեղափոխ-
ուող ցեղերու՝ նստակեաց դառնալու, և կտոր մը հողի վրայ
հաստատուելու պատմութիւնն է:

Լեռնային գօտին բռներ էին փոքր-ասիականցի կամ ազխա-
ցիկ ժողովուրդները. ասոնք շարունակ հարաւ կ'իջնէին՝
«Արգաւանդ Կիսայլուսնի» երկու թեւերուն տիրանալու հա-
մար: Անոնք սեմականներէն շատ առաջ հաստատուած էին
Հիւսիսային Միջագետքի, Սիւրիոյ, Պաղեստինի մէջ, ուր
սկսան երկրագործ դառնալ: Միջագետքի հարաւային մա-
սին մէջ զարգացաւ սումէրական բարձր քաղաքակրթու-
թիւնը: Այս քաղաքակրթութեան մշակողը փոքր-ասիական
ժողովուրդ մըն էր: Բայց ազիանիկներու մեծ զանգուածը
մնաց Լեռնային գօտիի մէջ՝ ցրուած փոքր օւսիայէն — Հա-
յաստանի վրայով — Իրանի բարձրաւանդակին վրայ: Ա-
սոնք են, որ բաժնուեցան՝ հաթերու, սուբարիցերու, խու-
րիցերու և ստեղծեցին Լեռնային գօտիի մշակոյթը և քա-
ղաքական պատմութիւնը: Անապատային գօտիին մէջ ա-
նոնք հետագային՝ ենթարկուեցան սեմախօսներու արշա-
ւանքին և ամեն տեղ ձուլուեցան անոնց հետ: Քանանի մէջ
անոնք միախառնուեցան Քանանացիներուն և Հրեաներու
հետ՝ ազդելով անոնց ֆիզիքական կազմին վրայ: Հիւսի-
սային Միջագետքի և Ասորեստանի մէջ անոնք կաղապա-
րեցին ասորական ժողովրդի մարդաբանական կազմը, ծո-
վափնեայ վայրերուն մէջ անոնք միաձուլուեցան Փիւնիկե-
ցիներու և Արամեացիներու հետ: Ձուլումը կատարուեցաւ
ի նպատ սեմականներու, որոնք անապատային գօտիի մէջ
թիւով աւելի գերազանց էին:

Տաւրոսէն հարաւ փոքր-ասիական ժողովուրդները
միայն գաղութներ էին, փոքրամասնութիւն՝ սեմական մե-
ծամասնութեան մէջ: Միայն Ամանոսի և Տաւրոսի հովիտ-
ներու մէջ՝ փոքր-ասիական աշխարհին մերձ՝ անոնք թի-
ւով շատ էին և հոն ալ ստեղծեցին ինքնուրոյն քաղաքա-
կրթութիւն և պետական կեանք: Ազիանիկներու և փոքր-
ասիական ժողովուրդներու նախնական պատմութիւնը մեզի
շատ քիչ յայտնի է, միայն Հնդեւրոպացիներու հանդէս
գալով՝ մեծ շարժման մէջ կը մտնէ փոքր ասիական աշ-
խարհը և քաղաքական ու քաղաքակրթական տեսակէտէն
կը կապուի Եգիպտոսի և սեմական աշխարհին հետ:

ՀՆԴԵԻՐՈՊԱՅԻՆՆԵՐԸ.— Երրորդ հազարամեակի կէսերուն՝ Հնդեւրոպացիները կ'երեւան Մերձաւոր Արեւելքի՝ Միջերկրականի արեւելեան աւազանի շրջանին մէջ. դանդաղօրէն անոնք կը մխրճուին լեռնային գօտիէն ներս, կը կեդրոնանան մասամբ Փոքր Ասիոյ, մասամբ Հայաստանի և Հիւսիսային Միջագետքի մէջ: Տաւրոսեան և Զագրոշեան լեռներու մէջ ամրանալով, անոնք տեւական վտանգի տակ կը պահեն Միջագետքի սեմական քաղաքակիրթ աշխարհը: Անոնք կերտեցին ուժեղ զինուորական պետութիւններ, որոնք որոշ ժամանակաշրջանի համար հանդիսացան արեւելքի քաղաքական բախտի տնօրինողները: Թուլացուցին Եգիպտոսն ու սեմական պետութիւնները և ի վերջոյ հազար հինգ հարիւր տարուայ մրցումէ մը յետոյ Մերձաւոր Արեւելքի մէջ առաջնութիւնը վերապահեցին հնդեւրոպացի ժողովուրդներուն:

ՀՆԴԵԻՐՈՊԱՅԻՆՆԵՐՈՒ ԱՃՆԼԱՎԱՅՐԸ.— Տեսանք, որ ընդարձակ տափաստանային գօտի մը կը ձգուէր Դանուբէն, Սեւ ծովի հիւսիսային ափերով մինչեւ Կասպից ծով, Վոլկա գետը և Ուրալեան լեռները: Այս գօտին այժմեան հարաւային Ռուսաստանի լայնածաւալ դաշտավայրը կը կազմէր: Ան միապաղաղ հարթութիւն մըն է, առանց ընդմիջող բարձունքներու, լեռներու: Լեռնաշղթաները կը գտնուին սահմաններու վրայ, ինչպէս Կարպատեան, Կովկասեան և Ուրալեան լեռնաշղթաները և Ղրիմի լեռները: Հոս՝ այս ընդարձակ հարթութեանց մէջ նախապատմական շրջանէն կ'ապրէին հովիւ, վաչկատուն ժողովուրդներ, որոնք երբեմն հսկայ զանգուածներով կը լքէին իրենց արօտավայրերը և կը գաղթէին ամեն ուղղութեամբ: Այստեղ ապրող ժողովուրդները ազգաբանական-ցեղական նոյնութիւն չէին ներկայացներ, սկզբէն իվեր բնակչութիւնը խառն էր, բայց գերակշռողը երկարագլուխներն էին: Մարդաբանական այս խումբը ունէր երկարաւուն գլուխ, ճերմակ մորթ, շիկուտուն մազեր, կապտաւուն աչքեր, բարձրահասակ էր և նուրբ: Այս յատկութիւնները այժմ պահուած են Հնդեւրո-

պացիւններու այն հատուածներու մէջ, որոնք Սև ծովի հիւսիսային ափերէն անցան Եւրոպայի հիւսիս-արեւմտեան երկիրները, հաստատուեցան Պալթիկ ծովի շուրջը, Սկանտինաւեան թերակղզիի վրայ, Բրիտանական կղզիներու մէջ: Ամենուրեք, ուր այս երկարագլուխները հաստատուեցան և խառնուեցան այս կամ այն չափով տեղացիներու հետ, որու հետեւանքով զգալի փոփոխութիւն կրեց անոնց ֆիզիքական մարդաբանական տիպարը: Մերձաւոր Արեւելքի լեռնային գօտիի մէջ անոնք խառնուեցան Փոքրասիական ժողովուրդներու հետ և շատ բան կորսնցուցին իրենց սկզբնական յատկանիշներէն: Միջերկրականի շուրջը անոնք ձուլուեցան Միջերկրականեան ժողովուրդներու հետ, Միջերկրականի արեւելեան աւազանին մէջ, անոնք նոյնացան սեմական ժողովուրդներու հետ, մտնելով Հնդկաստան՝ երկարագլուխ այս ցեղերը համաձուլուեցան Ինտոսի ափին բարձր քաղաքակրթութիւն ստեղծած տեղացիներու հետ: Եւ որովհետև գաղթողները երբեմն թիւով քիչ էին տեղացիներու բաղդատմամբ, ուստի նոյնանալով անոնց հետ ժամանակի ընթացքին կը կորսնցնէին իրենց ցեղական մարմնական բնորոշիչ յատկանիշները: Այսպէս են այժմ հնդիկները, հայերը, մասամբ պարսիկները:

ԼԵՁՈՒ.— Այս ժողովուրդներու ազգակցութիւնը որոշելու համար կը մնայ մէկ ապահով, վստահելի միջոց՝ անոնց լեզուն: Անոնց լեզուները շատ մօտ են իրարու, ունին ընդհանուր արմատ բառեր, քերականական ձևեր, թէև բաժնուած են իրարմէ աւելի քան չորս հազար տարիներով: Լեզուներու այս մօտիկութիւնը հիմք դարձաւ Հընդեւերոպական լեզուաբանութեան ուսմունքին: Ան կ'ուսուցանէ թէ Հնդկաստանէն մինչև Հիւսիս-Արեւմտեան Եւրոպա՝ Իսլանտիա կղզին, 2500 թուերուն Բր. ա. տարածուեր և ապրեր են ժողովուրդներ, որոնց լեզուները շատ մօտ են իրարու, ունին ընդհանուր բառեր, քերականութիւն: Այդ առեւտրներու հիման վրան գիտունները սկսան որոնել լեզուներու մօտիկութեան հիմքերը և եկան այն եզրակա-

ցութեան, որ մէկ նախնական ժողովուրդ, «նախաժողովուրդ», ծնողն է այսօրուան բոլոր հնդեւրոպական ժողովուրդներու, և ապրեր է մէկ հայրենիքի, «նախահայրենիքի» մէջ, խօսեր է մէկ լեզուով, «նախալեզուով»:

Երկար գիտական որոնումներէն ետքը այն եզրակացութեան հասան, որ հնդեւրոպացիներու «նախահայրերու» հայրենիքը պէտք է եղած ըլլայ Սև ծովու Հիւսիսային շրջանները, մեծ գետերու հովիտները, մինչև Կարպատեան լեռները, մինչև Լեհաստանի սահմանները: Արեւելքէն ան պէտք է հասնէր մինչև Ուրալեան լեռները, Վոլկա գետը, հարաւէն կովկասեան լեռները և Սև ծովը:

Ծովերը, լեռները, գետերը արգելք չէին անոնց յառաջխաղացման: Հաւանաբար հնդեւրոպական աշխարհը շատ աւելի ընդարձակ էր: Այս սահմաններու մէջ ապրող ժողովուրդը կը խօսէր մէկ լեզուով, որ բաժնուած էր բազմաթիւ բարբառներու: Ռուսական այս յայնածաւալ տափաստանները կը պահէին լեզուի միութիւնը՝ հանդիպումները դիւրին էին, չփռւմները յաճախակի. բայց մէկ և ընդհանուր այդ լեզուի մէջ կը մշակուէր բարբառներ, որոնք աւելի ուշ պիտի զարգանային դառնալու համար տարբեր ժողովուրդներու լեզուներ երբ այս վերջինները կտրուէին մայր զանգուածէն, հեռանային և հաստատուէին նոր երկիրներու մէջ:

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ.— Ընկերային ի՞նչ կառուցուածք ունէին հնդեւրոպացիներու նախահայրերը իրենց աճելավայրի մէջ: Անոնք լքեցին իրենց հայրենիքը շուրջ 2500 թուականներուն: Մինչ այդ, անոնք կ'ապրէին տոհմերով անոնց գլուխը կանգնած էին տոհմապետները: Այր մարդու իշխանութիւնն էր այդ կանանց և երեխաներու վրայ: Ամուսին՝ կը նշանակէր տէր, իշխող: Հայրական իրաւունքն էր որ կը կիրարկուէր բոլոր հնդեւրոպական ժողովուրդներու մէջ՝ այսինքն հայրն է կեդրոնը ընտանիքի, կրնն է, որ իր ծնողներէն բաժնուելով կ'երթար ամուսնին մօտ, երեսնաները ամուսնին տոհմին է որ կը

պատկանէին: Տոհմական այս կարգին մէջ, «քաղաք» ցոյց տուող բառ գոյութիւն չունէր, աւելի ուշ ատոր համար կը գործածուէր «ամրոց» բառը, որ կը նշանակէ՝ թէ շատ հին ժամանակ քաղաքը միայն պաշտպանութեան վայր էր, ապաստան: Նախնի հնդեւրոպացիները անասնապահներ էին, յատկապէս ձիաբոյծներ: Ասոր կը նպաստէին անասն-ման տափաստանները. եզը բեռնակիր էր, կովը նոյնչափ ընդհանրացած էր, որքան եզը. անոր մատուցած կաթնեղէնը հիմքը կը կազմէր սնունդի: Զի հեծնելը, ձիաբաշտը հնդեւրոպական նախնիքներու ամենէն սիրած զբաղումն էր. այդպէս էին նաև անոնց ժառանգները՝ յոյները, պարսիկները, պարթեւները, հայերը և սկիւթացիք, այդպէս են նաև նոյն տափաստաններու այսօրուան բնակիչները՝ գոգակները: Հնդեւրոպացիք ամենէն առաջ «ձիեր նուաճողներ» էին: Զին կը լծէին պատերազմական երկանիւ կառքերու: Զին և ռազմասայլը լաւագոյն միջոցներն էին նոր ժողովուրդներ և աշխարհներ նուաճելու: Մինչև հնդեւրոպացիներու երեւալը՝ Արեւելքի մէջ ձին չէին ճանչնար, կամ աւելի ճիշդ, ձին անոնց ռազմական գործի և տնտեսութեան մէջ դեր չէր խաղար: Քառանիւ դանդաղաշարժ կառքերու կը լծէին էջը: Ուր որ հանդիպէին էջը և ձին՝ քառանիւ և երկանիւ կառքերը՝ էջը և քառանիւ ռազմակառքերը պարտութեան կը մատնուէին:

Իրենց հայրենիքին մէջ հնդեւրոպացի նախաժողովուրդի փոքր մասը միայն սկսեւ էր երկրագործութեամբ պարապիլ: Ան երկրորդական դեր կը կատարէր անոնց կեանքի մէջ: Վաչկատուն և անասնապահ՝ անոնք ծանօթ էին մետաղէ զէնքերու և գործիքներու: Դարբիններու, զինագործներու դաս մը ստեղծուեւր էր անոնց մէջ: Հարեւան երկիրներէն՝ Պալքաններէն, Միջին-Սւրոպայէն, կովկասէն և արեւելքէն կ'ըստանային պղինձ: Մետաղներ ճարելու համար անոնք միշտ շարժման մէջ էին, կոիւներ կը մղէին մետաղաշատ շրջաններու տիրապետութեան համար: Այդ ժամանակաշրջանին մետաղը դեռ ընդհանուր գործածու-

թեան մէջ չէր մտած. հազուադիւտ էր, դժուար ձեռք բերուող և սուղ արժէք:

Հնդեւրոպացիներու նախահայրերը նոր քարէ դարը ապրեցան միասին իրենց հայրենիքի մէջ շուրջ 3000 թուին: 2500—2200 թ. անցան մետաղներու գործածութեան: Գիտէին կաւանօթներ պատրաստել, զանազան ձեւեր տալ, նաշխիլ, զարդարել, զանազան գոյներով ներկել: Անոնք վրաններ ալ կը հիւսէին: Շուրջ 2400 թուականին պղինձի գործածութեան հետ ծանօթացան, իսկ երկաթը ճանչցան թէ իրենց հայրենիքին մէջ թէ անկէ բաժնուելէն յետոյ: Մտադէ զէնքերը անոնց յաջողութեան բանալիներէն մէկն էր ձիին և ռազմականքերուն հետ զուգընթաց:

ՀՈԳԵԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԸ.— Անոնց հոգեկան մշակոյթի մասին մենք շատ քիչ բան գիտենք, երկինքը իր լուսատուներով անոնց պաշտամունքի առարկան էր, յաճախ ան կը կոչուէր «հայր երկինք», որուն զուգահեռ գոյութիւն ունէր «մայր երկրի» զաղափարը: Անշուշտ այս ժողովուրդներու մօտ թէև պարզ ձեւերու մէջ գոյութիւն պիտի ունենային ծէսեր, ազօթքներ, արարողութիւններ, զոհարարութիւններ, բայց անոնց մասին մենք բան չենք գիտեր: Վաչկատուն կեանքը, սահմանամերձ վայրերու մէջ տեւական ընդհարումները, մետաղներու համար մլուած կոիւները, մանաւանդ անոնց գաղթն նուաճումները կը նպաստէին հերոսական դէպքերու և այդ առթիւ զրոյցներու ըստիւծումին: Կը յայտնաբերուին ժողովրդական երգիչներ, պատմողներ, աշուղ-գուսաններ. կը մշակուին վէպեր, բանաստեղծութիւններ: Բայց այս ամենէն մեզի քիչ բան ծանօթ է, որովհետև իրենց հայրենիքին մէջ հնդեւրոպացիներու նախահայրերը գիր չուէցան: Այդ մարզին մէջ, ինչ որ անգիր էր, ժողովրդական բանահիւսութիւն էր: Միայն սկզբնական հայրենիքէն բաժնուելէն և իրենց նոր հայրենիքներու մէջ հաստատուելէն յետոյ զանազան ճիւղերէն շատերը հասունցան և գիր ու գրականութիւն ըստեղծեցին:

Հնդեւրոպացիներու գաղթը կ'ըսկսուի պղինձէ դարի սկիզբներուն, 2500 թուականներուն: Գաղթի պատճառներէն գլխաւորը, մետաղի գիւտն էր: Կը գաղթէին մետաղաշատ շրջանները: Մետաղի գիւտը առաջ կը բերէր քաղաքական և տնտեսական յեղաշրջում: Որու ձեռքը որ իյնար մետաղը, ան ոչ միայն հարստութեան տէր կը դառնար, այլեւ կը դառնար նուաճող, տէր: Կ'ենթարկէր իրեն հասարակութեան միւս խաւերը: Մետաղի գիւտը կը նպաստէր հասարակութեան շերտաւորման: Մետաղներու տէրը կը շրջապատէր իրեն շինուած և հաւատարիմ մարդերով: Անոնց գլուխն անցած կ'երթար նուաճումներ ընելու, նոր հարստութեան տիրելու: Այսպէս բացուեցաւ կոիւններու երկար շրջան մը — մետաղաշատ երկիրներու, լեռներու ի խնդիր: Միաժամանակ հասարակութենէն առաջ կուգար արհեստաւորներու խաւ մը՝ դարբիններ, որոնք մեծ յարգ կը վայելէին: անոնք է, որ հում նիւթերէն կը կռէին և կը կտիւէին մետաղէ գործիքներ և զէնքեր: Անոնք է, որ կը հիմնէին քարանոցներ, կրակը կը ծառայեցնէին նոր բան մը շինելու, հալելու, ձուլելու համար: Յաճախ ցեղերու մէջ կոիւ տեղի կ'ունենար դարբիններու համար. ամեն ցեղ, ամեն հասարակութիւն դարբին չունէր. պէտք էր ձեռք բերել, փախցընելով, գերելով: Երբեմն ալ դարբիններն իրենք կը թափառէին զանազան վայրեր, շրջաններ և կ'ըսպասարկէին տեղացիներուն:

Հնդեւրոպական արշաւանքները կը կատարուէին կազմակերպուած ձեւով: Գաղթի գլուխը կը կանգնին տոհմապետները, որոնք իրականին մէջ այլեւս տոհմապետներ չեն այլ տոհմէն վեր բարձրացած, տոհմական համայնքի ինչքն ու գոյքը գրաւած ազնուականներ: Անոնք հաւատարիմներու բանակի մը, լաւ զինուած մարդոց պետերն էին և կը ղեկավարէին արշաւանքը: Դեռ չէր կազմուած աւելի մեծ միութիւնը՝ պետութիւնը: Բազմաթիւ գաղթող խումբեր՝ զանազան իշխաններու առաջնորդութեամբ եր-

բեմն կը միանային, կը կազմէին աւելի մեծ միութիւններ, իշխաններէն մէկը կը ղեկավարէր բոլորին, նուաճումներ կ'ընէր, կը կառավարէր: Անոր առաջնորդութեամբ տասնեակ հազարաւոր զինուած, հեծեալ մարդիկ, իրենց կիսաբով, ընտանիքով, որդիներով կ'երթային նոր, աւելի հարուստ հայրենիք որոնելու, մետաղաշատ վայրեր, արօտատեղիներ, աւելի լաւ, բարեխառն կլիմայ ունեցող վայրերը: Ճանապարհին, կամ ուր որ քիչ մը կանգ առնէին, իրենց հետ կը միացնէին զինուորական խումբեր, որոնք աւարի տենչն ունէին, արկածախնդրական ոգի: Անոնց միացնող կապը զինուորական պետն էր, իշխանը, որ իր զիրքով յաջող ռազմավարութեամբ, աշխարհներ տիրելով, հաւաքած հարուստ աւարով, կը բարձրանար իր նմաններու շարքէն և իր հետ կը բարձրացնէր նաև իրեն հաւատարիմ զինուած մարդոց:

Պատերազմներու, դադարի մէջ կը մեռնի հին տոհմական յարաբերութիւնները, և առաջ կուգայ նոր հասարակութիւն — ռազմապէս ուժեղ, զինուած ազնուականներու տիրապետութիւնը: Ուր որ կը մտնեն, կը գրաւեն այս զինուած մարդիկը, կը դառնան երկրի տէրերը, ձեռք կը ձգեն իշխանութիւնը. երբեմն ալ իրենց բանակներու մէջ կը մտցնեն տեղացիներ, անոնց նախկին իշխողները և կը ժառանգեն իրենց հաշուին:

ԳԱՂԹ ԳԷՊԻ ՀԻԻՍԻՍ-ԱՐԵՒՄՈՒՏԲ.— Նոր քարէ դարի վերջերուն Տանուր-կասպեան տափաստաններէն Հնդկերու պացիներու մէկ մեծ զանգուած կ'անցնի դէպի հիւսիս-արեւմուտք, կը գրաւէ Պալթիկ ծովու եզերքները, հիւսիսային Գերմանիան և Սկանտինաւիայի հարաւային հողաչերտերը, որոնք նոր էին ձերբազատուեր սառոյցներէն: Հոս, այդ նոր միջավայրին մէջ կը մշակուի Պորդիկ կամ Ռիւսիսակամ մարդաթիպը. ասոնք ամենէն լաւ և համեմատաբար մաքուր պահած են հնդկերու պացիներու բնորոշող յատկանիշները և ամենէն քիչ խառնուրդն են:

Անոնք այս վայրերէն տարածուեցան բրիտական կղզ-

զինները, Հիւսիսային ծովի ափերը եզերող շրջանները: Իսկ անոնք շատ աւելի ուշ՝ անցան Ամերիկա և ուրիշ աշխարհամասեր:

ՊԱԼՔԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ.— Հնդեւրոպացիներու մէկ ուրիշ հատուած մետաղէ դարի սկիզբին կը մտնէ Պալքանները: Ասոնցմէ հատուած մը կ'ուղղուի արեւմուտք, կը մտնէ Ապենինեան թերակղզին: Իսկ միւսները կ'իջնեն Պալքաններու ամենէն հարաւային հողերը և կղզիները: Ասոնք կը գրաւեն Միջերկրականը իր մեղմ կլիմայով, ծովով, հարստութեամբ: Խաչնարածներ էին, ժամանակաւորապէս կանգ կ'առնէին ուէ տեղ. ոմանք կը հաստատուէին և կ'ըսկսէին դառնալ երկրագործներ, այսպիսիներ կը դերագասէին գետերու հովիտները, լեռնալանջերը և այն բոլոր վայրերը, ուր կարելի էր անասնապահութիւնը միացնել երկրագործութեան: Ասոնց գաղթը արշաւանքի բնոյթ չէր կրեր. այլ խաղաղ թափանցումի: Կ'ընթանային հանգրուան առ հանգրուան: Մէկ մասը կը մնար գետերու շուրջը, միւսը կը շարունակէր իր ուղին մինչև հասնէր բնական սահմանի մը՝ ծովուն: Այս գաղթականները յոյներու նախահայրերն էին: Ասոնք բազմաթիւ ցեղերով իվերջոյ հաստատուեցան Յունաստանի մէջ, կղզիներու վրայ և Փոքր Ասիոյ եզերային մասերուն մէջ: Այս շարժումը՝ գաղթը նախահայրենիքէն չկատարուեցաւ մէկ անգամէն, այլ հարիւրաւոր տարիներու ընթացքին:

ԴԷՊԻ ԱՐԵՒԵԼՔ, ԱՐԻԱՅԻՔ.— Հնդեւրոպացիներու մէկ ուրիշ գաղթաշարժ դիմեց դէպի արեւելք. անոնք Վոլկան անցնիկով և Կասպից ծովի արեւելեան ափերով իջան հարաւ՝ Թուրքիստան: Ասոնք բռնեցին Արալեան լճի, երկու մեծ գետերու՝ Սիր-Տարիայի և Ամու-Տարիայի միջև ինկած երկիրները, ապա հարաւ իջնալով հասան Հինտու-Գուշի ստորոտները, որ երկար ժամանակ դարձաւ աճելավայր անոնց համար: Այստեղ արեւելք գաղթող հնդեւրոպացիները մշակեցին իրենց կրօնական դաղափարները, լեղուական յասկութիւնները, այլեւ շատ մը բաները, որով կը գա-

նաղանուին հնգերոպացիներու ուրիշ հատուածներէն: Այս ճիւղը կը կոչուի արիական: Աստուցմէ մէկ մասը շուրջ 2000 թուականներուն անցնելով Ինտոս գետը մտան այն երկիրը, որ իրենց անունով պիտի կոչուէր Հնդկաստան: Հնդկները տարածուեցան ու գրաւեցին Ինտոս-Գանկէսեան հովիտները: Մէկ մասն ալ Կասպից ծովի հարաւային ափերով զիմեց զէպի արևմուտք. ասոնք է որ Փոքր-Ասիայի և Հայաստանի վրայով եկող հնդկ-արիական ցեղերու հետ միանալով հետագային պիտի կազմէին արիական երկու պատմական ժողովուրդները՝ Մարերը և Պարսիկները: Բայց արիացիներու մեծ զանգուած մը կեդրոնացաւ Իրանի արեւելքի մէջ և կ'ապրէր վաչկատուն կեանքով: Այս արիացիները ազգակից էին Պարսիկներուն և Մարերուն, բայց քաղաքակրթութեամբ, աշխատանքով, կենցաղով շատ ետ էին մնացած անոնցմէ:

ԴէՊի ՓՈՔՐ ԱՍԻԱ.— Երրորդ հաղարամիակի կէսերուն Թրակիայէն Փոքր-Ասիա մտան Հնդեւրոպական ժողովուրդներու ուրիշ զանգուած մը: Յունական աւանգուածներուն մէջ անոնք կը կոչուին Աֆեացիներ: Անոնք տեղահան ըրին բնիկները՝ ազիանիկները. ասոնց մէկ մասը շարժուեցաւ զէպի Փոքր Ասիայի խորքերը, միւս մասն ալ մտաւ Եգէտան կղզիները, ուր հաւանաբար կ'ապրէին անոնց ցեղակից ժողովուրդներ: Ապա հնգերոպացիներու ուրիշ աւելի մեծ զանգուածներ ուղղուեցան Փոքր Ասիոյ խորքերը. ասոնք Նեսիթներն էին: Այսպէս կը կոչուին Նեսիթ քաղաքի անունով: Աւելի ուշ, Փոքր Ասիոյ տէր գառնալէն ետքը, անոնք կոչուեցան Հաթեր: Այս անունով կը կոչուէր Փոքր-Ասիական ժողովուրդներէն մէկը, զուցէ ամենէն ուժեղը: Տիրելով անոր և անոր երկրին Նեսիտները իրենց մէջ համաձուլեցին Հաթերու ղեկավար զասը և անոնց անունն ալ առին իրենց վրայ:

ՆՆԴԵՒԻՐՈՊԱՅԻ ՀԱԹԵՐ.— Այս նշխարահաթերը 2000 թուականէն առաջ երեւցան Փոքր Ասիայի մէջ, անցնելով նեղուցները: Ասոնց լիզուն հնդեւրոպական էր. կը պատ-

կանէր անոր արեւմտեան ճիւղին, ուրեմն հաթերն ալ ազգակից էին յոյներուն և լատիններուն: Փ. քր-Ասիական ժողովուրդներու նկատմամբ անոնք կատարեցին կազմակերպողի, կառուցողի, միացնողի և հաւաքողի գեր:

ՄԻՏԱՆԻՆՆԵՐԸ.— Նեսիտ-Հաթերու հետ միաժամանակ, բայց Կովկասեան կիրճերէն Մերձաւոր Արեւելք կը մտնեն հնդկերոպացիներու մէկ ուրիշ հոսանք՝ Միթանիցեր: Անոնք արիական ճիւղին կը պատկանին. լեզուով մօտ էին Մարբրուն, Պարսկներուն և Հնդկներուն: Միտանիները մըտան Կուռի և Արաքսի հովիտները, Ատրպատական ու Վասպուրական, հաստատուեցան Տաւրոսի երկու լանջերուն և կեդրոնացան Հիւսիսային Միջագետքի և հարաւային Հայաստանի մէջ: Անոնց քաղաքական կեդրոնը՝ մայրաքաղաքը դարձաւ Վաչուզանին, իսպուր գետի փոխին: Միտանիներու հետ, Կովկասեան կիրճերէն անցնելու ատեն, անոնց հետ կային նաև Պարսկա-Հնդկական զանգուածներ, որոնք բաժնուելով դիմեցին Իրանի բարձրաւանդակը:

Մար պարսկական այս հատուածը հանդիպեցաւ Իրանի բարեւելքէն եկող իրենց լեզուակիցներուն և ազգակիցներուն և շուտով միաձուլուելով կազմեց Մար և Պարսիկ ժողովուրդները և հաստատուեցաւ իր նոր հայրենիքին մէջ: Իսկ Հնդիկ խումբերը դիմեցին դէպի արեւելք միանալու համար իրենց լեզուակիցներուն: որոնք մտեր էին Հընդ-կաստան:

ԿՈՍՏԱՆՆՆԵՐԸ.— Քսաներորդ դարէն առաջ մէկ ուրիշ ժողովուրդ ալ կը հաստատուի Զակրօշեան լեռներու լանջերուն. ասոնք Կասեանցեացիք են: Բազմաթիւ փորձեր կ'ընէին Միջագետք իջնելու՝ ճնշուելով իրենց թիկունքը տեղաւորուած Միտանիներէն: Իվերջայ Կասեանները XVIII-րդ դարուն գրաւեցին Միջագետքը, վերջ տուին Համուրաբէի հարստութեան և սկիզբ դրին Կասեաններու իշխանութեան: Մենք ոչինչ գիտենք անոնց մասին. անոնցմէ չէ մնացած ոչ յուշարձաններ, ոչ դիմաքանդակ, անոնց լեզուն ալ մեզ ծանօթ չէ: Քանի մը բառեր մնացեր են մի-

այն սեմական կամ սումէրական բառարաններում էջ: Արքաներու և աստուածներու անունները հնդեւրոպական են: Իրենց գլխաւոր աստուածը կը կոչուէր Բուգաշ, որ շատ մօտիկ էր հնդեւրոպական Բոզու անունան: Հաւանաբար կասեանները հնդեւրոպական ծագումով փոքրամիջ զեկավար խաւ մը եղած են, ինչպէս էին Միտանիները, Հաթերը. իսկ անոնց հետեւող և անոնց ենթակայ զանգուածները լեռնաբնակ Ազիանիկներ էին, որոնց միացուցին, զինեցին, կազմակերպեցին և առաջնորդեցին Տիգրիսի և Եփրատի հովիտը և ապա Եգիպտոս՝ Հիւքսոսներու օրով:

Այսպէս 2500—2000 թուականներուն Մերձաւոր Արեւելքի մէջ տեղի կ'ունենար ժողովուրդներու մեծ շարժում մը, որ կը յեղաշրջէր գոյութիւն ունեցող ընկերային, ազգագրական և քաղաքական գրութիւնը: Հնդեւրոպացիները արեւմուտքէն, հիւսիսէն և արեւելքէն կը պաշարեն սեմական աշխարհը, կը կազմակերպեն Փոքր-Ասիական ծագում ունեցող ժողովուրդները և պատմութեան մէջ գործօն ուժ կը դարձնեն իրենց առաջնորդութեամբ: Մերձաւոր Արեւելքի հետագայ դարերու պատմութիւնը այս նրբաբարբերու պայքարն է Արեւելքի տիրապետութեան համար:

Բ. ԳԼՈՒԽ

ՊԱՅՔԱՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՀԻՒՔՍՈՍՆԵՐՈՒ ԱՐՇԱԽԱՆՔԸ
ԵՒ ԵԳԻՊՏՈՍԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ
1680—1580

ՀՆԴԵՒՐՈՊԱԳԱՆ ԱՐՇԱԽԱՆՔՆԵՐՈՒ ՀԵՏԵՒԱՆՔԸ.— Տե-
սանք, որ հնդեւրոպացիք XX-րդ դարէն սկսած շրջապա-
տեր էին սեմական աշխարհը, գրաւեր էին լեռնային գո-
տին և հոնկէ ալ փորձեր կ'ընէին գրաւելու Արգասաբեր
կիսալուսնի երկու քեւերը՝ «քաղաքակրթական գօտին»։
Այս շարժումին հետեւանքով սեմական թափանցումը դէպի
լեռնային գօտին դադրեցաւ։ Իշխելով ազիանիկ ժողո-
վուրդներու վրայ և կազմակերպելով անոնց ուժերը, արի-
ական ժողովուրդները հիւսիսէն և արեւելքէն կը ճնշէին
սեմականները և կը մղէին դէպի հարաւ։ Աստուք ալ հա-
րաւ իջնելով, կը մօտենան Եգիպտոսի սահմաններուն և
ի վերջոյ մեծ զինուած ուժերով կը գրաւեն և կը տիրա-
պետեն հոն դար մը ամբողջ։ Այս արշաւանքը պատմու-
թեան մէջ յայտնի է, «Հիւստոսմերու արեւաւանք» անունով։
Գիտենք, որ Արգասաբեր կիսալուսնի ժողովուրդները,
նստակեաց թէ վաչկատուն՝ շատ անգամ բաղխեր էին Ե-
գիպտոսի դուռները իբրև վաճառականներ, վարձկան զին-
ւորներ, աշխատանք որոնողներ և ապաստան հայցողներ։
Արեւելքի ժողովուրդները լաւ ծանօթ էին Եգիպտոսին,


անոր հարստութեան, ուժին: Ծանօթացանք թէ ինչպէս փարաւոնները ասիական վտանգին դէմ կը կանգնէին ամբողջներ, սահմանապահ զօրքերու թիւը կ'աւելցնէին, դաշինքներ կը կնքէին, երբեմն ալ կ'արգիլէին ասիացիներու մուտքը Եգիպտոս:

ԵԳԻՊՏՈՍԻ ԱՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ.— XII-րդ հարստութենէն յետոյ Եգիպտոսը նորէն մասնուեցաւ անիշխանութեան. (1800—1680): Տասներեք և տասնչորրորդ հարլստութիւնները 153 տարուայ մէջ վաթսուն փարաւոններ գահ բարձրացուցին. ասոնցմէ շատերը զոհ գացին պալատական դաւադրութեանց: Կեդրոնական իշխանութիւնը թուլացաւ, բարձր դասը՝ հողատէր աղնուականութիւնը, սռաջնակարգ պաշտօնեաները նորէն իշխանութիւնը առին իրենց ձեռքը: Այս բանը աւատական շարժում մըն էր, թուլացնելու սահմանուած՝ փարաւոնի իշխանութիւնը: Բայց աւատական այս շարժումը շարունակեցին խոնարհ խաւերը: Երկու պապիրուաներ այս մասին յիշատակութիւններ ունին: Քթագաւորի մայրաքաղաքը գրաւեցին մեկ ժամուայ մեջ: Աղբաս մարդիկ բռնեցին քաղաւորը, արեւնիքի մարդոց դուրս րին քաղաւորի ռուներէն: Պատօսեաներուն սպաննեցին, անոնց մօտ եղած փաստաթուղթերը վերցուցին: Ապստամբները ոչնչացուցին հարկոյին վաւերագրերը, բան մը, որ ցոյց կուտայ, այդ շարժման ընկերային-տնտեսական բնոյթը: Այլեւս ոչ հարկ հաւաքող կար, ոչ հարկ տուող: Պետական պահեստները աւարեցին. ամբողջ Եգիպտոսի մէջ թումբերը, ջրանցքները քանդեցին: Շահագործուող ամբոխն էր, որ այս ձեւով վրէժ կը լուծէր իշխանաւորներէն, կալուածատէրերէն: Այս շարժումը վարակեց և բանակը, սահմանապահ զինուորները չէի հնազանդիք իրենց պետերուն, անոնց այլեւս ոռճիկ տուող չկար. շատերն անոնցմէ լքեցին սահմանները և եկան միանալու ապստամբներուն: Ազնուական հողատէր հարուստներէն շատերը սպաննուեցան, շատերն ալ փախան ապաստան գտան հարեւան երկիրներուն մէջ: Ահա Եգիպ-

տոսի այս կացութենէն օգտուեցան Ասիոյ տափաստաններուն և անապատներու մէջ հաւաքուած բարբարոս և վաչկատուն ժողովուրդները :

ՀԻՒՔՍՏՈՍՆԵՐԻ.— Ասոնց մասին մենք շատ քիչ տեղեկութիւն ունինք : Անոնց արշաւանքը Եգիպտոսի ուղղութեամբ մեկուսացած հրեոյթ մը չէր, այլ սերտօրէն կապուած էր ազգաբնական և քաղաքական այն մեծ վերիվայրումներու հետ, որոնք տեղի ունեցան Մերձաւոր Արևելքի մէջ 2000-ական թուականներէն սկսած : Միսանիններու հիւսիսային Միջագետքի գրաւումը : Կապտաններու՝ Բարելոնի մէջ հաստատուիլը, Հիւստոսներու Եգիպտոս արշաւելը, ասոնք բոլորը միեւնոյն շարժման տարբեր երեսներն են :

Հիւքստոսներու ծագումը այնքան ալ պարզ չէ, բայց կը կապուի հնդեւրոպական մեծագանդուած թափանցումին հետ : Մեծ հաւանականութեամբ՝ արշաւողներու զանգուածները պէտք է եղած ըլլային Փոքր-Ասիական ժողովուրդներ՝ Սուբարիններ, Խարիններ, որոնց հնդեւրոպացիները դուրս ըրին իրենց բնավայրերէն, և սեմախոսներ, որոնց մէկ մասը տեւական շարժման մէջ էր և պարբերաբար կը յարձակէր Տելլաբի վրայ աւարի նպատակով : Բայց ասոնց զլուխը կանգնած էին հնդեւրոպական իշխաններ, հրամանատարներ : Ասոնք է որ կազմակերպեցին, զինեցին, ենթարկեցին իրենց հրամանատարութեան սեմական Փոքր Ասիական կոռուզները և քշեցին Եգիպտոսի վրայ, որ բոլորովին թուլացեր էր ներքին անիշխանութեան պատճառով : Թէ Հիւքստոսներու այս մեծ բանակները իրայտարդէտ կազմ ունէր, ցոյց կուտայ անոնց թագաւորներու, առաջնորդներու անունները : Ասոնցմէ քանի մը հատը սեմական են : Հիւքստոսները կռուող, պատերազմիկ մարդոց խոռոմ մէկ զանգուած էին հնդեւրոպական, արիական զիկավարութեամբ : Անոնց առաւելութիւնը լաւ և նոր զէնքերով զինուած ըլլալն էր : Պատերազմի մէջ սկսան գործածել ձիեր, երկանիւռ ուղմակառքեր : Զին՝ Բարելոնեան արձանագրութեանց մէջ կը կոչուէր «լեռնային էշ» : Թեթեւ եր-



ՀԻՒՈՍՆԵՐՈՒ ԿՍՅՐՈՒԹԻՒՆԸ

կանիւ ռազմակառքերուն կը լծէին երկու ձի: Ապա, Հիւք-
սոսները հեծելազորք ունէին, որ նոր երեւոյթ էր Արեւելքի
ղինուորական պատմութեան մէջ: Անոնց զէնքերն ալ ա-
նագապղինձէ էին և երկաթէ:

ԱՆՈՒՆԸ.— Հիւքսոս անունը առաջ կը մեկնաբանուէր
որպէս՝ հովիւներու թագաւոր: աւելի ճիշդ կ'ըլլայ, եթէ
մեկնենք, «ամապասճեբու ճեռ» առումով: Անոնք՝ ըստ այս
բացատրութեան, Ասիայի վաշկատուներն էին, խաշնարած
էին, հովիւ, տեւական շարժման մէջ. անոնց կեանքը ե-
րերուն էր, անկայուն. միշտ պատրաստ էին շարժուելու
իրենց հօտերու, կանանց, երեխաներու հետ, մէկ տեղէն
միւսը:

ԵԳԻՊՈՍԻ ՆՈՒԱՃՈՒՄԸ.— Հիւքսոսները Եգիպտոսը
նուաճեցին գրեթէ առանց կոռւի. բայց տեղի ունեցաւ ա-
ւար և աւեր: Նուաճումը կատարուեցաւ մօտ 1680 թուա-
կաններուն: Իսկ Եգիպտոսէն դուրս հանուեցան 1580 թուա-
կաններուն շուրջ: Ուրեմն անոնք իշխեցին՝ Եգիպտոսի վրայ
հարիւր տարի: Մեղի ծանօթ չէ նուաճումներու հետ կապուած
ղէպքերու պատմութիւնը: Աւելի ուշ՝ 16-րդ դարու կէսե-
րուն Թուրքու I կը յիշէ «ժանտախտի» մասին, որ բնա-
ջընջեց Եգիպտոսը. «անհաւատներու» մասին, որոնք կը
մերժէին Ռայի պաշտամունքը: Հիւքսոսները կեդրոնացան
Տելլաշի արեւելքը, մայրաքաղաք դարձուցին Աւաբիսը:
Նուաճողները աստիճանաբար ենթարկուեցան եգիպտական
մշակոյթին: Հիւքսոս թագաւորները իւրացուցին փարա-
ւոններու պալատական արարողութիւնները, անոնց վար-
չութիւնը, հարկահաւաքման ձեւերը և դիւանագիտութիւնը:
Հիւքսոսներէն շատերը միայուն կերպով հաստատուեցան
Եգիպտոսի մէջ, դարձան երկրագործ, քաղաքաբնակ և ա-
մուսնանալով եգիպտուհիներու հետ՝ ձուլուեցան տեղական
բնակչութեան մէջ: Նախկին շրջանի պաշտօնեաներէն,
դպիրներէն շատերը Հիւքսոս-իշխանաւորներու մօտ ծառա-
յութեան մտան: Հիւքսոս թագաւորները կը հովանաւորէին
այդ դպիրները: Առանց անոնց անկեղծութեան չէին կրնար

կառավարել Եգիպտոսը, տուրքերը գանձել, դարաւոր ու բարդ վարչութեանն օգտուել: Բայց եգիպտական ղեկավարներէն շատերն ալ լքեցին Տելղան, իրենց կալուածները և ապաստանեցան հարաւային Եգիպտոս, ուրի՛ք կը հետեւէին նուաճողներու ամեն քայլին:

ՀԻԼՔՍՈՍՆԵՐՈՒ ԿԱՅՐՈՒԹԻԻՆՆԸ.— Եգիպտոսը Հիւքսոսներու ընդարձակ պետութեան մէկ մասն էր միայն. անոնց իշխանութեան տակ էր նաև Պաղեստինը, Սիւրիան, Սինայի թերակղզին, Հիւսիսային Միջագետքը, այսինքն ամբողջ Արգասաբեր Կիսալուսնի արևմտեան թևք. իսկ նոյն ժամանակ արեւելեան թևի վրայ կ'իշխէին Կասեանները՝ Հիւքսոս շարժման ղեկավարներուն ազգակիցները: Այս ձեւով երկար դարերու քաղաքակրթական կեանքէն յետոյ ամբողջ Արեւելքը ինկաւ բարբարոս վաչկատուն ժողովուրդներու իշխանութեան տակ. այս բանը ժամանակ մը կասեցուց մշակութային և քաղաքական հոլովոյթի ընթացքը: Կասեաններու տիրապետութեան տակ Բաբելոնը կը դադրէր մեծ պետութիւն ըլլալէն: Կը մեկուսանար միջազգային գործերէն. իսկ Հիւքսոսներու իշխանութիւնը Եգիպտոսի պատմութեան ամենէն մոայլ չըջանն է: Ասոնց՝ Կասեաններու, Հիւքսոսներու իշխանութիւնը վաչկատուներու, թափառական Պէտէիներու տիրապետութիւնն է երկրագործ նստակեացներու վրայ: Անոնք իրենց կենցաղէն շատ բան չփոխեցին, մնացին նոյն վաչկատունը. կը ջանային որքան կարելի է շատ հարստութիւն ձեռք բերել և նստակեացներուն շահագործել: Ամեն ինչ հարկի տակ կը դնէին. ամենէն դաժան ձեւով կը հաւաքէին, զինաթափ կ'ընէին ժողովուրդը: Անոնք կը տիրապետէին միայն շնորհիւ իրենց լաւ ղինուած և լաւ կազմակերպուած ըլլալուն: Արեւելքի հազորդակցութեան գլխաւոր ուղիները կը պահէին իրենց ձեռքը: Աւարիսի թագաւորներուն կ'հնթարկուէին Պաղեստինի, Սիւրիոյ, Հիւսիսային Միջագետքի թագաւորները, իշխանները: Աւարիսի թագաւորներէն ամենէն նշանաւորներն են Ապուպի և Խիւան, ասոնց իշխա-

Նույնիւնը կը տարածուէր մինչև Եփրատ: Ասոնց օրով է, որ եգիպտական մշակոյթը իւրացուեցաւ Հիւքսոսներու կողմէ, բայց միայն այն՝ ինչ կը վերաբերէր վարչութեան, հարկահաւաքման գործին և պալատական կեանքի հետ:

ԱՊՍԱՍՄԲՈՒԹԻՒՆ ԵՒ ԱԶԱՏԱԳՐՈՒՄ.— Աւելի խոք եւ մնայուն կապ մը Հիւքսոսներու և Եգիպտացիներու մէջ չհաստատուեցաւ: Եգիպտացիներուն կը վիրաւորէր յատկապէս այն, որ իշխողները կ'արհամարհէին, կը վիրաւորէին իրենց աստուածները, կ'աւերէին տաճարները, աստուածներու արձանները կը գերէին, տաճարական կալուածները կը գրաւէին և քուրմերը կ'ըսպաննէին:

Հալածանք մը սկսեր էր եգիպտական աստուածներու դէմ, որոնք մինչ այդ՝ առիթ էին եղեր անոր մեծութեան, մշակոյթին, հարստութեան և փրկութեան ու հանդերձեալ կեանքի յոյս էին ներշնչեր: Ասոր փոխարէն Հիւքսոսները իրենց աստուածներու՝ Բաաղի, հաթական Տեոուբի պաշտամունքը կը մտցնէին Եգիպտոս և շատ անգամ կը պահանջէին, որ Եգիպտացիք յարգանք մատուցանէին անոնց:

Բնական է, որ եգիպտացիք չհաշտուէին այս կացութեան հետ: Անոնց ռազմական և ղեկավար դասը ապաստանեցաւ Հարաւային Եգիպտոսի մէջ, որ շատ հեռու էր Հիւքսոսներու անմիջական հսկողութենէն: Թէքէն դարձաւ ազատագրական շարժման կեդրոնը: Տեղական իշխանները հեռուէն հարկ կուտային Հիւքսոսներուն: Բայց պահեր էին իրենց կալուածները և բանակը: Ժողովրդական աւանգուծիւնը պահած է Աեկեմիւրա իշխանի անունը, որ առաջինը ապստամբեցաւ Հիւքսոսներու դէմ: Գտնուած է անոր մումիան, որ գլխի վրայ հինգ վէրք ունի ստացած՝ անշուշտ ազատագրական կռիւներու ժամանակ: Այդ շարժման լաւագոյն զօրավարը Ահմես էր, որ կը ծառայէր Սէկէնիւայի բանակին մէջ, Վամեսը որ յետոյ փարաւոն դարձաւ և մեծ դեր խաղաց կռիւներու մէջ. ան Միլլին Եգիպտոսը մաքրեց Հիւքսոսներէն, Ահմես I. XVIII-րդ հարստութեան հիմնադիրը (1596—1580) գուրս քշեց Հիւքսոսները Տելլապէն,

գրաւեց Աւարիսը և փախչողները հետապնդեց մինչև Պաղեստին: Եգիպտոսը մաքրուեցաւ թշնամիներէն: Ասիոյ գոները բացուեցան Եգիպտացիներու առջև: Այս կոխունքու մէջ մեծ թոխք ստացաւ անոնց ազգային և կրօնական ինքնաճանաչումը. կռիւներ կը մղուէին աստուածներու անուկով: Եգիպտոսի ղեկավարները սկսան մտածել իրենց հայրենիքի ապահովութեան համար՝ ստեղծելու այնպիսի քաղաքական պայմաններ, որ Ասիայէն որևէ ուժ չկարենար սպառնալ Եգիպտոսին: Ասոր համար անհրաժեշտ էր գրաւել Պաղեստինը, Սիւրիան մինչև Եփրատ: Դէպքերու բարումով Եգիպտոսը պիտի բռնէր նուաճողական ուղղութիւն: Այդ նոյն ժամանակաշրջանին Հիւսիսային Միջագետքի մէջ կը կազմակերպուէր ուժ մը, որ պատնէշ էր կանգնելու եգիպտական նուաճումին: Նահանջող, ցրիւ եկած վաչկատունները կը հաւաքուէին, կը կազմակերպուէին Արիական ցիղերու՝ Միտանիներու իշխանութեան տակ:



Գ. ԳԼՈՒԽ

ՄԻՏԱՆԻ ԵՒ ՄԻՏԱՆԻ-ԵԳԻՊՏԱԿԱՆ ՄՐՑՈՒԹԻՒՆԸ

Միտանիներու պատմութեան առաջին շրջանը, մինչեւ XV-րդ դար մեզ յայտնի չէ: Հաւանաբար ան անցեր է հոլովոյթի երկար շրջան մը, որուն մասին մեզի տեղեկութիւններ կը պակսին: XVIII XVԿ-րդ դարերուն ուրիշ ուժեր գեր կը խաղային Արեւելքի պատմութեան մէջ. անոնք պատնէշ կը կանգնէին Միտանիներու դէմ և կ'արգիլէին արեւելքի քաղաքական կեանքի մէջ անոնց ի յայտ գալը: Միտանիները Հաթիրուն ազգակից, լեզուակից էին, բայց կասեաններու հետ իրանական կամ արիական ճիւղին կը պատկանէին: Անոնց լեզուն մեզ ծանօթ է Ել Ամարեայի գիւնատան նամակներէն. ան Փոքր-Ասիական լեզու է, բայց ունի արիական տարրեր՝ թէ բառամթերքի և թէ քերականութեան մէջ: Միտանի լեզուն բարդ է, կազմաուժ է երկու տարրեր լեզուներէ: Նոյնն է պարագան Փոքր-Ասիական ըտլոր լեզուներու: Նախնականը՝ ասիանիկն է. XX-րդ դարէն այս լեզուները կ'աղճատուին, կը քայքայուին հնդեւրոպականներուն Փոքր-Ասիոյ և ընդհանրապէս լեռնային գօտիի մէջ հաստատուելով: Ասոնց լեզուներու ազդեցութեան տակ տեղական բնիկ ժողովուրդներու լեզուները կը կորսնցնեն իրենց մաքրութիւնը, նոր բառեր, դարձուածքներ, քերականական կանոններ կ'ընդունին իրենց մէջ: Կ'ըստեղծուի մէկ նոր խաւըն լեզու, միշտ ալ այդ երկու տարրերէն մէկուն գերակըշտութեամբ:

ՄԻՏԱՆԻՆԵՐԸ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ. — Հայաստանի և Հիւ-

սիսային Միջազգետքի հնազոյն շրջանի բնակչութիւնը Փոքր-Ասիական ծագում ունէր: Միջազգետքի հիւսիսային շրջաններուն մէջ անոնք աւելի առաջ էին հաստատուեր, քան սեմական ցիղերը: Անոնք էին հիմք դրեր մեհեաններու, անոնք էին կազմեր առաջին միջ-ցիղային միութիւնները: դառնակցայիճ պետութիւնները:

2000 թուականէն առաջ Կովկասեան կիրճերով դէպի հարաւ կը թափանցեն արիական ժողովուրդները. անոնց հետ նաև Միտանինները: Կարճ ժամանակ Հայաստանի մէջ մնալէն ետքը արիական այդ ժողովուրդները կ'ըսկսին գաղթել զանազան ուղղութեամբ: Անոնցմէ ճիւղ մը իջաւ հարաւ, մտաւ Հիւսիսային միջազգետք. ասոնք Միտանիններն էին. անոր մէկ մասն ալ մնաց Հայաստանի մէջ և կեդրոնացաւ հարաւային գաւառներուն մէջ, Վասպուրականէն մինչեւ Արաքս ինկած հողաչերտերուն վրայ: Թէ Հայաստանի և թէ Հիւսիսային Միջազգետքի մէջ անոնք հանդիպեցան ընդհանրուած՝ Սուբարի, Սարրի ժողովուրդներուն: Եկուորները որպէս զինուած, արշաւող զանգուած կուգային. անոնք գրաւեցին Սուբարներու հողերը, հաստատուեցան այնտեղ և իշխեցին անոնց վրայ: Այս վերիվայրումներու ընթացքին ոչ միայն քաղաքական յեղաշրջում տեղի ունեցաւ, այլև ժողովուրդներու ձուլում, խաչածեւում և ընկերային յեղաշրջում: Ժամանակի ընթացքին այս երկու տարրը՝ միտանիականը և սուբարիականը կը մօտենան իրարու. Սուբարիներէն կը բարձրանայ խաւ մը, որ կը ձուլուի իշխողներու հետ, կ'ըստեղծուի Միտանի-Սարի սուբարիական ազնուականութիւն մը, որ իշխանութիւնը կը պահէ իր ձեռքը: Ասոնք կը կոչուին «Մարիանիներ», երիտասարդներ, այսինքն ազնուական մարտիկներ, ռազմիկներ: Ասոնք կուտող դասն են. զինուած են, ասոնց ջանքերով էր որ կը կառուցուի Միտանի պետութիւնը: Հայաստանի և Հիւսիսային Միջազգետքի մէջ հաստատուելով Միտանինները տէր դարձան տեղացիներու հողերուն և ընդկ ժողովուրդներուն: Վերջիններուս ոչ դուրս ըրին, ոչ ալ

հողագուրկ ըրին, պահեցին հին կարգը, բայց հողի վրայ գերազոյն իշխանութիւնը իրենց վերապահեցին: Գիւղացին կ'աշխատէր «Մարիանի» ներու համար: Ստեղծուեցաւ խոշոր կալուածատիրութիւն: Մարիանի-ազնուականներու շրջանակէն դուրս եկաւ արքայական տունը: Ան արիական ծագում ունէր: Միտանի թագաւորներն ալ արիական անուններ կը կրէին:

ՄԻՏԱՆԻ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԶՕՐԱՆԱԼԸ. — Քանի Հաթերը կը զօրանային Փոքր Ասիոյ մէջ, քանի անոնք կ'իջնային դէպի հարաւ Եփրատի արեւմտեայ կողմը, քանի Հիւքսոսները կ'իշխէին Արգասաբեր Կիսալուսնի արեւմտեան թեւերուն վրայ, Միտանիներու առաջ զարգացման, մեծանալու բոլոր հնարաւորութիւնները փակուած էին: Անոնք մնացին Տիգրիսի արեւմուտք, Խաբուր գետի շուրջը, ուր կառուցուած էր իրենց Մայրաքաղաքը: XX-րդ դարէն մինչեւ XVI-րդ դարը, այս մեկուսացման մէջ է, որ կ'անցնի անոնց պատմութեան առաջին շրջանը: Բայց Հաթերը՝ կարճատեւ վերելքէ և ծաւալումէ ետքը կը պարփակուին Փոքր Ասիոյ մէջ, կը մեկուսանան Միւսուր Արեւելքի քաղաքական կեանքէն, իսկ Հիւքսոսներու մեծ պետութիւնը կը քայքայուի Եգիպտոսի XVIII-րդ հարստութեան հարուածներուն տակ: Եգիպտոսէն վտարուելով՝ անոնց միութիւնը կը պառակտուի, իրենց ուժերը կը ցրուին և Եգիպտոսի քաղաքական մեծ կոիւններու տէր կը դառնան Պաղեստինին, Փիւնիկիին և Սիւրիոյ: Քայքայուող Հիւքսոսներու ուժերէն հոս հոն կ'ըստեղծուին քաղաքական նոր միաւորներ:

Միտանիներու պատմութեան այս շրջանը, մեզ ծանօթ չէ: Միայն Հաթերու թուականալը Փոքր Ասիոյ բարձրաւանդակի մէջ և Հիւքսոսներու անկումը, Միտանիներու առջև բացին արեւմուտքի դռները. անոնք անցան Եփրատը և մօտեցան Միջերկրականի արեւմուտք, գրաւեցին Սիւրիան և կանգնեցան Եգիպտոսի արեւմուտքը: Իրերու բերմունքով Միտանիները եղան Հիւքսոսներու ժառանգը: Հիմա անոնք պէտք

է ճակատէին փարաւոններուն ղէմ: Երեւի անոնք հետեւելով Հիւքսոսներու օրինակին կը փորձեն արշաւել Եգիպտոս, բայց կը հանդիպին XVIII-րդ հարստութեան մեծ փարաւոններու ղիմադրութեան: XV-րդ դարը Միտանի հզօրութեան բարձր շրջանն է:

Անոր սահմանները կը հասնէին Չագրօշեան լեռներէն մինչև Միջերկրական ծով և Հայկական բարձրաւանդակէն մինչև Պաղեստին: Անոր պետութեան առանցքը Եփրատն էր, որու առեւտրական գծերուն Միտանին տէր էր դարձեր: Ան կը գտնուէր կեդրոնը ժամանակի երկու մեծ քաղաքակիրթ աշխարհներու՝ Եգիպտոսի և Բաբելոնի, և կ'ուզէր այդ առաւելութիւնը օգտագործել ինպատ իրեն: Երկու այդ աշխարհները իրենց վաճառականներով, բարիքներով, կրօնական գաղափարներով կը հանդիպէին իրարու Սիւրիոյ, կարաւանային քաղաքներու և Փիւնիկիէի ծովամերձ քաղաք-պետութիւններու մէջ:

ՄԻՏԱՆԻՆԵՐԻ ՊՏԱԿԱՆ ԿՈՒՒՆԵՐԸ.— XVIII-րդ հարստութեան փարաւոնները կը շարժուին Հիւքսոսներու ետեւէն, կը գրաւեն Պաղեստինը, Փիւնիկէն: Այս երկիրները անոնց համար կը ծառայեն որպէս ապահովութեան գօտի: Սիւրիոյ մէջ անոնք կը հանդիպին Միտանիներուն: Ասոնք կ'արագիլեն որ Եգիպտացիները հոն հաստատուելով, Եփրատին մօտենան: Թուրմես I (1540—1515) սկսաւ ասիական արշաւանքները, հասաւ մինչև Եփրատ. գետի արեւելեան ափին կառուցեց քարակոթող մը, իբրև վկայ իր յաղթանակի և սահմանագիծ իր գրաւումներուն: Նահաբիման ինկաւ Եգիպտացիներու ձեռքը: Այսպէս կը կոչուէր Որոնդէսի և Եփրատի մէջ ինկած հողամասը: Բայց նոր գրաւուած երկիրներու բնակչութիւնը չհաշտուեցաւ Եգիպտոսի տիրակալութեան, անոր դրած ծանր հարկերուն, անոր զօրավարներու բռնութիւններուն հետ: Թուրմես II (1515—1500) նոր արշաւանք կազմակերպեց հնազանդութեան բերելու ապստամբ Սիւրիացիները: Թուրմես III-րդ (1480—1441) նոյնը կրկնեց աւելի լայն ծաւալով: Մենք լաւ ծանօթ

ենք այս վերջինին ռազմական գործողութիւններուն իրեն տարեգրութիւններէն: Առնք փորագրուած են Կարճակի Ամոն աստուծոյ տաճարի սիւներու և պատերու վրայ և խմբագրուած են հիմնուելով արքայական յուշագրութիւններու վրայ, որով վստահելի են: Թութմէս III 16 անգամ կ'արշաւէ Սիւրիա, Պաղեստին: Այս ցոյց կուտայ, որ Եգիպտոսը կացութեան տէրը չէ, որ հպատակ ժողովուրդները չեն ենթարկուիր իրեն, որ իր առջև ան կը գտնէ զօրաւոր ախոյեան մը, Միտանին, որ թէ իր բանակներով և թէ տեղական ժողովուրդներու օգնութեամբ կը կոտորէ Եգիպտացիներու դէմ:

ԹՈՒԹՄԷ:Ս III-ի ԿԱՌԱՎԱՐՆԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ.— Ամեն ըմբոստութիւններու, ապստամբութիւններու առաջն առնելու համար Թութմէս III կանոնաւոր վարչութիւն կը հաստատէ գրաւած երկիրներուն մէջ: Ան կը մտածէ հաստատել կարգ մը, որ նուազագոյն չափով յարգելով տեղական իշխաններու շահերը, միաժամանակ հետապնդէ Պաղեստինը և Սիւրիան աւելի սերտօրէն կապելու Եգիպտոսի հետ: Ան գրաւած երկիրներու մէջ կը պահէ մեծ պահակազօրք, որոնք կը տեղաւորէ ամրոցներու և քաղաքներու մէջ: Եփրատի ափերուն, անապատի եզերքներուն ամրութիւններ կը կառուցանէ Միտանիներու և վաչկատուն ասպատակողներու դէմ: Զինուորական հրամանատարները արտակարգ լիազօրութիւններ կ'ըստանան իրենց յանձնուած շրջանները կառավարելու. անոնք ունին դատական, հարկային և զինուորական լիազօրութիւն: Տեղական ցեղապետները, իշխանները երբեմն կը մնան իրենց գործի գլուխը, բայց զինուորական իշխանութիւններու խիստ հսկողութեան տակ: Անոնք միշտ աւելի կամ պակաս կասկածելի կը նկատուին: Ընդհանրապէս Եգիպտացի վարիչները նոր տիրած երկիրներու հետ կը վարուին ինչպէս զինուորական բռնաբարւուած շրջաններու հետ. չեն յարգեր տեղացիներու կրօնական զգացումները, կը պղծեն տաճարները, կը քանդեն մատուռները, կը գերեն լատուածներու արձանները:

Այսինքն անոնք այնպէս կը վարուին Արգասաբեր Կիսալուսնի արեւմտեան թևի բնակիչներու հետ, ինչպէս Հիւքսոսները վարուեր էին իրենց՝ Եգիպտացիներու հետ :

ԱԶԴԵՅՑՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՅՆԵՐ. — Եգիպտոսի հետ տեղական ժողովուրդներուն կապելու միջոցներէն մէկն ալ այն էր, որ փարաւոնները իրենց կանանոցի մէջ կ'առնէին Պաղեստինի, Սիւրիոյ իշխաններու կիները, աղջիկները. պատանդ կը վերցնէին անոնց զաւակները, կը կրթէին, կը դաստիարակէին իրենց արքունիքներուն մէջ, ճաշակը կուտային եգիպտական բարձր մշակոյթի, կենցաղի, կը ներշնչէին անոնց հաւատարմութիւնն Եգիպտոսի հանդէպ և ապա չափահաս դառնալէն ետքը կ'ուղարկէին իրենց հայրենիքը կառավարելու միշտ եգիպտական փոխարքաներու հսկողութեան տակ :

Միտանի-եգիպտական կռիւներու մէջ մշակուեցան պարենաւորման, զօրքերու փոխադրութեան նոր միջոցներ : Քանանի երկիրը դարձաւ գինուորական խարխիս. ցամաքէն և ծովէն հոն կը կեդրոնանար բանակը : Կառուցուեցան գինանոցներ, գինապահեստներ, ճանապարհներ, վերանորոգուեցան նաւահանգիստներ : Պատերազմներու շրջանին փարաւոնները կը փնտոէին զաշնակիցներ : Անոնց հետ էին Կիպրոսը և Կրէտէն : Առաջինը կը մատակարարէր պղինձ, նաւեր, նաւագներ. երկրորդը զէնք և մետաղ կը հայթայթէր : XV-րդ դարուն Միջերկրականի ամբողջ արեւելեան աւազանը Եգիպտոսի քաղաքական ազդեցութեան շրջանակի մէջ ինկաւ : Գրաւուած երկիրներու առջև Եգիպտոսի տիրապետութիւնը բացաւ նոր ճամբաներ : Անոնց համար պարտադիր դարձաւ եգիպտական կրօնը, վարչութիւնը : Փարաւոնները կը ջանային միօրինակութիւն մտցնել ամեն տեղ : Եգիպտական լեզուն կը դառնար հաղորդակցութեան, կապի գլխաւոր միջոցը : Ան կը տարածուէր զօրքի, պաշտօնէութեան, կրօնի, քրմական դասի միջոցով : Փարաւոնները կը ջանային եգիպտացնել Արգասաբեր Կիսալուսնի Արեւմտեան թևի բնակիչները :


Ամեհնոֆիս II (1450—1424) կը վերսկսի իր նախորդներու նուաճողական քաղաքականութիւնը, որովհետեւ չնայած այս միջոցառումներուն, Պաղեստինի և Սիւրբոյ բնակչութիւնը չէր հաշտուեր եգիպտական տիրակալութեան հետ: Եգիպտոսը չէր պահանջեր միայն հարկ և զինուոր, այլ կ'ուզէր աւելի խոր մտնել նուաճուածներու կեանքին մէջ. միջամուխ ըլլալ անոնց կրօնական գործերուն: Այդ էր որ Սիւրիացիները կը հանէր տիրապետողներու դէմ: Ամեհնոֆիս II-ը ապստամբութիւնները ճնշելով նորէն կը հասնի Եփրատ, որու ափերուն կանգնելը կը համարուէր յաղթանակի և ապահովութեան գրաւական: Ան գերեց հարիւրաւոր «Մարիանիներ», գրաւեց 300 երկանիւռ ուղմակաւորներ, ոսկի անօթներ, մեծաքանակ պղինձ: Գերիները զոհարեց եգիպտական աստուածներուն:

ՄԻՏԱՆԻ ՄԱՐՏԻԿՆԵՐԸ.— Թէ ի՞նչ էր Միտանի մեծ պետութեան մասնակցութիւնը այս կռիւններու մէջ, ի՞նչ յաղթանակներ տարին անոնք մենք տեղեակ չենք, որովհետեւ մեր աղբիւրները եգիպտական փարաւոններու տարեգրութիւններն են. անոնք ալ դէպքերը կը պատմեն այնպէս, որ միշտ իբրև պարտուող կողմը կը ներկայացուին Միտանիները: Վերջիններս ըստ այդ արձանագրութեանց «այծեամիներու հօտերու պէս կը փախչէին» Եգիպտացիներու առջեւէն. անոնք կ'որակուին «վատ նահարիներ»: Բայց տեւական կռիւնները, շարունակական արշաւանքները ցոյց կուտան, որ Եգիպտոսի իշխանութիւնը կայուն չէր գրաւած երկիրներու մէջ: Եգիպտացիները Եփրատէն աւելի արեւելք չանցան. իսկ այստեղ էր Միտանի պետութեան քաղաքական, տնտեսական կեդրոնը: Ուրեմն Միտանին միշտ մնաց ազատ՝ Եգիպտոսի անմիջական հարուածներէն: Ան կը գործէր Սիւրիական իշխաններու, պետեւիներու, վաչկատուներու միջոցով: Ան ալ կ'որոնէր դաշնակիցներ՝ Կիլիկիայի մէջ, Բաբելոնի մէջ, կ'ապստամբեցնէր Պաղեստինի իշխանները, Փիւնիկեան քաղաքները Եգիպտոսի դէմ: Իր անմիջական մասնակցութիւնը սահմա-

նափակ էր և ոչ տեւական. ան զիններ էր Արզասաբեր Գիսալուսնի արեւմտեան թևի ժողովուրդներուն: Այս բոլորի հետեւանքով Հիւսիսային Միւրիան, (Նահարինան) գրեթէ միշտ կը մնար անոր հովանիին տակ. ռազմական արժէք ունեցող ամբողջ Կասեթը, շատ աւելի Միտանի բանակ տեսաւ, քան Եգիպտացի:

Մէկ դարէն աւելի տեւեց Միտանի-եգիպտական կռիւները. ան սկսաւ Թութմէս I-ով և վերջացաւ Թութմէս IV-րդով (1541 - 1411): Այս հարիւրամեայ կռիւները երեւան բերին, որ Եգիպտոսի դէմ կանգնած է հզօր և կազմակերպուած պետութիւն մը, որ կը մրցէր անոր հետ և՛ գիււանագիտութեան և՛ ռազմի ասպարէզին մէջ: Նման հաւասար ուժերու պայքարը ոչինչ չհան չէր ապահովեր Միտանիին, միայն սպառելու կը ծառայէր անոր ուժերը: Այս պատճառով երկու արքունիքներու մէջ ալ հասունածաւայն միտքը, թէ լաւ է խաղաղ ապրիլ, ճանչնալ իրարու փոխադարձ իրաւունքներն ու պետութեան սահմանները, քան տեւական կռիւ մղել՝ առանց յաղթանակներու, կար և մէկ ուրիշ պատճառ, այդ նոր գործոններու երեւան գալն էր:

ՆՈՐ ԳՈՐԾՕՆՆԵՐ.— XV-րդ դարէն Մերձաւոր Արեւելքի մէջ կ'երեւայ մէկ նոր ուժ, որ իր հասունութեան պիտի հանդէր յաջորդ դարուն միայն: Մինչ Միտանին և Եգիպտոսը տեւական կռիւներու մէջ էին, ուժասպառ կ'ընէին իրար՝ Փոքր Ասիոյ բարձրաւանդակի վրայ աստիճանաբար կը մեծնար Հաթալսան երկրորդ պետութիւնը: Ան անցեր էր ներքին անիշխանութեան շրջան մը, կեդրոնացեր էր Հասուսաւ մայրաքաղաքի շուրջը, երկար կռիւներու ընթացքին բարձրացեր էր իշխող, թագաւորական տուն մը, որ ստեղծեր էր դաշնակցային պետութիւն մը: Հաթ թագաւորները հաւաքեցին, միացուցին Փոքր Ասիական ժողովուրդները, զինեցին, համադրեցին անոնց ուժերը և դուրս բերին նուաճումներ ընելու: Ալիս և Լիկոս գետերու հովիտներով անոնք հասան Սև Մովուն. հարաւարեւելքէն



ԱՄՆՆՈՒՅԻՄ Գ.Ն.Ի ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

մօտեցան Եփրատին, մտան Հայաստանի արևմտեան գաւառները: Արևմուտքէն անոնք շրջապատուած էին Հընդեւերոպական նորանոր ժողովուրդներով: Այդ ուղղութեամբ անոնք չյառաջացան և չհասան Եգէեան ծովուն: Եփրատին հասնելով, անոնք բռնեցին Միտանիի աջ թեւը և թիկունքը: Երբ Եգիպտացիք կը հարուածէին Նահարինան, Հաթերն ալ կ'իջնային հիւսիսէն և կը հարուածէին Միջագետքը: Ասով պէտք է բացատրել Միտանիներու կողմէն Ռրոնդէս-Եփրատեան հողաչերտի՝ Նահարինայի պարպումը, Միջերկրական փերու լքումը և իրենց հայրենիքի մէջ ամփոփուելը: Միւս կողմէն Ասորեստանը այլեւս չէր ուզեր ենթարկուիլ Միտանիի տէրերուն և միշտ կ'ապստամբէր անոնց դէմ: XIV-րդ դարու կէսերէն Միտանին հարկադրուած էր իր ուժերու մէկ մասը կեդրոնացնել Ասորեստանի դէմ: Այս կոիւնքերու, ապստամբութիւններու ընթացքին թէ՛ Հաթերը և թէ՛ Ասորեստանցիները ասոնց հետ նաև Բաբելոնը, պատգամաւորներ, նուէրներ կ'ուղարկէին Եգիպտոս՝ փարաւորներուն իրենց բարեկամութիւնը յայտնելու և պատրաստակամութիւնը ցոյց տալու անոնց հետ մէկտեղ Միտանիի դէմ դուրս գալու: Վերջինս ամեն կողմէն շրջապատուած էր թշնամի ուժերով:

Միւս կողմէն Եգիպտոսը նոյնպէս անակնկալներու առջեւ էր կանգնած: Թէև ան անմիջական հարուածներու տակ չէր, ինչպէս Միտանիները, բայց ան ալ Եփրատեան գծի վրայ կ'ըզգար նոր ռազմունակ ժողովրդի՝ Հաթերու ճնշումը: Ան չէր ուզեր, որ թուլացած, ուժերն սպառած Միտանիներու փոխարէն իր սահմաններու վրայ կանգնած տեսնել նոր, թարմ ուժ մը՝ Հաթերը: 1430 թ. Հաթերու թագաւոր Հատուչիլ դբաւեց Հալպայի իշխանութիւնը, ապա ամբողջ Նահարինան: Այս ազդարարութիւն մըն էր ուղղուած ոչ միայն Միտանիին, որու երկրամասն էր դրաւած այլև Եգիպտացիներուն, որ իր սահմանի վրայ տեսաւ հաթերը:

ՄԻՏԱՆԻ ԵԳԻՊՏԱԿԱՆ ԴԱՇԻՆՔ.— Այս պայմաններու

մէջ Թուրքիս IV-րդը և Միտանի թագաւոր Արսասամա Է դաշինք կը կնքեն: Ըստ այս դաշինքի Արգասաբեր Կիսսալուսնի արեւմեանն բերը կը բաժնուի՝ ազդեցութեանց երկու երզանի՝ Պաղեստինը կը մնայ Եզրիպտոսին՝ Փիւնիկէի հետ միասին, Հիւսիսային Սիւրիան կը մնայ Միտանիներուն: Եզրիպտոսը կը հրաժարի Եփրատեան ռազմազօժէն: Միտանիներուն կը մնար Նահարինան, ինն գտնուող նշանաւոր ամրութիւնը՝ Գաղէշն ալ հետը: Քաղաքական այս դաշինքը կ'ամրանայ խնամիական կապերով՝ Արտատամանի ր աղջիկը Մուտիմուան կնութեան կուտայ Թուրքիս IV րդին: Ան պիտի դառնար ոչ թէ փարաւոնի բազմաթիւ կիներէն մէկը, այլ Եզրիպտոսի թագուհին: Եզրիպտոսի փառաւորները երբեք չէին ամուսնանար օտար իշխանուհիներու հետ. կամ ամուսնանալով չէին բարձրացնէր եզրիպտական թագուհի աստիճանին: Եթէ Թուրքիս IV-րդ դարաւոր այդ օրէնքը անտես ըրաւ, ատոր պատճառը քաղաքական էր: Պէտք էր Միտանիի հետ շատ աւելի սիրտ գործակցութեան հիմք դնել մեծցող Հաթերու դէմ: Այս բարեկամական կապերը շարունակուեցան և հետագային: Սուղաուքա I (1404—1390) իր աղջիկը Գիլու-Խեպան կնութեան տուաւ Ամենոֆիս III-ին: Տուրաուքան (1387—1367) իր աղջկան Տադու Խեպայից կնութեան տուաւ Ամենոֆիս III-ին. վերջինս ծերացած էր արդէն և մինչև Միտանի իշխանուհին հասաւ Եզրիպտոս՝ փարաւոնը մեռաւ և Տադու-Խեպան ամուսնացաւ մեռած թագաւորի ժառանգին՝ Ամենոֆիս IV-րդի հետ:

ՄԻՏԱՆԻԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՂՈՎՈՅԹԸ.— Միտանի պետութեան հզօրացումը կ'ըսկուի XVրդ դարու կէսերէն: Անոր հիմնադիրն է Սաոււասար (1455—1430) թագաւորը, ուստի Միտանի թագաւորող տունը անոր անունով կը կոչենք Ասաոււասարեան: Այդ թագաւորին գերիշխանութիւնը կը տարածուէր Հիւսիսային Միջագետքի և Ասորեստանի վրայ: Ան կը նուաճէ Նինուէն և որպէս աւար կը տանի տաճարի արծաթէ և ոսկիէ դուռը: Անոր օրով կ'ըսկսի Մի-

տանի. Եգիպտական մրցութիւնը արեւելքի արապետութեան համար: Անոր յաջորդը Արսաթամա I վերահաստատեց խաղաղութիւնը արտաքին ճակատի վրայ. բայց ներքին կեանքը խաղաղ չէր: Միտանին միշտ մնաց վտանգի տակ, բայց ոչ եգիպտական, այլ հաթական և ասորական, որոնք օղակի մէջ էին առեր Միտանին արեւելքէն և հիւսիս-արեւմուտքէն: Նոր կոիւններու համար ան պատրաստ չէր. ան ռազմապէս թուլցել էր. անոր կոռուող ուժերը «մարիանի»-ները զոհուեր էին միտանի-եգիպտական կոիւններու մէջ, վերապրողներն ալ մէկ բան կը բազձային՝ հաց և խաղաղութիւն: Այդ կոիւններու մէջ գլխատուած էր նաև եգիպտական մարտիկ-կոռուող գասը, բայց անոր փոխարինեց նորը, աւելի խոնարհ ծագում ունեցող զինուորական ղեկավարութիւնը: Միտանիներու մէջ այդպէս չեղաւ. անոնք փոքրամասնութիւն էին իրենց գրաւած երկիրներու մէջ. Մարիանիներու անձնակազմը զիւրութեամբ կարելի չէր լըրացընել: Միտանի զինուորական ուժի թուլացումով Հաթիբը շարունակ կը միջամտէին Միտանիի ներքին գործերու մէջ առաջ բերելով անիշխանութիւն: Հաթի թագաւորները հրահրեցին Միտանի պետութեան մէջ անջատողական ձգտումներ: Արտատամա ՝ պայքարեցաւ ներքին թըշնամիներու գէմ. բայց XIV րդ դարու սկիզբին մենք կը տեսնենք, որ Միտանի պետութիւնը արդէն բաժան-բաժան է եղած: Խարրիներու երկիրը, որ Հարաւ-Արեւմտեան Հասաստանն է, կ'անջատուի Միտանիէն և կը կազմէ անկախ պետութիւն մը. անոր վրայ կը թագաւորէ Արտատամա II-րդ: Ապահով ըլլալու համար Միտանիի յարձակումներէն նոր պետութեան վարիչները քիչ ետքը կը դաշնակցին Հաթական մեծագոյն թագաւոր Շուբիլուլումայի հետ: Բուն Միտանիի վրայ, որ իր մէջ ունէր ամբողջ Հիւսիսային Միջագետքը, Ասորեստանը և Մոփաց աշխարհը՝ կը թագաւորէր Տուրադան (1387--1377): Անդամահատուած և թուլացած Միտանին այնուհետև պիտի պայքարէր Հաթական մեծցող պետութեան դէմ թէ Սիւրիական իր կալուածներու

րը և թէ իր գոյութիւնը պահելու համար: Եգիպտոսը՝ կ'օգ-
նէ իր դաշնակցին: Տուչրադայի պալատի մէջ անգամ հա-
թական ազդեցութիւնը խորն էր: Արքունիքը բաժնուած
էր երկու հոսանքներու. բաժանման պատճառը Միտանիի
վարելիք արտաքին քաղաքականութիւնն էր:

ԵՐԿՈՒ ՀՈՍԱՆՔ.— Հաթերու համակիր հոսանքը կը
ջանար Միտանին բաժնել Եգիպտոսէն. ան կ'ուզէր, որ
Միտանին աւելի սերտ գործակցի Հաթերու հետ: Անոնք
թշնամի կը համարէին ոչ թէ Հաթերը, այլ Եգիպտոսը:
Թագաւորը և արքունիքի մէկ մասը կ'ուզէին հաւատարիմ
մնալ եգիպտական դաշինքին: Հաթերը կը համարէին Մի-
տանիի թշնամին. անոնց պատճառով բաժան բաժան էր
եղած, անդամահատուած: Եգիպտոսը կ'ուզէր պահել եղած
կացութիւնը, մէկ անգամ գծած սահմանը: Այս պայման-
ներու մէջ Տուչրադան կը դիմէ Ամենոֆիս III-ին, «իւր եղ-
բօրը» և անոր կը նուիրէ Հաթերու երկիրը, որ պէտք է
հասկնալ այն իմաստով, թէ ինքը ոչ միայն չէր հակառա-
կեր, այլ նոյնիմակ պատրաստ էր օգնելու եթէ փարաւոնը
յարձակի Հաթերու վրայ: Իր ազջկան Տագու-Սիբային
կ'ուղարկէ Եգիպտոս՝ Փարաւոնին կնութեան:

ՄԻՏԱՆԻ ԱՆԳՈՒՄԸ.— 1370 թ. Տուչրադան զոհ կ'եր-
թայ պալատական դաւադրութեան, որուն զուխը կանգնած
էր իր որդին՝ Մատիուզան: Երկիրը կը մատնուի անիշ-
խանութեան: Արտատամայի որդին, Սուգաոնան, որ կը
թագաւորէր Խարրի երկրին մէջ կը մտնէ Միտանի. կը
դաշնակցի Ատրեստանի և Ալլէի հետ: Այս երեք ուժերը
կը գրաւեն Վաչուկանին, կը կործանեն Տուչրադայի պա-
լատը: Պալատէն վերցուցած աւարը՝ ոսկին, արծաթը,
դաշնակիցները կը բաժնեն իրենց մէջ: Բայց ամենէն ծան-
րը Միտանի ազնուականութեան զխատումն է: Անոնք էին
կերտիւր Միտանի հզօրութիւնը և նեցուկ եղեր Տուչրադա-
յին Հաթերու դէմ: Մարիանիներու մէկ ստուար մասը Սու-
տարնան կը յանձնէ Ատուրներուն, որոնք կը կոտորեն ա-
նոնց: Ապա յաղթողները Միտանի երկիրը կը բաժնեն ի-

բարու մէջ: Ասորեստանը կ'անկախանայ: Բայց դեռ բո-
լոր հարցերը չեն լուծուած: Տուչրադայի դաւադիր որդին
կ'ապաստանի Հաթերու երկիրը՝ Շուբիլուլումայի մօտ:
Վերջինս՝ որ անոր հօր սխերիմ թշնամին էր, սիրով կ'ըն-
գունի՝ Մատիուազան ու կը ծառայեցնէ իր նպատակնե-
րուն:

Շուբիլուլուման կը ճանչնայ անոր իրաւունքները Մի-
տանի գահի վրայ, իր աղջիկն ալ անոր կնութեան կուտայ:
Բարեկամական դաշինք կը կնքէ և իր որդուն Բէյուշի-
լուին Մատիուազայի հետ կ'ուղարկէ Սուտարնայի դէմ:
Վերջինս կը պարտուի: Մատիուազան կը գրաւէ հօր գահը:
Կը կնքուի նոր դաշինք Հաթ և Միտանի թագաւորնե-
րուն մէջ: Միտանի տէրը այլեւս չի յիշուիր որպէս
ճեմ թագաւոր: Ան ենթակայ է Հաթերու ճեմ թագա-
ւորին: Միտանին նորէն կ'ենթարկուի անդամահատման:
Շուբիլուլուման կը գրաւէ Հիւսիսային Սիւրիան, Նահա-
րինան և իր երկու որդիներուն համար հոն կ'ըստեղծէ եր-
կու թագաւորութիւններ՝ կեդրոն ունենալով Կարկամէջը
Եփրատի ափին, և Հալպան: Միտանին կը կտրուի Մի-
ջերկրական ծովէն: Ան կը կորսնցնէ առեւտրական մեծ և
բանուկ ուղիները: Քաղաքական թուլութեան զուգահեռ կը
հետեւի տնտեսական անկումը: Ան կը կեդրոնանայ Խարու-
րի շուրջը մինչեւ Տաւրոս: Իսկ Հաթերը կը կանգնին Ե-
գիպտական Կայսրութեան սահմաններուն վրայ: XIVրդ
դարուն Միտանին կրկին քանի մը անգամ կ'ենթարկուի
անդամահատման: Անկէ կը բաժնուի Ալշէն, մեր Աղձնեաց
աշխարհը, նորէն Հաթերու օժանդակութեամբ: Քիչ յետոյ
Տիգրիսի վերին հովիտին մէջ կը կազմուի Շուբրիան՝ Ծո-
փաց աշխարհի պետութիւնը, Արածանէն մինչեւ Եփրատ և
Տիգրիսի ակունքներուն վրայ կ'իշխէին Խարրիները: Բայց
Միտանիի վերջին հարուածը կու տայ Ասորեստանը, որ եր-
կար ժամանակ ենթարկուեր էր անոր, չէր հաշտուեր անոր
գերիշխանութեան հետ: Այժմ անկախ դարձած՝ ան կը ջանայ
ի սպառ վերացնել Միտանին և տէր դառնալ անոր հողա-

մասերուն, որով իր առաջ կը բացուէին արեւմուտքի ուղիները: Միտանիի վերջին թագաւորը Սասունացաւ 11, կը կռուի Ասորեստանի Սալմանասար I-ի դէմ, կը պարտուի և կ'ապաստանի Հաթերու մօտ: Ասուրները կը գրաւեն Միտանի պետութեան մնացորդը: Կը վերջանայ անոր պատմութիւնը. Միտանին կը թողու երկու ժառանգորդ՝ Հաթերն ու Ասուրները: Բայց Արգաւանդ Կիսալու նի արեւմտեան թեւի վրայ կանգնած էր Նգիպտոսը, որ մեծագոյն քաղաքական գործօն ուժն է արեւելքի մէջ: Հաթերուն կը վիճակուի ելլալ անոր դէմ, իսկ Ասորեստանը կը մեծնայ և կը դառնայ մեծ քաղաքական ուժ ի հաշիւ հարեւան ժողովուրդներու:

Դ. ԳԼՈՒԽ

ՀԱԹԱԿԱՆ ՄԵՍ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ՀԱԹ-ԵԳԻՊՏԱԿԱՆ ՄՐՑՈՒԹԻՒՆԸ Մ. ԱՐԵՒԵԼՔԻ ՀԱՄԱՐ

ՀՆԱԳՈՅՆ ԲՆԱԿԶՈՒԹԻՒՆԸ.— Փոքր Ասիան եղեր է աճելավայրը ազիանիկ կամ Փոքր-Ասիական ժողովուրդներուն: Ազիանիկ աշխարհագրական սնուն մըն է, որ կը տրուի միայն Փոքր Ասիոյ հնագոյն բնակիչներուն: Կ'ենթադրուի, որ անոնք հոս ապրեր են շատ հին ժամանակներէն և մեկուսացման մէջ, առանց ուրիշ ժողովուրդներու հետ խառնուելու մշակեր են իրենց մարդաբանական-ցեղական յատկանիշները և հոգեկան մշակոյթը, լեզուն, կրօնը: Ասոնք կը կոչուին նաեւ հայասիայ, «արմէնոսի», ի նկատի ունենալով, որ անոնց մարդաբանական բնորոշիչ գծերը լաւապէս պահպանուեր են Հայերու մէջ: Անոնք կ'ուր գլուխ ունին, երկար, արծուակտուց քիթ, թխամորթ են, սեւաշեւոյ, միջակ հասակով: Մինչեւ երրորդ հազարամեակի կէսերը Փոքր Ասիոյ մէջ կ'ապրէին վերոյիշեալ յատկանիշներու տէր ժողովուրդները: Բայց այս յատկանիշները մենք կը գտնենք Միջագետքի, Սիւրիոյ, Պաղեստինի, Հայաստանի բնակիչներուն մէջ: Այդ կը նշանակէ Հնդեւրոպացիներու Մերձաւոր Արեւելքի մէջ երեւալէն առաջ Փոքր-Ասիական ժողովուրդները գաղթեր են իրենց շայրենիքէն և ցրուեր զանազան ուղղութեամբ: Միջագետքի մէջ անոնք Սումէրներն են, Հիւսիսային Միջագետքի, Տաւրոսեան լեռնաշխարհի մէջ Սուբարիներ և Սարրիներ. ասոնք կը բնակին նաեւ Հայաստանի մէջ, ազիանիկ ժողովուրդներուն կը պատկանին: Հայաստանի հողի վրայ առաջին պետութեան

հիմնադիրները՝ Հայասանները, Նայիրեան ժողովուրդները և Ուրարտացիք։ Ազիանիկները կը կազմեն Սիւրիոյ և Պաղեստինի բնակչութեան նախնական խաւը, աւելի ուշ անոնց վրայ աւելցան սեմականները։ Հիւսիսային Պարսկաստանի, Էլամի բնակչութեան հնագոյն շերտը նոյնպէս ազիանիկ է։ Այսպէս՝ մենք կը տեսնենք, որ այս Փոքր-Ասիականները ցրուած են ընդարձակ տարածութեան վրայ դեռ երեք հարամեակին Գրիստոսէ առաջ։ Շատ աւելի ուշ՝ անոնք որոշ վայրերու մէջ իրենց տեղը զիջեցան այլ ծագում ունեցող ժողովուրդներու։ Միջագետքի, Սիւրիոյ, Պաղեստինի մէջ անոնք տեղի տուին սեմական ցեղերուն՝ Քանանացիներուն, Ասորներուն, ամովրական և արամէական ցեղերուն, Պարսկաստանի մէջ անոնք նահանջեցին արիական Մարերու և Պարսիկներու առջեւ։ Իրենց բուն հայրենիքին մէջ անգամ ազիանիկները ենթարկուեցան դրսեկ ժողովուրդներու արշաւանքին՝ Փոքր Ասիոյ մէջ հնդեւրոպական Նեսիտներու, Հայաստանի մէջ, արիական Միտանիներու։ Աւելի ուշ սկիւթական ցեղերու և Արմէններու։ Այս արշաւանքներու հետեւանքով ամեն տեղ նախնական միատարր բնակչութիւնը հիմնօրէն կերպարանափոխուեցաւ։ Սեմականները իրենց մէջ ձուլեցին այդ նախաբնիկները, անապատային գօտին սեմականացաւ, բնակչութեան նախնական շերտը թողուց անոնց մէջ իր հետքերը՝ մարմնական տիպը, ահա թէ ինչու ասորիստանցին, Հրէտն աւելի մօտ են հայատիպին. քանի մը բառեր ալ սեմական լեզուին մէջ մնացին Փոքր-Ասիական լեզուներէն։ Լեռնային գօտիին մէջ տեղի ունեցաւ ասոր հակառակը. եկեորները իւրացուցին Փոքր-Ասիական լեզուները, բայց ենթարկեցին իրենց մտածողութեան եղանակին, բառամթերքը յարմարցուցին իրենց քերականութեան։ Անոնց մարդաբանական կազմն ալ մեծ փոփոխութեան ենթարկուեցաւ, որովհետեւ իրենք շատ աւելի քիչ էին և ձուլուեցան Փոքր-Ասիական, հաթ խարրի-ուրարտական մեծամասնութեան մէջ։

ՆԵՍԻՏՆԵՐԸ. — Փոքր-Ասիական բնիկները երրորդ հա-

գաբամեակի կէսերուն ենթարկուեցան Հնդեւրոպացիներու արշաւանքներուն, որոնք կուգային Եւրոպայէն: Անոնք Պալքաններէն, նեղուցներու վրայէն մտան Փոքր Ասիա: Գիտուններէն ոմանք ալ կ'ընդունին, թէ անոնք Կովկասեան կիրճերով է, որ մտած են Արեւելք, սպա Հայաստանի վրայով անցեր են Փոքր Ասիա: Առաջին թափանցողները զէպի Մերձաւոր Արեւելք նեւտներն են. ասոնց Փոքր Ասիոյ մէջ հաստատուիլը միայն առաջին յորձանքն է հնդեւրոպական ժողովուրդներու գաղթականութեան: Անոր պիտի հետեւին ուրիշ գաղթաշարժեր, որոնց հետեւանքը պիտի ըլլայ Մերձաւոր Արեւելի լեռնային գօթիի հնդեւրոպականացումը: Գուցէ նեւտներէն առաջ հոս հաստատուեր են Լուվինները, բայց մենք անոնց գալուն և տեղաւորուելուն մասին բան մը չենք գիտեր: Նեւտներու հաստատուելով Կապադովկիոյ սեմական վաճառականութեան ծանր հարուած հասաւ: Անոնց գրասենեակները կողոպտուեցան, վաճառականները սպանուեցան, սեմական գաղութները ոչնչացան: Դագրեցաւ սեմականներու թափանցումը զէպի Փոքր Ասիա:

ՏԵՂԱՅԻՆ ՆԻ ՆԿԻՈՐԸ.— Հնդեւրոպական այս ցեղերը Փոքր Ասիան գտան քաղաքական տեսակէտէն պատակատուած, բաժնուած: Ասիանիկ ժողովուրդները դեռ կ'ապրէին իրենց սոհմական կեանքը. երբեմն տեղի կ'ունենար տոհմերու և ցեղերու ժամանակաւոր միութիւն, այս կամ այն իշխանի զլխաւորութեամբ: Բայց անոնք մինչեւ Հնդեւրոպացիներու արշաւանքը չէին հասած մէկ պիտութեան ստեղծման: Անոնց կեանքը կ'անցնէր տեղական, մեկուսացած միջավայրի մէջ: Աշխարհագրական պայմաններն ալ կը նպաստէին ասոր: Ամեն ուղղութեամբ ձգուող լեռնաշղթաները երկիրը կը բաժնէին փոքր ինքնամիտի, մեկուսացած շրջաններու, ուր տոհմ մը, ցեղ մը կրնար ապրիլ, յարատուել, ըլլալ ինքնաբաւ և դուրսի հարեան ցեղերու հետ շատ քիչ յարաբերիլ: Այսպիսի փոքր համայնքներով ապրող Փոքր-Ասիական բնիկները չէին կրնար

կասեցնել առաջխաղացումը հնդեւրոպական ցեղերու, որոնք լաւ կոռուղներ էին, լաւ զինուած և լաւ կազմակերպուած: Եկուորները ռազմիկ, մեծ ու փոքր խումբերով կուզային և քաջ, հմուտ և ընդունակ առաջնորդներու ղեկավարութեամբ: Պէտք է ենթադրել, որ ասոնք զիւրու-թեամբ տիրեցին Փոքր Ասիական ցրուած համայնքներուն: Նեսիտ կամ հնդեւրոպացի ռազմիկները Փոքր Ասիոյ տիրելով ստեղծեցին քանի մը մեծ ու փոքր միաւորներ: Անոնցմէ իւրաքանչիւրը իրեն հողամասի տեղացիները կազմակերպեց, ցրուած ուժերը միացուած զինեց և ծառայեցուց իր նպատակներուն: Եկուորները օգտագործեցին տեղացիներու աշխատանքը, երկրի հարստութիւնը հաւաքեցին, իրենց ամրոցներու մէջ: Կազմաւորման, միաւորման այս աշխատանքը տեւեց քանի մը դար: Այս աշխատանքը Փոքր Ասիոյ քաղաքական միաւորման առաջին աստիճանն է միայն: Միաժամանակ կը կատարուէր մէկ ուրիշ գործողութիւն. երկու ազգագրական տարրերը՝ բնիկը և եկուորը դանդաղօրէն կը ձուլուին, կը միաւորուին և կը բոնեն մէկ ժողովուրդ դառնալու ճամբան: Այս շարժումին մէջ մեծ դեր կը խաղայ փոխադարձ ամուսնութիւնը: Եկուոր նեսիտները թիւով քիչ և մեծ մասամբ կոռուղներ, կ'ամուսնանան տեղացի աղջիկներուն հետ, կը կազմեն ընտանիք, կ'ընդունին անոնց տատուածները, տեղացիները կ'առնեն իրենց բանակներու մէջ, կը մեծցնեն իրենց ռազմի ուժը և քսաներորդ դարէն կ'ըսկսին նուաճումներու: Այս ձուլումի հետեւանքներէն մէկն ալ այն է, որ իշխողները իրենց վրայ կ'առնեն տեղացի Հաթերու անունը:

Հաթ ժողովուրդը, որ սկզբնապէս ասիանիկ ժողովուրդը յատկանշող անուն է, հիմա կը նշանակէ այն երկտարր, բարդ զանգուածը, որ կը կազմակերպուի բնիկներու և եկուորներու ձուլումով:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻԱՒՈՐՄԱՆ ԳՈՐԾԸ. — Արշաւող նեսիտները 2000 թ շուրջը սկսան Փոքր Ասիան միացնել մէկ իշխանութեան տակ Անոնք այս նպատակին համար ունէ-

ին ամեն առաւելութիւն: Հեծելազօր բանակ ունէին, երկանիւ կառքեր. բանակը կ'առաջնորդուէր ռազմիկ ազնուականներու ղեկավարութեամբ:

1900 թ. շուրջը Նեսիտներու թագաւորը Անիսաւր կը գրաւէ մանր Փոքր Ասիական իշխանութիւններու հողերը. աւելի ճիշտ՝ այդ տեղական իշխանները կ'ընդունին Նեսիտ թագաւորի առաջնութիւնը, գերիշխանութիւնը: Անիսաւր կը հասնի Սև ծովի ափերը մէկ կողմէն և Միջերկրականի՝ միւս կողմէն: Ամբողջ փոքր Ասիան կը ճանչնայ անոր գերիշխանութիւնը: Անոր մայրաքաղաքը Նեսամ էր:

Անոր յաջորդներէն մէկը՝ Տիաբարեան կամ Լաբարեան մեծցուց պետութիւնը գլխաւորապէս Տաւրոսեան լեռներու ուղղութեամբ: Սուանութիւնը կը համարէ այդ թագաւորը հաթական մեծ պետութեան հիմնադիրը: Անոր օրով ամբողջ Փոքր Ասիան գրեթէ համախմբուած է մէկ իշխանութեան տակ. այնպէս որ անոր յաջորդը Հասուօիլ I արդէն կը մտածէ Փոքր-Ասիայէն դուրս՝ գրաւումներ ընելու մասին: Ան կը մտնայ Սիւրիա և կը գրաւէ Հալպամ՝ այսօրուայ Հալէպը: Բայց այս գրաւումը երկար չի տևեր: 1810 թ. շուրջը Հատուշիլի որդին Մուրսիլ I քաղաքական կեդրոնը Նեսայէն կը փոխադրէ Հասուօաւ քաղաքը: Յետոյ կ'արշաւէ Սիւրիա, կը վերագրաւէ Հալպան, կը տեղահանէ բնակչութիւնը և կը փոխադրէ Փոքր Ասիա. կը գրաւէ Եփրատի ափին Կարկիմիօ քաղաքը: Հալպայի և Կարկէմիշի գրաւումը կը բանայ անոր առջև Բաբելոնի ճամբան: Ան 1806 թ. կարշաւէ Բաբելոն, կը գրաւէ, կը գերէ, կ'աւարէ և հարստացած կը վերադառնայ Հատուշաշ: Անոր արշաւանքները ուարի նպատակով էր: Չէր կրնար Փոքր Ասիայէն կառավարել Միջագետքը: Մուրսիլ I-ը կ'ըսպաննուի և անոր յաջորդները կը շարունակեն նուաճումները թէ Եփրատի շուրջը և թէ դէպի հիւսիս՝ Սև ծովի ափերը: Տելեպիմուճ մէկ գրութեան մէջ կը պատմէ իրեն նախորդներու գործերու մասին: Ան կը թագաւորէ մինչև 1650 թ.: Անկէ վերջ մենք ոչինչ գիտենք

հաթական մեծ պետութեան մասին: Շուրջ երկու հարիւր տարի անոր պատմութիւնը մեզ անյայտ է: Անոր գրաւումները դուրս կուգան ձեռքէն: Գուցէ անոր ընկրկումը՝ Միւրիայէն և Նիրատէն քաջուիլը կապ ունի Հիւքոսաներու իշխանութեան հետ, որոնց մէկ թւը կը հասնէր Սիւրիա, հիւսիսային Միջագետք: Հաթերի արքունիքն ալ խաղաղ չէր. դաւադրութիւնները, սպանութիւնները սովորական երեւոյթ կը դառնան: Ասկէ կ'օգտուին Ասորները, որոնք կը գրաւեն կապադոկիան, Կիլիկիան. Նահարինան. նշանաւոր կարաւանային առևտուրի քաղաքները՝ Հալպան և Կարկէմիշը կ'իյնան Ասորեստանի ձեռքը: Հաթական պետութեան այս թուլացումն ու քայքայումը կը տեւէ մինչև 1470 թ. երբ ան նորէն կ'երեւայ Մերձասոր Արեւելքի պատմութեան բեմին վրայ: Այս թուին Թուրքիա I) կը վերականգնէ հաթական պետութիւնը: Ան հիմնադիրն է հաթական երկրորդ մեծ պետութեան, որ կը տեւէ մինչև 1200 թիւը: Հաթերու քաղաքական հոլովոյթի այս երկու շրջանները գանազանելու համար առաջին շրջանը՝ 2000-էն մինչև 1650 թ. կ'անուանենք հին պետութեան երջան, իսկ 1470-էն մինչև՝ 1200 թ. ճոր պետութեան երջան: Երկու դարի թուլացումէն և անիշխանութենէն ետքը ան նոր թափով կ'երեւայ պատմութեան մէջ. այդ երկու դարերու ընթացքին աւելի կ'ամրանայ հաթ ժողովուրդը կազմող բաղադրիչ տարրերու միութիւնը, աւելի կը մեծնայ հաթ ղեկավար ռազմիկ ազնուականութեան քանակը. տեղացիներէն խաւ մը կը բարձրանայ, տեղ կը գրաւէ ղեկավարութեան, վարչութեան և զօրքի հրամանատարութեան մէջ:

Հաթերու քաղաքական վերածնութիւնը կը կատարուէր արեւելքի պատմութեան այն պահուն, երբ Հիւքոսաներու պետութիւնը կործանուած էր, Եգիպտացիները գրաւեր էին Միջերկրականի եզերքները, երբ քանի մը տարի յետոյ Թուրմէս III պիտի երեւար Եգիպտոսի ափին, երբ նոր կը կազմակերպուէին Միտանիի ուժերը՝ Եգիպտացիներուն դիմադրելու համար:

ՇՈՒԲԻԼՈՒԼՈՒՄԱ.— Հաթական պետութեան մեծագոյն գէմքը Շուբիլուլուման է, 1400—1360: Անկէ առաջ երկրորդ հաթական պետութիւնը ունեցաւ շարք մը նշանաւոր գէմքեր, որոնք դուրս բերին երկիրը ներքին անիշխանութենէն, բռնեցին փոքր Ասիոյ միացումի և նոր նուաճումներու ճամբան: Այս բոլորէն օգտուեցաւ Շուբիլուլուման: Անոր գործերը մեզի լաւապէս ծանօթ են այն դաշինքներու շնորհիւ, որ ան կնքեց իր ժամանակի թագաւորներու հետ: Անոր տարեգրութիւնները հասեր են մեզի և կը ծառային իբրեւ աղբիւր: Անոր մասին կը խօսին հարեւան ազգերու դպիրները՝ իրենց թագաւորներու տարեգրութեանց մէջ: Անոր քաղաքական գործերն ուղղուած էին երեք հարցերու լուծման: Առաջին՝ սիւրբական հարցը, երկրորդ՝ Միտանի խնդիրը, երրորդ՝ փոքր Ասիոյ խաղաղացման գործը:

ՄԻՋԱՄՏՈՒԹԻՒՆ ՄԻՏԱՆԻ ԳՈՐԾԵՐՈՒ ՄԷՋ.— Տեսանք թէ ինչպէս ան ստեղծեց քաղաքացիական պայքար Միտանիի պետութեան մէջ: Քանի գոյութիւն ունէր Միտանին, անկարելի էր հաթական պետութեան մեծացումը Եփրատի արեւուն և Սիւրբիոյ մէջ: Միտանի-եգիպտական դաշինքը ատոր արգելք էր: Սիւրբիա իջնալու համար Շուբիլուլուման իր առջեւ պիտի գտնէր եգիպտական բանակը, իսկ իր ձախ թեւը պիտի վտանգուէր Միտանի-մարիաներով: Միտանին թուլացուց: Բայց իր ծրագրի մէջ չէր մտնէր իւարրի պետութեան ուժեղացումը՝ հարաւ—արեւմտեան Հայաստանի մէջ: Երբ վերջինս Սուտասնա II ի օրով յարձակեցաւ Միտանիի վրայ, Շուբիլուլուման հանդէս եկաւ իբրեւ պաշտպան Տուշրատայի ժառանգի՝ Մատիուզայի գահակալական իրաւունքներուն: Վերականգնուեցաւ փոքրացած Միտանին. իր միջամտութեան իբրեւ վարձք Շուբիլուլուման, ինչպէս ըսինք, գրաւեց Կարկէմէշը և Հալպան՝ և իր երկու որդիներուն համար ստեղծեց իշխանութիւններ՝ եգիպտական սահմաններուն մօտիկ:

ՄԻԶԱՄՏՆՈՒԹԻՒՆ ՍԻՒՐԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՒ ՄԷՋ.— Շու-
 բիլուլուլումայի օրով Եգիպտոսը ներքնապէս կը տկարանար :
 Հոն Ամենոֆիս IV-րդը զբաղուած էր կրօնական բարենորո-
 գումներով, որոնք պիտի ամրացնէին եգիպտական մեծ կայս-
 րութեան հիմերը, բայց իրականին մէջ այս բոլորը միայն
 խախտեցին այն : Ամենոֆիսը երկիրը մատնեց կրօնա-
 կան անիշխանութեան : Եգիպտոսի հեղինակութիւնը Պա-
 ղեստինի և Փիւնիկէի մէջ ինկաւ : Բարենորոգիչ փարա-
 ւոնը ուշադրութիւն չըրաւ կայսրութեան ասիական հողե-
 րու պաշտպանութեան : Ասկէ օգտուեցաւ Շուբիլուլուլուման,
 որու գործակալները բոլոր քաղաքներու մէջ առաջացուցին
 դէպի Հաթիրը յարող հոսանքներ : Եգիպտոսի ներքին
 թուլացումէն օգտուեցան մասնաւորապէս անապատի թա-
 փառական ցեղերը, Պետեհիները : Ասոնք կայուն իշխանու-
 թիւն և ուժեղ բանակ չգտնելով իրենց առջեւ կը յարձա-
 կէին հարուստ քաղաքներու վրայ, կ'աւերէին և մեծ աւա-
 րով կը վերադառնային իրենց անապատները : Ասոնք կոր-
 ծանեցին Բիբլոսը, ուր եգիպտական հարուստ դաղութ կար :
 Շուբիլուլուլուման օգտուեցաւ Եգիպտոսի թուլութենէն և
 Սիւրիոյ անիշխանութենէն : Անոր բանակը առանց դի-
 մադրութեան հասաւ մինչև Երուսաղէմ, որ կարաւանային
 առեւտուրի նշանաւոր կեդրոն էր : Ան կործանեց Քաթնա
 ամրոցը և ջարդեց Կատէշ բերդաքաղաքի պահպան զօրա-
 բաժինը : Եփրատի աջ թևի հողերը մինչև Պաղեստին այլ-
 եւս եգիպտական իշխանութեան չէր ենթարկուեր : Այս
 յաղթութիւններէն ետքն է, որ ան կրստեղծէր Հալպայի
 իշխանութիւնը իր որդիներէն մէկուն համար :

ՓՈՒՔՐ ԱՍԻՈՅ ԳՈՐԾԵՐԸ.— Շուբիլուլուլուման հարկադրու-
 ւած էր երկար ժամանակ զբաղուելու Փոքր Ասիական ներքին
 հարցերով : Այս է պատճառը, որ ան աւելի գործօն միջամր-
 տութիւն երեւան չբերեց եգիպտական ճակատին վրայ : Ան
 չուրջ քսան տարի նուիրեց Փոքր Ասիոյ ցեղերու ապս-
 տամբութիւններու ճնշման, ամուր իշխանութեան հաս-
 տատման :

Վաստի կարելի է ըսել, որ եթէ Շուբիլուլումայի առջեւ դրուած չըլլար Փոքր Ասիական հարցը, ան կը լուծէր եգիպտական կայսրութեան ասիական զաղութներու խնդիրը արմատական ձեւով, կը գրաւէր Միջերկրականի Սիւրիական Պաղեստինեան ափերը: Փոքր-Ասիան խառնարան էր ցեղերու, լեզուներու, անկախ տոհմերու: Անոնց և կեդրոնական իշխանութեան մէջ կապերը շատ թոյլ էին: Սեւ ծովու ափերուն, Ալիսի ակունքներու մօտ, Եփրատի ափերու ցեղերը զժուարութեամբ կ'ընդունէին Հաթ թագաւորներու իշխանութիւնը, չէին ենթարկուիր ռեմեժ արքայի՝ փոխարքաներուն և միշտ կ'ապստամբէին, երբ տեսնէին, որ իշխանութիւնը հեռու է իրենցմէ կամ թուլացած: Իրօք Հաթ թագաւորները չստեղծեցին միացեալ, մէկ կեդրոնէն կառավարող թագաւորութիւն մը, այլ դաւեճակցային պետութիւն, որուն մէջ գաշնակցող կողմերը նախկին տեղական իշխանաւորներն էին: Անոնք պահեր էին իրենց բոլոր իրաւունքները՝ Հաթ թագաւորներուն միայն հարկ կուտային և զօրք: Շուբիլուլուման կը կոուէր կասկասներու, Պաւլաներու դէմ և յատկապէս Հայասայի և Կարանիներու դէմ: Շուբիլուլուման այս երկիրներու վրայ կառավարիչ կը նշանակէ իր հաւատարիմ մարդոց: Այսպէս Հայասայի կառավարիչ կը նշանակէ Հուբանային, որ սակայն կ'ապստամբի ռեմեժ արքային՝ դէմ:

ԵԳԻՊՏՈՍԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ.— Ամենօրիւ IV-րդը թուլացուց Եգիպտոսի ռազմունակութիւնը: Անոր յաջորդը Թուրանիամունը վերակառուցեց հին հաստատութիւնները, վերանորոգեց Ամոնի պաշտամունքը, երկիրը որոշ չափով խաղաղեցաւ: Բայց XVIII-րդ հարստութիւնը այլևս պետական ու զինուորական շրջանակներուն մէջ յարգ չունէր: Անոր փոխարինեց XIX-րդ հարստութիւնը, որ Եգիպտոսին տուաւ շատ մը փայլուն դէմքեր. ասոնք կը ջանան վերագրաւել Պաղեստինը, Փիւնիկէն և հասնիլ Եփրատին: Սեթ I (1320—1300). Ռամսես II (1300—1234) նոր էջ կը բանան Եգիպտոսի զինուորական պատմութեան մէջ: Անոնց

գործերը արձանագրուած են Լիւքսորի և Կարնակի մեծ տաճարներու պատերուն և սիւներուն վրայ: 1320 թ. Սեթի I կը մտնէ Պաղեստին, ցրիւ կուտայ անապատի Պետեւինբուրու զօրքերը և կը վերահաստատէ կարգը: Ան կը գրաւէ փիւնիկեան քաղաքները, կը նորոգէ նաւահանգիստները. եգիպտական նաւերը նորէն կը յաճախեն Փիւնիկիոյ նաւահանգիստները՝ Սիւրիոյ և Փիւնիկեան քաղաքներու բարիքները Եգիպտոս տանելու համար: Եգիպտական մէկ բանակ կը մնայ Բիրլոսի մէջ. իսկ ուրիշ զօրաբանակներ կը պաշտպանեն արգասաբեր հողամասերը անապատի յարձակումներէն: Սեթիէ հարիւրաւոր գերիներ կը բռնէ և կը զոհէ Ամոն աստուծուն: Երկրորդ անգամ կ'արշաւէ Ասիա, գրաւելու համար Նահարինան՝ Որոնդէսի հովիտը: Կը պաշարէ և կը վերագրաւէ Կադէշը: Կադէշի մօտ հաթ-եգիպտական բանակները կը հանդիպին իրարու. հաթական բանակի զլուխը կանգնած էր Մուրսիլ II-ի որդին, Մուրվա-սալուէ: Հաթերը կը պարտուին և փարաւոնը կը տօնէ իր յաղթանակը կրօնական արարողութիւններով: Ամոն աստուածը շրջապատուած ասիական և Կատէշի աստուածներով կ'ընդունի Սէթի նուէրները, գերիները և յաղթանակի նշանները: Բայց չնայած այս յաղթանակին Եգիպտացիները Եփրատին չհասան: Անոր անմիջական ափերը մնացին Հաթերու ձեռքը:

ՌԱՄՍԷՍԻ ԿՈՒԻՒՆԵՐԸ.— Ան աւելի մեծ ծրագիր ունէր կայսրութեան ընդարձակման համար: Կը յայտարարէր, որ պիտի վերագրաւէ Սիւրիան և խորտակէ հաթական ուժերը: Անոր գահակալութեան սկիզբը Մերձաւոր Արեւելքի քաղաքական կացութիւնը հետեւեալն էր: Եփրատէն արեւմուտք, Սիւրիայէն հիւսիս հաթական մեծ կայսրութիւնն էր, որու քաղաքականութեան առանցքը Եփրատի ափերուն, Սիւրիոյ տէր գառնալն էր: Տիրոս, Սիդոն, Պէյրութ քաղաքները, ինչպէս և երկրի ներքին գաւառները հպատակուեր էին Եգիպտոսին և բարեկամութիւն ցոյց կուտային անոր: Աւելի հիւսիս ինկած երկիրները՝ Նահարինան, Որոնդէսի շուրջը

կայսրուած իշխանութիւնները, Կաղէչը հաթական ազդեցութեան գօտի էին դարձեր. Բիրլուսը և հիւսիսային Փիւնիկէն աչքի կ'իջնային հակաեգիպտական իրենց զգացումներով: Այս պայմաններու մէջ Հաթերու թագաւորը գիւրութեամբ կրնար ուժեր հաւաքել Եգիպտոսի դէմ:

Թէ Եգիպտոսի և թէ հաթական բանակներու մէջ կային նոր թարմ ուժեր: Հիւսիսէն հարաւ կ'իջնէին Աֆեացիները, Լիկիացիները, Դանայցիները, Սարդերը և ուրիշ շատ հնդեւրոպական ցեղեր, որոնք ողողեր էին Եգէեան կղզիները Փոքր Ասիոյ արեւմտեան եզերքները և արդէն երեւցեր էին Պաղեստինի, Եգիպտոսի և Լիպիոյ փերուէն: Անոնք արկածախնդիր, լաւ զինուած ծովահէններ էին, որ ասի կ'իջնէին, կը մտնէին երկրի խորքերը, կը կոտորէին և կը կողոպտէին: Ասոնց դէմ կը պայքարէին թէ Հաթ թագաւորները, թէ փարաւոնները: Ասոնց դէմ պայքարելու միջոցներէն մէկն ալ իրենց բանակի մէջ առնելն էր: Ասոնք իրենց ուժերը ի սպաս կը բերէին անոնց, որոնք լաւ կը վարձատրէին: Շատերը մտան հաթական բանակներու մէջ, շատերուն տեղ տուաւ Ռամսէս II: Անոնք զինուած էին նոր զէնքերով՝ երկբերան կացիներով, երկար գաշոյններով: Այս նոր եկող զօնակները ուժեղացցին երկու թշնամի բանակները, բայց անոնց մեծ զանգուածը հաստատուեր էր Եգէեան ծովի կղզիներուն վրայ և ասիական փերուէն. ասոնք կտրեցին Հաթերուն ծովէն և օղակեցին անոր հիւսիս-արեւմուտքէն: Նեղուցներն ալ անոնց հսկողութեան տակն էր: XIV-րդ դարուն կ'ըստեղծուէին այն ուժերը, որոնք դար մը ետքը բախտորոշ դեր պիտի խաղային Հաթերու քաղաքական կեանքի մէջ: Այդ նոյն ժամանակ՝ հարաւէն XIX-րդ հարստութեան փարաւոնները վերսկսեցին իրենց յարձակողականը Հաթերու դէմ:

Հիւսիսի՝ հնդեւրոպական նոր ցեղերու և հարաւի մէջ որոշ համաձայնութիւն կար: Ռամսէս II-ի գործակալները կ'աշխատէին Ասորեստանի պալատի մէջ, Փոքր Ասիոյ մէջ. կը ջանային ապստամբեցնել հաթական զանակցու-

Թեան անդամ իշխաններուն, անոնք կը գործէին Հաթերու թիկունքը, անոր հարեան մեծ և փոքր պետութիւններու մէջ: Հաթերն ալ իրենց հերթին դաշնակիցներ կ'որոնէին: Համաձայնութեան եկան Պոնտոսի՝ Կիզուառնայի թագաւորութեան հետ: Մուտալուն դաշինք կ'առաջարկէ Հալպայի իշխանին, ոտքի կը հանէ Պէտէւիներուն, խլտումներ կ'ըստեղծէ Պաղեստինի մէջ: Անոր հետ կը դաշնակցին Նահարինայի, Կարկէմիշի, Կիլիկիայի, Կադէշի և Արվատի իշխաններն ու թագաւորները: Նախքան զինուորական գործողութիւնները՝ երկու կողմերն ալ զիւանագիտական զեղուն գործունէութիւն կ'ունենան, դաշնակիցներ կ'ապահովեն:

ԿԱԴԷՇԻ ՃԱԿԱՍԱՄԱՐՏԸ 1295 Թ.— Ռամսէս II-ի գահակալութեան հինգերորդ տարին Եգիպտոսի բանակները կը մտնեն Որոնդէսի հովիտը, զօրքը կ'առաջնորդէր փարաւոնը անձամբ: Անոր նպատակը Կադէշի գրաւումն էր, որուն տակ մինչ այդ տեղի էին ունեցեր քանի մը ճակատամարտներ: Կադէշը կառուցուած էր Որոնդէսի ափին, ան Նահարինայի պաշտպանութեան բերդն էր: Առանց Կադէշի գրաւման անկարելի էր հաստատուիլ Եփրատի ափերուն, պահել Հալպան և Կարկէմիշը: Կադէշի տակ դիրքաւորուած էին Հաթերը իրենց դաշնակից ուժերով: Կեղծ լրտեսները և հաթական սուրհանդակները, որոնք ինկեր էին փարաւոնի ձեռքը, կը զեկուցէին թէ հաթական զօրքերու գլխաւոր մասերը հեռու են քաղաքէն, որ քաղաքի ամրութիւնները պաշտպանուած են շատ թոյլ քաղաքապահ զօրքերով, հետեւապէս Եգիպտացիք զիւրութեամբ կրնան գրաւել Կադէշի ամրութիւնները: Ռամսէսը այդ տեղեկութիւններու հիման վրայ Որոնդէսի ծանծաղուտներով՝ իր յառաջապահ բանակը կը շարժէ Կադէշի վրայ: Բայց զօրքի մեծագոյն մասը ղեռ հետու էր: Միայն ամրութեանց տակ բռնած գեւիղներէն կ'իմանայ, որ թշնամիի գլխաւոր ուժերը քաղաքի մէջ են և մէկ մասն ալ յարմար դիրքեր է գրաւեր հիւսիսային գծի վրայ: Հաթերու առաջապահ ուժերը կ'ըսկըրին յարձակողականը: Եգիպտացիներու առաջ նահանջի

ճանապարհ չկար: Պէտք էր ընդունիլ կոիւր: Եգիպտական բանակը կը կոտորուի: Ռամսէսը կը կտրուի իր գլխաւոր ուժերէն: Փարաւոնին կը փրկէ միայն իր անձնական արիւթիւնը և իր թիկնապահներու և փոքրաթիւ զինուորներու անձնութիւնը: Ռազմակառքի վրայ կանգնած Ռամսէս II. կը դիմէ իր «հօրը», Ամոն աստծուն, կը խնդրէ անոր օգնութիւնը և խիզախօրէն կը յարձակի թշնամիին վրայ: Մինչ այդ կը հասնին եգիպտական գլխաւոր ուժերը և անմիջապէս կը մտնեն կոուի մէջ: Այժմ Եգիպտացիք է, որ գերակշռութիւն կ'ըստանան. հաթական և անոր դաշնակից ուժերը կը նահանջեն: Բայց կոուի ելքը կը մնայ անորոշ: Կադէշը կը մնայ Հաթերու ձեռքը. երկու բանակներ պատրաստ չէին նոր կոուի համար. ուստի կը նահանջեն մէկը՝ հարաւ, միւսը՝ հիւսիս: Հաթական բանակները կը կեդրոնանան հիւսիսը՝ Եփրատի ափին. իսկ Ռամսէսը Քանանի մէջ կը պատժէ ներքին թշնամիներուն՝ Գալիլէի ապստամբներուն:

Կադէշի ճակատամարտը պատմութեան առաջին մեծ ճակատամարտն է, որ կատարուեցաւ որոշ ռազմավարութեամբ: Հաթերը հանդէս բերեցին ոչ միայն արիւթիւն, այլ և որոշ ռազմավարութիւն: Անոնք փորձուած զիրքային կոիւ մղողներ էին: Այնուհետեւ Ռամսէսը տասնվեց սարի շարունակ կոիւներ պիտի մղէր ոչ միայն Հաթերու դէմ, որոնք երբեմն ճարպիկ պարտիզանական կոիւներ կ'ընէին, այլ և տեղացի սեմական ցեղերու, իշխաններու և քաղաքներու դէմ, որոնք երբեք չհաշտուեցան եգիպտական իշխանութեան հետ:

ՆՈՐ ԿԱՅՈՒԹԻՒՆ. — 1290 թ. մեռաւ Հաթերու Մուտալու թագաւորը: Անոր վերջին տարիներուն և անկէ ետքը հաթական արքունիքը դաւադրութիւններու և պայքարի կեդրոն դարձաւ: Միայն 1281 թ. Հասուելի III ամուր կ'ըզգար իրեն Քահի վրայ: Ասոր օրով Մերձաւոր Արեւելքի քաղաքական հորիզոնին վրայ նոր ուժեր երեւան կուգան: Հաթական կայսրութիւնը վտանգուած էր Արեւել-

քէն, ուր Ասորեստանը կը դառնար առաջնակարգ բազմաբնակ, Ան XIV-րդ դարու վերջին գրաւեց Միտանի հողերը, կործանեց պետութիւնը և Հաթերը բան մը չկրցան ընել ատոր դիմաց: XIII-րդ դարու սկիզբներուն հաթ-եգրպտական կոիւններու ժամանակ Ասորեստանը կ'ըսպառնար հաթերու ձախ թլելին: Եւ եթէ ան, չանցաւ յարձակման՝ պատճառը այն էր, որ ան զբաղուած էր Հիւսիսային Միջագետքի, Բաբելոնի հողերուն տէր դառնալով: Մուտալու մահէն ետքը Սալմանասար I Եփրատը բարձրանալով կը գրաւէ Կարկէմիշը, որ հաթական առաջապահ բերդերէն մէկըն էր Եփրատի վրայ: Հաթերը պիտի գործէին այժմ և՛ Ասորեստանի և՛ Եգրպտոսի դէմ, բան մը, որ անոնք անկարող էին մանաւանդ որ հիւսիս-արեւմուտքէն ալ իրենց թիկունքը ապահով չէր: Ռամսէս I-ն ալ աւելի լաւ կացութեան մէջ չէր: Ան իր ուժերը կ'ըսպառէր ասիական ճակատի վրայ, ոչ տեղացիներու համակրանքը չահիլ կրցաւ, ոչ ալ անոնց հնազանդութեան բերելու յաջողեցաւ: Ամեն տեղ ան կը տեսնէր հաթական գործակալներուն և ապրստամբ սեմական ցեղերուն ու իշխաններուն: Իր բոլոր ճիգերը հասնիլ Եփրատի, որու ափին կանգնեց էին XIX-րորդ հարստութեան փարաւոնները, իզուր անցան: Պէտք էր վերահաստատել խաղաղութիւնը:

1278 թ. ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԳԱՇԻՆՔԸ ԵՒ ԱՐԵՒԵԼՔԻ ՀԱԻԱՍԱՐԱԿՇՈՒՄԻՒՆԸ.— Խաղաղութեան բանակցութիւնը կը տեւէ երկար. ի վերջոյ փոխադարձ զիջումներով հաշտութիւնը կը կնքուի 1278 թուին: Դաշինքը ամբողջութեամբ փորագրուած է Թէբէի երկու տաճարներու պատերուն վրայ՝ Կարնակի Ամոնի տաճարի և Ռամսէս II-ի շիրիմի մաստուռի պատերուն վրայ: Դաշնագրի աղիւսատախտակ մըն ալ գտնուած է Հատուչաշի դիւանատանը. այդ ալ դաշինքի հաթական օրինակն է: Դաշնագիրը կը դրուի երկու երկիրներու բոլոր աստուածներու հովանիին աակ և դաշինքն ալ կը կնքուի անոնց անունով: Դաշինք կայող երկու թագաւորներն ալ իրաւունքով, աղղեցու-

Թեամբ հաւասար կը համարուին: Եզրիպտական փարաւոնը կը բանակցի, դաշինք կը կնքէ հաթական մեծ պետութեան թագաւորի հետ՝ որպէս հաւասարը հաւասարի հետ: Երկուքն ալ ճմեժ թագաւորներ» են, երկուքն ալ «եղբայրներ» են: Ճեւ անոնք այժմ աւելի եղբայրներ են քան անցեալի մէջ»: Երկու գահակալները կը խոստանան յաւիտենական բարեկամ ըլլալ և խաղաղութիւնը պահել: Անոնք կը խօսին նաև իրենց որդիներու անունէն: Կը խոստանան փոխադարձ յարձակում չգործել իրարու սահմաններու վրայ. սահմանները կը մնան նոյնը ինչ որ կողմերէն առաջ էր. Պաղեստինը, Փիլիսիկեան քաղաքները կը դառնան եզրիպտական. Հիւսիսային Սիւրիան կը մնայ հաթերուն: Դաշնակցող կողմերը կը խոստանան փոխադարձ օգնութիւն, եթէ երրորդ ուժ մը յարձակի անոնցմէ մէկն ու մէկու վրայ: Յօդուած մըն ալ նուիրուած է երկու թագաւորներու դէմ ըլլալիք ներքին՝ ապստամբական շարժումներուն. այդ պարագային դաշնակցող կողմերը պիտի զինական օգնութիւն մատուցանեն ապստամբութիւնը ճշջելու համար: Անոնք կը խոստանան քաղաքական փախստականներուն տեղ չտալ: Այս դաշինքը աւելի ամուր հաստատուն դարձնելու համար կողմերը կը կապուին խնամիրական կապերով: Ռամսես II կ'ամուսնանայ Հուսուեթիի աղջկան հետ և այդ ատիժով հաթական թագաւորը կ'այցելէ Եզրիպտոս: Հաթական իշխանուհին կը դառնայ եզրիպտական թագուհի. ինչպէս ժամանակին Միտանի իշխանուհիները Եզրիպտոսի մէջ թագուհի կ'ըլլային: Ան կ'ընդունի նոր եզրիպտական անուն՝ Մարքիթու-Ֆա, որ կը նշանակէ «ան ով կը տեսնէ աստուածային գեղեցկութիւնը»:

Այս համաձայնութեամբ արեւելքի մէջ ստեղծուեց ուժերու հաւասարակշռութիւն: Բայց ասոր դէմ էին երկու ուժեր՝ Արեւելքի մէջ Ասորեստանը և Արեւմուտքի մէջ՝ հնդեւրոպական նոր ցեղեր՝ «ծովերու ժողովուրդները», որոնք երեւացին դարու վերջին և հիմնովին յեղաշրջեցին եղած, ստեղծուած հաւասարակշռութիւնը:

Ե. ԳԼՈՒԽ

«ՇՈՎԵՐՈՒ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՒ» ԱՐՇԱՒԱՆՔԸ

ՀԱԹԵՐՈՒ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Այն պահուն, երբ Հաթերը երկարատեւ պատերազմներէն ետքը՝ պիտի նուիրուէին իրենց երկրի վերաշինուած թեան, ենթարկուեցան «Մովերու ժողովուրդներու» արշաւանքին: Այդ բանը հնդեւրոպական ցեղերու մեծազանգուած թափանցումն էր Մերձաւոր Արեւելք: Եկուորները կուգային տաք երկիրներ, արդաւանդ հողեր դտնելու, նոր հայրենիք որոնելու: Կուգային շարժական իրենց ունեցուածքով, ընտանիքով: Անոնց բազմաթիւ ցեղերը տեւական յարձակումներով խախտեցին 1278 թուականին ստեղծուած հաւասարակշռութիւնը: Տեսանք այդ ցեղերէն հատուածներ Ռամսէս II-ի և Հատուշիլ III-ի բանակներու մէջ: Անոնք հնդեւրոպական լեզուախմբին պատկանելով տարբեր անունաներ կը կրէին: Անոնց հայրենիքը Տանուպի ափերն էր, Թրակիան և Մակեդոնեան: Հետեւակ և հեծեալ՝ անոնք մտան Յունաստան, Կրէտէ, Կիպրոս, Ասիոյ արեւմտեան շրջանները: Կղզիներէն անոնք անցան Լիպիա, Նեղոսի գետաբերանը: Կղզիներու վրայ հաստատուողները կ'ըզբաղուէին ծովահէնութեամբ: Կը յարձակէին Կրէտէի ծաղկած քաղաքներու վրայ, կը կործանէին Կնոսի պալատը, կը կոտորէին բնակիչները և կը բռնէին անոնց տեղը: Այս արշաւողները դանդաղորէն իւրացուցին Եգէեան մշակոյթը:

Տեղացիներու և եկուոր ցեղերու, հին բարձր մշակոյթի և նոր պարզունակ կեանքի միաւորումէն կ'ըստեղծուի նոր բան մը, որ աստիճանաբար կատարելագործուելով ծնունդ կուտար յունական քաղաքակրթութեան: XII—XI-րդ դարերու աւերակներու, անկայուն կեանքի և քաոսի մէջէն

Եղէեան կողմնակիցը և Փոքր Ասիոյ ծովամերձ շրջաններու մէջ, Յունաստանի եզրային գաւառներու վրայ հասակ կը նկատուի յոյն ժողովուրդը և կը կերտէ Եւրոպայի պատմութեան ատաղջին գլուխը: Ատաղջին արշաւողներուն կը յաջորդեն նրկորդ, երրորդ հոսանքները և իրենց հարուածներու տակ կ'առնեն Փոքր Ասիան ամբողջութեամբ և Եգիպտական կայսրութիւնը: Հիւսիսէն եկողներու զանգուած մը յարձակեցաւ Տրոյա քաղաքի վրայ և կործանեց: Տրոյաի շուրջը կատարուած դէպքերու և պատահած արկածախնդրութեանց մասին կը պատմէ Հոմերոսը «Իլիական»ի մէջ: Փոքր Ասիական ժողովուրդները կը տեսնէին մարդկային նոր արիւթ՝ բարձրահասակ, ճերմակամորթ, շիկահեր, կապուտաչեայ, նոր դէնքերով զինուած, ձեռքերն ու ոտքերը զրահով ծածկուած. երկաթէ լայն և երկբերան կացինով սաղաւարտը գլխին՝ այս բոլորը զարմանք և ահաբեկում կը պատճառէին տեղացիներուն:

ՄՈՒՇԿԻՆԵՐԸ.— Ծովային այս ժողովուրդներէն ամենէն ուժեղը և թիւով շատը և լաւ կազմակերպուածը ՄԱԼԵԿԻՆԵՐԸ էին. ասոնք մասն էին Փոփոքացիներու, անոնց յառաջապահը. ասոնք զատուելով իրնց ցեղակիցներէն մըտան Փոքր Ասիոյ խորքերը: Այստեղ իրենց միացնելով ուրիշ ժողովուրդներէն հատուածներ՝ թէ ներխուժողներէն, թէ տեղացիներէն, միասնական ուժերով յարձակեցան Հաթերու վրայ: 1200 թուին Հատուշա մայրաքաղաքը կ'իյնայ Մուշիկներու ձեռքը. արքայական զիւանասունը այդ թուականէն ետքը այլեւս գրութիւններ չի պարունակիր: Հաթական մեծ պետութիւնը կը կործանուի և հաթական ժողովուրդն ալ կը պառակտուի բազմաթիւ հատուածներու, որոնցմէ սկիզբ պիտի առնեն նոր ժողովուրդներ և պետութիւններ: Մուշիկներու դէմ կոուելու համար Հաթ թագաւորները Սիւրիայէն ետ կը կանչեն իրենց բանակները, բայց աս ալ չի օգնիր: Պետութիւնը կը կործանուի և հաթական ազնուականութիւնը, բանակը կը նահանջէ դէպի հարաւ՝ Միջին Եփրատի ափերը և կը կեդրոնանայ Կարեկմիօի

չուրջը: Հոս հիմք կը դրուի հաթական երկրորդ պետութեան, որ քանի մը դար կ'ապրի և կը դառնայ հաթական քաղաքակրթութեան օրրանը:

Փոփոխութիւն. — Եկուորները Փոքր-Ասիայէն կը ցրուին գանազան ուղղութեամբ: Փոխդիւցիները կը տեղաւորուին հաթական պետութեան արեւմտեան շրջանները, որ կը դառնայ ապագայ Փոխզիւն. հոսկէ Փոխզագիք նոր հատուածներով տարածուեցան գանազան ուղղութեամբ: Մուշկիները կործանելով հաթական պետութիւնը անցան արեւելք և երեւացին Ասորեստանի սահմաններուն վրայ: Ակաւ երկարատեւ կռիւ մը Փոխզ—Մուշկիներու և Ասուրներու մէջ: Այս արշաւանքներն ու թափանցումները շարժման մէջ դրին նաեւ հաթական ցեղերը: Ասոնք ընկրկեցին Փոխզացիներու, Մուշկիներու առջեւ, թողուցին իրենց իշխանութիւնները, հարստութիւնները և դիմեցին հաթական պետութեան հարաւային և արեւելեան նահանգները: Անոնց մէկ մասը կեդրոնացաւ, ինչպէս ըսինք, կարկէմիշ, իսկ աւելի մեծ գանգուածը կարեց Եփրատը և մտաւ Հայկական բարձրաւանդակը: Այս անձանթ երկիր չէր Հաթերու համար: Շուքիլուումայէն սկսած Փոքր Հայքը, Բարձր Հայքը, Եփրատի արեւելեան ափերը՝ Մոփքը՝ մաս կը կազմէին հաթական պետութեան: Այս վայրերու մէջ, վաղուց անտի, կ'ապրէին անոնց ցեղակից և լեզուակից ժողովուրդներ. Հաթերու գաղթը եկաւ աւելի ստուարացնելու Հայաստանի ընտելութիւնը որպէս թիւ և հաթական բնոյթ տալու անոր որպէս որակ: Կարելի է ըսել հնդեւրոպական «ծովային ժողովուրդներու» արշաւանքը Հայաստանի համար միանգամայն տարբեր հետեւանքներ ունեցաւ. ան ոչ թէ հնդեւրոպականացաւ, այլ հաթացաւ, հաթական տարրը գերակշռեց: Թէպէտ այդ ժամանակներէն իսկ հնդեւրոպական հատուած մը Փոխզացիներու գործակից, թափանցեց Հայասա, յետագայի Փոքր Հայքը. հոս տեղի ունեցաւ առաջին հանդիպումը և խաչաւորումը ազիանիկ Հայասաներու և հնդեւրոպական եկուորներու: Հայոց պատմութեան վճռական շրջաններէն մէկն է աս:

«ԾՈՎԵՐՈՒ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ» ԵՒ ԵԿԻՊՏՈՍ.— Եգիպտոս պակաս շտուժեց հիւսիսական ժողովուրդներու արշաւանքէն քան Հաթերը: XIII-րդ դարու վերջին եգիպտական արձանագրութիւնները կը պատմեն անոնց արշաւանքներու մասին: Լիպիտցիները կը յարձակին Եգիպտոսի վրայ, անոնք մինակ չէին, անոնց հետ են հիւսիսէն եկող Լիպիտցիք, Սարգանաները, Սագալասները, Տիրչէնները, Ախէացիները. ասոնք աւելի մեծ ցեղախումբերու մասերն են, հատուած՝ բաժանուած իրենց մայր գանգուածներէն, որոնք կը բռնեն ծովերու ուղիները և արկածախնդրութեամբ կը հասնին մինչեւ Ափրիկէի ափերը. ոմանք, ինչպէս Փղշտացիք՝ Կրէտէէն դուրս գալով՝ կ'ասպատակեն Քանանի երկիրը, Փիւնիկէի եզերքները: Ափրիկէ արշաւող ցեղերը դուրս կու գան Եգէեան կղզիներէն, Փոքր Ասիոյ ափերէն: Անոնք կը գրաւեն Կիպրոսը, և դարձնելով այդ կղզին ծովային խարխիս, կը շարժուին հարաւ:

Այդ արշաւանքներու պահուն մեռաւ Ռամսէս II-ի որդին Մեհեպսան փարաւոնը, երկիրը մատնուեցաւ անիշխանութեան: Այդ բանը ծանր հետեւանք ունեցաւ Պաղեստինի, Սիւրիոյ, Փիւնիկէի համար: Մենեպտահ փարաւոնի օրով առաջին անգամ պատմութեան մէջ կը յիշուի «Իսրայէլի» անունը: Անոնք անապատներէն կը թափանցեն Քանան և Երուսաղէմէն հարաւ ու հիւսիս: Արամէական ցեղերը որոնք կը մտնեն Եփրատի ափերով, կը հաստատուին Սիւրիոյ օգիաներուն, գետերու հովիտներուն մէջ, կը հիմնեն շարք մը ծաղկած քաղաքներ՝ Սամալ, Համա. Դամասկոս: Ասոնք կը դառնան առեւտրական-կարուանային քաղաքներ: Արամէացիք շուտով իրենց ձեռքը կը ձգեն Արգասարբ Կիսալուանի երկու թեւերու առեւտուրը:

Այս պայմաններու մէջ՝ Եգիպտոսի գահը կը բարձրանայ 1200 թուականին գիւնուոր մը, որ կ'առնէ Ռամսէս III անունը և հիմնադիրը կ'ըլլայ XX-րդ հարստութեան: Ան կը բարձրացնէ Եգիպտոսի հեղինակութիւնն ու դիրքը Մերձուոր Արեւելքի մէջ: 1195 թուականին Ռամսէս III դուրս

կ'ընէ Լիպիացիները և իրենց դաշնակիցները Եգիպտոսէն: Ան կը ջարդէ Փղշտացիները բայց կը հարկադրուի անոնց տեղ տալ Վանանի մէջ: Փղշտացիները կը բռնեն ծովամերձ շրջանները: Իսկ Իսրայէլի ցեղերը, որոնց անունները կը յիշուի ապստամբներու շարքին, կը հաստատուին անոնց թիկունքը:

Ռամսէս III-րդ կրցաւ փրկել Եգիպտոսը ծովային ժողովուրդներու արշաւանքէն, բայց հարկադրուեցաւ զիջելու նոր ցեղերուն Սիւրիան, Վանանի երկիրը, ամբողջ ծովափնեայ շրջանները: Եգիպտոսը ինքը սպառնալիքի տակ էր, կարելի էր սպասել, որ ան արժանանայ հաթա կան մեծ պետութեան բախտին, բայց ազատուեցաւ, միայն կորսնցնելով՝ տախկան իր գաղութները: Այդ արշաւանքներէն ան դուրս եկաւ թուլցած: XII-րդ դարու վերջերուն և XI-րդ դարու սկիզբները փակուեցաւ արեւելի պատմութեան մեծ կայսրութեանց օրջանը: Անոնց կը փոխարինեն նոր ուժեր, որոնք կազմակերպման մէջ էին: Սակայն անխիտանութեան մեծ վերիվայրումներու այս շրջանը առանց նոր բան ստեղծելու չէր փակուելու: Երիտասարդ՝ արիական և սեմական ժողովուրդներ՝ եկան գրաւելու հիներու տեղը, տէր դառնալու անոնց ժառանգութեան: Առաջ եկան նոր հասարակութիւններ, հանդէս եկան նոր ազգեր, և սկսան մշակուել նոր քաղաքակրթութիւններ:



Զ. ԳԼՈՒԽ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄՇԱԿՈՅԹԸ ԹԷԲԷՆԱՆ ԿԱՅՄՐՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ

XVIII-րդ հարստութեան փարաւոնները Եգիպտոսը հասցուցին իր հզօրութեան բարձր աստիճանին: Հիւժսոսներուն դաւրս ընկէն ետքը անոնք վերակառուցին երկիրն ու պետութիւնը: Վերաշինեցին և ընդարձակեցին Թէբէն: Ահմես I (1580—1554) և Ամեհոֆիս I (1554—1540) վերաշինեցին Միջին և Ստորին Եգիպտոսի տաճարները: Առաջինը վերանորոգեց Ամոն աստու տաճարը Թէբէի, Պտահի տաճարը Մեմֆիսի մէջ: Ազատագրուած ժողովուրդը բնական է, որ պիտի կառչէր աստուածներուն և անոնց երախտապարտ ըլլար իրենց ազատագրութեան համար: Եգիպտոսի ազատագրական կռիւը կը մղուէր աստուածներու անունով և անոնց դրօշի տակ: Թէբէն նորէն մայրաքաղաք դարձաւ և Ամոն-Ռայի համար նոր տաճարներ կառուցուեցան:

ՔՐՄԱԿԱՆ ԴԱՍԸ.— Հիւժսոսներու օրով քրմական դասը շատ էր հալածուեր, ան կորսնցուցեր էր իր կալուածները. հիմա ան կը կազմակերպուէի և կը գրաւէ նախկին դիրքը: Ամեհոֆիս I մեծ կալուածներ կը նուիրէ քուրմերուն և տաճարներուն: Ազատագրական պայքարի ժամանակ քրմական դասը միացաւ ազգային գործին և ազատագրումէն ետքն ալ արքայական պալատի մէջ մեծ ազդեցութիւն ձեռք բերաւ: Ան իր բարոյական ուժը ի սպաս դրաւ վերանորոգուող պետութեան, փարաւոններն ալ՝ փոխարէն վարձատրեցին քուրմերը կալուածներով, ստրուկներով,

անասուններով: Ամենէն հարուստը Ամոն աստուծոյ աս-
ճարն էր, ան ունէր 30.000 ստրուկներ, որոնք կ'աշխատէին
անոր հողերու, այգիներու, շտեմարաններու մէջ: Մեմֆի-
սի Պտանն ունէր 3.000 ստրուկ: Ըստ յունական աղբիւրնե-
րու, եգիպտական հողերու մէկ հինգերորդը քրմական դա-
սին և աստուածներուն կը պատկանէր: Նիւթական այս
հարստութեան վրայ կը յենուէր քրմական աղքեցութիւնը
և հեղինակութիւնը:

ԱՍՏՈՒԷԱՄՆԵՐԸ. — Ժողովուրդի խոնարհ խաւերը կը շա-
րունակէին պաշտել իրենց հին աստուածները, կենդանակերպ
ափսեաները, զանազան առարկաներու մէջ մարմնացած գերբնա-
կան ուժերը: Անոնց կրօնական հաւատալիքներու մէջ կա-
խարդութիւններ, գուշակութիւններ, սնտոխպաշտութիւն-
ներ շատ կային: Հասարակ դասի կրօնական գաղափարները
ոչ մէկ զարգացում չէր կրած: Բայց բարձր խաւը՝ քուրմե-
րու առաջնորդութեամբ մշակեր էր աւելի կատարեալ ու
բարձր կրօնական գաղափարներ: Ստեղծուեր էր աստուած-
ներու համակարգութիւն. անոնց գլուխը կը կանգնէր մէկը,
որ աստուածներու պետն էր: Թէրէյեան շրջանին ան մայ-
րաքաղաքի Ամոն աստուածն էր: Անոր շուրջը հաւաքուեր
էին Մեմֆիսի Պտանն, Հելիոպոլիսի Ռա աստուածը: Այս եր-
րորդութիւնը գերագոյն ուժն էր, որ կը կառավարէր տիե-
զերքը: Անոնց հետ կը կապակցուէր արդարութեան և օ-
րէնքի գաղափարները: Անոնք կը հսկէին, որ կեանքի մէջ
արդարութիւնն իրականանայ: Փարաւոնէն անոնք կը պա-
հանջեն հսկել, որ արդարութիւնն ու ճշմարտութիւնը թա-
գաւորեն աշխարհի մէջ: Կը ներշնչեն փարաւոնին «արդար
օրէնքներու» գաղափարը: Աստուած հաճելի են բարի գործե-
րը, աշխատանքը, ողորմածութիւնը: Ժողովրդական պատ-
մուածք մը այսպիսի թելադրութիւններ կ'ընէ փարաւո-
նին. «Արդարութիւն սերմանէ, ինչպէս ասուած, արդարու-
թեան սերք.. որովհետեւ արդարութիւնը յաւիտեանական է. ան
միւս աշխարհն ալ կը մտնէ ընդդիմէ: Պատժե աւագակու-
թիւնը, հովանաւորէ աղբացները»:

ՓԱՐԱԽՈՒՆԸ.— Երբեմն փարաւոնները աստուածներու հետ հաւասարազօր ուժեր էին. փարաւոնը նոյն աստուածն էր, միայն այս աշխարհի մէջ ապրող. որ մահէն ետքը պիտի միանար աստուածներու ընտանիքին: Ան մարմնացած աստուածութիւնն էր: XII րդ հարստութենէն սկսած փարաւոնը աւելի մարդացած է և մարդկայնացած: Անկէ կը պահանջուի օժտուած ըլլալ բարձր առաքինութիւններով: Փարաւոնի այս նոր ըմբռնումը մշակուեցաւ Եգիպտոսի պետական և ազգային փլուզումի շրջանին: Ան աստուածներու հանդէպ պարտաւորութիւն ունի՝ տաճարներ կառուցելու, ազօթքներ ընելու, հարստացնելու աստուածներու տաճարները: Պարտաւորութիւն ունի նաև մարդոց հանդէպ, հսկելու, որ արգարութիւնը մարդոց յարաբերութեանց մէջ գործադրուի: Փարաւոնը աստուծոյ որդի է. ծանր պարագաներուն մէջ կը ոգեկոչէ իր «հայրը», «Ամոն աստուածը»: Ամոնը կը ղեկավարէ պատերազմը, ամեն դաշինք անոր հովանիին տակ կը գտնուի:

ՆՈՐ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՍՏԵՂԾՈՒԻԼԸ.— Շուրջ երկու դարի պատերազմները ծանրօրէն հարուածեցին եգիպտական բարձր դասը, ուրկէ դուրս կուգային քրմական պաշտօնեաներ, վարչական բարձր ղեկավարութիւն, բանակի հրամանատարութիւն: Ասոնք չընդհատուող պատերազմներու մէջ քայքայուեցան. երբեմն ալ ներքին խռովութիւններու զոհ կ'երթային: Ասոնց փոխարինելու համար պատերազմներու ընթացքին առաջացաւ նոր ղեկավարութիւն՝ զօրավարներ. ասոնց մէկ մասն անցաւ վարչական ծառայութեան: Ասոնք անտոհմիկ էին, անցեալ չունէին, այլ բարձրացիր էին պատերազմներու, կռիւներու մէջէն և բռնորդին տոհմիկ ընտանիքներու տեղը: Պատերազմը ստեղծեց նոր հարստացածներու դաս մը: Ասոնք ալ հասարակութեան մէջ տեղ գրաւեցին: Նոյն պատերազմը կը հարստացնէր զօրքն ու զօրավարը. անոնց կը թոյլատրուէր աւարել, թալանել: Աւարէն բաժին կ'ըստանային նաև տաճարները: Գրաւած երկիրներու մէջ որոշ հողեր կը յայտարարուէին

պետական սեփականութիւն, որոնց հասոյթը կը հաւաքօ-
ուէր արքայական շտեմարաններու մէջ: Պատերազմը կը
յեղաշրջէր եգիպտական հասարակութիւնը: Հին կայուածա-
տէր հարուստներու քովը առաջ եկաւ նոր հարուստներու
դաս մը, որ հողի հետ միասին ձեռք ձգեց մեծաքանակ
ստրուկներ, բարիքներ, մետաղներ, զարգարանքներ: Աստիճ
է, որ կը շրջապատէին փարաւոնը, անոր խորհրդատու-
ներն էին ու գործակիցները:

ԵԳԻՊՏՈՒԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆ.— Եգիպտոսն այլեւ նե-
ղոսի շուրջն ստեղծուած թագաւորութիւն մը չէ. ան դուրս
է եկած իր ազգային և բնական սահմաններէն և կազմած
ընդարձակ կայսրութիւն մը, նուբիայէն մինչև Եփրատ
գետը: Լիպիայէն մինչև Միտիոյ անապատը, Պետական
վարչութիւնը աւելի մեծցած է, բարդացած: Մեծ վէ-
ղիբի գործունէութիւնը բնդարձակուած է. ան կը դե-
կավարէր երկրագործութիւնը, արգարադատութիւնը. անոր
հսկողութեան տակ են պետական պահեստները, գան-
ձարանը. ան ունի քանի մը օգնականներ: Ամեն նոմի
դրուխը կանդնած է կառավարիչ մը՝ փարաւոնի ազգական-
ներէն կամ վստահելի մարդոցմէ: Անոնց մօտ ստեղծուեր
է խորհուրդ մը նոմի երեսելիներէն կազմուած: Առաջու աջ
նման դպիրները կը վարեն գրասենեակները, գրի կ'անցնեն
ամեն ինչ: Հիմա անոնց թիւը աւելի շատ է. անոնք կը
դրեն նաև ասիական լեզուներով, մանաւանդ բաբելական
լեզուով, որ միջազգային լեզու էր դարձած: Փարաւոնները
ասիական իրենց հպատակ իշխաններուն, Միտանի և Հաթ
թագաւորներու հետ կը թղթակցին բաբելական լեզուով:
Երբեմն մեծ վէղիբի պաշտօնը կը յանձնուի Ամոն աստու-
ծոյ քուրմերուն, որով քրմական գասը իր հսկողութեան
տակ կ'առնէ աշխարհիկ իշխանութիւնը և վարչութիւնը:

ԲԱՆԱԿԻ.— Ընդարձակ կայսրութեան պաշտպանութեան
համար պէտք էր մեծ բանակ: Բանակի միջուկը Եգիպտա-
ցին էր, նոմերէն հաւաքուած զօրքը: Սկիզբը անոնք կը
հաւաքուէին մէկ արշաւանքի համար. խաղաղութեան պա-
հուն զօրք չէր պահուեր, բացի քանի մը սահմանապահ

գունդերէ և փարաւոնի թիկնապահ գունդէն: Բայց XVIII-րդ հարստութենէն սկսած պատերազմները դարձան տեւական և մնայուն երեւոյթ. սկսաւ նուաճումներու շարժանը. զօրքի թիւն ալ աւելցաւ: Եզրպատացին այդքան մեծ բանակ տալ չէր կրնար. անոնց վրայ աւելցան վարձկան բանակները՝ Նուբիացիները, որոնք կը զրկուէին ասիական սահմանը. ասիացիները, որոնք կը զրկուէին Հարաւային Եգիպտոս, Լիպիացիները, որ Սինայի անապատը կը պահէին: Մնայուն զօրքեր կը պահուէին Եփրատի ափերուն կառուցուած ամրութիւններու մէջ: Վարձկաններէն էր կազմուած փարաւոնի թիկնապահ գունդը: Այսքան մեծ բանակին անհրաժեշտ էր ղէնք, մթերք, հագուստ, պարէն: Պետութիւնը երկրի բոլոր կողմերն ունէր պահեստներ, մթերանոցներ, բանակի կարիքները բաւարարելու համար: Զինուորն ու զօրավարը կը վարձարուէին հողերով, որ ժառանգաբար կ'անցնէր իրենց զաւակներուն, որքան զինուորն ու իր ժառանգները շարունակէին զինուորական ծառայութիւնը: Անոնք կ'ունենային աստիճանի բարձրացում, պատուանշաններ կ'ըստանային, Զօրքն ու զինուորութիւնը յարգի էին և բանակը կը համարուէր հարստանալու ու առաջանալու առպարէզ:

ՏԱՃԱՐԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԸ.— XVIII-րդ հարստութեան փարաւոնները մեծ շինարարներ էին. տաճարական շինարարութիւնը առաջին կարգին կուգար. կը կառուցէին զամբարաններ իրենց յաւիտենական կեանքին համար: Տաճարները իրենց հիմքով, պատերով, սիւներով մնացած են ու հասած են մեզի, որով ճիշտ գաղափար կուտան եգիպտական ճարտարապետութեան մասին: Լաւագոյն և հարուստ տաճարները Թէբէի մէջ են և անոր շրջակայքը: Տաճարը երեք անհրաժեշտ բաժիններ ունէր, խորանք, ուր կը զրուէր Աստուծոյ արձանը: Ան իսկական սրբավայրն էր. հոն մտնել կրնային միայն փարաւոնները և քրմապետը: Ան մութ, խոնաւ և խորհրդաւոր վայր մըն էր. ոչ մէկ բացուածք ունէր, ոչ մէկ պատուհան, բացի դուռէն: Հոն

ամեն ինչ գաղտնիք էր, ամեն ինչ խորհրդաւորութիւն: Հոն կուգար փարաւոնը աղօթելու համար, կը խնդրէր աստուծոյ օգնութիւնը: Հոն, խորանի մէջ կ'առանձնանար փարաւոնը իր ճօրճ հետ իր և պետութեան ծանր ճգնաժամային օրերուն: Տաճարի երկրորդ մասը դահլիճն էր. հոս բաղմամբիւ սիւներու շարքը կը բարձրանային դէպի վեր. անոնք կ'առուցուած էին լայն և հաստատ պատուանդաններու վրայ, անոնց վրայ կ'իյնար տանիքի ծանրութիւնը: Սիւները կը վերջանան Պապիրուսի և Լոտոսի ձև ունեցող սնազուխ-խոյակներով: Դահլիճը աստուածներու ընդունելութեան և խրախճանքի, տօնակատարութեան վայրն է. հոն մտնել թոյլատրուած էր քուրմերուն, արքայական տան անդամներուն և արտօնեալներուն: Տաճարի անբաժանելի մասն էր գաւիթը, որ շրջապատուած էր բարձր պարիսպներով, որ կը բաժնէր աստուծոյ տունը արտաքին աշխարհէն: Հոն տօներուն կը հաւաքուէր ժողովուրդը. հոն կը կատարուէր տօնական արարողութիւնները, որ տեղի կ'ունենային ամբողջ ժողովրդի ներկայութեան: Հաւատացեալները հոս կը բերէին իրենց նուէրները, զոհերը: Տաճարը կը կառուցուէր քարի մեծ վանդուածներէ. իսկ խորանը, Ռա աստօնն նուիրուած ճառագայթ-սիւները՝ օրէլիսկները, վարդագոյն քարով կը շինուէին: Գաւիթին մէջ կը բարձրանար օրէլիսկը, խորհրդանիշը արևի կենսատու ճառագայթներուն: Դէպի տաճար կ'առաջնորդէր յատուկ պողոտայ մը, որուն երկու կողմերը իրարմէ հաւասար, համաչափ հեռաւորութեան վրայ կը հսկէին ըսֆինքսները: Ասոնք Ամոնի տաճարի պողոտայի վրայ խոյի գլուխ ունէին:

Թէրէի Ամոն աստուծոյ նուիրուած տաճարը բաղմամբիւ փարաւոններու գործն է և Եգիպտոսի կրօնական ճարտարապետութեան գլուխ-գործոցը: Հոս ճարտարապետի հանճարը սերտօրէն միացած է արձանագործի-քանդակագործի և փորագրողի աշխատանքի հետ: Տաճարի պատերը և սիւները ունին արձանագրութիւններ, որ կազ-

մեր են դպիրները: Անոնք կը պատմեն փարաւոններու ռազմական և քաղաքական գործերը: Հոն գրուած են նաև շարականներ՝ փառաբանութիւններ, գովեստներ հիւսուած Ամոնի անուան:

ԺԱՅՌԱՇԻՆՈՒԹԻԻՒՆ.— Հարաւային եգիպտոսը լեռներով հարուստ է. տեսանք, որ անոնք կը շրջապատեն, կը սեղմեն իրենց մէջ Նեղոսը: Այդ ժայռերը նիւթ կը մատակարարեն շինարարութեան: Եգիպտոսի ճարարապետութեան կառուցումներու կատարելութիւնը մասամբ քարի գոյութեան ենք պարտական: Ժայռաշինութիւնն ալ՝ իրբև ուրոյն ճարտարապետական ճիւղ՝ մեծապէս զարգացաւ եգիպտոսի մէջ: Նախ կը հարթէին ժայռի երեսը շատ ընդարձակ տարածութեամբ: Անոր արտաքին կողմէն կուտային շէնքի կերպարանք: Յետոյ կը փորէին, այս աշխատանքը կը տնէր տարիներ. կը փորէին շատ խոր. ժայռի մէջ կը կերտէին տաճար, շիրիմի մատուռ. այսինքն տաճարի բոլոր մասերը, սիւնազարդ սրահ և դահլիճ: Երբեմն այդ փորուած տաճարները կ'ըլլային քանի մը յարկանի՝ մէկը միւսին վրայ բարձրացած: Հոն կը տեղաւորէին աստուածներու և փարաւոններու արձանները: Ժայռի պատերը կը զարդարէին պատկերաքանդակներով, կը գրէին աղօթքներ՝ Ռամսէս II-ի ժայռաշէն մատուռը յիսուն և հինգ մետր խորութիւն ունի և բազմաթիւ բաժանումներ: Մուտքին առջև կը բարձրանայ փարաւոնի քսան մետր բարձրութիւն ունեցող արձանը: Ժայռաշէն տաճարներու, մատուռներու, նկարներու, քանդակներու, արձանագրութեանց նիւթը նոյնն է ինչ որ նախորդ շրջաններունը — թագաւորներու, իշխաններու ամենօրեայ կեանքը, ժամանցը, աշխատանքը, աստուածներու արկածները, Ռայի տիեզերական ճամբորդութիւնը, տաճարական մեծ տօնակատարութիւններու արարողութիւնները, փարաւոններու կոթիւնները:

ԳՐԱԿԱՆՈՒԹԻԻՒՆԸ.— Թէքէեան միապետութեան ժամանակը Եգիպտական գրականութեան ծաղկման շրջանն է:

Ան սկսաւ Մեմֆիսեան դարէն, սակայն զարդացաւ և խորացաւ միայն Թէրէեան շրջանին: Ինչպէս առաջ, հիմա ալ գրականութիւնը կապուած է կրօնի հետ. իր ներշնչումները կ'ըստանայ անկէ: Մեզ հասեր են բազմաթիւ սրբազան երգեր, օրհներգութիւններ աստուածներուն նուիրուած: Գոյութիւն է ունեցեր աշխարհիկ գրականութիւն, որուն մէջ պատմուէր է հասարակ ժողովրդի առօրեայ կեանքը և հոգերը: Կան խորհրդածութիւններ կեանքի և մահուան մասին:

Թէրէեան շրջանի բանաստեղծներէն մէկը կը գրէ մարդկային գործերու և այս աշխարհի ունայնութեան մասին: «Ամեն ինչ իզուր է այս անցողիկ կեանքի մէջ, ո՛ւր են երբևէ ասուածները, ո՛ւր են մեծ մարդիկ, որոնց մասին երբեմն շատ կը խօսէին. ոչ ոք չէ վերագործեր հանդերձալ կեանքէն, անդրեիբմեան աշխարհէն, որ մեզ պատմե անոր գոյութեան եւ մեռելներու բաժին ինկած բախտի մասին: Ո՛ւր են անցեալ թառուայ ձիւները: Չկայ ոչինչ մրմայուն, յաւիտեական»: Բանաստեղծը կոչ կ'ընէ բաւարարուել ներկայով. օգտուել կեանքի հաճոյքներէն:

Եգիպտոսի մէջ զարգացաւ նաև մարգարէական գրականութիւնը: Ան ժողովրդի սիրած գրականութեան ձեւն է և պահուած է անոր շրջանակին մէջ: Ան կ'արտայայտէ ընկերային տրամադրութիւնները, խոնարհ խաւերու տառապանքը: Ըստ այս գրականութեան, յաճախ մարգարէ մը ներշնչուած բարձր զաղափարներով և իմացականութեամբ կը կանգնի փարաւոնի առջև և կը խօսի երկրին սպառնացող չարիքներու մասին: Նոյն՝ մարգարէական գրականութեան կը պատկանին նաև այն պործերը, ուր կը մշակուի չարիքի վախճանը և համատարած երջանկութեան ուսմունքը: Այս բանը կը կապուի աբդաբ փառաւոնի հետ, որ պիտի գայ յետագային: XIII-րդ հարստութեան օրով յայտնի կ'ըլլան «Ապու-Ուրբի ազդարարութիւնները», երբ արեւելքէն կ'երեւան արչաւողները: Այս գործը կարելի է համեմատել Խորայէլի մարգարէական գրականութեան հետ:

«Յուսահասի մը գրոյցը հոգու հեռ» գրուածքի մէջ հոգին կը ջանայ ապացուցել, որ մահը ոչինչ ունի անոնցիւ։ Այս գործի մէջ կ'երեւայ, որ եգիպտացիի կրօնական գաղափարները հանդերձեալ կեանքի մասին, նիւթական ըմբռնումներէն շատ է վեր բարձրացած։ Անդրշիրիմեան կեանքի համար, կը յայտարարէ հոգին. «Աւելորդ եմ եւ իզուր հսկայ գերեզմանները. զոհաբերութիւնը, հարուստ մոմիացումը, ուսելիքը եւ նոյնիսկ կախարդութիւնները: Բաւական եմ միայն մահուր հոգից եւ մարդկային առաջնութիւնները»:

ՄԵՌԵԼՆԵՐՈՒ ՊԱՇՏՍԱՄՈՒՆԻՔԸ. — Թէքէեան շրջանին մեռելներու պաշտամունքը հասեր էր իր բարձր աստիճանին: Ասոր նպաստեց կրօնական յեղաշրջումը: Հիմա բուրն ալ կրնային անմահութեան հասնիլ՝ եթէ գործադրէին Օղլրիսեան ծէսերը: Այդ բանը աւելի լաւ կ'ըզգացուէր Թէքէի մէջ: Ան երկու քաղաքամաս ունէր՝ Նեղոսի երկու ասփերուն: Անոր ձախ ասփին, «արեւմուտքը» մեռելներու քաղաքն էր: Ամեն մեռել իր դամբարանն ունէր, մեծ թէ փոքր, աղքատ թէ ճոխ՝ այդ կախուած էր մեռածի ընկերային դիրքէն, նիւթական կարողութենէն: Մեռելներու քաղաքը ամայի չէր: Հին մեծ հասարակութիւն կ'ապրէր, քրմական դասէն սկսած մինչև յետին բեռնակիրը: Ասոնք բոլորը կ'ըսպասարկէին մեռելներուն — կը պահէին, կը հսկէին դամբարաններու վրայ. զոհեր կը մատուցանէին. մուսուլման գործողութիւնները կը կատարէին, կը գրէին, կը քանդակէին դամբարաններու վրայ. կրօնական բոլոր ծէսերն ու արարողութիւնները կ'ընէին: Ամեն օր հարիւրաւոր նաւակներ Նեղոսի մէկ ասփէն հասարակութիւնը կը փոխադրէին «Արեւմուտք» մեռելներուն այցելութեան: Մեռելներու քաղաքամասի մէջ կար բնակութեան շէնքեր, շտեմարաններ, տաճարներ: Այս թաղամասին մէջ «Արեւմուտքի» ժայռերու մէջ ամեն փարաւոն դեռ իր կենդանութեան ժամանակ կը կառուցէր իր ժայռափոր գերեզմանը: Հոն կը տեղաւորէին անոր մոմիան, արձանը, հարուստ ճոխ ուտելիքներ, խմիչքներ, սպասներ և կարա-

սիններ ու զարդեր: Բոլոր մեծ փարաւոններու մոմիաները գտնուած են գրեթէ անաղարտ դրութեան մէջ:

ԱՄԵՆՈՑԻՍ IV-րդի ԿՐՕՆԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈՒԹԻՒՆԸ. — Եգիպտական կայսրութեան ստեղծման հետեւանքներէն մէկն ալ Ամենոֆիս IV-րդի կրօնական բարենորոգութեան փորձն է: Կոյսրութիւնը իր մէջ կը պարփակէր բազմաթիւ ժողովուրդներ՝ տարբեր իրենց պատմական անցեալով, մշակոյթով, լեզուով, կրօնքով: Փարաւոնները որոշ կարգ, վարչութիւն մուծեցին լայնածաւալ պետութեան մէջ բայց այդ քիչ էր. պէտք էր անոր տալ հոգեւոր-կրօնական միութիւն: Այդ պէտք էր կայսրութեան տեւականացման համար: Տեղական ազգային կրօններէն բարձր պէտք էր ըստեղծել կրօնական ուսմունք մը, որ հասկնալի, մատչելի ըլլար բոլոր ժողովուրդներուն: Նոր աստուծոյ որոնումը և մէկ ուրիշ պատճառ ունէր: Ամօն-Ռայի պաշտամունքը սերտօրէն կապուած էր հզօրացած քրմական դասի հետ, որ շատ ազդեցիկ էր պալատի և հասարակութեան մէջ: Այդ դասը նաև նիւթական մեծ հարստութեան տէր էր: Այդ քրմական դասի ճնշումներէն էր, որ փարաւոնը կ'ուզէր ազատագրուիլ: Նաև պէտք էր ի նկատի ունենալ, որ թէ ան և թէ Ամենոֆիս III-րդ գտարիւն ելիպտացիներ չէին, անոնք Միտանի իշխանուհիներէն էին ծնուած և ամուսնացած էին Միտանուհիներու հետ: Ասիական արիւն կար անոնց երակներուն մէջ: Քրմական դասի ճնշումներէն անկարելի էր ազատուիլ առանց մերժելու Ամոն աստուծուն: Շարունակ շփուելով ասիացիներու հետ՝ փարաւոնները կը կորսնցնէին ազգային զգացումը, բարձր խաւերն ալ կը ծանօթանային ասիական աստուածներուն, որոնց շատերու մէջ կը տեսնէին տարբերակը իրենց աստուածներու: Ոմանք ալ կ'որոնէին ազգային ու տեղական աստուածներէն բարձր ուժեր, որոնք կառավարէին բովանդակ տիեզերքը: Մեծ արչաւանքները և կայսրութեան ստեղծումը շարժման մէջ էին դրիւր փարաւոնները, անոնց շրջապատին հետ համաձայնութեան բերելու ասիական և եգիպտական աստ-

ուածները, համադրելով աւելի բարձր և կատարեալ միութեան մը մէջ: Մտածողներու, հոգեկան որոնողներու այս շարքէն դուրս եկաւ Ամենօրհիւ IV-րդը (1381—1360): Ան արքայական գահի վրայնոր կրօնի հիմնադիրը եղաւ: Անոր կրօնական ուսմունքի մէջ գլխաւոր տեղը կը բռնէր արևը, որ ոչ կենդանակերպ է, ոչ մարդակերպ է. ան բարձրագոյն էակ մըն է, որ կտրեր է իր կապերը կենդանական և մարդկային աշխարհի հետ: Ան միայն Եգիպտոսի աստուած չէ, անոր բարիքները եգիպտական ժողովրդի համար չեն միայն: Ան բոլոր երկիրներու և բոլոր ժողովուրդներու աստուածն է, ան տիեզերական ուժ է: Նոր արև-աստուածը մէկ ճաճանչափայլ գունդ է, այնպէս ինչպէս տեսանելի է ամեն մարդու: Ան կը կոչուի Աթոն:

Հին մայրաքաղաքը՝ Թէբէն յարմար միջավայր չէր Աթոնի պաշտամունքի համար: Մայրաքաղաքի անցեալը, ազգային-կրօնական աւանդութիւնները սերտօրէն կապուած էին Ամոնի հետ: Ամոնն ու Թէբէն միասին ժեծ պատմական դեր էին կատարեր: Նոր աստուծոյ համար՝ նոր մայրաքաղաք էր պէտք: Թէբէն հիւսիս Ամենօրհիւ IV-րդ կը շինէ նոր կրօնական կեդրոն. ներկայիս ան կը կոչուի Թե-եյ Ամարնա. իսկ բարենորոգիչ փարաւոնի, օրով՝ Իխուքաթոն՝ այսինքն «Աթոնի Հորիզոն»: Թագաւորն անգամ իր անունը կը փոխէ՝ Ամոնօրհիւ, որ կը նշանակէր՝ «Ամոնի խաղաղութիւն» կը դառնայ Իխուցաթոն՝ այսինքն «ան, որուն կը սիրէ Աթոն աստուածը և իր քուրմերը կը հալածուին, անոնց հարստութիւնը կը գրաւեն»:

Նոր կրօնը մեկնաբանուած է «Արեւի հիմն» շարականի մէջ, որ հիւսեր էր ինքը փարաւոնը: Ան շատ բանաստեղծական, սրտաբուխ երգ մըն է՝ անմիջական ապրումով գրուած: Ըստ այս շարականի արևը տիեզերքի՝ բոլոր ապրող էակներու, բովանդակ կեանքի սկզբունքն է և աղբիւրը, ան արարիչ է և սնուցանող. առանց արևի կեանք չըկայ: Արև-աստուածը իր կենարար ուժը կ'ընծայէ բոլորին և Եգիպտացիին և Սիւրիացիին և Նուբիացիին և Լիպիա-

ցիին: Ան բոլոր մարդոց տէրն է: Հոն ազգայինը տեղի է տաւած համամարդկայինին: Եզիպացցիի կրօնական միջի բարձրագոյն աստիճանը կը ներկայացնեն Ամենօրիս IV-րդի կրօնական գաղափարները: Ան մէկ կողմէն Եզիպտոսի քաղաքական ընդարձակման, կայսրութիւն դառնալուն հետեւանք է: Միւս կողմէն Եզիպտոսի կրօնական դարգացման վերջին փուլն է: Ան հասեր էր միաստուածութեան գաղափարին. և այդ մէկ աստուածը սերտօրէն կը կապակցուի ոչ թէ բնապաշտութեան հետ, այլ բարոյական մեծ գաղափարներու հետ: Աթոնը Օզիրիսէն շատ բան է իւրացուցած, ան արդարութեան, ճշմարտութեան և համերաշխութեան աստուածն է:

ԵԳԻՊՏԱՅԻՆԵՐՈՒ ՎԵՐԱԲԵՐՈՒՄԸ ՆՈՐ ԿՐՕՆԻՆ.— Մենք չենք գիտեր թէ ինչպէս կը վերաբերէին օտարացեղ հպատակները փարաւոնի այս փորձին: Բայց գիտենք, որ Եզիպտոսի մէջ ան չը յաջողեցաւ, դարձաւ անարմատ, վաղանցիկ մէկ դիպուած: Ժողովուրդը հաւատարիմ մնաց ազգային և հին աստուածներուն: Ամենօրիսը Աթոնի ուսմունքով ոչ միայն կը մերժէր Ամոն աստուածը, այլ ընդհանրապէս ամեն բազմաստուածութիւն: Այդ ըմբռնումով ան իր դէմ հանեց բովանդակ Եզիպտոսի բնակչութիւնը՝ իր բոլոր խաւերով, դասերով: Աթոնի պաշտամունքը սահմանափակուեցաւ նեղ շրջանակի մէջ՝ փարաւոնի, իր ընտանիքի և անմիջական պալատական աւագանիի: Քրմական դասն ալ շատ ուժեղ էր: Հալածանքի տարիներուն ան հանդէս եկաւ որպէս ազգային և աւանդական կրօնի պաշտպան: Ան յենուած էր ժողովրդական դանգուածներովրայ: Պէտք էր արքայական հեղինակութիւնը թողնանար, կամ բարենորոգիչը մեռնէր որ թո՛ղնուած ուժերը երեւան գային: Միւս կողմէն Ամենօրիս IV-րդէն դժգոհ էր գիւնուորական հրամանատարութիւնը: Անոր օրով ռազմաճակատներուն շատ քիչ ուշադրութիւն կը դարձուէր: Իսկ Շուսիլուլուման յաղթականօրէն կը գործէր Սիւրիոյ և Պաղեստինի մէջ: Ամենօրիս IV-րդի յաջորդի Թուրանխամունի օ-

դով սկսաւ Ամոն աստուծոյ քուրմերու շարժումը: Անոնք վերահաստատեցին իրենց աստծու պաշտամունքը. պալատն ալ փոխադրուեցաւ Թէբէ. ան հաշտուեցաւ Ամոնի հետ: Հիմա Աթոն աստուածն է, որ հալածանքի կ'ենթարկուէր. անոր նուիրուած տաճարները կը քանդուին, անոր անունը կը ջնջուէր բոլոր տաճարներու ճակատներէն: Բարենորոգիչ փարաւոնի յիշատակը նզովքի կ'ենթարկուէր: Դասային և ազգայնական տրամադրութիւնները կը յաղթանակեն:

Այս ներքին պայքարի մէջ թուլացաւ նաև իշխանութիւնը և XVIII-րդ հարստութեան մեծ ռազմունակ և դիւանագէտ փարաւոններու գործը փլուզումի ենթարկուեցաւ:

Է. ԳԼՈՒԽ

ՄԻՏԱՆԻ ԵՒ ՀԱԹ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄՇԱԿՈՅԹԸ

1. Մ Ի Տ Ա Ն Ի

Միտանի ընկերային կառոյցի, պետութեան և կրօնական գաղափարներու մասին, մենք շատ քիչ բան գիտենք: մեզ հասած տեղեկութիւններն ալ կցկտուր են և պակասաւոր: Միտանի հասարակութիւնը ստեղծուեցաւ բնիկներու և հնդեւրոպացիներու հանդիպումով՝ միացումով: Թէ ինչ կազմ ունէր բնիկներու հասարակութիւնը նախքան հնդեւրոպական միտանիներու երեւալը, այդ մասին քիչ բան գիտենք: Բայց Միտանիներու երեւան գալով նախկին ընկերային կեանքը մեծ փոփոխութիւն կրեց: Նախ եկւորները կազմեցին հասարակութեան իշխող դասը: Ժամանակի ընթացքին բնիկներէն շերտ մը, նախկին ղեկավարները, բարձրացան և միացան, ձուլուեցան Միտանիներու հետ: Այդպիսով առաջացաւ խառն ծագումով բարձր՝ ազնուական դաս մը: Իհարկէ ասոնց մէջ Միտանիները թիւով շատ էին անոնք ալ առաջնութիւն ստացան: Բայց Միտանի այս ղեկավար դասը աւելի քիչ էր, համեմատած բնիկներու բազմութեան հետ: Այս բանը ունեցաւ նշանակալից հետեւանքներ: Այդ ղեկավար դասը նոր գրաւած երկիրներու՝ Հիւսիսային Միջագետքի և հարաւային Հայաստանի մէջ մնաց որպէս ռազմիկ դաս, միշտ զինուած, միշտ զէնքը ձեռին: Զինուած լաւագոյն զէնքերով, անոնք գերակշռութիւն ձեռք բերին բնիկներու հանդէպ: Անոնք ունէին ռազմակառքեր, հեծելազօրք, մետաղէ զէնքեր, մինչ տեղացիները այս զէնքերուն հետ նոր կը ծանօթանային: Հաստատուելով մետաղաշատ շրջաններու մէջ, անոնք օգտագործեցին պղինձը, անագտպղինձը, մասամբ երկաթը: Ասոր հետեւանքով Միտանիները կարճ

ժամանակի մէջ մեծ նուաճումներ ըրին և մրցակից խոշոր ուժ դարձան եգիպտական փարաւոններու զէմ :

«ՄԱՐԻԱՆԻՆՆԵՐ» . — Միտանի արչաւողները զինուած փոքրամասնութիւն մըն էին : Անոնք կը կոչուէին մարիանցիներ, այսինքն «երիտասարդ կուռղներ», «մարսիկներ» : Արքայական տունն ալ անոնցմէ էր առաջ եկեր : Ընկերային տեսակէտէն անոնք խոշոր հողատէրեր էին : Համաձայնութեամբ թէ բոնութեամբ անոնք տէր էին դարձեր բընիկներու հողերուն : Հողերու մեծագոյն մասը «մեծ արքայի» ձեռքն էր . հողային այդ հարստութենէն ան բաժին կը հանէր մարիանիներուն՝ իրենց ծառայութեանց համար : Պատերազմներու հետեւանքով Միտանի պետութիւնը ընդարձակուեցաւ, Մարիանիներն ալ ցրուեցան նոր գրաւուած երկիրներու մէջ և տէր դարձան նոր կալուածներու՝ պայմանով, որ պէտք է պահպանէին պետութեան սահմանները և զինուորական ծառայութիւն մատուցանէին :

Թէ երկիրը կառավարելու, թէ պատերազմ մղելու համար «մեծ արքայի» յենարանը «Մարիանիներն» էին : Անոնք միասին էին մեծցեր և անոնց շահերը ընդհանուր էին : Ուստի երկրի վարչութեան, քաղաքական հարցերու մէջ թագաւորը միշտ կը խորհրդակցէր Մարիանիներու հետ : Թագաւորի իրաւունքները սահմանափակուած էին : Մարիանիներու պարտականութիւնը ոչ միայն պատերազմներ մղելն էր, այլ և «մեծ արքայի» ժողովներուն մասնակցելը : Այդ ժողովներու իրաւասութիւնը մեզ մանրամասն յայտնի չէ, սակայն հաւանաբար իրրեւամենակարեւոր հարցեր՝ հոն կը վճռուէին պատերազմի, խաղաղութեան և գահակալութեան վերաբերեալ խնդիրները :

ՀԱՐՍՈՒԹԵԱՆ ԱՂԲԻԻՐԸ . — Քանի որ Մարիանիները մարտիկներ էին, ազնուական հողատէրեր, հետեւաբար և բնիկներ քիչ բացառութեամբ զուրս քրուեցան ռազմական և քաղաքական ասպարէզներէն : Անոնց մեծ զանգուածը նուիրուեցաւ խաղաղ աշխատանքի՝ առեւտուրի, արհեստներու և երկրագործութեան : Շատ հին ժամանակներէն ա-

նոնք լաւ ծանօթ էին արեւելքի առեւտրական մեծ շուկաներուն և կարաւանային ուղիներուն: Իրենց երկիրն ալ հարուստ էր մետաղներով և հացահատիկներով: Անոնք շատ կանուխէն ընդգրկեցին առեւտրական ասպարէզը: Միտանիներու իշխանութիւնը այս դրութիւնը չփոխեց՝ այլ ծառայեցուց իր նպատակներուն: Միտանիներու նուաճումները անոնց առեւտուրի առջեւ բաց ըրին նոր ուղիներ, տէր դարձուցին Եփրատի առեւտրական բանուկ ճամբաներու: Թէ ինչ էր Միտանի գիւղացիութեան իրաւական վիճակը, ծանօթ չենք. բայց անոր մշակած հողը իր սեփականութիւնը չէր: Հողի գերագոյն տէրը, Միտանի ռազմիկ ազնուականներն էին: Գիւղացիութիւնը կ'աշխատէր անոնց և արքայական հողին վրայ: Երկրի հարստութեան գլխաւոր աղբիւրը հողն էր: Մարիանիները յաճախ կը պահանջէին թագաւորէն հող, առատ հաց: Հողի հետ միասին զարգացած էր անասնապահութիւնը: Հիւսիսային Միջագետքը շատ լաւ արօտատեղիներ ունէր: «Մարիանի»-ռազմիկներուն հողով բաւարարելու համար է, որ Միտանի «մեծ արքաները» պատերազմի կը դիմէին: Յաղթութեան պարագային «Մարիանիները» հող կ'ըստանային գրաւած վայրերուն մէջ՝ Ասորեստանի, Սիւրիոյ մէջ և Եփրատի ափերուն: Անոնք կը ցրուէին և կը դառնային սահմանապահ բանակներ: Բայց տեւական կռիւները Մարիանիներուն կը կրտսէր իրենց կալուածներէն, և անոնք կը կոտորուէին կռիւներու ժամանակ, ուստի երբեմն «Մարիանիները» կը պահանջէին թագաւորէն հողի և հացի հետ միասին նաև խաղաղութիւն: Հող և խաղաղութիւն, ահա Միտանի Մարիանիներու բաղձանքը:

ՁԻԱԲՈՒԾՈՒԹԻՒՆԸ. — Անասնապահութենէն զարգացած էր յատկապէս ձիաբուծութիւնը: Միտանի բանակը այրուածի էր. «Մարիանիները» «մեծ արքայի» կոչը լսելով կուգային անոր օգնութեան իրենց հեծեալ մարդոցով: Միջագետքի տափաստանները, Տաւրոսի լեռնալանջերը, հայկական մեծ գետերու հովիտները սքանչելի արօտատե-

դիներով՝ նպաստեցին ձիարուծութեան զարգացման: Ձին վաճառքի առարկայ էր: Միտանիները մեծ քանակութեամբ ձիեր կը դրկէին Բաբելոնի, Փիւնիկէի և Եգիպտոսի շուկաները: Այս առևտուրը կ'ապահովէր անոնց մեծ հարստութիւն: Միտանիներէն առաջ Հիւքսոսները միայն ունէին հեծեալ լաւ բանակ, որով գրաւեցին Եգիպտոսը: Ունենալով ձին և ուղմակառքը և իրրև դէնք երկրբրան կացինը, նիզակը, վահանը, սաղաւարդը, Միտանիները և ընդհանրապէս հնդեւրոպական ժողովուրդները քանի մը դար ամենէն ուղմուկ ուժը մնացին Մերձաւոր Արեւելքի մէջ: Միտանիներու առաւելութիւնն այն էր, որ անոնց բանակը ազգային էր, չէր յենուած վարձկաններու ուժերուն վրայ:

ՄԵՏԱՂՆԵՐԸ.— Միտանիները բռնեք էին երկու գօտիները իրարմէ բաժնող լեռնաշղթան՝ Տաւրոսեան լեռները: Ատոր թիկունքը, անոնց ձեռքն էր Հարաւային Հայաստանը, իսկ Արեւելքէն Չագրոշեան լեռները, Կորդուսց լեռնաշխարհը: Այս լեռները հարուստ էին աղի հանքերով, պղինձի և երկաթի մետաղներով: Դեռ Միտանիների գալէն առաջ այս շրջանի մետաղները կ'օգտագործուէին: Սումէրները, Համուրաբին մետաղաշատ այս լեռներու հարստութեան տիրելու համար է, որ կը դիմէին Հիւսիս: Սեմական վաճառականները Փոքր Ասիոյ, Հայաստանի մետաղները կը փոխադրէին Միջագետք: Միտանիները աւելի թափ տուին մետաղագործութեան. անոնք անագը կ'ըստանային Իրանէն, էլամի վաճառականներու միջոցով: Այս բոլորի հետեւանքով Միտանի պետութիւնը դարձաւ արեւելքի ամենէն հարուստ պետութիւնը: Անոր մետաղները կ'արտահանուէին արեւելքի բոլոր մեծ շուկաները: Անոր սպառազինման նպաստեց իր սահմաններու մէջ գտնուող մետաղներու առատութիւնը: Իհարկէ մետաղները և մետաղ պարունակող հողերը արքայական կամ պետական սեփականութիւն էին. անոնց տէրը «մեծ արքան» էր: Թագաւորի կառքերը, ուղմակառքերը արծաթազարդ էին, իսկ զգեստները ոսկեղօծ: Անոնց արքաներու հարստութիւնը

կ'երեւայ այն օժիտէն, որ կուտային իրենց Եզրպոստ հարս զրկած աղջիկներուն:

Տուչրադան՝ իր աղջկան օժիտին մէջ կը յիշէ արծաթազարդ կառքեր, ոսկեզօծ աղեղներ և վահաններ, ռազմակառքեր, որոնք բոլորն ալ պղինձէ և երկաթէ ու անագապղինձէ էին ու ոսկեզօծուած: Պալատական սպասները արծաթէ և անագապղինձէ էին: Պարիսպներու, պալատներու դուռները երկաթապատ էին կամ պղինձի շերտերով ծածկուած: Թէ պալատներու և թէ բերդերու մէջ կը հաւաքէին մեծ քանակութեամբ զէնքեր՝ աղեղներ, կացիններ, սուրեր, վահաններ, որոնցմով պատերազմի պարագային կը զինէին բանակները:

ԿՐՕՆԸ.-- Միտանիի կրօնը՝ դեռեւս չամբողջացած, և իր բոլոր բազաղրիչ տարրերը ամուր ձեւով չիաւուրուած ժողովրդի կրօն էր: Անոր մէջ մենք կը հանդիպինք հաթական, փոքր ասիական, հնդկա-իրանական և ասուրաբաբելական տարրերու: Ու այս բոլորը գրեթէ բաժնուած եւ իրար քով մեկուսացած ապրող: Միտանիները ժամանակ չունեցան ստեղծելու իրենց ազգային կրօնական աշխարհը, ուր այլևս մասերը կորսնցուցած ըլլային իրենց հետքերը և կազմուած ըլլար միակ ազգային կրօնական աշխարհայեցողութիւն մը: Ատոր պատճառն այն էր, որ Միտանի պետութեան ժամանակաշրջանը շատ կարճատեւ եղաւ:

Միտանիներու մօտ մեծ յարգ ունէր և կը պաշտուէր Տէռուպ աստուածը, որու ծագումը Փոքր-Ասիական էր: Անոր պաշտամունքը ցոյց կուտայ, որ Փոքր-Ասիական ցեղազարկան շերտ մը թափանցած պէտք է ըլլայ Միտանիի մէջ և իր հետ բերած Տէչուպի պաշտամունքը: Գուցէ Տէչուպի պաշտամունքը, բնիկներէն՝ Սուբարիներու միջոցով բարձրացած ըլլար ընդհանուր յարգանքի աստիճանին: Տէչուպի հետ սերտօրէն կը միանայ Խեպալ դիցուհին, որ մէկ արտայայտութիւնն է Փոքր-Ասիական մայր դիցուհիին: Միտանիի կրօնական աշխարհին մէջ կը նկատենք

հնդիկ-արիական աստուածութեանց զոյութիւնը, որ կապուած է Միտանիներու ծագման հետ: Յիշեցինք, որ անոնք ազգակից են հնդկա-իրանական ժողովուրդներուն և անոնց տրեւմտեան հասուածն են: Ասոնց մէջ կը հանդիպինք Միթրա, Վարունա, Ինճրա, Նաւասիա աստուածութեանց պաշտամունքին:

Այս ցեղական աստուածները Միտանի պետութեան մէջ չազգայնացան, և մնացին միայն վարիչ դասի՝ Մարիտիններու կրօնը: Բայց բուն ժողովուրդը միշտ մնաց բնապաշտ: Ան կը պաշտէր ջուրը, գետը, լեռները, աղբիւրները: Ասոնք ոգիներու բնակավայրերն էին. մարդիկ անոնց ի պատիւ կը կառուցանէին մատուռներ, կը բարձրացընէին քարակոթողներ, կը շինէին տաճարներ: Բոլոր աւաններն ու քաղաքները ունէին իրենց աստուածները, պահպան հրեշտակները: Զոհեր կ'ընէին անոնց և աղօթքներ և շարականներ կ'երգէին: Տեռուպր՝ Վաչուգանի մայրաքաղաքի աստուածն էր, և արքայական տան հովանաւորը: Միտանի աստուածներուն մինք կը հանդիպինք դաշնագրեր կնքումին առթիւ: Անոնց հովանաւորութեան տակ կը դրուէր կնքուած դաշնագիրը:

Շատ քիչ բան գիտենք Միտանիներու տաճարներու, անոնց արուեստի, ճարտարապետութեան մասին. շատ քիչ ծանօթ է մեզի նաև Միտանի քրմական դասի կազմակերպութիւնը: Պէտք է ենթադրել, որ անոնք ունէին բարդ քրմական դաս. որովհետեւ ունէին հարիւրաւոր աստուածներ. այդ աստուածները բարդ հասարակութեան մէջ էին սկիզբ առեր: Բուրժերը պէտք է կարգաւորէին անոնց յարաբերութիւնը, և ճշդէին «հազարումէկ» աստուածներու ազգակցութիւնը: Բայց այս բոլորի մասին տեղեկութիւններ կը պակսին, Միջագետքի աստուածներէն Միտանիի մէջ մեծ յարգ ունէին Իշտարը և Շամաշը:

II Հ Ա Թ Ե Ր

Հաթական մեծ պետութիւնը զէնքի զօրութեամբ կառուցուեցաւ: Անոր պատմութիւնը տեւական կոիւ էր Փոքր Ասիոյ մեծ ու փոքր իշխանութիւններու զէմ, որոնք ամուր ձեւով կառչած էին իրենց անկախութեան, և չէին ուղեր Հաթիբու մեծ թագաւորին ենթարկուիլ: Փոքր Ասիոյ գրաւումը, մէկ իշխանութեան ներքեւ հաւաքելը դիւրին չէր: Երկիրը շունէր ճանապարհներ, բնականէն բաժան-բաժան մասերէն էր կազմուած, հեռաւոր վայրերը անմատչելի էին Հաթ թագաւորներուն: Յեղերու, լեզուներու բազմազանութիւնն ալ արգելք կը հանդիսանար միացումին: Իսկ Հաթերու համար, Փոքր Ասիոյ ամբողջական տիրապետութիւնը և խաղաղացումը անհրաժեշտ էր իրենց աւելի ընդարձակ քաղաքական ծրագիրներու իրականացման տեսակէտէն: Փոքր Ասիոյ միացումը՝ նէսիտ Հնդեւրոպացիներու գործն հղաւ: Յատկապէս Շուբիլուլուման իր ամբողջ կեանքը նուիրեց այս նպատակի իրագործման: Բայց նեսիտները թիւով փոքր էին, ատոր համար ալ նուաճումները դանդաղ կ'ընթանային: Եւ որովհետեւ անոնք միաժամանակ ամեն տեղ հասնիլ չէին կրնար, ուստի գրաւած վայրերու մէջ, միայն փոքրաթիւ զօրք կը պահէին: Այս պատճառով ալ նեսիտներու իշխանութիւնը կայուն և ամուր չէր Փոքր Ասիոյ մէջ: Ասոր հետեւանքով ալ անոնք շատ պարագաներու մէջ կը նախընտրէին ապստամբներու, ըմբոստներու հետ բանակցիլ, վիճելի հարցերը համաձայնութեամբ լուծել քան երկարատեւ և մաշող կոիւններու դիմել:

Հաթերու ղեկավարութիւնը փնտրեց պետական միութեան հետ Փոքր Ասիան միացնել նաև լեզուով, կրօնքով, մշակոյթով և ընդհանուր օրէնքներով: Բայց այս գործը չիրականացաւ ամբողջովին ու մնաց կիսաւարտ. Փոքր Ասիան չի վայելեց ոչ քաղաքական, ոչ լեզուական, ոչ ալ

մշակութային ու կրթական միութիւնն: Միացման գործը մնաց կէս ճանապարհին, անկատար: Ինչպէս ըսինք ասոր համար Նեսիտ-Հաթերու ճիգերն ու միջոցները սահմանափակ էին. անոնց իշխանութիւնն ալ երկարատեւ չեղաւ, իսկ Փոքր Ասիական աշխարհն ալ բարեացակամ չէր այդ միութեան հանդէպ: Երկու ազգագրական տարրերու համաձուլումը կիսատ կատարուեցաւ:

ՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԱՌՈՅՑԸ.— Հաթական պետութեան գլուխը կանգնած էր թագաւորը. ան կը կոչուէր «մեծ թագաւոր»: Աւելի ուշ, գուցէ եգիպտական ազդեցութեան տակ, ան կոչուեցաւ «արեւ արքայ»: Հաթերու մօտ թագաւորը ոչ աստուած էր, ոչ ալ աստուծոյ որդի: Բայց իր մահէն ետքը կը գտնար աստուած և անգիէն կը շարունակէր հովանաւորել իր ժողովուրդը: Մեծ թագաւորի իշխանութեան տակ կային բազմաթիւ փոքր թագաւորներ, ցեղապետներ, մեծ ու փոքր շրջաններու տէրեր: Ասոնք գոյութիւն ունէին հնգերկուսական Նեսիտներու թափանցումէն առաջ. իրենց ցեղերու պետերն էին. վարժուեր էին ինքնազլուխ իշխանութեա՛: հազար ու մէկ կապիրով միացած էին իրենց ցեղերու հետ. ունէին կոռուղներու, զինակիցներու մեծ բազմութիւն: Ասոնք էին, որ դժուարութեամբ կ'ընդունէին Հատուշատի թագաւորներու գերիշխանութիւնը: Որքան հեռու էին կեդրոնէն՝ այնքան աւելի անոնք իրենց ազատ կ'ըզգային: Անոնց վրայ թագաւորի իշխանութիւնը միայն անուանական էր:

Հաթերու պատմութեան ընթացքին կը տեսնենք որ «Մեծ թագաւորը» կը ջանայ շրջաններու, առանձին երկիրներու բնիկ իշխանութիւնները ջնջել և անոնց փոխարինել արքայական ընտանիքի անդամներով: Ռազմական կարեւորութիւն ունեցող վայրերու մէջ «մեծ թագաւորը» կ'ըստեղծէր նոր փոքր թագաւորութիւններ հաթական պետութեան մէջ և անոնց գլուխը կը դնէր իր որդիները: Այս քայլը իշխանութեան կեդրոնացման մէկ ձեւն էր, որով Հաթ թագաւորները կը կոռէին անջատման ձգտող

տարրերու զէմ: Շատ անգամ ալ տեղական իշխաններուն կամ անոնց որդիներուն երկար ժամանակ կը պահէին Հատուշի պալատին մէջ, կը կրթէին, կը ներշնչէին անոնց հաթական դիմաշրջում և կ'ուղարկէին իրենց երկիրները կառավարելու:

ԱՒԱԳՆԵՐՈՒ ԺՈՂՈՎԸ.— Հաթական ռմեծ թագաւորը՝ եգիպտական իմաստով բացարձակ միապետ չէր. չունէր փարաւոնի ոչ աստուածային ծագումն ու աստուածային հանգամանքը, ոչ ալ անոր պէս բացարձակ միապետ էր: Անոր իշխանութիւնը սահմանափակուած էր Աւագներու ժողովով, որ հաթերէն կը կոչուէր Պանկու: Այս ժողովի մէջ տեղ ունէին արքայական ընտանիքի անդամները, զինուորական հրամանատարները և երկիրներու, նահանգներու կառավարիչները: Այս աւագանին՝ թագաւորին հետ էր մեծցած, ստեղծուած. թագաւորը անոնց վրայ կը յենուէր երկիրը կառավարելու և պատերազմներ ընելու ժամանակ. բնական էր, որ անոնց ալ մասնակից ընէր իշխանութեան: Հաթերու թագաւորին մօտ կար վարիչ դաս մը, խորհրդատու և օրէնսդիր մարմին մը: Աւագներու ժողովը առաջին հաթական պետութեան շրջանին, միայն խորհրդատու ժողով էր. նոր պետութեան ժամանակ ան ձևաք բերաւ մեծ իրաւունքներ. նոյնիսկ թագաւորին կրնար դատել, եթէ մեղադրուէր արքայական ընտանիքի անդամներու սպանոյթութեան մէջ: Այդ ժողովը մասնակից էր դաշինքներ կընաքելու, պատերազմ յայտարարելու մէջ:

Աւագներու ժողովի անդամները հասարակութեան բարձրը, վարիչ խաւն էին. անոնք ունէին խոշոր կալուածներ, որոնց տիրացեր էին արչաւանքներու հետեւանքով: Կալուածներու մէջ անոնք ունէին վարչական և քաղաքական իրաւունքներ: Կենդրոնական իշխանութեան հանդէպ ունէին երեք պարտաւորութիւն. զինական օգնութիւն տալ մեծ թագաւորին, հարկ տալ իրենց կալուածներէն, և թագաւորի խորհրդին մասնակցիլ: Այսպիսով հաթական պետութիւնը աւատական բնոյթ ունէր: Եւ ինչպէս բոլոր ա-

ւատական պետութիւններու մէջ, այնպէս ալ Հաթերու մօտ թագաւորի և աւատատէրերու փոխ յարաբերութեան որոշողը՝ անոնց ուժն էր, զինուորներու քանակը և նւթական հարստութիւնը: Աւատատէրն ու թագաւոր կը յենուէին իրարու վրայ, միասին կը գործէին, պէտք ունէին իրարու: Մէկն առանց միւսին իրենց իշխանութիւնները պահել չէին կրնար, ոչ բարեկամ Փոքր-Ասիական միջավայրի մէջ:

ԹԱԳԱԽՈՐԸ. — Թագաւորը կանգնած էր բաղմաթիւ գործառնութեանց գլուխը: Ան ոչ միայն պետութեան զըլուխն էր այլ և առաջին բուրմը: Ան աշխարհիկ և հոգեւոր տէր էր: Որպէս քրմապետ՝ անոր կ'ենթարկուէին բոլոր քրմերը. անոր արամագրութեան տակ էին տաճարական հարստութիւնները: Ան կը հետեւէր տաճարական արարողութիւններուն, ծէսերուն: Ան շատ յաճախ կը շրջէր քաղաքէ քաղաք, նախագահելու համար կրօնական մեծ տօներու արարողութեանց: Ժողովուրդը իրմէ կ'ակնկալէր բարեկեցիկ կեանք, խաղաղութիւն, առատ սնունդ, որովհետև ան մօտ էր աստուածներուն, կը խօսէր անոնց հետ, գիտէր անոնց կամքը: Թագաւորը աստուած չէր, բայց որպէս քրմապետ միջնորդ էր աստուածներու և իր ժողովուրդին մէջ:

Թագաւորը գերագոյն դասաւոր էր արդարութեան պաշտպան: Անոր անունով թէ քուրմերը և թէ դատաւորները քաղաքներու և գիւղերու մէջ դատաստան կ'ընէին: Ինք անձամբ կը վարէր կարեւոր դատերը: Թէ որքան կարեւոր տեղ ունէին դատն ու դատարանը հաթական պետութեան մէջ, կ'երեւայ այն բանէն, որ Հաթ թագաւորները կազմեցին «հաթական օրէնքներու ժողովածուն»: Ան Համուրաբի օրէնքներու ժողովածուէն յետոյ երկրորդ է, մեզ ծանօթ ժողովածուն է այս:

Թագաւորի ամենէն կարեւոր դքաղումը ռազմականն է. ան բանակի հրամանատարն է և շատ յաճախ ինքն է, որ կ'առաջնորդէ իր զօրքը: Սովորաբար պատերազմը կ'ըսկսէր ձիւնահալքին, գարնան. իսկ ձմրան կտիւնները կը դադրէին

և զօրքի մեծ մասը կ'արձակուէր: Պատերազմը ամենէն կատարուին էր «մեծ թագաւորի» գործին մէջ, որովհետեւ ան էր որ կը հայթայթէր գերիներ, նոր երկիրներ և նոր հպատակներ թէ թագաւորին, թէ աւատական դասին, և մինչև իսկ տաճարներուն: Ան կուտար նաև յաղթուածիւն և փառք:

Հաթերու թագաւորներն ալ իրենց ժամանակ՝ արեւելիան իշխաններու պէս նուաճողներ էին: Անոնց նուաճողականութիւնը ուղղուած էր նախ Փոքր Ասիոյ տիրապետութեան, ապա Եփրատեան գծի զբաւման, որ մէկ կողմէն անոնց պիտի առաջնորդէր դէպի Միջագետք, իսկ միւս կողմէն դէպի «նահարինա»: Ասոր համար ալ Հաթ թագաւորները միշտ կը պահեն մեծ բանակներ: Այդ բանակներու միջուկը ազգային էր, որուն շուրջը կը հաւաքուէին վարձկանները: Բոլոր Հաթերը զինուոր էին: Բանակը կեդրոնացած էր երկրի ծայրամասերուն վրայ և սահմանազուխներուն, ռազմակայաններու և բերդերու մէջ: Պատերազմի ժամանակ հողատէր-աւատատէր մարդիկ կուգային իրենց զօրքերով թագաւորին օգնութեան: Հաթական բանակը ունէր ռազմակառքբու, հեծեալ և հետեւակ ուժերու բաժիններ: Ռազմակառքի վրայ կը տեղաւորուէին երեք մարդ՝ կառավարը, մարտիկը, որ սովորաբար ազնուական ծագում կ'ունենար և կը կոուէր թշնամիի դէմ և վահանակիրը, որ մեծ վահանով կը պաշտպանէր կոուողը: Կատէշի ճակատամարտին Հաթերը ունէին 17,000 հետեւակ և 3500 ռազմակառք: Զինուորներուն և հրամանատարներուն իրենց ծառայութեան փոխարէն կը տրուէր հող և աւարէն մաս մը: Վարձկան և մնայուն բանակը, խաղաղութեան ժամանակ, հասարակական-շինարարական աշխատանքի կը լրծուէին, ընդհակառակն պատերազմի ժամանակ, բազմաթիւ արհեստաւորներ զօրակոչի կ'ենթարկուէին՝ ինչպէս դարբիններ, մետաղագործներ և այլն: Անոնք զէնք ու զբան կը պատրաստէին բանակի համար ամրոցներու և բերդերու մէջ: Երկրի բոլոր բնակիչները ենթակայ էին անձնական

ծառայութեան. անոնք է, որ կ'աշխատէին ճանապարհներու և բերդերու շինութեան, տաճարներու և պալատներու կառուցման համար: Աստ քիչերն էին, ազատ այս պարտաւորութիւններէն. օրինակ քուրմերը և բարձր պաշտօնեաները:

ՕՐԷՆՔՆԵՐՈՒ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ.— Հաթերը ունէին իրենց քօրէնքներու ժողովածուն: Ան կաղմուած էր երկու մասէ. իւրաքանչիւր մասը շուրջ հարիւր յօգուածներէ կը բաղկանար: Անոր խմբագրութեան և հրատարակութեան ժամանակաշրջանը որոշելը դժուար է: Անշուշտ պէտք է գոյութիւն ունեցած ըլլային օրէնքներու մասնակի հաւաքածուներ, որոնց միացումով է կազմուելը մեզ հասած օրէնքներու ժողովածուն: Հաւանաբար ան խմբագրուած ըլլայ Շուքիլուլումայի անմիջական նախորդներու օրով, ուրիշ XV-րդ դարու կէսերուն: Ընդհանուր առումով, հաթական օրէնքները պատիժներու վերաբերմամբ աւելի մեղմ են, աւելի մարդկային, քան Համուտարիի օրէնքները: Ան կը պատկանի հասարակութեան մը, ուր մահուան պատիժը կը փոխարինուի տուգանքներով, նիւթական հատուցումներով, ուր մահուան պատիժը մնացեր է միայն հանրային կարգը իրանգարողներու և թագաւորի դէմ դաւադրողներու համար:

Հաթական օրէնքի համաձայն հասարակութիւնը բաժնուած է երկու դասի՝ ազատներու և ստրուկներու: Միջին դասը, Մուշկիները, որ գոյութիւն ունէր բարեկական հասարակութեան մէջ՝ այստեղ չկար: Ստրուկներու թիւը հաթական հասարակութեան մէջ շատ էր. տեւական պատերազմները անոնց կը հայթայթէին գերիներու մեծ թիւ. ատոնք կը դառնային ստրուկներ: Ստրուկներ ունէին թագաւորը, քուրմերը, տաճարները և ազատ դասին պատկանողները: Ստրուկները կը կատարէին բոլոր աշխատանքները: Հանքահորերու, ճանապարհ շինելու, տաճարներ կառուցելու, բերդեր և պարիսպներ բարձրացնելու համար կ'օգտագործէին անոնց աշխատանքը: Օրէնքը կը պաշտպանէր ստրկատէրերու շահերը՝ խստօրէն պատժելով փախչող, ապստամբ ստրուկները:

Հաթական օրէնքը յանցանք կը նկատէր իբրև հասարակական կարգը խանդարող երեւոյթ, որով հասարակական կազմակերպուած ուժն ալ պիտի պատժէր յանցաւորը: Անձնական վրիժառու թիւնը գոյութիւն չունէր. սպաննուածի և կամ տուժողի ընտանիքը չէ որ փոխ վրէժ կը լուծէր սպաննողի ընտանիքէն. այլ պետութիւնն էր որ կը հետապընդէր արդարութիւնը ի յայտ բերելու: Արեան վրիժառու թիւնն ալ կը փոխարինուէր նիւթական հատուցումով, «արեան գնով», որ կ'ըստանար սպաննուածի ընտանիքը: Հատուցումը կ'ըլլար կամ նիւթականով, կամ անձամբ, կամ անասուններով: Հատուցումը կ'որոշուէր ի նկատի առնելով ոչ թէ մարդը, այլ անոր ընկերային դրութիւնը: Երբեմն սպաննուածի ընտանիքը կ'ըստանար սպաննողի ամբողջ տունը, նոյնիսկ ընտանիքը: Որեւէ յանցանքի համար ազատ մարդը աւելի կը պատժուէր քան ստրուկը: Եւ ազատ մարդուն սպաննելը կամ անոր վնասելը շատ աւելի խիստ կը պատժուէր, քան ստրուկին: Եթէ մէկը կոտորէր ազատ մարդու մը ոտքը կամ ձեռքը՝ ան կը տուգանքուէր քսան սիկլով, իսկ եթէ վնասուողը ստրուկ մը ըլլար, նոյն յանցանքի համար կը պատժուէր միայն տասը սիկլով: Եթէ մէկը կուրացնէր ազատ մարդու մը, պէտք է որ վճարէր մէկ մին արծաթ—վաթսուն սիկլ. ստրուկի համար կէսը միայն: Օրէնքը իւրաքանչիւր մարդը կը նկատէր ոչ իբրև անհատ, այլ իբրև այս կամ այն դասի անդամ և ըստ այնմ ալ կը սահմանէր պատիժը:

Օրէնքներու ժողովածուին բազմաթիւ գլուխները նը-
ւիրուած էին գողութեան: Ամենէն խիստ օրէնքներ են մշակ-
ուած անասուններու յափշտակութեան համար: Այս նշան է, որ հաթական հասարակութեան հարստութեան աղբիւրը անասնապահութիւնն էր և որ ան պէտք էր ապահովէր ա-
ւազակներու դէմ: Երկու տարին չլրացած ձիու կամ եզան գողութեան համար՝ գողը պէտք է տար երեսուն ձի կամ եզ, հետագային օրէնքներու ժողովածուի մէկ ուրիշ խումբագրութեան մէջ հատուցման այդ թիւը կ'իջնայ տասնը-

հինգի: Եթէ եզ մը մտնայ ուրիշի մը արտը, այդ արտին սեփականատէրը իրաւունք ունէր եզը աշխատցնել ամբողջ օրը:

Ըստ օրէնսգրքի հաթական հասարակութիւնը կ'ապրէր ընկերային այն աստիճանին վրայ ուր հայրիքխանութիւնը տիրապետող էր: Հայրն էր ընտանիքի տէրը. ամուսնութիւնը կը կատարուէր համաձայնութեամբ, կինը կ'երթար ամուսնի տունը: Հաթերու մօտ կար նաև «գնումով ամուսնութիւն». տարածուած էր նաև առեւանգումով ամուսնութեան ձեւը: Ազջիկը հօր տունէն կը բերէր իր օժիտը: Գնումով ամուսնութեան պարագային հարսնացուի գինը կ'որոշէին հօրը վճարելիք անասուններով կամ անշարժ որևէ արժէքով: Երկու դասերու մէջ ամուսնութիւնը հազուադիւտ էր, բայց օրէնքով խստիւ արգելուած չէր: Ազատ կինը եթէ ամուսնանար խոնարհ խաւի տղամարդու հետ, երեք տարի ստրկուհի կը դառնար: Նոյնպէս՝ օրէնքը կը հանդուրժէր, որ ստրկուհին ամուսնանայ ազատ մարդու հետ: Բաժանման պարագային ստրկուհին կ'ըստանար տընային ունեցուածքի կէս մասը:

Այսպիսով կը տեսնենք, որ հաթական օրէնսգիրքը իր հսկողութեան տակ առեր էր ընկերային ամբողջ յարաբերութիւնը, ինչքի, գոյքի և անձի պաշտպանութիւնը, ընտանեկան յարաբերութիւնը: Ան կը միջամտէր նաև աշխատանքի կազմակերպութեան մէջ՝ յորշելով աշխատավարձը, բարիքներու գները: Հաթական պետութիւնը այնքան լաւ կազմակերպուած, և այնքան ուժեղ էր, որ կը մտնէր հասարակական կեանքի շատ մը կարեւոր խնդիրներու մէջ. ան միշտ կը հովանաւորէր ազատները, կը պաշտպանէր ընկերային այն կարգը, որ ստեղծուած էր դարերու ընթացքին և պայքարով: Այդ հասարակութիւնը դասային հասարակութիւն էր, ուր ազատները կը շահագործէին անազատները. ազատներն ալ իրենց մէջ կը բաժնուէին ընկերային զանազան խմբակցութեանց. խոշոր հողատէրերը զինուորական ազնուականութեան հետ՝ արքայական տան

գլխաւորութեամբ կ'իշխէին մնացած աղատներու և ատրուկներու վրայ և կ'ապրէին անոնց աշխատանքով: Բաղմացեղ և բազմալեզու այս հասարակութեան մէջ միացնողի, հաւաքողի դերը կը կատարէր կեդրոնական իշխանութիւնը՝ իր լաւ կազմակերպուած վարչութեամբ, օրէնքներով, կեանքի և գոյքի ապահովութեան վրայ հսկելով, խստօրէն պատժելով ընկերային կարգի խանգարողները:

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ.— Փոքր Ասիան գիր ու գրականութիւն չէր ճանչնար մինչև սեմականներու այնտեղ թափանցելը: Երբորդ հազարամեակի վերջերուն հոն հաստատուեցան ասուրա-բարելական վաճառականներ. ասոնք ունէին իրենց դպիրները, որոնք գրէ կ'անցնէին առեւտրական գործերը: Փոքր Ասիական ժողովուրդները՝ անոնցմէ վերցուցին սեպագրերու գործածութիւնը: Աղիւաներու վրայ անոնք կը գրէին իրենց դաշինքները, առեւտրական պայմանները, օրէնքները, կրօնական ծէսերը: Հնագոյն ժամանակ անոնք կը գրէին ակադերէն, կը թարգմանէին ասուրա-բարելական գրութիւնները հաթերէնի. կ'ըստեղծուէր հաթական ազգային գրականութիւն և հաթ լեզուն կը բարձրանար գրական լեզուի աստիճանին: Այս առաջին օրինակն է, որ հնդեւրոպական լեզու մը գրականութեան լեզու կը դառնար: Կը գրեն մեծ մասամբ կրօնական երգեր, ծիսական հարցերու մասին, կը նուիրեն այս բոլորը Տէշուպ աստուծուն:

Հաթական այս գրական լեզուի մէջ մնացեր են սեմական բազմաթիւ բառեր: Մեզ հասեր է նաեւ հաթ-ակադական բառարաններ: Այս բոլորը ցոյց կու տան այն մշակութային կապը, որ գոյութիւն է ունեցեր Միջագետքի և Փոքր Ասիոյ ժողովուրդներու մէջ: Շուքիլուլումայի ժամանակէն շատ անգամ հրամանները, հրահանգները և տարեգրութիւնները կը գրէին ակադերէն լեզուով, բայց Մուրսի 11-ի ժամանակէն հաթական լեզուն վերջնականապէս փոխարինեց ակադերէնը: Այս շրջանին է, որ իսկապէս կ'ըստեղծուի հաթական ազգային գրականութիւն. ան

սկիզբը կ'ընդօրինակէր բարեւոյնեան ձեւերը, նիւթերը՝ հե-
րոսներու և աստուածներու մասին եղած առասպելախառն
պատմութիւնները: Նոր բան մը կար հաթական գրակա-
նութեան մէջ: Թէ էգիպտոսի և թէ ասորա-բարեւական
գրականութիւնը հեղինակներ չի ճանչնար, անանուն գրա-
կանութիւն էր իրենցը: Հաթերու մօտ շատ գրուածքներ,
երչեր ունին իրենց հեղինակները, որոնց անունը կը յիշուի:
Գրականութիւնը կ'անհատականանայ: Գրականութեան նիւ-
թըն ալ բազմազան է՝ առասպելներ, պատմութիւններ, ար-
ձանագրութիւններ թագաւորներու գործերու մասին, ա-
ռեւտրական պայմաններ, քաղաքական դաշինքներ «Մեծ
արքայի» և իր վասալներու մէջ, դաշնագրեր օտար մեծ
պետութիւններու հետ, ձիաբուծական դասագիրք և բա-
ռարաններ:

ԿՐՕՆԸ.— Հաթերու կրօնը կրնանք միայն ընդհանուր
ձեւով բնորոշել: Ան բնապաշտութիւն է, շատ ընդհանուր
գծեր ունի արեւելիան ժողովուրդներու կրօններու հետ: Ան
չունեցաւ պատմական այն հոլովոյթը, որ բնապաշտու-
թեան միջով հասնէր բարոյական մեծ և բարձր գաղափար-
ներու մշակման՝ ինչպէս Եգիպտացիներու, Պարսիկներու և
Իսրայելացիներու մօտ: Հաթ պետութեան բազմաթիւ մասե-
րը ունին իրենց ուրոյն աստուածները, պահպան ոգիները:
Հաթերու աստուածները մեծ թիւ կը կազմէին. միջադգային
դաշինքները կը դրուէին «հազար» աստուածներու պաշտպա-
նութեան տակ: Այդ աստուածներէն շատերը միայն պարզ
ոգիներ են՝ այս կամ այն գերդաստանի կամ ցեղի հովանա-
ւոր: Շատ քիչերը անոնցմէ կը հասնին համահաթական
պաշտամունքի: Այդպիսիներէն է Տէպուչը, որ ամենամեծ
աստուածն է: Ան բնութեան տէրն է, ամպրոպի, փոթորի-
կի, անձրեւի աստուածն է, կ'ապրի լեռներու վրայ: Հա-
թական կրօնի յատկանշական գիծն այն է, որ Մեծ աս-
տուծոյ հետ միշտ անբաժան է Մայր Դիցուհիի պաշտամուն-
քը: Տէչուպը երկնքի աստուածն է և այն բոլորի ինչ որ կը
կատարուի բնութեան մէջ: Մայր Դիցուհին երկրի, հողի

աստուածունհին է: Այս երկուքի միութենէն առաջ կու գայ կեանքը՝ իր բոլոր արտայայտութիւններով: Անոնց հանդիպումը, միութիւնը տեղի կ'ունենայ լեռներու, բարձունքներու վրայ, ամպերու մէջ, փոթորիկներու ընթացքին: Շատ յաճախ այս երկու աստուածութեանց հետ անբաժան է Որդի աստուածը: Ան երբեմն հանդէս կուգայ՝ իբրև որդին մայր զիցունհի, երբեմն ալ իբրև անոր սիրահարը: Յաճախ երկուքը միասին: Այստեղ դեռ անկայուն, փոփոխական ձևով տրուած է երոգողութեան գաղափարը, որ այնքան մեծ դեր կը խաղայ արեւելքի կրօնական պատմութեան մէջ: Արական աստուածութիւնը՝ Տէշուպը ունի որպէս ուժի խորհրդանիշ՝ կայծակ եւ կացին, իսկ անոր կենդանական խորհրդանիշն է ցուլը կամ հովազը: Մեծ զիցունհին կ'երեււայ երկու զիմպօզով՝ ան առատութեան աստուածունհի է: Կը ներկայանայ կնոջ կերպարանքով, գլուխը թագով ծածկուած, երկար զգեստ հագած, ան բիզմուստութեան աստուածունհին է՝ կը ներկայանայ կատարելապէս մերկ հաւատացեալներու առաջ: Մայր զիցունհի կենդանական խորհրդանիշն է երբեմն առիւծը, երբեմն աղաւնին:

Այս դոյզ աստուածութեանց պաշտամունքը տարածուած էր ամբողջ Փոքր Ասիոյ և Սիւրիոյ մէջ և յայտնի էր զանազան անուններով: Սիւրիոյ մէջ աստուածունհին կը կոչուէր Դէմէտրիս, մեծ աստուածը՝ Ադադ: Երիտասարդ աստուածն ալ՝ Ատոնիս: Թէ Փոքր Ասիոյ և թէ Սիւրիոյ մէջ այս աստուածներու շուրջը ստեղծուեր էին վէպեր, առասպելախառն պատմութիւններ, անոնց սիրային կեանքի մասին: Հատուչաչ մայրաքաղաքին մօտիկ սրբատեղիի մը մէջ՝ Ժայռերու վրայ քանդակուած է մեծ աստուծոյ և մայր զիցունհիի խորհրդաւոր ամուսնութեան պատկերը: Այս պատկերաչարքը հետաքրքիր է ոչ միայն կրօնի և արուեստի տեսակէտէն, այլ և հոն կը գտնենք Հաթիբու երկու մարդաբանական ընդդէմ դիմերը, անոնց զգեստաւորումը: Ժայռի վրայ քանդակուած են երկու կարգով մեծ աստուածը և մայր զիցունհին իրենց շքախումբերով՝ երկրոր-

ֆական կարգի աստուածներով և քուրմերով: Աստուած-որօ
դին կը գտնուի մայր դիցուհիի շքախումբին մէջ: Աստ-
ուած և աստուածուհին հակառակ կողմերէն գալով կը դի-
մեն իրարու ընդ առաջ: Այս քանդակի մէջ նկատելի է հա-
թական արուեստի քանի մը բնորոշիչ գիծերը: Հաթերը
գերադասութիւն կուտան ժայռաքանդակներուն և կը քան-
դակեն երկարաձիգ պատկերներ: Նման ժայռաքանդակներ
գտնուած են հաթական մեծ պետութեան բոլոր կողմերը.
մանաւանդ հարաւը՝ Ամանոսի և Տաւրոսի լեռնաճաւառնե-
րու մէջ: Հաթերու ժայռաքանդակներու մէջ մեծ տեղ է
տրուած մարմնի շարժումներուն և աստուածները, քուրմերը
և թագաւորները կը քանդակուին շարժուն, գործօն պա-
հուն: Հաթ արուեստագէտները, քանդակելու ատեն, իրենց
տեսողութենէն կը հեռացնեն մանրամասնութիւնները, ու-
շադրութիւն կը դարձնեն էականի, յատկանշականի վրայ,
որոնցմէ կ'ըստեղծեն ներգաշնակ պատկերաքանդակ: Հա-
թերու մէջ զարգացած էր նաև կենդանիներու արձանաշի-
նութիւնը. տաճարի, պալատի և պարիսպներու զուռնե-
րուն մօտ: Անոնց քանդակումը կապ ունէր կրօնի հետ:
Կենդանիները՝ առիւծները պահապան, բարի ոգիներ էին,
անոնք կը հսկէին երկրի, քաղաքի և տուներու ապահո-
վութեան վրայ, կը հալածէին թշնամիները և չար ոգիները:



ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՓՈՒՔՐ ԱԶԳԵՐՈՒ ՎԵՐԵԼՔԸ

XV-XIIIրդ դարերու քնթացքին Մերձաւոր Արեւելքի Արդասարեր կիսալուսնի արեւմտեան թելի և Միջերկրականի ափերուն համար կը պայքարէին նախ Եգիպտոս ու Միտանի պետութիւնը, ապա Եգիպտոսն ու հաթական Վեծ Պետութիւնը: Այս պայքարի մէջ անոնք թուլցան, թէ ներքին ուժերու սպառման հետեւանքով, թէ արտաքին ռազմերու հարուածներու տակ, Միտանին ոչ միայն պարտուած դուրս եկաւ կռիւններէն, այլ և վերջ դտաւ անոր քաղաքական կեանքը. Հաթերը ինկան ՎՄովերու ժողովուրդներու՝ հարուածներու տակ, իսկ Եգիպտոսը ընկրկեց, լքեց սիւրբական իր գաղութները և մահազուեցաւ Եգիպտոսի պաշտպանութեամբ, ուր երեւոցեր էին նոյն ՎՄովերու ժողովուրդները: Մեծ պետութիւններու գերիշխանութեան ազատագրուեցան Պաղեստինը, Փիւնիկէն, Սիւրբան: Այս երկիրներու մէջ սկսաւ անկախութեան շարժում մը, որ հետըզհետէ հասցուց պետական ինքնուրոյն կեանքի: Միաժամանակ նման շարժում մը տեղի ունեցաւ Լիոնային գօտիին մէջ: Հաթական կայսրութեան անկումով Փոքր Ասիոյ մէջ ստեղծուեցան պետութիւններ՝ Փոնտական, Լիդիան, Կարկաէմէշը: Առաջին երկուքի մէջ բնակչութեան հիմնական խաւը Փոքր Ասիական էր, իսկ ղեկավարութիւնը կը գրտնուէր հնդեւրոպական ծագում ունեցող թագաւորներու ձեռքը, Կարկաէմէշի մէջ բնակչութեան նախնական շերտը սեմական էր, բայց իշխանութիւնը հաթական էր: Նոյն ժա-

մանակաչրջանին՝ Հիւսիս-արեւմտեան Հայաստանի մէջ, Եփրատէն արեւմուտք, Ալիսի ակունքներու շուրջը Հայասս Երկիրը կ'ազատագրուէր հաթական գերիշխանութենէն և կը սկսէր իր անկախ գոյութիւնը: Բուն Հայաստանի մէջ Մի-տանիներու անկումէն ետքը կը կատարուէր ցեղերու, տոհմերու հաւաքման նոր շարժում, կ'ըստեղծուէր Նաիրեան զաշնակցութիւնը՝ դուրսի ուժերու դէմ պայքարելու համար:

Մեծ պետութիւններու փլուզումը նպաստաւոր պայ-մաններ ստեղծեց փոքր ազգերուն և ժողովուրդներու առա-ջանալուն, մեծնալուն և քաղաքական ու քաղաքակրթա-կան կեանքի տիրանալու համար: Եւ անոնք այդ կեանքը պահպանեցին այնքան ատեն որքան Մերձաւոր Արեւելքի մէջ չէր կազմուած նոր մեծ ու հզօր կայսրութիւն մը, որ սպառնար անոնց անկախ գոյութեան և քաղաքակրթական վերելքին: 12-էն մինչեւ 9-րդ դարը Արեւելքի պատմութիւնը փոքր ազգերու առաջացման, մեծացման պատմութիւնն է: Այդ ազգերուն կը պատկանին Արամէացիները՝ Սիւրիոյ մէջ, Փիւնիկէցիները՝ Միջերկրականի ափերուն և Հրէաները՝ Պա-ղեստինի մէջ: Որպէս ժողովուրդ ասոնք գոյութեան էին կոչուեր շատ հին ժամանակներէն, նախապատմական մթութեան մէջ: Անոնք իրենց կազմաւորման մէկ շրջանը անցուցեր էին մեծ պետութիւններու՝ Եգիպտոսի, Հաթերու գերիշխանութեան տակ, բայց երբ օտարի լուծը ինկաւ, անոնք երեւան եկան որպէս ուրոյն ազգութիւններ և ստեղ-ծեցին իրենց պետութիւնները և քաղաքակրթութիւնները: Մեզ կը հետաքրքրէ այդ ժողովուրդներէն Փիւնիկէցիները և Հրէաները:

Ա. ԳԼՈՒԽ

ՓԻՆԻԿԷ

Փիւնիկէցիք սեմական ժողովուրդներու շարքին կը պատկանին: Երեք հազարամեակի սկիզբը անոնք սեմական ուրիշ ցեղերու հետ վաչկատուն և վրանարնակ կեանք ունէին: Բայց իրենց մշտական թափառումներու ընթացքին յիշան Միջերկրականի ափերը, լքեցին իրենց վաչկատուն կենցաղը և դարձան նստակեաց: Հոն անոնք գտան նպաստաւոր պայմաններ կապուելու հողին, ջուրին, ծովափերուն: Փիւնիկէն Եգիպտոսի, Բաբելոնի և Ասորեստանի նման մեծ կայսրութիւն չստեղծեց, Իսրայէլի նման միաստուածութեան կրօնի հիմնադիր չդարձաւ: Բայց այդ ժողովուրդը ասիական ծագումով առաջին ծովագնացը եղաւ: Ան Միջերկրականի ափերուն գաղութներ հիմնեց և իր առեւտրական գործի դիւրութեան համար հնարեց մարդկային միտքն արտայայտող նոր միջոց մը, հնչիւնական այբուբէնը:

ԵՐԿԻՐԸ.— Փիւնիկէն երկար ու նեղ հողաչերտ մըն է Միջերկրականի ասիական ափերուն: Ան հիւսիսէն հարաւ երկու հարիւր քիլոմեթր երկարութիւն ունի: Ան Լիբանանեան լեռներու և ծովուն մէջ ինկած հողաչերտ մըն է. որուն ամենէն լայն մասերը հազիւ յիսուն քիլոմեթրի կը հասնին, իսկ ընդհանրապէս քսան-երեսուն քիլոմեթրը չեն անցնիր, լեռները երբեմն կ'իջնեն մինչև ծով: Ծովամերձ հովիտները իրարմէ կը բաժնուին ուղղահայեաց լեռներով կամ գետակով մը, որ աւելի հեղեղատ մըն է, ամբան կը չորնայ, իսկ ձմրան և գարնան առատ ջուր կ'ունենայ: Գետերը կարճ են, արագավազ, կը հոսին քար-

Քարոտ հունով, կիրճերով: Նաւարկելի չեն: Անոնք ուղիներ են բարձրանալու Լիբանանի լեռները ու հասնելու անոնց թիկունքն ինկած Պէքայի դաշտը:

Փիւնիկէի կլիման Միջերկրականեան-ծովային է, քարունը վաղահաս, ամառը տաք և խոնաւ, աշունն ու ձմեռն անձրեւային: Փիւնիկէն իր գոյութիւնը պարտական է ծովուն, պարբերաբար տեղացող անձրեւներուն: Մովամերձ վայրերուն մէջ կլիման վատառողջ է, միայն բարձունքներուն վրայ, լեռներու լանջերուն առողջարար է, խոնաւութիւնը քիչ: Հին ժամանակ Փիւնիկեան լեռները ամբողջութեամբ մինչև ծովի մօտերը ծածկուեր են մայրի անտառներով: Ան դաշտագետիններ չունի, ուստի բնակչութիւնը երկրագործ չդարձաւ: Լիբանանի և Անդլիիբանանի մէջ կը տարածուի Պէքայի ընդարձակ դաշտը, որ ջրառատ է ու պտղաբեր: Անոր տիրապետութեան համար կը կռուէին Արամէացիներն ու Փիւնիկէցիները: Մշակելի հող ծովամերձ շրջանները քիչ ունէր, որով հողի ամեն կտորը արժէք կ'ըստանար: Քարքարոտ հողերը և լեռնալանջերը յարմար էին խաղողի, ձիթենիի մշակութեան, իսկ ծովափնեայ վայրերուն մէջ արմաւենին ամենէն տարածուած բոյն էր: Զիթենին և արմաւենին բնակիչներուն սնունդ կը մատակարարէին. անոնք նաև առևտուրի գլխաւոր նիւթեր կը կազմէին: Կենդանական աշխարհը նոյնն էր ինչ որ հարեւան երկիրներունը:

Իր արտադրութիւնը հազիւ կրնար կերակրել փոքր հասարակութիւն միայն: Բայց անոր բնակչութիւնը շատ աւելի արագութեամբ աճեցաւ, քան ուրիշ երկիրներունը. Միջերկրականը գրաւիչ էր, ձգողական ուժ ունէր: Ամբողջ Արգասաբեր Կիսալուսինը մշտական վտանգի տակ էր անապատի վաչկատուններու կողմէն. մեծ, նուաճողական պետութիւնները Փիւնիկէն դարձուցեր էին խարխալ իրենց արշաւանքներու համար, այս պատճառներով ալ Փիւնիկէն դարձաւ սպաստան, բանակներու կեդրոնացման կայան, առևտրականներու, արկածախնդիրներու հաւաքատեղի:

Ծովափնեայ վայրերուն մէջ սկիզբը բնակչութիւնը կը պարսպէր ձկնորսութեամբ, որմէ անցաւ ծովագնացութեան: Լեռնալանջերուն՝ որսորդութիւն կ'ընէին նախ, իսկ յետոյ սկսան անասնապահութեամբ զբաղուել: Փիւնիկէի ընդհանուր տարածութիւնը հազիւ կը մօտենար տասնըհինգ հազար քառակուսի քիլոմետրի:

ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆԸ.— Ինչպէս ամբողջ արեւելքի մէջ, Փիւնիկէի բնակչութիւնն ալ խառն էր: Յեղերու, ժողովուրդներու հանդիպումը, միաձուլումը սկսեւ էր նախապատմական շրջանին: Անապատներէն, օաղիսներէն այստեղ կուգային մեծ ու փոքր մարդկային զանգուածներ, փնտռելու, ձեռք բերելու հարստութիւն, կեանքի և գոյքի ապահովութիւն, ինչպէս նաև արկածալից կեանք: Նախնական բնակիչները կարճագլուխներ էին, կ'ապրէին քարայրներու մէջ: Նկատելի էր նոր քարէ դարու քաղաքակրթութեան հետքերը: Եգիպտացիները ծանօթ էին անոնց: Երեք հազար թուականի շուրջ, այստեղ երեւացին սեմականները, միաժամանակ անոնք հաստատուեցան Պաղեստին: Այս վերջինները Քանանացիներն էին. երկիրն ալ իրենց անուանով կոչուեցաւ Քանանի երկիր: Նախապէս Փիւնիկեցիք զրաւեր էին ծովափնեայ ամբողջ շրջանը, մինչև Մինայի անապատը, Պաղեստինի ծովափնեայ քաղաքները: Բայց աւելի ուշ այդ տեղերէն անոնց դուրս ըրին նախ Քանանացիները, ապա Փղշտացիները, որոնք նոյնպէս վաճառական և ծովագնաց ժողովուրդներ էին: Փիւնիկէցիները կեդրոնացան հիւսիսային շրջանին մէջ: Լեռնային գօտիէն կը թափանցէին ասիանիկ ժողովուրդները, որոնք իբրև քաղաքական հօր ու ժ տիրեցին Փիւնիկէին, XIV-րդ դարուն, հաթական մեծ պետութեան ժամանակ: Հիւսիսէն կուգային նաև Հնդերոպացիները, որոնք երրորդ հազարամեակի կէսերուն ողողեցին Մերձաւոր Արեւելքի լեռնային գօտին, իսկ երկրորդ հազարամեակի սկիզբը մասն նաև անապատային գօտին: Եգիպտացիներու այս երկրին մէջ երեւալն ալ կ'ըսկսի երրորդ հազարամեակէն: Այսպէս՝

Մերձաւոր Արեւելքի ազգագրական երեք հիմնական կազմիչ տարրերը՝ Ազիանիկներ, Սեմականներ և Հնդեւրոպացիները կը հանդիպին Փիւնիկէի մէջ, Միջերկրականի ծովեզերքին՝ ստեղծելու համար մարդկային այն տիպարը, որ մենք կ'անուանենք Փիւնիկէցի:

Բայց անոր մէջ տիրականը, իշխողը սեմականն էր. անոր լեզուն և կրօնը մնացին միշտ սեմական: Ան պահպանեց իր սեմական նկարագիրը, որովհետեւ անոր թիկունքը սեմական լայնածաւալ աշխարհն էր, ուրկէ շարունակ՝ մարդկային նոր հոսանքներ կուգային թարմացնելու և զօրացնելու սեմական տարրը: Շուրջ հազար թուականներուն ստուարաթիւ Իսրայէլացիներ ալ հոս հաստատուեցան և զօրացուցին սեմական տարրը: Փղշտացիները ասոնց առջև փակեր էին Միջերկրականի դուռները: Միջերկրականի համար մղուած պայքարին մէջ՝ յաղթանակը մնաց Փղշտացիներուն, որուն հետեւանքն այն եղաւ, որ Իսրայէլի ցեղերը մեծ զանգուածներով հաստատուեցան Փիւնիկէ: Եւ ընդհանրապէս Իսրայէլցիներու և Փիւնիկէցիներու մէջ տնտեսական և կրօնական կապեր հաստատուեցան, մանաւանդ Սողոմոնի օրով: Երկուքն ալ կը ձգտէին թուլացնել Փղշտացիները. երկուքն ալ վտանգուած էին անապատի վաշկատուներէն:

ԿԱՐԱՒԱՆԱՅԻՆ ՔԱՂԱՔՆԵՐ.— Փիւնիկէցիները իրենց ուշադրութիւնը երկրի խորքերը, Սիւրբա ուղղել չէին կըրնար: Փիւնիկէի քաղաքներու հզօրացման հետ Սիւրբայի մէջ երեւացին Արամեացիներ և հաստատուեցան Որոնդէսի ափերուն վրայ. մէկ մասը թափառական ու վրանաքնակ, վերջի վերջոյ հաստատուեցաւ Դամասկոսի մէջ, երկրի հին բնակիչներու՝ Ամօվրացիներու կողքին: Ասոնք տասերորդ դարէն մինչեւ ութերորդ դարը (Ք. Ա.) ապրեցան քաղաքպետական կեանքով, բայց ջանացին ստեղծել Դամասկոսի շուրջ արամեական ցեղերու միութիւնը: Անոնց թագաւորները մեծ ճիգ ըրին՝ պատուար կանգնելու Ասորեստանի նուաճումներուն և թոյլ չտալու, որ Ասուրները հասնին

Միջերկրական ծովը: Միեւնոյն ատեն անոնք կ'արգիլէին, որ Փիւնիկեան վաճառականները ցամաքի առևտուրին մասնակից ըլլային: Դամասկոսի հետ մեծցան ու հարստացան Հալէպը, Հոմսը, Երուսաղէմը, Պետրան: Այս քաղաքները իրենց ձեռքն էին պահեր Միջագետք-Յգիպտոսի առևտուրը: Ասոնք կարաւանային քաղաքներ էին, ունէին շատ խառն բնակչութիւն, բայց սեմական գերակշռութեամբ: Անոնցմէ իւրաքանչիւրը կ'աշխատէր խաղաղութիւնն ու ապահովութիւնը վերահաստատել կարաւաններու համար, որովհետեւ միջազգային այդ առևտուրէն շատ մեծ շահեր ունէին: Երբեմն այս քաղաքները կոիւ կ'ընէին կարաւանային ուղիներու այս կամ այն գիծը իրենց ձեռքը պահելու: Մեծ, բանուկ ճամբաներու վրայ պահակներ կը նշանակէին, կարաւաններու ապահովութեան վրայ կը հսկէին զինուած խումբերով: Կարաւանային այս ուղիներու մէկ ծայրն ալ կը հասնէր Փիւնիկեան քաղաքները: Փիւնիկէցիք և Արամէացիք կը մրցէին այս գծի համար: Դէպի Փիւնիկէ տանող այս ճամբան կ'անցնէր Պէքայի դաշտով, որով այդ ընդարձակ և արգասաբեր դաշտը կրկնակի արժէք կ'ըստանար Փիւնիկէի համար:

ԾՈՒՎԸ. — Եթէ կարաւանային-ցամաքային ճամբաները ունէին իրրև իրենց տէրը Արամէացիք, Քանանացիք ու թիկունքը՝ Բաբելոնի վաճառականները, ծովի ճամբան ալ բաց էր Փիւնիկէցիներու առջև: Եգիպտոսը Միջերկրական ծովի ափին միակ մեծ պետութիւնն էր երկար դարեր. բայց ա՛ն իսկական և մեծ ծովային պետութիւն չդարձաւ, սահմանափակ առևտուր միայն ունէր՝ դեռ երրորդ հազարամեակէն սկսած՝ կրէտէի և Կիպրոսի հետ. անոր նաւարկութիւնը գետային էր, առևտուրն ալ գլխաւորապէս ցամաքային. ծովով կապուած էին միայն Փիւնիկէի, Կրետէի և Կիպրոսի հետ: Միջերկրականի առաջին ծովային պետութիւնը ստեղծեց Կրետէն, իրեն շուրջը հաւաքեց Սոքէան կղզիները, Յունաստանի հարաւային և արեւելեան մասերը, մշակեց Սգիեանց շատ վարգացած քաղաքներու

քիւնը: 14-րդ գարու կէսերուն Կրետէի ծովային մեծ պետութիւնը կործանուեցաւ, ան տնտեսական և քաղաքական ասպարէզէն դուրս ինկաւ: Յոյները դեռ կազմաւորուած չէին անոնց տեղը բռնելու, և դեռ չէին ամբողջացուցիր Յունաստանի գրաւումը: Ծովը տէր չունէր, ան բաց էր փրկելից ինքրու առջեւ:

ՔԱՂԱՔ-ՊԵՏՈՒԹԻՒՆ.— Փրկելէն քաղաք-պետութիւններու շարք մըն էր, ամեն քաղաք իր շրջակայքով փոքրիկ պետութիւն մըն էր՝ միշտ ծովի եզերքէն հողաշերտ մը ունենալով, որ անոր նաւահանգիստն էր: Ան հարեւան քաղաք-պետութիւնէն կը բաժնուէր գետակով մը, կամ ուղիղ ծովը իջնող լեռնաշղթայով մը: Ամեն քաղաք մեծ ճիւղ կ'ընէր իր անկախութիւնը պահելու, որու հետեւանքով Փրկելէն մէկ և միացեալ պետութիւն չդարձաւ, թէեւ շատ անգամ այս կամ այն քաղաքը փորձեց իր իշխանութիւնը պարտադրելու միւսներուն: Բաղաք-պետութիւններու կազմութեան և պահպանումին կը նպաստէին նաեւ ծովափնեայ շրջաններու կտրտուածքները և այն, որ ամեն քաղաք-պետութիւն տնտեսական միաւոր մըն էր, ունէր իր նիւթական-առեւտրական շահերը, ամեն տեղ՝ թէ ցամաքի և թէ ծովու վրայ մրցորդ էր միւս քաղաքներու հետ: Կը մրցէին գաղութներու, առեւտրական ուղիներու, հում նիւթերու և շուկաներու համար: Շահերու այս հակադրութիւնը թոյլ չէր տար որ անոնք միանան, կազմեն մեծ պետութիւն մը, թէեւ բոլոր քաղաք-պետութիւններու մէջ ալ միեւնոյն լիզուով խօսող, միեւնոյն կրօնն ու միեւնոյն մշակոյթը ունեցող ժողովուրդ մը կ'ապրէր: Տեղական շահերու հետապնդումը աւելի կենսական էր, քան թէ մէկ ազգային պետութիւն ստեղծելու կամքը: Երբեմն միայն ժամանակաւոր դաշինք կը կնքէին հաւասարակշռութիւնը պահելու համար, կամ կը միանային՝ անապատի թափառական ցեղերու արշաւանքէն պաշտպանուելու համար:

ՊԵՏԱԿԱՆ ԸՆԻՉ.— Նախապէս բոլոր քաղաքներու մէջ իշխանութիւնը կը պատկանէր ժառանգական թագաւորին:

ըռն, ինչպէս արեւելեան միւս միապետութիւններու մէջ, միայն մէկ տարբերութեամբ. փիւնիկեան քաղաք-պետութեանց մէջ թագաւորի իշխանութիւնը սահմանափակուած էր ձերակոյտով մը, այսինքն ամենէն ազգեցիկ ու հարուստ ընտանիքներու ժողովով մը: Փիւնիկեան քաղաքներու մէջ հարստութեան ազբիւրը հողը չէր ինչպէս Եգիպտոսի, Բաբելոնի և Ասորեստանի մէջ, այլ առեւտուրէն ստացուած շահն էր, — ապրանքը, մետաղները, ձոյլ ոսկին, արծաթը: Հողատէր ազնուականութիւնը չէր, որ կ'իշխէր, այլ դրամատէրը: Առեւտուրի մէջ, մեծ քանակութեամբ նաւերու տէր եղողը, ապրանքներ, բարիքներ և յատկապէս մետաղներ ունեցող ընտանիքներն ալ թագաւորի հետ իշխանութեան տէրն էին: Թագաւորն ալ դուրս էր եկած անոնց շարքէն՝ ամենէն հարուստ և ազգեցիկ ընտանիքէն: Այսպիսով փիւնիկեան քաղաք-պետութեանց մէջ ստեղծուեցաւ ճերկայացուցչական իբխանութիւն մը. ձերակոյտի մէջ տեղ կը գրաւէին հարուստ մեծատուն ընտանիքներու անդամները, պահպանողական աւանդութիւններով սնուած, կրօնական արարողութիւնները և ծէսերը սրբութեամբ պահողները: Սիսոնի մէջ անոնց թիւը հարիւրի կը հասնէր. յատուկ տեղ կը գրաւէր ձերակոյտի մէջ քաղաքի պահապան աստուծոյ քրմապետը: Տիրոսի ձերակոյտի մէջ Մելկարտ աստուծոյ քրմապետը թագաւորէն անմիջապէս յետոյ առաջին տեղը կը գրաւէր: Ծերակոյտը կը նշանակէր բարձր պաշտօնեաները, անոր կը պատկանէր պետական գանձի վերատեսչութիւնը, նոր գաղութներ հաստատելու հարցը, պատերազմ յայտարարելը:

Քաղաք-պետութեան մէջ այս երկու ուժերը՝ թագաւորն ու ձերակոյտը շատ յաճախ միասնաբար չէին գործեր: Թագաւորները կ'ուզէին միապետներ դառնալ, նման ուրիշ արեւելեան պետութեանց մէջ եղածին, ձերակոյտը վտանգաւոր կը համարէր իր իշխանութեան համար թագաւորի ժառանգական ըլլալը: Այս հակադրութիւնը կ'ըստեղծէր քաղաքացիական կռիւներ, որու հետեւանքով շատ վայրե-

րու մէջ թագաւորութիւնը ջնջուեցաւ և իշխանութիւնն ամբողջութեամբ անցաւ խոշոր առեւտրական ընտանիքներու ձեռքը: Ստեղծուեցաւ տեսակ մը զրամատէրերու հանրապետութիւն, ուր ծերակոյտը իշխանութիւնը կը յանձնէր Գերագոյն Դատաւորին և անոր օգնականներուն: Երբեմն ալ ասոնք կը փորձէին այդ պաշտօնը ժառանգաբար պահել իրենց ընտանիքներու մէջ: Գերագոյն Դատաւորները 'ոյն լակ կը փորձէին թագաւորութիւնը վերահաստատել: Այս բանը տեղի ունեցաւ Տիրոսի մէջ 'նոր-Բաբելոնի տիրապետութեան ժամանակ՝ վեցերորդ դարուն:

ԲԱՆԱԿԸ.— Ազատ Փիւնիկէցիները նուիրուած էին ծովային առեւտրին, նաւաշինութեան, արհեստներուն, արդիւնաբերութեան: Անոնք բանակի մէջ չէին ծառայեր, այդ գործը շահաւէտ չէր, մանաւանդ հարուստ ընտանիքներու համար: Անոնք ունէին վարձկաններու բանակ մը, որու մէջ տեղ էին գտեր արեւելքի բոլոր ցեղերն ու ժողովուրդները: Միայն բանակի հրամանատարները բնիկ Փիւնիկէցիներ էին: Բանակը ներքին ապահովութեան և անապատի թափառաշրջիկ և արշաւող ցեղերու դէմ պաշտպանուելու համար էր:

ՍՏՐՈՒԿՆԵՐ.— Փիւնիկէի մէջ ստրուկներու թիւը շատ էր, անոնց աշխատանքի վրայ էր հիմնուած ազատներու հարստութիւնը: Ստրուկներ ունէին հարուստ ընտանիքները, տաճարները. ասոնց կ'աշխատցնէին արհեստանոցներու, նաւահանգիստներու, առեւտրական հիմնարկութեանց, և նաւերու վրայ: Անոնք էին թիավարները: Ստրուկներու թիւը շատցաւ ծովահէնութեան, առեւանգման, գնումի միջոցներով: Միջերկրականի բոլոր եզերքներէն Փիւնիկեան վաճառականները գերիներ կը բերէին և իբրեւ ստրուկ կը վաճառէին Տիրոսի, Սիտոնի շուկաներու մէջ: Ստրուկները շատ դաժան պայմաններու մէջ կ'ապրէին: Նաւերու վրայ և հանքերու մէջ աշխատող ստրուկներու ոտքերը շղթաներ էին անցուած՝ թէ չփախչելու և թէ անվտանգ ըլլալու համար: Բնական է, որ ասոնք

ոչինչով կապուած չըլլային փիւնիկեան ազատներու հասարակութեան հետ և յարմար առիթներով փորձէին ապրատամբուել և ազատագրուել: Վարձկան բանակը թէպէտ ասոնց վերահսկելու համար էր, բայց ինքն ալ վստահելի չէր. շատ անգամ անոնց պետերը կը ծառայեցնէին զօրքը իրենց իշխատելութեան համար, կը գրաւէին պետութիւնը և կ'ենթարկէին հարստացած ընտանիքները իրենց կամքին:

ԱՍՏՈՒԱԾՆԵՐԸ.— Ամեն քաղաք իր աստուածն ունէր, իսկ ամեն ընտանիք, գերզատան, տոհմ իր պահապան ոգին: Քաղաքներու այս աստուածներն ալ միութեան, ամբողջական և մէկ պետութեան կազմելու դէմ էին, որովհետեւ իւրաքանչիւր աստուծոյ ծառայող քուրմերը իրենց աստուծուն է, որ կը համարէին ամենէն հզօրն ու կատարեալը և նախանձախնդիր էին անոր առաջնութեան: Քաղաքն ունէր իր տաճարը, բազմաթիւ մասերով: Քաղաքը շրջապատուած էր պարիսպներով, այդ էր միակ ապահով միջոցը անապատի թափառաչը շրջաններու դէմ պաշտպանուելու համար:

ԱՌԵՒՏՈՒՐԸ.— Փիւնիկէի նիւթական հարստութիւնը չէր կրնար կերակրել բազմացող բնակչութեան. պէտք էր ապրուստի նոր աղբիւրներ որոնել և բարիքներ գտնել: Պէտք էր ծովային առեւտուրին դիմել. ամենէն հին շրջանին Փիւնիկէցիք առեւտուր կ'ընէին մօտիկ երկիրներու հետ՝ Եգիպտոսի և Կիպրոսի հետ: Առեւտրական առաջին քաղաքը Բիբլոսն էր, որ շատ կանուխէն կապուեցաւ Եգիպտոսի հետ:

ԲԻԲԼՈՍ.— Բիբլոսը կառուցուած էր Ազոնիսի գետաբերանին, ան փիւնիկեան քաղաքներու «քաղաքամայրն» էր: Բիբլոսի պատմութիւնը կը հասնի մինչեւ երրորդ հազարամեակի սկիզբը. այդ ժամանակէն ան առեւտրական կապեր ունէր Եգիպտոսի հետ: Մեմփիսեան շրջանին հզիպտական նաւեր կ'երեւային Բիբլոսի նաւահանգիստը՝ փայտ, ձիթապտուղ, իւղ, ինչպէս և անասուններ տանելու Եգիպտոս: Շուտով հզիպտական գաղութ մը հաստատուեցաւ

այստեղ և անոնց թիւը այնքան շատցաւ որ անհրաժեշտ համարուեցաւ եգիպտական իղիւս աստուածուհիին համար տաճար մը կառուցանել: Բ, բլոսը դարձաւ արտասահմանը մէջ եգիպտական քաղաքակրթութեան կեդրոնը: Ան տեղ էր գտեր նաեւ եգիպտական կրօնական գիցաբանութեան մէջ՝ կապուած Օզիրիսի և Իզիսի պատմութեան հետ: Բիւրօսը առեւտրական կապեր ունէր նաեւ Միջագետքի հետ: Այնտեղ կը հանդիպէին արեւելքի բոլոր ազգերու վաճառականները և անոր շուկաներու մէջ կարելի էր գտնել արեւելքի բոլոր բարիքները: Եգիպտացիք հոսկէ կ'արտահանէին զանազան անուշահոտութիւններ, օծանելիքներ, իւղեր, Կիւրոսի պղինձը, անագ, արեւելեան գոյնզգոյն պատաններ, ծիրանեգոյն զգեստներ, գործուածքներ: Իսկ իրենք կը բերէին Բիբլոս անօթներ, փղոսկր, ոսկեզէն զարդեր, թայիամաններ, աստուածներու արձաններ: Եգիպտոսէն՝ Բիբլոսը կ'ըստանար պապիրոս, և ատէ կը պատրաստէր գրելու թուղթ: Պապիրոսի ցողունը կը բաժնէին շերտերու, կը թրջէին, շերտերը կը մլացնէին իրարու, որով կ'ըստացուէր մեծ թերթեր: Կը գրէին անոնց վրայ մեյանով և սրածայր փայտէ գրիչով, յետոյ կը ծալէին, կը կապէին և յատուկ դարակներու մէջ կը պահէին: Պապիրոսի այս ձևի գործածութիւնը նպաստեց գրագիտութեան զարգացման. ան ոչ քարակոթող էր, ոչ սիւն կամ աղիւս, այլ թերթեր, թեթեւ և փոխադրելի, շատ տեղ չզբաւող: Անոր վրայ գրելն ալ դիւրին էր: Թերթը և գրիչը մատչելի էին շատերուն: Պապիրոսի այս գիւտը ընդհանրացաւ արեւելքի մէջ և ինքը քաղաքն ալ դարձաւ անոր ամենամեծ վաճառատեղին: Եգիպտական կայսրութեան ժամանակ XV—XIV րդ դարուն Բիբլոսը ինկաւ եգիպտական իշխանութեան տակ, և ան կորսնցուց իր առաջնութիւնը և բացառիկ դիրքը: Պաղեստինի փիերուն նոր քաղաքներ կառուեցան և փիւնիկեան ուրիշ քաղաքներ առաջնութիւն ստացան: Եգիպտոսի համար կենսական անհրաժեշտութիւն դարձաւ Պաղեստինը իր ձեռքին մէջ պահելը, ցամաքային

ուղին աւելի կարեւորութիւն ստացաւ: Բիբլոսի տեղը բռնեց Սիտոնը:

ՍԻՏՈՆ.— Անոր հարստութեան աղբիւրը նախապէս Եգիպտոսի հետ ունեցած նիւթական և քաղաքական կապերն էին: Անոր հզօրութեան շրջանը կը զուգադիպի Եգիպտոսի ասիական կայսրութեան հետ՝ 1500-էն մինչեւ 1250 թուականները: Ուրիշ պատմական դիպուած մըն ալ նպաստեց անոր ծովային հզօրութեան,— Եգէեան կղզիներու և Կրեաէի իշխանութեան անկումը: Սիտոնը օգտուեցաւ ասկէ և քայլ առ քայլ բռնեց անոր տեղը: Անոր ձեռքն անցաւ Կիպրոսի պղինձի արտահանութիւնը: Հաստատուելով Կիպրոսի մէջ՝ Սիտոնի վաճառականները հոնկէ ալ անցան Հոողոս, յետոյ Եգէեան կղզիները: Հոս անոնք կը գնէին մարմար, ծծումբ, ոսկի, խեցիներ, որոնցմէ կ'ըստանային ծիրանի գոյն: Փոքր Ասիոյ ափերով և նեղուցներով անոնք մտան Սեւ ծով, որու հիւսիսային ափերու ժողովուրդներու հետ առեւտուրի սկսան և հոն գտան անագ, ծովասաթ, ցորեն, մորթիներ, մեղր: Այսպէս՝ անոնց առեւտրական ասպարէզը ընդարձակուեցաւ և անոնք դարձան բազմաթիւ ազգեր և ժողովուրդներ իրար կապող միջնորդներ և նիւթական բարիքներ մատակարարողներ: Ուր որ երթային կը հիմնէին իրենց գրասենեակները, շտեմարանները, անմիջապէս հաղորդակցութեան մէջ կը մտնէին տեղացիներու հետ, կ'առաջարկէին իրենց բարիքները, կը փոխանակէին տեղական ապրանքներու հետ, յետոյ իրենց գնածները կը լեցնէին նաւերը և կը վերադառնային: Սիտոնի գաղութները առեւտրական կայաններ էին՝ ծովափէն ոչ հեռու: Իրենց այս գաղութի մէջ ունէին վաճառականական ներկայացուցիչներ, դպիրներ, սուրհանդակներ, տեղացիներ, որոնք կայեր կը հաստատէին ծովէն հեռու բնակող բնիկներու հետ: Գրասենեակը և շտեմարանները պարիսպով կը պատէին ապահովութեան համար, երբեմն ալ կանոնաւոր բանակ կը պահէին: Առաջին անգամ Սիտոնի վաճառականները Միջերկրականի արեւելեան աւազանի ժողովուրդները կապեցին

Սեւ ծովի շուրջ ապրող ցեղերու հետ և մատակարարեցին անոնց բարձրորակ ապրանքներ, մետաղներ, գէնքեր, կաւանօթներ հիւսուածեղէններ. տուին անոնց այն ապրանքները, որոնք կը պատրաստուէին Բաբելոնի, Դամասկոսի և ուրիշ քաղաքներու մէջ: Տնտեսական այս շրջանառութեան մէջ ինկան Եգիպտոսը, Կրետէն, Եգէտան կղզիները, Թրակիայի ափերը, Դանուբի գետաբերանի շուրջն ինկած երկիրները, Փոքր Ասիոյ ծովամերձ շրջանները, Միջագետքը, Սիւրիան: Ասոնց միացնողը փիւնիկեան քաղաքներն էին: Անոնք նպաստեցին ժողովուրդներու փոխադարձ ծանօթացման, կրօնական քաղափարներու տարածման: Սիտոնը և փիւնիկեան քաղաքները չբաւականացան միայն առեւտրական միջնորդի դերով, աստիճանաբար անցան արդիւնարեւութեան, հում նիւթերու մշակման: Օտար շուկաներու մէջ ծանօթացան տեղացիներու ճաշակին, պահանջին և փորձեցին բաւարարել անոնց:

Այդ նպատակով բոլոր քաղաքներու մէջ հիմնուեցան արհեստանոցներ: Ասոնք ընդարձակ տուներ էին, ուր արհեստաւորները կը հաւաքուէին միասին աշխատելու որեւէ արդիւնարեւորդի համար, որ անոնց կը հայթայթէր հում նիւթը: Այս նորութիւն մըն էր, որ Փիւնիկէ մուծեց տընտեսութեան ձեւերու զարգացման մէջ: Արդէն սկսած էր դուրսէն ստանալ մետաղ, ձոյլ ոսկի, արծաթ, և անոնցմէ կը պատրաստէր գէնքեր, զարդեր, գործիքներ, որոնք մեծ յարգ ունէին միջագոյսին շուկաներուն մէջ: Սիտոնի մէջ զարգացաւ մետաղագործութիւնը, ոսկերչութիւնը և փորագրութիւնը: Իր գործարաններու մէջ կը պատրաստէին ընտիր կերպաններ, կը ներկէին ծիրանադոյն, ասոնք շատ մեծ յարգ ունէին արեւելքի թագաւորներու, իշխաններու պալատներուն մէջ, ինչպէս քրմական դասի մօտ: Սպանիայէն, Ափրիկէէն Սիտոնցիները կ'ըստանային բուրդ, բամպակ, որով մեծ թափ կ'ըստանար մանուածեղէնի և հիւսուածեղէնի արդիւնարեւութիւնը:

ՍԻՏՈՆԻ ԱՌԵՏՏՈՒՐԻ ԱՆԿՈՒՄԸ.— XIII րդ դարու կէսերուն Սիտոնի առեւտուրը տագնապի կ'ենթարկուի: ՃՕ՛՛՛

վային ժողովուրդները» կը յեղաշրջին Մերձաւոր Արեւելքի կարգն ու խաղաղութիւնը, քաղաքական կայունութիւնը: Եգէեան կղզիները, Փոքր Ասիոյ ափերը, նեղուցները կ'իյնան նոր ժողովուրդներու ձեռքը, որոնք շարունակ շարժման մէջ էին: Սիտոնը այդ վայրերու մէջ կորսնցուց իր շուկաները: Աւելի հարաւ՝ XII-րդ դարուն երեւացին Փղշտացիները, մէկ հասուածը «Մովբու ժողովուրդներու», որոնք գատուելով մայր խումբէն կրեաէի վրայով եկան հաստատուելու Քանանի ափերուն, Պաղեստինի մէջ: Անոնք լաւ ծանօթ էին Միջերկրականի արեւելեան աւազանին, յանդուգն նաւագնացներ էին ու իբրև ճարպիկ վաճառականներ՝ մրցորդ էին Փիւնիկէցիներուն: Սիտոնցիները պայքարի մէջ էին այս վերջիններուն հետ Պաղեստինի ծովեցիքի և Եգիպտոսի շուկաներու համար: Փղշտացիները շատ լաւ գինուած էին, անոնց բանակը ազգային էր, այսօրինքն բոլոր Փղշտացիները առեւտրական ըլլալով հանդերձ զինուորներ ալ էին: Այս բանակով անոնք 1209 թ. գրաւեցին Սիտոնը, քանդեցին նաւահանգիստը, բնակչութիւնն ալ գերի տարին. և այս բոլորը անոնք ըրին դեռեւս Պաղեստինի մէջ ամուր հաստատուելէ առաջ: Այս բոլորի հետեւանքով Սիտոն նախկին գաղութները կորսնցուց, գրասենեակներն ու պահեստները աւարի տրուեցան, առեւտրական դասը սնանկացաւ, արհեստաւորներու դասը աշխատանքէն զրկուեցաւ, սկսան ներքին շարժումներ, քաղաքացիական կռիւ, որուն մասնակից եղաւ վարձկան զօրքը: որ լաւ ու կանոնաւոր չէր վարձատրուեր:

Որով գաղութները և շուկաները կորսնցուցած, ներքին ճակատի վրայ պառակտուած՝ Սիտոնը XII-րդ դարու կէսերուն ոկսաւ դէպի անկում դիմել: Ան իր գոյութիւնը՝ իբրև առեւտրական քաղաք՝ պահեց մինչեւ VIII-րդ դար՝ մինչեւ Ասորեստանի տիրապետութիւնը, բայց միայն իբրև երկրորդական կարգի քաղաք-պետութիւն: Անոր տեղը բռնեց Տիրոսը:

ՏԻՐՈՍ.— Ան կառուցուած էր քանի մը փոքր կղզիներ

բու վրայ, ցամաքէն մէկ քիլոմետր հեռու: Անոր բնակչութեան մէկ մասն ալ կ'ապրէր եզերքին՝ կզզիի դիմաց: Ան այնքան հեռու էր ցամաքէն, որ կրնար ապահով զգալ ղուրսի յարձակումներէն և այնքան մօտ էր, որ ամեն րաբիք, յատկապէս ջուր, կրնար ստանալ հոնկէ: Կզզիին դիմացի ընդարձակ տարածութիւնը՝ իր դաշտերով, արաւորով, մրգաշատ պարտէզներով և այգիներով բարգաւաճ գիւղերով, կը մտնէր անոր քաղաք-պետութեան մէջ: Տիրոսը մօտ էր Իսրայէլի պետութեան և սերտ ու բարեկամական հաղորդակցութեան մէջ էր անոր ու Յորդանանի հետ, ուրկէ կ'ըստանար հացահատիկ: Ամենամեծ կզզիին վրայ կառուցուած էր միջնաբերդը, ուր կը հաւաքուէր ծերակոյսը, հոն էր արքայական պալատը և տաճարը:

Միտոնի աւերումէն ու թուլանալէն ետքն է, որ Տիրոսը դարձաւ Միջերկրականի ամենամեծ, հարուստ և առեւտրական քաղաքը: Ան հիմնուած էր երրորդ հազարամեակի սկիզբներուն, բայց հզօրացաւ և միջագային համբաւի տիրացաւ միայն XII-րդ դարու վերջերուն: Եւ այդ դիրքն ու հարստութիւնը, ինչպէս և ծովու տիրապետութիւնը ան պահեց մինչեւ ութերորդ դարու վերջը՝ Ասորեստանի աշխարհակալութիւնը: Անոր ծովային գերակայութիւնը տեւեց չորս հարիւր տարի: Այս՝ Մերձուտը Արեւելքի պատմութեան այն շրջանն է, երբ Եգէեան Աշխարհը դանդաղօրէն կը կերպարանափոխուէր և կ'ըստանար յունական դրոշմ, երբ Յոյները կը բռնէին Եգէեան ծովը շրջապատող բոլոր փոխերը:

Միջերկրականի հարաւը և արեւմուտքը, Հռոդոսը, Յոնիական ծովը, Արեւմտեան Միջերկրականը սակայն բաց էին Տիրոսցիներու առաջ: Անոնք հաստատուեցան Կիպրոսի, Կիլիկիոյ մէջ, բայց աւելի հիւսիս չթափանցեցին: Հարաւի մէջ անոնք սերտօրէն կը գործակցէին Իսրայէլի հետ. երկուքն ալ ունէին իբրեւ ընդհանուր թշնամի՝ Փղշտացիները: Ասոնք առաջիններու դէմ փակեր էին ծովու դռները, իսկ միւսի հետ կը մրցէր ծովերու տիրա-

պետութեան համար: Տասներորդ դարու կէսին Տիրոսի թագաւոր Հիրամը (969—935) դաշնակցեցաւ Իսրայելի՝ Սողոմոն թագաւորի հետ: Տուաւ անոր ամեն տեսակի շինանիւթ, փորձուած ճարտար սպետներ ու վարպետներ Երուսաղէմի առճարի շինութեան համար: Անոր նուատորմիզը առաջինն էր Միջերկրական ծովուն մէջ: Սողոմոնը Հիրամի օժանդակութեան փոխարէն կ'ուղարկէր անոր ցորեն, մետաղներ, դրամ և անոր կը յանձնէր իր պետութեան հիւսիսային նահանգին Գալիլիայի քսան քաղաքները: Հիրամը առկէ առաջ՝ Դաւիթին օգնած էր բանուորներով, ճարտարապետներով՝ Երուսաղէմի մէջ արքայական պալատին շինութեան առթիւ: Դաւիթը և Սողոմոնը իրենց հերթին կ'ապահովէին կտրուանային այն ճամբան, որ հարուստ էն, կարմիր ծովէն՝ կ'անցնէր Քանանի վրայով և կը հանգէր Փիւնիկիի նուահանգիստները: Հիրամը կ'իշխէր նաեւ Միսոնի վրայ, ծովային առեւտուրի մէջ ձեռք բերած իր հարստութիւնը ան գործադրեց երկու քաղաքները գեղեցկացնելու նոր շինութիւններով, պալատներով, տաճարներով, ջրանցքներով:

Սկիզբը Տիրոսը առեւտուր կ'ընէր բացառապէս Եգիպտոսի հետ, Մեմփիսի մէջ մէկ ամբողջ թաղամաս կար ուր միայն Տիրոսցիները կ'ապրէին: Անոնց արժէքը և ազդեցութիւնը այնքան մեծ էր փարաւոնի արքունիքին մէջ, որ կրցեր էին արտօնութիւն ձեռք բերել՝ Նեղոսի ջրանցքներէն մէկով կարմիր ծով իջնելու իրենց նաւերով: Այս բանը անոնց առջեւ կը բանար Արարիոյ և Արեւելեան Ափրիկէի շուկաները: Սողոմոնը նաևատորմիզ չուներ, բայց ան պայման կապեց Հիրամի հետ, որ Տիրոսի նաևատորմիզը Իսրայելի արտագրութիւնները բաշխէր Միջերկրականի երկիրներուն՝ իսկ հոնկէ ալ ներմուծէր Սողոմոնին անհրաժեշտ ապրանքները: Երբ Նէխատյ փարաւոնը ուզեց եգիպտական առեւտուրի առջեւ բռնալ Արեւելեան Ափրիկէն, ան դիմեց Տիրոսի ծովագնացներուն: Ասոնք ուսումնասիրեցին Ափրիկէի ափերը, և վերադար-

ձան Եգիպտոս Արեւմտեաքէն՝ Ճիպրալդարի նեղուցէն՝ կատարելով շուրջափրիկեան առաջին ճամբորդութիւնը:

ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒ ԾԱՒԱՂՈՒՄԸ.— Տիրոսի գաղութային ծաւալումը գլուխ եկաւ Արեւմտեան ուղղութեամբ. ան գիմեց Արեւմտեան Միջերկրականը, Արեւելքը թողնելով Յոյներուն: Տիրոսցի վաճառականները հաստատուեցան Մալթայի, Սիկիլիոյ, Սպանիոյ, Հիւսիսային Ափրիկէի և Գալիլիոյ մէջ: XI-էն VIII-րդ դարերու շրջանին, Արեւմտեան Միջերկրկրականը ազատ դաշտ էր հոն անոնք չէին հանդիպիր ոչ մէկ կազմակերպուած ուժի, որով առանց դժուարութեան ծաւալեցան անոր բոլոր ափերուն վրայ: Անոնք իրենց ուղեգործը գաղտնի կը պահէին, իրենց գաղութները ոչ մէկ մրցակից քաղաքի թոյլ չէին տար մուտք գործելու, և կը հաստատէին իրենց առեւտրական մենատիրութիւնը: Յատկապէս Տարսիսը — սպանական Անդալուզեան — ամեն գնով կը պաշտպանէին, որովհետեւ ան հարուստ էր ցորենով, կապարով, ոսկիով: Աստուածաշունչի մէջ Եսայի մարգարէն կը խօսի այն երկիրներու մասին, որոնց հետ Տիրոսը առևտուր կ'ընէր, կը թուէ այն բարիքները, որ ան կ'ըստանար օտար աշխարհներէն և այն ճոխութիւնը, որու մէջ Տիրոսցիները կ'ապրէին: Տիրոսը համաշխարհային հռչակ ունեցող շուկայ ունէր, ուր կը կեդրոնանային Միջերկրականի և Մերձաւոր Արեւելքի բարիքները և ուրկէ կը ցրուէին ամեն ուղղութեամբ: Անոր այս հարստութեան համար է, որ Արեւելիան մեծ պետութիւնները ամեն ջանք կը թափէին իրենց գերիշխանութիւնը տարածելու անոր վրայ: Ասոր հետանցիք երկար ժամանակ փորձեցին գրաւել այդ քաղաքը: Առանց Տիրոսի տէր դառնալու Միջերկրականի ափերուն հաստատուելը անկարելի էր: Տիրոսցիներուն Ասորեստանի դէմ կ'օգնէր Եգիպտոսը, բայց երկարատեւ պայքարէն յետոյ, Տիրոսը կը համաձայնէր հարկ վճարել Տիգլատ-Պալասար III-ին: Իր հերթին Միջերկրականի առևտրական մեծագոյն քաղաքը կ'օգնէր բոլոր այն ուժե-

րուն, որոնք կը պայքարէին Ասորեստանի դէմ՝ Գամասկոսին, Սամարիային, Երուսաղէմին: Ան տասներեք տարի (585--573) դիմադրեց Նաբուգոդոնոսորին, որ պաշարեր էր քաղաքը: Այսքան երկար ժամանակ ան դիմացաւ շընորհիւ Եգիպտոսի և իր հեռաւոր գաղութներու օգնութեան: Այս պաշարումը ծանր հարուած հասցուց անոր, քայքայուեցաւ իր ասեւտուրը, կորսնցուց գաղութներէն շատերը: Արդէն Արեւմտեան Միջերկրականի մէջ կը կազմակերպուէին այն ուժերը, որոնք ասելի ուշ դուրս պիտի վտարէին Փիւնիկէցիները այդ շրջանէն, այսինքն Յոյները և քիչ յետոյ Հռոմէացիք: Ի վերջոյ Տիրոս համաձայնութեան եկաւ Բաբելոնի հետ՝ ընդունեց անոր գերիշխանութիւնը: Իր նաւատորմիղը յետ այսու պիտի ծառայէր Բաբելական երկրորդ միապետութեան: Այս համաձայնութենէն ետքը շատ գաղութներ անջատուեցան: Այնուհետեւ է, որ Արեւմտեան Միջերկրականի մէջ առաջնութիւնը անցաւ Կարթագէնին, որ իր շուրջը համալսմբեց Փիւնիկեան բոլոր գաղութները Արեւմուտքի մէջ:

ԿԱՊԸ ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒ ԵՒ ՓԻՒՆԻԿԵԱՆ ՔԱՂԱՔՆԵՐՈՒ ՄԷՋ.— Փիւնիկէցիք առաջինն էին, որ հիմք դրին տընտեսական արժէք ունեցող գաղութներու: Առեւտուրէն փիւնիկեան քաղաքները անցան ճարտարարուեստին և իրենց բարիքները տեղաւորեցին Միջերկրականի երկու աւազաններու շուրջը ինկած երկիրներու, ինչպէս և Մերձաւոր Արեւելքի բոլոր երկիրներու մէջ: Փիւնիկեան քաղաքները գերբնակուած էին, սկսած X-IX-րդ դարերէն բնակչութիւնը սկսաւ գաղթել դէպի Արեւմուտք. գաղութները ստացան Փիւնիկեան բնակչութիւն: Տեսանք, որ Եգիպտոսի մէջ հին գաղութ մը կար. Մեմփիսը ունէր իր Փիւնիկեան թաղամասը: Գաղութներու մէջ անոնք կ'ապրէին իմի հաւաքուած. ունէին իրենց առեւտրական գրասենեակները, պահեստները, ասոնց քովը կը բարձրանար հովանաւոր Աստուծոյ մատուռը: Գաղութն ունէր իր դատարանը, տեղացիներու հետ կը շփուէին միայն առեւ-

տուրի ժամանակ: Գաղթականական շարժումը մեծցաւ
IX-րդ դարէն, իբրև հետեւանք Տիրոսի. Սիտոնի մէջ տեղի
ունեցող ներքին կռիւներու՝ թագաւորներու և ծերակոյտի
մէջ, անգործ արհեստաւորներու և ճարտարարուեստի տէ-
րերու մէջ, ստրուկներու և վարձու զօրքի ապստամբու-
թեանց և արտաքին քաղաքացիական յարձակման: Պարտուած կող-
մը կը լքէր իր հայրենիքը և կը գաղթէր հեռաւոր վայ-
րեր բախտ որոնելու: Այս ձեւով է, որ Հիւսիսային Ափրի-
կէի մէջ կառուցուեցան մէկ քանի քաղաքներ: 814 թ.
հիմնուեցաւ կարթագէնը: Անոր հիմքը դրին Տիրոսի գաղ-
թականները Դեկոն թագուհիի առաջնորդութեամբ:

Փիւնիկեան քաղաք-պետութեանց իշխանութիւնը չէր
տարածուեր գաղութներու վրայ, անոնք անկախ և ինք-
նավար միութիւններ էին: Միայն տնտեսական կապերով
կապուած էին մայրաքաղաքի հետ, այսինքն իրենց բա-
րիքները կուտային անոր և փոխարէն կ'ըստանային ու-
րիչ բարիքներ: Բայց կար անոնց մէջ ամենէն կարեւորը՝
կրօնական կապը: Ամեն տարի գաղութի տաճարը կ'ուզար-
կէր տասանորդ մայր հայրենիքի Աստուածուհիին՝ Աստար-
տէին, Մելքարդին: Այս եկամուտը՝ յօգուտ մայր հայրե-
նիքի տաճարին՝ կը կոչուէր «Տանարի օուրֆ»:

ՓԻԼՆԻԿԵԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ

Փիլնիկէցիները մեծ ընդունակութիւն ցուցադրեցին վաճառականութեան և ճարտարարուեստի մէջ: Այդ աս պարէզներու մէջ անոնք մրցակից չունէին: Հոգեւոր մշակոյթի մէջ, սակայն՝ ինքնուրոյն բան մը չստեղծեցին. ըստեղծագործողներ չէին, այլ ուրիշներու ստեղծածը իւրացնողներ: Գործնական միտք ունէին, վերացական գաղափարներու, կրօնական մաքուր յղացումներու, արուեստի մէջ ինքնատիպ բան մը չթողուցին: Անոր համար շատ աւելի խոր, անշահախնդիր հոգի պէտք էր, որ Փիլնիկեցիին կը պահէր: Անոնց աստուածներն ալ զուրկ էին ինքնուրոյն գծերէ, բոլոր քաղաք-պետութիւններու աստուածներն ալ նոյն նկարագիրն ունէին, նոյն յատկանիշները, միայն կը տարբերէին իրենց անուններով: Կրօնի մէջ ստեղծագործութեան պակասը այն աստիճանի կը հասնէր, որ թէեւ ծովերու տէր և ծովափնաց, չունէին անգամ ծովերու, Կալաքնացութեան յատուկ աստուած մը. ծովն էր անոնց հարստութեան աղբիւրը, բայց ծովի աստուծուն պաշտամունք չմատուցին: Փիլնիկէցիք ամեն բանի մէջ աւանդապահներ էին, պահպանողականներ՝ ընտանեկան բարքերու, ժառանգութիւն ստացած կրօնական գաղափարներու: Նորը միշտ անոնց մտքին մէջ կը կապուէր ընկերային վերիվայրումներու, հարստութեան, դիրքի կորուստի հետ, ուստի միշտ կը կառչէին հինին, աւանդականին: Հին սեմական աստուածները, գրեթէ անփոփոխ, պահեցին իրենց գոյութիւնը Փիլնիկէցիներու մօտ: Փիլնիկէն շատ երկար ժամանակ ուրիշներուն ենթակայ եղաւ, այս ալ նշանակութիւն ունեցաւ անոնց կրօնի, արուեստի կազմաւորման համար:

ԿԻՕՆԸ.— Ինչպէս արեւելեան բոլոր երկիրներու մէջ փիւնիկեան ամեն քաղաք ունէր իր աստուածը, հովանաւոր ոգին, որ քաղաքի տէրն էր: Փիւնիկէցիները ունէին զուգակից սասուածութեան գաղափարը: Հաւանաբար այս բանը հաթական էր ծագումով:

Արագ քաղաքի մէջ աստուած կը կոչուէր Դագոն, ծովային միակ աստուածն էր, որ Փիւնիկէցիք ունէին, ան ալ սումէր—ակադական էա աստուծոյ մէկ տարբերակն էր: Ան ծովագնացներու պահապան ոգին էր: Սիտոնի մէջ կը պաշտէին Էսմուներ, երկրի, հողի աստուածը, որ միաժամանակ առողջութիւն բաշխողն էր և ընտանեկան բարքերու պահապանը: Բիրլոսի մէջ հովանաւոր աստուածը Ագոննիսն էր. անոր սրբացումը միացած էր Աստարտէ աստուածուհիի հետ, որ մէկ տարբերակն էր Բարելոնի Իշտարի: Տիրոսի մէջ կ'իշխէր Մելքար, որ կը նշանակէր տէր, թագաւոր: Եւ իրօք Մելքար-Մելիք սկիզբը կը նշանակէր աշխարհիկ իշխան, երկրի տէր, ապա միայն ան ստացու երկրնքի տէր, աստուած իմաստը: Ան Տիրոսի հիմնադիրն էր. անոր շուրջն ստեղծուեցին դիցավէպեր. կարթագենի աստուածը Բահաղ—Ամոնն էր, խոյի գլուխով, որ կը յիշեցնէր անոր կենդանական ծագումը:

Ամենէն հին ժամանակ Փիւնիկէցիները կը պաշտէին բնութեան երեւոյթները, այն բոլորը, ինչ որ աստուածներու հետ կապ կրնար ունենալ և ինչ որ կրնար ազդել իրենց բախտի վրայ: Այսպիսով ստեղծուեցաւ լեռան, քարի, ջուրի, երկրի, աստղերու և երկնքի պաշտամունքը: Հասկէ ալ սովորութիւն դարձաւ, որ իրենց սրբավայրերը, մասուռները կառուցեն բարձր տեղերու, ըլլուներու վրայ կամ գետերու, աղբիւրներու ակունքներու մօտ:

ՏԱՃԱՐՆԵՐԸ.— Անոնց տաճարները շատ պարզ կառուցում ունէին: Փիւնիկէցիներու գործնականութիւնը հոս ալ կ'երեւար՝ մեծ ծախս չընել աստուածներու համար շքեղ և մեծ տաճարներ կառուցելու, ինչպէս կ'ընէին Եգիպտոսի և Բարելոնի մէջ: Տաճար ունենալը անոր ճշխացումը՝ նուրի-

րաբերութիւն մըն է հաւատացողի կողմէն՝ աստծուն: Ան հաւատքի և նուիրումի գործ է. այս զգացումը տիրական էր Սգիպտոսցիի սրտի մէջ. այդպէս չէր փիւնիկէցին. ան ոչ այդ խոր հաւատքն ունէր, ոչ ալ այդ նուիրումը: Անոր կրօնը ծէս էր և արարողութիւն: Փիւնիկեան տաճարը մէկ շրջափակ, պարսպապատ տարածութիւն էր՝ անոր կեդրոնը կը բարձրանար մատուռը, դիմացը զոհարե-
րութեան սեղանը, ապա աղբիւր մը կամ սրբազան աւազանը, իսկ մօտերը սրբազան անտառը: Պաշտամունքի առարկայ էր ծառի բունը. ծառի և աստուածութեանց մէջ սերտ կապ կար: Ադունիսը ծնունդ էր առեր ծառէն, ծառը յաւերժական կենդանութեան խորհրդանիշն էր, մեռնող, բայց միշտ վերածնունդ աստուած գաղափարի մարմնացումը: Բարի պաշտամունքը նոյնպէս մեծ տեղ կը բռնէր Փիւնիկէցիներու մօտ. կոնսաձեւ քարը՝ Բեթելը՝ կը նշանակէր աստուած բնակավայր: Սրբազան քարի պաշտամունքը գոյութիւն ունէր նաեւ Քանանացիներու և սեմական բոլոր ժողովուրդներու մէջ. ան յարատեւեց մինչեւ Արարները, որոնց կրօնի մէջ Մէքքայի սրբազան քարը առաջնակարգ տեղ ունի:

Քրիստոսութիւն. — Փիւնիկէի մէջ աստուածներու սպասարկութեան համար գոյութիւն ունէր կազմակերպուած քրմական դաս, անոնք քաղաք-պետութեանց մէջ կը խաղային նաեւ քաղաքական դեր — ծերակոյտի և դատարանի անդամներ էին. քրմայետը թագաւորէն ետքը երկրորդ դէմքն էր պետութեան մէջ: Քրմայետութիւնը քանի մը քաղաքներու մէջ ժառանգական էր, ան մեծ հարստութեան և դիրքի տէր էր: Երբեմն ալ աշխարհիկ իշխանութիւնը՝ թագաւորութիւնը անոնց ձեռքը կ'իյնար. քուրմերը դուրս կու գային հարուստ և ազդեցիկ տուներէն և անոնց աշխարհիկ ու առեւտրական հակուրմներն ալ կը բերէին քրմութեան մէջ: Տաճարը մեծ կալուածներ ունէր, ան մասնակից էր առեւտուրին, ճարտարարուեստին, ունէր արհեստանոցներ, ստրուկներ: Գուրմերու մէկ մասը տաճա-

րական տնտեսութիւնը կը կառավարէին: Տաճարները և քրմական դասը կը հարստանային գաղութներէն ստացած նուէրներով, որ տասանորդի ձեւով ամեն տարի կու գար մայր տաճարի համար: Տաճարը և աստուածները միակ մնայուն կապն էին գաղութի և մայր հայրենիքի մէջ, սւտի և տաճարի դիրքի բարձր ըլլալը, անոր պայծառացումը քուրմերու և ծերակոյտին համար կ'ըստանար քաղաքական արժէք: Ամեն տարի գաղութներէն ուխտաւորներու մեծ խումբեր կու գային տաճարին մէջ աղօթելու և նուէրներ կը բերէին:

ԶՈՂԱՔԵՐՈՒԹԻՒՆ.— Փիւնիկեան կրօնը պատմական շրջանին պահեր էր զոհաբերութեան այն ձեւը, ինչ որ ուրիշ ազգեր կանուխէն լքեր էին: Աստուածներուն կը զոհէին կենդանիներ, բայց երբ քաղաքի մը հիմնադրութիւնն ընէին, կամ աստու համար տաճար կառուցանէին կամ երբ քաղաք-պետութիւնը օրհասական կացութեան մէջ իյնար, այն ժամանակ աստուածներու մարդկային զոհեր կը մատուցանէին և այն ալ ազնուական ու հարուստ ընտանիքներու անդրանիկ և արու զաւակները: Զոհաբերութեան այս ձեւը յարատեւեց շատ երկար ժամանակ կարթագենի մէջ: Այս զոհաբերութիւնը փաստ է փիւնիկեան կրօնի՝ բարոյական մեծ, բարձր պահանջներու պակասութեան: Մարդկային զոհաբերութեան սովորութիւնը կար արեւելեան միւս ազգերու մէջ ալ, բայց Եգիպտոսի և Բաբելոնի մէջ ստորուկներ կը զոհէին: Այդ սովորութիւնը երկար մնաց Քանանացիներու և Հրեաներու մօտ:

ՅԱՐՈՒՅՅԵԱԼ ԱՍՏԾՈՒ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ.— Ամբողջ արեւելքի մէջ աստուածներն ունէին տեղական հանգամանք՝ անոնք տոհմերու, նոմերու, քաղաքներու, քաղաք-պետութեան և ազգային պետութեան հետ էին կապուած, կրօնական քաղաքարի զարգացումը զոյգ կ'ընթանայ ընտանիքի և քաղաքական հովովոյթի հետ: Այդպիսի աստուածներու զործունէութիւնն ալ պարփակուած էր այդ սահմաններու մէջ: Բայց մարդկային միտքը կ'ըստեղծէ աստ-

ուածութիւններ, որոնք կը կտրեն, կ'անցնին քաղաքական սահմանափակումները և իրենց հզօրութեան, ուժին կ'ենթարկեն բովանդակ բնութիւնը, տիեզերքը, հասարակ մարդկութիւնը: Այսպէս էր Ամենոֆիս IV-րդի կրօնական յեղաշրջման իմաստը: Փիւնիկէի մէջ տեղական աստուածներէն բարձրացաւ Աօնիս աստու պաշտամունքը: Ան փիւնիկեան արտայայտութիւնն էր Մերձաւոր Արեւելքի մէջ տարածուած մէկ աստուծոյ, որ զանազան անուններով յայտնի էր: Սեմականներու, Բաբելոնի մէջ ան կը կոչուէր Դումուզի, սիւրիական-արամէական աշխարհին մէջ Թամուզ, Եգիպտոսի մէջ Օզիրիս: Ասոնց մէջ ընդհանուրը այն էր, որ մինակ չէին, այլ ունէին իրենց զուգակից աստուածուհիները: Այսպէս Թամուզի հետ կը կապուէր Իօսաբի անունը, Օզիրիսի հետ՝ Իզիսի անունը, իսկ Ադոնիսի հետ Ասթաթէն: Ասոնց շուրջը կ'ըստեղծուէին զրոյցներ, կը մշակուէին դիցաբանութիւններ, վիպական պատմութիւններ: Այս աստուածները արտայայտութիւնն էին բնութեան մէջ յաւերժօրէն իրարու յաջորդող կեանքի և մահուան: Երկրագործ հասարակութեան կեանքի մէջ շատ մեծ դեր կը խաղար ջուրը, հողը, բոյսը, անապատը: Ասոնց դիտողութենէն մարդը կը հանէր կեանքի և մահուան յաւիտենական պայքարի գաղափարը: Արեւելքցիին համար ամենէն խորհրդաւոր բանը բոյսերու, հացահատիկներու աճն էր, կեանքի փթթումը, կանաչադեղ դաշտերու, անտառապատ լեռներու ծաղկումը, ինչպէս և աշնան անոնց կորուստը, մահը: Փիւնիկէցիներու մօտ՝ կեանքի վերածննդութեան այս գործը կը կապուէր Ադոնիսի և Աստարտէի անուան հետ: Անոնց շուրջը հիւսուած էր դիցավէպ մը: Աստարտէն կը սիրէ Ադոնիսը: Խանդի, նախանձի մէկ գազան աստուածը՝ մահացու կերպով կը վիրաւորէ Ադոնիսը փիւնիկեան անտառնեքու մէջ: Աստարտէն կ'ողբայ իր սիրածի կորուստը, կ'որոնէ, կը գտնէ անոր մարմինը և կը դնէ դագաղի մէջ: Ամբողջ ժողովուրդը կը սզայ աստուծոյ մահը, կանայք կը կտրեն իրենց մազերը, կ'արիւնոտեն դէմքերնին: Աւթ օր

յնտոյ Ադոնիսի յարութիւն կ'առնէ Աստարտէի կախարդական հնարքներով: Կ'ըսկսի ուրախութեան, տօնի օրերը, կը տօնեն Ադոնիսի յարութիւնը: Քուրմերը տաճարի մէջ կը յայտարարեն մեռած աստուածութեան յարութիւնը: Անոնք ժողովրդին կը ներկայացնեն մեռնող և յարութիւն առնող աստուած կեանքի դրուագները: Ամեն տարի, գարնան և աշնան Փիւնիկէցիները կը տօնեն Ադոնիսի յարութեան և մահուան տօնը: Ան տեղի կ'ունենայ բուսականութեան աճի և մահուան ժամանակ, երբ Ադոնիս գետը լեռներէն իր հետ կը բերէր կարմիր աիդով ներկուած ջուրը: Հաւատացեալները կ'ըսէին Ադոնիսի արիւնն է այդ:

ԱՅՔՈՒՒՅՆՆԸ. — Փիւնիկէցիք մարդկութեան աւանդ թողուցին աւելի մեծ բան մը, որ մինչեւ հիմա ալ մեր մշակոյթի մասը կը կազմէ. այդ այբուբէնն է: Մինչեւ XIII-րդ դարու վերջերը արեւելքը կը ճանչնար շատ բարդ գրութեան ձեւեր՝ մեհենագիրը և սեպագիրը: Այս գրութիւնները թէ հասկնալը, կարդալը, թէ գրելը մեծ ժամանակ և աշխատանք կը պահանջէին: Ամեն գրութիւն կը պարունակէր գաղափար մը, հնչիւն մը, որը մէկ գիր էր, որը մէկ վանկ, մէկ ամբողջ պարբերութիւն, մէկ առարկայ: Այսպէս կը գրէին քարակոթողներու, աղիւններու, տաճարներու պատերու և սիւներու վրայ: Ասոնք փոխադրելը դժուար էր, անկարելի. գիր պարունակող նիւթը գամուած էր տեղին, անշարժ էր: Փիւնիկէցիները զործի և գործնական մարդիկ էին, միշտ շարժուն և միշտ հաղորդակցութեան մէջ իրենց հետաւոր գաղութներու, առեւտրական գործակալներու հետ: Պէտք էր այդ բոլորին յարմարեցնել գիրն ալ, գրելիք նիւթն ալ: Հոսկէ ալ պապիրուսի թուղթի գիւտը: Քարը և աղիւսը կը մնային գործածութեան մէջ, բայց այդ ալ մեծ դէպքերու, յաղթանակներու արձանագրութեան, ինչպէս և աստուածներու պատուէրները յայտնելու, յաւերժացնելու համար: Փիւնիկէցիները վաճառականներ էին, ցրուած Միջերկրականի բոլոր ափերուն: Անոնց գործը կը պահանջէր արագութիւն և պարզութիւն:

Ասոր համար պատկերագիրը և սեպագիրը յարմար չէին: Պէտք էր պարզ դարձնել գիրը: Եւ ահա Փիւնիկեան գիտունները, հաւանաբար դուրս եկած քրմական դասէն, կը փոխեն գրելու սկզբունքը: Ամեն հնչիւն մէկ նշան, ամեն նշան մէկ հնչիւն — ահա նորութիւնը, որ կը բերէին Փիւնիկէցիները: Այդ նշանները այլեւս ոչ պատկերագրեր էին, ոչ սեպագրեր, բառ կամ վանկ, այլ պարզ պայմանական տառեր էին՝ յարմարցուած մեր հնչիւնական կարողութեան: Փիւնիկեան հնչիւններու ամբողջութիւնը կ'արտայայտուէր քսան և երկու նշաններով, տառերով: Այս գործի մէջ ալ Փիւնիկէցիք գիւտարարներ չէին, այլ լրացնողներ և ամբողջացնողներ: Անոնք շատ բան ընդօրինակեցին Եգիպտացիներէն, որոնց գրութեան մէկ ձեւը կը մօտենար հնչիւնագրութեան: Բայց լիակատար հնչիւնային գրութեան գործադրողները եղան Փիւնիկէցիք և Արամէացիք՝ երկուքն ալ վաճառական ժողովուրդներ: Փիւնիկէցիներէն Յոյները ընդօրինակեցին իրենց գրութեան ձեւը. ինչ որ ընդօրինակման հիմք, դարձաւ շարք մը Արեւելեան ժողովուրդներու համար, Յոյներէն վերցուցին Լատինները, ան ալ հիմք դարձաւ Արեւմտեան Եւրոպայի ազգերու հնչիւնագրութեան:

ԱՐԱՄԷԱՅԻՆՆԵՐԸ. — Արամէացիք ալ վաճառականներ էին. կարաւանային վաճառականութիւնը XԼ-րդ դարէն սկսած անոնց ձեռքն էր: Անոնք այդ գրողման մէջ առաջնութիւն ստացան յատկապէս Ասորեստանի և Պարսկաստանի տիրապետութեան ժամանակաշրջանին: Արամեւրէնը դարձաւ միջազգային լեզու՝ թէ առեւտուրի և թէ արամէական այբուբենի շնորհիւ, ան նաև Արեւելքի գիւտանագիտական լեզուն էր: Առաջին հազարամեակին (Քր. Ա.) ան փոխարինեց բարեկական լեզուն: Ասոր պատճառներէն մէկն ալ այն էր որ նշանաւոր առեւտրական Արամէացիք, խոշոր դրամատէրեր էին. ինչպէս նաև քաղաքական դեր ունէին այս կամ այն թագաւորի, իշխանի ապարանքի մէջ:

ԱՐԺԷՔԸ.— Նշանագրերու գիւտը հսկայ արժէք ունեցաւ մարդկային մտքի զարգացման և գաղափարներու մշակման ու տարածման համար: Դիւրացաւ գրելն ու կարդալը, գաղափարներու արտայայտութիւնը: Մեծցաւ կարդացողներու և գիրք ունեցողներու թիւը: Անջատ-անջատ ժողովուրդներ այժմ աւելի դիւրութեամբ կը մօտենային իրարու և կը հասկնային իրար: Գիրք նպաստեց մարդկութեան հոգեւոր-գաղափարական միութեան:

Գ. ԳԼՈՒԽ

ԻՍՐԱՅԷԼ

ՊԱՂԵՍՏԻՆ.— Այն երկիրը, ուր հաստատուեցան Իսրայէլցիները կամ Հրէաները կը կոչուի Պաղեստին: Այս անունը Փղշտացի բառի աղուաղումն է: Փղշտացիք շատ շուտով պատմութեան ասպարէզէն դուրս ինկան, առանց հետք մը թողնելու, բայց իրենց անունը մնաց այն երկրի վրայ, ուր ապրեք էին քանի մը դար: Պաղեստինը՝ Արգասաբեր կիսալուսնի Արեւմտեան թևի ամենէն հարաւային երկիրն է: Արեւելքէն ան շրջապատուած է Սիւրիական անապատով, Հարաւէն Սինայի թերակղզիով, Հիւսիսէն Փիւնիկէով, իսկ Արեւմուտքէն՝ Միջերկրական ծովով: Այս սահմաններու մէջ պարփակուած երկիրը ունի մօտ 22,000 քառ. քիլոմեթր տարածութիւն: Մակերեսի տեսակէտէն Պաղեստինը կը բաժնենք երեք շրջանի:

Առաջին՝ ծովամերձ դաշտային մաս՝ այստեղ կը գրտնուին քանի մը նաւահանգիստներ՝ Ասկալոն, Եաֆա, քանի մը քաղաքներ՝ Գազա, Գաթ: Ծովափնեայ շրջաններու մէջ կ'ապրէին Փղշտացիք:

ՓՂՇՍԱՅԻՆԵՐ.— Շուրջ 1250 թ. (Ք. Ա.) ծովափնեայ դաշտային մասերը գրաւեցին Փղշտացիները: Անոնց պարտութեան մատենց Ռամսէս III-րդը, բայց յետոյ թոյլ տուաւ, որ բնակութիւն հաստատեն Պաղեստինի մէջ: Եգիպտոսի ասիական կայսրութեան փլուզումի հետեւանքով Փղշտացիները անկախացան և յարատև կռուի մէջ էին իրենց հարեւաններու՝ նախ Գանանացիներու, ապա Իսրայէլի հետ, որոնք կ'ազգէին ծով իջնել, Փիւնիկէցիներու հետ, որոնք նախապէս գրաւեք էին Պաղեստինի ամբողջ

նգերային չրջանները: Այս կռիւններու մէջ անոնք յաճախ յաղթական ելան, բայց մաշեցին իրենց ուժերը և աստիճանաբար անհետացան պատմութեան բեմէն:

Երկրորդ՝ բարձրավանդակը կեդրոնական մասում՝ ծովափնեայ չրջանի և Յորդանանի ու Մեռեալ ծովու մէջ: Այս բարձրավանդակի հարաւը քարքարոտ և բլրաշատ հողամաս մըն է՝ 600—800 մեթր բարձրութեամբ: Բարձրավանդակը երուսազէմի մօտերը ունի 1000 մեթր բարձրութիւն: Իսրայէլի հոն հաստատուելէն ետքը կը կոչուէր Յուդայի երկիր: Ասոնք կարաւանային տարանցիկ առեւտուրի: Կեդրոններ են: Յուդայի երկրէն հիւսիս ինկած է Գալիլէն: Անոր վրայ հիւսիսէն կ'իշխէր Տաբոս լեռը, իսկ հիւսիս-արեւմուտքէն Գարմիլը: Անոնց մէջ կը տարածուէր Եգրայի ընդարձակ դաշտը, ուր կլիման աւելի բարեխառն է, հողը բարեբեր, դաշտերը յարմար են հացահատիկի մըշակութեան համար, իսկ բլուրներու լանջերուն կ'աճին արմաւ, ձիթենի, խաղող, նուռ: Բնակչութիւնը հոս աւելի խիտ է, քան Յուդայի երկրի մէջ: Պաղեստինի այս մասն է, որ Հրէաները կարծեցին «Աւեսեաց Երկիր»:

Երրորդ՝ Յորդանանէն և Մեռեալ ծովէն արեւելք Անդրլորդանան է: Անոր մակերեսը աստիճանաբար կ'իջնէ՝ արեւմուտքէն արեւելք, լեռները կը հասնին մինչև 1200 մեթր բարձրութեան. հիւսիսը Հեմոնն է, անոր լանջերէն սկիզբ կ'առնէ Յորդանան գետը: Այս չրջանը շատ յարմար է անասնապահութեան, և տեղ-տեղ ալ երկրագործութեան համար: Աւելի արեւելք՝ անապատն է:

Ընդհանրապէս Պաղեստինը իր հարստութեամբ, պատմութեան մէջ ունեցած քաղաքական կշիռով չի կրնար համեմատուիլ ոչ Միջագետքի, ոչ Եգիպտոսի հետ: Այնտեղ չկազմուեցաւ մեծ պետութիւն, և հոն հաստատուող ժողովուրդներն ալ նշանակալից դեր չի խաղացին Արեւելքի քաղաքական պատմութեան մէջ:

Պաղեստինի կլիման խիստ է, ձմեռը ցուրտ, ամառը տաք և ճնշիչ. քանի մը հովիտներ ու գաշտեր միայն

յարմար են բնակութեան: Մէկ քանի հասցարոյսերու: անտառածածկ շրջաններու և տարածուն արօտատեղիներու գոյութիւնն է, որ անապատի մէջ թափառող Իսրայէլի ցեղերուն ան երեւաց որպէս «Աւետեաց երկիր»: Պաղեստինը բնական սահմաններ գրեթէ չունի՝ ինչպէս Եգիպտոսը, Միջագետքը: Բայց այդ՝ ան միակ ուղին է, որ կը կապէ Միջագետքը, Ասորա-բարելական ժողովուրդներուն Եգիպտոսի հետ: Ատոր մէջ ալ կը կայանայ անոր արժէքը:

Բոլոր շրջակայ ազգերը, որ հիմներ են աշխարհակալ կայսրութիւններ՝ անոր վրայով են անցեր, անոր ժողովրդի վրայ են իշխեր, ան է տոնակոխ եղեր մեծ պետութիւններու բանակներէն: Ան շարունակ յարձակման է ենթարկուեր, տիրապետուեր է, երբեմն Եգիպտոսի, երբեմն Հաթի-բաւ և Ասորեստանի ու Բաբելոնի կողմէ: Իր աշխարհագրական դիրքի պատճառով Պաղեստինը հին աշխարհի ամենէն դժբախտ երկիրն է եղեր:

ՔԱՆԱՆԱՅԻՔ. — Իսրայէլի Պաղեստինի մէջ երեւալէն առաջ հոն կ'ապրէին Քանանացիները. ասոնք ալ սեմական ծագում ունէին, ազգակից էին Փիւնիկէցիներուն և Իսրայէլին. բայց աւելի շուտ լքեցին վաչկատուն կեանքը և հաստատուեցան Քանանու մէջ 2000 թուականէն առաջ: Դեռ անապատներու մէջ թափառած շրջանին անոնք ծանօթացան առեւտրական այն մեծ ուղիներուն, որ կը կապէին Արգասաբեր Կիսալուսինը Եգիպտոսի հետ: Անոնք իրենց բնակիչ կենդանիները՝ ուղտերը, էջերը կը տրամադրէին Բաբելոնի, Եգիպտոսի վաճառականներուն: Յետագային, երբ իրենք նստակեաց դարձան արդէն լաւ ծանօթ էին արեւելքի առեւտրական ճամբաներուն և շուկաներուն: Քանանու կարաւանային քաղաքներու մէջ իրար կը հանդիպէին Բաբելացիք, Եգիպտացիք, Փիւնիկէցիք, Արամացիք և նոյնիսկ Եգէտան կղզիներու վաճառականները: Այս առեւտուրի հետեւանքով Քանանի մէջ ստեղծուեցաւ հարստացած քաղաքարնակ դաս մը, որ հասարա-

կանկան բոլոր գործերը առեր էր իր ձեռքը: Անոր համար կ'աշխատէին հազարաւոր արհեստաւորներ, բեռնակիրներ, սուրհանդակներ, առեւտրական գործակալներ, դպիրներ, ծառաներ և տասնեակ հազարաւոր ստրուկներ: Անոնց քաղաքակրթութիւնն ալ բնորոշիչ, ինքնատիպ ոչինչ ունէր. կրօնի մէջ շատ մեծ դեր կը կատարէր կին աստուածութիւնը, որ երբեմնի մայրական իշխանութեան նշան էր և մնացորդը:

Ադոնիսի տօնը կը կատարէին մեծ հանդիսութեամբ, կրօնի մէջ կանացի տարրը կը ներկայացնէր երկիրը, ուրկէ գարնան յարութիւն կ'առնէր բուսականութիւնը: Ամեն քաղաք աւնէր իր աստուածը, անոր կը զօնէին անդրանիկ զաւակները: Իսրայէլացիները երբ անապատի վաչկատուն կեանքէն այս երկիրը հաստատուեցան զիւրութեամբ ընդօրինակեցին Քանանացիներու կենցաղը, վարքն ու բարքը: Իրենց վաչկատունի պարզ կեանքը պիտի աղճատուէր:

ՔԱՆԱՆԸ ԵՎԻՊՏԱԿԱՆ ԳԱՂՈՒԹ.— XV—XIV-րդ դարերուն Քանանը մաս կազմեց Եգիպտոսի ասիական կայսրութեան: Փարաւոններու համար Պաղեստինը կամ Քանանը ռազմական կայան էր՝ նուաճելու համար Փիւնիկէն, Սիւրիան և հասնելու Իփրատի: Ուստի խիստ կարգեր մտցուցին հոն, քաղաքներու մէջ ներքին կռիւները դադարեցան, անապատի վաչկատուններու արշաւանքները կանգ առին, երկիրն ստացաւ խաղաղութիւն և ապահովութիւն: XIV րդ դարուն՝ եգիպտական արձանագրութեանց մէջ կը յիշուի «Խաբերու» ժողովրդի անունը. ասոնք կը փորձեն անապատի կողմէն մտնել Պաղեստին. Իսրայէլի ցեղերն են ասոնք, շուրջ 1200 թ. անոնք կը ճնշեն բազմաթիւ կէտերու վրայ օգտուելով այն հանգամանքէն որ անմական արեւելքի մէջ կը թուլնար եգիպտական իշխանութիւնը:

Քանանի մէջ կ'ըսկսուի ներքին անիշխանութիւն, այս ալ նպաստաւոր էր Իսրայէլացիներու այս երկրին մէջ հաստատուելուն: Գրեթէ միաժամանակ երկու կողմերէն Քանան կը մտնեն երկու ժողովուրդ՝ ծովամերձ շրջաններու

վրայ կը հաստատուին Փղշտացիք, իսկ արեւելքէն ներս կը խուժեն Իսրայէլի ցեղերը: Քանանացիք այդ երկուքին ընթացքը կասեցնել չէին կրնար: Այս զոյգ հարուածներու տակ Քանանացիք նախ՝ առաջնութիւնը կը կորսնցնեն, երկրորդ՝ որպէս ժողովուրդ կը միաձուլուին մասամբ Փղշտացիներու և մեծ մասամբ Իսրայէլի ժողովուրդի հետ:

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ.— Իսրայէլը՝ իր կեանքի գլխաւոր դէպքերը, բնապատի մէջ ապրած արկածները, Արգասաբեր Կիսալուանի մէջ իրենց թափառումները, իր ցեղապետներու կեանքը, Եհովայի հետ ունեցած կապերը, հարեւան ժողովուրդներու դէմ մղած պայքարը, Պաղեստինի մէջ հաստատուիլը, Եգիպտոսէ դուրս գալը և շատ ուրիշ դէպքեր բանաւոր պատմութեան նիւթ էր դարձուցած: Այս պատմութիւնները պատմուեր են և անցեր սերունդէ սերունդ և ոգեւորութեան ու ներշնչումի աղբիւրներ են ծառայեր և հասունցուցեր սերունդներ: Այս բոլորը շատ ուշ գրի առնուեցան, միացուեցան և կազմեցին Հին կտակարանը կամ Աստուածաշունչը, որ հսկայ, եզակի գրական կոթող մըն է, որ կ'ընդգրկէ հրեայ ազգի վիպական պատմութիւնը, իր ծագումէն մինչեւ քաղաքական իշխանութեան անկումը և օտար տիրապետութիւնները: Այսպիսի գրական վաւերագիր չունեցաւ ոչ Եգիպտացին, ոչ Բաբելացին: Ան գլխաւոր աղբիւրն է ոչ միայն Հրէից քաղաքական պատմութեան, այլեւ մեծ լոյս կը սփռէ ամբողջ Մերձաւոր Արեւելքի պատմութեան, ազգերու փոխ յարաբերութեան վրայ: Ան կը պարունակէ նաեւ հրէական օրէնսդրութիւնը, կենցաղը, ժողովրդական բանաստեղծութիւնը, բարոյական գաղափարները, փիլիսոփայութիւնը: Այս գիրքը կաղմուած է բազմաթիւ մասերէ, հաւաքուած և գրուած զանազան ժամանակներու մէջ:

ԻՍՐԱՅԷԼԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՐԺԷՔԸ.— Իսրայէլի ցեղերու պատմութիւնը քաղաքական տեսակէտէն շատ քիչ արժէք ունի: Բայց ան ունի ուրիշ արժէք մը: Ժողովուրդներու պատմութեան մէջ անոր արժէքը նոր կրօնական եւ բարո-

յական գաղափարներու մեակման մէջ է: Իսրայէլը առաջին ժողովուրդն է, որ մերժեց բազմաստուածութիւնը և աստուած շօշափելի, կենդանակերպ և մարդակերպ պատկերացնելը: Յետոյ՝ ինչ որ ամենէն էականն է, ան կրօնի հետ սերտօրէն կապեց օրէնքն ու բարոյական պատուէրները: Կրօնը աղբիւր հանդիսացաւ ընկերային կեանքի և անհատական վարք ու բարքի մշակման: Ատով ան ճանապարհ հարթեց քրիստոնէութեան, որ ծնաւ և մեծցաւ հրէական միջավայրի մէջ: Այս ճանապարհով Իսրայէլը խոր ազդեցութիւն թողուց մարդկութեան կրօնական և բարոյական ուսմունքներու զարգացման վրայ:

ԻՍՐԱՅԷԼԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ. — Իսրայէլի պատմութիւնը կարելի է բաժնել երկու շրջաններու: Առաջին՝ վաչկատուն, խառնարած կեանքի օրօան, երկրորդ՝ Երեսակեացութեան օրօան:

Առաջինը՝ նահապետներու շրջանն է. Իսրայէլը կը բաժնուի տասներկու տոհմերու, անոնց զուգար կը կանգնին տոհմապետները, նահապետները: Տոհմի անդամները կը ծագին մէկ ընդհանուր նախահօրմէ: Ասոնք ալ կը սերին Աբրահամէն, որ կ'ապէր շուրջ 2000 թուին, Համուրաբի ժամանակ և կը գաղթէ Միջագետքի Ուր քաղաքէն: Ան և անոր սերունդները քանի մը հարիւր տարի կը թափառին անապատներու մէջ. անոնք վրանաբնակ էին. իրենց վրանները կը զարնէին երբեմն խոտառատ տափաստաններու մէջ, երբեմն գետերու, աղբիւրներու, ջրհորներու շուրջ: Անոնց հարստութիւնը ուղտն էր և էջը, ոչխարներու հօտը: Կը սնանէին կաթնեղէնով, արմաւով, ձիթապտուղով, մեղրով. տօն օրերուն կ'ուտէին միս: Կը թափառէին Միջագետքէն սկսած մինչև Եգիպտոսի սահմանները. սերտ յարաբերութեան մէջ կը մտնէին նստակեացներու հետ. չունէին ոչ մէկ անշարժ հարստութիւն: Նստակեացներուն կը վաճառէին իրենց անասունները, կաթնեղէնը և բուրդը, իսկ կը գնէին անոնցմէ մետաղէ գէնքեր, հիւսուածեղէն, զարդարանքներ, ցորեն:

Իսրայէլի տոհմերը մշտական կռիւներու մէջ էին անապատի մէջ թափառական ուրիշ վաչկատուն ցեղերու հետ: Այս կռիւներու մէջ կը մշակուէր Իսրայէլի տոհմերու համերաշխութիւնը: Արքահամէն և անոր անմիջական յաջորդներէն ետքը՝ շուրջ 1600—1500 թ. Իսրայէլի մէկ մասը դարձաւ նստակեաց: Փոքր խումբերով անոնք հաստատուեցան Արգասաբեր Կիսալուսնի երկիրներուն մէջ և ձուլուեցան տեղացիներու հետ, իսկ մեծագոյն մասը մինչև XI V—XIII-րդ դարերը մնաց թափառական և սիւրիական անապատի մէջ շարունակ կը դեգերէր, Եփրատէն մինչև Եգիպտոս՝ արօնատեղիներու, սնունդի և ջուրի ի խնդիր:

ԻՍՐԱԵԼԷԼ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ. Հիւքսոսներու հետ Իսրայէլի ցեղերու մէկ մասը կը մտնէ Եգիպտոս և կը հաստատուի Սուէզի պարանոցի շուրջը և Տելլաւի մէջ: 1580 թուին Հիւքսոսները կը թողուն Եգիպտոսը և կը ցրուին Կիսալուսնի և անապատի մէջ: Բայց Իսրայէլի մեծագոյն մասը կը մնայ Եգիպտոսի մէջ. անոնք տուն ու տեղ կը դառնան. ընտանիք կը կազմեն:

Շուտով անոնց դրութիւնը կը վատթարանայ: Տեղացիներն ատելութեամբ կ'ըսկսին նայիլ անոնց, ծանր աշխատանքներու կը լծեն և կը չարչարեն ու գաղտնիօրէն կ'ըսպաննեն: Այս պայմաններու մէջ մէկ միտք կը ծագի անոնց մէջ, թողուլ Եգիպտոսը, անցնիլ իրենց նախահայրերու երկիրը՝ անապատները: Այս ծրագրի իրագործման կը նուիրուի Մովսէսը և դուրս կը բերէ Իսրայէլը Եգիպտոսէն: Կ'առաջնորդէ Սինայի թերակղզին: Հոս շատ ծանր կը դառնայ անոնց կացութիւնը՝ անստոյգ և անորոշ ապագայ, քաղց ու ծարաւ: Շատերուն յուսահատութիւնը կը վարակէ, շատերը կը զզջան Եգիպտոսէն՝ գաղթելուն, և կը պատրաստուին լքելու Մովսէսը և վերադառնալու Եգիպտոս:

Մովսէս կ'առաջնորդէր զանոնք Ենովայի անունով: Անոր օրէնքներով, պատուիրաններով ալ կարգաւորեց իր հետ բերած Իսրայէլի ցեղերու կեանքը, անոնց յարաբերութիւնը. Սինայի լեռան դագաթէն յայտարարեց Տասը

պատուիրացները, համախմբեց Իսրայէլը մէկ աստուծոյ՝ Եհովայի շուրջը, ապահովեց ունոնց սնունդը՝ յարաբերութեան մէջ մտնելով անապատի վաչկատուն և անասնապահ ցեղերու հետ: Մովսէսը դարձաւ օրէնադիր, ազատարար և նոր կրօնի Նիմուդիբ. ան եղաւ հրեական Եզրութեան կազմակերպողը եւ սեղծողը: Եւ որովհետեւ այդ կազմակերպութիւնը առաջացաւ Եհովայի շուրջը, ուստի և այդ ազգութիւնը ստացաւ կրօնական համայնքի բնոյթ: Երբ Իսրայէլը կը թողու Սինայի անապատը և կը դիմէ հիւսիս՝ աւելի արգաւանդ հողեր որոնելու համար՝ անոնց կը մինան իրենց այն աղգակիցները, որոնք մնացեր էին սիրիական անապատի մէջ և կը շարունակէին իրենց վաչկատուն կեանքը:

ԵՀՈՎԱՆ, ԴԱՇԻՆՔԸ.— Եհովան Իսրայէլի աստուածն է. ան միակ աստուածն է. Մովսէսը անոր հետ դաշինք կնքեց Իսրայէլի համար և Իսրայէլի անունով: Ասոր հետեւանքով Եհովան և Իսրայէլը յաւիտենապէս կապուեցան իրարու: Անոնք որոշ պարտաւորութիւններ ունէին միմիանց հանդէպ: Այս դաշինքով Իսրայէլը դարձաւ ընտել ժողովուրդ: Անոր բոլոր գործերը կը ներշնչուէին Եհովայէն. վերջինս Իսրայէլին կ'ընտրէր որպէս իր կամքի, իր պատուէրներու գործադրողը:

Եհովան խիստ է. եթէ Իսրայէլը մեղկութեան կամ յուսախաբութեան պահու մը լքէ Եհովան, պաշտէ ռոսկիէ հորթը, ան կը պատժէ իր ժողովուրդը: Նախ կ'ուղարկէ արդարները, իրեն հաւատարիմ մնացածները, երթալ քարոզելու և դարձի բերելու մոլորեալները: Արդարութեան եւ փրկութեան ուղին ցոյց տուողները կը կաշուին մարգարէներ: Անոնք անապատի պարզունակ պայմաններէն դուրս ելած, կը կանգնին մեծ քաղաքներու հրապարակներու մէջ, կ'երեւան արքայական պալատներու մէջ և խստօրէն կը կըշտամբեն բոլոր անոնք, որոնք կը մոռնան իրենց և Եհովայի մէջ կապուած ուխտը:

ՊԱՂԵՍՏԻՆԻ ՆՈՒԱՃՈՒՄԸ.— «Աւետեաց երկրի» նուա-

ճուճը տեղի ունեցաւ Յեսուի առաջնորդութեամբ: Ակիզըբ գրաւեցին Նրինով քաղաքը, որ կ'իշխէր Յորդանանի հովտի վրայ: Քանանի նուաճումը կատարուեցաւ դանդաղ, առանց ծրագրի, իւրաքանչիւր ցեղ կը գործէր ինքնագլուխ: Քանանացիք լաւ կը կռուէին, լաւ էին զինուած, անոնց քաղաքները ամուր պարիսպներ ունէին, Խորայէլացիները միջոցներ չունէին պարսպապատ քաղաքներ գրաւելու, որով կը մնար դիմել երկար պաշարման: Խորայէլի ցեղերը ատար փոխարէն ծանրօրէն կը հարուածէին Քանանացիներու առեւտուրը՝ կը կտրէին կարաւանային ուղիները, կը յափըշտակէին և անապահով կը դարձնէին միջազգային հաղորդակցութեան գծերը: Միայն երկու դարուայ յամառ կռիւններէն ետքն է, որ անոնք տէր դարձան Քանանի: Ակիզըբ գրաւեցին միայն թոյլ պաշտպանուած քաղաքները, իսկ Նրուսաղէմը Քանանացիներու ձեռքը մնաց մինչև 1000 թուականը: Նրուսաղէմի գրաւումէն ետքը Խորայէլի ցեղերը տեղաւորուեցան հոն:

Քանանի նուաճումը կատարուեցաւ Խորայէլի այն հատուածի կողմէն, որ Սինայի անապատէն ելնելով անցաւ հիւսիս և մտաւ Պաղեստին արեւելքէն: Անապատի թափառական ու ազգակից ցեղերը միացան իրենց ցեղակիցներուն ուժեղացնելով Պաղեստինի հրէութիւնը: Խորայէլի ցեղերը Պաղեստին մտնելով աստիճանաբար լքեցին իրենց վաշկատուն կեանքը և դարձան նստակեաց: Քանանացիք տէր էին արեւելեան հազար տարուայ քաղաքակրթութեան, անոնք ունէին բարեկեցիկ կեանք, տուներ, աւաններ, ջրաբեր սպասարար քաղաքներ, հաղորդակցութեան լաւ և ապահով ճամբաներ, վարչութիւն, շարժական և անշարժ հարստութիւն: Այս բոլորը գրաւիչ էր Խորայէլացիներու համար, նոր պայմանները պիտի յեղաշրջէին անոնց կենցաղը և վարք ու բարքը: Շատ բան վերցուցին Քանանացիներէն՝ հողամշակութեան գործիքներ, զէնքեր, տուներու շինութիւնը, արհեստներ: Բայց պահեցին իրենց ընկերային կառոյցը՝ տոհմական կազմը, անոնք նոյնիսկ տեղաւորուեցան

ըստ տոհմերու: Բարձրաւանդակի վրայ տեղաւորուեցան Սիմէոնի, Յուդայի, Բենիամինի, Եփրեմի տոհմերը, Յորդանանէն արեւելք՝ Մանասէի, Գաթիի և Ռուբէնի տոհմերը: Միւսներն ալ ցրուեցան զանազան շրջաններ: Քանանի մէջ հաստատուելէն ետքն ալ Խորայէլը երկար ժամանակ տոհմականէն աւելի բարձր կապ չհաստատեց բաժնուած տոհմերու հետ:

Ընդհանրապէս Խորայէլի համար տոհմական կազմը նոյնքան բնորոշիչ է, որքան Փիւնիկէցիներու համար քաղաք-պետութիւնը: Տոհմը աւելի անմիջական, կենդանի կապ էր նաեւ այն ժամանակ, երբ Խորայէլը միացաւ դատաւորներու, ապա նաեւ թագաւորներու գերիշխանութեան տակ:

ՔԱՆԱՆԱՅԻՆԵՐՈՒ ԶՈՒՂՈՒՄԸ.— Հաստատուելով Պաղեստինի մէջ հրէութեան առաջ կը դրուէր երկրի բնիկ տէրերու հետ ունենալիք յարաբերութեան հարցը: Քանանացիք հարուստ էին, բայց հոգեկան կապեր չունէին իրար հետ, ներքին միութեանէն զուրկ էին, դրամ, բարիքներ չատ ունէին բայց պետական, ազգային կապեր չունէին: Միւս կողմէն Խորայէլացիք թէեւ ցանուցիր, կը գործէին Եհովայի անունով, որ անոնց յաղթանակներ կուտար. անոնք համոզուած էին, որ Եհովան է, որ կ'առաջնորդէ զիրենք: Իսկ Եհովան հակառակ չէր, որ Խորայէլի ցեղերը բնաջինջ ընեն հին բնիկները: Խորայէլի զեկավարները ասոր մէջ կը գտնէին իրենց ապահովութիւնը, մանաւանդ որ շատ վայրերու մէջ իրենք փոքրամասնութիւն էին: Քանանացիներու մէկ մեծ մասը հարկադրուեցաւ գաղթել իր դարաւոր հայրենիքէն և հաստատուիլ Եգիպտոսի և Փիւնիկէի մէջ: Բայց բնաջնջումը միակ միջոցը չէր Քանանացիները թուլացնելու: Եհովան արգիլեր էր Հրէաներուն ամուսնանալ օտարներու հետ: Այս ինքնապաշտպանութեան միջոցն էր օտարներով շրջապատուած հրէութեան համար: Եհովան կը հրամայէր՝ խնամիութիւն չընել ուրիշ ազգերու հետ, անոնց տղաներուն աղջիկ չտալ:

անոնց աղջիկները իրենց տղաներու համար չառնել: Բայց այս պատուէրը չպահեցին Իսրայէլի ցեղերը.— Խառն ամուսնութիւնը սկսու Բանանացիներու և Իսրայէլի մէջ: Այս բանը ի վերջոյ ծառայեց յօգուտ Իսրայէլի. անոնք դարձան թիւով շատ և իշխող ժողովուրդ. Հրէութիւնը իր մէջ ձուլեց Բանանի բնիկները. հազարական թուին արդէն անոնք ոչ միայն երկրի վարչութիւնն առեր էին իրենց ձեռքը, այլև Պաղեստինի բնակչութեան մեծագոյն մասը հրէութիւնը կը կազմէր, թէև այստեղ ու այնտեղ գլխաւորապէս հիւսիսի մէջ սեմական զանազան հատուածներ դեռ կը պահէին իրենց գոյութիւնը:

ԿՌԻԻ ԹՇՆԱՄԻ ՈՒԺՅՐՈՒ ԴԵՄ.— Հաստատուելով Պաղեստինի մէջ Հրեաները շուտով նկատեցին որ պաշարուած են անապատի ուրիշ վաչկատուներով՝ Ամոնացիներով, Մոաբացիներով, Մատինացիներով, Ամաղեկացիներով: Այս ցեղերը բոլորն ալ շրջապատեր էին Պաղեստինը հարաւէն, արեւելքէն. ասոնք սեմականներ էին. ասոնցմէ հատուածներ կը մտնէին Պաղեստին, կը դառնային նստակեաց և կը ձուլուէին տեղացիներու հետ, իսկ մեծ մասը կը մնար հաւատարիմ անապատականի թափառիկ կենցաղին: Երբեմն անոնցմէ այս կամ այն ցեղը իր զինական ուժը կը վաճառէր Բանանացիներուն, անապատի ուղիները պահպանելու համար: Իսրայէլը այս ցեղերու տեւական յարձակման կ'ենթարկուէր: Բայց անոնց ամենէն մեծ թշնամիները մնացին Փղշտացիները: Ասոնք կը ջանային դուրս ընել Իսրայէլցիները գրաւուած շրջաններէն: Ասոր համար կը դաշնակցէին Բանանի քաղաքներու հետ, կ'օգնէին անոնց. ապա կը դուրէին անապատի ցեղերը թիկունքէն յարձակելու Իսրայէլի վրայ: Յարձակման անցնելով Փղշտացիները կը մտնային Պաղեստինի խորքերը և կը գրաւէին հրեա քանանական քաղաքները. անոնք մտան Գալիլիա, յարձակեցան Յուդայի երկրի վրայ:

ԴԱՏԱԻՈՐՆԵՐ.— Ամեն կողմէն եղած ճնշումներու, յարձակումներու տակ Իսրայէլի ցեղերը կը փորձեն միանալ և

միասին դիմադրել թշնամիներուն: Այս բանը մէկ անգամէն չիրականացաւ: Նախքան ընդհանուր, համահրէական միութիւն ստեղծուելը կազմուեցան շրջանային միութիւններ, միացան այն ցեղերը, որոնց տեւ կողմէն անմիջական վտանգ կ'ըսպառնար: Հարուի ցեղերը միացան Մագիանացիներու, Էդոմացիներու դէմ, Արեւելիան ցեղերը՝ Ամոնացիներու, Մոաբացիներու դէմ: Միայն Փղշտացիներու դէմ է, որ քանի մը անգամ համահրէական ճակատ կազմակերպուեցաւ: Թէ շրջանային, տեղական և թէ ընդհանուր ցեղական դաշնակցութեան գլուխը կը կանգնէին դասաւորներ: Անոնք ոչ միայն դատաւորներ էին, այլ և զինուորական առաջնորդներ: Անոնք այն գիտակցութիւնն ունէին թէ կը պաշտպանէին Եհովայի գործը՝ անոր ժողովուրդը: «Եհովայի ոգիս անոնց հետ եր»: Երբեմն այս դատաւորները նաև մարգարէներ էին, որով անոնց գործը կը համարուէր Եհովայի թելադրանքներ: Երբեմն ալ դատաւորներու շրջանակին մէջ կ'երեւար մարգարէ մը, որ թէ ու թիկունք կը դառնար անոր:

Դատաւորները Իսրայէլի բոլոր ցեղերու վրայ իշխանութիւն չունէին. ամեն ցեղի մէջ կը գործէր իր պետը, իր դատաւորը: Լաւագոյն դէպքին դատաւորի իշխանութիւնը կը տարածուէր այն շրջանին մէջ հաւաքուած Իսրայէլի զանազան ցեղերու վրայ, որոնց միացուցեր էր հարեւաններու յարձակումները: Ոչ Գեդէոնը, ոչ Սողոմոնը, ոչ Սամուէլը իշխանութիւն չունէին: Իսրայէլի բոլոր ցեղերու վրայ: Այդ անկարելի էր, քանի որ անոնք համախումբ չէին, ցրուած էին ամբողջ Պաղեստինի մէջ: Տեղական դատաւորներն ալ մնայուն չէին. անոնք կ'երեւային միայն վտանգի պահուն, պատերազմներու ժամանակ: Կռիւններէն ետքը անոնք կը վերադառնային իրենց տուները և կ'ըզբաղուէին առօրեայ գործերով: Բայց և այնպէս դատաւորներու երեւան գալը միութեան առաջին նշանն էր Իսրայէլի պառակտուած և ցրուած տոհմերու մէջ: Այսպիսի կազմակերպութեամբ և ուժերով է, որ Իսրայէլի ցեղերը կը կռուէին Գանանացիներու և Փղշտացիներու դէմ:

1080 թ. ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ.— Փղշտացիներու և Իսրայէլի պայքարը տեւեց մէկ դարէն աւելի: Կռուի նպատակը՝ Պաղեստինի մէջ առաջնութիւն ձեռք բերելն էր: XII—XIII-րդ դարերուն Փղշտացիք է, որ մեծ յաջողութիւն ունէին. անոնք լաւ էին կազմակերպուած: Անոնց հինգ քաղաքները դաշնակցեր էին Իսրայէլի դէմ. ունէին մնայուն իշխանութիւն, ընդհանուր հրամանատարութիւն, պատերազմական կառքեր, ուժեղ նաւատորմիդ: Ընդհակառակը՝ Իսրայէլի ցեղերը ցրուած էին, անկազմակերպ, մնայուն իշխանութենէ զուրկ: Այս ուժերով երկու կողմերը 1080 թ. Եբեկեզեթի մօտ հանդիպեցան իրարու: Իսրայէլի բանակը կը գործէր Եղիա մարգարէի որդու հրամանատարութեան տակ: Հակառակ անոր, որ Իսրայէլացիք իրենց հետ կռուի էին տարեր նաև Տապանակ ուխտիճ, հանելի պարտութիւն կրեցին և տապանակ ուխտին ալ գերի ինկաւ Փղշտացիներու ձեռքը: Վերջինները տէր դարձան ամբողջ Պաղեստինին, իրենց իշխանութիւնը հաստատեցին Իսրայէլի ցեղերու վրայ, զինամթ ըրին և անոնց արգիլեցին երկաթէ զէնքեր և գործիքներ ունենալը: Տապանակ Ուխտի գերի իյնալը, ազգային փլուզում էր Իսրայէլի տոհմերու համար. կրօնական միութեան կապը այլևս չկար: 1080 թուի յաղթանակը՝ Փղշտացիներուն Պաղեստինի մէջ առաջնութիւն տուաւ շուրջ յիսուն տարի: Հրէաները ենթարկուեցան ծանր հարկերու:

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԾԱԳՈՒՄԸ.— Այս ծանր փորձութեանէն ետքն է, որ Իսրայէլի ցեղերը համոզուեցան, որ իրենց փրկութիւնը բոլոր տոհմերու միութեան և մէկ մնայուն իշխանութիւն հաստատելու մէջ է: Վերջին դատաւորը՝ Սամուէլը, որ մարգարէ էր միաժամանակ, այս միտքը ներշնչեց Իսրայէլի ցեղապետներուն: Սամուէլը միաժամանակ պայքարեցաւ Իսրայէլի մէջ տարածուած Գանանացւոց և Փղշտացւոց աստուածներու պաշտամունքին դէմ: Իսրայէլի զանգուածը իր կրօնական պատկերացումներով չատ ալ բարձր չէր իր միջավայրէն, անոր աւելի հասկը-

նալի էին տեղական աստուածները, անոնց մարդակերպ և կենդանակերպ պատկերացումը, քան Եհովան, որ վերացական, անչօշափելի ոգի էր: Շատ քիչերը՝ ընտրեալները, մարգարէները հաւատարիմ մնացին Եհովային և պայքարեցան հրեայ զանգուածներու նիւթականացած կրօնական ըմբռնումներուն դէմ: Եհովայի ճանապարհէն շեղիլը, Քանանացիներու հետ սերտ շփում հաստատելու հետեւանքներէն մէկն էր: Սամուէլ կը քարոզէր թողուլ Բահաղին և Աստարտէին, հետեւիլ միակ աստուծոյ՝ Եհովային: Ան կ'ուզէր վերակառուցել հրէութիւնը տալով անոր քաղաքական միութիւն և վերահաստատելով ճշմարիտ աստուծոյ՝ Եհովայի և Իսրայէլի մէջ եղած դաշինքը: Փղշտացիներու դէմ ան մեծ յաղթանակ տարաւ, որով Իսրայէլի ցեղերուն ներշնչեց մեծ հաւատ և վստահութիւն իր կարողեան, ու ժերու մասին: Ատկէ ետքը ան բոլոր սոհմերու համաձայնութեամբ Բենիամինի ցեղէն Սաւուղին ընտրեց Իսրայէլի թագաւոր 1025—1010:

Դ. ԳԼՈՒԽ

ՄԻԱՑԵԱԼ ԹԱԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ

ՍՈՒՈՒՂ.— Նոր թագաւորի առաջին գործը պիտի ըլլար թուլացնել այն ուժերը, որոնք կ'ըսպառնային Իսրայէլին: Սաւուղ ջարդեց Ամոնացիները, Ամադեկացիները, այս վերջինի թագաւորը գերի բռնեց և զոհաբերեց Եհովային: Ապա ջարդեց Փղշտացիները: Հարաւէն՝ Յուդային կ'ըսպառնային Մոաբացիները և Էդոմացիք: Հոս ան ջարդեց անապատի վրանաբնակները և հասաւ մինչեւ Եգիպտոսի սահմանները: Այս բոլոր կռիւներու մէջ Սաւուղին կ'օգնէր Յուդայի տոհմէն Դաւիթը. որ իր քաջութեան պատճառով մեծ համբաւ և ժողովրդականութիւն կը վայելէր: Թագաւորը անոր կնութեան տուաւ իր աղջիկը: Բայց նախանձելով անոր ձեռք բերած ժողովրդականութեան՝ հալածեց զայն: Դաւիթը ապաստանեցաւ Փղշտացիներու մօտ, շուրջը հաւաքելով 600 մարդ փորձեց Յուդան և Ամադեկացիներու երկիրը անջատել Սաւուղէն և իրեն համար իշխանութիւն մը ստեղծել: Փղշտացիներու դէմ մղուող նոր կռիւներու մէջ Սաւուղը՝ Եգրայիլի դաշտի ճակատամարտի մէջ պարտուեցաւ: Անոր որդին Յովնաթանը սպանուեցաւ: Սաւուղ չկըրցաւ տանիլ պարտութիւնն ու որդւոյն մահը, ինկաւ իր սուրին վրայ և անձնասպան եղաւ 1010 թուին: Այս հարուածը ծանր էր Իսրայէլի համար: Պետական միութիւնը խախտուեցաւ, իւրաքանչիւր ցեղ սկսաւ մտածել իր փրկութեան մասին: Ընդհանուրի փրկութիւնը պիտի գար Յուդայի երկրէն, և Իսրայէլի քաղաքական միութեան վերականգնողը պիտի ըլլար Դաւիթը՝ 1010—955:

ԴԱՒԻԹ.— Հրէից ազգային հերոսն է ան. անոր շուր-

Չը շատ զրոյցներ են հիւսուած , յայտնի է Դաւիթի և Գո-
ղիւսթի պատմութիւնը : Եզրայէլի յաղթանակէն ետքը
Փղշտացիք Դաւիթին վստահեցտն Յուդայի երկրին կառա-
վարութիւնը : Ան հաստատուեցաւ Հեբրոնի մէջ և Պաղես-
տինի հարաւը՝ Յուդայի երկրէն և հարեւան անապատի ցե-
ղերէն ստեղծեց մեծ պետութիւն, մինչ հրէական միւս ցե-
ղերու վրայ կ'իշխէր Սաուղի որդին Իբրաադը : Այս վեր-
ջինին կ'օժանդակէին Եփրեմի, Բենիամինի տոհմերը : Դա-
ւիթի և Իշբաաղի մէջ սկսաւ ներքին կռիւ՝ իշխանութեան
համար :

Այդ կռիւը կը հրահրէին Փղշտացիները, որոնք կը հե-
տապնդէին Իսրայէլի թուլացումը : Իշբաաղը պարտուեցաւ
և սպանուեցաւ : Իսրայէլի բոլոր ցեղերը համախմբուեցան
Դաւիթի շուրջ և թագաւոր յայտարարեցին : Դաւիթը իշ-
խեց միացեալ Իսրայէլի վրայ : Այս միացումը պիտի նշա-
նակէր, որ Իսրայէլ կրնար ազատագրուիլ Փղշտացիներու
գերիշխանութենէն և որ Քանանի մէջ առաջնութիւնը կըր-
նար անցնիլ Իսրայէլի ձեռքը : Դաւիթի առաջին գործը
Եբուս ամրոցի գրաւումն էր, որ դեռ Քանանացիներու ձեռ-
քըն էր . գրաւեց քաղաքը և վերակոչեց «Եբուսադիւն» :
Այն դարձուց իր մայրաքաղաքը :

Եբուսի գրաւումով վերջ կ'ըստանար Քանանացիներու
դիմադրական կարողութիւնը : Անոնք այլեւս գործօն ուժ
ըլլալէ դադրեցան : Մինչև Երուսաղէմի մայրաքաղաք դառ-
նալը ոչ դատաւորները, ոչ Սաուղը մայրաքաղաք չու-
նէին : Անոնք կ'ապրէին իրենց ցեղերուն մէջ, ոմանք ալ
վրաններու տակ : Երուսաղէմը յարմար էր մայրաքաղաք
ըլլալու համար . առեւտրական կեդրոն էր, պարսպապատ,
Իսրայէլի սեւէ մէկ ցեղի հողամասի մէջ չէր, տեղական
մրցութիւններէն դուրս էր : Դաւիթը փոխադրուեցաւ միջ-
նաբերդը . կը մտածէր նաև տաճար կառուցանել . բանակ-
ցութեան մէջ էր Տիրոսի հետ շինանիւթ, ճարտարապետներ
և արհեստաւորներ ստանալու համար : Երուսաղէմը պիտի
դառնար սրբազան քաղաք : Բայց այս գործը գլուխ բե-

րաւ Դաւիթի որդին Սողոմոնը: Իսկ Դաւիթը մատուռ մը միայն շինեց Եհովայի համար:

ԴԱՒԻԹԻ ԿԱՌԱՎԱՐԵԼԸ. Նոր պետութիւնը կարելի էր պահել միայն ռազմի ուժերով: Ամեն կողմէն ան շըրջապատուած էր թշնամիներով: Դաւիթը ստեղծեց մնայուն բանակ 24,000 զինուորներէ բաղկացած, որոնցմէ ամեն ամիս 2000-ը զէնքի տակ պիտի մնար և երկիրը պաշտպանէր: Այս միութեան մէջ Եփրեմի և Բէնեամինի ցեղերը կորսնցուցեր էին իրենց առաջնութիւնը և այդ պատճառով ալ կասկածելի էին Դաւիթի աչքին: Ասոնք աւելի հարուստ էին, համախուժ, հաւաքեր էին իրենց շուրջը միւս ցեղերը: Յուդան աւելի աղքատ էր, պահեր էր հովուական պարզունակ կենցաղը, շատերը նստակեաց անգամ չէին: Ան աւելի վտանգուած էր, տեւական կռիւններու մէջ էր անապատի վաշկատուներուն հետ: Հիւսիսի և հարաւի հակադրութիւնը խիստ կերպով կ'ըզգացուէր: Թէ պալատական ծախքերը հոգալու, թէ զօրք պահելու համար Դաւիթը հարկի տակ դրաւ Իսրայէլի ցեղերը: Ասոր համար ան վիճակագրութիւն կազմեց, ցուցակագրեց մարդիկը, անոնց նիւթական հարստութիւնները, բան մը, որ նախապէս Իսրայէլի ցեղերը չէին տեսած: Այս բոլորը մեծ դժգոհութիւն առաջացուց անոնց մէջ. հարկերու ծանրութիւնը կ'իյնար հիւսիսի ցեղերու վրայ: Յուդան ազատ էր սուրքերէ: Մինչ այդ Իսրայէլի ցեղերը ոչ մէկ կեդրոնական իշխանութեան չէին ենթարկուած, ոչ մէկ տուրք չէին տուած: Դաւիթը կազմեց իրեն համար արքայական պահակախումբ մը, որ ամբողջութեամբ օտարներէ կը բաղկանար:

ԻՍՐԱԵԷԼԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ.— Դաւիթ այս բոլորը կ'ընէր, իբրև փղշտական բարձր իշխանաւոր: Բայց անոր այս քան ուժեղնալը Փղշտացիներու աչքին կասկածելի երեւաց: Անոնք թոյլ տուին, որ Դաւիթ կռուի Իշթաաղի դէմ, որու մէջ կը տեսնէին Իսրայէլի թուլացումը, բայց չէին կրնար հաշտուիլ, որ Դաւիթ ստեղծէ Իսրայէլի ցե-

զերու միութիւնը: Կը հաշտուէին այն մտքի հետ, որ անապատի տեւակուն արշաւանքներու դիմաց ան զօրաբանակ մը ստեղծէ, բայց մեծ զինուորական ուժ, մնայուն բանակ՝ վտանգաւոր էր իրենց համար: Դաւիթի և Փղշտացիներու յարաբերութիւնները լարուեցան: Իր բանակով Դաւիթ յարձակեցաւ անոնց վրայ, վճռած էր ազատագրուելի անոնց հովանիէն և Խորայէլը բոլորովին անկախացնել: Ան Գրաւեց Գաթը, Աշտօտը: Չարդեց փղշտական ուժերը, ազատագրեց տապանակ ուխտին և մեծ հանդիսաւորութեամբ փոխադրեց Երուսաղէմ: Արդ, գերի դառնալու հերթը փղշտական աստուածներունն էր: Փղշտացիներու պարտութիւնը փոխեց հիմնովին Պաղեստինի քաղաքական կացութիւնը: Փղշտացիք այլևս Պաղեստինի տէրը չէին: Խորայէլն էր որ առաջնակարգ ուժ դարձաւ: Քանանացիները իսպառ դուրս էին նետուեր մրցող ուժերու շարքէն: Փղշտացիներու տիրապետութենէն ազատուելով Դաւիթ զէնքը դարձուց անապատի վաչկատուններու դէմ. ենթակեց Մոաբացիները, Ամոնացիները, և անոնց զինուորական ուժը ծառայեցուց իր նպատակներուն: Հպատակեցուց արամէական բազմաթիւ ցեղեր, գրաւեց Դամասկոսը և հասաւ Եփրատ գետի ափը: Հարաւէն ան տիրեց Էդոմին, անոր բնակչութեան մէկ մասը կոտորեց և հասաւ մինչեւ Կարմիր ծով՝ Ակարէ ծովածոցի մօտերը: Դաւիթի ժամանակ առաջին և վերջին անգամ Իսրայէլ մեծ պետութիւնը ստեղծուեցաւ Արգասաբեր Կիսայուսնի Արեւմտեան թելին շուրջ և բռնեց այն սեղը, ինչ որ իրմէ առաջ բռներ էին Հաթերը և Եփրատացիք: Դաւիթ տէր դարձաւ միջազգային առևտուրի ցամաքային մեծ գծին, որ Միջագետքը կը միացնէր Եփրատոսին: Անոր ձեռքն էր արամէական առևտուրի մեծ կեդրոնը՝ Դամասկոսը: Եփրատոսը ասիական առևտուրի մէջ հիմա կախում ունէր անկէ: Փիւնիկէի հետ՝ Խորայէլ պահեց իր բարեկամութիւնը:

Դաւիթի յաղթանակով Արգասաբեր Կիսայուսնի Արևմտեան թելին վրայ ստեղծուեցան երկու ուժեր՝ Փիւնիկէն

Եւ Իսրայէլը: Ասոնցմէ մէկը ցամաքային պետութիւն էր, միւսը շարունակեց ծովերու վրայ իշխել: Այդ երկուքը մրցակից չէին այլ գործակից: Երրորդ ոյժը Փլեթացիք բռնեցին անկման ճամբան, չորրորդ՝ արամեակացի քաղաքները կորսնցուցին իրենց քաղաքական արժէքը և իրենց նիւթական ուժերն ալ ի սպաս բերին Իսրայէլի նորակառոյց թագաւորութեան:

Բայց Իսրայէլը նուաճողական ոգի չունէր և ոչ ալ այդքան մեծ պետութիւն մը կառոււարելու չափ բանակ և նիւթական միջոցներ: Դաւիթի պետութիւնը միայն զինուորական անցողիկ յաջողութեան հետեւանք էր: Եւ որ գլխաւորն է Իսրայէլը ինքն իր մէջ ուժեղ չէր, հիւսիսի և հարաւի պայքարը կը շարունակուէր, մէկ քանի տպւտամբութիւններ տեղի ունեցան նոյնիսկ Դաւիթի օրով, ցեղային խտրականութիւնը շատ աւելի խորն էր, քան նոր սաղմնաւորուող ազգային ինքնաճանաչումը: Դաւիթը փորձեց թեթեւեղել Իսրայէլի ցեղերու վրայ իր դրած տուրքերը: Պատերազմի ժամանակ բանակը կը կերակրուէր գրաւուած և թշնամի երկիրներու հաշուին: Իսկ խաղաղութեան ժամանակ ծանր տուրքեր դրաւ հպատակ ցեղախումբերու վրայ և ատով կը հայթայթէր նաեւ իր պահակախումբի ծախքերը:

ՊԵՏՈՒԹԵԱՆ ԲՆՈՅԹԸ.— Դաւիթի թագաւորութիւնը Իսրայէլի ցեղերու համադաշնակցութիւն էր: Ամեն ցեղ իր ներքին կեանքի մէջ ինքնավար էր: Ամեն անհատ նախ իրեն կ'ըզգար այս կամ այն ցեղի անդամ և ապա անոնց միջոցով Իսրայէլի պետութեան:

Պետութիւնը անոր կեանքին մէջ երկրորդական էր. ընդհակառակը շատ մը կապերով կապուած էր իր ցեղին հետ: Դաւիթը փորձ չըրաւ ցեղերու կազմակերպութիւնը վերջընելու. չէր ալ կրնար. այդ՝ աւելի կենսունակ մարմին էր: Ուստի իր պետութիւնը ոչ թէ արեւելեան միւս պետութիւններու նման կեդրոնացած մէկ իշխանութիւն էր, այլ թոյլ կապերով համադաշնակցութիւն մը, որուն մէջ

կեդրոնի դերը չնչին էր: Եթէ Փիւնիկէի մէջ թագաւորի իրաւունքները կը սահմանափակէին ձերակոյտի հարստացած ընտանիքները, Իսրայէլի մէջ ալ հինէն իվեր արմատացած ցեղերն ու զարգացած ցեղային գիտակցութիւնը նոյն դերը կը խաղար: Եթէ Փիւնիկէի մէջ ձերակոյտը կը պայքարէր թագաւորի դէմ և շատ մը տեղեր անոր կը յաջորդէր, Իսրայէլի մէջ ալ թագաւորին դէմ եղող պայքարը՝ Իսրայէլը հասցուց ցեղերու քաղաքական պառակտման և երկու թագաւորութիւններու ստեղծման: Դաւիթի իշխանութեան տակ համապետական հաստատութիւններ քիչ էին և թոյլ էին զարգացած: Պալատի մէջ երբեմն միայն ժողովի կը հրաւիրուէին բարձր պաշտօնեաներ՝ հրամանատարը, մեծ վեզիրը, դպիրներու պետը և քահանայապետը:

ԿՐՕՆԸ. — Քաղաքական այս ձեւի միութիւն ստեղծելէ յետոյ՝ ի՞նչ կրօնական գաղափարներ կային Իսրայէլի մէջ Դաւիթի օրով: Ըստ Հին կտակարանի Դաւիթի օրով հրէութիւնը միաստուածեան էր: Ենզվան խիստ էր և նախանձոտ, չէր ընդուներ, որ իրեն պատկերացնեն կուռքի, որեւէ կենդանիի, նոյն իսկ մարդու կերպարանքով: Ան ընտանիք չունէր՝ միւս ազգերու աստուածներու պէս, չունէր ոչ կին, ոչ ժառանգներ: Ան միակ էր և ինքն իր մէջ իբրև մէկ միութիւն: Բայց և այնպէս այս ժամանակ դեռ ան հաւակնութիւն չունէր միակ և տիեզերական աստուած ըլլալու, ան կ'ուզէր ըլլալ միայն և միակ աստուածը ընտրեալ ժողովրդի՝ Իսրայէլի: Քանանի գրաւումէն և Երուսաղէմի մէջ հաստատուելէն ետքն ալ Ենզվան հանդուրժող էր Քանանի աստուածներուն, պայմանով, որ ոչ մէկ Իսրայէլացի չհետեւէր անոնց: Ամբողջ Իսրայէլը միայն իրն էր. Ենզվայինը, իրեն պէտք էր աղօթէր լաւագոյն զոհերը իրեն պէտք էր մատուցէին: Դաւիթը և քուրմերը Երուսաղէմէն դուրս վտարեցին քանանական և ընդհանրապէս օտար աստուածները. Երուսաղէմը մնաց միայն Ենզվային: Այդպէս վարուեցան նաեւ միւս քաղաքներու աստուածներուն հետ: Ենզվան Երուսաղէմի մէջ հաստատուելով

կը պահանջէր Իսրայէլի ցեղերու միութիւնը, ան պիտի ըլլար օժանդակ քաղաքական միութեան, ան՝ վեր էր ցեղերէն, տոհմերէն, ան համարէական միութեան խորհրդանիշն էր: Բայց Իսրայէլի ցեղերը պատրաստ չէին ինչպէս քաղաքական, այնպէս ալ կրօնական միութեան մը համար: Քաննի աստուածները՝ Բահաղները, Աստարտէն, իրենց համար աւելի հասկնալի էին, աւելի գերադաս, քան Երուսաղէմի Եհովան, որ անտեսանելի էր: Դաւիթի թագաւորութիւնը կրօնական հիմք չունէր. թագաւորը Իսրայէլի մէջ ոչ աստուած էր, ոչ աստուծոյ որդի, այլ միայն ընտրեալն էր աստուծոյ: Ան հոգեւոր իշխանաւոր չէր, ոչ ալ քրմապետ: Թէպէտ օծեալ էր, սակայն աստուծոյ խօսքերուն, ներշնչումներուն քարոզիչը, մեկնաբանը չէր: Այս բանի համար կային քահանաները և մարգարէները: Քահանաները առաջ կու գային Դեւտի ցեղէն, անոնք է, որ կը հսկէին Եհովայի օրէնքներու գործադրութեան, անոնք է, որ գիտէին և կը մեկնաբանէին օրէնքները: Դեւտի ցեղի մարդիկ կռիւներու մէջ կորսնցուցեր էին իրենց հողերը և ցրուեր էին միւս ցեղերու մէջ և քրմական պաշտօն կը վարէին: Ասոնցմէ կը յառաջանար Նաեւ դպիրներու և պաշտօնէութեան դասը, որովհետեւ գրել և կարդալ գիտէին: Մարգարէները Եհովայի խօսքով ներշնչուածներն էին և շատ յաճախ անոնք կը ծառայային թագաւորներու դէմ՝ յանուն Եհովայի և անոր օրէնքներուն:

ՍՈՂՈՄՈՆ.— Դաւիթի մահէն ետքը՝ իշխանութիւնը անցաւ իր որդուն՝ Սողոմոնին. 955—935. Դաւիթը զինուորական պետութեան գլուխը կանգնած Արեւելեան միապետ էր. Սողոմոնը ճոխութեան, շուայութեան սիրահարը այց միաժամանակ լաւ վարչագէտ էր: Իր պետութիւնը միջազգային առաջնակարգ առևտրական ուղիներու վրայ ըլլալով, ան կ'ուզէր խաղաղութեան մէջ մեծագոյն շահն ապահովել առևտրական այդ գիծէն: Ան՝ նոր գրաւումներ չըրաւ, բայց ջանաց հօր գրաւածը պահել: Երկրի սահմանները ամրացուց, բերդապահ բանակներ դրաւ Մագի-

դոյ, Հագուր և Բէյա-Հուրա քաղաքներու մէջ: Դաշինք
կնքեց փարաւոնի հետ և կին առաւ անոր աղջիկներէն մէ-
կը: Համաձայնութիւն կնքեց Տիրոսի թագաւոր Հիրամի
հետ, որով պիտի օգտուէր անոր նաւատորմիդէն ծովային
առևտուրի համար: Դարաւոր փորձութիւններէ ետք՝ Իս-
րայէլը կը նուիրուէր խաղաղ, շինարար աշխատանքի:
Սողոմոնը երուսաղէմի մէջ Եհովայի համար տաճար
կանգնեց և հոն հաստատեց Տապանակ ուխտին: Երուսա-
ղէմը միաժամանակ կը դառնար և քաղաքական և կրօ-
նական կեդրոն: Տաճարը կառուցուեցաւ միջնաբերդին մէջ
Հիրամի նիւթական օգնութեամբ: Այս վերջինը հայթայ-
թեց շինափայտ, արհեստաւորներ և ճարտարապետներ:

Թէ բանակի և թէ շինարարութեան, ինչպէս և պա-
շատի ճոխութեան ու շառլութեան համար անհրաժեշտ էին
խոշոր գումարներ: Սողոմոն իսրայէլի վրայ ծանր տուր-
քեր դրաւ: Ժողովուրդին պարտադրեց նաև անձնական
աշխատանքներ տաճարի, ամրոցներու և բերդերու շինու-
թեան համար: Երկիրը բաժնեց տասներկու հարկային մի-
ււորներու, որոնց վրայ նշանակեց հարկային տնօրէններ:
Ապահարկ էր միայն Յուդայի տոհմը, որմէ սերած էր
արքայական տունը: Ան տուրքի տակ առաւ նաև հպա-
տակները, գրաւուած երկիրները, յատկապէս արամէական
հարուստ քաղաքները: Ան հարստացաւ միջագոյնին առև-
տուրով, դաշինքներ և համաձայնութիւններ կնքեց՝ առև-
տորական նպատակներով՝ Եգիպտոսէն սկսած մինչև Կիլի-
կիա տարածուող իշխանութեանց հետ: Եգիպտոսէն ան կ'ըս-
տանար զինուորական կտուքեր, ձիեր և կը վաճառէր սիւ-
րիական իշխաններուն: Ինք կը մտանակցէր առևտուրին՝
իր ներկայացուցիչներու միջոցով: Ան առևտրական թա-
գաւոր էր:

Սողոմոնի թագաւորութիւնը փայլուն էր, սակայն ա-
ժուր և հիմնաւոր չէր: Պալատական դաւադրութիւնները,
արքայական ընտանիքի մէջ եղած կռիւները անկայուն կը
դարձնէին եզած նուաճումները: Հիւսիսի և հարաւի պայ-

քարը կը շարունակուէր: Բենեամինի, Եփրեմի, Գադի տոհմերը չէին հաշտուիր Յուդայի արտօնութիւններուն և առաջնութեան հետ՝ ան ապահարկ էր և անձնական ծառայութիւններէն ազատ: Սողոմոնի կեդրոնացնող միտումը կը վերցնէր հրեբեմնի լայն տեղական և ցեղային ազատութիւնները, որով հպարտ էին Իսրայէլի ցեղերը: Իսկ հարկը և անձնական աշխատանքները ընդհանուր դժգոհութիւն առաջացուցին: Հիւսիսի տոհմերը ապստամբեցան Սողոմոնի դէմ Հերոբաամի ներշնչումներով. անոնց կ'օժանդակէին նաև տեղական մարգարէները, որոնք կը յորջէին ամեն տեղ և ժողովուրդը կը գրգռէին թագաւորին դէմ, որ ըստ անոնց, չեղուեր էր Ենովայի ուղիէն: Սողոմոնը ճնշեց ապստամբութիւնը, Հերոբաամը փախաւ Եգիպտոս և վերադարձաւ միայն Սողոմոնի մահէն ետքը: Մարգարէները դէմ էին թագաւորի օտարներու հետ կապած դաշինքներուն, անոր բազմաթիւ ամուսնութիւններուն եւ դիպտական, Սիրոնի, Մաբացի, Էդոմի իշխանուհիներու հետ: Ասոնց հետ Երուսաղէմի պալատը կը թափանցէին նոր սովորութիւններ, վարք ու բարք և որ գլխաւորն է, անոնք կը բերէին իրենց Աստուածները և պալատին մէջ ազատօրէն կը պաշտէին: Սողոմոնը նոյնիսկ օտար աստուածներու համար մատուռներ կառուցեց: Օտարածին կանայք անոր միտքը կը դարձնէին դէպի Աստարտէ, դէպի Մոլոխ: Թագաւորի կրօնական այս հանդուրժողութիւնը և անոր շուայտ, զեխ կեանքը «հազար» կանանց շրջանակին մէջ՝ հեռացուց իրմէ քուրմերը և մարգարէները և իր դէմ հանեց Իսրայէլի տոհմերը: Այս նոր պայմաններու մէջ հրէական քաղաքական միութիւնը՝ պիտի խախտուէր:

ՊԱՌԱՎՏՈՒԱԾ ԻՍՐԱՅԷԼԸ

1. ԻՍՐԱՅԷԼ

ԲԱԺԱՆՈՒՄԸ.— Սողոմոնի մահէն ետքը Կրէութեան քաղաքական միութիւնը խախտուեցաւ: Գալիլիան, Հիւսիսային տասը ցեղերը Եփրեմի գլխաւորութեամբ, Սիխեմի ժողովի մէջ որոշեցին բաժնուիլ Յուդայէն և կազմել առանձին պետութիւն: Բենիամինի և Յուդայի ցեղերը հաւատարիմ մնացին Սողոմոնի որդուն Բորամին և կազմեցին Յուդայի պետութիւնը: Հիւսիսի պետութիւնը կոչուեցաւ Իսրայէլ, նեղ իմաստով, ան այլեւս չէր պարունակեր հարաւի երկու ցեղերը: Իսրայէլը թագաւոր ընտրեց Յետրամին, որ նոր էր վերադարձեր Եգիպտոսէն: Անոր իշխանութեան տակ մտան Յորդանանի երկու փեղեր. մայրաքաղաքը՝ սկիզբը Սիխեմն էր, յետոյ Սամաւան: Յուդան կը տարածուէր Մեռուալ ծովէն մինչեւ Միջերկրական ծով, ի բաց առեալ եզրային նեղ շերտը, որ կը գտնուէր Փղըշտացիներու ձեռքը: Յետոյ իբրև մայրաքաղաք մնաց միայն Երուսաղէմը:

Քաղաքական բաժանումը առաջացուց կրօնական երկուութիւն: Յերոբոամը իսրայէլի մէջ վերահաստատեց քանանական հին աստուածներու պաշտամունքը. Դանի և Բէթէլի մէջ երկու ոսկիի հորքերու պաշտամունքը մեծ ժողովրդականութիւն ստացաւ: Բորամը հաւատարիմ մնաց Եհովային: Եւ որովհետեւ Յուդայի պետութիւնը շատ աւելի երկար կեանք ունեցաւ՝ քան իսրայէլինը, մարգարէները կը յայտարարէին թէ ատոր պատճառը՝ Յուդայի Եհովային հաւատարիմ մնալն է:

Բաժանման առաջին հետեւանքը եղաւ այն, որ Իսրայէլը Պողեստինի մէջ իշխող, զեկաւար ազգ ըլլալէ դադար

րեցաւ, և դարձաւ օտար ոտնձգութեանց ենթակայ՝ Եգիպտոսի, Արամէացիներու, Տիրոսի և վերջապէս Ասորիստանի և Բաբելոնի։ Եւ եթէ հրէութիւնը երեք դար քաղաքական կեանքով ապրեցաւ, այդ պէտք է վերագրել անոր շուրջը և անոր համար պայքարող ուժերու անհամաձայնութեան և շահերու հակադրութեան։

ԼՐՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՕՏԱՐ ՄԻՋԱՄՏՈՒԹԻՒՆՆԵՐ.— Երկու թագաւորութիւնները տեւական մրցութեան մէջ էին։ Եգիպտական զօրքերը մտան Պաղեստին իբր թէ օգնելու իրենց դաշնակից Յերոբաամին։ Լիպիացիները գրաւեցին Երուսաղէմը, թալանեցին տաճարական գանձերը, Սողոմոնի ոսկէ վահանը վերցուցին։ Յուդան հարկատու դարձաւ Եգիպտոսին։ Հրէութեան այս թուլութենէն օգտուեցան արդէն ընկճուող Փղշտացիները և գրաւեցին Իսրայէլի մէկ քանի շրջաններ։ Արամէական Դամասկոսը իր օժանդակութիւնը կուտար երբեմն Իսրայէլին, երբեմն Յուդային՝ միայն հարստանալու նպատակով։ Դամասկոսի թագաւորը Բեճ—Հադադը գրաւեց Իսրայէլէն Անդր—Յորդանանը։ Այս կիւններու և դաւադրութեանց մէջ վերջ գտաւ Յերոբաամի տոհմը։ Օմրի արքայական նոր տոհմը (885—841) Դամասկոսի դէմ պայքարելու համար գաշակեցեցաւ Տիրոսի թագաւոր Իտոբաալի հետ։ Օմրի որդին Աքաբը ամուսնացաւ Իտոբաալի աղջկայ Եզաբելի հետ և անոր միջոցով փիւնիկեան աստուածները ազատօրէն մուտք գործեցին պալատին մէջ. Եհովայի անունը այլեւս չէր յիշուեր Իսրայէլի ռեւէ մէկ ցեղի մէջ։ Փիւնիկեան իշխանուհիի մը հրամանով կոտորեցին բոլոր մարգարէները, ազատուեցաւ միայն Եղիան և ոտքի հանեց ժողովուրդը իշխող տան դէմ, կործանեց օտար աստուածներու տաճարները։ Մարգարէն Աքաբը կը մեղադրէր Եհովայի ճանապարհէն շեղուելու մէջ, անարդարօրէն՝ Նոբատին սպանելու մէջ, որուն ամբողջ մեղքը պալատին կից մէկ կտոր հող ունենալն էր։ Ապստամբութեան մէջ կոտորուեցան Աքաբի ընտանիքը, իր որդին, մայրը, Եզաբելը և եօթանասուն իշխաններ։ Ասոնց կոտորողը Եհովայի յայտարարուեցաւ Իսրայէլի թագաւոր 841 թուին։

Յուդայի թագաւորութիւնն ալ ազատ չմնաց քանանական և փիւնիկեան աստուածներու ազդեցութենէն: Աքաբը կ'ուզէր համերաշխ ապրիլ Յուդայի հետ և իր աղջիկը կնութեան տուաւ Յոսաֆատի որդւոյն՝ Նորամին: Երտասարդ իշխանուէին Աթալիա՝ ջերմ հետեւող էր փիւնիկեան աստուածներուն: Ան այդ պաշտամունքն ալ մտցուց Յուդայի պալատին մէջ՝ հակառակ Եհովայի մարգարէներու դիմադրութեան: Երկու երկիրներու դաշինքը տեւեց չուրջ երեսուն տարի:

ԱՍՈՐԵՍՏԱՆԸ ՊԱՂԵՍՏԻՆԻ ՄԷՋ.— Մինչ Իսրայէլը և իր չուրջ գտնուող փոքր իշխանութիւնները՝ արամէական Դամասկոսը, Փիւնիկէն, Յուդան և անոնց չուրջը գտնուող անապատի ցեղախումբերը կը կոուէին իրարու դէմ, առեւտրական ուղիներու, կարաւանային քաղաքի մը կամ տեղական աստուածներու պաշտամունքին համար՝ Ասորեսանը կ'երեւար Սիւրիոյ մէջ: Ան դուրս էր եկեր իր նեղ սահմաններէն և կ'արշաւէր ամեն ուղղութեամբ: Անոր քաղաքական ծրագիրներէն մէկն ալ Միջերկրական ծովուն հասնիլն էր, փիւնիկեան հարուստ քաղաքներուն տիրելը և Միջագետք—Եգիպտոս առեւտրական ուղիի գրաւումը: Սալմանասար III-րդը (858—824) մտեր էր Որոնդէսի հովիտը, հասեր էր մինչեւ Փիւնիկէ: Տիրոսը, Սիտոնը փրկագին էին վճարեր անոր և խոստացեր տարեկան հարկ տալ (860), Սալմանասարի դէմ կազմուեցաւ արամէական քաղաքներու դինակցութիւնը, որու միացաւ Իսրայէլի թագաւորը, տալով դաշնակիցներուն 1000 ռազմականք և տասը հազար կռուողներ: Այս դինակցութիւնը պարտութիւն կրեց Որոնդէսի ափին 854 թուին: Սալմանասար III մինչեւ 40-ական թուականներու վերջը զբաղուեցաւ սիւրիական իշխաններու և փիւնիկեան քաղաքներու խնդիրներով, ոմանց երկիրը գրաւեց, ոմանց նորէն ծանր հարկերու տակ դրաւ, Իսրայէլի նոր թագաւոր Եհուն ալ անոր հարկատու դարձաւ: Ասորեստանցիք բաւարարուեցան Արգասաբեր կիսալուսնի շուրջը ստեղծուած պետութիւններու այս ձեւի ենթարկման

որովհետեւ նոր հարցեր ծագեցան իրենց առաջ Բարեխոնի և Ուրարտուի յարաբերութեանց առթիւ. այդ ժամանակներուն երեւացին նաեւ Քիմերները: Ասոր հետեւանքով Ասուրները՝ Փիւնիկէցիներուն, արամէական քաղաքները և Իսրայէլը շուրջ մէկ դար հանգիստ ձգեցին: Այդ մէկ դարու ընթացքին Իսրայէլը, Յուդան, Դամասկոսը, անապատի վաշկատունները, տեւական, չընդմիջուող կոիւններու մէջ էին: Այս կոիւններուն մէջ Դամասկոսը աղքատացաւ, կորսնցուց առեւտրական ուղիները, գերիշխանութիւնը: Բայց անոր թուլացումէն ոչ թէ Իսրայէլը օգտուեցաւ, այլ նոր և հզօրացած Ասորեստանը, որ ութերորդ դարու կիսուն նորէն երեւաց Եփրատի և Որոնդէսի ափերուն: Տիգլատ-Բալասար III 738 թ. տիրեց ամբողջ Հիւսիսային Միւրիոյ: Ան կը մօտենար Դամասկոսին և Սամարային: Ասոնց թագաւորները զինակցեցան, բայց ոչ թէ Ասորեստանի, այլ Յուդայի թագաւորին, Եոտանի դէմ: Ասոր յաջորդը Ախազը իր ամբողջ գանձը ուղարկեց Տիգլատ-Բալասարին որ օգնէ իրեն: Ասորեստանցիք արշաւեցին հարաւ և գրաւեցին Դամասկոսը 732 թուին, բնակչութիւնն ալ գերի տարին Միջագետք:

ԻՍՐԱՅԷԼԻ ԱՆԿՈՒՄԸ.— Դամասկոսի գրաւումը ցնցեց Իսրայէլի և ղեկավարութիւնը և բնակչութիւնը: Այդ ժամանակներուն է, որ կ'երեւան նշանաւոր մարգարէներ և խորհրդածութեան նիւթ կը դարձնեն ստեղծուած քաղաքական կացութիւնը: Ութերորդ դարը Ովսե, Ամոս, Յսայի մարգարէներու դարն է: Այդ դարու վերջին քառորդին՝ հարցը չէր դրուեր օտար, փիւնիկեան և քանանական աստուածներու դէմ պայքար մղելու մասին, այլ կը մտածէին, Իսրայէլի պետութիւնը վերկելու մասին: Պէտք էր փրկել Եհովան: Ասոնց վտանգ սպառնացողը այլեւս հարեւան փոքր պետութիւններն չէին, այլ հսկայ Ասորեստանը, որ հին աշխարհի զինուորական ամենամեծ ուժն էր: Մարգարէները հարց կուտային, թէ ինչու Եհովան չի պաշտպանէր իր ժողովուրդը, ինչո՞ւ ան օգնութեան չի հասնիր

Պարբ վտանգուած է Իսրայէլի պետութիւնը: Եւ կը պատասխանէին՝ թէ Իսրայէլը ամբողջութեամբ, «պալատ թէ խրճիթ» լքեցին Եհովան, ընթացան օտար աստուածներու հետեւէն, մոռցան միակ աստծոյ օրէնքներն ու պատուիրանները: Եհովան անոնց պիտի պատժէր: Եւ այս պատժի գործադրողը պիտի ըլլար Ասորեստանի թագաւորը: Ան Եհովայի վրիժառութեան գործիքն էր՝ ընտրեալ բայց երախտամոռ ժողովուրդը պատժելու համար:

Սակայն Եհովան նաև գթոտ է. տաճարներու քաղաքներու աւերումէն, Իսրայէլի ժողովուրդի ցրումէն հետքան պիտի պահպան կանգնի իր ժողովուրդին, պիտի հաւաքէ զանոնք, պիտի տայ նորէն իր օրէնքները և փառաւոր պիտի կացուցանէ. բոլոր ժողովուրդներու մէջ: Մարգարէները կը քարոզէին նաև բարոյական նոր կարգ մը, որ մոռացութեան էր տրուած Իսրայէլի հասարակութեան մէջ. օրէնքը պիտի ըլլար ազգասներու պաշտպան, անարդարութիւնը պիտի վերնար և արդար դատարանը պիտի իշխէր: Ուրեմն մարգարէները անխուսափելի կը համարէին Սամարայի անկումը և Իսրայէլի պետութեան աւերումը: 722 թիւին Ասորեստանի մեծագոյն թագաւորը Սարգոն II գրաւեց Սամարան: Իր արձանագրութեանց մէջ ան կը պատմէ, որ գերի վերցուց 27,290 մարդ, 50 ռազմականք, քնակչութեան միւս մասը թողուց իրենց բախտին: Իսրայէլի վրայ ան նշանակեց ընդհանուր կառավարիչ և ծանր հարկի տակ առաւ մնացեալ քնակչութիւնը: Իսրայէլի մարդիկ գերի տարուեցան Կալակ քաղաքի մէջ և իյարուր գետի ափին, անոնց մէկ մասն ալ ղրկեցին Մարաստան: Քիչ յետոյ Սարգոնը ամայացած և անբնակ Սամարայի մէջ տեղաւորեց Բաբելոնէն գերուածներ:

Սամարայի անկումով կը վերջանայ Իսրայէլի և իր տասը ցեղերու անկախ կեանքը: Պետութեան անկումը առաջ բերաւ ժողովուրդի ապահայրենացումը: Ոչ միայն Բաբելոնացիք, այլ և տնապատի թափառաչրջիկները կուգային հաստատուելու լքուած գիւղերու և քաղաքներու մէջ: Սամարայի անկումը գուռ բացաւ Իսրայէլի ժողո-

վաւրդի աշխարհացրումին: Հիմա՝ մնաց միայն Յուդայի պետութիւնը, որուն շուրջ պիտի մրցէին երկու մեծ ուժեր՝ Ասորեստանը և մեծցող Եգիպտոսը: Այս մրցող կողմերու մէջ Յուդայի պետութիւնը կարողացաւ իր գոյութիւնը պահել Սամարայի անկումէն ետքը մօտ 150 տարի:

II. ՅՈՒԴԱՅԻ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ (935--586)

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՅՔԸ.— Դաւիթի յաջորդները թագաւորեցին Յուդայի վրայ: Քաղաքական տեսակէտէն Յուդայի պատմութիւնը անվերջ ներքին կոիւններու, պալատական դաւադրութեանց պատմութիւն է: Այս կոիւններու մէջ կը թուլնար անոր ռազմի ուժը, կը մթագնէր ազգային միութեան գիտակցութիւնը: Իններորդ դարուն Խորայէլի մէջ կատարուած կրօնական և քաղաքական յեղաշրջումները իրենց անդրադարձումներն ունեցան նաեւ Յուդայի մէջ: Աթալիա իր հաւատարիմ փիւնիկեան թիկնապահ բանակի միջոցով կոտորեց Յոսաֆատի ամբողջ տոհմը և վեց տարի Յուդայի իշխանութիւնը պահեց իր ձեռքը: Բայց կոտորածէն աղատուեր էր միայն մէկը՝ Յոնասը, որ վեց տարի գաղտնի պահուած մնաց քահանայապետի մօտ: Ատալին Երուսաղէմի մէջ վերահաստատեց փիւնիկեան աստուածներու պաշտամունքը: Բայց օտարածին թագուհի դէմ կազմուեցաւ դաւադրութիւն մը: Ատալին սպանուեցաւ քահանայապետի հրամանով, փիւնիկեան քուրմերը կոտորուեցան, թիկնապահ զունդը փախաւ և Ենոփայի պաշտամունքը վերահաստատուեցաւ Երուսաղէմի մէջ:

Յուդայի թագաւորութեան ամենէն փայլուն շրջանը Օզիասի իշխանութեան ժամանակն է: Ան մեծցուց Յուդայի պետութիւնը, ջարդեց Փղշտացիները, հասաւ Կարմիր ծով, գրաւեց Սլաօ նաւահանգիստը, և Եզոմը: Արդ, անոր պետութեան սահմանը կը մօտենար Եգիպտոսին: Ան Երուսաղէմը ամրացուց, և կազմակերպեց նոր բանակ՝ բազմաթիւ հարեւան ցեղերու վարձկաններէն: Օզիասի յաջորդներէն

մէկը Ախազը՝ ըրաւ բախտորոշ քայլ մը. Իսրայէլի թագաւոր Հոփսէէն վտանգուած ըլլալով, իր բոլոր գանձերը նուէր զրկեց Ասորեստանի Տիգրատ-Բալասար III-ին և խնդրեց միջամտել հրէական գործերուն յօգուտ իրեն: Անոր որդւոյն՝ Յզէկիայի՝ օրով Ասորեստանցիները կը միջամտեն Յուդայի գործերուն մէջ: Անոնք գրաւեր էին Դամասկոսը, Սամաթիան և Սենեքերիմի օրով, 701 թուին մտան Յուդայի երկիրը և պաշարեցին Երուսաղէմը: Յուդայի թագաւորի քաղաքական գործերու խորհրդատուն Եսային էր: Ան թէ թագաւորին, թէ կռուողներուն քաջութիւն կը ներշնչէր ըսելով, որ Երուսաղէմը պիտի ազատագրուի, որ ասոր համար միայն կը պահանջուի չչեղուիլ Եհովայի ուղիէն: Եւ իրօք Երուսաղէմը ազատուեցաւ, Սենեքերիմի բանակի մէջ վարակիչ հիւանդութիւն ինկաւ և Ասուրները վերցուցին քաղաքի պաշարումը:

Եզէկիայի օրով և անոր կարգադրութեամբ տեղի ունեցաւ կրօնական բարենորոգութեան փորձ մը. ան հրամայեց ոչնչացնել բոլոր օտար աստուածներու արձանները Յուդայի պետութեան մէջ: Անոր պետութիւնը բաւականին ընդարձակ էր և բազմաթիւ ցեղեր կը բնակուէին հոն: Այս փորձ մըն էր օտարներն ալ հաղորդակից ընելու Եհովայի պաշտամունքին: Բայց կրօնական այս բարենորոգութիւնը հետեւանք չունեցաւ:

* * *

Եզէկիայի մահէն ետքը Յուդայի պետութեան կացութիւնը նոյնքան ծանր էր, որքան առաջ: Ասորեստանը՝ Ասուրհատոնի թագաւորութեան շրջանին՝ (681—668) ամբողջ Արեւելքի տէրն էր, բազմաթիւ իշխաններ անոր հարկատու էին: Եզէկիայի յաջորդը՝ Մանասէն պարտաւորուեցաւ տարեկան տուրք վճարել Ասորեստանին: Իսկ երբ Ասուր-Պանիպալը կ'արշաւէր Եգիպտոս, Մանասէն՝ արամէական, պաղեստինեան բազմաթիւ իշխաններու հետ կ'երթար անոր իր հպատակութիւնը յայտնելու: Այսպիսով Ասորեստանի հո-

վանաւորութիւնը հաստատուեցաւ Յուդայի պետութեան վրայ: Եւ եթէ Երուսաղէմը՝ Սամարիայի նման չինկաւ Ասորեստանի ձեռքը, պարզ այն պատճառով էր, որ Յուդայի թագաւորները կը ջանային իրենց յանձնարարութիւնները կատարիլ անոր հանդէպ ճշդապահութեամբ: Մաւնաէն ոչ միայն Ասորեստանի հետ կը գործակցէր, այլեւ կը ջանար հարեւան իշխաններու հետ համերաշխ պարիլ և ամեն կերպ անոնց յարմարուիլ: Այս նպատակով ան հովանաւորեց օտար կրօնական պաշտամունքները, ինքն ալ էր հեռացած Եհովայէն և հակուած էր փիւնիկեան և սեմական ցեղերու կրօններուն, Ան նոյնիսկ իր որդիները զոհաբերեց Մոլոխ աստուծուն: Ան հալածեց մարգարէները, իսկ ըստ աւանդութեան Եսայի մարգարէն ալ օպանուեցաւ անոր օրով:

ԵՐԿՐՈՐԻ ՕՐԻՆԱՅ ԳԻՐԲԸ.— Յուդայի թագաւոր Հովսիայի իշխանութեան ժամանակ 621 թուին, տեղի ունեցաւ կրօնական բարենորոգութիւն մը, որ պատմութեան մէջ յայտնի է երկրորդ օրինաց գիրք անուան տակ: Տաճարի մէջ իրայտ եկաւ օրէնքներու նոր գիրք մը: Այս գիրքը Եհովայի մարգարէներու, անոնց կուսակցութեան գործն էր: Այս գիրքը աչքի կ'իյնար իր արտակարգ միաստուածութեան ուսմունքով: Մարգարէներու երկարատե գործունէութեան և անոնց մտածման մէջ Եհովան ստացեր էր նոր կերպարանաւորում. ան շարունակ պայքարի մէջ էր բոլոր շրջապատող աստուածներուն հետ:

Այս վերջիններն ալ գրաւեր էին Յուդայութեան մէկ զգալի մասը՝ թէ բարձր, թէ խոնարհ խաւերու մէջ: Եհովայի հետեւողներու թիւը կը նուազէր: Պէտք էր փրկել թէ Եհովան և թէ հրէութիւնը: Այսպիսի միջավայրի մէջ կը մշակուէր Եհովայի նոր դիմագիծը՝ ան միակ տէրը կը ներկայացուէր այս աշխարհի, ան միակ աստուածն էր տիեզերքի: Անկէ գուրս աստուածներ չկային: Եւ Երկրորդ Օրինաց գիրքի յայտնաբերումը Հովսիան կը մղէ կատարելու իր կրօնական բարենորոգութիւնը: Ամբողջ Յուդայի

պնտութեան մէջ կը կործանուին օտար աստուածներու արածանները, կ'աւերուին անոնց տաճարները, կը կոտորուին անոնց քրմական դասերը: Կրօնական այս վերածնութեան նպատակն էր վերակառուցել Յուդայի թագաւորութիւնը, տալ անոր ազգային-կրօնական բնօրինակը և հանել դուրս հարեւան մեծ ու փոքր ժողովուրդներու ազդեցութենէն:

ՅՈՒԴԱՅԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ.— 612 թուին Նինուէն կործանուեցաւ: Հրէաները կարծեցին թէ իրենք ազատարարուեցան Արիւելքի միւս ազգութիւններու հետ միասին: Բայց այդպէս չեղաւ: Ասորեստանի տեղը բռնեց Բաբելոնի նոր կայսրութիւնը, որ իր իշխանութեան տակ առաւ ամբողջ սեմական աշխարհը՝ Արքասաբեր կիսալուսնի երկու թեւերը: Յուդան չհաշտուեցաւ նոր ստեղծուած կացութեան հետ. չուզեց հպատակուիլ Բաբելոնին: Միւս կողմէն Պաղեստինի վրայ իշխել կ'ուզէր նոր վերածնուող Եգիպտոսը, որ կը փորձէր հասնիլ մինչեւ Եփրատ: Եգիպտոսի զէմ մղուած ճակատամարտի մը մէջ ալ սպաննուեցաւ Հովսիան: Անոր յաջորդներէն մէկը՝ Յովակիմը ենթարկուեցաւ Բաբելոնի վտանգին: Նաբուգոդոնոսորը յաղթեց Նէխատյ II փարաւոնին Կարկէմիշի մօտ, գրաւեց Պաղեստինը և պահանջեց, որ Յուդան ընդունի իր հովանին ու տուրք տայ: Յովակիմը մերժեց. Բաբելոնի թագաւորը գրաւեց Երուսաղէմը 597 թիւին: Սեւեկիա թագաւորի օրով Յուդան ապստամբուեցաւ Բաբելոնի զէմ: Այս անգամ Նաբուգոդոնոսորը գրաւեց Երուսաղէմը. կործանեց տաճարը, ամբողջ բնակչութիւնը գերի տարուեցաւ Բաբելոն: Այս Բաբելոնի գերութիւնն է, որ տեւեց 50 տարի (587—538): Վերջացաւ Հրէութեան անկախ պետականութեան շրջանը. սկսաւ Հրէութեան ցրումի. հրէական հայրենիքի կորուստի շրջանը:

ԻՍՐԱՅԷԼԻ ԿՐՕՆԸ

Իսրայէլի ցեղերը Մովսէսէն և Քանանի մէջ հաստատուելէն առաջ բազմաստուածեան էին բոլոր սեմական ժողովուրդներու նման: Անոնք կը պաշտէին, զոհեր կը մատուցանէին երկնային մարմիններուն, բնութեան երեւոյթներուն. անոնց մէջ տարածուած էր քարի, ծառի, ջուրի, լեռան պաշտամունքը: Մեծ յարգ ունէր անոնց շրջանակին մէջ նաև նախահայրերու յարգանքը:

Իսրայէլի նահապետներու կրօնը շատ բնդհանուր բան ունէր Միջագետքի՝ սումէր-ակադական կրօնին հետ: Ըստ աւանդութեան Արրահամի ծննդավայրը Ուր քաղաքն էր: Իսրայէլի ցեղերը երկար ժամանակ Քանանացիներու հետ ապրեր էին միասին, ունէին միևնոյն աստուածները, ծեսերը: Մէկ աստժոյ գաղափարը Իսրայէլի աւանդութիւնը կը կոպէ Մովսէսի անուան հետ: Մինչև Մովսէսի երեւան դալը Իսրայէլի աստուած Եհովան նոյնպիսի աստուած էր ինչպէս Մարդուկը՝ Բաբելոնի, Ասուրը՝ Ասորեստանի համար: Ան ալ ունէր իր մէջ արեւի, երկնքի պաշտամունքի տարրերը և Եհովան հաւանաբար սկզբնապէս բնութեան ուժերու մարմնացում կը համարուէր: Աւելի ուշ Եհովայի պաշտամունքին միացան նոր, աւելի բարձր կրօնական եւ բարոյական գաղափարներ: Իսրայէլի կրօնական այս բարեփոխութիւնը կը կոպուի Մովսէսի անուան հետ: Այսպէս՝ անգամ մը մշակուած, բարեփոխուած կրօնը աւելի զարգացաւ և կատարելագործուեցաւ Իսրայէլի մարգարէներու շրջանակին մէջ: Ասոնք մէկ կողմէն կը մշակէին ու կը լրացնէին Մովսէսի կրօնը, միւս կողմէն կը պաշտպանէին՝ օտար նորմուծութիւններու, զանազան յաւելում-

ներու դէմ, որոնք անյարիր էին անոր ոգուն և բարոյականին: Իսրայէլի ամբողջ պատմութիւնը Եհովայի կրօնի շուրջը մղուած պայքարն է՝ քիչ թիւով հաւատարմներու, մարգարէներու և իսրայէլի զանգուածներու միջև, որոնք յաճախ և դիւրութեամբ կը լքէին Մովսէսի կրօնը և կ'երթային ռոսկի հորթերու» ետեւէն:

ՄՈՎՍԷՍԻ ԿՐԾՆԸ.— Մովսէսը ամենէն առաջ իսրայէլի քանի մը ցեղերու Եգիպտոսէն դուրս բերողն է, ազատարարը: Անոր առաջնորդութեան տակ եղող ցեղերը Պաղեստինի և Եգիպտոսի սահմանակից վայրերուն մէջ հանդիպեցան իրենց հետու և մօտիկ ազգակիցներուն և բոլորովին օտար, սեմական ու վաչկատուն ժողովուրդներուն: Մովսէս ասոնց բոլորին միացուց մէկ կրօնի, մէկ աստուծոյ շուրջ: Անոր կառուցած իսրայէլը չունէր ծագման նոյնութիւն, այլ միայն կրօնական միութիւն: Եւ սկզբնական շրջանին իսրայէլի ցեղերը միացած էին Եհովայի միջոցով: Իսրայէլը ոչ թէ պետական, կամ ազգային, այլ կրօնական հաւատքականութիւն էր: Իսրայէլի ցեղերը բոլորովին անկախ էին, հազուադէպ ձեւով կը միանային իրարու հետ, նոյն իսկ պետութիւն կազմած չըլանին: Ան աւելի շուտ ցեղերու համադաշնակցութիւն էր, քան կեդրոնացած, ներքնապէս միացած պետութիւն:

Մովսէսի կրօնը ամբողջովին և մաքուր միաստուածութիւն չէր: Շատ մարգարէներու մօտ ալ Եհովայի կրօնը միայն իսրայէլի համար էր և ընաւ չէր ժխտեր ուրիշ ազգերու աստուածներու գոյութիւնը: Արեւելքի բոլոր մեծ կրօնները ազգային էին, անոնց աստուածները կը հովանաւորէին միայն մէկ ազգ. Եհովան ալ բացառապէս իսրայէլի ցեղերու աստուածն էր և անոնց հովանաւորը: Բայց ան ամենէն մեծ և ուժեղ աստուածն էր: Ան ճգնաժամային պահուն ոչ միայն կ'ազատէր իր ժողովուրդը, այլ և հարեւան մեծ պետութիւններու ղեկավարները իր կամքին գործիք կը դարձնէր իր նպատակներուն համար:

ԵՀՈՎԱՆ.— Ան արեւելեան միւս երկիրներու աստ-

ուածններէն կը տարբերուէր այն բանով, որ անհանդուրժող էր: Միայն ինքը՝ Ենովան պէտք է ըլլար Իսրայէլի աստուածը. ան չէր հանդուրժեր, որ Իսրայէլը իրմէ զատ ուրիշ աստուածներ ալ ունենար. եթէ Իսրայէլի ցեղերը շեղուէին այս պատուիրանէն, ան կը պատժէր, վրէժ կը լուծէր. Ենովան վրէժինդիր էր: Աստուծուն կարելի չէր շօշափելի և տեսանելի պատկերել, արձանել, նիւթականացնել: Ենովան ձեւաւորել քարի, հողի, մետաղի միջոցով հաւասար կ'ըլլար կռապաշտութեան: Աստուած ոգի էր, ան ամեն տեղ էր, պէտք էր դղալ անոր ներկայութիւնը, անոր պատուիրանները պէտք էր յարգել, պահել: Կրօնական այսպիսի ըմբռնումներ չէին կրնար նպաստել արուեստի՝ քանդակագործութեան, նկարչութեան զարգացման: Մերձաւոր Արեւելքի ժողովուրդներու մէջ կրօնն ու արուեստը սերտորէն կապուած են իրարու հետ, կրօնը ներշնչարան մըն է արուեստի համար: Իսրայէլի մօտ Ենովայի պատուէրները կտրեցին այս կապը կրօնի և արուեստի մէջ: Այս բանը ազդեց նաեւ տաճարներու շինութեանց, անոնց դարդարանքին վրայ. ամեն արուեստ, արձանագործութիւն, քանդակ, արձան դուրս էր արուած Իսրայէլի տաճարէն:

ԵՆՈՎԱՅԻ ԵՒ ԻՍՐԱՅԷԼԻ ԴԱՇԻՆՔԸ.— Ենովան Իսրայէլի հետ դաշինք էր կնքած, որ Իսրայէլ պէտք է ընդունի և գործադրէ Ենովայի տասնաբանեայ պատուէրները: Ան կ'ըսէ... «Եթէ դուք լսեք իմ ձայնս, եթէ հաւատարիմ մնաք դաշինքի՝ դուք կ'ըսանաք բոլոր ազգերու մէջ իմ ամենեւնի քանկազից պատկերք»: Դաշինք կնքելով Ենովայի հետ՝ Իսրայէլը կը դառնար ընտելալ ժողովուրդ: Ենովան ընտրած էր Իսրայէլը իր միտումները, իր ծրագիրները այս աշխարհի մէջ իրագործելու համար: Հոսկէ ալ կ'ըսկսէր Իսրայէլի առաքելութիւնը, պատմութեան մէջ դառնալ հաղորդիչը եւ փառովիչը աստուածային կամքին եւ խօսքին: Ենովան իր ժողովրդի հետ էր թէ խաղաղութեան և թէ պատերազմի ժամանակ: Ան է, որ առաջնորդեց Իսրայէլը դէպի Պաղեստին, ան է, որ յաղթանակներ տուաւ անոր, հսկեց անոր մեծաւ

ցումին, թիւին և որակին: Բայց երբեմն ալ Իսրայէլը այդ ծանր յանձնառու թիւններու տակ՝ կը կթէր, կ'ընկճուէր, կը թուլնար, կը գայթակղէր, կը շեղուէր և կ'ընթանար ուրիշ աստուածներու ետեւէն՝ Քանանի և փիւնիկեան Բահազներու ետեւէն: Ան ալ՝ արեւելքի ընդ միւս ազգերու նման՝ կ'ուզէր շօշափելի, նիւթականացած տեսնել իր աստուածը, կ'ուզէր երթալ այն աստուածներու ետեւէն, որոնք շատ բան չէին պահանջեր, նուազ խտապահանջ էին: Ենովան ճիգ և կատարելութիւն կը պահանջէր, Իսրայէլը շատ յաճախ այս ճիգը չէր ընէր, հոսկէ ալ դաշինքի խզումն Ենովայի և Իսրայէլի միջև: Պատիժը խիստ կ'ըլլար, Ենովան ընտրեալ ժողովուրդը կը մատնէր թշնամիներու ձեռքը, գերի կը զրկէր Ասորեստան, Բաբելոն. ուրիշներու ձեռքով կը քանդէր Երուսաղէմը, մինչև որ ընտրեալ ժողովուրդը զզջար և նորէն վերագառնար գէպի Ենովան:

ԻԼԻՐՈՅԱԿԱՆ ՊԼԱՆՆԶՆԵՐ. — Ենովայի և Իսրայէլի դաշինքը բարոյական պահանջներ ունէր: Մովսէսը այդ անկերպեր էր տասնաբանեայ պատուիրաններու մէջ: Այս պատուիրաններու մէջ որոշուած էր Իսրայէլի ամեն մէկ անհատի պարտականութիւնը միւսին հանդէպ, ինչպէս նաև Իսրայէլի պարտաւորութիւնները Ենովայի հանդէպ: Իսրայէլը միշտ պէտք է յիշէր, որ Ենովան յաւիտեակաւն էր, ան իր ազատարարն էր, անկէ բացի ուրիշ որեւէ աստուած չպիտի ունենար. աստուծոյ պատկերը չպիտի վերածէր արձանի. ոեւէ բան չպիտի պաշտէր երկնքի և կամ ալ երկրի վրայ. վեց օրը՝ աշխատանքի համար էր, եօթերորդը Ենովայինն էր. այդ օրը արգիլուած էր աշխատիլը: Ատոնք են Ենովայի հանդէպ ունեցած պարտաւորութիւնները: Իսրայէլցիները իրարու հանդէպ ալ ունէին որոշ պարտաւորութիւններ: Ատոնց վրայ էր կառուցուած Իսրայէլի հասարակութիւնը: Ենովան կը թելադրէր յարգել ծնողները, չի սպանել, չի շնալ, ուրիշներու ընտանիքի վրայ աչք չուեննալ, գողութիւն չընել, սուտ չի վկայել, թոյլերուն չի գրկել, որբերուն չի շահագործել: Ենովան կը

պահանջէր անձնական կաթաբելուքիւն եւ ընկերային արդարութիւն:

Կրօնը և բարոյական ներշնչումները Եհովայի պատուիրաններու մէջ միացած էին իրարու հետ: Բարոյական պատուէրները կը բղխէին կրօնէն: Այսպէս էր արեւելքի բոլոր կրօններու մէջ: Եհովայի բարոյական հրահանգները վաչկատուն, պարզունակ կեանքի համար էին մշակուած, ուր չկային անտեսական բարդ յարաբերութիւն, դասակարգեր, ներքին կռիւներ: Մովսէսի այս պատուիրանները մշակուեցան երբ Խորայէլի ցեղերը դեռ կը թափառէին անպատներուն մէջ, երբ տոհմական, գերդաստանային կապերը ուժեղ էին և հասարակութիւնը կառուցուած էր արիւնակցական կապերու վրայ:

Երբ Խորայէլի ցեղերը առանձին կամ միացեալ ուժերով գրաւեցին «Լեւտեաց Երկիրը», երբ վաչկատունը դարձաւ նստակեաց, երբ առաջ եկաւ գոյքի, ունեցուածքի անհաւասարութիւն, ստեղծուեցաւ դասային բաժանում, և սուեւտուր, ու հողը սկսաւ մեծ դեր խաղալ մարդոց յարաբերութիւններուն մէջ, այն ժամանակ զգացին, որ անպատի մէջ մշակուած տասնարանեայ պատուիրանները անբաւարար էին մարդոց յարաբերութիւնները կարգաւորելու: Այդ պատճառով ալ տեւական ընդհարումներ հին բարոյական պատուէրներու և նոր կենցաղի, նոր հասարակութեան մէջ: Դաշինքը կը խախտուէր և Եհովան կ'ընդհարուէր իր ժողովուրդին հետ՝ Եհովան՝ նոր պայմաններուն մէջ կը դառնար որբերու, այրիներու, ընդհանրապէս թոյլերու և հարստահարուածներու, խոնարհ խաւերու պաշտպան: Ան արդարութիւն սերմանող է:

ՏԱՊԱՆԱԿ ՈՒԵՏԻՆ ԵՒ ՏԱՃԱՐԸ.— Վաչկատուն և խաչօ նարածութեան շրջանին Խորայէլի կրօնական պաշտամունքը, ծէսերը շատ պարզ էին. աղօթք, բարձրադիր վայրերու վրայ ոչխարի և ցուլի զոհաբերութիւն՝ ամենէն անհրաժեշտն էին: Եհովայի և Խորայէլի զաշինքի խորհրդանիշը Տապանակ Ուխտին էր՝ մայրի փայտէ, ոսկեզօծ սըն-

տառակ մը, որաւ մէջ պահուած էին տասնաբանեայ պատուիր-
քանները: Վաչկատուն Իսրայէլի ցեղերը այն կը փոխադ-
րէին մէկ տեղէն միւսը իրենց թափառումներու ընթացքին:
Յսկ երբ անոնք նստակեաց դարձան և Քանանի մէջ հաս-
տատուեցան՝ պէտք զգացին տաճարի մը, մնայուն սրբա-
վայրի մը: Տաճարի շինութիւնը կապուած էր իշխանու-
թեան կեդրոնացման, թագաւորութեան հետ: Երուսաղէմը
Գաւիթի օրով վերածուեցաւ մայրաքաղաքի, բնական է որ
ան ալ դառնար Տապանակ Ուխտիին պահպանման միակ
վայրը: Սողոմոն կառուցեց տաճարը: Ան կառուցուեցաւ
օտար ճարտարապետներու, արհեստաւորներու ձեռքով, որ
նշան է թէ Իսրայէլը X-րդ դարուն չունէր որակուած մաս-
նագէտներ և արհեստաւորներ: Շինութեան համար կ'աշ-
խատէին տասնեակ հազարաւոր Քանանացիներ, նոյնքան
ալ Փիւնիկէցիներ՝ որոնք իրենց անտառներէն մայրի ծա-
ռեր կը կտրէին, քարեր կը հանէին քարահանքերէն, կը
տաշէին, կը յղէին և կը փոխադրէին Երուսաղէմ: 30.000
աշխատաւորներ երեք նուագով՝ իւրաքանչիւրը տաս հա-
զար մարդ՝ եօթ տարի շարունակ կ'աշխատէին տաճարի
շինութեան վրայ Տիրոսի ճարտարապետներու ղեկավարու-
թեամբ: Տաճարը կը բարձրանար բարձր և ընդարձակ հար-
թաքուրի մը վրայ, որուն երկարութիւնը 450 մեթր էր,
լայնութիւնը 300 մեթր: Ան շրջապատուած էր կրկնակի
պարիսպներով: Տաճարը երեք մաս ունէր. նախ Գաւիթը,
ուր կը հաւաքուէր ժողովուրդը: Այդ շրջապատուած էր
արտաքին պարիսպով, որ ընդարձակ դարպասներ ունէր,
իսկ վերեւը կառուցուած էին աշտարակներ. երկրորդ, ա-
ւելի փոքր պարիսպը կը բաժնէր մէկ ուրիշ գաւիթ ար-
տաքին պարիսպէն, անոր կեդրոնը կառուցուած էր աւագան՝
մաքրիչ ջրով լի. աւագանը յենուած էր տասներկու ցու-
լերու կռնակին: Զոհարեութենէն առաջ քահանաները կը
մաքրուէին աւագանի ջրերով: Անոր քով կար զոհաբերու-
թեան սեղանը: Այս փոքր գաւիթը մուտք ունէին միայն
քահանաները:

Անոր խորքին մէջ կառուցուած էր սրբարանը՝ հրե-
սուն մեթր երկարութեամբ և սասը մեթր լայնքով: Շին-
ուած ամուր, դիմացկուն քարերէ և ծածկուած մայրի ոս-
կեզօծ փայտերով: Սրբարանը երկու բաժանմունք ունէր,
մէկը սրբատեղին էր, ուր կը պահուէին եօթ թեւերով տաս
աշտանակներ, սեղան մը որուն վրայ ամեն շաբաթ կը դը-
նէին տասներկու հաց, յատկացուած Ղեւտինբուն: Երկ-
րորդ բաժինը սրբութիւն սրբոցն էր, ուր գետեղուած էր
Տապանակ Ուխտին: Վերջինիս մէջ պահուած էին երկու
քարէ տախտակները, որ Մովսէս՝ ըստ Իսրայէլի աւանդու-
թեան ստացեր էր Սինայի մէջ Եհովայէն: Առաջին Քա-
հանան տարին անգամ մը կը մտնէր այդ սրբարանը:

ՂԵՒՏԻՆԵՐԸ.— Ոչ Դաւիթը, ոչ Սողոմոնը քահանա-
յապետներ չէին: Իսրայէլի մէջ հոգեւոր և աշխարհիկ իշ-
խանութիւնները միացած չէին ինչպէս էր Եգիպտոսի և
Միջագետքի մէջ: Թագաւորը ոչ աստուած էր, ոչ ալ աս-
տուծոյ որդի: Հոգեւոր պետերը, քուրմերը դուրս կուգա-
յին՝ Ղեւտի տոհմէն: Այդ իսկ պատճառով անոնք ստացեր
էին իրենց «Ղեւտիններ» անունը: Քահանայութիւնը ասոնց
մէջ ժառանգական էր: Ասոնք, Սիմոնի ցեղի հետ՝ կապ-
ուած չէին որոշ հողամասի՝ ինչպէս միւս ցեղերը. անոնք
ցրուած էին Իսրայէլի բոլոր ցեղերուն մէջ և քահանայա-
կան պաշտօն կը կատարէին: Բարեւոնի գերութենէն առաջ
քահանայապետի պաշտօն չկար այլ կար միայն առաջին
քահանայ, որ թագաւորի մօտ կը գտնուէր և անկէ կա-
խում ունէր: Քահանաները կը հսկէին պաշտամունքին, կը
հետեւէին, որ շաբաթը սրբութեամբ պահպանուի, կը նա
խագահէին կրօնական արարողութիւններուն: Եհովան ալ
խստապահանջ չէր, ան կ'ուզէր միայն ամենօրեայ աղօթք,
հաց, խունկ, զոհուած միս: Տօներու մէջ մեծագոյնը գատ-
կի տօնն էր, որ Եգիպտոսէն ելնելու յիշատակին էր նուիր-
ուած: Այդ օրը ամեն ընտանիք ոչխար մը կը զոհէր և
փոքր, կարճ ճամբորդութիւն մը պէտք է կատարեր՝ Ե-
գիպտոսէն դուրս գալը՝ յիշեցնող: Եհովան բարդ ծէսերու,

արարողութիւններու սիրահար չէր. ան կը պահանջէր մաքուր, գթոտ սիրտ, արդարութիւն և տասնաբանեայ պատուիրաններու տառացի կատարում: Եւ Ղեւտիները կը հրակէին որ այս բոլորը կատարուի ամենայն մանրամասնութեամբ: Անոնք Ենովայի կրօնին տառին կառչեցան, և Իսրայէլի կրօնը դարձաւ ծէս և արարողութիւն: Ասոր դէմ Ղեւտիները անկարող էին պայքարելու, իրենք էին, որ կրօնի այդ ըմբռնումով և դրութեամբ կը բաւականանային, բայց այդ մեռած, քարացած կրօնը բաւարար չէր մարգարէներու համար:

ՄԱՐԳԱՐԷՆԵՐ.— Իսրայէլի ցեղերը մինչև Պաղեստինի մէջ հաստատուելին կ'ապրէին պարզունակ, հովուական կեանքով: Նստակեաց դառնալով անոնք ամենօրեայ շրփման մէջ մտան փղշտացիներու, Քանանացիներու, Փիւնիկէցիներու հետ: Ասոր հետեւանքն այն եղաւ, որ անոնք շատ բան իւրացուցին հարեւան ժողովուրդներու կենցաղէն, կրօնէն, զբաղմունքէն: Անոնք յարմարուեցան նոր միջավայրին. շատերը հարստացան առևտուրով, շատերը սորուեցան արհեստներ: Իսրայէլի նախկին միատարր, պարզունակ հասարակութիւնը շերտաւորուեցաւ. ստեղծուեցաւ հարուստներ եւ աղքատներ: Աղքատներու ձեռքէն հողը դուրս կուգար և հարուստները կը բռնագրաւէին չքաւորներու, որբեւայրիներու, որբերու և խոնարհ խաւերու ինչքն ու ստացուածքը: Եւ այս բոլորի հետեւանքով Իսրայէլի կրօնն ալ լուրջ ձեւափոխման ենթարկուեցաւ: Հարուստները, իշխանները լքեցին Ենովան և անոր տասնաբանեայ պատուիրանները: Հարեւան՝ առևտրական և երկրագործական երկիրներու աստուածները Բահաղներն ու Աստարտէները անոնց համար դարձան զրաւիչ, հարազատ, ըլլալով աւելի հասկնալի անոր մտքին ու սրտին, և աւելի յօշափելի: Անոնց մեծութիւնը աւելի զգալի էր հսկայ տաճարներով, ճոխ, հարուստ ծէսերով, արարողութիւններով և հաւաքական խնճոյքներով: Անոնցմէ շատերը կը կապուէին վայելքի, հեշտասիրութեան հետ: Այս բոլորը Իսրայէլի

ժողովուրդի բարձր, ղեկավար, վարիչ դասերու մէջ ճեղքուածք առաջացուցին. շատերը լքեցին Եհովան և հետեւեցան օտար կրօններուն: Ատոր նպաստեցին նաև տեղացիներու հետ կնքուած ամուսնութիւնները: Քանանացի, Փիւնիկէցի աղջիկներ տեղ բռնեցին Իսրայէլի հարստացած ընտանիքներու, արքայական պալատներու մէջ: Անոնց հետ միասին Իսրայէլի մէջ մուտք կը գործէին փիւնիկեան և քանանական աստուածները: Աստուածներուն կը հետեւէին քուրմեր և քրմուհիներ, մէկ ամբողջ շքախումբ, որոնք օտար կրօնական գաղափարներու տարածողները կը հանդիսանային: Լաւագոյն զէպքին՝ Իսրայէլի ղեկավարները կը շարունակէին Եհովային նուէր տալ, զո՞ մատուցանել, ծէսերը կատարել, բայց մէկ կողմ կը թողուին Եհովայի բարոյական պատուէրները և կրօնական պահանջները: Կ'ըստեղծուէր փարիսեցիութիւն, կեղծիք և արտաքին ձեւերու պաշտամունք:

Նստակեցութեանն ետքը Իսրայէլի մէջ տեղի ունեցաւ երկու շատ բնորոշ յեղաշրջում՝ ընկերային անհաւասարութեան առաջացումը, Եհովային լիւր: Ատոր դէմ դուրս կու գան մարգարէները: Իսրայէլի անկման բոլոր շրջաններուն կային, փոքրաթիւ խումբ մարդիկ, որոնք միշտ հաւատարիմ մնացին Եհովային: Ատոնք մարգարէներն էին, յայտնատեսները, ապագայով մտահոգողները, Իսրայէլի անկումը նշողները, և անոր ախտերէն ազատուելու, մաքրուելու ուղիները ցոյց տուողները: Անոնք ներշնչուած էին Եհովայէն, անոր մարգարէներն էին, նոր խօսքի և գործի քարոզիչները: Անոնք ընդհանրապէս մասնակից չէին այս աշխարհի չարիքներուն, վայելքներուն, թշնամի էին օտար ազդեցութեանց: Փիւնիկէի և Քանանի կրօնները անոնց համար հեթանոսութիւն էին: Անոնք խստորէն կը քննադատէին ընկերային տիրող կարգը, հարուստներու դասի յառաջացումն ու շուայլ կենցաղը:

Անոնք կ'ապրէին մեծ քաղաքներէն հեռու, մենութեան մէջ, շարունակ կը մտորէին այս աշխարհի կարգի, եղած

սանարդարութեան չարաշահութիւններու մասին: Շատերն անոնցմէ ներքին պահանջ մը կ'ըզգային հրապարակով խօսելու, Եհովայի պատուէրները յիշեցնելու և «Լնտրեալ ժողովուրդին» կարգի հրաւիրելու: Այդ պահուն անոնք իրենց մէջ կ'ըզգային Եհովայի շունչը:

Անպատի մենութենէն յետոյ անոնք ի յայտ կուգան քաղաքներու մէջ, կը կանգնին պալատներու առաջ և յանդուգն ձեւով կը դատապարտեն այս աշխարհի տէրերը: Անոնք ուժեղ կ'ըզգան իրենց, որովհետեւ Եհովայի անունէն կը խօսին և արդարութեան դատը կը պաշտպանեն: Անոնք հասարակ ծաղում ունին, երբեմն հովիւներ են՝ պարզ կենցաղով, զգեստաւորումով, բայց ոգեկան մեծ ուժով և պայքարելու կամքով:

Եղ. Ի. Ա. Ն. — Աքաբի թագաւորութեան ժամանակ հանդէս եկաւ Եղիա մարգարէն: Եղիան հովիւ էր. խտապահանջ էր ինքն իրեն հանդէպ. կը խուսափէր ճոխ զգեստաւորումէ. կը սնանէր կաթնեղէնով: Ան կը պատմէր իր հետեւողներուն թէ՛ ի՛նչ շարիքներ կը կատարուի արքայական պալատին մէջ. կը քարոզէր թէ մեղք է հարստութիւնը, որ ձեռք է բերուած հարստահարութեամբ. մեղք է վայելքը: Կեանքը շեղուեր է Եհովայի օրէնքներէն: Ան կը պահանջէր վերադարձ դէպի պարզունակ կեանքը: Եհովան կը պահանջէ հաւասարութիւն, արդարութիւն: «Չվիրաւորել սիրիները. սրբերը եւ չվաւորները»: Եղիան կործանեց Բահազին նուիրուած շէնքերը, կոտորեց չորսհարիւր յիսուն քուրմեր, իսկ անոր աշակերտը՝ Եղիսէն կոտորել տուաւ թագաւորոջ տոհմը. սպաննել տուաւ հարուստները և փիւնիկեան ու քանանական աստուածներու քուրմերը: Եղիսէի պայքարն ու հալածանքը ուղղուած էր որքան օտար ազգեցութիւններու հետեւողներուն, նոյնքան և ընկերային շարիք սերմանողներու դէմ: Անոր գործը ազգային կրօնական և ընկերային հիմեր ունի:

Մարգարէները անտարբեր չէին իսրայէլի քաղաքական բախտի հանդէպ: Ամովսը՝ կը յայտարարէր իր ժողո-

վուրդին Ասորեստանի գալիք մեծացուցն ու յաղթանակը: Ան այս մեծացումը կը համարէր Եհովայի տնօրինութեամբ կատարուող գործ՝ օտարի միջոցով պէտք էր պատժել Իսրայէլը: Ան միտժամանակ կը պայքարէր իշխանութեան, հարուստներու դէմ, որոնք իսպառ լքեք էին Եհովան:

ԵՍՍԹԻ. — Ութերորդ դարի քառասնական թուերէն մինչեւ դարու վերջը Յուդայի Եզեկիա թագաւորի օրով կ'ապրէր Յսային՝ Իսրայէլի մեծագոյն մտածողներէն մէկը: Եզեկիան ինքը մարգարէներու կուսակցութեան մարդ էր: Ան իր պալատի մէջ տեղ կուտար մարգարէներուն և կը դարձնէր իր քաղաքական խորհրդատուները: Եսային անոր պալատին մէջ տեսակ մը ներքին և արտաքին գործերու վարիչն էր: Ան միակ մարգարէն էր, որ բարձր դիրքի հասաւ և կը ղեկավարէր Իսրայէլի քաղաքական կեանքը: Անոր մտքին մէջ Իսրայէլի՝ ազգային աստուածը Եհովան՝ կը դառնայ ամբողջ աշխարհի աստուած, տիեզերքի բախտի տնօրինողը: Ոչինչ չի կատարուիր առանց անոր կամքին. ան ոչ միայն արդարութեան աստուածն է, այլ և ամենէն կատարեալն է: Իսրայէլի կրօնական միտքը հասաւ այն ճշմարտութեան, որ Յնովան միակ եւ նմարիս աստուածն է: Ան ոչ միայն չի հանդուրժէր, որ Իսրայէլը ուրիշ, օտար աստուածներու հետեւի. այլ և ուրիշ աստուածները «հեքանոս եւ սուս» աստուածներ են: Եսայի մարգարէի օրով Ասորեստանի վտանգը կը ժօտենար Իսրայէլին. ի՞նչ պէտք էր ընել, ինչպէ՞ս փրկել Եհովայի փոքրիկ հօտը: Ինչ գիմաշրջում պիտի ունենայ Իսրայէլը: Եսային կը մերժէ թէ Ասորեստանեան և թէ եգիպտական դիմաշրջումը: Երկուքն ալ թշնամի են Իսրայէլին: Պէտք է ըլլալ երկու ուժերէն դուրս: Արտաքին ղէպքերու լոյսի տակ ան կը ֆանայ լուծել ներքին հարցերը. «Եհովայի ուժը գործի եւ փառքի մէջ չէ, ոչ քազաւորներու եւ ոչ ալ հարսութեան մէջ, ոչ հող ունեցալու եւ կամ նման երեւոյթներու մէջ: Այդ բոլոր կրնան մէկ գեպեցիկ օր ոչնչաւալ: Իսկ եթէ մեր մէջ ամեն ինչ արգարացի ըլլայ, եթէ օր-

տապե՛հ հաւասարութիւնը, եթէ աղիւս որք եւ այլին պաշտ-
պանութիւն գտնեն, այն ժամանակ միայն եհովան մեզի կ'օգ-
նէ: Բայց Եզեկիայէն ետքը Իսրայէլի մէջ իշխանութիւնն
անցաւ Եսայիի հակառակորդներու ձեռքը, ինքը մարգարէն
փախաւ և Իսրայէլի քաղաքական ճակատագիրը յարտեւ
փոփոխութեան ենթարկուեց:

ԵՐԵՄԻԱ.— Ան Եսայի մարգարէի աշակերտն էր. ան
պալատներու մէջ տեղ չունէր. սգակիր մարգարէ էր. քուրջ
կը հագնէր, իշխանութիւնները կը հալածէին զինք իր քա-
ղաքական և ընկերային գաղափարներու համար: Ան զէմ
էր ամեն պատերազմիս Կ'ըսէր, որ Երուսաղէմը չպիտի
պաշտպանել Բաբելոնի զէմ: Եթէ Եհովան կամենայ, որ
մեր քաղաքը ջնջուի, ապա ի դուր է մեր պաշտպանու-
թեան ճիգերը: Աստուծոյ կամքը պիտի կատարուի. իսկ
եթէ ան կը ցանկայ, որ մենք ազատուինք, ինքը կը
պաշտպանէ իր համեստ հօտը, անոր պետութիւնը: Ուրիմն
միայն Եհովան կը փրկէ Յուդան: Եւ ընդհանրապէս ըստ
Երեմիայի Եհովան կը մեծնայ, նոր կերպարանք կ'ըստա-
նայ, կը դառնայ ամբողջ մարդկութեան բախտի անօրինո-
ղը. միակ աստուածը. միւսները կեղծ են, արժանի են
կործանումի: Իսրայէլի առաքելութիւնը պիտի ըլլայ Եհո-
վայի պաշամուտնքը վառ պահել, և անոր անունը աշ-
խարհի մէջ տարածել: Բայց ընդունա՞կ է ան այդ գործին:
Իսրայէլի զեկավարներուն ան կ'ուղղէր հետեւեալը. «Ձեզ մօտ
ներկայիս նեմարութիւն չկայ, դուք կոխոսե՛ր ե՛ք ասուծոյ
պատուիրանը, արհամարհել անոր օրհնները: Ինք՝ հաւուս-
ներդ, զօրապետներդ, ազնուականներդ մեծագոյն յանցաւոր-
ներն են. . . : Այդ ձեզի պիտի չի ներուի, քանի որ երկաթի
ձողը չի ջարդել ձեր գանգը եւ կողերը. . . եւ ասուած այդ
կ'ընէ ուրիշ ժողովուրդներու ձեռով. . . ասոնք ասուծոյ
մտրակն են, որ կը հարուածէ անոնց, որոնք կը մոռնան աս-
տուծոյ նեմարութիւնը: Երեմիայի խօսքերը չյեղաչրջեցին
հրէութիւնը. Բաբելոնը գրաւեց Երուսաղէմը, Իսրայէլի
ընակիչները գերի տարուեցան Բաբելոն, Իսրայէլի կրօնա-
կան և ազգային գոյութեան հիմքերը ջախջախուած էին:
Հայրենիքը կորսուած, նուաճուած, ժողովուրդը գերի, ա-
մեն ինչ խաւար և անյայտ:

ՄԱՍՆ ԶՈՐՐՈՐԴ

ՍԵՄԱԿԱՆ ԱԾԽԱՐՅ

Ա. ԳԼՈՒԽ

ՄԻՋԱԳԵՏՔ

ԲԱԺԱՆՈՒՄՆ.— Միջագետքը Արդասաբեր կիսալուսնի արեւելեան թեւն է. ան տարածուած է Եփրատի և Տիգրիսի մէջ: Այս գետերը կ'իջնեն Հայաստանի լեռներէն, կը բերին առատ ջուր, տիղմ, բուսահող և կը պարարտացնին երկիրը: Առանց այս գետերու Միջագետքը կը դառնայ արաբսիւրիական անապատներու շարունակութիւնը: Իր աշխարհագրական դիրքով Միջագետքը կը բաժնենք երկու շրջանի՝ հարաւը Սումէրի երկիրն է, անկէ հիւսիս՝ Ակադն է: Այս երկու երկիրները միեւնոյն մակերեսն ունին, միեւնոյն կլիման և համեմատաբար նոր կազմութիւն: Երբեմն Պարսից ծովը շատ աւելի խոր կը թափանցէր երկրի խորքը. այսօրուայ Միջագետքի կէսէն աւելին նեղ և խոր ծովածոց մըն էր, շրջապատուած արեւելեան և հիւսիսային կողմերէն լեռներով և բլուրներով: Բայց տասնեակ հազարաւոր տարիներու ընթացքին Հայաստանի գետերու բերած տիղմը նստեր է այնտեղ, քայլ առ քայլ նուաճեր է ծովեղբրքը և կազմեր հարաւային Միջագետքը: Սումէրը և Ակադը հայկական գետերու ստեղծածն են, ճիշդ այնպէս ինչպէս Տիլգան Նեղրսի ստեղծածն է: Սումէրը և Ակադը սկզբնական շրջանին կը կոչուէին Սինար, իսկ աւելի ուշ Բաբելոն:

Հիւսիսը Միջագետքի բարձրադիր մասն է, բլրաշատ մէկ երկիր, մէկ ընդարձակ տարածսթիւն երկու գետերու մէջ: Անոր արեւելեան մասը Տիգրիսի հովիտն է. լեռներով և բլուրներով ծածկուած մէկ շրջան, ուր պատմական ժամանակներուն մեծցաւ ու հզօրացաւ Ասորեստանը: Անոր հարաւ-արեւմուտքը մինչեւ Եփրատ կը տարածուի ընդարձակ տափաստան մը, որ դարնան կը ծածկուի խոտով և վաչկատուն ժողովուրդներուն համար կը ծառայէ որպէս արօտատեղի: Այդ Հիւսիսային Միջագետքն է՝ Եփրատի և Տիգրիսի մէջ ձգուող լայնածաւալ հողաշերտը:

ՍԱՀՄԱՆՆԵՐԸ.— Եփրատի և Տիգրիսի երկու կողմերը, բուն Միջագետքէն դուրս կը տարածուին ընդարձակ տափաստաններ: Տիգրիսի և Զագրոշեան լեռներու մէջ այդ տափաստանները հին ժամանակ անասնապահներու համար կը ծառայէին իբրեւ ձմեռանոց. անոնք կ'իջնային լեռներէն և կը պատսպարուէին դաշտերու մէջ: Եփրատի եւ արաբ-սիւրիական անապատի մեջ այդ օափաստանը աստիճանաբար կը փոխուէր անապատի քանի հեռանար Եփրատէն: Հիւսիսէն՝ անոր սահմանը Տաւրոսեան լեռնաշղթան է, որ Հայկական բարձրաւանդակը կը բաժնէ Միջագետքէն: Արեւելքէն Զագրոշեան լեռները Միջագետքը կը բաժնեն Իրանի բարձրաւանդակէն, այս երկու լեռնաշղթաները իրար կը կտրեն կազմելով ընդարձակ բաւիղ մը, լեռնահանգոյց մը աստիճանաբար հարաւ և հարաւ-արեւմուտք իջնող լեռնալանջերով: Միջագետքը այս ձևով հիւսիսէն և արեւելքէն շրջապատուած է զուգահեռ լեռնաշղթաներու ցանցով: Ասոնք կրկնակի արժէք ունին Միջագետքի համար:

Հնագոյն շրջանէն այս լեռներու լանջերուն կեդրոնացած էին անասնապահ և վաչկատուն հասարակութեան մեծ խումբեր. անոնք տարբեր լեզուներ և տարբեր ծագում ունէին, բայց ընկերային միեւնոյն կազմն ունէին և միեւնոյն միտումը հանդէս կը բերէին, այն է իջնալ իրենց լեռներէն, հաստատուիլ արգասաբեր դաշտերու մէջ, տէր դառնալ նստակեացներու հարստութեան, լքել լեռնաբնակ

և վաչկատուն կեանքը, դատնաջ նստակեաց, երկրագործ: Միջագետքը չրջապատող լեռնեքոջ հարուստ էին շինանիւթերով՝ որոնցմէ զուրկ էր Արգասաբեր Կիսալուսնի արեւելիսան թեւը: Անոնք ունէին բազմատեսակ քար, շիրափայտ, մետաղներ: Այս բոլորը դաշտաբնակներուն անհրաժեշտ էին կեանքի բարձր ձեւեր ստեղծելու, աւելի կատարեալ գործիքներ և զէնքեր ունենալու համար: Հոսկէ ալ այն յամառ միտումը, որ երեւան կը բերէին թէ լեռնաբնակները և թէ դաշտաբնակները: Դաշտ իջնել և տէր դառնալ դաշտեցիներու հարատեւեան և լեռ բարձրանալ տէր դառնալ չրջապատող լեռներուն, անոնց բնական հարատեւ թիւննարուն կամ համախումբ ուժերով կասեցնել լեռնային ցղերու արշաւանքները: Կ'ըսկսուի դաւսաբնակի եւ լեռնաբնակի պայքար, որ Միջագետքի պատմութեան ամենեւնի մնայուն եւ բնորոշ փաստերէն մէկն է:

Արեւմուտքէն Միջագետքը չրջապատուած է Միւրիոյ և Արաբիոյ անապատներով: Ասոնց թիկունքին ինկած է Արգասաբեր Կիսալուսնի Արևմտեան թեւը: Օաղիսներու շարք մը Միւրիոյ անապատին մէջ, Եփրատէն հարաւ կը կազմեն կամուրջ մը և կը միացնեն Միջագետքը Միջերկրականին: Այդ օաղիսները առաջացած են Եփրատի ջուրերէն, որոնք դարերու ընթացքին ծծուեր են աւազոտ հողի մէջ և ստորերկրեայ ուղիներով թափանցեր են հարաւ մէկ տեղ անոնք բղխեր են որպէս աղբիւր, որպէս գետակ, շատ տեղ ալ վաչկատունները փորեր են ջրհորներ: Այս աղբիւրներու, ջրհորներու շուրջը ստեղծուեր է բուսական եւ կենդանական կեանք: Այս շրջանի բնակչութիւնը շարժուել էր, վաչկատուն: Կ'ապրէին հոս այնքան ատեն, որ ջուր կայ: Երբ ցամաքէր ջուրը և աղբիւրը կամ ջրհորը՝ վաչկատուններու համայնքը կը ցրուէր, կը գաղթէր նոր օաղիս որոնելու: Օաղիսները բնական ուղիներ են միջազգային կարաւանային առևտուրի. անոնք անապատի մեջ, կամ անոր ծայրամասերուն կ'ընդարձակուէին, կը դառնան քաղաքներ, սպա քաղաք-պետութիւններ, կը ջանան առևտրական

LA MÉSOPOTAMIE


aux 4^e et 3^e millénaires
av. J.-C.



Désert syrien

----- Le Golfe Persique (Mer Erythrée)
Il est envahlé au cours des siècles.
 La carte donne la situation ancienne. Le trait ----- indique le rivage actuel et le cours actuel des fleuves dans la partie du golfe aujourd'hui envahlé.

----- Canal antique



ՄԻՋԱԳԵՏԻ

փոխանակութեանն ուղիները պահել իրենց ձեռքը և իշխել Արգասաբեր կիսալուսնի երկու թեւերու վրայ: Հիւսիսային Սիրիոյ այդ օազիսները, Եփրատեան գիծը՝ հազարաւոր տարիներու ընթացքին եղեր են ուղիներ՝ շարունակ շարժման մէջ գտնուող ժողովուրդներու համար, յատկապէս սեմախօսներու, որոնք արեւմուտքէն դիմեր են դէպի արեւելք՝ Միջագետք:

ՋԻԱԲԱՇԵՈՒԹԻՒՆ.— ԲՈՒՍԱԿԱՆ ԵՒ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ.— Կլիմայական տեսակէտէն Միջագետքը երկուքի կրնանք բաժնել: Հիւսիսը ցամաքային է. ձմեռը ցուրտ, լեռները կը ծածկուին ձիւնով, աշնան կ'անձրեւէ, ամառը շատ տաք է. հարաւի մասին մէջ անձրեւներ չեն տեղաբանի մը ամիս անտանելի տաք կ'ըլլայ, ամենէն հարաւը ճահճոտ է, վատառողջ. արեւը ամին բան կ'այրէ. երկիրը գարնան կը ծածկուի Եփրատի և Տիգրիսի ջուրերով: Ինչպէս Եգիպտոսի մէջ այնպէս ալ Միջագետքի մէջ անհրաժեշտ է մարդոց համախումբ աշխատանքը բնութեան ուժերը կարգաւորելու, իրեն ծառայեցնելու, ճահիճները չորցնելու, ողողումներու դէմն առնելու, ջրանցքներ կառուցելու, նորոգելու, ջուրերը ամբարելու համար: Սումէր-Ակադի մէջ հողէն մեծ արդիւնք ստանալու համար անհրաժեշտ էր, որ ջուրը երկար ժամանակ լճանար հողին վրայ, այդ հողը կը պահանջէ պարբերական և արհեստական ոռոգում: Միայն այս պարագային հարաւի ջերմ արեւը իր կենսարար դերը կը կատարէ, այլապէս ողողումներէն ետքը հողը կը կարծրանայ, անոր մէջ նետուած հացահատիկները ու սերմերը սնունդ չեն ստանար, չեն աճիր:

Հնագոյն շրջանէն Տիգրիսի և Եփրատի շուրջ համախումբուած մարդկային խումբերու կեանքը դիւրին չէր. սնունք յամառ և տեւական աշխատանք պիտի ընէին ջուրի ընթացքը կանոնաւորելու, պիտի պայքարէին հիւսանդութիւններու, տենդի, մահուան դէմ: Անոնց անասունները միշտ կրնային կոտորուիլ եթէ ջուր չհաւաքէին, արհեստական լճեր չկառուցէին: Անոնց հարստութիւնը կրնար

հարեւան լեռնաքնակներու աւարին ենթարկուելի, եթէ չըկազմէին զինուորական միութիւններ՝ ինքնապաշտպանութեան համար: Թէ արտաքին վտանգը, թէ երկրի ոռոգման խնդիրը Միջագետքի բնակիչներուն կը հարկադրէր միասնական աշխատանք և քաղաքական միութիւն:

ԲՈՒՍԱՎԱՍՆ ԿԵԱՆՔ.— Գարին, ցորենը, կորէկը այստեղ առատօրէն կը մշակուէին: Առաջին բնակիչները այս բալտրը բերին իրենց լեռնաշխարհէն: Ըստ Հերոդոտի, որ այս երկիրն այցելւեր էր V-րդ դարուն (Ք. Ա.). Միջագետքի հողը մէկին կուտայ 200, մինչեւ իսկ 300 բերք: Միջագետքը անտառներ և պտղատու ծառեր չունի: Հարաւի ճահճային վայրերու մէջ կար եղէգն, որ կը ծառայէր որ պէս շինանիւթ, ինչպէս և գրիչ՝ աղիւսներու վրայ գրելու համար: Եղէգի մոխիրը լաւ միջոց էր գգեստներ մաքրելու Միակ ծառը, որ շատ մեծ արժէք ունէր Միջագետքի համար արմաւենին էր, որու պտուղէն, արմաւէն կը պատրաստէին ալիւր, գինի, շաքար, քացախ. անոր թելուոր մասերէն կը շինէին հիւսուածեղէն, կորիզն ալ կը գործածէին իբրև վառելանիւթ դարբնոցներու մէջ. և երբեմն ալ կը ծեծէին, կը մանրացնէին և կենդանիներուն կուտային որպէս կեր: Կեդրոնական մասերու մէջ կը հասուննար խաղող, նուռ:

Ուրեմն Միջագետքի բնակչութեան համար հացը, չէր պակսեր. անոնց սնունդի միաւորը արմաւն էր, բայց փայտի, շինանիւթի կարիք ան միշտ զգացեր է: Բարեկունը մետաղներ չունէր: Հիւսիսը հարուստ էր հանքերով, անտառներով և քարով:

ԿԵՆՒՄՆԱՎԱՍՆ ԿԵԱՆՔ.— Կենդանական աշխարհն ալ աղքատ չէր. գետերը լիքն էին ձուկերով և ճահճները թռչուններով: Արմաւի հետ՝ ձուկը ամենէն տարածուած ուտելիքն էր: Մարդիկ ընտանեցուցեր էին ոչխարը, եզը, այծը, խոզը, շունը: Էջը բեռնակիր էր: Մեղուաբուծութիւնը կը զարգանար Եփրատի միջին և ստորին հոսանքի շուրջը: Ան մեծ յարգ ունէր վաչկատուններու մօտ. ձին եր-

կար ժամանակ անձանօթ էր Միջագետքին. ուղտը դէր չէր խաղար անոր տնտեսութեան մէջ, ան անապատային կենդանի էր: Էշը ընդհակառակը՝ կարաւանային կենդանի էր, կը լծէին նոյն իսկ ոսղմակառքերու: Վայրի կենդանիներու մասին մեզ դադափար կու տան Ասորեստանցիներու հարթաքանդակները, որսի տեսարանները: Միջագետքի մէջ կ'ապրէին վարազ, առիւծ, վայրի ցուլ, եղջերու, ընծառիւծ: Ասոնք որսի նիւթ էին արքաներու, իշխաններու համար: Պատմական շրջանին մարդը յամառօրէն կը պայքարէր դադաններու դէմ, դուրս կ'ընէր բնակելի վայրերէն, անոնք ապաստան կը դտնէին հարաւի ճահճուտներու և մօտիկ անապատներու մէջ, կամ Ասորեստանի լեռներուն կամ անտառներուն մէջ:

Այսպէս, Միջագետքն ունէր շատ բան ինքնաբաւ ըլլալու համար, բայց շատ բան ալ կը պակսէր իրեն, ինչ որ էր մղէր անոր բնակիչները դուրսի հետ կապուելու, կոիւով կամ համաձայնութեամբ ձեռք բերելու իր չունեցածը:

Բ. ԳԼՈՒԽ

I. ՍՈՒՄԵՐՆԵՐ

ՍՈՒՄԵՐՆԵՐ.— Միջագետքի հնագոյն բնակիչները Սու-
մէրներն էին. անոնք հոս հաստատուեր էին սեմականնե-
րէն առաջ: Սումէրները ոչ-հնդեւրոպական ժողովուրդ էին,
ոչ ալ սեմական: Լեզուով և ազգագրական ծագումով կը
տարբերուէին երկուքէն ալ: Անոնք ցեղակից և լեզուակից
էին Փոքր Ասիոյ բնիկ ժողովուրդներուն հետ, որոնց ընդ-
հանուր անունով մենք կը կոչենք ազիանիկներ կամ լեռ-
նայիններ: Ուրեմն սեմականներու, հնդեւրոպացիներու հետ
մենք ունինք լեզուական և ցեղական մէկ երրորդ իուամբ,
որ անոնց հետ միասին եղեր է Մերձաւոր Արեւելքի ազգե-
րու, ժողովուրդներու կազմիչ տարրը:

Սումէրները Միջագետք իջան կամ Հայաստանէն կամ
Էլամէն: Անոնք շատ կանուխ, շուրջ 5000 թուին բաժնուե-
ցան մայր ցեղախումբէն՝ ըջան Եփրատի ու Տիգրիսի հովի-
տը և դիմեցին դէպի հարաւ՝ թերեւս քշուելով ուրիշ ժո-
ղովուրդներէն: Հոս անոնք աննպաստ պայմաններու մէջ
կը գտնուէին: Պէտք է պայքարէին ճահիճներու, անառողջ
կլիմայի և լեռներէն իջնող Էլամցիներու դէմ: Անոնք յա-
մառ աշխատողներ էին, դիմացկուն, տոկուն զինուորներ և
միայն իրենց աշխատանքով, պայքարով կերպարանափո-
խեցին Սումէրը և դարձուցին արդասաբեր երկիր մը:
Ջրանցքներ կառուցին, ճահիճնիր չորցուցին, արհեստական
լճեր շինեցին և ապահովեցին իրենց արտերու ոռոգումը:
Եւ այս աշխատանքներու և պայքարներու մէջ մշակուեցաւ
Սումէրներու նկարագիրը՝ յամառ, տոկուն, սակաւապէտ:

ՔԱՂԱՔ.ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐ.— Սկիզբէն և եթ մենք Սու-
մէրներուն կը տեսնանք իբրև քաղաքներու բնակիչներ:

Անոնք ալ անցեր էին տոհմական-նահապետական կեանքի շրջանէն, բայց պատմական շրջանէն առաջ է կատարուած այդ փաստը: Դաղթերու, կռիւներու մէջ նախնական ընկերային կեանքը կը քայքայուի, կը մշակուին նոր ձեւեր, առաջ կուգայ անհաւասարութիւն, կ'ըստեղծեն իշխաններ, հպատակներ: Հօտի, արօտատեղիներու, հողի, Զուրի տէրը կը դառնայ իշխան, որուն համար կ'աշխատին բազմահազար մարդիկ: Սոււմէրները կ'ըստեղծեն քաղաքական ձեւ մը, որ մենք կը կոչենք քաղաք-պետութիւն, այսինքն կեդրոնական քաղաք մը, որ շրջակայ աւաններով, գիւղերով կը կազմէ պետութիւն մը:

Սոււմէրներու այս քաղաք պետութիւններէն նշանաւոր դարձան Ուրը, Ուրուքը, Քիչը, Լագաշը, Նիբուրը: Ասոնք չորրորդ հազարամեակի կէսերէն սկսած կ'ապրէին քաղաքակրթական ներուժ կեանքով. ստեղծեր էին բարձր մշակոյթ: Սկիզբը արտաքին մեծ վտանգներու ենթակայ չէին. կը կռուէին արեւելեան լեռներէն իջնող էլամներու, Պարսից ծոցի արեւմտեան կողմէն եկող անապատի վաչկատուններու դէմ, բայց շուրջ 2800 թիւին անոնց դէմ կանգնեցաւ սեմական վտանգը, որուն դէմ պայքարելով Սոււմէրները թուլցան և ի վերջոյ զիջեցին անոնց թէ քաղական առաջնութիւնը և թէ իրենք ալ ձուլուեցան սեմական տարրին մէջ:

ՊԱՏԵՍԻ.— Ս.մեն քաղաք-պետութիւն ունէր իր հովանաւոր աստուածը, ճիշդ եգիպտական նոմերու նման: Հոս թագաւորը քաղաք-պետութեան և կառավարիչն էր և քրմապետը: Քուրմ-թագաւորը կը կոչուէր Պասեսխ: Ան պետութեան տէրը չէր, միապետ չէր, երկրի և իշխանութեան իսկական տէրը Աստուածն էր, Պատէսին միայն անոր տեղապահն էր. գործակալը: Ան աստուծոյ անուշով կը կառավարէր: Պատէսի առաջին և նուիրական գործը հովանաւոր աստուծոյ համար տաճար կառուցանելն էր, անոր հարստութիւնը մեծցնելը, աղօթքներ մատուցանելը, տաճարական դաշտերը հերկելը, ցանելը և արդիւնքը աստու-

ծոյ յանձնելը: Պատէսին միաժամանակ քաղաք-պետութեան զինուորական ուժերու հրամանատարն էր, ինչպէս և քաղաքական գործերու տնօրինողը: Ան իր մէջ կը կեդրոնացնէր հոգեւոր և աշխարհիկ իշխանութիւնը:

ՊԱՒԱՏԸ, ՏԱՃԱՐԸ. Պատէսին կ'ապրէր պալատի մէջ, որուն մօտ կառուցուած էր հովանաւոր աստուծոյ տաճարը: Պալատը և տաճարը կառուցուած էին բարձրագիւր տեղերու կամ արհեստական բլուրներու վրայ, ուրկէ կարելի էր տեսնել ամբողջ քաղաք-պետութեան սահմանները: Պալատն ու տաճարը պարսպապատ էին. պարիսպն էր որ քաղաքի բնոյթ կուտար անոնց: Հոս ուխտի կուգային հարեւան գիւղերու, աւաններու բնակիչները: Իսկ Նիքօւրի տաճարը համառումէրական համբաւ ունէր: Թէպէտ պառակուած, բաժնուած մանր քաղաքական միութիւններու, Սումէրները կը միանային Նիրուրի մեծ աստուծոյ շուրջ, կազմելով կրօնական միութիւն մը: Ոչ մէկ գործ կը ձեռնարկէին, ոչ մէկ դաշինք կը կնքէին, կամ պատերազմ կ'ընէին առանց անոր կարծիքը հարցնելու: Քաղաքը կը կառուցուէր ջրանցքներուն մօտ: Զրանցքներով ու անոնց օփերով, քաղաքը կը կապուէր պետութեան բոլոր մասերուն հետ, ինչպէս և ուրիշ քաղաք-պետութիւններու հետ: Կամօց-կամօց պարիսպներէն դուրս կը հաւաքուէր դրսեկ հասարակութիւն, կը կառուցուէին շէնքեր ուխտաւորներու, արհեստաւորներու, պաշտօնեաներու, ճամբորդներու համար. շտեմարաններ, պահեստներ՝ պալատի և տաճարական հարստութիւնը միտերելու համար: Ոմանք գիւղերէ կը փոխադրուէին հոն ապահովութեան համար, ոմանք իրենց ապրանքները վաճառելու համար: Ասոր հետեւանքով պարիսպներէն դուրս կ'ըստեղծուէր նոր քաղաք, որուն համար պարիսպէն ներս գտնուած տաճարն ու պալատը կը դառնար միջնաբերդ ու սրբավայր:

Պատէսին շրջապատուած էր պալատական կանանցով, բարձր պաշտօնեաներով, թիկնապահ բանակով, ծառաներով: Պալատի մէջ կային բազմաթիւ դպիրներ, որոնք ա-

ղիւաներու վրայ սեպագրերով կը գրէին երկրի մէջ պատահած դէպքերը, աստուածներու պատգամները, կը պահէին տարեգրութիւններ. . . Պալատի մէջ կային երաժիշտներ, խոհարարներ, հիւսողներ, մանողներ, սափրիչներ, վարսահարթարներ: Անոնց գլուխը կանգնած էր պալատական աւագը: Պալատը մէկ ամբողջ տնտեսութիւն էր, որմէ ետք կուգար տաճարը: Ան աստուծոյ բնակարանն էր. այնտեղ էր զետեղուած աստուծոյ արձանը. տաճարը ոչ միայն սրբատեղի էր, հաւատացեալներու համար ուխտատեղի, այլ և հարուստ տնտեսութիւն մըն էր. թէ Պատէսին և թէ հաւատացեալները անոր կը նուիրէին հողեր, անասուններ, թանկագին քարեր, տուներ: Տաճարը կալուածատիրութիւն մըն է: Ամեն տաճար ունէր իր քրմական դասը՝ թէ աստուծոյ ծառայելու և թէ տաճարական հարստութիւնը կառավարելու համար:

ՄԻՋ-ՔԱՂԱՔԱՅԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ. — Սումէրական քաղաք-պետութիւնները տեւական կռիւներու մէջ էին իրար հետ. երբեմն միջքաղաքային կռիւները կը վերջանային զինադադարով, դաշինքներ կը կնքէին, երբեմն քոնի մը քաղաք-պետութիւններու սահմանային վէճերը, ջըրանցքներու հարցը կը լուծուէր իրաւարարութեամբ և երրորդ, չեղաք ուժի միջամտութեամբ, երբեմն ալ մէկ քոնի քաղաք-պետութիւններ կը միանային միւսներու դէմ, «աշխարհակալութիւններ» կ'ընէին: Եւ կռիւները, ներքին պատերազմները տեւական բնոյթ ունէին, որովհետեւ ամեն քաղաք-պետութիւն իր շահերը կը հետապնդէր: Յաղթող Պատէսին իրեն կուտար նոր տիրոսս, «արեայ բազում քաղաքներու, արեայ աշխարհի շուք կողմերու»: Այս վերջին անունը կ'ընդունէր ան. եթէ դուրս գար Սումէրի սահմաններէն և հասնէր ծովերուն: Այս կռիւներու հետեւանքով է, որ քանի մը անգամ սումէրական շատ քաղաք-պետութիւնները միացան մէկ իշխանութեան տակ, բայց այդ բանը կարճատեւ եղաւ: Հոս քաղաք-պետութեան չըվոխարիսնց երկրային պետութիւնը, որ բոլոր սումէրական

քաղաքները առնէր իր իշխանութեան տակ, ստեղծէր մէկ սումէրական, ազգային պետութիւն: Մրցութեան, բաժանման օգին, տեղական շահերու գիտակցութիւնը, շատ աւելի խորն էր քան համասումէրական միութեան գաղափարը:

ԼԱԿԱՇԻ ԳԵՐԻՇԵԱՆՆՈՒԹԻՒՆԸ.— Մինչև 3000 թիւերը սումէրական պետութիւնները մատնուած էին անիշխանութեան. այնուհետեւ մէկ քանի քաղաքներ հերթով առաջնութիւն ստացան: Առաջինը Լագաշն էր, որ փորձեց ամբողջ Սումէրը միացնել իր Պատէսի իշխանութեան տակ: Ուր-Նիմա, Էանոււր, գրաւեցին Ուրը, Ուրուկը, Ումոււրը, արշաւեցին հիւսիս՝ Ակադի վրայ, որ սեմական քաղաք-պետութիւն մըն էր: Անոնք մտան Էլամ, որ Սումէրի արեւելեան սահմաններուն լեռնային երկիր մըն էր և միշտ վտանգաւոր սումէրական քաղաքներու համար. ան հարուստ էր փայտով, քարով և պղինձով: Էանոււր իր այս նուաճումները կը յաւերժացնէր քարակոթողով մը: Ան նշանաւոր էր ռազմական արուեստի տեսակէտէն: Թագաւորը կ'արշաւէր բանակի գլուխն անցած. ան հազուադէպ էր զինուորներու նման, գլուխը սաղաւարտով ծածկուած, որպէս պաշտպանութեան զէնք ունէր վահան, իբրև յարձակման զէնք պղինձէ կացին՝ փայտի վրայ ամրացած, նիզակ՝ սրածայր մետաղեայ սլաքով: Բարակոթողի վերել կանգնած էր իրենց աստուածը, որ կ'առաջնորդէր բանակը, յաղթանակ կու տար: Կռիւնները անոր անունով կը մղուէին:

Բոլոր մեծ քաղաքները ճիգ կ'ընէին ոչ միայն սումէրական քաղաքներուն աէր դառնալու, այլ և գրաւել մէկ կողմէն լեռնային Էլամը, միւս կողմէն հասնիլ Տաւրոսեան աշխարհին՝ պղինձ, փայտ, շինաքար ձեռք բերելու համար: Բայց այս նուաճումները սուղ կը նստէին սումէրական քաղաքներուն. ժողովուրդը կը նուազէր, երբեմն քաղաքները կ'աւերուէին: Լագաշի քրմական դասը հակառակ էր նուաճումներուն: Ժողովրդական զանգուածներու գլուխն անցած ան կը կռուէր ռազմաւէր պատէսի-

ներու դէմ: Երկու քուրմ յաջորդաբար տէր գարձան Լա-
գաշի իշխանութեան, եղան պատէսի: Անոնք նուաճումներ
չըրին, ուղեցին խաղաղ սպրիլ իրենց հարեւաններու հետ,
բայց հետամուտ եղան թաճարական հարստութիւնները ա-
ւելցնելուն: Այդ պատճառով ալ անոնցմէ դժգոհ մնացին
հասարակութեան խոնարհ խաւերը, որոնք տաճարներուն
մեծ տուրքեր կու տային: Ներքին շարժումներ տեղի ու-
նեցան, տեսակ մը քաղաքացիական կռիւ և իշխանութիւնը
անցաւ հասարակ պաշտօնեայի մը ձեռքը: Ան իրեն յայտա-
բարեց «Թագաւոր Լագաւի եւ Սուսերի», քանի մը բարե-
նորոգումներ ըրաւ, սահմանափակեց քրմական դասի իրա-
ւունքները և արտօնութիւնները: Գրաւեց տաճարական հո-
ղերու մէկ մասը, աւելի արդար օրէնքներ սահմանեց:

ՈՒՄՄԱՅԻ ՄԵԾԱՆԱԼԸ.— Այս կռիւներու մէջ Լագաշը
թուլցաւ և զօրացաւ Ումմա քաղաքը: Անոր պատէսին
գրաւեց Լագաշը, Բիշը, հասաւ Պարսից Ծոց, բարձրացաւ
Եփրատի ափերով, մինչեւ Միջերկրական ծով: Նուաճուած
երկիրներու, քաղաքներու աստուածները դերի վերցուց և
դասեց սուամէրական աստուածներու շարքը: Այս ձեւով օ-
տար աստուածներու զօրութիւնը և ուժը օժանդակ պիտի
ըլլային միայն իրեն: Բալորին զոհեր սահմանեց համաձայն
անոնց դիրքին, ուժին, բայց միշտ առաջին տեղը վերա-
պահեց Ումմայի աստուածոյ Նիդարային, որ երբեմն հացա-
հատիկի, երբեմն բուսական աստուած էր և որու պաշտա-
մունքը ընդհանրացած էր ամբողջ Սուամէրի մէջ: Ումմայի
Թագաւորը այս նոր և մեծ պետութեան մայրաքաղաք
դարձուց Ուրուկը 2897-ին և ընդունեց «թագաւոր Ուրուկի
եւ երկրի» տիտղոսը, այսինքն Սուամէրի և Վերկրի», ամ-
բողջ Միջագետքի Թագաւոր:

II. ՍԵՄԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՒ ՄՈՒՏՔԸ

Սեմական ժողովուրդները աւելի քան երկու հազար
տարի առաջնակարգ քաղաքական և մշակութային դեր

խաղացին Մերձաւոր Արեւելքի մէջ: Անոնք իշխեցին անապատային գօտիին, անապատներու, տափաստաններու, Արգասաբեր Կիսալուսնի երկու թեւերուն: Կարմիր ծովէն մինչեւ Եփրատ և Տաւրոսեան լեռնաշղթան, հոնկէ ալ մինչեւ Պարսից ծոց՝ անոնց սարածման, հաստատման, քաղաքական գործի և քաղաքակրթական մեծ աշխատանքի շրջանն է:

Սեմախօսները Միջերկրականեան ցեղախումբին կը պատկանէին: Ասոնք շատ հին ժամանակներէն տարածուեր էին Միջերկրականի ափերուն, կղզիներու վրայ, այս պատճառով ալ կը կոչուին «Միջերկրականեան» անունով: Անոնց արեւելեան թեւը կը հասնէր մինչեւ Հնդկաստան: Այս ցեղախումբը երկարագլուխ էր, թուխ աչք և մորթ ունէր, բարձրահասակ էր և նուրբ: Անոնք կը կազմէին Եգիպտոսի, Կրէտէի, Յունաստանի ամենահին բնակչութիւնը: Ասոնց մէկ հատուածը կ'ապրէր արաբ սուրիական երկիրներու, անապատի և տափաստաններու մէջ: Հոս անոնք մշակեցին իւրայատուկ մարդաբանական կազմ և հոգեւոր մշակոյթ՝ ու լեզու: Միջերկրական ցեղի այդ արեւելեան կլամ սեմական հատուածը բաժնուեցաւ բազմաթիւ մասերու, որոնցմէ իւրաքանչիւրը մշակեց իր լեզուն՝ կառուցուած ընդհանուր հիմքերու վրայ:

ՆԱԽՆԱԿԱՆ ԱՃԵԼԱՎԱՅՐԸ.— Հաւանաբար Սիւրիան է եղած սեմախօս ժողովուրդներու նախնական աճեալայրը, ուրկէ շատ ուշ անոնք գաղթեցին զանազան ուղղութեամբ: Անապատային գօտիի երկիրներէն միայն Սիւրիան տուեալներ ունէր այդպիսի հայրենիք ըլլալու: Ան բաւական ընդարձակ էր մարդկային մեծ զանգուածներ պարփակելու համար: Անոր գետեզերքները, Միջերկրական ծովու ափերը, խոտաւէտ տափաստանները յարմար միջավայր էին ի մի համախմբելու ցեղերը՝ միացնելու, ձուլելու և ստեղծելու միալեզու հասարակութիւն: Բայց միաժամանակ այդ նախնական ցեղախումբը դիւրութեամբ կը ցրուէր թէ ընտկան աճումի հետեւանքով և թէ անասուններ

քառ համար նոր արօտատեղիներ որոնելու համար: Անոնց մէկ հատուածը կը շարժուէր դէպի հիւսիս՝ մինչեւ Ամասնոս և Տաւրոս լեռները, որ բնական սահմանն էր անոնց յառաջ[սահագացութեան: Մէկ ուրիշ հատուածը կը դիմէր հարաւ՝ և կը հասնէր Կարմիր ծովու ափերը և կը հաստատուէր ծովեզերեայ շրջաններուն: Ասոնցմէ ճիւղ մը մ[սրբ-ճուեցաւ Արաբիոյ խորքերը և հոս մեկուսացած պայմաններու մէջ պահեց սեմական ժողովուրդներու յատուկ մարդաբանական յատկանիշները՝ աւելի անաղարտ գրուածքան մէջ քան միւս վայրերուն մէջ, ուր սեմականները այս կամ այն չափով խառնուեցան ուրիշ ցեղերու, ժողովուրդներու հետ: Մէկ ուրիշ հատուածն ալ Եփրատի ափերով իջաւ Միջագետք՝ պարբերաբար իրարու յաջորդող գաղթումներով: Սեմական ժողովուրդներու այս ցրուումը, բաժանումը տեղի չունեցաւ մէկ անգամէն, այլ աստիճանաբար: Շուրջ 3000 թուին արդէն կատարուած էր բաժանումը, բայց հետագային եւս տեղի ունեցաւ քանի մը գաղթումներ մեծ մասամբ դէպի Միջագետք: Այս բոլորի հետեւանքով սեմականներու նախնական լեզուն տարբեր խումբերու և տարբեր վայրերու մէջ զգալի փոփոխութեան ենթարկուեցաւ: Հատուածներու մէջ առաջ եկան բարբառներ, որոնք հասան գրական լեզուի աստիճանին և հիմք դարձան ազգային մշակոյթի:

ՅԵՂԵՐՈՒ ԽԱՉԱՒՈՐՈՒՄԸ.— Եփրատի ափերուն, Որոնս դէսի շուրջը, Տաւրոսի լանջերուն սեմական ժողովուրդները կը հանդիպէին լեռնային գօտիի բնակիչներուն և կը ձուլուէին, կը խաչաձեւուէին անոնց հետ, և որու հետեւանքով Պաղեստինէն մինչեւ Սիւրիա—Տաւրոս սեմական նախնական տիպը զգալի փոփոխութիւն կրեց:

ԸՆԿԵՐՈՑԻՆ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ.— Սեմականները շատ երկար ժամանակ վաչկատուն կեանքով կ'ապրէին, որսորդ էին և անասնապահ, կը թափառէին տափաստաններու մէջ, անապատներու եզրերը, կը հաստատուէին ջրհորներու և աղբիւրներու շուրջը, և հոս կը խփէին իրենց վրանները,

արօտատեղիներ կ'որոնէին իրենց ոչխարներու, կովերու և եզներու համար, կը գաղթէին դիւրութեամբ մէկ վայրէն միւսը, շարժական իրենց հարստութիւնը կը բեռցնէին էշերու և եզներու վրայ և ճամբայ կ'ելլէին: Եփրատի ընդարձակ հովիտը՝ գարնան կը ծածկուէր ծաղիկներով և խոտերով. սեմական ցեղերը կը հասատուէին այս տափաստաններու վրայ, ուր ուտելիք կը գտնէին իրենց անասուններու համար, յետոյ կը բարձրանային մինչեւ Տաւրոսի լանջերը, իսկ աշնան երբ սկսուէր ցուրտը, անոնք նորէն կ'իջնային հարաւ՝ օազիսներն ու անապատները, Միջերկրականի ավերը: Իրենց թափառումներու ընթացքին անոնցմէ մաս մը անասնապահութենէն կ'անցնէր երկրագործութեան, թափառական կեանքէն նստակեաց կեանքի: Այս բանը կը կատարուէր գետերու հովիտներու, ջրառատ և ընդարձակ դաշտերու և ծովամերձ շրջաններու մէջ, ուր մարդիկ կրնային իրենց և իրենց անասուններուն սնունդ ձեռք բերել մշտական միեւնոյն տեղը մնալով: Ընկերային կեանքի այս անցումը կատարուեցաւ Փիւնիկիէի, Պաղեստինի մէջ, Որոնդէսի և Յորդանանի ավերուն, Եփրատի եզերքներուն: Այս վայրերու մէջ հիմնուեցան գիւղեր, աւաններ, առաջացան մեծ ու փոքր քաղաքներ: Իսկ ասոնց շուրջը տափաստաններու և անապատներու մէջ դեռ եւս վրանաբնակները կը շարունակէին ապրիլ վաչկատուն կեանքով՝ կը փոխադրուէին տեղէ տեղ, երբեմն անոնք կը միանային, կը կազմէին արշաւողներու հսկայ բազմութիւն ու զօրապետի մը առաջնորդութեամբ կ'արշաւէին նոր երկիրներ գրաւելու: Այս ձեւով կատարուեցաւ սեմականներու կողմէն Միջագետքի նուաճումը, այսպէս տեղի ունեցաւ Եգիպտոսի գրաւումը Հիւքսոսներու կողմէն:

ՏՈՂՄԸ.— Սեմականներու ընկերային կեանքը տոհմական էր, անոնց մէջ կապը արիւննակցական էր, տոհմի մարդիկ իրենց ծագած կը համարէին նախահօրմէ մը, որ երբեմն գերբնական ուժ մըն էր, երբեմն հերոս մը, կէս աստուած մը: Տոհմի գլուխը կը գտնուէր տոհմապետը, անոր

առաջնորդութեամբ է, որ կը կատարուէին մշտական թափառումները: Սեմականներու հայրիշխանութեան այս կառոյցը մնաց երկուր ժամանակ նսեւ, երբ անոնք անցան երկրագործութեան, նստակեաց կենցաղի: Տոհմապետը իր եղբայրներուն, որդիներուն, հարաներուն անոնց զաւակներուն և թոռներուն հետ կ'ապրէր համախումբ: Տոհմը տնտեսական միութիւն մըն էր, ան կ'արտադրէր այն բոլորը ինչ անհրաժեշտ էր ապրուստի համար: Կանայք կը հիւսէին, կը մանէին, կը կարէին, կը կթէին, իսկ աղամարդիկ կ'որսային, անասուններ կը պահէին, արօտատեղիները կը պաշտպանէին, կը կուռէին ուրիշ տոհմերու դէմ: Զկար ունեցուածքի անհաւասարութիւն, ամեն բան տոհմինն էր, տոհմական համայնքինը: Զկար աւելի բարձր իշխանութիւն՝ քան տոհմապետինը: Տոհմի անդամները բոլորն ալ զինուոր էին և աշխատող, անոնք զինուած էին նետ ու ազեղով, նիզակներով, մահակներով: Ծանօթ էին պղինձին իրենց տեւական թափառումներու մէջ Տաւրոսեան լեռներէն մինչեւ Սինայի անապատը: Երբ անասնապահը անցնէր երկրագործութեան՝ ան պիտի շարունակէր հողին վրայ նստիլ ամբողջական տոհմերով, հողը սկիզբը պիտի դառնար տոհմի սեփականութիւնը, միայն բաժնուած գերդաստաններու մէջ, այն ալ ոչ իբրեւ սեփականութիւն, այլ իբրեւ օգտագործելու միջոց: Այսպէս են ապրած երկար դարեր Սիւրբոյ, Պաղեստինի, Միջագետքի սեմականները, անոնց կեանքի ցայտուն պատկերը մենք կը գտնենք Հին Կտակարանի մէջ:

ԿԻՕՆԸ.— Սեմական ժողովուրդներու կրօնական դադափարները սկզբնական շրջանին շատ պարզունակ էին: Անոնք մշակուելու էին անծայրածիր անապատներու հետ տեւական շփման մէջ: Ամբողջ աշխարհը՝ սեմականներու համագումով լեցուած էր, անտեսանելի ոգիներով, «Զիմերով», որոնք օժտուած էին գերբնական զօրութեամբ: Ոգիները կը բնակէին անապատներու, լեռներու մէջ, աղբիւրներու ակունքներու, ձորերու խողոչներու մէջ: Ոչ

մէկ տեղ բնութեան հակադրութիւնը այնպէս ցայտուն ձեւով չէր երեւար, որքան Արգասաբեր կիսալուսնի և անապատի հատման կէտում: Անապատն ու արգասանդ հողը մարմնաւորումն էին բարի և չար ոգիներու: Այս ոգիներուն ան կ'ուզէր տեսանելի և շօշափելի դարձնել, ունենալ իրեն հետ, կը պատկերացնէր զանոնք իրական և երեւակայական կենդանիներու ձեւով և կը վերագրէր անոնց աստիճանի գորութիւն: Չար ոգիներէն ազատուելու համար ան կը դիմէր զանազան կախարդութեանց, որոնք կրնային չեզոքացնել անոնց ազդեցութիւնը:

Անհամար, անկազմակերպ և անդէմ ոգիներէն բարձր սեմական կրօնական միտքը ստեղծեր էր աստուածութիւններ, որոնք դանդաղօրէն իմաստ և դէմք կ'ըստանային, կը բարձրանային միւս ոգիներու շարքերէն: Անոնք տիեզերքի տէրերն էին, անոր օրէնքներ սահմանողները և անոր մէջ կարգ ու կանոն մուծողները: Անոնք կը ներկայացնէին բնութեան այս կամ այն ուժը, որ մարդու կեանքի մէջ որոշ դեր կը խաղար — արեւը, երկիրը, ջուրը, հացահատիկը: Աստուածութիւնները սրբութիւններ էին, արդարութեան պաշտպաններ: Անոնք կ'ապրէին աստղերու, փոթորիկներու, քարերու, կենդանիներու մէջ: Այդպէս առաջ եկաւ այս աւարկաներու, կենդանիներու պաշտամունքը:

Անոնք ընդհանուր անունով կը կոչուէին էլ = Աստուած, Բանաղ = տէր, Մէլլէկ = թագաւոր: Աստուածուհիները կը կոչուէին Աքհաթ = Աստաթե, որու սկզբնական իմաստը կապուած էր երկրի, հօտի արգասաւորութեան հետ: Բահաղը և Աստարդէն աստուածներու արուած և ամենէն տարածուած անուններն էին: Ամեն աստուած մէկ տոհմի, մէկ համայնքի պահապան ոգին էր, իսկ երբ սեմականները անցան նատակեցութեան՝ ամեն քաղաք իր շրջակայ գիւղերով դրուեցաւ հովանաւոր աստուծոյ պաշտպանութեան տակ:

Գ. ԳԼՈՒԽ

ՍԵՄԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ

ՍԻԶԱԳԵՏՔԻ ՄԷՋ. ԱԿԱԴԱՑԻՔ

Երրորդ հազարամեակի սկիզբը սեմական ցեղերէն՝ Ա. մովրացիք Եփրատի ափերով մտան Միջագետք: Անոնք կռուարային նոր և հարուստ հողեր գտնելու: Միջագետքի հարստութեան մասին անոնք վաղուց լսեր էին իրենց ցեղակիցներէն, սումէրական վաճառականներէն, որոնք իրարու կը հանդիպէին հիւսիսային Միջագետքի մէջ: Ամովրացիք Եփրատն իջնելով կանդ առին սումէրական քաղաք-պետութիւններու սահմաններու վրայ: Սումէրներու հետ տեւական շփման մէջ էին. շատ բաներ ընդօրինակեցին, իւրացուցին անոնցմէ. դարձան նստակեաց. բարձրացուցին արհեստական բլուրներ, և կառուցին գիւղեր ու քաղաքներ. անոնց առաջ ալ՝ դրուեցաւ ջրանցքներ փորելու, թումբեր կառուցելու, ճահիճներ չորցնելու հարցերը: Անոնց քաղաքներէն նշանաւոր դարձան Կիւբ, Կուսան, Սիւպուրբ, և մանաւանդ Ակադը: Ոն առաջին սեմական պետութեան մայրաքաղաքն էր. իր անունով ալ պետութիւնը կոչուեցաւ Ակադի պետութիւն: Աւելի ուշ այս քաղաքներէն հիւսիս՝ հիմնուեցաւ Բաբելոնը, որ արտակարգ մեծ դեր խաղաց արեւելքի մշակոյթի և քաղաքական պատմութեան մէջ:

ՔԱՂԱՔՆԵՐՈՒ ԲՆՈՑԹԸ.— Ինչպէս սումէրական, այնպէս ալ սեմական քաղաքները մեծ գիւղեր էին՝ ցրուած ընդարձակ տարածութեան վրայ, շրջապատուած այգիներով, արտերով, բանջարանոցներով անոնց բնակչութեան գլխաւոր զբաղմունքը հող հերկելն էր, ցանկելը, ջրելը,

անասնապահութիւնը: Սեմական քաղաքներու կեանքին մէջ առեւտուրը շատ մեծ դեր չէր խաղար, բայց զարգացած էին արհեստները, որոնք գլխաւորապէս կապուած էին պալատի և տաճարի հետ:

Տոհմական կեանքը մէկ անգամէն չանհետացաւ, այլ շարունակուեցաւ նաև նասակեաց պայմաններու մէջ: Մեծ տոհմերը համախմբուեցան զանազան վայրերու մէջ, կառուցին ամրոցներ և պարիսպով պատեցին: Տոհմապետը իր ընտանիքով աստիճանաբար զատուեցաւ տոհմի միւս անդամներէն: Ան արդէն հարուստ էր, ունէր զինուած և հաւատարիմ մարդիկ, որոնց հետ տեւական արշաւանքներ կ'ընէր սումէրական քաղաքներու վրայ ինչպէս և սեմական ուրիշ, հարեւան տոհմերու դէմ: Տոհմապետը դարձաւ իշխան, ամրացաւ պարսպապատ ամրոցի մէջ, որուն քովը կառուցուեցաւ աստուծոյ տաճարը: Իշխանը կռիւներու միջոցով ընդարձակեց իր իշխանութիւնը, հիմնեց քաղաքապետութիւն. ինքն ալ դարձաւ Պատէսի: Միաժամանակ քանի մը քաղաք-պետութիւններ ստեղծուեցան, որոնք սկսան տեւական կռիւներ մղել իրարու դէմ: Հոս ալ քաղաքական հոլովոյթը ընթացաւ այն ուղղութեամբ, ինչ որ սումէրական աշխարհի մէջ, միայն թէ միութեան կեդրոնացման փորձը հոս աւելի յաջող եղաւ, քան սումէրներու մօտ: Ամովրացիներու հնագոյն քաղաք-պետութիւնը Կիժն էր: Ան երրորդ հազարամեակի սկիզբներուն գերիշխանութիւն ձեռք բերաւ Ակադի մէջ: Սեմական քաղաք-պետութիւնները ոչ միայն իրարու դէմ կը կռուէին, այլ սումէրական քաղաքներու դէմ, որոնք կ'ուզէին այս վտանգաւոր հարեւանները իրենց ենթարկել և բանալ հիւսիսի և արեւմուտքի դուռները: Սեմական քաղաքները Եփրատի ափերով նորանոր գաղթականութիւններ կ'ըստանային՝ հիւսիսային Միջագետքի ցեղակից և լեզուակից սեմականներէն: Ակադական քաղաքներուն մէջ աշխատանք չգտնալով շատերը կը հաստատուէին սումէրական քաղաքները, որպէս բանուորներ, վաճառականներ, որպէս

վարձկան զինուորներ: Ասոնք սումէրական քաղաքներու մէջ սումէրացան, բայց իրենք ալ սումէրական լեզուի մէջ նոր բառեր, անուաններ մուծեցին: Թափանցումի, փոխադարձ շփումի այս գործողութիւնը տեղի ունեցաւ հասիւրաւոր տարիներու ընթացքին:

ՍՈՒՄԷՐԱԿԱՆ ՄՇՈՒԿՈՑԹԸ ՍԵՄԱԿԱՆՆԵՐՈՒ ՄԷՁ. — Միւս կողմէն սումէրական լեզուն, մշակոյթը կը մտնէր ակադաական քաղաքները: Լագաշի և Ումուժի հզօրացման շրջանէն ակադական քաղաքները և Եփրատի շուրջը հաստատուած վրանաբնակ ցեղերն մտան Սումէրներու իշխանութեան տակ: Ասոր հետեւանքով սումէրական լեզուն, կրօնական գաղափարները, շինարարութեան ձևերը, արհեստները ծաւալեցան սեմախօս հասարակութեան մէջ: Ասոնք իւրացուցին Սումէրներու սեպագրերը, անոնց հոգեւոր մշակոյթը, բանահիւսութիւնը, աստուածներու և հերոսներու մասին եզած պատմութիւնները, կրօնական ծէսերը, արարողութիւնները: Ակադացիներու մօտ ալ սումէրական լեզուն դարձաւ կրօնական շարականներու, ծիսական արարողութիւններու լեզու և իր այս դիրքը անպահեց սեմախօսներու մօտ շատ երկար դարեր: Ան դարձաւ սրբազան լեզու, հասկնալի, մատչելի միայն քուրմերուն, տեսակ մը գրաբար լեզու:

Սեմականները խորապէս ներշնչուած էին սումէրական մշակոյթէն, բայց պահեցին իրենց քաղաքներու անկախութիւնը: Այդ շրջանին դուրս եկաւ Սեմականներու մեծ նուաճողներէն մէկը:

ՍԱՐԳՈՆ I. (2726—2670). — Սարգոնը Միջագետքի սեմականները միացուց. Ակադը դարձուց մայրաքաղաք, կազմեց մեծ բանակ, գրաւեց Ուրուկը, Սումէրներու սըրբազան քաղաքներէն մէկը, Ուրը, Լագաշը, Ումանը և վերջ տուաւ սումէրական քաղաք-պետութիւններուն: Յայտարարեց իրեն թագաւոր Ակադի եւ աւխառի՛ի, տիրոջս մը, որ կը կրէին սումէրական Պատէսիները: Վերջինները թուլացեր էին տեւական կռիւններու մէջ, անոնց մէջ շատ խոր

էր տեղական շահերու հակադրութիւնը, որով ընդհանուր ճակատ մը չկրցան կազմել Ակադացիներու դէմ: Սարգոնէն սկսած Միջագետքի մեջ փայլափայլած սուռչնաթիւնը Սումերներէն անցաւ սեմիտականներուն: Սուամէրական քաղաքներու գրաւումէն ետքը՝ Սարգոն արշաւեց էլամ՝ Պարսից ծոցի հիւսիս-արեւելեան կողմը: Էլամցիք՝ լեռնաբնակ ժողովուրդ մը՝ պատուհաս էին սուամէրական քաղաքներու համար. Սարգոնը գրաւեց Էլամը, գերի վերցուց տեղական իշխանները և ակադական զինուորական ոյժ մը թողուց հոն կարգի և խաղաղութեան վրայ հօկելու: Էլամը կենսական նօրէն անհրաժեշտ էր ինչպէս սուամէրական քաղաքներուն, այնպէս ալ Ակադացիներուն իր անտառներով, շինանիւթերով, քարերով և մետաղներով:

ԴԼՊԻ ՄԻՋԵՐԿՐԱՅԱՆ.— Էլամի և Սուամէրի հարցերը լուծելէն յետոյ Սարգոն եփրատի փերով բարձրացաւ Սիւրիա, գրաւեց «Ամուրի» քաղաքները, հասաւ Միջերկրական ծով: Արձանագրութեան մը մէջ ան իրեն կը կոչէ «մայրիներու եւ արծաթե լեռներու տէր», այսինքն Սիւրիոյ, Լիբանանի և Սամանոսի տէր: Այսպէսով Արգաւանդ կիսալուսնի երկու թեւերը միացան մէկ իշխանութեան ներքեւ: Սարգոն գրեթէ բոլոր սեմական ցեղերու միութիւն տուողն էր՝ Միջագետքի մէջ և անկէ դուրս: Այս միութիւնը ունեցաւ նշանակալից հետեւանքներ՝ դիւրացուց եւ արագացուց Միջագետքի ամբողջական սեմականացումը: Սիւրիայէն, օազիսներէն նոր ցեղախումբեր եկան հաստատուելու Միջագետք: Այս ժամանակներուն Տիգրիսի երկու փերուն եկան հաստատուելու այն ցեղերը որոնք հետագային պիտի կառուցանէին Ասորեստանի հզօր կայսրութիւնը: Միջագետքի կեդրոնին մէջ կը հիմնաւորուէր Բաբելոնը՝ հետագային սեմականներու ամենամեծ և բարգաւաճ քաղաքը: Այս բոլորը կը խախտէր Սուամէրական քաղական քանակութեանց հաւասարակշռութիւնը: Սուամերները քաղաք-պետական անկախութիւնները կորսնցուցած, քանակով քիչ, դեռեւս քանի մը անգամ պիտի վերազըտ-

նէին իրենց անկախութիւնը, բայց այլեւս նախկին ուժին և հզօրութեան չպիտի հասնէին: Անոնք աստիճանաբար պիտի ձուլուէին սեմական մեծազանգուած և հզօրացող ցեղերու հետ. բայց այս բանը պիտի տեղի ունենար Բաբելոնի տիրակալութեան ժամանակ:

Աւելի հիւսիս արեւելեան Տաւրոսի լանջերուն և Զագարոշի շուրջը՝ այժմեան Բիւրտիստանի մէջ տեղաւորուէին Գուսիմները եւ Լուլուբիները: Սարգոն անոնք ալ իրեն ենթարկեց: Այսպէս՝ դաշտային Միջագետքին տուաւ ապահով սահմաններ՝ ամուր հաստատուելով զայն շրջապատող լեռնային մասերուն մէջ՝ Էլամէն սկսած մինչեւ Ամանոս և Փիւնիկէ:

ՀՅՏԵԻԱՆՔՆԵՐԸ.— Այս նուաճումներու բերումով դէպի Ակադ կ'ուղղուէին Լիբանանի մայրի փայտերը, Տաւրոսեան լեռներու մետաղները, Էլամի շինարարական նիւթերը՝ փայտ ու քար, անապատներու անհաշիւ կենդանիները: Պատերազմն ու նուաճումները Սարգոնին և իր զօրավարներուն տուին մեծաքանակ գերիներ, որոնք իրրեւ ստրուկներ կը վաճառուէին Ակադի և սումէրական քաղաքներու շուկաներուն մէջ, անոնք կ'աշխատէին արքայական, տաճարական կալուածներու վրայ: Սարգոնի նշանաւորները շահաւէտ էին նաև սումէրական քաղաքներուն: Անոր իշխանութիւնը վերջ տուաւ քաղաքներու մէջ տեղի ունեցող անընդհատ կռիւներուն, հաստատեց հոն լսադաշութիւն և բացաւ նոր ընդարձակ շուկաներու դռներ: Անոնց վաճառականները սեմականներու հետ հիմա աւելի ապահով ուղիներով կը հասնէին Միջերկրականի ափերը, կը թափանցէին Փոքր Ասիոյ խորքերը: Կապադովկիոյ մէջ կը հաստատուէին ակադական և սեմական առևտրական գաղութներ: Անոնք Փոքր Ասիայէն կը տանէին մետաղներ, կաշի, մետաղէ գործիքներ և զէնքեր. այս բոլորը կարուաններով կը փոխադրէին Միջագետք: Անոնց առևտրական կեդրոնը Կանեք քաղաքն էր, ուր ունէին գրասենեակներ, պահեստներ, կ'ապրէին տեղացիներէն մէ-

կուսացած խումբերով, առանձին թաղամասերու մէջ, ունէին իրենց մատուռները՝ կրօնական պէտքերու համար. կը դատուէին իրենց դատարաններով և իրենց օրէնքներով: Անոնք առեւտրական-կրօնական համայնք էին ասիական հողի վրայ: Սումերներու նաբած և Սեմա-խօսներու կատարելագործած սեպագրերը տարածեցին փոքր Ասիոյ մէջ իրենց առեւտրական գործառնութեանց համար, ինչպէս նաև մտցուցին գլանակնիքներու գործածութիւնը: Տաւրոսի երկու կողմերը սեմախօսները լայնօրէն տարածուեցան, անոնք հասան Ալիս գետը: Այս պատճառով ալ կապադովկիայի բնակիչները քիչ աւելի ուշ կոչուեցան «ճեմակ սուրիացիներ»: Միայն Հնդեւրոպացիներու երեւան գալով սեմականներու այս թափանցումը կանգ առաւ և Մերձաւոր Արեւելքի լեռնային գօտիին վրայ հաստատուած սեմական գաղութները ձուլուեցան տեղացիներու հետ:

ՆՈՐ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ.— Սարգոնը իր լայնածաւալ պետութեան նոր կազմակերպութիւն տուաւ: Նախ նուաճուած երկիրներու վարիչ դասերը՝ պատէսիները, իշխանները և անոնց գերդաստանները գերի տարաւ Ակադէ. անոնք միշտ ալ աւելի կամ նուազ կասկածելի էին: Պետութիւնը բաժնեց նահանգներու, որոնց վրայ նշանակեց կեդրոնէն շրջկուած կառավարիչներ, որոնք կը կոչուէին «պալաթի որդիներ»: Ասոնք խաղաղութիւն և ապահովութիւն կը հաստատէին իրենց վստահուած նահանգներուն մէջ, հարկեր կը հաւաքէին, ճանապարհներու վրայ կը հսկէին, կարաւանային առևտուրը կ'ապահովէին, ջրանցքներ կը կառուցէին և յատուկ ուշադրութիւն կը դարձնէին ռոտքման ցանցի վրայ: Սարգոն, լեռնային վայրերու մէջ ճանապարհներ անցուց ռազմական նպատակներու համար: Ան սկսաւ այն բոլորը, ինչ որ իրմէ ետքը պիտի կատարելագործէին Բաբելայիները, Ասորեստանցիները և մանաւանդ Պարսիկները: Սարգոն կառուցեց բազմալեզու, բազմացեղ պետութիւն մը, սեմական տարրի գլխաւորութեամբ և փորձեց անոր տալ կատարեալ կարչութիւն:

ՇԱՐՔՈՒՄՆԵՐ ԱԿԱԴԻ ԴԼՄ. — Բայց նուաճուած երկիրները չէին հաշտուեր Սարգոնի և անոր յաջորդներու տիրակալութեան հետ: Ապստամբութիւնները կը դառնային յաճախակի. ամենէն անհաշտները սումէրական քաղաքներն էին, ասոնք երբեք չհաշտուեցան իրենց անկախութեան կորուստի հետ և արհամարհանքով կը նայէին մշակութապէս աւելի ցած Ակադացիներու և Սեմականներու վրայ: Ամեն տեղ կը գտնուէին Պատէսիներու զերգաստանէն մարդիկ. ցեղապետներ, ռազմունակ իշխաններ նախկին իշխող տոմերէն, որոնք կը կանգնէին շարժման զլուխը, Սարգոնի պետութեան կ'ըսպառնային լեռնաբնակները, որոնք երեք կողմէն կը շրջապատէին անոր սահմանները. երբեմն կ'ապստամբէր Բաբելոնը, որ մեծցեր էր, հարըստացեր և որուն համար ծանր ու ճնշիչ կը թուէր Ակադի իշխանութիւնը: Քանի պետութեան զեկը Սարգոնի ձեռքն էր՝ ապստամբները բան մը չչահեցան, իր մահէն յետոյ սակայն պետութիւնը լուրջ վտանգի ենթարկուեցաւ:

ՆԱՐԱՄ-ՍԻՆ. — Սարգոնի թուր՝ Նարամ-Սինը 2645—2607 զբաղեցաւ ոչ-սեմական ժողովուրդներու ապստամբութիւնները ճնշելով: Հիւսիսէն կ'ըսպառնային Գուքի-նեքը, հարաւէն՝ Էլամացիք: Նարամ-Սինը վերագրաւեց Էլամը, բնակչութիւնը տեղահան ըրաւ և անոնց փոխարէն բերաւ սեմական ցեղեր: Սումէրական քաղաքներու մէջ ան սեմական զօրք դրաւ. ատոր յաջորդեց վաճառականներու, պաշտօնեաներու թափանցումը: Ան՝ Սումերները փոխադրեց հիւսիսային Միջագետք: Ոչ սեմական ուժերու ցրումը, թուլացումն ու քայքայումը որոշ հետեւանք ունեցաւ. ժամանակ մը հակա-ակադական շարժումները կանգ առին: Նարամ-Սինը իր յաղթանակները կ'անմահացնէ «Յաղթանակի քարակոթողի» մը մէջ, որ նուիրուած էր յաղթանակներ պարգեւող՝ Արեւ սուսուծուն: Թագաւորը կանգնած է բարձր ժայռի մը վրայ, և իր բանակով կը պաշտպանէ Ջագրոշեան լեռնակիրճերը Լուլուբիներու դէմ: Ժայռի գագաթին կը փայլի ութ ճառագայթ արձակող

աստղ մը, որ Ակադէի հովանաւոր իշտար աստուածուհու խորհրդանիշն է:

ԳՈՒՏԻՆԵՐԸ.— Նարամ-Սինէն ետքը Ագադէի պետութիւնը տկարացաւ, անոր սպառնացող մեծ վտանգը կուգար լեռնաբնականերէն, որոնք իրենց ծագումով մեծ մասամբ ասիանիկներ էին, Սուբարիներու զանազան հատուածները: Բայց ճիշդ այդ ժամանակներուն կ'երեւային արիական ժողովուրդներու առաջապահները: Անոնք կտրելով Իրանի և հայկական բարձրաւանդակները եկեր հաստատուեր էին Տաւրոսեան և Զագրոշեան լեռներու լանջերուն, հովիտներուն մէջ և հոնկէ նախանձոտ աչքերով կը նայէին Միջագետքի հարուստ քաղաքներուն և գիւղերուն: Այս բարբարոսներէն՝ Գութիները վերջին հարուածը տուին Ագադի թագաւորութեան, բայց ատկէ օգտուեցան ոչ թէ իրենք՝ Գուտիները, այլ Սումէրները, որոնք դեռ եւս ուժ ունէին ոչ միայն թօթափելու սեմականներու լուծը, այլ և վերականգնելու իրենց անկախութիւնը: Գուտիներու արշաւանքը սկսաւ 2662 թիւին: Սումէրական դպիրները Գուտիներու մասին կը գրեն «անոնք քագաւոր չունէին», այսինքն զուրկ էին կեդրոնական իշխանութենէն. բայց ռազմականակ էին, օժտուած ցեղական բնազդներով. անոնք Միջագետքին տիրեցին 160 տարի 2662—2500: Բայց խաղաղ աշխատաւոր, երկրագործ և նստակեաց չի դարձան: Անոնց իշխանութիւնը լաւ զինուած և լաւ կազմակերպուած վակատունի, լեռնաբնակի տիրապետութիւնն էր դաշտարնակի և երկրագործի վրայ: Գուտիներու իշխանութիւնը հարաւային Միջագետքի վրայ չէր տարածուիր. իրենց քաղաքական կեդրոնը հիւսիսն էր, Արապա քաղաքը, այսօրուան Գէրքուկը: Հոսկէ ալ կ'արշաւէին հարաւ, կ'աւերէին քաղաքները, կը կործանէին տաճարները, գերի կը տանէին աստուածներու արձանները և ծանր հարկեր կը դնէին ժողովուրդի վրայ: Անոնք հեռու մնացին հարաւի բարձր մշակոյթի ազդեցութենէն: Այս բանը նպաստաւոր էր հարաւի՝ սումէրական ուժերու կազմակերպութեան համար:

Ազատագրական փորձը կ'ընէ Ուրուկ քաղաքը 2500 թիւին: Անոր Պատէսին կը յայտարարէ իրեն «Թագաւոր Սումէրի, թագաւոր չորս կողմերու»: Նոյնիսկ սեմական քաղաքներ կը միանան իրեն: Նոր թագաւորը օգնութեան կը կանչէ Էնիլի և Ինիթի աստուածները և կը ոգեկոչէ Գիլգամիշի յիշատակը, որ ըստ աւանդութեան Ուրուկ քաղաքի առաջին թագաւորն էր եղած: Գուտիններու թագաւորը Տիրիգամը կը պարտուի և իր կանանցով ու որդիներով գերի կ'իյնայ: Յաղթուածները կը փախչին և կ'ապաստանին Տաւրոս եւ Չագրոշ լեռներու անթափանցելի վայրերը և աւելի հեռու հայկական բարձրաւանդակը:

Անոնց դերը Միջագետքի պատմութեան մէջ բացասական է. անոնք հարուածեցին Ակադի պետութիւնը և կործանեցին, կասեցուցին սեմա-սումէրական ժողովուրդներու սկսած ձուլումը, կտրեցին Արգասաթեր Կիսալուսնի երկու թեւերու առեարական և հոգեւոր հաղորդակցութեան կապերը, կտրեցին կապը Փոքր Ասիական սեմական գաղութներու և Միջագետքի սեմականներու մէջ, որով նպաստեցին անոնց տկարացման և տեղացիներու հետ ձուլման: Գուտիններու տիրապետութիւնը Միջագետքի հիւսիսին, զարկ տուաւ սումէրական տարրի նոր հզօրացման՝ Ուսու-Նիգալին ետքը առաջնութիւնը Ուրուքէէ անցաւ Ուրիմ, իսկ սումէրական մշակոյթի կեդրոնը դարձաւ Լագաշը Գուդէա թագաւորի օրով:

ՈՒՐ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆԸ.— XXV-րդ դարուն Ուր քաղաքի մէջ կ'իշխէին շարք մը տաղանդաւոր Պատէսիներ: Անոնցմէ Ուր-Էնգուրիմ, որ կը նշանակէ «ծառայ Էնգուր ասուծոյ» կ'ըստեղծէ ուժեղ կեդրոնացած իշխանութիւն: Ամեն տեղ կ'ողտարկէ իրեն վստահելի մարդիկ կառավարելու, հարկեր հաւաքելու և ապստամբները զբապելու: Ան սահմաններու վրայ բանակներ կը պահէ, ամբողջութիւններ կը կառուցանէ, դաշինքներ կը կնքէ վաչկատուներու ցեղապետներու հետ: Ուրի քաղաք-պետութիւնը իր հզօրութեան կը հասնի Դուգի Պաթեսի օրով (2490-2411),

որ կը վերաշինէ, կը գեղեցկացնէ Ուրը. իր բանակը կը կազմէ պետութեան մէջ ապրող ըրրոր ժողովուրդներէն: Զագրոշեան շրջանին մէջ ան կը հաստատէ բղէշխուսութիւն մը, այսինքն զինուորական շրջանմը: Կը վերագրուէ Էլամ մը և հոն սեմախօս և սուամէրախօս գաղթականութիւն կը հաստատէ: Սուամէրական լեզուն մուտք կը գործէ այդ լեռնային երկիրը:

Հիւսիսային Միջագետքի բնիկները՝ Սուբարիները միշտ կը դաշնակցէին լեռնական իրենց ազգակիցներու և ցեղակիցներու հետ և չէին հաշտուիր ոչ սեմականներու, ոչ ալ սուամէրներու իշխանութեան հետ: XXIII—XXIV-րդ դարերուն անոնց ճնշումը աւելի զգալի կը դառնայ. սսոր պատճառը Հնդեւրոպացիներու կամ անոնց արեւելեան ճիւղի՝ արիական հատուածի երեւան գալն էր լեռնային գօտիէն ներս: Անոնք թիկունքէն կը ճնշէին լեռնաբնակ ասիանիկները, որոնք տեղի տալով կը մղուէին առաջ, կը մտնէին Միջագետք: Մեծ դժուարութեամբ Դուզից կասեցուց լեռնական բարբարոսներու արշաւանքները և նորէն միացուց Ակադը, Էլամը, Սուբարին, Ամուրուն, վերին Սիւրիան: Այս մեծ պետութեան գլուխը կանգնած էր Էնլիլ աստուածը, որու փոխանորդը Դուզին էր: Յաղթութիւններու համար ան աստուծուն զոհեր կը մատուցանէր: Էնլիլի տաճարին աւարէն բաժին կը հանէր եզներ, կովեր, գառներ, ինչպէս և էշ ու շուն: Ուրի թագաւորութիւնը վերջին ցոլացումն էր սուամէրական հզօրութեան: Ատկէ ետքը Սուամէրները անհետացան պատմութեան բեմէն:

ՍՈՒՄԷՐԻ ԱՆԿՈՒՄԸ.— Ամեն քաղաք ունէր իր անցեալը, տեղական աստուածը, կ'ապրէր իր տեղական շահերով, ունէր իր Պատէսին, որ չէր ուզեր ենթարկուիլ ուրիշներուն, առաջնութիւնը զիջիլ ուրիշ քաղաքի: Կար և այն, որ սուամէրական ուժերը բաւարար չէին այդքան մեծ պետութիւն պահելու համար: Ստեղծուած սուամէր-սէմական պետութեան մէջ սուամէրական տարրը քիչ էր, թոյլ էր: Ներքին կեանքին մէջ ալ ազգային յարաբերութիւնները

փոխուեր էին: Սումէրի հարուստ հողը, քաղաքները, արհեստները, վաճառականութիւնը դէպի իրենց կը քաշէին և լիոնարնակները և անապատի վաչկատուն և նստակեաց Սուբարիները և վաճառական Սեմականները: Պատերազմական գերիները, ստրուկները լեցուեր էին սումէրական քաղաքները: Ասոնք շատ քաղաքներու մէջ աւելի գերակշիռ էին քնիկ Սումէրներէն: Սումէրը կը սեմականանար: XXIՎ-րդ դարուն Եփրատեան ճամբայէն եկող սեմականներու դէմ կառուցին «Ամուրու երկրի պարիսպը»: Էլամը ապստամբեցաւ և անջատուեցաւ, միայն Շոշը մնաց Սումէրներու ձեռքը: Այդ դարու կէսերուն կ'ըսկսուի հիւսիսային Միջագետքի ապստամբութիւնը: Դարու վերջին սումէրական քաղաք պետութիւնները իսպառ կ'անհետանան: Ասոնք անկարող էին Միջագետքի միութիւնը պահելու և անոր օրհանութիւն տալու: Այս դործին պիտի նուիրուէր սեմական նոր հատուած մը, որ ամենէն ընդունակն էր, համախմբուածը և թիւով ալ մեծը: Բայց քաղաքականապէս անհետացող Սումէրները ժառանգութիւն թողուցին Միջագետքի ժողովուրդներուն իրենց բազմադարեան մշակոյթը, որը պիտի ծառայէր իբրև հիմք և զարգացնելով այդ մշակոյթի տուեալները պիտի կառուցէին իրենց քաղաքակրթութիւնը:

Դ. ԳԼՈՒԽ

ԲԱԲԵԼՈՆԻ ԱՌԱՋԻՆ ԹԱԳԱԽՈՐՈՒՅԻՒՆԸ

ՀԱՄՈՒՐԱԲԻ

Ուրի պետութեան անկումով ասպարէզ բացուեցաւ զանազան ցեղերու և ազգերու մրցութեան և տիրակալական տենչերուն: Երկիրը մատնուեցաւ անիշխանութեան: Ամենուրեք երեւացին տեղական իշխանութիւններ, քաղաքներն սկսան կռուիլ իրարու դէմ կամ ամբողջ Միջագետքի կամ անոր մէկ մասի գերիշխանութեան համար: Մրցող կողմերէն ամենէն ուժեղը և թիւով գերազանցը սեմականն էր: Ան ալ դուրս եկաւ յաղթական:

ԲԱԲԵԼՈՆ. — Հիւսիսային Սիւրիոյ մէջ, Եփրատի շուրջը կը թափառէին Ամովրացիները, օրոնց մէկ կատուածը երրորդ հազարամեակի սկիզբին մտեր էր Միջագետք: Անոր մեծագոյն հատուածը XXIV-րդ դարուն հիմնեց Բաբելոնը: Բաբելոնը սկիզբը աննշան քաղաք-պետութիւն մըն էր՝ երբեմն Ակադի, երբեմն Սումէրներու գերիշխանութեան տակ: Ան կը գտնուէր Միջագետքի կեդրոնը, երկու գետերը անոր քով կը մօտենային իրարու, կարծես միանալու համար, քայքայեցնէին կը հեռանային և զուգահեռ կը հոսէին հարաւ: Գետերը բնական ուղիներն էին հաղորդակցութեան. թէ նաև երով և թէ ցամաքով Միջագետքի բոլոր մասերը կապուած էին Բաբելոնին: Ամովրական ցեղերու մեծ մասը մնացեր էր Սիւրիոյ մէջ և շարունակ շարժման մէջ էր, միւս մասն ալ մանր խումբերով ցրուած էր Եփրատի արեւմուտն: Այս բանը նպաստեց Բաբելոնի առեւտրական կապերու ընդարձակման: Միւս կողմէն անոնք կապուեցան Իրանի բարձրաւանդակի,

էլամի և Պարսից ծոցի հետ: Ասոր հետեւանքով Բաբելոնը շատ հարստացաւ, իբրև հանգոյց Մերձաւոր Արեւելքի առեւտրական յարաբերութեանց: Իր հարստութեան համար ալ ան մշտական ենթակայ էր բարբարոսներու յարձակման: Անոր պատէսիները վարձկան մեծ բանակ կը պահէին թէ Բաբելոնը և թէ կարաւանային առեւտրական ուղիները պաշտպանելու համար: Անոնք վերջ տուին Միջագետքի անիշխանութեան և վերագրաւեցին էլամը, Սումէրը, Ակադը: Այս քաղաքական յաջողութենէն յետոյ է, որ Բաբելոնի անունը տարածուեցաւ կեդրոնական և հարաւային Միջագետքի վրայ և չէզոքացուց Սումէրը և Ակադը: Երկրի քաղաքական միութեան ստեղծումէն ետքն է, որ Բաբելոնի մէջ գահ բարձրացաւ Ամավրեանց հարսուրեանց մեծագոյն դէմքը և արեւելքի հին պատմութեան ամենէն հետաքրքիր անձերէն մէկը՝ Համուրաբին:

ՀԱՄՈՒՐԱԲԻ (2123—2081).-- Ան տաղանդաւոր վարչագէտ էր և մեծ օրէնսդիր: Անոր օրով տեղի ունեցաւ կրօնական յեղաշրջում մը, որ քաղաքական նոր յարաբերութեանց հետեւանք էր: Էնիլլը՝ սումէրական ազգային աստուածը իր տեղը զիջեց Մարդուկինց, որ Բաբելոնի առաջին աստուածն էր: Այնուհետեւ Մարդուկի պաշտամունքը մի քանի դար պիտի խորհրդանշէր Բաբելոնի պետական հզօրութիւնը և զօրոզ ուժերէն մէկը պիտի ըլլար բազմազգի և բազմակրօն պետութեան համար: Այս պետութեան սահմանները գծեր էր Սարգոն 1. ակադացին, Համուրաբին իր ձեռքը պիտի պահէր Միջագետքը շրջապատող լեռները, այլապէս անոր ապահովութիւնը խախտուած կ'ըլլար: Ան պիտի գրուէր Եփրատեան ուղին, որ ամենամեծ և բանուկ ճամբան էր դրօնկ ցեղերու թափանցման: Ամովրական Բաբելոնի իշխանութիւնը տարածուեցաւ մինչեւ Քանան, Դամասկոս, Համուրաբիի նախորդները վերագրաւեր էին Ակադը, Սումէրը, էլամը: Համուրաբիի զօրքերը կը կուռէին Տիգրիսի ափերուն, անոնք տէր դարձան Սուրաբի երկրին: Բայց բաւական չէր նուաճել, պէտք

էր կառավարել իմանալ, իմաստուն վարչութիւն հաստատել: Այս գործը գլուխ բերաւ Համուրաբին (2123—2081): Ան առաջին թագաւորն է՝ որու գործի, ծրագիրներու և գաղափարներու մասին մենք ծանօթութիւն ունինք իր իսկ հրատարակած օրէնքներու ժողովածուէն, հրահանգներէն և նամակներէն: Մեզի հասեր են անոր թղթակցութիւնները, որ ուղղուած էին նահանգական կառավարիչներէն մէկուն:

Ան աչալուրջ կը հետեւէր ամեն բանի, կը հսկէր, կը հետաքրքրուէր ջրաբաշխութիւնով, քանդուած ջրանցքներու նորոգութիւնով, վարչական անկարգութիւններով, առեւտրական ուղիներու ապահովութիւնով, աւազակներու հետապնդումով, հարկերու հաւաքումով, տաճարական տուրքերու գանձումով, դատարանով: Այս բոլորի մասին ան զեկուցումներ կը պահանջէր, կարգադրութիւններ կ'ընէր և կը հրամայէր որ իր հրահանգները ճշտութեամբ կատարուին: Յատկապէս ուշք կը դարձնէր, որ աստուածները յարգուին և երկրի բերքերէն իրենց բաժինը ստանան: Իր հրամանները կուտար գրաւոր զեկուցումներն ալ կ'ըստանար գրաւոր: Կը տեսնենք, որ պետութեան գլուխը կանգնած է լուսամիտ միապետ մը, որ խաղաղ աշխատանքը կը գերադասէ նուաճումներէն ու կռիւներէն:

ՕՐԷՆՔՆԵՐՈՒ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ. — Բայց Համուրաբիի ամենէն մեծ գործը իր օրէնսգրութիւնն է. ան պատմութեան առաջին օրէնսդիրն է. անոր կազմած օրէնքներու ժողովածուն լուսագոյն աղբիւրն է քանմէկերորդ դարու Բաբելոնի հասարակութիւնը ճանչնալու համար: Սումէրական քաղաքներն ալ օրէնքներ ունէին, բայց մեզ մինչեւ հիմա յայտնի չէ սումէրական օրէնքներու որեւէ ժողովածու: Ետտ բան Համուրաբին վերցուցեր է Սումէրներէն շատ բան իրրև սովորութեան իրաւունք կը գործադրուէր նաև սեմականներու մէջ, բայց այս բոլորը միայն նիւթ էին ծառայելու Համուրաբիի համար: Անոր օրէնքագէտները ի նկատի են ունեցեր պետութեան մէջ ապրող

տարրերազգերու գոյքային, ընտանեկան, հողային, սեփականութեան իրաւունքները, հաւաքեր են այդ բոլորը, համաձայնեցուցեր են, խմբագրեր և կազմեր օրէնքներու ժողովածու մը՝ պարտադիր և գործադրելի բոլորին համար: Անոնք եղած օրէնքները յարմարեցուցեր են Բաբելոնի այդ ժամանակուայ տնտեսական, ընկերային մակարդակին:

Ըստ այս օրէնագրքի Բաբելոնի հասարակութիւնը արդէն բարդ կազմ ունեցող հասարակութիւն է. սն շատ է փոխուած Սարգոն I-ակադացու ժամանակի հասարակութենէն: Բաբելոնին մէջ ստեղծուեր են դասեր, դասակարգեր, ազգեր, առաջ է եկեր աշխատանքի խիստ բաժանում բազմազան արհեստներ, որոնք կը պահանջէին մասնագիտացում. բարդ յարաբերութիւն է ստեղծուեր հողի, սեփականութեան շուրջ, գոյութիւն է ստացեր խոշոր և մանր կալուածատիրութիւն. անոր զուգահեռ զարգացեր է վաճառ և ստրկական աշխատանքը, ձեւաւորուեր է ընտանեկան յարաբերութիւնը. հասարակութեան մէջ խոշոր նշանակութիւն է ստացեր առեւտուրը, կապալառու, սեղանաւորը, դրամը և դրամափոխը: Հասարակութիւնը իր բազմազան յարաբերութեամբ պէտք էր օրէնքներու տակ դնել, ենթարկել մէկ համապետական կամքի, որուն արտայայտութիւնը Համուրաբի օրէնքներու ժողովածուն էր: Օրէնագիրը իր յառաջաբանին մէջ կ'ըսէ. որ՝ «Անու եւ Բիլասուաձները իրեն կոչ բրին երկրի մեջ արդարութիւն եւ իրաւունք հաստատելու, շարութիւնը եւ վաստութիւնը ոչնչացնելու, արգիլելու հօրհեռու կողմէն խեղճեցուց թափառածութիւնը: Ան ոչ միայն իր միապետի ցանկութիւնն է եղեր, այլ և աստուածներու հրահանգը, որոնց անուկով կը գործէր թագաւորը:

Գ.Ա.ՍԵՐ. — Համուրաբի օրէնքներն արձանագրուած են մէկ մեծ քարակոթողի վրայ, որ քառասուն տարի առաջ քանուեցաւ Շոշի աւերակներուն մէջ: Ունի 282 յօդուածներ: Ըստ այս օրէնագրութեան Բաբելոնի հասարակութիւնը անհաւասարներու հասարակութիւն է, բաժնուած դաս-

սերու, որոնք օրէնքի առաջ նոյնիրու և նոյնարժէք չեն: Կայ երեք դաս, ազատներու, մուսկիներու և ստրուկներու: Մուսկիները հաւանաբար միջին տեղը կը բռնեն ստրուկներու և ազատներու մէջ: Անոնք ստրուկներէն բարձր են, բայց վար են ազատներէն: Մի գուցէ ազատագրուած ըստրուկները և Բաբելոնի մէջ երկար ապրած օտարականներն են, որ կազմեցին այդ դասը: Անոնց առաջ գործի, աշխատանքի ասպարէզը փակուած չէ, բայց անոնք խստիւ կը տարբերուին ազատներէն իրենց արժէքով և իրաւունքներով:

Օրէնսդրութիւնը կ'ընդունի հասարակութեան կայուն դրութիւնը, ան պաշտպան կը կանգնի այդ հասարակութեան և կ'արոչէ անոր դէմ գործողներու յանցանքն ու պատիժը: Ան շատ մեծ ուշադրութիւն կը դարձնէ յանցանքներու պատժական կողմի վրայ: Յանցանքը կամ կը պատժուի, կամ անոր փոխարէն հատուցում կը տրուի: Վրիժառուութեան սկզբունքը, որ յատուկ է առհմական հասարակութեան չկայ, մերժուած է, թէև բարելական հասարակութիւնը դեռ ունէր իր մէջ տոմար-ցեղային կեանքով ապրող ժողովուրդներ: Յանցաւորները պատժելը մասնաւորներու գործը չէ. այլ պետութեան: Յանցանքն ալ կը նկատուի իբրև հասարակական չարիք: Օրէնքի առաջ երեք դասերը միեւնոյն յանցանքի համար միեւնոյն պատիժը չեն կրեր, միեւնոյն աշխատանքի համար տարբեր հատուցում կ'ըստանան: Օրինակ վիրաբուժական մէկ գործողութեան համար ազատ մարդը կը վճարէ ասօք սիկլ, մուսկին հինգ, իսկ ստրուկը երկու: Եթէ սպանուի ազատ մարդը՝ անոր ընտանիքը որպէս փրկագին կ'ըստանայ մէկ մին, իսկ մուսկիի արեան գինը հաւասար է 1/2 մինի. ստրուկինը ալ ուելի պակաս: Բաբելոնի հասարակութեան մէջ մարդու արժէքը կ'որոշուէր ըստ դասակարգի:

ՍՄՐՈՒԿՆԵՐ.— Բաբելոնի հասարակութիւնը սարկատի-րական էր: Տնտեսութեան մէջ անոնք ամենամեծ դերը կը խաղային, ուստի օրէնսդրութիւնը յատուկ ուշադրու-

Թիւն կը դարձնէր ստրուկի և ստրկատիրոջ յարաբերութեան վրայ: Ստրուկներ ունէին արքունիքը, տաճարները, բոլոր ազատ մարդիկ, որոնց տունն ու տնտեսութիւնը աշխատող ձեռքերու կարիք ունէին: Համուրաբիի օրէնագրութիւնը կը պաշտպանէր ստրկատէրերու շահերը՝ ծանր պատիժներ սահմանելով իրենց տէրերէն, աշխատանքէն փախչող ստրուկներու և անոնց փախուստին օժանդակող մարդոց համար՝ ըլլար այդ ազատ թէ մուշկի: Ստրուկները կ'աշխատէին դաշտերու մէջ, ջրանցքներու կառուցման վրայ, արհեստանոցներու մէջ, տաճարական կալուածներու վրայ, լեռնային շրջաններուն պետական հանքահորերու մէջ մետաղներ հանելու համար: Ծանր էր անոնց կացութիւնը, ուստի անոնք յաճախ կը փախչէին միհակ, խումբերով, երբեմն կ'ապաստանէին լեռները և կ'ապստամբէին: Ստրուկներու փախուստն ու ապստամբութիւնը կ'ըսպառնար արդէն կողմակերպուած հասարակութեան, ուստի Համուրաբիի օրէնքները խստութեամբ կը պատժէին փախըստական ստրուկները, որոնք մահուան կը դատապարտուէին, իսկ անոնց ապաստան տուողները կը տուգանուէին և մարմնական պատիժներու կ'ենթարկուէին և որպէսզի հասարակութեան մէջ ստրուկը դիւրութեամբ աչքի իյնայ՝ անոր դէմքը, ձեռքերը կը դրոշմէին յատուկ կնիքով: Բայց օրէնքը անոնց կու տար նաեւ որոշ դիւրութիւն, եթէ ստրուկը ազատ կնոջ հետ ամուսնանար, ինչ որ օրէնքով կը թոյլատրուէր, անոնց ժառանգը ազատ կ'ըլլար, ստրուկը կրնար գնել իր ազատութիւնը, եթէ համապատասխան հատուցում ընէր տիրոջը:

ԱԶՍՏՆԵՐ.— Ազատները կամ ամէլուցները հասարակութեան բարձր դասն էին, անոնց կը պատկանէր հողը, անոնք էին առևտրականները, անոնց ձեռքն էր իշխանութիւնը, անոնց համար կ'աշխատէին ստրուկները: Բայց ազատներու մէջ գոյութիւն ունէր ընկերային անհաւասարութիւն. կային խոշոր կալուածատէրեր, կային և ընչազուրկ բանուորներ, կային՝ թէեւ քիչ՝ մանր գիւղացիու-

թիւն, կային արհեստաւորներ, և տարանցիկ առևտուրի մեծ վաճառականներ: Սեփականութիւնը անհատական էր՝ ոչ տոհմային կամ գերդաստանային: Անհատն ազատագրուէր էր տոհմէն և գերդաստանէն: Ան իր հողի եւ առևտուրի կատարեալ տէրն էր, կրնար վաճառել, գրաւ դնել, նուիրել: Սակայն ամուսնու, այր մարդու իրաւունքը օրէնքը կը սահմանափակէր յօգուտ կնոջ և երեխաներու: Օրէնքը կ'ընդունէր միակնութիւնը, այսինքն մէկ օրինական կին ունենալը, այդպէս էր և սումէրական օրէնքը: Գոյութիւն ունէր նաև «գնումով» ամուսնութիւն: Ամուսնանալէն ետքը կինը իր հօր տունէն բերած օժտի տէրն էր, այդ իր անունով կը պահուէր: Դատարանի մէջ կնոջ վկայութիւնը կ'ընդունուէր: Անոր գոյքն ու շահերը, իրաւունքները օրէնքի պաշտպանութեան տակ կը գտնուէին: Ամուսինը կրնար կնոջը տունէն արտաքսել, բայց միայն ծանր մեղքերու համար, այլուպէս ան պարտաւոր էր հատուցում տալու:

Որդիները ծնողներու իրաւասութեան տակ էին, հայրը ամեն իրաւունք ունէր անոնց վրայ, նոյնիսկ կրնար վաճառել, ուրիշներուն ծառայութեան տալ, կամ ըրած պարտքի փոխարէն որպէս աշխատաւոր վաճառել որոշ ժամանակով: Ընդհանրապէս օրէնքը գոյութիւն ունեցող հայրիշխանութեան պաշտպան էր:

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ ՀՈՂԻ ՇՈՒՐՋԸ.— Բարեկրօնի անտեսութեան գլխաւոր աղբիւրը երկրագործութիւնն էր, ռեստի օրէնքներու ժողովածուի մէջ հողային յարաբերութիւնը մեծ տեղ կը բռնէ: Գոյութիւն ունէր մանր հողատիրութիւն. այդ հողատէրերը ստրուկներ չունէին, իրենց աշխատանքով կը մշակէին հողը: Գերակուողը խոշոր կալուածատիրութիւնն էր. կալուածներ ունէին տաճարները, արքայական տունը, վաճառականները, բարձր պաշտօնէութիւնը, գորավարները: Գրաւուած երկիրներու և սաւարի մէկ մասը կ'ըսասանային տաճարները, արքունիքը: Կալուածները կը մշակէին ստրկական աշխատանքով, կային և

հողին կապուած ազատ գիւղացիներ, որոնք զուրկ ըլլալով սեփական հողէն կ'աշխատէին կալուածատիրոջ կամ տաճարական հողերու վրայ: Ստրուկները ոչինչ չէին ստանար, անոնք մաս կը կազմէին կալուածներու և կը կերակրուէին միայն: Օրէնքը միջամուխ կ'ըլլար կալուածատիրոջ և ազատ գիւղացիներու յարաբերութեան. ան կը պաշտպանէր հողատէրերու շահերը. գիւղացին բերքի երկու երրորդ մասը կու տար հողատիրոջը: Ան պարտաւոր էր լաւ կացութեան մէջ պահել հողը, ջրանցքը և ընդհանրապէս հողատիրոջ սեփականութիւնը: Կալուածատէրը երբեմն ալ հողի հետ լծկաններ ալ կու տար գիւղացիին: Այս պարագային գիւղացիի հասանելիքի չափը կը պակսէր և ան պարտաւոր էր առողջ դրութեամբ լծկանները վերադարձնել տիրոջը, հակառակ պարագային փոխարժէքը պիտի վճարէր: Որպէսզի կալուածատէրերը չշահագործեն, օրէնքը կ'որոշէր նաեւ աշխատավարձը, այդ կը վերաբերէր յատկապէս արահետաւորներուն:

ԱՌՆԻՏՈՒՐ.— Միջագետքի բոլոր քաղաքներու և մասնաւորապէս Բաբելոնի մէջ զարգացաւ առեւտուրը: Ամեն տեղ ստեղծուեցաւ առեւտրականներու մէկ դաս, որ թէ երկրի հարստութիւնը արտասահման կը տանէր և թէ դրսի հարստութիւնները կը բերէր Միջագետք: Բաբելոնի առեւտրականներու շնորհիւ իրարու կապուեցան Արգասարբեր կիսալուանի երկու թեւերը, Փոքր Ասիան, Իրանի բարձրաւանդակը: Բաբելոնը չատ աւելի լայն, ընդարձակ չափերու հասցուց առեւտրական այն գործը, որ սկսուեր էր սումէրական քաղաքներու և Ակադի մէջ: Բնական է, որ Համուրաբիի օրէնսդրութիւնը զլաղուէր նաեւ առեւտուրի կանոնաւորման հարցով: Բաբելոնի մէջ կար խոշոր և մանր առեւտուր. առաջինը՝ միջագետքին առեւտուրն էր և կը կատարուէր կորաւաններով: Երբեմն մանր դրամագլուխները կը միանային կազմելու համար առեւտրական ընկերութիւններ՝ արտաքին առեւտուրի համար: Անոնց առեւտուրն իր մէջ առեր էր Միջերկրականի ամբողջ արե-

ւելեան աւագագանը, Արաբիան, մինչեւ Հնդկաստանը: Պետութիւնը կը հսկէր առեւտրական մեծ ուղիներու ապահովութեան վրայ: Թափառական ջեղապետներու հետ դաշինք կը կնքէր, որով անոնք յանձն կ'առնէին վերահսկել կարաւաններու ապահովութեան: Արտաքին առեւտուրին կը մասնակցէին պալատը, տաճարները: Անոնք իրենց շտեմարաններու մէջ հաւաքուած բարիքները շուկայ կը հանէին՝ կաշի, մետաղ, ձոյլ ոսկի, զէնքեր և զործիքներ, թանկագին քարեր, օժանելիքներ, համեմներ, կաւանօթներ, անասուններ... Առեւտրականները նաեւ հողեր կը գնէին ու կը վաճառէին: Առեւտուրը մեծ մասամբ փոխանակութեամբ կը կատարուէր: Երբեմն բարիքները կը գնահատուէին ձոյլ արծաթով: Սեղանաւորները ձոյլ արծաթի և ոսկիի առեւտուր կ'ընէին: Պարտքերու համար սահմանուած էր որոշ տոկոս: Բնական բերքերու համար 33%, ձոյլ արծաթը մինչեւ 20% շահ կը բերէր: Ոսկին դեռ շատ հազուագիւտ էր, ան շատ հարուստներու ձեռքն էր և կը ծառայէր իբրեւ զարդարանք: Բայց առեւտուրը կանոնաւոր արագութեամբ կատարելու համար անհրաժեշտ էր մեկ չափ՝ ապրանքներու գիները որոշելու համար:

ԴՐԱՄՆ.— Այդպիսի չափ ու կշիռ կրնար ծառայել այն ապրանքը, բարիքը, որու վրայ աւելի դիւրին էր գնահատել միւս բոլոր ապրանքները: Այդ ալ կրնար կատարել դրամի դերը: Հիմա այդ բարիքը մետաղէ և թըղթէ դրամներն են: Արեւելքի հնագոյն պատմութեան մէջ մետաղը հազուագիւտ էր, կամ եթէ գոյութիւն ունէր շատ անգամ չմշակուած և չգտուած վիճակի մէջ էր, ուստի որպէս դրամ կը ծառայէին ոչ թէ մետաղները, այլ մորթին, եզը, ոչխարը, պարկ ցորենը... Օրինակ որոշելու համար ստրուկի արժէքը՝ կը գնահատէին ան՝ տասը եզ, հինգ ոչխար. գերի ինկած արքայական տան անդամներու փրկագին կ'որոշուէր օրինակ 100 եզ: Իւրաքանչիւր ժողովուրդի մէջ դրամական միաւորը տարբեր էր: Այս բանը շատ մեծ յառաջդիմութիւն էր ատլէ առաջ եղած ապրանքային փոխանակութեան, սակայն այդ ալ անյարմարութիւն ու-

նէր: Երբ մարդիկ ծանօթացան մետաղի մշակութեան, կամ ստացան ուրիշ տեղերէ, անոնք մտածեցին որպէս փոխանակութեան, առետուրի միաւոր ընդունիլ մետաղը, որ աւելի յարմար էր. չէր մաշուիր, չէր փճանար. մետաղի կտորը կարելի էր բաժնել աւելի մանր մասերու. անոր ամեն մասը իր գինը կը պահէր: Այդպէսով կարելի էր արժէքաւորել և սուղ և ասփան սպրանքները: Բարեւացիները դարաւոր առետրական փորձէն ետք մետաղը դարձուցին հիմք իրենց առետուրին: Անոնք մեծ քանակութեամբ մետաղներ հրապարակ հանեցին. ստեղծուեցաւ դրամը: Այդ մետաղի կտորներուն անոնք զանազան ձեւեր կուտային՝ օրինակ եզերու, կամ եզան գլխու: Երբեմն անոնք կ'ըլլային մետաղեայ կարճ ձողեր, մատանիներ, գնդիկներ: Բայց միշտ կ'որոշուէր անոնց կշիռը և արժէքը: Այս բանը արտակարգ մեծ զարկ տուաւ առետուրին: Բոլոր գնումներու ժամանակ կը վճարէին կանխիկ մետաղեայ դրամներով: Հարուսաներու, տաճարներու և պալատի մէջ կը կուտակուէր մեծ քանակութեամբ մետաղեայ դրամ: Հողային հարստութեան կից առաջացաւ դրամական հարստութիւնը: Տաճարներու դրամական հարստութիւնը միայն իրենց չէր: Հաւատացեալները տաճարական պահեստներուն կը վստահէին իրենց դրամները: Հոն աւելի ապահով էր: Տաճարը այդ դրամները շրջանառութեան մէջ կը դնէր և կը հարստանար: Ան սպրանքներ կը գնէր, կը վաճարէր: Քուրմերը ճարպիկ վաճառականներ դարձան: Ասոր հետեւանքով մետաղի գինը կը բարձրանար: Վաճառականներու մէկ ամբողջ դաս կար, որ կ'ըզբաղուէր միայն հարեւան երկիրներէն մետաղ ներմուծելով: Առաջ եկան խոշոր առետրականներ, որոնց ձեռքը կեդրոնացաւ մետաղէ դրամները. անոնք ալ իրենց ձեռքը կուտակուած դրամները սկսան տոկոսներով տալ: Նման առետուրը կը պահանջէր ստուգութիւն, հաշիւներու ճշտութիւն, չսխալուելի մանրամասնութեանց մէջ: Ամեն զործառնութիւն կը կատարուէր գրաւոր. կը ճշդէին դրամ վերցնելու, փոխանակելու պայմանները: Մուրհակները կը գրէին աղիւսէ

տախտակներու վրայ և ստորագրութեան փոխարէն կը դրոշմէին գլանիկներով: Միջագետքի մեծ քաղաքներու պեղումներէն հանուած են այդպիսի հազարաւոր գրաւոր պայմանագրեր, ստացակոսններ, պարտամուրհակներ...: Առեւտրական և փոխանակութեան գործը իր մէջ առաւ հասարակութեան լայն խաւերը և այդ պատճառով դրեթէ ամեն քաղաքաբնակ ունէր իր կնիքը, բացի իհարկէ ամենէն աղքատները և ստրուկները, որոնք ոչ առնելիք ունէին, ոչ վաճառելիք:

Այսպիսով մենք կը տեսնենք, որ Բաբելոնի հասարակութիւնը շատ բարդ կազմ ունէր: Ան դասակարգային հասարակութիւն էր խիստ զարգացած՝ աշխատանքի բաժանումով: Հասարակութենէն բարձր կար ուժեղ կեդրոնացած իշխանութիւն մը, որ միջամուխ կ'ըլլար ամեն գործի մէջ, կը կարգաւորէր տնտեսական յարաբերութիւնները: Այս պետութեան գլուխը կանգնած էր Աստուած, որ կը տնօրինէ ամեն ինչ թագաւորի միջոցով:

Իզուր չէ, որ Համուրաբիի օրէնքներու քարակոթողի վերը կանգնած է արդարութեան և լոյսի աստուած Շամաշը, իսկ անոր առաջ խոնարհութեամբ կանգնած է ինքը՝ Համուրաբին: Ան աստծու ձեռքէն կ'ընդունի օրէնքները, որով պիտի կառավարուի պետութիւնը: Ուրեմն օրէնքը կը դառնար աստծու հրամայականը, բարոյական պատուէրներու ժողովածուն:

ԱՆԿՈՒՄԸ, ԿԱՍԵԱՆՆԵՐ. — Համուրաբիի դիւնաստին և Բաբելոնի առաջին կայսրութիւնը երկար կեանք չունեցան: Հնդեւրոպական նոր և մեծ գաղթականութիւններ երեւացին Մերձաւոր Արեւելքի մէջ: Երկու հազարական թուականներուն արեւելքը տեւական վերիվայրումներու մէջ էր: Աստիճանաբար անոր աշգսպրական և քաղաքական դիմագիծը կը փոխուէր: Ազգերն ու ժողովուրդները գուրս կու գային իրենց մեկուսացումէն և կը մտնէին իրարու հետ սերտ յարաբերութեան և գործակցութեան մէջ: Կասիաններու ճնշումը աւելի կ'ուժեղնար Բաբելոնի վրայ: Որքան և Համուրաբիի անմիջական յաջորդները ընդունակ և

գործունեայ թագաւորներ էին, բայց և այնպէս եկուոր-
ներու առաջին առնել չկրցան: 1714-ին Կասեաններու
Գանճիօ թագաւորը գրաւեց Բաբելոնը և հիմնեց հոն Կաս-
եան հարսուքիւրն մը: Բայց ան թիւով քիչ, զինուած և լաւ
կազմակերպուած փոքրաթիւ խումբի մը տիրապետութիւն
էր նստակեաց մեծամասնութեան վրայ: Կասեանները այն-
քան ուժեղ էին, որ իրենց երկրորդ թագաւորը կոչուեցաւ
«Արքայից արքայ» և «Սոււմէրի և Սուբարի աշխարհի թա-
գաւոր»: Այս ցոյց կու տայ թէ Կասեանները տիրեր էին
ամբողջ Միջագետքին: Անոնք չյաջողեցան դուրս գալ Մի-
ջագետքի սահմաններէն և նոր նուաճումներ ընել, անոնց
դէմ դուրս եկան հիւսիս-արեւմուտքի մէջ Հաթերը, որոնք
նոր կը կազմակերպուէին և անգամ մը արդէն հասեր էին
Բաբելոն: Կասեանները նոյնիսկ դժուարութեամբ կը պա-
հէին իրենց ձեռքը ամբողջ Միջագետքը. հարաւ արեւելքի
մէջ անոնց մրցակից էին Էլամները, որոնք կը փորձէին
տէր դառնալ Եփրատի և Տիգրիսի գետաբերանին, հիւսիսի
մէջ՝ Ասուրները, որոնց դէմ կը պայքարէին Կասեանները՝
գոնէ Բաբելոնը իրենց ձեռքը պահելու համար: Կասեան-
ները Բաբելոնի մէջ անգամ մը որ հաստատուեցան հար-
կագրուած էին իրենց հերթին կռիւ մղելու հնդեւրոպացի-
ներու նար հոսանքներու դէմ, որոնք կ'իջնէին Միջագետք,
հիւսիսի և հիւսիս-արեւելքի շրջապատող լեռներէն: Ասոնց՝
թիկուսքէն կ'իջնէին ուրիշ ժողովուրդներ, որոնց մէկ թեւ-
ը Միջագետքի հիւսիսային մասերուն մէջ կազմեց Մի-
տանի պետութիւնը: Կասեաններու թուական փոքրութիւնը
և աւելի բարձր մշակութային միջավայրի մէջ իյնալը այն
հետեւանքը ունեցաւ որ անոնք դանդաղօրէն համաձուլուե-
ցան տեղական բաբելական-սեմական տարրի հետ. մէկը այս
ձուլման մէջ բերաւ իր ռազմունակութիւնը, միւսը իր դա-
րաւոր մշակոյթը: Ասոր հետեւանքով է որ թէեւ թուլցած՝
Բաբելոնի պետութիւնը դեռ երկար ապրեցաւ, իսկ ժողո-
վուրդն ալ շարունակեց ստեղծագործել և Միջագետքի մէջ
լլալ մշակոյթի ամենէն մեծ գործօնը, թողնելով Ասորես-
տանին քաղաքական ղեկավարութիւնը:

Ե. ԳԼՈՒԽ

ԱՍՈՐԵՍՏԱՆ

ԲՆԱՎԱՅՐԸ.— Միջագետքի ամենէն հիւսիսը Ասորեստանն է: Ան սեմական աշխարհի հաղորդակցութեան և մեծ շարժումներու գիծէն քիչ մը դուրս է ինկած: Կը տարածուի Տիգրիսի երկու ափերուն և աւելի մօտ ու սերտ յարաբերութեան մէջ էր իրանական փոքր-ասիական քաղաքակրթական աշխարհներու հետ: Լեռներէ և բլրաշարքերէ կազմուած երկիր մըն է ան: Ամառը հոն տաք է և չոր, ձմեռը ցուրտ և ձիւնոտ: Զուրն առատ է, բացի Տիգրիսէն՝ Մեծ և Փոքր Զառ գետերու ափերը մարդկային մեծ ու փոքր խումբերու հաւաքովայրեր են, հաղորդակցութեան բնական ուղիներ: Գետերը կը հոսին երբեմն խոր ձորերու և կիրճերու մէջէն, շատ տեղեր պիտանի չեն անոնց շուրջը համախմբուած մարդկանց. անոնք չեն ջրեր իրենց հունէն շատ բարձր գտնուող դաշտերը: Ասորեստանի առատ ջուրը աւելի կը շահագործուի միջին և հարաւի Միջագետքի քան իր պէտքերուն համար: Մակերեւոյթի կազմութեամբ, բուսական հարստութեամբ, կլիմայով ան միանգամայն հակապատկերն է միջին և հարաւային Միջագետքի՝ Բաբելոնի: Ասորեստանը շրջապատուած է երկու կողմէն Տաւրոսեան և Զագրոշեան լեռնաշղթաներով. այս լեռները հնագոյն ժամանակներէն բնակուած են եղեր խաշնարած և վաչկատուն, միշտ շարժման մէջ եղող և միշտ վտանգուոր ցեղերով: Անոնք փոքր-ասիական, իրանական, սեմական ծագում ունէին: Հնուց անտի Ասորեստանը անցման ուղի մըն է եղեր՝ լեռնաքնակ բարբարոսներու համար՝ քաղաքակիրթ Բաբելոն արշաւե-

լու: Երբեմն ալ այս լեռնաքնակ ցեղերը կամ ցեղական հասուածները հաստատուեր են, տեղաւորուեր Տիգրիսի, անոր վտակներու շուրջը, դարձեր են երկրագործ, նստակ-
եաց: Հոս ապրող ժողովուրդները ինքնաբաւ ըլլալ չէին կրնար: Երկիրը ծովերէն շատ հեռու էր, ինչպէս և առե-
տըրական մեծ ուղիներէն: Ան մեկուսացած աշխարհ մըն էր՝ երկու կողմէն շրջապատուած լեռներով, իսկ արեւ-
մուտքէն և հարաւէն բաց սեմական ժողովուրդներու և ա-
նոնց քաղաքական ու քաղաքակրթական շարժման դիմաց: Այդ պատճառով ալ ցեղերու, լեզուներու և մշակոյթի պայքարի մէջ սեմականը առաջնութիւնը ստացաւ: Հիւսիս-
սային ու հիւսիս-արեւելեան Միջագետքը իվերջոյ դարձաւ սեմական աշխարհ:

Ասորեստան աղքատ, չարքաչ գիւղացիներու և հո-
վիւններու աշխարհ մըն էր: Այս կացութիւնը իր դրօշմը կը դնէր անոր նկարագրի և կենցաղի, քաղաքականութեան վրայ: Իր գոյութիւնը և իր աշխատանքի արդիւնքը պահե-
լու համար պէտք է որ, ան միշտ պատրաստ ըլլար կռուելու պաշտպանուելու լեռնաքնակ հարեւաններու դէմ. ան կըռ-
ւով միայն կրնար դուրս գալ իր աղքատ երկրէն, հասնիլ ծովերուն, յամառ պայքարներով միայն կրնար տիրանալ Մերձաւոր Արեւելքի առետրական գիծերուն և դառնալ հարստութեան և իշխանութեան տէր:

ՀՆԱԳՈՑՆ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ.— Ասորեստանը իբրև ժողո-
վուրդ և պետութիւն կը կազմաւորուի շատ աւելի ուշ քան Եգիպտոսը, Բաբելոնը, իսկ պատմութեան բնմ դուրս կու գայ և համաշխարհային մեծ դեր կը խաղայ, երբ վերոյիշ-
եալ ժողովուրդներն ու պետութիւնները կատարեր էին ի-
րինց դերը և արդէն բռներ էին անկումի ուղին: Ասոր ժողովուրդը կազմաւորուեր է շատ բազմազան տարրերէ: Հնագոյն ժամանակէն Հիւսիսային Միջագետքը մինչև Զագրոսեան լեռները բռներ էր փոքր ասիական ծաղումով ժողովուրդ մը Սուբարիները: Մեր ունեցած տեղեկութիւն-
ները ասոնց կը համարեն առաջին բնակիչները Հիւսիսային

Միջազգեստքի. ասոնք ներքին հոլովոյթով քարէ դարէն անցան մետաղներու դարը և ստեղծեցին բարձր մշակոյթ: Սուբարիները Ասորեստանի մէջ՝ նախ քան Ասուր ժողովուրդին երեւան գալը՝ կառուցին առաջին սրբատեղիները Ասուր աստուծոյ տաճարը. անոնք են առաջին քաղաքական միութիւններ ստեղծողը, տոհմերէն բարձր միջցեղային միութիւններ կազմողը:

Երրորդ հազարամեակի սկիզբները հոս հաստատուեցաւ սեմական մեծ գաղթականութիւն մը, որ քանի մը հարիւր տարուայ մէջ սեմացուց այս երկիրը. անոնք ձուլեցին իրենց մէջ Փոքր-Ասիական ժողովուրդները: Յետոյ Ասուրները ենթարկուեցան հնդեւրոպական ժողովուրդներու տեւական յարձակումներուն հիւսիսէն և Սումէրական գերիշխանութեան հարաւէն: Հիւսիսէն եկողները ռազմունակ և լաւ կազմակերպուած ցեղեր էին, որ շուտով պիտի հաւաքուէին, միացնէին իրենց ուժերը կազմելու համար Միտանի պետութիւնը: Սումէրները հոս թափանցեցին իբրև վաճառականներ, հետագային իբրև վարչութեան և պետութեան ղեկավարներ: Վաճառականները կուգային այս շրջանի մետաղներուն համար. իշխանութիւնը կուգար ապահովութեան գիծը ռազմական-լեռնային դիրքերը գրաւելու համար: Սումէրները հոս բերին իրենց բարձր մշակոյթի տարրերը. սեպագրերու գործածութիւնը, կրօնական քաղափարները և արուեստի ձեւերը, բարձրերը: Բայց անոնք հոս բնակչութիւն չէին, այլ վաճառականական քաղութ, բերդապահ զօրք, վարչութեան ղեկավարներ: Անոնց տիրապետութեան ժամանակ թէ հարաւէն և թէ արեւմուտքէն սեմական նորանոր քաղթականներ եկան հաստատուելու այստեղ: Սումէրները կը հովանաւորէին այս թափանցումը՝ նոր եկողները կրնային պատնէչ ըլլալ՝ լեռնաբնակներու ներխուժման դէմ: Իսկ սեմականներուն ալ այս լեռնոտ, կանաչաւուն և բլրաշատ երկիրը կը գրաւէր իր շատ լաւ և ընդարձակ արօտատեղիներով, ջուրով, պաշտպանութեան բնական վայրերով:

Բարեխոնի հարստութեան ժամանակ սեմական տարրը ասելի կ'ուժեղնայ. տափաստաններէն և անապատներէն նախ գէպի եփրատի, ապա Տիգրիսի ափերը կը դիմեն խաշնարած ցեղերը, անոնք կը կազմեն մեծամասնութիւն, կ'ըլլան տիրող, բայց իշխանութիւնը դեռ կը գտնուէր Բարեխոնի ձեռքը: XXIII-րդ դարուն առաջին անգամ Ասուրները կը փորձէին տգատուիլ Բարեխոնի գերիշխանութենէն, անկախանալ և նոյնիսկ արշաւել Բարեխոն: Բայց անոնց արշաւանքը յաջողութիւն չունենար, ընդհակառակը դէպի արեւմուտք և հիւսիս արշաւելով անոնք նոր երկիրներ կը գրաւեն, կը հասնին Հաթերու երկիրը, կ'իջնեն Իրանի բարձրաւանդակը:

Ասորեստանի կազմաւորման շրջանի ամենամեծ դէմքը Սարգսն I էր: Ան Տիգրիսի ափերուն վրայ վերջնականապէս հաստատեց սեմախօս Ասուրներու գերիշխանութիւնը, իրանական, Փոքր-Ասիական ժողովուրդներն առաւ իր իշխանութեան տակ, ան կասեցուց հիւսիսէն սպառնացող ամեն արշաւանք, պաշտպան կանգնեցաւ Փոքր Ասիոյ քաղաքներու, յատկապէս կանէշ քաղաքի սեմական վաճառականներուն:

Ժամանակաւոր ուժեղացումէն ետքը անկտիւ Ասորեստանը նորէն թուլցաւ և ինկաւ Էլամի իշխանութեան տակ, իսկ Համուրաբի ժամանակ ան մաս կազմեց Բարեխոնի: Վերջինիս իմաստուն թագաւորը կը հովանաւորէր Ասուրները կը պահէր անոր ցեղերու ինքնավարութիւնը՝ հիւսիսային ճակատի պաշտպանութեան համար:

Համուրաբի պետութեան անկումով Միջագետքի մէջ երկու նոր քաղաքական յօրինուածք առաջ կուգայ՝ երկուքի մէջ ալ իշխողն ու ղեկավարը՝ հնդեւրոպական ցեղախումբերու արիական հատուածն էր: Հիւսիսային Միջագետքի մէջ Միսսեիցները, հարաւայինի մէջ Կասեացիները: Միտաններու իշխանութեան տակ էին նաեւ Ասուրները: Ասոնք կիսանկախ կեանք ունէին, հարկ կու տային կեդրոնական իշխանութեան և օժանդակ զօրք՝ պատերազմի ժամանակ:

Տեսանք որ Միտանի պետութեան ռազմական ուժերը կը գործէին Որոնդէսի, Եփրատի ափերուն՝ Եգիպտոսի դէմ. այս բանը նպաստաւոր էր Ասուրներու համար, որոնց երկիրը Միտանիի պետութեան արեւելեան շրջանի մէջ էր: Անոնք մեծ դէպքերու կեդրոնէ հեռու՝ կազմակերպեցին իրենց ուժերը, համախմբեցին իրենց ճիգերը և յարմար պահուն փորձեցին ազատագրուիլ Միտանիի իշխանութենէն: Հաթերն ալ իրենց միջամտութեամբ՝ Միտանիի գործերու մէջ, անոր թուլացման նպաստելով՝ ճամբայ բացին Ասորեստանի հօրացման: XIII-րդ դարուն ան բռնեց Միսանիի տիրութիւնը: Բայց վերջինիս անկումով սկսուեցաւ մէկ մրցակցութիւն Հաթերու և Ասորեստանի մէջ՝ Միտանիի երկիրներու տիրապետութեան համար: Այս կռուի մէջ յաղթող դուրս եկաւ Ասորեստանը և գրաւեց Հիւսիսային Միջագետքը մինչև Կարկէմէշ — Եփրատեան գիծը և շուտով պիտի դառնար առաջին մեծ պետութիւնը արեւելքի մէջ:


ՆԿԱՐԱԳԻՐԸ. — Սեմական այն հոտաւածը, որ անցաւ Եփրատը և մտաւ Տիգրիսի հովիտը ենթակայ էր աւելի դաժան պայմաններու՝ քան անոր միւս հատուածները, որոնք հաստատուեր էին Արգասաբեր Կիսալուանի արեւմտեան թեւին վրայ: Անոնք կը բնակէին Տիգրիսի շուրջը աւելի խիստ կլիմայի տակ, աւելի անհրապոյր պայմաններու մէջ, հարեւան լեռնաբնակներու մշտական վտանգին տակ: Այս պայմաններու մէջ կը կազմաւորուէի Ասուրներու նկարագիրը՝ չարքաշ, սակաւապէտ, ռազմաւարտ և դաժան: Ասուրը, որ հողագործ էր և հովիւ՝ աստիճանաբար դարձաւ միայն զինուոր. ան շարունակ ինքնապաշտպանութեան մէջ էր, միշտ զինուած. յաջող ինքնապաշտպանութիւնը մղեց զանոնք հակայարձակման, յարձակումի ալ նուաճողականութեան: XIII-րդ դարէն անոր համար պատերազմը դարձաւ արհեստ և հորստանալու միջոց: Սկիզբը ան միայն սպաստակութիւններ կ'ընէր հեռու և մօտիկ երկիրներու մէջ, ապա դարձաւ նուաճող, գրաւած երկրի կազմակերպող և անոր հարստութիւնը իւրացնող: Այս աս-

ապատակութեանց, նուաճումներու մէջ ստեղծուեց զինուորական միապետութիւն մը, ամեն բան կեդրոնացաւ թագաւորի անձի մէջ, որ ամենէն առաջ զօրավար էր և որուն գործը նուաճումներ ընելն էր ու աւար ձեռք բերելը:

ՆՈՒԱՃՈՒՄՆԵՐԸ. — Թագաւորները սկիզբը կը նստէին Ասուր քաղաքի մէջ. այս անունը կը տրուէր և քաղաքին և ժողովրդին և անոնց հովանաւոր աստուծն: Նինուէն միայն կրօնական սրբատեղի էր. հոն էր Իշտար աստուծ մեհեանը: VIII-րդ դարուն Սարմացասաւ I. 1290—1260 մայրաքաղաք կը դարձրէր Կալախը, Տիգրիսի ձախ ափին: Ան կը բռնէ նուաճումներու ուղին: Այդ այն շրջանն էր, երբ արեւելքի մեծագոյն ուժը՝ Հաթական պետութիւնը զբաղուած էր իր արեւմտեան սահմանները պաշտպանելով՝ հնդեւրոպական նոր ժողովուրդներու արշաւանքը կասեցնելու և Եգիպտոսի հետ համաձայնութեան գալու: Սալմանասար I. կը կռուի Բաբելոնի Կասեաններու դէմ, որոնք արդէն թուլացեր էին. կը գրաւէ քանի մը գաւառներ: Ան կը բարձրանայ Եփրատով և կը գրաւէ հաթական երկրորդ պետութեան մայրաքաղաքը՝ Կարկեմիթը: Այս գրաւումը մեծ արժէք ունէր Ասորեստանի համար: Անոր առջեւ կը բացուէին Միջերկրական տանող գիծերը: Հաթական իշխանութիւնը Եփրատի շուրջը կը թուլնայ, առաջնութիւնը կ'անցնի սեմականներուն և այն ալ անոր ամենէն ռազմունակ հատուածին:

XIV—XIII-րդ դարերը արեւելքի մեծ կայսրութեանց անկման շրջանն է և փոքր օգգութիւններու քաղաքական ազատագրութեան և մշակութային վերելքի սկիզբը: Ասորեստանի առաջ չկար մէկ մեծ ուժ, որ պատնէշ կանգնէր անոր մեծացման և տարածման: Եւ եթէ ան անմիջապէս չանցաւ մեծ նուաճումներու՝ պատճառը արտաքին և ներքին այն տագնապներն էին, որոնց ան կ'ենթարկուէր XII X-րդ դարերուն: Սալմացասա I-ի որդին Թուկլաս-Ինսա (1260—1240) շատ անգամ կ'արշաւէ հիւսիսային լեռնականներու և Նայիրեան ցեղերու դէմ, որոնք ուժեղացեր

էին Միտանիի ցեղերու զէպի հիւսիս գաղթելով և հարաւային Հայաստանի մէջ հաստատուելով: Այս գաղթը կատարուեր էր սեմականներու, յատկապէս Ասորեստանի ճընձման տակ: Նայիրեան դաշնակցութիւնը հիւսիսէն վտանգաւոր էր Ասորեստանի համար թէ ռազմապէս և թէ տընտեսապէս: Տաւրոսեան մետաղաշատ լեռները և հարաւային Հայաստանի արգաւանդ դաշտերը անոնց ձեռքն էր: Պէտք էր գրաւել տնտեսապէս հարուստ այդ շրջանները և վերջընել Նայիրեան ցեղերու վտանգը հիւսիսէն: Այս մէկ խընդիրն էր դրուած ասորեստանեան ղեկավարութեան առաջ, որու լուծման վրայ անոնք աշխատեցան երեք դարէն աւելի և երբեք չլուծեցին օգուտ իրենց: Տուկլաթ-Ինուրտալի առաջ դրուած էր նաեւ Բաբելոնի հարցը, ուր լեռնաքնակ կասեանները կ'իշխէին: Քաղաքականապէս անոնք ոչ մէկ դեր չկատարեցին արեւելքի պատմութեան մէջ, բայց անոնց օրով Բաբելոնը մնաց իբրեւ արեւելքի առեւտուրի գլխաւոր կեդրոն: Կասեաններու օրով ալ Բաբելոնի մէջ կը հանդիպէին իրարու հնդկական, իրանի, էլլամի վաճառականները՝ եգիպտական, արամէական, հաթական առեւտրականներու հետ: Միջագագային այս առեւտուրը իր շրջանակի մէջ էր առեր Հնդկաստանը, իրանի բարձրաւանդակը մինչեւ Միջերկրական ծով, Եգիպտոս և Կիպրոս: Ասոր հետեւանքով Բաբելոնը արտակարգօրէն հարստացեր էր, փարթամացեր: Եւ թէեւ Միջագետքի մէջ քաղաքական գերակշռութիւնը անցեր էր Ասորեստանին, Բաբելոնն էր սեմական մշակոյթի կեդրոնը: Կասեանները իշխող փոքրամասնութիւն մըն էին՝ որոնք ենթարկուեցան սեմական մշակոյթի խոր ազդեցութեան և սեմականացան: Անոնք մուսցան իրենց լեզուն և իւրացուցին բաբելականը: Այդ է պատճառը, որ մեզի կասեան լեզուէն բան մը չէ հասեր, բացի քանի մը բառերէ: Բաբելոնի տնտեսական և մշակութային այս առաջնութիւնն էր պատճառը, որ Ասորեստանը իր կազմաւորման սկզբին փորձեց գրաւել Բաբելոնը կամ ձգել իր ազդեցութեան շրջանակին մէջ: Սարմանասար I.



ԱՍՍՐԵՍԱՆԻ ԿԱՅՐՈՒԹԻՒՆԸ

գրաւեց Եփրատեան առեւտրական գիծը, այդ մեծ հարուած էր Բարեխոնի առեւտուրին համար: Տակկլատ.ինուրտա I. գրաւեց Բարեխոնը և իջաւ հարաւ: Ան յայտարարեց իրեն «Թագաւոր Բարեխոնի», բայց այս յաջողութիւնները վաղանցիկ էին: Ան կ'ըսպանուի և Ասորեստանը երկար ժամանակ կը մատնուի անիշխանութեան, Բարեխոնի մէջ նորէն կը վերահաստատուի Կասեան հարստութիւնը:

ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԹՈՒՂՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌԸ.— Շուրջ 1200-ական թուականներուն ինկաւ հաթական մեծ պետութիւնը: Արեւմուտքէն ներխուժող ծովերու ժողովուրդները հարուածեցին անոր հիւսիս-արեւմտեան սահմանները, բայց անոր անկման պատճառներէն մէկն ալ Եփրատեան հարուստ և արգասաբեր շրջաններու կորուստն էր, անցած Ասորեստանի ձեռքը: Հիմա միայն զգալի դարձաւ քաղաքական այն սխալը, որ կատարեր էին հաթական ղեկավարները դար մը առաջ՝ երբ անոնք նպաստեր էին Միտանի թուլացման և անկման: Եթէ անոնք պահէին և զինուորական օժանդակութիւն ընէին Միտանիներուն և չկտորէին անոնց ուզմի օւժը, «Մարիանիները», այդ կերպով պատուար կանգնած կ'ըլլային Ասուրներու քաղաքական հզօրացման և անոնց դէպի արեւմուտք նուաճումներուն դէմ: Հաթական աշխարհը վերիվայրումներու ենթարկելէ յետոյ փոխազական ցեղախումբերը հասան Ասորեստանի սահմանները: Տաւրոսեան լեռներու շուրջը սկսաւ երկարատեւ կռիւ մը Ասուրներու և արեւմուտքէն արշաւող ցեղերու մէջ: Փոխազացիք և անոնց հետ եկող հաթական զանգուածները կու գային նոր հայրենիք որոնելու, կը ջանային գրաւել Եփրատի երկու ափերը, հիւսիսային Միջագետքը: Ասորեստանի ապահովութիւնը վտանգուած էի և նիւթական բարեկեցութեան աղբիւրները ցամաքած: Այս դէպքերու ազդեցութեան տակ գրաւած երկիրները փորձեցին ազատագրուիլ Ասորեստանի ծանր լուծէն: Միաժամանակ Ասուրներու այս տաքնապալից օրերուն անոր դէմ կը կանգնին անապատի վաչկատունները, սուամական ցեղերը, որոնք հարաւէն կը

չարժուին հիւսիս, կը գրաւեն Եփրատի երկու եզերքները, կը լքեն վրասնաքնակ կեանքը և կը դառնան նստակեաց: Անոնք չեն ենթարկուիր Ասորեստանին. ընդհակառակը՝ արամէական այս ցեղախումբերը անիշխանութեան կը մատնեն ամբողջ Հիւսիսային Միջագետքը. կը յարձակին Դամասկոսէն մինչեւ Խառան, Ամանոսէն մինչեւ Խարուր գետն ինկած հողամասերու վրայ: Ասուրները կը կորսնցնեն իրենց հարուստ, արգաւանդ հողերը, առեւտրական գլխաւոր ուղիները, բարեկեցիկ քաղաքները: Այս դէպքերու հետեւանքով Ասորեստանը կ'ընկրկի, կը քաշուի իր ազգագրական սահմանագիծերը, կը պարփակուի իր աղքատ ու անհրապոյր սահմաններու մէջ: Անապատի վաչկատուներու և փոխաբան ցեղերու դէմ մղած պայքարը կը կլանէ անոր բոլոր ուժերը: Այս կացութիւնը կը շարունակուի մինչեւ IX-րդ դարու սկիզբները, երբ նոր, աւելի նպաստաւոր պայմաններու մէջ կը վերսկսի իր նուաճումները:

ՏԻՓԼԱԹ-ԲԱԼԱՍԱՐ I (1110-1100).— Ասորեստանի անկման այս դարերուն մէջ փայլուն, բայց կարճատեւ շրջան կը հանդիսանայ Տիգլաթ-Բալասարի Թագաւորութիւնը: Ան ոչ միայն վերջ կուտայ դուրսի յարձակումներուն, այլ և կը բռնէ նուաճումներու ուղին: Անոր թողած տարեգրութիւններէն է, որ մենք գիտենք իրմէ առաջ կատարուած քաղաքական դէպքերու մասին: Շարք մը ժողովուրդներ արդէն տեղաւորուած են Ասորեստանի սահմաններուն վերայ. ասոնք կազմեր են միջցեղային դաշնակցութիւններ: Տիգլաթ-Բալասար I կը կռուի անոնց դէմ՝ հիւսիսը՝ Նայիրեան դաշնակցութեան դէմ, կը հասնի մինչեւ վանայ լճի ափերը: Արեւմուտքէն՝ կը գրաւէ Եփրատեան շրջանը, կը հպատակեցնէ արամէական ցեղերը և կը մօտենայ Միջերկրականին: Հինգ տարուայ մէջ ան կը նուաճէ «Քառասուն ժողովուրդներ», որոնք աւելի ճիշդ ցեղեր են կամ միջցեղային միութիւններ: Ան կ'աւարէ և հսկայ հարստութիւն կը հաւաքէ իր պալատներուն մէջ: Նայիրի երկիրը, Գոմոգէնը, հաթական մանր իշխանութիւնները, Ա-

մովրացիք, Արամէացիք, փիւնիկեան քաղաքները կ'իյնան անոր իշխանութեան տակ կամ կ'ընդունին անոր հովանին: Առաջին անգամ Ասորեստանի թագաւորը կը կատարէ խորհրդանշող ծէս մը՝ կը բարձրանայ նաւ մը և իր գէնքն ու զրահը կը լուսայ Միջերկրականի ջուրերուն մէջ: Աս նշան մըն էր, որ ան կ'իշխէր ծովու և ցամաքի վրայ: Ասորեստանը նորէն դուրս կու գայ իր մեկուսացումէն և ձեռք կը ձգէ Եփրատեան առեւտրական գիծը: Ասկէ ետքը ան կը դիմէ Բաբելոն:

ԱՍՈՐԱ-ԲԱԲԵԼԱԿԱՆ ՄՐՅՈՒԹԻՒՆԸ.— Ասորա-բաբելական պայքարը հին էր: Ասուրները կը ջանային տէր դառնալ ամբողջ Միջագետքին, անոր արգաւանդ դաշտերուն, սրբազան քաղաք Բաբելոնին, անոր մեծ հարստութեան. կ'ուզէին հասնիլ «Վարի ծովուն»՝ Պարսից ծոցին: Առանց տէր ըլլալու Միջագետքին անկարելի էր ամուր հաստատուիլ Եփրատի ափերուն, Նայիրի երկրի մէջ: Անհրաժեշտ էր ամուր յենարան ունենալ Միջագետքի մէջ: Ասորեստանը մեծ հեզինակութիւն ձեռք կը բերէր, եթէ Բաբելոնը պահէր իր գերիշխանութեան տակ, իսկ վերջինս որպէս հնագոյն քաղաքակրթութեան օճախ, Ասուրներուն կը համարէր բարբարոս, կ'արհամարհէր զայն և չէր հաշտուեր անոր տիրապետութեան հետ: Պայքարը նաեւ դինաստիական էր. կասեռները թէեւ թուլացան, սակայն կառչած էին իշխանութեան և սեմականացեր էին: Այս իշխող տան անկումովն է որ 1186 թուին, Բաբելոնի պետութիւնը կը քայքայուի: Կ'երեւնան մրցորդ ուժեր, որոնցմէ ամենէն զօրաւորը Ասորեստանն է: Բայց անոր տիրապետութիւնը երբեք փնայուն չեղաւ Բաբելոնի վրայ: Վերջինս երբեք չհաշտուեցաւ տիրողի հետ: Տիգլաթ-Բալասար I-ի մահէն յետոյ Բաբելոնը նորէն ապստամբեցաւ և մաքրեց երկիրը թշնամիներէն: Այս յաջողութիւնը ունեցաւ մեծ նշանակութիւն Ասորեստանի ճակատագրին համար: Բոլոր հպատակ, տիրակալուած ժողովուրդները ապստամբեցան յատկապէս արեւմուտքի մէջ՝ Եփրատեան գիծի շուրջը, Արա-

մէացիք, Փիւնիկէցիք, հաթական փոքր իշխանութիւնները: Ասորեստանի ներքին կեանքն ալ խաղաղ չէր. կռիւ իշխանութեան, գահի, դիրքի համար: Ասորեստանը կորսընցուց զբաւած երկիրները, փլուզումի ենթարկուեցաւ անոր մեծ կայսրութիւնը՝ Միջերկրականէն Չագրօշ: Ամեն բան պէտք էր նորէն սկսիլ:

Երկու դար ինքն իր մէջ ամփոփուելէ ետք՝ Ասորեստան վերսկսաւ իր նուաճումները: Բայց այս երկու դարը ինչպէս ըսինք, արեւելքի փոքր ժողովուրդներու յառաջացման, մեծացման և ոգեկան ուժերու ճոխացման շրջանն է, ինչպէս և քաղաքական անկախացման: Փիւնիկէն, Իսրայէլը, արամէական քաղաքները կը հզօրանան, կ'անկախանան. Իսրայէլի ցեղերը կը բռնեն ընդհանուր շահերով, ընդհանուր ծագումով և կրօնով միացումի և արգ դառնալու ուղին: Հաթական փոքր իշխանութիւնները՝ Եփրատի շուրջը՝ կը շարունակեն ագրիլ հաթական հին պետութեան աւանդութիւններով, հիւսիս Նայիրեան ցեղերը աստիճանաբար կը ձեւաւորուին իբրև Ուրարտուի պետութիւն: Եւ այս բոլորը տեղի կ'ունենար, որովհետև փոքր աղգերու յառաջդիմութեան առջեւ որեւէ արգելք չկար:

ՍԱՐՄԱՆԱՍԱՐ II.— Բայց IX-րդ դարէն ամեն ինչ կը փոխուի: Ասորեստանի ռազմական գործողութիւնները, նուաճումները նոր թափ կ'ըստանան Սալմանասար II -րդի օրով (859—824): Ան երեսուն և հինգ տարուան մէջ երեսուն երկու արշաւանքներ կ'ընէ. կը կռուի բոլոր ճակատներու վրայ, դէմ կը դնէ արամէական իշխաններու գինակցութեան, որուն մաս կը կազմէին Համայի, Դամասկոսի և Իսրայէլի թագաւորները և Փիւնիկեան քանի մը քաղաքներ: Դաշնակիցներու բանակը կը հանդիպի ասորականին Որոնդէսի ափին՝ Կարկարի առաջ: Բայց պատերազմի ելքը կը մնայ անորոշ: Ուր զէնքը ձախողեց, դիւանագիտութիւնը յաղթանակեց: Սալմանասարը բանակցութեամբ բաժնեց զինակիցները և առանձին առանձին

Չարդեց զանոնք: Իսրայէլի թագաւորը Յեսուն ընդունեց Ասորեստանի հովանաւորութիւնը: Արամէական իշխանները դարձան հարկատու, փիւնիկեան քաղաքները պարտաւորուեցան տուրք վճարել: Կարաւանային առևտուրի ճամբաները Ասորեստանի հսկողութեան տակ ինկան. ան պահակ նշանակեց այդ ճամբաներու հանգոյցներուն վրայ և ջանաց ապահովել առևտուրը, որմէ մեծ հասոյթ կ'ըստանար:

IX-րդ դարու վերջին Ասորեստանի վերստեղծած մեծ կայսրութիւնը կարճ ժամանակով կը մատնուի անիշխանութեան: Բայց ութերորդ դարու կէսերէն ան կը փորձէ լայն չափով և աւելի մեծ յաջողութեամբ աշխարհակալութիւն ընել: Շարք մը տաղանդաւոր թագաւորներ՝ դաժան կռիւններու մէջ կը վերանուաճեն Բաբելոնը, Սիւրիան, Փիւնիկէն, Պաղեստինը, Եգիպտոսը: Անոնք կը մխրճուին Իրանի բարձրաւանդակը, կը յաղթահարեն իրենց մրցակից ուժը՝ Ուրարտուն:

Տիգլաթ-Բալասար III 746—727 կը վերագրուէ Բաբելոնը, կը հասնի Պարսից ծոց, իրեն կը կոչէ «Թագաւոր Ակադի եւ Սումերի, եւ աւխարհի չորս կողմերու քաղաւոր»: Ան կը վերահաստատէ Ասորեստանի գերիշխանութիւնը Եփրատիկան քաղաքներու և իշխաններու վրայ, 732 թուին, կը գրուէ Դամասկոսը, վերջ կուտայ արամէական ամենամեծ քաղաքի անկախութեան: Ասկէ կ'ըսկսի հպատակ ժողովուրդները սեղահանելու իր քաղաքականութիւնը — արամէական ցեղերը կը տեղաւորէ Չագրոշեան լեռներու լանջերը, Նայիրի երկրին մէջ և այդ շրջանի բնակիչներն ալ կը տեղափոխէ Սիւրիա. գրաւած երկիրներու մէջ որոշ կարգ ու կանոն կը հաստատէ: Նուաճուած վայրերը կը կառավարէ ոչ թէ տեղական իշխաններու ձեռքով, այլ կեդրոնէն ուզարկուած յատուկ կառավարիչներով: Իր մահուան ատեն՝ 727 թուին արդէն կազմաւորուած էր ընդարձակ ասորեստանեան կայսրութիւն մը, որու սահմանները կը հասնէին՝ Պարսից ծոցէն մինչեւ Նայիրի երկիրը, Միջերկրականէն, Կիլիկիայէն մինչեւ Իրանի բարձրաւանդակը:

Հին քաղաքակիրթ երկիրներէն միայն Եգիպտոսն էր և Փոքր Ասիան, որ շուրս կը մնային այս սահմաններէն: Տիգրիս-Քալասար միացուց սեմական աշխարհը մէկ իշխանութեան տակ:

ՍԱՐԳՈՆՆԵԱՆՆԵՐ. — Արեւելքի նուաճումը լրացաւ Սարգոնեան հարստութեան ժամանակ: Անոր հիմնադիրն էր Սարգոն II (727—705): Անոր դէմ սիւրիական իշխանները մեծ զինակցութիւն մը կազմեցին, որուն կ'օգնէր Եգիպտոսի փարաօնը՝ Շարուկին: 722 թուին Սարգոնը Որոնդէսի ափին՝ Կարկարի երկրորդ ճակատամարտին մէջ ջարդեց զինակիցները, արշաւեց հարաւ և նոյն թիւին գրաւեց Իսրայէլի մայրաքաղաքը՝ Սամարան: Վերջ տուաւ Իսրայէլի պետութեան, և բնակիչները գերի տարաւ: Հիւսիսի մէջ՝ ան յաղթեց Ուրարտուին, որու թագաւորը Ռուսան իր թագաւորութեան անկումը տեսնալով անձնասպան եղաւ 714 թուին. Բաբելոնը նորէն վերագրաւեց: Շատ տեղերու մէջ ան ասուր գաղթականներ հաստատեց, իբր իր իշխանութեան յենարաններ: Այս գրաւումներէն յետոյ հերթը հասաւ Եգիպտոսին: Սարգոն II անոր բանակը ջարդեց Ռաֆքայի մօտերը, բայց Եգիպտոսը չգրաւեց: Իր սկսած գործը շարունակեց որդին՝ Սենեխերիսը (705—681): Ան Նինուէն դարձուց մայրաքաղաք և հոն կառուցեց մեծ պալատ մը: Մեծ շինարարութեան համար ան ունէր նիւթական բոլոր միջոցները. ամբողջ կայսրութիւնը կը մատակարարէր շինանիւթեր՝ փայտ, մետաղներ, բանուորներ, ճարտարապետներ: 690 թիւին փորձեց մանալ Եգիպտոս, բայց չյաջողեցաւ: Անոր բանակին մէջ տարածուեցաւ ժանտախտը, բանակի մեծ մասը ոչնչացաւ. Եսայի մարդարէն կ'ըսէր, որ Ենօվան է պատժեր Ասաւրները իրենց անարգար գործերուն համար, իսկ Եգիպտոսիք կը պնդէին, թէ Պտահ աստուածն է, որ ազատեց Եգիպտոսը՝ թշնամիին բանակները ջնջելով: Սենեքերիս վերագրաւեց Բաբելոնը, որ տեւական ապստամբութեան մէջ էր: Ան քանդեց սրբազան քաղաքը, պարիսպներն աւերեց: Իր որդին Ասուրհասոնը (681—669),

որ Բարսեղունիի մը զաւակն էր, վերակառուցեց զայն, բայց աւերեց Սիրտոնը 678 թիւին, իսկ 676-ին արշաւեց Եգիպտոս: Արաբները օգնեցին իրեն, ուղտերով փոխադրեցին անապատի վրայով բանակը և կենսամթերքը: Առանց մեծ կռիւներու Ասուրհատոնը մտաւ Լեւոնիս և տէր դարձաւ Տելդային: Ասորեստանեան բանակ մը մնաց Եգիպտոսի մէջ կարգը պահելու. ան դարձաւ փոխարքայութիւն: Ասուրբանիպալը (669—629) գրաւեց Թիբէն, փարաւոնը փախաւ Հապէշիստան: Թէրէի բնակչութիւնը փոխադրուեցաւ Միջագետք: Երկու օրէիսկներ բերին Նինուէ:

ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԹՈՒԼՆՈՒԸ.— Տնտեսկան այս կռիւներու մէջ սպառուեցաւ Ասորեստանի ռազմական ոյժը: Ասուրները թիւով քիչ էին հսկայ կայսրութեան բնակչութեան մէջ: Տնտեսկան կռիւներու մէջ զոհուեցաւ անոնց կենսունակ տարրը: Իրրե փոքրաթիւ ղեկավար տարր՝ Ասուրները հարկահարուած էին միշտ զէնքը ձեռին պահել զինուած ըլլալ հպատակ ժողովուրդները, ցեղերը իրենց իշխանութեան տակ պահել կարենալու համար: Սարգոնի ժամանակ դեռ զօրքի և վարչութեան մէջ իշխողը ասուրական տարրն էր բայց հետագային, եթերոք դարուն Ասորեստանի քաղաքական ղեկավարները ստիպուած էին վարձկան մեծ բանակ պահել, վարչութեան մէջ օտարներուն տեղ տալ, թէեւ միշտ իրենց հսկողութեան տակ: Միայն հպատակներէն կազմուած բանակը, անոնցմէ դուրս եկած պաշտօնէութիւնը միշտ ալ մնաց տելի կամ նուազ չափով կասկածելի և քաղաքականօրէն անվստահելի:

Կռիւներու մէջ մաշուեցաւ ոչ միայն ասուրական բանակը, այլև զոհ գնաց ասուրական երկրագործութիւնը: Երկրի մէջ աշխատող ձեռք չմնաց. ազատ Ասուրներու թիւը իջաւ նուազագոյնի. երէկուայ հովիւն ու գիւղացին կտրուեցան իրենց խաղաղ աշխատանքէն, կորսնցուցին աշխատելու հակումը, մտան զօրքի շարքը հեռացան հայրենի հողէն, վարժուեցան աւարի, աւերի և արկածախընդիր, անաշխատ կեանքի: Անոնց տեղը բռնեցին նուաճուած

բոլոր երկիրներէն բերուած գերիները, որոնք իբրև ստրուկ կ'աշխատէին քաղաքներու և գիւղերու մէջ: Ստրուկներ ձեռք բերելու համար էր մասամբ, որ պատերազմներ կ'ընէին: Այսպէսով գերիները փոխարինեցին ազատ Ասուրները:

Միւս կողմէն Ասորեստանի ռազմական ոյժի թուլնալը յոյս ներշնչեց հպատակ ժողովուրդներուն ազատագրական փորձեր ընելու. այս շարժումները Ասորեստանը կը ճնշէր դատանութեամբ՝ չխնայելով ոչ մէկին: Միաժամանակ միջազգային կացութիւնն ալ աննպաստ դասաւորում կ'ըստանար Ասորեստանի համար: Անոր սահմաններու վրայ կ'երեւային հնդեւրոպական նոր ժողովուրդներ՝ Բիմրները, Սկիւթացիք. կը կազմակերպուէին Մարերը: Բաբելոնը բանակցութիւններ կը վարէր բոլոր դժգոհ տարրերու հետ, ընդհանուր ճակատ ստեղծելու Ասորեստանի դէմ: Ուրարտու և Մարաստան ասպատակելէն ետքը Սկիւթացիք մտան Ասորեստան, գրաւեցին Կալախը, Ասուրը և աւերեցին բուն ասուրական նահանգները: Այս հարուածներէն ոչ միայն Ասորեստանը թուլցաւ, այլ և հպատակ ժողովուրդները նորէն յոյս ունեցան, թէ կարելի է թօթափել Ասորեստանի բռնակալութիւնը և ազատագրուիլ: Երկու ուժեր անցան այդ գործի գլուխը VII-րդ դարու վերջերուն: Մէկը Մարերու թագաւոր Կիաքսարը, միւսը Բաբելոնի իշխան Նաբուգոդոնոսորը: Ասոնց ուժերը երեք տարի պաշարեցին Նինուէն և միայն 612 թիւին գրաւեցին Ասորեստանի մայրաքաղաքը: Դաշնակիցները աւերեցին և կործանեցին թէ Նինուէն և թէ միւս քաղաքները: Մէկ հարուածով Ասորեստանի կայսրութիւնը դադրեցաւ գոյութիւն ունենալէ, մեծ ուրախութիւն և հրճուանք պատճառելով արեւելեան բոլոր ազգերուն:

ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ԿԱՌՈՒՑՈՂՆԵՐԸ.— Այս հսկայ կայսրութիւնը, որ իր մէջ կը պարփակէր Մերձաւոր Արեւելքի անապատային գոտին ամբողջութեամբ և լեռնային գոտիի ալ մէկ մասը՝ կառուցուած էր զէնքով, ռազմի յաջողու-

Թեամբ: Զէնքի յաջողութիւնն էր, որ միացուցեր էր իրարու անծանօթ, իրարու հակամերժ տարրեր, ժողովուրդներ. նոյն զէնքի սարսափն էր և համատարած հանրեկուժը, որ այդ բոլորը պահեց Ասորեստանի գերիշխանութեան տակ երկար ժամանակ: Զէնքի և բանակի յաղթանակներուն պակաս չնպաստեցին շարք մը տաղանդաւոր թագաւորներ, որոնք միաժամանակ առաջնակարգ զօրավարներ էին: Տիգլաթ-Նինսարը, Ասուր-Նանիրսը, Սալմանասարը, Սարգոնը և Ասուր-Հադոնք անձամբ կ'առաջնորդէին իրենց բանակները: Արեւելեան ոչ մէկ ժողովուրդ պատերազմը չդարձուց արհեստ և գլխաւոր աշխատանք բացի Ասորեստանէն: Ան մեծցաւ պատերազմներու մէջ, մեծ ճիգ ըրաւ պահելու մինչեւ վերջը իր ռազմունակութիւնը, որմէ կախուած էր իր գոյութիւնը: Ան առանց պատերազմի, խաղաղութեան մէջ ապրիլ չէր կրնար՝ որովհետեւ մեծ և բազմալզեան իր կայսրութեան մէջ Ասուր ցեղը քիչ էր քանակով և անոր որակն ալ կ'երեւար միայն ռազմի գործերու մէջ:

ՈւՋՄԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ. — Զուտ ռազմական գործերու մէջ Ասորեստանը քանի մը նորութիւններ մտցուց, ինչ որ անոր առաջնութիւն կուտար արեւելքի մէջ: Ասուր զինուորը լեռնաբնակ էր, ուժեղ, ջլուտ: Պատերազմը դարձաւ անոր համար արհեստ. անկէ կը կազմուէր թեթեւ և ծանր զինուած հետեւագործ: Ութերորդ դարէն Ասորեստանի ընտանիք ունէր հեծելագորային բաժին. ապա առանց վրայ աւելցաւ ռազմական քերու բաժինը: Հաթերը, Բաբելոնը չունէին կանանաւոր և մեծ հեծելագործ, թէպէտ լաւ ձիավարներ էին: Ռազմական քեր ունէին Եգիպտոսիք, Հաթերը, բայց միայն Ասորեստանի մէջ էր, որ այդ զէնքը մաս կազմեց հետեւակ և հեծեալ գործող բանակին. անոր ռազմի դերն ալ սերտորէն կը կապուէր այդ զօրաբաժիններու հետ: Եւ վերջապէս Ասորեստանը ունէր բանակի ճարտարապետական բաժինը, որ պիտի դիւրացնէր կռուող զօրաբանակներու գործը ճանապարհներ, կամուրջներ իչ-

նելով, բերդեր, ամրոցներ կառուցանելով կամ թշնամիին ձեռքին եղածը քանդելով: Ճարտարապետական բաժինը բանակի մէջ առաջին անգամ Ասորեստանն է, որ մտցուց: Անոր ռազմական ուժը այնպէս լաւ էր կազմակերպուած, մասերը այնքան ներդաշնակօրէն կը լրացնէին իրար, որ կը յիշեցնէր շատ աւելի ուշ ռազմապէս կազմակերպուած իշխանութիւն մը՝ Հոռմը: Իզուր չէ, որ Ասորեստանը կոչուեցաւ «Արևելքի Հոռմ»: Այս երկուքը իրարու նման են թէ զօրքերու կազմով, թէ նուաճումի ոգիով, թէ կայսրութեան ընդարձակութեամբ և թէ վարած քաղաքակաւ նութեամբ՝ նուաճուած ժողովուրդներու հանդէպ:

Բանակը կազմուած էր կանոնաւոր զօրարաժիններէ, որոնց մէջ կը մտնէին հետեւակ, հեծեալ և ռազմակառքերու բաժիններ: Ասոնք զինուած էին նիզակներով, նետ ու աղեղով, կացիններով, սուրերով և վահաններով: Զինուորները գլուխնին ու դէմքերնին կը ծածկէին սաղաւարդով իսկ ամբողջ մարմինը զրահով. այնպէս որ թշնամիին գէնքերը հազուադէպ դէպքերուն միայն կրնար անոնց մնաս պատճառել: Պեղումները երեւան են բերքը Ասուր թագաւորներու պալատներու մէջ գէնքի և ռազմամթերքի մեծ պահեստներ, ինչպէս և պղինձ, անագապղինձ և երկաթ: Պալատին կից և զինուորական կայաններու մօտ կը կառուցէին արհեստանոցներ, զինագործարաններ, հնոցներ՝ մետաղներ հալելու, ձուլելու համար: Զինուորական այս նպատակներու համար Ասորեստանի թագաւորները նուաճուած ազգերու մէջէն կ'ընտրէին լաւագոյն արհեստաւոր մետաղագործները, դարբինները և զինագործները և գործի կը լծէին: Անոնք պետական սարուկներ էին:

ՊԱՇԱՐՈՂԱԿԱՆ ԶԷՆՔԵՐ. — Պատերազմական գործերու մէջ Ասորեստանցիք մտցուցին պաշարողական նոր միջոցներ: Երկրորդ հազարամեակին պարիսպներ քանդելը և զրաւումը գրեթէ անկարելի կը դառնար: Եթէ մէկ գրոհով չկրնային գրաւել, ապա երկարատեւ պաշարումը և սովը կը մնար միակ զէնքը վերջնական յաղթա-

նակի: Ասորեստանեան բանակի ճարտարապետական գունդը անոր համար էր, որ կարելի դարձնէր պաշարուած քաղաքներու գրաւելը: Ասորեստանի ճարտարապետները կառուցեր էին տեսակ մը անիւաւոր զրահապատ կառքեր, որոնք հրելով կը մօտեցնէին պարիսպներուն: Անոնց մէջ թագնուած էին զինուորներ: Զրահապատ կառքերն ունէին դիտարաններ, ուրկէ կը հետազօտէին թշնամիին շարժումները: Պարիսպներուն մօտենալով անոնք յատուկ մեքենաներով կ'ըսկսէին քանդել պարիսպները, անցքեր բանալ քարեր նետել պարիսպներէն ներս: Ասորեստանի ռազմավարութեան մէջ նկատելի է շարժման արագութիւն և ռազմական գործողութեանց կանոնաւոր ծրագիր:

ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ՆՈՒՎՃՈՒԱԾ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՆԴԵՊ.—

Բայց հակառակ այս բոլորին, այս ռազմական կատարելութեան, բանակի ազգային ըլլալուն, տաղանդաւոր զօրավար-թագաւորներուն՝ Ասորեստանի նուաճումները մնայուն հետեւանք չունեցան. չստեղծուեցաւ կայսրութիւն մը, որու գոյութիւնը երկար տեւէր և որն ապահովէր իր մէջ ապրող բոլոր ժողովուրդներու զարգացումը և խաղաղութիւնը: Ասուր կայսրութիւնը նոր կը վերջացնէր իր կառուցումը, երբ ինկաւ և փլուզումի ենթարկուեցաւ: Մնչաւ վաղանցուկ կեանք ունեցաւ: Ասորեստան զէնքի ուժով ստեղծեց իր կայսրութիւնը. բայց ընդունակ չեղաւ լաւագոյն միջոցներ մշակելու դայն տեւական դարձնելու համար: Ատոր պատճառը հպատակ ժողովուրդներու հանադէպ իր որդեգրած քաղաքականութիւնն էր՝ հալածիչ, սպանիչ քաղաքականութիւնը: Ասորեստանի թագաւորները մրցակիցներ չունէին աւերումի աւարումի, բնաջնջումի և գերեվարութեան մէջ: Զինուորական ահաբեկումները, զանգուածային ջարդը դարձաւ պետական քաղաքականութիւն: Այն ինչ որ արեւելքի միւս նուաճող պետութիւնները կ'ընէին հազուադիւրս պարագաներուն մէջ, Ասորեստանի զինուորական և վարիչ դասի համար խժդուութիւնները դարձան սովորական երեւոյթ: Թագաւորները՝

տաղտկալի միօրինակութեամբ արձանագրութեանց մէջ կը նկարագրեն իրենց կատարած անարեկուսներու, զանգուածային կոտորածներու և տեղահանութեանց մանրամասնութիւնները: Ծեծը, թալանը, քաղաքներ և գիւղեր հրդեհելը, պարտուածներու, գերիներու կաշին քերթելը, ողջ ողջ ցիցերու վրայ բարձրացնելը, քիթը, ձեռքը, գլուխը կրտսրելը, աչքեր փոթելը սովորական միջոցներ էին ասորեստանեան զօրքի, զօրավարներու, թագաւորներու համար: Այդ բոլորը անոնք առանձին հպարտութեամբ կը պատմեն իրենց տարեգրութիւններու մէջ, բան մը, որ կը ցուցահանէ այդ ժամանակներու բարոյական ըմբռնումներն ու բարքերը: Այս միջոցառումներով անոնք կ'ահաբեկէին հըպատակ ժողովուրդները, որոնք այլևս երկար ժամանակ ապստամբութիւններու մասին մտածելու անգամ անընդունակ կը դառնային: Այսուհանդերձ երբեմն այլևայլ կողմերէ բողոքի ձայներ կը լսուէին, քաղաքներ, ցեղեր ու ժողովուրդներ կ'ապստամբէին: Նման պարագաներուն՝ Ասորեստանի ղեկավարութիւնը կը դիմէր ամենէն դաժան միջոցներու. ամբողջ քաղաքներ, ժողովուրդներ տեղահան կ'ընէր և ուրիշ վայրերու մէջ կը հաստատէր: Այս միջոցառումը քաղաքական ապահովութեան համար էր: Այս բանը անոր միաժամանակ կը մատակարարէ բանուորական որակուած աշխատանք. ստրուկներ իր երկրի վերակառուցման, շինարարութեան համար: Ամենէն որակուած, մասնագէտ ուժերը կը փոխադրէր Ասորեստան, իսկ մնացածները կը ցրուէր կայսրութեան բազմազան մասերու մէջ: Սիւրիական քաղաքներու բնակիչները փոխադրեց Ասորեստան, անոնց տեղը բերելով Ուրարտացիներ, Մարեր տասնեակ հազարներով: 722 թիւին Սարգոնը՝ Սամարան գրաւելէն ետքը 25,000 շրեաներ փոխադրեց Խարուր գետի ափերը և Մարաստան: Բաբելոնի բազմաթիւ ապստամբութիւնները միշտ կը վերջանային բնակչութեան մէկ մասի տեղահանումով՝ 200,000 Բարելացիներ տարուեցան բնակելու Միջերկրականի եզերքները՝ Սիդոն և Փիւնիկեան ու-

րիչ քաղաքներ, և այդ տեղերէն ալ անոնց մէկ մասը գաղթեց Ափրիկէ: Դամասկոսի Արամէացիք հարկադրուեցան լքելու իրենց ճօխ և հարուստ հայրենիքը՝ Տաւրոսի շուրջ բնակելու համար: Տարագրութեան մէջ ժողովուրդի մեծ մասը կը հիւժուէր, կը մեռնէր. անօթութիւնը, հիււանդութիւնները կը կատարէին իրենց աւերը: Վերապրողները նոր վայրերու մէջ կը դառնային անվնաս, պայքարը շարունակելու մասին չէին մտածեր, ոչ ալ հնարաւորութիւն ունէին պայքարելու: Այս քանդիչ, քայքայիչ միջոցներով Ասորեստանի ղեկավարութիւնը նպաստեց ժողովուրդներու ձուլման, իրարախառնումին: Բայց այս ձեռով նուաճուած երկիրներուն ոչ մէկը կապուեցաւ տիրողին հետ: Կը հնազանդէին միայն անոր համար, որ ահաբեկուած էին: Եւ երբ երկու ժողովուրդներ՝ մէկը նուաճուածներէն ամենէն քաղաքակիրթը՝ Բաբելացիք, միւսը՝ ամենէն թարմն ու ռազմունակը՝ Մարերը, գրաւեցին և կործանեցին Նինուէն, ամբողջ արեւելքը ազատ շունչ քաշեց և ծանր բեռէ մը ազատուեցաւ: Հրէից մարգարէ՝ Նաուամը այս ընդհանուր տրամադրութեան արտայայտիչն էր, երբ կը գրէր. «Վայ, արիւնաբոլ քաղաքին, վայ խաբէութեան քաղուհուն, որ լիքն է բռնութեամբ: Ահա կը լսուի մտրակի շառաշը, անիւներու դզդոցը, ձիերու սմբակներու ձայնը եւ ռազմակառէրու շաշիւնը: Մահացածներու քիւն ամսահաման է, անոնք կ'իյնան իրենց մեռելներու վրայ: Նիւուէն անիծուած է եւ ո՛վ է, որ կ'արտասուէ. ո՛վ որ կը լսէ այդ մասիք միայն կը ծափահարէ, կ'ուրախանայ, որովհետեւ ով է ան որուն չէ հաստը անոր կեղծիքը եւ ճարտարը»:

ԲԱԲԵԼՈՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆԸ

ՄԻՋԱԶԳՒԱՅԻՆ ԳԱՅՈՒԹԻՒՆԸ.— 612 թիւի Նինուէի անկումէն ետքը Կիւքսարը և Նաբու-Պալասարը Ասորեստանի կայսրութիւնը բաժնեցին իրենց մէջ: Մարերուն ինկաւ հայկական բարձրաւանդակը, ամբողջ Իրանը, էլլամը: Հայկական աշխարհէն, ուր ուրարտական պետութիւնը կ'ապրէր իր վերջին օրերը, Մարերն անցան Փաքր Ասիա, ուր ստեղծուեր էր Լիտիական պետութիւնը: Երկար կռիւներէն ետքը Լիդիացիք և Մարերը 585 թ. հաշտութեան դաշինք կնքեցին՝ Լեւնային գօտին բաժնելով իրենց մէջ: Նաբու-Պալասարը գրաւեց Ասորեստանը, արամէական կամ սիւրիական աշխարհը, Պաղեստինը. ան տէր դարձաւ Արգաււանդ Կիսալուսնի երկու թեւերուն և ի մի հաւաքեց սեւմական ժողովուրդները: Անոր իշխանութենէն դուրս էին միայն Փիւնիկեան քանի մը քաղաքներ: Եգիպտոսն ալ ազատագրուեցաւ Ասորեստանի դաժան վարչութենէն և սկսաւ նոր, անկախ շրջան մը: Վեցերորդ դարու սկզբին Մերձաւոր Արեւելքի մէջ ստեղծուեցաւ տեսակ մը ուժերու հաւասարակշռութիւն՝ Եգիպտոսի, Բաբելոնի, Մարաստանի և Լիդիոյ մէջ: Այս ժամանակ տեղի ունեցաւ Բաբելոնի քաղաքակրթական նոր վերածնութիւնը, զուգահեռ եգիպտական վերածնութեան, որ կը կատարուէր Սալտեան հարստութեան օրով: Բայց արեւելքի մէջ ստեղծուած ուժերու այս հաւասարակշռութիւնը երկար չտեւեց. եղած կայսրութենէն և քժուած սահմաններէն ոչ մէկը գոհ էր: Եգիպտոսը կ'ուզէր տէր դառնալ Կիսալուսնի արեւմտեան

թեւին, Միջերկրականի Պաղեստին-Փիւնիկեան ակերուհւան կ'ուզէր վերակառուցել XVIII դդ հարստութեան եգիպտական կայսրութիւնը: 608 թիւին Նեխատ, փարաւոնը փորձ ըրաւ այդ ուղղութեամբ: Բայց Նաբու-Պալասարը Ասորեստանը չէր կործաներ Եգիպտոսի համար: Ան իր հերթին կ'երազէր Եգիպտոսին տէր դառնալ: Վճռական դէպքեր տեղի ունեցան 605 թիւին: Եգիպտական բանակները գրաւեցին Պաղեստինը, Սիւրիան և հասան Եփրատ և կը ջանային գրաւել Կարկէմիշը, որ միջագոյն անտուրի կարեւոր կեդրոններէն էր և հաթական քաղաքակրթութեան օճախը:

ՄՐՅՈՒԹԻՒՆ ՊԱՂԵՍՏԻՆԻ ՀԱՄԱՐ.— Բայց կարկէմիշի ճակատամարտին մէջ Եգիպտացիք պարտուեցան և պարպեցին Սիւրիան ու Պաղեստինը: Նաբու-Պալասարը, սակայն չկրցաւ արշաւել Եգիպտոս, ինչպէս նախորդ ծրագրեր էր: Ապրիլէ փարաւոնը հրաժարեցաւ ասիական հողերէն, բայց չէր ուզեր, որ Բաբելոնը մնայ Պաղեստինի մէջ: Երկու մեծ պետութիւններու մէջ ինկած էր Յուդայի թագաւորութիւնը, որ դարձեր էր միջագոյն դաւադրութեանց կեդրոն: Անոր թագաւորները երերուն քաղաքականութիւն կը վարէին. անոնց պալատին մէջ կար երկու հոսանք՝ կողմնակից Եգիպտական և Բաբելոնեան դիմաչըրջման: Եգիպտոսը Յուդային կ'օգնէր զէնքով, նիւթապէս, որպէսզի դուրս գայ Բաբելոնի դէմ: Այս դաւադրութիւններուն վերջ դնելու համար էր որ Նաբուգոդոնոսոր II-ը արշաւեց Պաղեստին՝ Յուդայի թագաւորութեան և Փիւնիկեան Տիրոս քաղաքի վրայ: Վերջինս շեշտուած եգիպտական դիմաչըրջում ունէր: 597 թիւին ան գրաւեց Երուսաղէմը պատժեց հրեայ ղեկավարութիւնը, բայց պահեց Յուդայի պետութիւնը, որ պէտք է ենթարկուէր Բաբելոնի հովանաւորութեան: Պէտք է խզէր իր կապերը Եգիպտոսի հետ: Բայց այս պայմանները չգործադրուեցան. Յուդայի պետութիւնը իր առաջին և մեծ թշնամին կը համարէր Բաբելոնը: Հրեայ տարագիրները, որ հաստատ-

ուեր էին Եգիպտոսի մէջ՝ անգործ չէին. անոնք Ապրիէ փարաւոնի նիւթական և զինական օժանդակութեամբ շարունակ դաւադրութիւններ կը կազմէին Յուդայի պետութեան մէջ ընդդէմ Բաբելոնի և ոտքի կը հանէին դժգոհները: Յուդայի թագաւորը Չեղեկեան երեք տարի յետոյ եգիպտական դիմաշրջում ունեցող հասանքի դրդումով փորձեց դուրս գալ Բաբելոնի հովանիէն, բայց 586 թիւին Նաբուգոդոնոսորը նորէն գրաւեց Երուսաղէմը և գործադրելով Ասորեստանի պատժիչ քաղաքականութիւնը, քանդեց քաղաքը, աւերեց տաճարը և Հրէաներն ալ գերի տարաւ Միջագետք: Այս՝ Բաբելոնի նշանաւոր գերութիւնն է: Հրէաները մնացին գերութեան մէջ յիսուն տարի. անոնց ազատագրեց և հայրենիք վերադարձուց Կիւրոսը 536 թ.

Երուսաղէմէն ետքը հերթը հասաւ Տիրոսին: Այդ քաղաքը տասներեք տարի պաշարուած մնաց, բայց ծովէն հաղորդակցութեան մէջ էր Եգիպտոսի հետ, ուրկէ կ'ըստանար կենսամթերք և զէնք: Երկար պաշարումի մէջ անոր կ'օգնէին նաև իր գաղութները և կիպրոսը: Ի վերջոյ Տիրոսը համաձայնութեան եկաւ Բաբելոնի հետ, ընդունեց վերջինիս հովանին և տարեկան տուրք տալ:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹԻՒՆ.— Հրէական հարցի լուծումէն ետք, որ Բաբելոնի ղեկավարութեան առաջ դրուած ամենէն հրատապ հարցն էր, երկիրը կը խաղաղուէր, Իսկ Եգիպտոսըն ալ չի փորձեր միջամուխ ըլլալու Պաղեստին-Սիւրիական գործերուն: Բաբելոնը կ'ապրի խաղաղ շրջան մը. այս խաղաղութեան մէջ Նաբուգոդոնոսոր կ'ըզբաղուի երկրի վերաշինութեան և շինարարական գործերով: Իր մեծ պետութիւնը կը բաժնէ նահանգներու, որոնց վրայ կը նշանակէ Բաբելացի կառավարիչներ: Ամեն նահանգ հարկային միաւորի մը կը վերածուի, որ պէտք է հարկ վճարէր և զօրք տար: Նաբուգոդոնոսորը միջամուխ չըլլար հպատակ զգբրու ներքին-կրօնական գործերուն: Տեղական իշխաններուն կ'ենթարկէ իր հսկողութեան. ամենէն վտանգուած վայրերու մէջ զօրք կը պահէ: Ապա իր ամ-

քողջ Լանքը կը նսւիրէ Բարելոնը գեղեցկացնելու նոր շէնքերով: Մազաքը Ասորեստանի իշխանութեան տակ քանիցս աւերուեր էր: Նաբուգոդոնոսոր Բարելոնը կ'օղակէ կրկնապարիսպներով: Բազմաթիւ դուռեր կը միացնեն քաքաքը արտաքին աշխարհին:

Այդ դուռներէն մէկը կոչուեցաւ Իեսաբ աւսուծուիու անունով: Թագաւորը սալայատակեց դէպի մեծ տաճարը տանող պողոտան, որ կը կոչուէր Սբուքեանց պողոտայ: Բարելոնը ամբողջոյթեամբ վերակառուցուեցաւ. նոր հանրային շէնքեր շինուեցան, պալատներ կառուցուեցան, կամուրջներ անցուցին: Այս բոլորի հետեւանքով ան դարձաւ արեւելքի առեւտրի գլխաւոր հանգոյցը: Հոնկէ կ'անցնէին վաճառականական մեծ ուղիները: Իրանի բարձրաւանդակէն, Պարսից ծոցէն քանի մը ճամբաներով արեւելքի արտադրութիւնները կ'ուղղուէին Բարելոն, հոնկէ ալ կը բաժնուէին արեւմուտքի երկիրները՝ Փոքր Ասիա, դէպի Միջերկրական ծով, Եգիպտոս: Հին կարաւանային մեծ քաղաքները՝ Կարկէմիշ, Դամասկոս և Երուսաղէմ նորէն վերջնասացան իրենց դիրքը Միջագագային վաճառականութեան մէջ:

Բարելոնի շինարարութեան մէջ Մարդուկ աւսուծոյ նուիրուած տաճարը առաջնակարգ նշանակութիւն ունէր: Անոր կառուցման վրայ աշխատեցան ժամանակի լաւագոյն ճարտարապետները, իսկ իշխանութիւնն ալ լայնօրէն աջակցեցաւ նիւթապէս: Տաճարի վրայ բարձրացաւ եօթնայարկ աշտարակը, որու եօթներորդ յարկին մէջ դրուեցաւ Մարդուկ աստուծոյ օսկէ արձանը: Հիմա ան կը համարուէր ոչ միայն աստուածներէն մէկը, այլ գերագոյն աստուածը. ան էր միայն ճշմարիտ և ամենակարող ստեղծիչը ամեն կենդանի արարածներու, միւս աստուածները անոր ստորադասներն էին, սուրբերը, որոնք իրենց կարողութիւնն ու գործօն դերը կ'ըստանային Մարդուկէն: Սրբութեանց պողոտան կը միացնէր մայր տաճարը արքայական պալատի հետ: Կրօնական մեծ տօներուն թագա-

ւորը մեծ շքախմբով և յատուկ արարողութեամբ կ'երթար մայր տաճար՝ շրջապատուած Մարդուկ աստուծոյ քուրմերով: Պալատը բազմալարկ էր: Վեր բարձրացող յարկերէն իւրաքանչիւրը քիչ մը աւելի փոքր էր նախորդէն: Առաջինի տանիքի մէկ մասը երկրորդի համար կը ծառայէր որպէս պատշգամ. ան ամբողջութեամբ ծածկուած էր կանաչներով և ծաղիկներով, որոնք ամեն կողմէն կ'իջնէին պատերուն վրայ և կը ծածկէին: Ասոնք են Բաբելոնի համբաւաւոր առկախ պարտէզները:

ԱՆԿՈՒՄՆ.— Բայց վերակառուցման և խաղաղութեան շրջանը երկար չտեւեց: Զագրոշեան լեռներու արեւելեան լանջերուն տեղի ունեցաւ քաղաքական յեղաշրջում մը, որ հիմնովին փոխեց արեւելքի մէջ ստեղծուած ուժերու հաւասարակշռութիւնը: Հոս իշխանութիւնը Մարբէն անցաւ Պարսիկներուն: Կիւրոս գլուխ բերաւ այս խաղաղ յեղաշրջումը և հիմք դրաւ Աքէմէնեան հարստութեան: Տէր դառնալով Փոքր Ասիոյ, իրեն ենթարկելով Իրանի բարձրաւանդակի անիշխանական վաչկատուները, ան 538 թ. եկաւ գրաւելու Բաբելոնը: Նաբոզոդոնոսորի մահէն ետքը՝ Բաբելոնը ինկաւ անիշխանութեան մէջ, որ տեւեց վեց տարի: Երկրի տէրերը՝ պալատական աւագանին՝ Քահ բարձրացուցին Նաբոնիդին (550—538), որ քրմուհիի մը զաւակըն էր: Ան քաղաքական գործերով չէր զբաղուեր, չհասկըցաւ իմաստը արեւելքի լեռնային գօտիի մէջ կատարուող դէպքերու: Անոր սիրած գործը կրօնական հարցերն էին և աստուածներու հետ կապուած ծէսերը: Իշխանութիւնը ան յանձնեց իր որդուն՝ Բաղդասարին: Նաբոնիդը պետութեան բոլոր կողմերէն և մեծ քաղաքներէն Բաբելոն փոխադրեց տեղական և ազգային աստուածներու արձանները. կը մտածէր նոր կարգ հաստատել անոնց մէջ, աստուածներու յարաբերութեան, ազգակցութեան նոր տեսակէտ մշակել: Այս պատճառով ան իր դէմ հանեց թէ քրմական դասը, թէ քաղաքներն ու տաճարները, որոնք զրկուեր էին իրենց հովանաւոր աստուածներէն: Դժգոհութիւնը

այնքան խորն էր, որ երբ կիւրոս մօտեցաւ Բաբելոնին, գրեթէ ոչ ոք մտածեց անոր դիմադրել, փրկել պետութիւնն ու թագաւորը: Բաղդասարը սպաննուեցաւ կռուի դաշտին, Նաբոնիդը գերի բռնուեցաւ և Բաբելոնը յայտարարուեցաւ Պարսից մեծ կայսրութեան նահանգներէն մէկը:

Բաբելոնը սեմականներու կառուցած վերջին պետութիւնն էր: Անոր անկումով սեմական տարրը այլեւս կը դադրէր քաղաքական ազդակ ըլլալէ, առաջնութիւնը կ'անցնէր հնդեւրոպական արիացիներու ձեռքը:


Է. ԳԼՈՒԽ

ԱՍՈՐԱ-ԲԱԲԵԼԱԿԱՆ ՄՇԱԿՈՅՅԸ

ԿՐԹՆԸ.— Հին հասարակութեանց մէջ կրօնի դերը շատ մեծ էր: Ան իր դրոշմը կը դնէր կեանքի բոլոր երեւոյթներու վրայ. արուեստը, մարդկային մտածողութիւնը, գիտութեան սկզբնական ձեւերը, հասարակական և պետական կազմակերպութիւնները խորապէս ներշնչուած էին կրօնական գաղափարներէն և յաճախ ալ կը ծառայէին անոր: Ասորա բաբելական կրօնական գաղափարները մշակուելը էին Սումէրներու և Ակադացիներու շրջանակին մէջ և փոխանցուել անոնց: Սումէրները կառուցել էին առաջին տաճարները: Սումէրական լեզուն միացել էր ասորա-բաբելական միջավայրին մէջ իբրեւ կրօնական արարողութեան, ծիսական լեզու, որ միայն տաճարներու մէջ և քրմական դասի կողմէն գործ կ'ածուէր: Ան սրբազան լեզու էր: Լեզուի հետ անոնք Սումէրներէն ժառանգեցին ծէսերը, պաշտամունքի, գուշակութեան զանազան խօսքեր, բանաձեւեր: Սեմական Ակադացիները մշակել էին կրօնական զգեստաւորման ձեւ մը՝ երկար հագուստներ՝ թէ քուրմերու և թէ աստուածներու համար, զգեստներու հետ երկար ու փառաւոր մօրուք: Ասոնք ալ տեղ գրաւեցին ասորա-բաբելական ծէսերու և արարողութեանց մէջ: Սումէր-ակադացիները առաջինն էին, որ որոշ կարգ մտցուցին աստուածներու բազմազանութեան մէջ, տեղծեցին երրորդութիւններ, կապեցին աստուածները ազգակցական, ընտանեկան կապերով: Աս ալ անցաւ Բաբելոնին և ապա Ասորեստանին: Այսպէս՝ Միջագետքի մէջ կը նկատենք ոչ

LES GRANDS ÉTATS

à l'époque de
l'EMPIRE NÉO-BABYLONIEN
(6^e siècle av. J.-C.)



ՆՈՐ ԲԱԲԵԼՈՆԵԱՆ ՇԻՋԱՆԻ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

միայն ժողովուրդներու և իշխանութեանց յաջորդականութիւն մը, այլ և մշակոյթի: Հինը բան մը կը փոխանցէ նորին, նորը կ'ըստեղծագործէ, կը մշակէ հինի ժառանգութիւնը:

ԱՍՏՈՒԱՄՆԵՐԸ.— Ինչպէս Եգիպտոսի, Եգիպտոս ալ Միջագետքի մէջ սկիզբները աստուածները կը պատկերացնէին կենդանակերպ, այսինքն կը հաւատային, որ գերբնական զօրութիւնը մարմնաւորուեր է այս կամ այն կենդանիի մէջ. այդ պատճառով ալ կենդանին կը դառնար ոգու կրողը, կը պաշտուէր, կը համարուէր սուրբ, մաքուր, իսկ այն սպանելը և անոր միան ուտելը մեղք: Բայց Միջագետքի մէջ կրօնական տոյս գաղափարը աստիճանաբար փոխուեցաւ, աստուածները գարձան մարդակերպ: Միայն թէ գաղափարներու այս հոլովոյթը մէկ անգամէն տեղի չունեցաւ: Յաջորդեց փոխանցման շրջան մը, երբ աստուածը և ոգիները կը պատկերացնէին կէս կենդանիի և կէս մարդու ձևով, կամ կը միացնէին երկու կենդանի տալով անոնց մարդու մարմնի որոշ մասերը: Օրն. կը միացնէին առիւծը արծուի թեւերով և մարդու գլխով: Այսպիսի երեւակայական կենդանիներու պատկերացումը մեծ տեղ ունէր Միջագետքի կրօնի և արուեստի մէջ:

Ասորա-բաբելոնցիները բազմաստուածեան էին, բնութեան բոլոր երեւոյթները աստուածներու կամքին արտայայտութիւնը կը համարուէին, ամբողջ բնութիւնը լեցուած էր անտեսանելի ոգիներով, որոնք չար էին և կամ բարի: Այդ նոյն ոգիներու հզօր ազդեցութիւնը կը նկատուէր անապատի, երկնային մարմիններու, պտղատու ծառերու, արգասաբեր հողի մէջ: Արեւը՝ լոյսի և ջերմութեան աղբիւրն էր, ան կեանք տուող ոգի էր. լուսինը իր լրումով, կիսալուսնով և քառալուսինով կը ներշնչէր մարդուն ժամանակի բաժանման գաղափարը, լուսինը գիշերային ճամբորդութեան պահուն կարաւաններու ամենէն վստահելի ուղեցոյցն էր, աստուծոյ ցոյց կու տային հանգիստի, զարթնումի ժամանակը, կամ գործի և դադարի և կը պայմա-

նաւորեն անոր աշխատանքը երկիրը, որ առատութիւն պարգեւեւոյն էր, կը խնամէր, կը սնուցանէր. ջուրը, որ կեանքի աղբիւրն էր կենդանիներու և բոյսերու ծարաւը յագեցնողը: Այս բոլորը տեղ ունէին Ատորա-Ֆարսի լոյսնի կրօնական ըմբռնութիւններուն մէջ: Այս ոգիները բարի էին, հովանաւոր: Ասոնց կը հակադրուէին անապատի խորշակը, տաք հովերը, գիշատիչ թռչուններու ոգիները, գազանները, սողունները, մէկ խօսքով չարութեան ոգիները, որոնց կարելի էր յաղթել բարի ոգիներու օգնութեամբ:

ԱՍՏՈՒԱԾՆԵՐՈՒ ԿԱՐԿԸ.— Աստուածներու և ոգիներու բազմազանութիւնը կը մացնէր անոնց մէջ խառնաշփոթութիւն: Ինչո՞ւմբը, ժամանակի գիտունները և աստուածային գործերուն լաւածանօթները՝ աստիճանաբար աստուածներու մէջ կարգ մտցուցին, դասաւորեցին, ազգակցութիւն ստեղծեցին, ոմանց բարձրացուցին՝ առաջին աստուծոյ աստիճանին, միւսները ստորադասեցին անոր: Աստուածութիւններու դասաւորման մէջ իբրև օրինակ կը ծառայէր մարդկային հասարակութիւնը, ընտանիքը: Մարդիկ աստուածները կը կերտէին «ըստ իրենց պատկերին»: Մշակուցան երրորդութիւններ: Ասոնց մէջ ալ բարձրացաւ աստուածներէն մէկը, որուն յատկանիշներն աւելի ընդհանուր էին և որու հետ որոշ կապերով շաղկապուած էին երրորդութեան միւս անդամները: Այդ առաջին աստուծուն կը վերագրէին բոլոր մեծ գործերը, արարչագործութիւնը, տիեզերածնութիւնը: Այսպէս՝ աստուածներու շուրջ կ'ըստեղծուէին պատմութիւններ, առասպելներ, կը պատմէին անոնց ծագման, չար ոգիներու դէմ մղած կռիւներու, անոնց գործերու մասին: Առաջ կու գար դիցաբանութիւնը:

ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆՆԵՐ.— Տիեզերքը — ըստ իրենց հաւատքին — ստեղծուեր էր և կը կառավարուէր առաջին երրորդութեան ուժերով և իմաստութեամբ: Տիեզերքի հայրը Անու աստուածն է, էնլիլ՝ երկրի, օդի աստուածը, էան ջուրինը: Էան միաժամանակ գիտութեան, արուեստներու և արհեստներու ստեղծողն է ու հովանաւորը: Ան է,

որ մարդուն սորվեցուց գիտութիւն և արուեստ: Այս եր-
րորդութիւնը պայքարեր է նախնական Քառօրի դէմ, որ
անկարգութեան, խաւարի ոգին էր: Կառուցեր է տիեզեր-
քը, ստեղծեր է մարդը, այսինքն կարգ և կանոն է մըտ-
ցուցեր Քառօրի մէջ: Այս երրորդութեան օգներ է Մար-
դուկը, որ Համուրաբիի ժամանակ յայտարարուեցաւ Բա-
բելոնի առաջին աստուածը: Եւ այն բոլոր տիեզերաշէն
գործերը, որ սկզբնապէս կը կապէին առաջին երրորդու-
թեան անուա՛հ հետ, համարուեցան միայն Մարդուկի ըրա-
ծը: Մարդուկը իր արիւնը կու տայ, որպէսզի էան սաղմ-
նաւորէ, ձեւաւորէ մարդը և կենդանին: Էան Մարդուկի
արիւնով կը շաղախէ հողը, երկիրը և կ'ըսկզբնաւորէ կեն-
դանական և մարդկային հասարակութիւնը: Այսպէս՝ աստ-
րա-բարեկան քրմական ղեկավար շրջանակին մէջ կը
մշակուի այն տեսակէտը, թէ մարդն ունի իր մէջ աստ-
ուածայինը և նիւթականը: Էան կը ներկայացուէր ձուկի
մարմինով և գլուխով, որուն ներքեւ թաղնուած ունէր
մէկ ուրիշ՝ մարդու մարմին ալ: Յերեկը ան կ'ապրէր մարդ-
կանց մէջ, կը սորվեցնէր հող մշակել, զարգացնել ոգեկան
ուժերը, գիշերը կը սուզուէր ծովին մէջ: Ան երկակինցազ
էր: Անոր պաշտամունքը առաջացաւ ծովամերձ շրջանի
բնակչութեանց մէջ, Սումէրներու մօտ, որոնք իրենց ապ-
րուստը կը հայթայթէին ձկնորսութեամբ, վաճառականու-
թեամբ:

Բ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ.— Երկնային լուսատուներէն կազ-
մուած էր երկրորդ երրորդութիւնը: Անոր մէջ լուսնի
աստուածութիւնը առաջին տեղը կը գրաւէր, ան կը կոչուէր
Սին, անոր խորհրդանիշը կիսալուսինն էր: Սինը երկու
զաւակ ունէր՝ Շամաքը որ արեւի աստուածն էր, ան կը
պատկերացնէին սկաւառակի ձեւով, որուն մէջ գծազրուած
էր մէկ մեծ աստղ: Անոր պաշտամունքը տարածուած էր
արեւելքի բոլոր ժողովուրդներուն մէջ, մանաւանդ վաչ-
կատուն սեմականներու: Եգիպտացիները, Հաթերը նոյնպէս
կ'աստուածացնէին արեւը և սկաւառակի ձեւով կը պատկե-

րացնէին: Արեւ աստուածութեան շուրջը կ'ըստեղծուէր զանազան պատմութիւններ, որոնց մէջ կ'երեւար և անոր բարութիւնը և գերբնական ուժը: Ան թեւաւոր արեւ է, արդարութեան սերմանողը: Համուրաբին անկէ հրահանք կ'ըստանար օրէնքներու ժողովածուն կազմելու: Սինի երկրորդ զաւակը՝ Վեցուցն էր, ի՞նչ աստուածուհին. ան բարեգութ է, բարեշնորհ աստուածուհի է, որուն երբեմն կը ներկայացնեն իրրեւ աստղ, բայց աւելի յաճախ կնոջ մարմնով՝ կանգնած երկու առիւծներու վրայ:

ՀԵՐՈՍՆԵՐ ԵՒ ԿԻՍԱՍՏՈՒԱՓՆԵՐ.— Բացի այս գլխաւոր երրորդութիւններէն Սուժէր-Ակադացիները և Ասոր-Բաբելոնը ունէին բազմաթիւ երկրորդական աստուածներ, որոնք ունէ երկնային մարմին մը կամ բնութեան ունէ երեւոյթ մը կը մարմնացնէին: Բացի աստուածներէն Միջագետքի բնակիչները յատուկ պաշտամունք ունէին հերոսներու, առասպելական թագաւորներու, հովանաւոր ոգիներու հանդէպ, որոնց մասին հիւսեր էին պատմութիւններ: Կիսաստուածներու, հերոսներու մասին եղած այս պատմութիւնները ցոյց կուտան թէ ինչ գիծք, նկարագրի ինչ յատկութիւններ սիրելի էին Սուժէրներուն, Բաբելոնացիներուն. ինչի հասնիլ կը ջանային: Այդ հերոսներու, թագաւորներու մէջ յաճախ մարդկայինը չքացած էր, ամեն ինչ անոնց մէջ վիպական բնոյթ էր ստացեր: Այդպիսի կիսաստուած էր Թամուզին: Անոր տարբերակները մենք կը տեսնենք Փիւնիկէցիներու մօտ, ուր կը կոչուէր Ադոնիս, Եգիպտացիներու մօտ, ուր կը կոչուէր Օզիրիս: Թամուզին մեռնող և յարութիւն առնող բնութեան պաշտամունքն էր: Թամուզի հետ սերտօրէն կը կապուի կին աստուածութեան գաղափարը. ան ի՞նչ արեւ է: Իշտարը կը կորսընցնէ Թամուզը և կ'երթայ կ'որոնէ, ստորերկրեայ աշխարհին մէջ, որ մահուան թագաւորութիւնն է: Ասոր հետեւանքով երկրի վրայ կեանքը կը դադրի, բուսականութիւնը կը թառամի: Իշտարը՝ եօթ դռներով, եօթ պարիսպներով կանցնի, կ'ազատէ Թամուզը և կը բերէ եր-

զիր: Անոնց վերադարձով բովանդակ բնութիւնը նորէն կենդանութիւն կ'ըստանայ, կը ծաղկի: Կեանքը յարութիւն կ'առնէ: Այս դիւցալէւը կրնար ստեղծուիլ երկրագործ հասարակութեան մէջ, որու գործը բնութեան հետ է և որ կը սնանի բնութեան բարիքներով:

ԳԻԼԳԱՄԻՇԻ ԱՌԱՍՊԵԼԸ.— Սուսէրական ծագում ունի պատմութիւն մը, որ յետոյ բազմաթիւ դրուագներով, փոփոխականերով տարածուած էր սեմական ժողովուրդներու մէջ: Գիլգամիշը ըստ աւանդութեան եղբի է Ուրուկի թագաւորը, Նին-Սուն աստուծոյ որդին: Ան «Երեմ քառուղով աստուածային եր, մէկ քառուղով մարդ»: Աստուածները անոր վրայ բազմաթիւ պարտականութիւններ կը դնեն, որ լրիւ կը կատարէ: Ան կը յաղթէ Մայրիներու թագաւոր Հուամբային: Գիլգամիշը կը մերժէ իշտարի սէրը. վիրաւորուած աստուածուհին անոր դէմ կը զրկէ կատաղի ցուլ մը: Գիլգամիշը պարտութեան կը մատնէ ցուլը. յետոյ իր ընկերոջ Էուկիդույի հետ կը շրջի ամբողջ աշխարհը, կը վարէ արկածախնդիր կեանք մը: Ընկերոջ մահէն յետոյ ան կ'իջնայ ստորերկրեայ աշխարհը փնտռելու մտերիմը: Բայց կը հանդիպի միայն անոր ստուերին. վերջինս կը պատմէ անոր մեռելներու տխուր բախտի մասին, կը տեղեկացնէ թէ ինչ կ'ըսպասէ ամեն մահկանացուի՝ մահէն ետքը: «Դուքը նոյն թխուր, անմխիթար բախտին պիտի արժանանան, խաւարի մեջ պիտի ապրին: Այս բանի մեջ չկայ օարբերութիւն ազնուականի եւ հասարակի մեջ: Ամեն ինչ եւ ամեն մարդ փոփանալու է»:

Գիլգամիշը դուրս գալով ուրուականներու աշխարհէն կը ջանայ ձեռք բերել անմահութեան հրաօգործ միջոցները, որոնք մարդը միշտ երիտասարդ պահելու պիտի ծառայեն: Երկար որոնումներէ ետք ան կը գտնէ անմահութեան գաղտնիքը. բայց օձը կը յափշտակէ անկէ այդ և Գիլգամիշն ալ կ'երթայ ապրելու ուրուականներու, խաւար աշխարհի մէջ:

Գիլգամիշի առասպելը շատ բնորոշիչ է ասորա-բարե-

լական կրօնի տեսակէտէն . ան կրօնի մէջ մեծ գաղափարներ, բարոյական թեւադրանքներ չի դնել, հատուցման և հանդերձեալ կեանքի գաղափարը չունի, ինչպէս ունէին Եգիպտոսի և հրէաներու կրօնը կամ Զրադաշտի ուսմունքը: Կեանքը կը վերջանայ մահով, իսկ մահը մեզ կը տանի խաւար և ստուերներու աշխարհ մը, ուր բոլոր մահկանացուները, հարուստ թէ աղքատ, տէր և ծառայ, թագաւոր և հպատակ, յաւիտենական կորուստի, մահուան պիտի մատնուին:

ԱՆՄԱՀՈՒԹԵԱՆ ՏԵՆՉԸ.— Նոյն Գիլգամիշի հետ կապուած երկրորդ վէպը չի հաշտուիր մարդու այս տխուր բախտի հետ և անմահութիւն կ'որոնէ. կը գտնէ զայն կախարդութեանց մէջ, բայց օձը կը յափշտակէ մարդոց անմահութեան միջոցները: Եգիպտոսի քրմական դասը անմահութիւնը կապեց մարդու հանդէս բերած առաքինութիւններու հետ, ան հատուցումն է, որ կ'ըստանայ այս կեանքի մէջ առաքինաբար ապրող մարդը: Ասորա-բարեւական կրօնը այս բարձրութեան չհասաւ: Ասորա-բարեւական կրօնը չի ճանչնար վերջին դատաստանի գաղափարը, որ աստուածներու վարձատրութիւնն է մարդկանց այս երկրաւոր կեանքի համար: Ան չունի արդարութեան և մեղքի գաղափարը: Ամեն չարիք կը պատժուի այս աշխարհի մէջ . այդ պատիժն ալ կը հասկնային շատ թանձրացած, շօշափելի ձեւով՝ հիւանդութիւն, աղքատութիւն, մարմնական պակասութիւն: Ասորա-բարեւակուն թագաւորները և ազատ մարդիկ իրենց ազօթքներու մէջ կը խնդրէին Աստուածներէն ռեկար կեանք, ուրախ օրեր, գործի յաջողութիւնք, միայն աշխարհային ցանկութիւններ, իսկ հանդերձեալ կեանքի մասին չէին հոգար:

ՁՐՀԵՂԵՂԻ ԱՌԱՍՊԵԼԸ.— Եթէ Գիլգամիշի վէպը անմահութիւն որոնող մարդու պատմութիւնն է, ուրեմն ջըր-հեղեղի վէպը մարդոց՝ աստուածներու դէմ կատարած ընդվզումի պատմութիւնն է: Աստուածները կը որոշեն մեղքերուն համար՝ ոչնչացնել մարդկային ցեղը: Բայց անոնց-

մէ մէկը կը յայտնէ Բիսուպոսին, որ նաև կը բարձրանայ իր ամբողջ ընտանիքով, բոլոր կենդանիներէն մէկական զոյգ վերցնելով հետը: Զրհեղեղը կը շարունակուի վեց օր, եօթերորդ օրը նաև կ'իջնայ լերան մը վրայ: Բիսուպոսը դուրս կու գայ նաևէն, զոհ կը մատուցանէ աստուածնե-րուն, ինք և իր ընտանիքը կը շարունակեն սերնդագոր-ծել և լեցնել աշխարհը: Աստուածները դժկամութեամբ թէև, բայց կը հաշտուին անոնց ազատման և նոյնիսկ Բի-սուպոսին անմահութիւն կը պարգեւեն:

Այս առասպելավէպը մասամբ բնական հիմքեր ունի. ան անդրադարձումն է Միջագետքի մէջ յաճախ կրկնուող յորդուճներուն, որու ընթացքին եփրատի և Տիգրիսի ջու-րերը կը հեղեղէին ամբողջ Միջագետքը և կը ոչնչացնէին բուսական և կենդանական աշխարհը, ինչպէս և մարդիկը, գիւղերն ու քաղաքները: Աւելի ուշ՝ այս առասպելավէպը իւրացուցին Հրէաները և անոր վրայ կառուցին տիեզերա-շինութեան մասին ամբողջ վէպ մը բազմաթիւ գործողու-թիւններով, որուն մէջ առաջինը՝ տիեզերածնութեանն է նուիրուած, վերջինը՝ տիեզերական աւերումին, ջրհեղեղին:

ԳԼԽԱԻՈՐ ԱՍՏՈՒՍԾՆԵՐՈՒ ՅԱԶՈՐԻԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ. — Սոււմէրներու քաղաքական հզօրութեան շրջանին Էնլիլը առաջին տեղը կը գրաւէր: Գիտենք, որ սոււմէրական ամեն քաղաք իր աստուածն ունէր. Էնլիլը համասոււմէրական աստուած էր: Անոր ուխտի կուգային սոււմէրական բոլոր Պատէսիները, նուէրներ կը բերէին, զոհեր կը մատուցանէ-ին: Անոր համա-սոււմէրական արժէքը ի նկատի ունենալով է, որ երբ քաղաք մը ուժեղնար, իշխէր միւսներու վրայ, անպատճառ կը ջանար գրաւել Էնլիլ աստուծոյ տաճարը: Այս բանը անոր տիրապետութեան կուտար օրինականութիւն և հեղինակութիւն: Բաբելոնի հզօրացումով և առաջնու-թիւն ստանալովը՝ Մարդուկ աստուածը գրաւեց անոր տե-ղը: Ան համապետական աստուած դարձաւ: Մարդուկը կը հանդուրժէր ուրիշ աստուածներուն, բայց անոնցմէ բարձր ինք պէտք է ըլլար: Արդէն տիեզերածնութիւնը, մարդու

ծագման հարցը կը կապուէր անոր հետ: Իսկ Ասորեստանի գերիշխանութեան շրջանին Ասուր աստուածը յայտարարուեցաւ առաջին և գերագոյն աստուած: Ան էր, որ կառուցեց Ասորեստանի պետութիւնը, յաղթութիւններ պարգեւեց թագաւորներուն: Անոր կողքին Իշտարն ալ դարձաւ մեծ աստուածուհի, արգասաբերութեան, առողջութեան ինչպէս և յաղթանակներու պարգեւողը:

ԱՍՈՒՐ ԱՍՏՈՒԱԾԸ.— Ասորեստանի աստուածները խիստ են, ռազմասէր, անզիջող: Ասուր աստուածը կը ներշնչէր թագաւորներուն և իր բանակին ըլլալ անողորմ պարտուածներու նկատմամբ, կոտորել զանոնք, չխնայել ոչ ոք և ոչինչ: Ասորեստանի նուաճող թագաւորները Ասուր աստուծոյ պաշտամունքը կը փորձէին դարձնել համապետական, պարտադիր բոլոր հպատակ ժողովուրդներու համար. այդ նպատակով ալ անոնք կ'աւերէին տեղական, գրաւած երկիրներու աստուածներու տաճարները, կ'աւարէին անոնց հարստութիւնները և աստուածներու արձաններն ալ գերի կը տանէին: Բայց ասուրներու փորձն անյաջող անցաւ. Ասուրի պաշտամունքը համապետական չը դարձաւ. ան չբռնեց տեղական աստուածներու տեղը, չագգայնացաւ, չդարձաւ ժողովուրդներուն միացնող, հաւաքող գործօն: Կայսրութեան անկումէն ետքը, Ասուր աստուած պաշտամունքն ալ վերջ գտաւ:

Բարեկրօնի երկրորդ կայսրութեան ժամանակ նորէն Մարդուկն է, որ առաջնութիւն կ'ըստանայ. անոր համար կը կառուցուի արեւելքի ամենէն գեղեցիկ տաճարներէն մէկը: Նաբոնիդը, որ աւելի շուտ քուրմ էր քան թագաւոր, կ'ուզէր իր պետութեան բոլոր ժողովուրդներուն աստուածները ենթարկել Մարդուկին. ուստի Բարեկրօն կը հաւաքէ բոլոր աստուածներու արձանները և կը յայտարարէ Մարդուկը իբրեւ գերագոյն աստուած, միւս աստուածները միայն անոր ուժերու արտացոլումն էին:

Բայց բոլոր քաղաքներու, ժողովուրդներու քրմական դասը, որ զրկուեր էին իրենց դիրքէն, նիւթական հարըս-

տուժենէն, այս իսկ պատճառով, Բաբելոնի անկման ժամանակ ողջունեցին Կիւրոսը իբրև երկրի իրաւական տէրը, որ Մարդուկէն ու միւս աստուածներէն ստացած էր իր յաղթանակը:

ՄԵՆԵՆԵՆԵՐՈՒ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ.— Մեռելներու պաշտամունքը, որ Եգիպտոսի մէջ այնքան զարգացած էր, մեծ տեղ չէր գրուեր ասորա բարեխկան կրօնի մէջ: Անմահութեան և վերջին դատաստանի գաղափարը անծանօթ էր անոնց: Ասոր հետեւանքով ալ այս երկու ժողովուրդներու բարոյական գաղափարներն ալ տարբեր ուղղութեամբ ընթացան: Չունենալով ոչ արդարութեան, ոչ հատուցման ու վերջին դատաստանի գաղափարը, ասորա-բարեխացիք կապուած մնացին այս աշխարհի բարիքներուն, անոր ուրախութեան. աստուածներէն կը խնդրէին միայն երկար կեանք և ուրախ օրեր: Եգիպտացիին համար այս աշխարհի բոլոր բարիքները անցողիկ էին, միայն ոգեկան արժէքներն էին յաւիտենական: Անոնց մէջ մշակուեցաւ մարդկային առաքինութիւններու և անհատական պատասխանատուութեան գաղափարը: Անոնք կը հաւատային թէ՛ կայ աստուածային արդարութիւնը, մարդը պարտուոր է ապրիլ անոր հրահանգներով. իր կեանքի չար ու բարի գործերուն համար պատասխանատու էր Գերագոյնի առաջ. առաքինութիւնը պիտի ապահովէր յաւիտենական կեանք: Այս գաղափարները չունէին Ասորա-Բաբելացիները. որով և մեռելներու ապագայի մասին չէին մտահոգուեր: Վաշկատուները իրենց մեռելները չէին փոխադրեր մէկ տեղէն միւսը, և չէին հոգար գերեզմաններ ունենալու համար: Անմական նստակեացներու թաղման ձէսերն ալ պարզ էին: Մեռածի մարմինը կը թաղէին աղիւսէ պատերով փոսերու մէջ, անոր հետ կը դնէին քանի մը անօթներ կը հաւատային, որ մեռելէն ետքը մարդոցմէ կը մնայ տուեր մը միայն, ուրուական մը, որ կ'երթայ բնակիլ Ներգալ աստուծոյ մօտ: Ան հոն կը դառնայ չարութեան ոգի, որ մէ պէտք է զգուշանալ: Անկէ կարելի է ազատուիլ թա-

լիսմաններով, կախարդութեամբս կը հաւատային, որ մարմինն ալ, հոգին ալ պիտի ոչնչանան, ոչ մէկ մահկանացու կրնայ ազատուիլ այս անյոյս և տխուր ճակատագրէն:

ՔՐԻՍՏԻԹԻՒՆԸ. — Ասորաբարեկական կրօնը ունէր կազմակերպուած քրմական դաս մը. ան մեծ դեր կը խաղար Միջագետքի հասարակութեան մէջ. ոչ միայն կ'ըսպասարկէր աստուածներուն, այլ և կը ղեկավարէր հասարակութեան միտքը, կը մշակէր գիտական տեսութիւններ, կը մեկնաբանէր բնութեան երեւոյթները, աստղագուշակութեամբ կ'ըզբաղէր, որմէ աստիճանաբար սկիզբ պիտի առնէր գիտական աստղագիտութիւնը: Քրմական դասէն դուրս կուգային բժիշկներ, որոնք կախարդութեամբ կը բժշկէին հիւանդները: Անոնք կը մշակէին գիրն ու գրականութիւնը: Տաճարական դպրոցներու մէջ կը պատրաստուէին դպիրները: Այս պատճառներով քուրմերու ազդեցութիւնը, հեղինակութիւնը շատ մեծ էր հասարակութեան մէջ: Անոնք կը համարուէին գերբնական զօրութեանց տէր, կախարդներ, որոնց հետ լու պէտք էր վարուիլ՝ իրենց թշնամութիւնը չգրգռելու համար: Անոնք աստուածներու կամքը իմացողներն էին:

Քրմական դասը կը բաժնուէր քանի մը մասի: Առաջին մասը անմիջականօրէն կապուած էր աստուան, զոհեր կը մատուցանէր, աղօթքներ կ'ընէր, աստուծոյ պատգամները կը յայտնէր թագաւորին, իշխաններու: Ան է, որ քրմապետի նախագահութեամբ կրօնական արարողութիւններ կը կատարէր. յատուկ տօներուն տաճարէն դուրս կը հանէր աստուծոյ արձանը և հանդիսաւոր թափօրներ կը կազմակերպէր: Սրկրորդ մասը գուշակներն էին. ասոնք մեծ ազդեցութիւն ունէին ժողովուրդին վրայ, արքունիքի մէջ: Միջագետքի մէջ կը հաւատային, որ մարդկային բոլոր արարքները, երազները, գործերը կարիք ունին մեկնաբանութեան, գուշակութեան: Պատերազմ մտնելէն առաջ, ճանապարհորդելէն առաջ, կարաւանները ուղարկելէն առաջ պէտք էր հարցնել, իմանալ աստուածներու կամքը:

Աստուծոց համար էին գուշակները, որոնք աստուծոյ և ոգի-
ներու հետ հաղորդակից էին, կը հասկնային անոնց կամքը
և կը յայտնէին իրենց դիմողներուն: Ասոնք ոչ միայն գի-
տէին աստուածներու պատասխանները, այլ և շատ ընդար-
ձակ տեղեկութիւններ ունէին քաղաքական կացութեան,
միջազգային դժգոյքերու մասին, ինչպէս մեծ առեւտրական
շուկաներու և ուղիներու մասին: Ասոնք լաւապէս ծանօթ
էին պալատական կեանքին, զօրքին և զօրականութեան:
Այս բոլոր ծանօթութիւնները անհրաժեշտ էին այս կամ
այն չափով ճշգրիտ պատասխաններ տալու համար: Անոնք՝
այս կերպ կ'ազդէին թագաւորներու, զօրքի և տնտեսու-
թեան վրայ և կը խաղային քաղաքական դեր:

Նրոնք մասն ալ կ'ըզգայողուէր տաճարական հարստու-
թիւնը կառավարելով: Տաճարը մէկ մեծ կալուածատիրու-
թիւն էր: Անոր հարստութիւնը կազմուէր էր հաւատաց-
եալներու նուիրաբերութեամբ, ուխտաւորներու տաճարին
փոխ տուած դրամներով: Թագաւորները կը նուիրէին տա-
ճարներուն հողեր, շէնքեր, անասուններու հօտեր, յաջող
պատերազմներէն վերադարձին՝ կը նուիրէին աւարի մէկ
մասը: Յաճախ՝ հաւատացեալները իրենց հարստութեան
մէկ մասը իրրեւ աւանդ՝ պահ կու տային տաճարին, անոր
շտեմարանները շատ աւելի ապահով էին. քան իրենց տու-
ները: Տաճարական հարստութեան մէկ մասը կը ծառայէր
քրմական դասի ապրուստին, մաս մըն ալ բաժին կը հա-
նէին ազգատներուն, որբերուն և այրիներուն: Մեծ տա-
ճարներուն կից գոյութիւն ունէր քրմական դպրոց, ուր
կը պատրաստուէին դպիրներ, գրագէտ պաշտօնեաներ, ա-
պագայ քուրմեր և տաճարական սպասաւորներ: Անոնք
կը սորվէին սեպագրի գործածութիւնը, տաճարական ծէ-
սերն ու արարողութիւնները. բժշկութիւն որ կապուած
էր կախարդութեան, հետ. աստղագիտութիւն, որ կապուած
էր գուշակութեան հետ: Տաճարի հարստութեան մէկ մասն
ալ այս դպրոցներու վրայ կը ծախսուէր: Բայց անոր մեծ
մասը կը վաճառուէր. տաճարը մասնակից կ'ըլլար երկրի

առևտրական ձեռնարկներուն. իր շտեմարաններու հարըստութիւնը շուկայ կը հանէր, կը գնէր նորէն վաճառելու համար: Բրմական և տաճարական կարգի կարաւանները աւելի ապահով էին, որովհետեւ կը գտնուէին աստուածներու հակողութեան տակ:

ԳԻՐ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Ասուրա-Բաբելացիք կը գրէին աղիւսներու վրայ. անոնք ունէին սեպագրեր. թողեր են հարուստ գրականութիւն: Անոնք կը գրէին եղէգեայ սուր գրիչներով: Որպէս գրութեան նիւթ անոնք ունէին նաև կաշին, փայտը և պապիրուսները, բայց մուրհակները, արքայական հրամանները, դիւանական փաստաթղթերը, օրէնքները և աստուածներուն նուիրուած երգերն ու աղօթքները անոնք կը գրէին աղիւսներու վրայ: Աղիւսներու վրայ կը գրէին երբ թաց էին և կարելի էր գրիչներով գիծեր քաշել. ետքը կը չորցնէին կամ կը թրծէին և կը պահէին յատուկ պահարաններու մէջ: Աղիւսը կը գրէին բոլոր կողմերով, որու հետեւանքով մէկ աղիւսը երբեմն քանի մը տասնեակ և մինչեւ հարիւր տող կ'ունենար: Գրուած այս աղիւսները կը պահէին սովորաբար տաճարներու մէջ, ուր կը դրուէին աստուածներու հովանիին տակ: Ուսումնասէր թագաւորներն ալ իրենց պալատներու մէջ կը կազմէին գրադարաններ: Թէ տաճարները և թէ պալատները կը պահէին աստուարաթիւ գրչագիրներ:

Սեպագիրի շնարիչները Սուամէրներն էին. անոնցմէ վերցուցին Բաբելացիները: Վերջիններէն ալ ընդօրինակեցին Ասուրները: Եւ հետագային տարածուեցաւ Մերձաւոր Արեւելքի շատ մը սողովուրդներու մէջ: Սեպագրերու հետ միաժամանակ բաբելական լեզուն ալ տարածուեցաւ ամբողջ արեւելքի մէջ և դարձաւ միջագգային լեզու: Թէ սեպագրերը և թէ եգիպտական տաճարական գրութիւնները պատկերագրութիւններ էին, միայն Սուամէրներու մօտ գրութեան նիւթի և գրչութեան ձեւի հետեւանքով պատկերագրերը աստիճանաբար կորսնցուցին իրենց կապը ա-

աարկայի, կենդանիներու, պատկերներու հետ: Գրութիւնը ստացաւ պայմանական իմաստ. երբեմն ան ցոյց կուտար առարկայ մը երբեմն հնչիւն մը, երբեմն ալ գաղափար մը: Այս աւելի դիւրին ձեւն էր մարդկային մտքերու արտայայտութեան, քան եգիպտական պատկերագրերը: Ասոր հետեւանքով ալ դիւրաւութեամբ տարածուեցաւ թէ սեմական և թէ փոքր Ասիական ծագում ունեցող ժողովուրդներու մէջ:

Գրութեան այս ձեւը Սումէրներէն անցաւ Միջագետքի սեմական ժողովուրդներուն: Բայց անոնք ժառանգութիւն ստացան նաև Սումէրներու գրականութիւնը՝ վէպեր, առասպելներ, հոգեւոր երգեր, դիւցարանութիւն: Սեմականները ասոնց վրայ աշխատեցան, վերապատմեցին իւրայատուկ ձեւով՝ համապատասխան իրենց նկարագրին, ապա գրի անցուցին, կամ արտագրեցին և իրենց լեզուով ստեղծեցին մեծ գրականութիւն: Այդ գրականութեան նիւթը շատ բազմազան է, բայց գլխաւորապէս կրօնական: Հոն կարելի է գտնել անհատական խոր ապրումներով ազօթ քեր, կախարդական բանաձևեր, գուշակութիւններ, դիւցարանական գրուածքներ, բանաստեղծութիւններ, փիլիսոփայական խորհրդածութիւններ և պատմութիւններ: Այս պատմութիւններէն և առասպելներէն ներշնչուեր են ասուրա-բաբելական արուեստագէտները իրենց արձանագործութեան, քանդակներու և նկարչութեան համար. նրկարեր են, քանդակներ, զարդարեր են պալատներն ու տաճարները:

Ասորա-Բաբելացիները կը հաւատային, որ երկնային մարմինները կը ներգործեն մարդու վրայ, կ'որոշեն անոր բախտը. ապագան: Եւ այդպէս կը մտածէին, որովհետեւ աստղերը կը համարէին ոգիներու բնակավայր: Եւ թէ անոնք ալ բնութեան բոլոր երևոյթներու նման իրենց կեանքն ունին: Ամեն տրարած ծնուած է աստղի մը տակ և ներքին, անքննելի կապ մը կայ մարդու և աստղերու մէջ: Այս հիման վրայ կը մշակուէր ամբողջ գիտութիւն

մը՝ աստղագուշակութիւն, որոշելու համար անոնց շար-
ժու մները, լոյսի փոփոխութիւնը, անոր ազդեցութիւնը
մարդու բախտի վրայ: Աստղերու վրայ իրենց ըրած դի-
տողութիւնները կը ցուցակագրէին տաճարներու մէջ, ա-
ղիւսատախտակներու վրայ, կը նկարագրէին աստղագիտա-
կան նշանաւոր դէպքերը, որով աստիճանաբար աստղա-
գուշակութենէն Բաբելոնի գիտունները կ'անցնէին աստ-
ղագիտութեան:

Կախարդութիւնը շատ մեծ դեր կը կատարէր ասորա-
բաբելական հասարակութեան մէջ: Կախարդն ալ ամենէն
ազդեցիկ դէմքն էր այդ հասարակութեան: Ան ընկերային
մեծ գործ կը կատարէր՝ վերցնելով շարիքը, կոռելով շար
ոգիներու դէմ: Ասոր համար կախարդն ունէր չարութեան
դէմ կոռելու գաղտնի, իրեն միայն յայտնի միջոցները:
Ան կը գործէր աղօթքներով, հմայութեամբ, զանազան բա-
նաձեւներով, որոնցմով կը կապէին շար ոգին կամ կը հա-
կազդէին անոր չարութեան: Կախարդութեան հետ կը կապ-
ուէր բժշկութիւնը: Հասարակութեան մէջ այն մտայնու-
թիւնը կ'իշխէր, որ մարդու մարմինն ալ ոգիներու տուն
է, անոնց բնակարանը: Հոն բոյն կը դնեն երբեմն շար ո-
գիներ. կը քայքայեն մարդը. մահ կը պատճառեն անոր:
Կախարդի և բժիշկի գործն է՝ այդ շար ոգիները դուրս
ընել մարդու մարմնէն՝ աղօթքներով, սպառնալիքներով,
զանազան դեղերով և հմայութեամբ:

ԱՐՈՒԵՍՏՐ ԵՒ ՏԱՃԱՐՆԵՐ.— Սումէր-ակագական և աս-
սուրա-բաբելական ամեն քաղաք ունէր իր տաճարը. ան
կառուցուած էր արհեստական կամ բնական բլուրներու,
բարձրանիստ վայրերու վրայ, գետերու հեղեղումներէն հե-
ռու մնալու համար: Տաճարը նուիրուած էր հովանուոր
աստուծոյ կամ տեղական սուրբին, ան ուխտատեղի էր հա-
ւատացեալներու համար: Քառանկիւնի շէնք մըն էր՝ պա-
րիսպներով շրջապատուած: Ընդարձակ գաւիթի կեդրոնը
կը գտնուէր զոհաբերութեան սեղանը: Սրբավայրը, ուր
դրուած էր աստուծոյ արձանը, փոքրիկ շէնք մըն էր. եր-

քեմ, միայն տասներկու մեթր երկարութեամբ և հինգ մեթրը լայնութեամբ: Աստուածներու հանգստութեան այս անկիւնը քիչերուն միայն մատչելի էր՝ քուրմերուն և թագաւորին: Վերջինս աստուածոյ այցի կուգար միայն մեծ տօներուն կամ պատերազմի մեկնելէն առաջ՝ խնդրելու անոր օգնութիւնը. պատերազմէն ետքը՝ շնորհակալութիւն յայտնելու տարած յաղթանակի համար և նուիրելու տաճարին բերած աւարէն մաս մը: Տաճարի անբաժանելի մասը կը կազմէր եօթ յարկանի աշտարակ մը կամ զիգուրադը: Ան շատ բարձր չէնք մըն էր: Բորսիպոսի աւերուած աշտարակը՝ հիմա ալ կիսաքանդ գրութեան մէջ քառասուն մեթր բարձրութիւն ունի: Բարեւոնի աշտարակի միայն առաջին յարկն է մնացեր և ինխուսն մեթր շրջագիծ ունի: Անշուշտ այս զիգուրադներն են, որոնց շուրջը հիւսուած է Աստուածաշնչի «Բաբելոնի աքարակաշինութեան» պատմութիւնը և անոր հետ է. որ կը կապուի մարդկութեան լեզուներու ծագումը և ժողովուրդներու Բարեւոնէն ցրուելը ուրիշ վայրեր: Աշտարակի իւրաքանչիւր յարկը նուիրուած էր առանձին աստուածութեան և ներկուած էր տարբեր գոյներով: Ամեն յարկ նախորդէն քիչ մը փոքր էր, նեղ: Աշտարակը կը բարձրանային մէկ ընդ հանուր վերելքով, քովընտի կառուցուած աստիճաններով: Ամենէն բարձր յարկը ոսկեզօծ էր, հոն կառուցուած էր մատուռ մը, սրբատեղի, ուր զետեղուած էր ոսկիէ սեղան մը և մահճակալ մը՝ աստուածներու համար: Հոն պաշտամունք կ'ընէին. հոն մուտք ունէին միայն քուրմերն ու թագաւորները: Բարեւոնի աշտարակի եօթներորդ յարկը կը բնակէր Իշտար աստուածուհին:

Բայց ասորա-բարբելական տաճարները ոչ իրենց գեղեցկութեամբ, ոչ ալ ներքին զարդարանքներով, պատկերներու ու քանդակներու ճոխութեամբ չէին կրնար հաւասարիլ եգիպտական տաճարներու հետ:

ՊԱԼԱՏԸ.— Տեւական պատերազմները կը հարստացնէին ասորա բարբելական քաղաքները. մեծ աւար կը հաւաքուէր

Նինուէի և Բարելոնի մէջ: Նուաճուած երկիրները, անոնց քաղաքներն ու տաճարները կ'աղքատանային, կը կողոպտուէին Բարելոնն ու Ասորեստանը հարստացնելու համար: Այս հարստութիւնը կը նպաստէր մեծ շինարարութիւններու. կը կառուցէին պալատներ, տաճարներ, ամրոցներ, կամուրջներ, ջրանցքներ, պարիսպներ: Քաղաքները կը մեծնային, միջնաբերդը օղակող պարիսպներէն դուրս կ'ըստեղծուէր նոր քաղաք՝ իր բազմամբոխ և բազմազբաղ բնակչութեամբ: Բոլոր շէնքերը քաղաքներու մէջ կառուցուած էին աղիւսներով, կամ թրծուած կամ արեւի տակ չորցուցած: Քաղաքը օղակող պարիսպը իր մէջ կ'առնէր ոչ միայն բնակելի մասը, այլ այգիներ, արտեր, պարտէզներ, որով քաղաքը շատ ընդարձակ տարածութիւն մըն էր և պարիսպներն ալ շատ երկար: Հին մարդիկ Բարելոնի մասին կ'ըսէին, որ ան ոչ թէ քաղաք մըն է, այլ ամրոց լայնութիւն մը: Պարիսպները շատ հաստ կը կառուցէին, երբեմն տաս մեթրէն աւելի, երբեմն քսան մեթր. անոնց վրայ կը բարձրանային աշտարակներ:

Այս քաղաքներուն մէջ կամ անոնցմէ դուրս կը կառուցէին արքայական պալատները: Հին պալատներու ճարտարապետութեան լուսագոյն նմուշը Սարգոն II-ի պարբապապատ դղեակն է Ասորեստանի հիւսիսը՝ ներկայ Խորսաբաղի մէջ, որ հին ժամանակ կը կոչուէր Սարգոնաքե: Ծարտարապետութեան ոճը ռազմական և կրօնական է միաժամանակ: Այդ բանը բնորոշիչ է Ասորեստանի համար: Պալատը կառուցուած է բարձունքի մը վրայ, որ շրջակայ հարթավայրէն տանհինգ մեթր վեր է: Պալատի անբաժանելի մաս կը կազմեն զիգուրադը: Պալատ և տաճար՝ ասոնք միասին իրենց անհրաժեշտ մասերով կը կազմեն միջնաբերդը: Արքայական պալատին շուրջ կառուցուած են շէնքեր՝ երկու հարիւր սենեակներէ բաղկացած: Միջնաբերդը շրջապատուած է քսան մեթր թանձրութիւն ունեցող պարիսպով մը: Պարիսպներու վրայ կը բարձրանան աշտարակներ և մարակոցներ՝ պալատի պաշտպանութեան

համար: Պարիսպին մէջ կը բացուին բազմաթիւ կամարա-
կապ տուններ՝ մետաղածածկ. անոնց մուտքին կը կանգնին
պահապան ոգիները՝ ցուլերու և առիւծներու արձանները՝
մարդկային գլուխներով: Տաճարին կից զիգուրադը նուիր-
ուած է Ասուր աստուծոյ: Պալատի ստորերկրեայ յարկերու
մէջ կը պահուէին պետական գանձերը, աւարը, զէնքերը,
մետաղները: Այս բոլոր շէնքերը կառուցուած են աղիւս-
ներով, բայց քարաշէն պատերու վրայ: Պալատներու և
տաճարներու մէջ պատերու ներսի կողմը աղիւսները բազ-
մագոյն են, ներկուած են և դասաւորուած իրարու քով
այնքան ներդաշնակ, որ կը թողուն գեղարուեստական
կերտուածքի մը տպաւորութիւնը: Անոնք կ'ըստեղծեն կեն-
դանիներու նկարներ, դիմագծեր և զանազան փորագրու-
թիւններ: Շինարարական այս արուեստի մէջ Ասուրները
աշակերտած են Հաթերուն: Ասոնց վարպետներու ձեռքով
է, որ կառուցուած են սկզբնական տաճարները ու պալատ-
ները: Ասուր թագաւորներու պալատները այնքան մեծ են,
որ ինքն իր մէջ կրնայ քաղաք մը համարուիլ քանի մը
հազար բնակիչներով, որոնք բոլորն ալ պալատի սպասար-
կութեան են որոշուած: Հոս կան պալատական սպա-
սաւորներ, պետական բարձրաստիճան ծառայողներ, զին-
ուորական հրամանատարներ, թագաւորի սպայակոյտը,
դպիրներ, քուրմեր և քրմուհիներ:

ԱՐՈՒԵՍ.— Միջագետքի սեմական ժողովուրդները
Սուամէրներէն սորվեցան նաեւ աղիւսի գործածութիւնը:
Միջագետքի հարաւը քար չկար: Ասորեստանը միայն քար
ունէր: Քարը Սուամէրներն ու Բաբելացիք կ'ըստանային
Էլամէն, Իրանէն, ամենէն հին շրջանէն Հայաստանի քարը
Միջագետք կու գար իբրեւ գործիք և զէնք: Քարը պատ-
մական շրջանին վերապահուած էր շէնքերու հիմքերու հա-
մար, արձաններ քանդակելու, արքայական տարեգրու-
թիւններ, օրէնքներ արձանագրելու համար: Քարին կը փո-
խարինէր աղիւսը: Սկիզբը աղիւսը կը գործածէին հում
գրութեամբ, միայն կը չորցնէին արեւի տակ: Յետոյ սոր-

վեցան թրծել կրակի մէջ. այս ձեւով ան աւելի կարծր կ'ըլլար և դիմացկուն: Աղիւսի գործածութիւնը իբրեւ շինանիւթ առանձնայատուկ բնոյթ կու տար ասորա-բարելաւան շէնքերուն:

Պատերը արտակարգօրէն հաստ կ'ըլլային: Պարիսպները շատ թանձր կը կառուցուէին՝ թշնամու հարուածները դիմագրաւելու համար: Իսկ ընդհանրապէս շինութեանց մէջ այս թանձրութիւնը անհրաժեշտ էր, որովհետեւ քարէ սիւներու գործածութիւնը դեռ չկար, ուստի առաստաղի ամբողջ ծանրութիւնը կ'իյնար պատերուն վրայ: Իսկ եղած սիւներն ալ փոքր էին, բարակ՝ գնդաձեւ խոյակներով: Երբեմն ալ կը գործածէին մետաղով ծածկուած փայտէ սիւներ: Բայց թէ փայտը և թէ մետաղը հազուադէպ էին և սուղ. ասոնք դուրսէն կ'ըստացուէին: Սիւներուն կը փոխարինէին կամարները, որոնք զանազան ձեւեր կ'ըստանային՝ կիսաբոլորակ, պայտած: Ասորեստանի մէջ շինութիւններու տանիքները գմբէթաձեւ ցցուածքներ ունէին, որոնք հաւանաբար անձրեւները տանիքի վրայ չհաւաքելու համար էին: Անոնք մեր այսօրուան գմբէթներուն խիստ ձեւերն էին միայն: Ասորա-բարելաւան շէնքերը պատուհաններ չունէին, լոյսը կը թափանցէր դուռերէն և առաստաղի բացուածքէն: Տան դուռերը կը բացուէին ընդարձակ բակի վրայ, ուր և կ'ընթանար Ասորա-բարելացիներու կեանքի մեծ մասը իրենց առօրեայ հոգերով և աշխատանքով: Տունը բազմաթիւ սենեակներ կ'ունենար, որովհետեւ հոն կ'ապրէր ամբողջ գերդաստան մը՝ քանի մը սերունդներէ կազմուած: Տունը ոչ մէկ բացուածք ունէր փողոցի վրայ. միայն գաւիթէն դէպի փողոց կը տանէր դուռ մը: Տան մէջ ամեն ինչ կը կատարուէր դուրսի աչքէն հեռու, փակ և մեկուսացած: Փողոցներն ալ շատ նեղ էին, աղտոտ: Միայն մեծ քաղաքներու քանի մը պողոտաները լայն էին, մայթած և սալայատակած. այդ փողոցներու մէջ ալ երթեւեկը շատ էր, առաւօտ և երեկոյ եռուզեռը անպակաս էր:

Զի թրծուած աղիւսը ճերմակաւուն էր, թրծումով կ'ըստանար կարմիր գոյն: Շինութիւններու պատերու արտաքին երեսները կը ծածկէին թրծուած աղիւսներով, իսկ մէջը ամբողջութեամբ չթրծուած աղիւսներով: Ճերմակ և կարմիր աղիւսներու զանազան դասաւորումով կ'ըստեղծուէր բազմազան ձեւեր, պատկերներ: Ներսի աղիւսները կը ծածկէին կրտուածքով, շաղախով, որմէ կը նկարէին զարդեր, պատկերներ, տեսարաններ: Բարելոնի նոր կայսրութեան շրջանէն այդ շաղախի Էմալի գործածութիւնը ընդհանրացաւ: Ասորաբարելական ճարտարապետութեան հնադոյն շէնքերը, պալատներն ու տաճարները փլեր ու ոչնչացեր են: Թէ նիւթի և թէ կլիմայի պատճառով անոնք չէին կրնար այնպէս անվթար մնալ, ինչպէս Եգիպտոսինը: Ուստի արտաքին յիշատակներու և շէնքերու տեսակէտէն Միջագետքը ազգատ է, եղածներն ալ աւերակներու կոյտեր են. գաղափար մը կազմելու համար անոնց մասին, պէտք է պեղել, հանել փլատակներու տակէն:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՒՆ ԵՒ ՊԵՏՈՒԹԻՒՒՆ.— Տեսանք, որ Միջագետքի մէջ ամեն աւան, ամեն քաղաք ունէր իր հովանաւոր աստուածը: Ան միայն կրօնի և պաշտամունքի առարկայ չէր, այլ կեանքի բազմազան արտայայտութեանց սկզբունք, գերագոյն ղեկավար, խորհրդատու: Պատերազմը, խաղաղութիւնը անոր անունով կ'ըլլար: Ան կ'ընտրէր թագաւորը, կը հովանաւորէր իրեն և իր ժողովուրդը: Աստուածներու մէջէն կը բարձրանար մէկը, որ կը դառնար պետութեան ստեղծիչը, կեանք տուողը, իշխող հարստութեան պահապանը: Սոււէր-ակադական շրջանին այդպէս էր Էնիլը. Բարելոնի ժամանակ՝ Մարդուկը, Ասորեստանի հզօրացման օրերուն՝ Ասուրը: Միջագետքի մէջ թագաւորը ոչ աստուած էր, ոչ ալ աստուծոյ որդի. ինչպէս Եգիպտոսի մէջ, այլ միայն աստուծոյ ներկայացուցիչը, անոր տեղապահը: Սոււէրները կը կոչէին Իւակու, սիմախոսները՝ Պասեպլիմ: Ան իշխանութիւնը կ'ըստանար աստուծամէ: Ասոր համար մեծ արարողութեամբ, յատուկ

ձէսերով տաճար կը մտնէր, կ'առանձնանար աստուծոյ հետ
անոր սրբարանին մէջ, կը խոնարհէր աստուծոյ առջև, ա-
նոր ձեռքէն կ'ըստանար իշխանութիւնը և արքայական հե-
ղինակութիւնը: Երբ Ասորեստանի թագաւորները կը տի-
րէին Բաբելոնին, կ'երթային Մարդուկի տաճարը և հոն
միայն քուրմերու բերանով կը յայտարարուէին Բաբելոնի
թագաւոր՝ Մարդուկի համաձայնութեամբ,

ԹԱԳԱՒՈՐԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ.— Ան աստուծոյ անունով
կը հսկէր, կը կառավարէր երկիրը: Ան զօրքի գերագոյն
հրամանատարն էր և կ'առաջնորդէր իր բանակը, կը կռ-
ուէր առաջին շարքերուն մէջ: Թագաւորի զինուորական
գործունէութիւնը յատկապէս աչքի կը զարնէր Ասորես-
տանի մէջ: Ընդհակառակը Բաբելոնի մէջ շեշտուած էր իշ-
խանութեան շինարարական, օրէնսդրական կողմը: Ասուր-
ներու մօտ կռուի ժամանակ թագաւորին կ'օգնէր յատուկ
զօրահրամանատար՝ ԵԱՐՏԱՆՐ, սպարապետը, որ միաժա-
մանակ պետութեան մէջ բարձրագոյն պաշտօնեաներէն
մէկն էր: Թագաւորը հոգեւոր իշխանութեան, քրմական
դասի գլուխն էր, քրմապետը: Անոր անունէն քուրմերը
կը գործէին ամբողջ պետութեան մէջ: Որպէս քրմապետ ան
իրաւունք ունէր տաճարական հարստութեան տնօրինման
մէջ: Ան օրէնսդիր միապետ էր, անոր հրահանգները կը
գործադրուէին անմիջապէս, սրովհետեւ կ'օրէնսդրէր և կը
դատէր աստուածներու թելադրութեամբ, օրէնքը աստուծոյ
պատուէրն էր: Համբուրբի հին դարերու մեծագոյն օրէնս-
դիրն էր, բայց ան ալ ներշնչուած էր Շամաշ աստուծոյ
պատուիրաններով: Այստեղ ալ, ինչպէս Իսրայէլի մօտ
քաղաքացիական և պատժական օրէնքները սերտօրէն միա-
ցած են աստուածներու ներշնչած կրօնական պատուիրան-
ներու հետ: Ասուր-Բաբելացիները կը ճանչնային երկու
տեսակ դատարաններ՝ արքայալիան, իսկ ամեն տաճար ունէր
իր քրմական դատարանը: Թէ Սոլմէրներու և թէ Բաբե-
լոնի մէջ թագաւորի ամենէն էական գործերէն մէկը ջրա-
բաշխութեան կանոնաւորումն էր, հողերու օգտագործումը:

Այս՝ կը համարուէր աստուածահաճոյ գործ: Սուբէրնեբու
և Բաբելոնի մէջ թագաւորի մեծութիւնը, արժէքը կ'որո-
շէին անոր շինարարական գործերով, հացաբոյսերու մշա-
կութեամբ, ջրանցքներու վերակառուցումով և արդարա-
դատութեամբ: Ասորեստանի մէջ մեծ թագաւորը անպատ-
ճառ պէտք է ըլլար ռազմապաշտ, նուաճող: Սուբէր-Ակա-
դացիներու և Բաբելոնի մէջ շինարարական աշխատանքը
կանոնաւորելու, անոր վրայ հսկելու համար գոյուցութիւն
ունէր լաւապէս կազմակերպուած վարչութիւն, պաշտօ-
նէութիւն: Անոնց գործունէութենէն կախուած էր ոչ միայն
անհատներու, ընտանիքներու, այլ և պետութեան, ամբողջ
հասարակութեան գոյուցութիւնն ու ապահովութիւնը: Բաբելոնի
տարեգրութեանց մէջ շատ անգամ կը յիշուի բարձր
պաշտօնեաներու հրահանգները ստորադաս պաշտօնեանե-
րուն նոր ջրանցքներ շինելու, եղածները վերակառուցելու
մաքրելու, երկրի մէջ կարգ և խաղաղութիւն հաստատելու
մասին: Ասուր-բաբելական թագաւորները կը հետապն-
դէին հասարակական նպատակներ, կը մտահոգուէին ընդ-
հանուր բարօրութեան համար:

Բաւական չէր հերկել, ցանել, հաւաքել, այլ և պէտք
էր մտածել յաւելեալի վաճառման մասին, օտար երկիր-
ներէն անհրաժեշտ ապրանքներու ներմուծման մասին:
Պէտք էր մտածել նաև կանոնաւոր ճամբաներ ունենալու
մասին: Ամեն ջրանցք մէկ մէկ ուղի էր: Ջրանցքներէն
չատերը, յատկապէս «արքայական» մեծ ջրանցքները նա-
ւարկելի էին. անոնք կը կապէին Միջագետքի մասերը ի-
րարու հետ, միւս՝ ոչ նաւարկելի ջրանցքներու եզերքները՝
բնական ցամաքային ուղիներն էին գիւղերու. քաղաքնե-
րու միացման: Թագաւորները կը հոգային կարաւանային
ուղիներու ապահովութեան մասին: Դաշինքներ կը կնքէին
հեռու և մօտիկ վաչկատուն ցեղերու հետ, որոնց սահման-
ներով պէտք է անցնէին առեւտրական կարաւանները, կ'ա-
պահովէին անոնց բարեկամութիւնն ու զինեալ հովանաւո-
րութիւնը: Ասուր-բաբելական վաճարականները կը յաճա-

խէին Փոքր Ասիոյ, Իրանի բարձրաւանդակը, Միջերկրա-
կանի ափերը:

ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ.— Ասորեստանի վարչական մեքենան
փոխ էր առնուած Բաբելոնէն: Անոնք իրենց ընդարձակ
կայսրութիւնը բաժներ էին նահանգներու՝ որոշ չափով
նկատի ունենալով անոնց ազգային, ցեղային միատարրու-
թիւնը: Նահանգները կը կառավարուէին կեդրոնէն ուղարկ-
ուած կառավարիչներով, որոնք յաճախ արքայական ըն-
տանիքէն կ'ըլլային իբրեւ դահին աւելի հաւատարիմներ:
Ամենէն նշանաւոր դէմքերը կը Ղրկուէին Բաբելոն, որ ցոյց
կու տայ կայսերական քաղաքներու մէջ՝ իրեն վերապահ-
ուած արժէքն ու դերը: Պետութեան բազմակի և հեռուոր
մասերն իրարու հետ կապելու համար թագաւորները կա-
ռուցեր էին ուղիներ, գետերու վրայ կամուրջներ, կիրճե-
րու մօտ ամրոցներ, անապատներու մէջ ապաստաններ և
հանգստեան վայրեր: Մշակուելու են հազորդակցութեան կա-
նոնաւոր ու բարդ ձեւեր: Մեծ ճանապարհներու վրայ շին-
ուած էին զինուորական և հազորդակցութեան կայաններ,
ուր միշտ պատրաստ կ'ըսպասէին սուրհանդակներ՝ թագա-
ւորի, կառավարիչներու հրամանները փոխանցելու յաջորդ
կայաններուն և հասցնելու ուր որ հարկն էր: Հազորդակ-
ցութեան այս կազմակերպութեան մէջ Ասորա Բաբելացիք
կ'օգտուէին Եգիպտոսի փորձէն, իրենք ալ ժառանգութիւն
թողնելով Պարսիկներուն, որոնք աւելի կանոնաւորեցին և
ընդարձակեցին արքայական ուղիներու ցանցը:

ԱՐԱՄԷԱՑԻՔ.— Ասորեստանի այս բոլոր միջոցառում-
ները կը ծառայէին զինուորական նպատակներու, այսինքն
որքան կարելի է աւելի մօտէն և խստօրէն վերահսկելու
պետութեան ոչ-ասուրական ժողովուրդները և ցեղերը:
Բայց ռազմական այս ուղիները ծառայեցին նաեւ տնտե-
սական զարգացման: Ամբողջ կայսրութեան մէջ առեւ-
տուրն ինկաւ Արամէացիներու ձեռքը: Ինքը՝ Ասուրը պա-
կաս տաղանդաւոր վաճառական չէր, բայց դէպքերու բե-
րումով ան ընտրեց միայն քաղաքական-զինուորական աս-

այսպէս: Անոր կայսրութեան մէջ Արամէացիք բռնեցին այն դիրքը, որ Ասուրը լքեր էր: Վաճառական-Արամէացին ամեն տեղ էր իր կարաւաններով և Եփրատի ափերուն, իր ցեղակիցներու հետ, և Միջագետքի մէջ՝ իրրեւ մրցորդ Բաբելոնի վաճառականներուն: Այս վերջինները Ասորեստանի համար միշտ կասկածելի էին, միշտ թշնամի, ուստի Ասուրները անոնց դիմաց՝ առաջնութիւն կու տային Արամէացիներուն: Ասոնք գրասենեակներ և գործակիցներ ունէին Իրանի Բարձրաւանդակի մէջ, ինչպէս նաեւ Պաղեստինի մէջ: Արամէական լեզուն այս վաճառականներու հետ տարածուեցաւ ամեն տեղ, դարձաւ արեւելքի մէջ միջազգային լեզու և դուրս վաճեց բարեւական լեզուն միջազգային հաղորդակցութեան ասպարէզէն: Արամէական լեզուի տարածման, և միջազգային լեզու դառնալուն նպաստեց նաեւ անոր հնչիւնական գիր ունենալը: Անոնք վաճառական էին և կ'որոնէին դիւրին միջոցներ իրենց մտքերը արտայայտելու և ապրանքներու հաշիւները տեսնելու: Հաւանաբար Փիւնիկէցիներէն վերցուցին հնչիւնական գիրը և տարածեցին արեւելքի մէջ: Արամէացիք մեծ յարգ ունէին Ասորեստանի արքունիքներու մէջ: Անոնք պալատին, արքայական ընտանիքին, բարձր ազնուականութեան և քրմական դասին, որոնք ժամանակի լաւագոյն գնորդներն էին, կը մատակարարէին միջազգային շուկաներու լաւագոյն ապրանքները: Անոնցմէ շատերը կը վախելէին թագաւորներու վստահութիւնը և կը կատարէին նաեւ քաղաքական յանձնարարութիւններ: Ուր պաշտօնական բանագնացները, արքայական պատուիրակները չէին յաջողեր, այժտեղ ճարպիկ վաճառականները գլուխ կը բերէին իրենց առաքելութիւնը: Արամէական վաճառականները միակ խաւն էին, որ կապուած էին Ասորեստանի պետութեան և կը ցանկային անոր ամբողջութեան պաշտպանութիւնը և յարատեւութիւնը: Ասորեստանը անոնց առջեւ բացեր էր բովանդակ արեւելքի շուկաները: Կայսրութեան անկումէն ետքը անոնց առեւտուրը անկում չունեցաւ և

Արամէացիք առաջնակարգ տեղ գրաւեցին Պարսից կայսրութեան մէջ:

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՒ ՀՈՂԱՏԻՐՈՒԹԻՒՆ.— Միջագետքի մէջ սեմական ցեղերը նստակեաց դառնալով երբեք չկորսնցուցին վաչկատուն կենցաղի ազատութիւնները: Արհեստը, վաճառականութիւնը ազատ էին. ոեւէ գործով զբաղուիլը կախուած էր միայն ընտրողի կամքէն, ցանկութենէն: Քաղաքները, տաճարները, սեփականատէր էին, ինչպէս և մասնաւոր մարդիկ: Հողը միայն թագաւորինը չէր, այլ ամեն մարդ կրնար հող ունենալ, եթէ նիւթական կարողութիւն ունէր: Ամեն մարդ կրնար ունենալ տուն, պարտէզ, այգի. այս բոլորը ան կրնար ազատորէն վաճառել, ժառանգութիւն տալ: Այս ընկերային ազատութեան մէջ, գնումի և վաճառքի մէջ հողի մեծագոյն մասը կեդրոնացաւ շատ քիչերու ձեռքը՝ ստեղծուեցաւ խոշոր կալուածատիրութիւն՝ որուն կը պատկանէր նաև քրքրմական դասը: Խոշոր կալուածատիրութեան հետ աստիճանաբար վերցուեցաւ մանր ազատ հողատիրութիւնը. ան կորսընցուց իր ունեցած հողը, և իբրև հետեւանք, երբեմն ալ անձնական ազատութիւնները: Կալուածատիրական հողերը կը մշակուէին ստրուկներու միջոցով: Աստրեստանը, ինչպէս և Բաբելոնը ստրկատիրական պետութիւններ էին: Աստրեստանի մէջ անոնք եւս առաւել անհրաժեշտութիւն դարձան, որովհետեւ փոխարինեցին Ասուրի բնակչութեան: Ստրուկներ կը մատակարարէին կայսրութեան բոլոր ազգերը: Որեւէ երկրի նուաճումէն ետքը՝ Ասուրի թագաւորները արքայական սեփականութիւն կը յայտարարէին նախկին իշխաններու, թագաւորներու կալուածները պետական սեփականութիւն կը դարձնէին մետաղի հանքերը, աղահանքերը, քաղաքները:

Խոշոր կալուածներ ունէին գինուորական հրամանատարները, որոնք հարստացեր էին կռիւներու մէջ: Ասոնք ունէին մեծածախակ ստրուկներ: Վերջիններս ամենէն ծանրը աշխատանքները կը կատարէին և հասարակութեան

ամենէն խոնարհ, արհամարուած խաւն էին: Ազատներու
առաջ փակ չէին յառաջդիմելու, հարստանալու միջոցնե-
րը: Դասային խտրականութիւն չկար, արտօնութիւններ
գոյութիւն չունէին: Կային ի հարկէ հարուստներ, աղքատ-
ներ, բայց անոնք միշտ ընկերային միեւնոյն դիրքի վրայ
չէին մնար, ասպարէզ կար առաջանալու, հասարակութեան
մէջ նորանոր դիրքեր գրաւելու իրենց ընդունակութիւն-
ներու, կարողութիւններու համապատասխան,

ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՈՒՐԱՐՏՈՒ

Ա. ԳԼՈՒԽ

ՆԱԽՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ



ՀՆԱԿՈՑՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ. — Հայաստանի մէջ կատարուած պեղումները ցոյց կու տան, որ հոն հնագոյն շրջանէն բնակչութիւն է եղեր: Հին քարէ դարու հետքերը քիչ կը նկատուին, բայց նոր քարէ դարու Հայաստանի մէջ յայտնաբերուած է լրիւ ձեւով: Պեղումները երեւան են հաներ քարէ գործիքներ, զէնքեր, դանակ, կացին, մուրճ, նիզակ, նետ ու աղեղ, զարդարանքներ, վարսակալ, ապարանջան, ուլունքներ, ականջի օղեր, գաւաթ, սափոր, կճուճ, կարասներ, աղօրիք... Ասոնք հանուած են դարարաններէն, հնագոյն բնակավայրերէն, թաղուած են եղեր մեռելներու հետ և գտնուել են երկրի խոր շերտերու մէջ: Ասոնք ունեցեր են երկար, հազարամեայ զարգացման շրջան մը՝ նախքան հասնիլը այն աստիճանին, որ մենք կը տեսնենք Հայաստանի պեղումներէն գտնուած առարկաներու, մնացորդներու մէջ: Այս զէնքերը, գործիքները ու զարդարանքները կը պատկանին այն հասարակութեան, որ մենք կը կոչենք նոր քարէ դարու հասարակութիւն:

Բայց հնագոյն այս հասարակական դրութեան նախորդեր է շրջան մը, երբ այս զէնքերը չկային, աւելի ճիշտ նոր կը մշակուէին, շատ էին պարզունակ, հասարակ և նախնական այս հասարակութեան մէջ ալ աշխատանքի բաժանում կար: Տղամարդիկ օրսորդ էին, շարունակ կը թափառէին որսի կենդանիներու ետեւէն: Կանայք տունկեր, պտուղներ, բոյսեր կը հաւաքէին: Տղամարդիկ երբեմն առատ որս կ'ունենային, երբեմն ոչ մէկ ուտելիք, ոչ մէկ որս չէին գտներ: Ապահով և անվտանգ չէր անոնց կեանքը: Կանայք կը կապուէին հողին, կը շրջագայէին, կը ծանօթանային բոյսերու հետ, կը զանազանէին վասակարն ու օգտակարը, կ'ըսպասէին տղամարդկանց վերադարձին, որոնք երբեմն առատ որսով կու գային: Մարդը կը սնանէր բնութեան բարիքներով, ան բան մը չէր ստեղծեր, չէր մշակեր, չէր ցաներ ու հերկեր: Կ'ըսպառէր այն բոլորը, ինչ որ առատօրէն բնութիւնը կու տար: Ան գիտասիչ քրիստոնքիւն ունէր, այսինքն միայն կ'ուտէր, կ'ոչնչացնէր, ինչ որ բնութեան մէջ կը գտնէր առանց բան մը աւելցնելու, ստեղծելու: Իբրեւ զէնք մարդն ունէր քարերը, որոնց քիչ մը ձեւ կու տար, կը յարմարցնէր բռնելու, ունէր նետ և սղեղ:

Որսորդ խումբը մեծ չէր. պատահական որսը չէր կըրնար մարդկային մեծ խումբեր կերակրել: Որսորդներու խումբը դիւրութեամբ կ'աճէր և կը քայքայուէր: Մարդկային կապերը ամուր և մնայուն չէին: Որսը մարդուն ոչ միայն սնունդ կու տար, միտ, այլ և կու տար իր մորթը՝ մարմինը ծածկելու, կու տար իր ոսկորը՝ զարդարանք և զէնքեր պատրաստելու, կու տար իր գանգը՝ ջուրի աման շինելու, կու տար իր արիւնը, որ երբ որսորդ մարդը խմէր, այն համոշումը կ'ունենար, որ կենդանիի բովանդակ ուժերը իր մէջ կ'ընդունէր: Որսորդութեան հետ կը միանար ձկնորսութիւնը: Երկուքի համար ալ Հայաստանը մեծ յարմարութիւններ ունէր: Հայաստանի լճերը, գետերը միշտ ձկնառատ են եղեր: Նախնական այս խումբերը

կ'ապրէին գետերու, լճերու եզերքներուն, լեռնալանջե-
րուն, աղբիւրներու մօտ: Բնական քարայրները անոնց հա-
մար պատսպարուելու, հանգիստի վայրեր էին, ամենէն
հին բնակարանները: Քարայրներ Հայաստանի մէջ շատ
կային, անոնք բնութեան ստեղծածն էին: Մարդը միայն
քիչ մը կ'ընդարձակէր, ձեւ կու տար, կը յարմարեցնէր իր
կարիքներուն: Քարայրը պէտք էր գիշերելու, ցուրտէն
պատսպարուելու, գազաններէն պաշտպանուելու համար:
Աւելի ուշ, նոր քարէ դարուն, քարայրներու պատերու,
ժայռերու վրայ մարդը կը գծագրէր զանազան նշաններ՝
գուցէ առաջին գիրը՝ իր միտքերն արտայայտող, կը նկա-
րէր իրեն ծանօթ աշխարհը, գազաններ, մարդիկ, որսի
տեսարաններ: Քարայրի մարդը արդէն կը փորձէր արտա-
յայտել իր հոգեկան աշխարհը: Այս քարայրներէն շատերը
նաեւ գերեզմանոցներ էին: Հնագոյն մարդը իր մեռելները
կը թաղէր իր իսկ բնակարան-քարայրի մէջ: Մեռածը կը
համարուէր տան անդամը, և նոյնքան խնամքի ենթակայ
էր, որքան ապրողը. ողջերու հաւասար էր մեռեալը, կը
կերակրէին և կը յիշէին: Այդպէսով սկիզբ կ'առնէր մե-
ռելներու պաշտամունքը:

Մարդու կեանքի և աշխատանքի այս պայմաններուն
կը համապատասխանէր և անոր հոգեկան աշխարհը: Այդ
հնագոյն քարէ դարի շրջանին կը մշակուէր կենդանական
վէպը, ուր բոլոր գործող դէմքերը կենդանիներն են, եր-
բեմն բնական, բայց շատ յաճախ անբնական, երեւակա-
յական կենդանիները իրենց արտակարգ ուժով: Կը կազ-
մաւորուէին հեքիաթները, ուր մարդկանց հետ միասին կ'ե-
րուան, կը խօսին կենդանիները, կը կերպարանափոխուին,
կենդանիները մարդ կը դառնան, մարդիկ կենդանի: Այդ
ժամանակներէն սկիզբ կ'առնեն առասպելները, որոնց հե-
րոսները լեցուեր էին Հայոց լեռներն ու ձորերը. հոս ի
յայտ կուգան բնութեան ուժերը՝ ամպերը, մշուշը, փոթո-
րիկը, արեւը և իր պայքարը խաւարի և մշուշի դէմ:
Նախնական մարդու հոգեկան կեանքը տեւական շարժման



մէջ է. ան կ'ըստեղծէ իր կրօնական և հոգեւոր աշխարհը: Բովանդակ բնութիւնը ան կը լեցնէ ոգիներով, ապրող և գերուժ արարածներով, որոնք ստեղծուելէն ետքը կ'իշխէին իր ստեղծողին մարդու վրայ, կը զեկավարէին անոր կեանքը:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԿԱՅՈՒՆԱՅՈՒՄ.— Շուրջ երեք հազար թուականին նախնական այս հասարակութիւնը՝ թափառիկ և անկայուն, կը դառնայ անապատայան և երկրագործ. անոր կեանքը կը կայունանայ: Անոր գործիքները կը կատարելագործուին, կը բազմանան, նոր ձեւ կ'ըստանան: Այդ բանին համար Հայաստանը կը հայթայթէր միջոցներ՝ ընտիր քար՝ կայծքար, թերթաքար, աւազաքար: Մարդը կը տաշէ, կը յղկէ այս քարերը, կը ծակէ. կոթ կը շինէ, զանազան ձեւեր կուտայ, կը յարմարեցնէ բռնելուն, կը սրէ, կացին, սղոց կը շինէ, ձեռնամուրձ և ձեռնադաց: Այս շրջանին զարդարանքներն աւելի ճոխ կը դառնան, աւելի բազմազան — ոսկորներ, խխունջներ, զանազան բուսական ներկեր:

Ամենէն ուշագրաւը անօթներու պատրաստութիւնն է. սկիզբը կաւանօթները կը շինէին, կը յղկէին ձեռքով, ան դուրս կուգար կոպիտ, անհարթ. ապա գործի կը դնէին բրուտի անիւր: Կաւանօթները կը զարդարէին, գծեր կը քաշէին, կը նաշխէին: Աւելի ուշ կը գծէին ամբողջական մարմիններ, տեսարաններ՝ կենդանական, մարդկային ու բուսական աշխարհէն:

Անասնապահ այս հասարակութիւնը ընտելացուց եզր, կովը, էջը, ոչխարն ու այծը: Աշխատանքի նոր բաժանում տեղի ունեցաւ. տղամարդիկ անասունները կը պահէին, արօտատեղիներ կ'որոնէին, կը հսկէին որ իրենց հարստութեան աղբիւրը՝ հօտը՝ վտանգի չենթարկուի, չզողցուի: Անասնապահը միշտ գինուած էր, միշտ պատրաստ կուռելու: Կանայք, տունը կը մնային, երեսներուն կը մեծցրնէին, կենդանիները կը կթէին, կաթնեղէնի զանազան ուտելիքներ կը պատրաստէին: Մարդը կը դառնար կաթ-

նակեր, մսակեր: Այդպէսով անոր սնունդը աւելի տպովով կը դառնար, աւելի բազմազան:

Մարդոց թիւը աւելի մեծցաւ, աշխատաւորներու աւելի մեծ կարիք զգացուեցաւ, միաժամանակ կերակրելը աւելի դիւրին դարձաւ: Անասնապահութեան միացաւ երկրագործութիւնը: Ատոր համար անհրաժեշտ էր, որ մարդկային հասարակութիւնը կապուած մնար միեւնոյն վայրին, ստիկ ստանար իր սնունդը: Երկրագործութեան ժամանակ հողն էր հարստութեան աղբիւրը, անոր հետ կապուած կ'ըլլար անասնապահութիւնը: Հայաստանի մէջ կատարուած պեղումները մեզ կուտան հատիկներ, ամբողջական հասկերու մնացորդներ: Երկրագործութեան հետ կը զարգանային արհեստները: Հայաստանի աղահանքերու մօտ հողի շերտերու մէջ գտնուած են քարէ գործիքներ՝ մուրճեր, քարէ գունդեր, որոնցմով հին մարդը աղ կը կտրէր, վայոց Ձորի մէջ գտնուած են քարէ սղոցներ, դանակներ: Կոտայքի դամբարաններու մէջ գտած են կաւէ ամաններ, դանակներ, քարէ սուր շեղրեր, քերիչներ, մուրճեր, կացիններ, ոսկրէ բիզեր և ասեղներ: Նոյն նոր քարէ դարու մշակոյթի կեդրոններ են եղած Արագածի լանջերը, ուր գտնուած են քարէ հակայ վիշուպներ, օձեր:

ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ. — Ամբողջ Արարատեան դաշտի մէջ գտնուած են հինաւուրց բերդերու, ամրոյններու մնացորդներ. անոնք կառուցուած են մեծ, անտաշ քարերէ: Անոնք հաւանաբար նոր քարէ դարու շինութիւններ են: Բարայրներէն դուրս գալով մարդիկ կ'ապրէին գետնափոր բնակարաններու մէջ, որ Հայաստանի պէս պաղ երկրի մէջ լաւագոյն ապաստարանն էր:

Պատմական շրջանին ալ Հայաստանի բնակիչները կ'ապրէին այդ ձեւի բնակարաններու մէջ: Նոր քարէ դարու մարդը կը կառուցէր ամրոցներ, շրջապարիսպներ, որոնք կը ծառայէին իրեն և իր անասուններու համար որպէս ապաստարան: Այսպիսի ամրոցներ կը շինէին լեռներու լանջերուն. վերը, բարձունքի վրայ կը կառուցէին ամրոցը, ապա լանջերը՝ վարէն վեր կը շրջապատէին պա-

քիսպներով երբեմն հինգ-վեց շարքով: Պարսպի պատերը կառուցուած էին անտաշ հսկայ քարերով, որոնք կը բերէին շրջակայքէն, կը դասաւորէին իրար վրայ. այդ մեծ քարերու ճեղքերը միայն կը գոցէին աւելի փոքր քարէ կտորներով: Պարիսպները երբեմն հինգ-վեց մեթր լայնութիւն կ'ունենային: Ասոնք բնակարաններ չէին: Վարը լեռան տակը ընդարձակ դաշտերու մէջ կ'ապրէր երկրագործ և անասնապահ հասարակութիւն. ան վտանգի պահուն իր անասուններով, ընտանիքով և ունեցուածքով կը հաւաքուէր պարիսպներէն ներս, կը պաշտպանուէր և թշնամիին կը դիմադրէր պարիսպներու տակ: Վերը մեծ և անտաշ քարերով կառուցուած ամրոցի մէջ կ'ապրէր միայն տոհմապետը: Այսպիսի ամրոցներու, պարիսպներու հետքեր գտնուած են Էջմիածնի, Շիրակի շրջաններուն մէջ, Արագածի շուրջ, Սեւանի լիճը շրջապատող լեռներու լանջերուն: Այս շինուածքներու մեծ քարերը երբեմն կը զարդարէին նկարներով, գծերով և պատկերագրերով: Այս ցոյց կուտայ, որ Հայաստանը նոր քարէ դարուն կ'ապրէր շինարարական կեանքով, ունէր իր հմուտ արհեստաւորները և որոշ կազմակերպութիւն, հանրային ուժ՝ այս աշխատանքները գլուխ բերելու համար:

ԿՐՕՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՅՈՒՄՆԵՐ ԵՒ ԹԱՂՈՒՄ.— Ըսինք որ հին քարէ դարու մարդիկ մեռելները կը թաղէին քարայրներու մէջ. նոր քարէ դարուն կը հանդիպինք թաղումներու բազմազան ձեւերու: Սկիզբը դիակները կը թաղէին ուղղակի հողի մէջ, հետագային դիակը կը տեղաւորէին մեծ կարաններու մէջ. կարասը կը ծառայէր իբրև դագաղ: Հայաստանի մէջ գոյութիւն ունէր նաև դիակը այրելու սովորութիւնը: Այս կը նշանակէ, որ մեր հայրենիքի մէջ հնագոյն ժամանակներէն կ'ապրէին երկու տարբեր ժողովուրդներ, որոնց թաղման ձեւերն ալ տարբեր էին, մէկը դիակները կը թաղէր, միւսը կ'այրէր: Շատ վայրերու մէջ գերեզմաններու յատակներուն և կողքերուն շարուած են անտաշ քարեր. գերեզմանն ալ ծածկուած է

քարերով. այսպէսով կ'ըստեղծուէր արկղաձեւ դամբարան մը, որուն մէջ կը հանաչէր մեռելը: Երբեմն կը հանդիպինք խմբական գերեզմաններու՝ քանի մը տասնեակ դիակներ իրարմէ քիչ մը հեռու թաղուած: Հաւանաբար ասոնք տոհմական գերեզմաններ են: Դիակներու հետ գերեզմաններու մէջ կը դնէին մուրճեր, սեպեր, քերիչներ, կաւէ ամաններ, որոնք կը պատկանէին մեռածին և մահէն ետքըն ալ անոր կարիքներուն պէտք է ծառայէին: Գերեզմաններէն հանուած են նոյնպէս դանազան կենդանիներու օսկորներ. սանրեր, դանակներ: Մեռած մարդու գերեզմանի մէջ այս զէնքերու և գործիքներու գոյութիւնը կ'ապացուցէ, որ նոր քարէ դարեան հասարակութիւնը այս կամ այն չափով ունէր ուրիշ կեանքի մը պատկերացումը, որ շարունակութիւնն էր ըլլալու այս կեանքին: Մարդը այն կեանքի մէջ ալ պէտք է ունենար այն բոլոր յարմարութիւնները, որոնցով օժտուած էր այս կեանքի մէջ: Ուրիշ կեանքի մը գաղափարը մարդու մէջ կը մշակուէր դեռ եւս հին քարէ դարի շրջանէն, բայց աւելի կը պայծառանար նոր քարէ դարին:

Թաղման և մեռելներու պաշտամունքին հետ կը կապուին այն բազմաթիւ և բազմատեսակ յուշարձանները, որոնք ցրուած են Հայաստանի բոլոր կողմերը և որոնք յայտնի են Դոլմեհններ, Մեհնիւրներ և Կրովիլսներ անուաներով և որոնք ընդհանուր անուանով կը կոչուին Միգալիքներ, այսինքն Բեմ Բարայից կոթողներ: Այս յուշարձաննորը զարգացան Հայաստանի առատ և բազմագոյն և բազմերանգ քարերու շնորհիւ: Հնագոյն մարդը միայն իր ստեղծագործ աշխատանքը կը գործադրէր անոր մշակման, անոր ձեւաւորման և իր կրօնական ապրումները արտայայտելու համար: Մեգալիթեան այս քարակոթողները յատուկ են նոր քարէ դարերուն: Դոլմեհններ կառուցուած են խոշոր անասն քարերէ. անոնք երկուքէն չորս մեթր երկարութիւն ունին և մէկ-երկու մեթր լայնութիւն: Այս հսկայ քարերու մէկ մասը մխրճուած է գետնի մէջ: Անոնք

ծածկուած են լայն և երկար սալաքարերով: Այս կազմու-
թեամբ անոնք կը թողուն գերեզմանի տպաւորութիւն: Դոլմենները միշտ համախումբ են, իրարու մօտ կուտակուած
կը կազմեն հողաբլուրներ. հաւանական է, որ անոնք տոհ-
մական գերեզմաններու յուշարձանները ըլլան: Այսպիսի
դոլմեններ ցրուած են ամբողջ Եւրոպայի մէջ, անոնք տա-
րածուած են նաև Հայաստանի շատ մասերուն մէջ: Դոլ-
մեններու հետ են և մեցնիւրներ՝ որոնք ամբողջական, մի-
ակառուր. դէպի վեր բարձրացող, ուղղահայեաց քարեր են՝
վարի ծայրով անկուած հողի մէջ. կրովելիները շրջանաձև,
իրարու քով շարուած խոշոր քարակոյտեր են, երբեմն ա-
նոնց մէջ կը բարձրանայ մենհիրը:

Հին ՄԱՐԴՈՒ ՀԱԻԱՏԻՔ.— Թէ թաղման ձևերը, թէ
գերեզմաններու մէջ գտնուած զէնքերն ու գործիքները,
ինչպէս և ուտելիքները, և թէ հսկայ յուշարձանները՝ նախ-
նական մարդու կրօնական աշխարհայեցողութեան հետ են
կապուած: Այդ բոլորը ոգեպաշտութիւն է. նոր քարէ դա-
րու մարդը, կը հաւատար, որ բովանդակ բնութիւնը լեց-
ուած է ոգիներով. այդ ոգին ան կը տեսնէ նաև իր մէջ:
Մարդու մարմինն ալ ոգիներու բնակարան է. այդ ոգին
երբեմն դուրս կուգայ մարմնէն, կը թափառի, ապա նո-
րէն հանգիստ կ'ըստանայ իր մարմնին մէջ: Ոգին մարդու
էական մասն է, ան շունչն է, կենդանութեան սկզբունքը:
Բայց ոգին առանց մարմնի միշտ կը մնար թափառական,
կը դառնայ չար ոգի, հանգստի տեղ չի գտներ և միշտ կը
հալածէ տոհմակիցները: Նախնական մարդը կը ֆանայ դի-
ակը պահել անարատ, և կը հետեւի ուշադիր որ ան չփրտ-
տի, չնեխի: Կը թաղէ չոր հողերու մէջ, կը ծածկէ սալ
քարերով, երբեմն կը դնէ քարէ դագաղի մէջ, կը փաթթէ
խաիրներու մէջ: Տոհմակիցները մեռած ազգականին կ'օժ-
տեն ամեն յարմարութիւններով՝ իր գործածած զէնքերն
ու գործիքները անոր հետ գերեզման կը գնեն, կուաման-
ներու մէջ ուտելիքներ և խմելիքներ կուտան. երբեմն ալ
կենդանիներով կը շրջապատեն, որ մեռած ազգակցի ուրի՛ն

գահանայ, ապրի և իրենց դէմ հալածանք չառաջացնէ: Նոր քարէ դարի մարդիկ կը հաւատան, որ այս կեանքը կը շարունակուի, որ մահ չկայ, և միւս կեանքը յար և նման է այս կեանքին: Այս հաւատն է, որ անոնց կը թելագրէ հոգալ մեռածի կարիքներու մասին: Բայց տոհմակիցները ենթակայ են մեռած ազգականներու հալածանքին, եթէ չկատարեն իրենց պարտականութիւնը: Ասոր դէմ միջոցներ կ'որոնեն մեռածի ազգակիցները: Նաեւ շատ ցեղերու մէջ կ'այրեն դիակը, այդ կերպով կը կարծեն կը կտրուի կապը մեռածի և իր տոհմակիցներու մէջ: Անոնք իրարու հետ չեն հաղորդակցիր, այլեւս ազգակիցները ազատ կ'ըլլան հալածանքներէ, որ մեռածի հոգին կը հանէ անոնց դէմ: Իսկ այն ցեղերը, որոնք թաղման սովորութիւնը կը պահեն, անոնք ալ կը քանան, որ ոգին իրենցմէ որքան կարելի է հեռու ըլլայ: Մեռածի գերեզմանին վրայ կը դնեն մեծ քարեր, անոր շուրջը քարեր կը հաւաքեն, կը կաղմեն քարակոյտեր, որով առաջ կուգար բլրակ մը: Հաւանաբար նոյն մտածումի արդիւնք են և Մենչիբրները, Դոմէնները, Կրոմլէխները:

ՀԱՍԱՐԱԳՈՒԹԻՒՆԸ.— Նախնական հասարակութիւնը շատ պարզունակ էր, աղամարդիկ շարունակ դուրան էին՝ երկրագործ և անասնապահ: Կինը կը մնար տան մէջ: Ան կը հսկէր երեսնաներուն վրայ, վառ կը պահէր օջախը, կը սպասարկէր տնային, տոհմական ոգիներուն: Կինն էր կեդրոնը և ազգակցութեան և տնտեսութեան: Ան հարեւան դաշտերը կը փորէր բահ ու բրիչով, կ'ըզբաղուէր հասարակ երկրագործութեամբ: Ազգակցութիւնը կ'որոշուէր մօր գծով, երեսնաները միայն մօրն էին, անոնք կ'ապրէին մօր հետ և իր մօշեղբայրներու հսկողութեան և պաշտպանութեան տակ: Մօր այս գերակշռութիւնը տնտեսական կեանքի մէջ և անոր գծով ազգակցութեան որոշումը, մենք կ'անուանենք մայրիօխանութիւն: Ան հասարակական կազմակերպութեան նախնական աստիճանն է, բայց որքան տնտեսութեան մէջ աղամարդու աշխատանքը առաջնութիւն

կ'ըստանայ, նոյնքան և հօրենական իշխանութիւնը կը հաստատուի: Մայրը դուրս կուգայ իր հօր և եղբայր-նեբու շրջանակէն, կ'երթայ իր ամուսինին մօտ և կ'ապրի անոր հովանիին տակ:

Աշխատանքի մէջ երկրագործութիւնը առաջնակարգ դեր կը խաղայ. արօրը, լծկան եզները, հերկելն ու ցանելը կը յեղաշրջեն մարդու կեանքը: Այս բոլորով կ'ըզբաղուին սղամարդիկ, որոնք աւելի ուժեղ են տոկուն, ընդունակ ծանր աշխատանքի: Հասարակութեան մէջ ան է, որ առաջնակարգ դեր կը խաղայ: Կինը կը կապուի սղամարդուն և կ'ենթարկուի անոր: Կ'ըսկսուի հայրիւթեանն ուրիշը: Թէ մայրիշխանութեան և թէ հայրիշխանութեան շրջանին հասարակութիւնը կազմակերպուած կ'ըլլայ տոհմերով:

ՏՈՀ ՄԸ. — Տոհմը արենակիցներու միութիւն մըն է: Տոհմի անդամները կը հաւատան, որ իրենք ունին ընդհանուր ծագում, սերուած են մէկ նախահօրէ կամ նախամօրէ: Երբեմն ալ անոնք իրենց ծագումը կը կապեն որևէ կենդանիի, բոյսի կամ առարկայի հետ: Կը հաւատան, որ այդ կենդանիի և բոյսի ու իրենց մէջ կայ ազգակցական կապ: Այդ պարագային կենդանին, բոյսը կը դառնան անոնց հովանաւոր ոգիները: Տոհմը կը պաշտէ իր հովանաւոր ոգին, զոհեր կը մատուցանէ անոր, չուտեր անոր միսը՝ եթէ կենդանի մըն է, չի կտրեր ծառը, բոյսը: Տոհմի գլուխը կանգնած է տոհմապետը, որ իր իշխանութիւնը կ'ըստանայ տոհմի հովանաւոր ոգիէն, ան բազմազան գործեր ունի կատարելիք, տոհմի ներքին խաղաղութեան վրայ կը հակէ, տոհմի անդամները հաշտ պիտի ըլլան իրարու հետ, հոն խաղաղութիւնը պէտք է իշխէ, այդ ներքին խաղաղութենէն կախուած է անոր ուժը: Տոհմապետը դատաւոր է, ան կը հարթէ բոլոր վէճերը: Ան հովանաւոր տոհմական ոգիին հետ կապ կը պահէ, ան միայն կը հասկնայ անոր լիզուն, կ'աղօթէ, խնդիրներ կ'ընէ անոր և հրահանգներ կ'ըստանայ, զոհ կը մատուցանէ: Անտեսանելի ոգիին գերը-

նական կարողութիւնները աստիճանաբար կը խտանան տոհմապետի մէջ, ան կ'օժտուի արտակարգ կարողութեամբ, զօրութեամբ, ինչ որ չունին տոհմի միւս անդամները: Ան կրնայ իրեն ննթարկել բնութեան ուժերը, պայքարիլ մահուան դէմ: Տոհմապետը զօրավար է, մարտիկ, իր տոհմակիցներու գլուխն անցած կը պաշտպանէ իր արօտատեղիները, դաշտերը, անասունները, ջուրը: Երբեմն ալ ան նուաճումներ կ'ընէ, կ'ընդարձակէ իր իշխանութիւնը:

Տոհմի բոլոր անդամները նոյն իրաւունքները կը վայելեն: Տոհմը հաւասարներու հասարակութիւն է: Բոլորն աշխատողներ են և զինուորներ, չկայ հողի անասուններու մասնաւոր սեփականութիւն: Նախադարեան այս համայնական կեանքը ժողովուրդներու զարգացման մէկ աստիճանն է միայն: Տղամարդիկ որպէս իրենց սեփականութիւն ունին իրենց գէնքերը յսկ կանայք իրենց զարդեղէնները: Այս բոլորն ալ մեռելներու հետ կը թաղեն: Տոհմապետը տոհմէն վեր չէ, ան իշխան չէ. այլ վարիչ կարգ ու կանոն սերմանող, հաւասարութեան սկզբունքի պաշտպան: Բայց հնադարեան այս հասարակութիւնը աստիճանաբար փոփոխութեան կ'ենթարկուի, կ'ըստեղծուին նոր կարգեր, նոր յարաբերութիւններ թէ մարդկանց և թէ տնտեսութեան մէջ:

ԺՈՂՈՎՈՒՄՆԵՆԻՒՄ.— Անյիշելի ժամանակներէն Հայաստանը եղեր է զանազան ցեղերու, ցեղախումբերու ապաստան: Իր լեռնային դիրքը, անսահման կտրտուածքները, անընդախոր ձորերը, քարանձաւները լաւագոյն թաքտանոցներն են եղած ամեն կողմէն դաղթողներու: Անոնք շիւներ են, կառուցեր նոր քարէ դարու ամրոցները, պարիսպները, սրբատեղիները, յուշարձանները, զարդարանքները, քարէ գէնքերն ու գործիքները, գեանափոր տաւները և ամանեղէնները: Պեղումներու յայտնաբերած կմախքներու ուսումնասիրութիւնը ցոյց կուտայ, որ Ուրարտացիներէն և Հայերէն առաջ Հայաստանը ունէր բնակչութիւն մը, որ արիւնակցօրէն կապուած էր Մերձաւոր Արեւելքի լեռնային

գօտիի բնակչութեանց հետ: Ան միակը չէր, բայց հնագոյնն էր:

Տեսանք, որ գլխութիւնը կ'անուանէ զանոնք Ազիա-ճիկներ, որ ազգախօսական գաղափար չէ, այլ տեղագրական: Անոնց հաւաքման հնագոյն կեդրոնը եզեր է Փոքր Ասիան: Ոմանք կ'ըսեն, որ անոնք եկած են Միջին Ասիայէն, տարածուեր են ընդարձակ տարածութեան վրայ՝ Իրան, Հայաստան, Փոքր Ասիա, Պալքաններէն մինչև Փիրենեան լեռնաշղթան: Եւ որովհետեւ թէ Ասիոյ և թէ Եւրոպայի մէջ անոնք խմբուեր են լեռնային շրջաններու մէջ, հետեւաբար անոնք կը կոչուին նաև Ալպեաններ: Տեսանք, որ ոմանք ալ ասոնց կուտան հայասից անունը, ի նկատի ունենալով, որ անոնց յատկանշող բոլոր գծերը լաւապէս պահուեր են Հայերու մէջ: Ինչ անուանով ալ անոնց որակելու ըլլանք՝ մէկ բոն կը մնայ ճիշդ և կարևոր, այն որ մարդկային ուրոյն յատկանիշներու տէր ցեղեր կ'ապրէին հնագոյն շրջաններէն՝ Մերձաւոր Արեւելքի լեռնային գօտիին մէջ: Անոնք ազգակից էին հարաւային Եւրոպայի բնակիչներուն, որոնք Միջերկրականի արեւմտեան շրջան մէջ էին Միջերկրականեան կոչուած ժողովուրդներու հետ: Այս ազիանիկները կամ հայատիպերը եկուոր էին, բայց ուրկէ եկած ըլլալնին չենք գիտեր: Միայն կրնանք ըսել, որ անոնք իրենց մարդաբանական յատկանիշները՝ կարճ, լայն գլուխ՝ արծուաքիթ, միջին հասակ, թուխ մորթի գոյն, սև աչքեր՝ մշակեր են լեռնային գօտիի, իրենց աւանձնութեան, մեկուսացման մէջ: Այդ ուրոյն յատկանիշները մշակելու, ամեն կողմէն ինքնորոշելու համար՝ անոնք հազարաւոր տարիներ ապրած պէտք է ըլլան միեւնոյն հողի, հայրենիքի մէջ: Հաւանաբար այս ազիանիկները Հայաստանի մէջ ապաստանած ըլլան շատ հին ժամանակներէն, առնուազն նոր քարէ դարու սկիզբներուն և իրենց կը պատկանի այդ գարաշրջանի նրբական և հոգեւոր մշակոյթը գերեզմանները, մեծ քարեան յուշարձանները, անասնապահութեան անցնիլը և երկրագործութիւնը:

Բայց այս ազիանիկներէն բացի գուցէ աւելի ուշ Հայաստան են թափանցեր եւ կարգալուծ ժողովուրդներ: Ասոնց հաւաքման և ինքնորոշման վայրը եղեր է Հայաստանէն և կովկասեան լեռներէն հիւսիս՝ Սեւ և Կասպից ծովի մէջ ինկած ընդարձակ տափաստանները: Ասոնք շարունակ ուղղուեր են հարաւային դաշտավայրերը, հովիտները: Կովկասեան կիրճերով անոնք իջեր են դէպի Դուռի և Արաքսի հովիտները: Ասոնք երկարագլուխ էին, մորթի բաց գոյն ունէին, կապուտաչեայ և շիկահեր էին: Դարերու խաղաղ թափանցումի հետեւանքով Հայաստանի հիւսիսային մասի բնակչութեան ազգագրական կազմը փոխուեցաւ: Հոս, գոնէ 2000 թիւերու շուրջը բնակչութեան մեծագոյն մասը երկարագլուխ է: Դամբանային պեղումները այդ կ'ապացուցեն հիւսիսային կամ արեւելեան Հայաստանի նկատմամբ: Այդ երկարագլուխ մարդոց գերեզմաններու մէջ երեւան են բերուած պղինձէ, անագապղինձէ գէնքեր և գործիքներ: Կը նշանակէ նոր եկող զեղերը կամ դուրսը կամ Հայաստանի մէջ արդէն ծանօթ էին մետաղի գործածութեան: Սկսեր է մետաղագործութիւնը: Հիւսիսէն եկող այս երկարագլուխ ցեղերը, որ իշխող էին, ենթարկուեցան հալածանքի, ոչնչացման, անոնց թիւը Հայաստանի մէջ պակսեցաւ և նոյն վայրի մէջ ապրող ժողովուրդներու մէջ նորէն գերակշռութիւն ստացան ազիանիքները, Հայաստիպք:

Բ. ԳԼՈՒԽ

ՍՈՒԲԱՐԻ, ՀԱՅԱՍՏԱ, ՆԱՅԻՐԻ

1. ՍՈՒԲԱՐԻ

ՍՈՒԲԱՐԻ.— Ե՞որ քարէ դարուն Հայաստանի մէջ կ'ապարէին բազմաթիւ ցեղախումբեր, տոհմային միութիւններ: Այդ դարը տոհմային կարգի ձեւաւորման, կառուցման ժամանակաշրջանն է: Հայաստանի բազմաթիւ մասերու մէջ ալ տեղի կ'ունենայ տոհմական կարգերու մշակումը և յառաջացումը: Եւ տոհմային այս դրութիւնը իր գոյութիւնը կը պահէ մինչեւ պետութիւններու ծագումը: Իր սկզբնաւորութիւնն ալ պետութիւնը նման բազմաթիւ տոհմերու միութիւն մըն էր մէկ ուժեղ տոհմի գերիշխանութեան տակ: Տոհմերու այդ միութիւնն ալ իր անունը կը ստանայ տիրապետող ցեղի կամ ցեղախմբի անունէն: Երբորդ հազարամեակին Հայաստանի մէջ կ'ապարէին Սուբարիները, աւելի ճիշդ այդ անունով մեզի յայտնի տոհմային միութիւնները, որոնցմէ քիչ թէ շատ ծանօթ է ասոնց այն հատուածը, որ հաստատուեր էր Հայաստանի հարաւը, և անկէ իջեր էր հիւսիսային Միջագետք և նախ քան Սուբարիներու ու սեմական ցեղերու այս վայրերու մէջ երեւալը, մշակեր էր ընկերային ձեւեր և քաղաքակրթութիւն: Ասոց անուան հետ երբեմն կը յիշուի նաև Գութիւններու, Գութիւմի անունը: Սուբարիները՝ լաւ ռազմիկներ՝ զարգացուցին իրենց տոհմական միութիւնները, զրուակցին գետափնեայ ուրգասաբեր հովիտները, ուր անոնցմէ մաս մը անցաւ երկրագործութեան, մաս մըն ալ գինուած իշխանաւորներու առաջնորդութեամբ շարունակեց աւարով և գերեվարութեամբ զբաղուել: Լեռնալանջերուն,

բլուրներու շուրջը, աղբիւրներու մօտիկ անոնք կառուցին իրենց ամրոցները, շրջապատեցին պարիսպներով և այդ բարձրադիր դիրքերէն ալ տիրեցին դաշտերուն, հովիտներուն և իշխեցին մեծ ճանապարհներու երթուկներէն: Անոնց ծանօթ էին քանի մը արհեստներ: Մեռելները կը թաղէին սալալատակած արկղածե գերեզմաններու մէջ և կը ծածկէին քարերով: Մեռածի հետ կը թաղէին անոր զէնքերն ու զործիքները: Ասոնց թաղման ձեւերը շատ կը նմանէին հիւսիսային Հայաստանի մէջ տարածուած թաղումներուն. հոն ալ ընդհանրացած էր արկղածե գերեզմանները:

Սուբարիներու քաղաքական պատմութիւնը մեզ անյայտ է: Անոնց այն հատուածը, որ տեղաւորուեր էր հիւսիսային Միջագետքի մէջ նախ ենթարկուեր էր սուսէրական, ապա սեմական ժողովուրդներու քաղաքական և քաղաքակրթական ազդեցութեան: Այս վերջիններէն վերցուցին սեպագրերու գծածութիւնը: Օտար իշխանութիւններու հետ չէին հաշտուեր. յաճախ կ'ապստամբէին. բայց դուրսի ուժերու դէմ չկրցան ստեղծել սուբարիական ցեղերու միութիւն մը:

Հարաւային Հայաստանը կամ Սուբարիներու պետութեան այդ մասը, հետագային ինկաւ Ասորեստանի իշխանութեան տակ և ենթարկուեցաւ աւարի և կոտորածներու. սուբարիական արձանագրութիւնները կը յիշեն տասնհազարով ցեղանուններ և տեղանուններ, որոնք Սուբարիներու ժամանակներէն վերապրող ցեղեր են, և որոնց անունը սուբարիական իշխանութեան տակ որեւէ տեղ չի յիշուիր: Սուբարի ցեղախումբի գերիշխանութիւնը մոռացութեան էր տուած անոնց տոհմային անունները և տեղավայրերը: Այլ աւելի ուշ հայկական տեղանունները ցոյց կուտան այդ հին ցեղերու գոյութիւնը, որոնք հարաւային Հայաստանի մէջ ապրիւր են հազարաւոր տարիներ և Սուբարիներու քաղաքական իշխանութեան անկումէն հետքը մտեր են Միտանիի և ապա Ուրարտուի պետութեան մէջ և ալ աւելի

եաքը վերապրեր են Հայերու մէջ, դառնալով անոնց բազադրող տարրերէն մէկը: Հարաւի մէջ նման անուներ են Խորձեան-ի, Հաօսեան-ի, Հանձիթ-ի, Սասուն-ի, Աղձնի-ի եւ շատ ուրիշները: Այս անուները ցոյց կուտան նախնական տոհմեր, որոնք իրենց անուները փոխանցեր են իրենց ապրած բնավայրին: Սուբարիներու ցեղական տիրապետութիւնը թուլցաւ և քայքայուեցաւ սեմական ժողովուրդներու հիւսիսային Միջագետքի մէջ հաստատուելովը: Սուբարիները ի յայտ չբերին հաւաքական կամք և դիմադրական կորով սեմականներուն ներխուժումը կասեցնելու: Ասոնցմէ մէկ մասը սեմականացաւ, միւսները գաղթեցին հիւսիս, Հայաստան, ուր ստուարացաւ Փոքր-Ասիական տարրը: Սուբարիներու մէկ մեծ հատուածն ալ դիմեց դէպի հիւսիս-արեւմուտք, կեդրոնացաւ արեւմտեան Տիգրիսի ակունքներուն և Եփրատի մէջ տարածուող հողամասերու վրայ, իր անունն ալ տուաւ այդ վայրերուն: Ուրարտացիք այդ հողաչերտը կ'անուանէին Մուլպանի, անշուշտ կազմուած սուբարի բառէն. Հայերը Մոփս կոչեցին այդ շրջանը:

II. ՀԱՅԱՍՏԱ

ՀԱՅԱՍՏԱ.— Թէ Սուբարիներու և թէ Միտանիներու զանգուածը տեղաւորուած էր Հայաստանէն դուրս՝ Հիւսիսային Միջագետքի մէջ: Սուբարիներու քաղաքական կեդրոնն ալ այնտեղ կը գտնուէր, ինչպէս և Միտանիներունը: Անոնք ամբողջութեամբ Հայաստանի պետութիւններ չէին: Անոնք Հայաստանի սահմաններու վրայ կառուցուած տոհմացեղային միաւորներ էին՝ մէկ ցեղի հզօր իշխանութեամբ ղեկավարուող, որ երբեմն մեր հայրենիքի որոշ գաւառներն ալ կ'առնէր իր իշխանութեան տակ: Այսպէս անոնք Հայաստանի հարաւի գաւառները մասնակից կ'ընէին Միջագետքի սումէր-սեմական բարձր քաղաքակրթութեան: Բայց բուն հայկական հողերու վրայ կազմակերպուած առա-

ջին պետութիւնը ու ժողովուրդը, որոնց մասին մենք տեղեկութիւն ունինք Հայասան է: Անոր մասին կը խօսին հաթական ազբիւրները XV-րդ դարու վերջերէն: Առաջինը Թուրքիայի III. թագաւորն է, որ կը յիշէ Հայաստանի և անոր Գրանիս թագաւորի մասին: Նոյն հաթական արձանագրութիւնները կ'որոշեն Հայաստանի տեղն ու սահմանները:

Հայասան տարածուած էր Եփրատի վերին հոսանքի շուրջը, գետի երկու ափերուն: Արեւելքէն ան կը հասնէր մինչև Վանայ ծովի արեւմտեան ափերը: Եփրատէն արեւմուտք ան բռներ էր այն հողաշերտը, որ շատ աւելի ուշ պիտի կոչուէր Փոքր Հայք: Այս մասն է, որ տեւական շիման մէջ էր հաթական պետութեան հետ և կը կրէր անոր քաղաքական ու քաղաքակրթական ազդեցութիւնը: Այս մասին մէջ ալ կատարուեցաւ Հայաստանի ցեղախումբերու միացումը՝ Հաթերու տեւական ճնշման տակ: XV-րդ դարուն այս Հայասանները կազմեցին ուրոյն պետութիւն, որ կը յիշուի Ազի անուամբ: Ազի ցեղախումբը նախապէս գաղթեր էր զանազան ուղղութեամբ տոհմացեղային միութեան քայքայման հետեւանքով և հաստատուեր Հայաստանի զանազան մասերու մէջ: Հայաստանի այդ հիւսիս-արեւմտեան հատուածին է, որու կը վերաբերին հաթական արձանագրութիւններու տեղեկութիւնները: Իսկ Հայաստանի արեւելեան հատուածի մասին մենք շատ տեղեկութիւններ չունինք: Անոր պատմութիւնը սերտօրէն կը կապուի շրջապատող ցեղերու պատմութեան հետ:

Հայասանները երբեք Սեւ ծով չհասան: Անոնց և Սեւ ծովի մէջ ինկած լեռնաշխարհը գրաւեր էին Կասկասները, բարբարոս ցեղախումբ մը, որ տեւական կռիւններու մէջ էր Հաթերու հետ, այս պատճառով ան շատ քիչ ենթարկուեցաւ հաթական մշակոյթի ազդեցութեան: Հայասանները արեւելքէն, հիւսիսային Հայաստանէն սահմանակից էին իրանական ծագում ունեցող Մանդաներուն, որոնք մեծ իրումբերով բռներ էին Հայաստանի հիւսիսային նահանգները, Արածանիի երկու ափերը և Եփրատի մօտերը անոնք

հանդիպեցան Հայասաներուն: Կարելի է ըսել, որ արիւ-
կան ցեղերը, շուրջ երկու հազար թուին, ոչ միայն տա-
րածուեր էին Իրանի բարձրաւանդակին վրայ, այլ և հիւ-
սիս արեւելեան Հայաստանի մէջ և անոր բնակչութեան
մէկ ստուարաթիւ հատուածը կը կազմէին: Աւելի ուշ Մի-
տանիներու հիւսիս գաղթելու հետեւանքով այս շերտը ա-
ւելի զօրացաւ: Միայն այս հիման վրայ կարելի է մեկնա-
բանել Հայաստանի Իրանացումը, որ այնքան նկատելի է
մեր հայրենիքի պատմութեան սկզբնական շրջաններուն:

Աւելի հարաւ՝ Եփրատի արեւմտեան ափերուն՝ կը տա-
րածուէր Թեգարամա երկիրը իր Փոքր-Ասիական բնակչու-
թեամբ: XV—XIII դարերուն ան կը պարունակէր երեք
կարեւոր շրջաններ՝ Կուսմուխը, Մելիթիէն, Տել-Գարիմէն:
Ասոնց բնակիչները ցեղակից էին նախահաթերուն և Հա-
յասաներուն, բայց պահեր էին իրենց տեղական լեզուական
ուրոյն յատկութիւնները, ինկեր էին հաթական իշխանու-
թեան տակ, թէեւ յաճախ կը փորձէին ազատագրուիլ և
անկախանալ:

ՀԱՅԱՍՏԱՅԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ.— Հայասա՛ երկրի, տեղի
անուն է. ան կազմուած է երկու բառերէ, նայ արմատէն
և ուս վերջածանցէն: — Սա կը նշանակէ տեղ, երկիր, հայ-
րենիք: Ուրեմն Հայասա կը նշանակէ հայերու երկիր, հա-
յերու հայրենիք: Աս Փոքր Ասիական վերջածանց է, կը
համապատասխանէ ուրարտական -իւա ածանցին. Հաու-ինա
= Հաթերի երկիր, Նահար-ինա՛ Նահարի երկիր՝ այսինքն
գետերու երկիր: Նոյն իմաստն ունի նաև մեր Արց-իւա ա-
նունը. որ կը նշանակէ արմ երի երկիր — Արմէններ: Այս-
պէս կը պարզուի որ Հայասաները առաջ են եկած Փոքր
Ասիական միջավայրէն և նախահաթերու հետ ընդհանուր
ցեղական և լեզուական ծագում ունին: Եւ ինչպէս Փոքր
Ասիոյ հնագոյն բնակչութիւնը՝ քսանհինգերորդ դարէն են-
թարկուեցաւ հնդեւրոպացիներու արշաւանքներուն, այն-
պէս ալ Հայասան ենթարկուեր է նոյն Հնդեւրոպացիներու
լեզուական-մշակութային ազդեցութեան: Հաւանաբար XV

րդ գարունն արիական կամ արեւմտեան ծագումով ժողովուրդ մը կանգներ է տեղացիներու գլուխը և պայքարի Հաթերու դէմ: Բայց Հայասաներու արեւմտեան հատուածը Ազիները՝ Փոքր Հայքի մէջ ուժեղ և բախտորոշ հնդեւրոպականացման ենթարկուեցան քիչ մը աւելի ուշ XII րդ դարուն:

Հաթական արձանագրութիւնները Հայասաներու աճելավայրը ցոյց կուտան Փոքր Հայքի և Բարձր Հայքի մէջ, ուրկէ, ինչպէս ըսինք անոնք իջած են մինչև Վանայ լիճի ափերը: Անոնք համախմբուելու են Եփրատի երկու ափերուն, Արաքս եւ Ճորոխ գետերու ակունքներուն շուրջը: Իրենց այս նախնական հայրենիքէն Հայասաները գաղթելու են դէպի հարաւ-արեւելք. անոնց առաջ միայն այս ճամբան էր բաց, ուր անոնք չէին հանդիպելու տեղական ցեղերու և մանդաներու դիմադրութեան: Հայասաներու այս շարժումը Եփրատի ափէն դէպի արեւելք բնական սճի կամ արտաքին մէկ արշաւանքի պէտք է հետեւանք եղած ըլլայ: Ընկերային կառոյցով՝ անոնք անասնապահներ էին. միայն մէկ մասը դարձել էր նստակեաց: Գուցէ այդ անկայուն, անասնապահ խաւն էր, որ ուժեղ տոհմապետներու գլխաւորութեամբ՝ արեւելք կը շարժուէր իրեն համար նոր հայրենիք, իսկ իր հօտերուն համար ալ նոր արօտատեղիներ որոնելու: Ասոնք է, որ հասան Վանայ լիճի ափերը, գրաւեցին Բասէնը, Խնուսը, Տարօնի մէկ մասը, Բիւրակնեան լեռնաշղթան: Բայց այս գաղթուիներէն ետքն ալ Եփրատի ափերուն, Փոքր Հայքի մէջ Հայասաներու մեծ զանգուած կը մնար: Ասոնք՝ իրենց հայրենիքի մէջ առաջացուցին ցեղերու, տոհմերու միութիւն, կազմեցին առաջին պետութիւնը, որ միայն ցեղերու միութիւն էր Հայաստան մեծ ցեղային միաւորի գերիշխանութեան տակ: Ասոնք երկար ժամանակ պայքարեցան Հաթերու դէմ, երբեմն մնացին անոնց իշխանութեան տակ, երբեմն ազատագրուեցան: Այս Հայասաներն են, որ մեր պատմութեան մէջ բախտորոշ դեր պիտի կատարեն, իրենց անունը տալով

մեր հայրենիքին: Բայց նախքան մեր երկրի Հայաստան դառնալը՝ ան դարձաւ սկիզբը Նայիրի երկիր, ապա Ուրարտու:

ՀԱՅԱՍՏԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ.— Հայաստայի քաղաքական պատմութեան մասին մենք վաւերական տեղեկութիւններ ունինք Հաթերու մեծ թագաւոր Շուպիլուլումայի տարեգրութիւններէն, որոնք խմբագրուած են անոր որդի Մուրսիլ II-ի կողմէ: Նաեւ հաթ-հայասական յարաբերութեանց մասին հետաքրքիր տեղեկութիւններ կուտան այն դաշինքները, որ Շուպիլուլուման կնքեր էր հարեւան ցեղախումբերու, թագաւորներու հետ: Այս բոլորը համախմբելով, կապակցելով հետեւեալը կրնանք ըսել Հայաստայի քաղաքական հոլովոյթի մասին: Հայաստայի թագաւոր Մարիաուր դաշինք կը կնքէ Հաթերու թագաւորին հետ. դաշինքէն մեղ հասեր է միայն բեկոր մը: Անկէ կ'երեւայ, որ Մարիասի հետ Հայաստայի իշխաններն ալ դաշնակցող կողմ են եղած: Այսինքն թագաւորի դաշինքը այն չափով արժէք ունէր, որքան Հայաստայի իշխաններն ալ կը համաձայնէին և կը վաւերացնէին այդ դաշինքը: Պէտք է ենթադրել, որ այս բանը արտայայտութիւնն էր ընկերային այն կացութեան, որու մէջ կը գտնուէր Հայաստաներու հասարակութիւնը: Առաջ էր եկեր տեմերէն բարձրացող հողատէր իշխաններու խաւ մը, որ ունէր նաեւ զինական մեծ ոյժ: Այս ոյժը պէտք է ի նկատի ունենար թագաւորը թէ պատերազմի և թէ դաշինք կնքելու ժամանակ: Թագաւորի իշխանութիւնը փաստօրէն սահմանափակուած էր նոր մեծցող աւատատէրերու, նախկին ցեղապետներու ուժերով: Ասոնք շատ քիչ էին ենթակայ կեդրոնական արքայական իշխանութեան: Հայաստայի քաղաքական հոլովոյթի այս աստիճանը ամենէն նախնականն է: Բայց XVրդ դարու վերջերուն Հայաստայի մէջ իշխանութիւնը կը կեդրոնանայ և միապետութեան սկզբունքը գէթ ժամանակաւոր յաղթանակ կը տանի: Այս կեդրոնացումը տեղի կ'ունենայ Հայաստ-Ալքիի արեւմտեան մասին մէջ, որ շա-

րունակ ընդհարուհներու և շիրման մէջ էր Հաթերու հետ: Այս շրջանին մէջ Հայասաներու գինական ուժերը կ'ենթարկուէին թագաւորին՝ յաջողութեամբ պայքարելու համար Հաթերու դէմ:

ՀՈՒԿԿԱՆՆԱՇԻ ԵՒ ՇՈՒԲԻՒՈՒՂՈՒՄԱՅԻ ԴԱՇԵՆՔԸ.—

XIVրդ դարու առաջին կէսին Հայասայի վրայ կ'իշխէր Հուկկանայ թագաւորը, որ Հաթերու ամենէն ուժեղ և գործունէտ թշնամին էր: Շուրջլուլուման անոր հետ դաշինք կր կնքէ: Ան կնքուած է հաթական յաղթութենէն ետքը: Դաշինքը՝ հաթական լեզուով խմբագրուած՝ պահուած է հաթական մայրաքաղաքի դիւանատան մէջ: Ըստ դաշինքի Հայասայի թագաւորը պէտք է ամուսնանար Շուրջլուլումայի քրոջ հետ, որ պիտի ըլլար Հայասայի միակ թագուհին և իրմէ ծնած զաւակն է որ պիտի գահը ժառանգէր: Հուկկանայը կրնար ունենալ ուրիշ կանայք, բայց անոնք երկրորդական կարգի վրայ պիտի դասուէին և ոչ իրրեւ թագուհի, ոչ ալ անոնց զաւակները կրնային գահը ժառանգել: Բաղաքական տեսակէտէն հետաքրքիր է այն, որ Հայասայի թագաւորը հաթական թագաւորին ուղղած գորութեանց մէջ չէր կրնար «եղբայր» անուանել և չէր կրնար ինքնիրեն կոչել «արքայից արքայ»: Այս կը նշանակէ, որ դաշնակցող կողմերը հաւասար և նոյնիրաւ չեն նրկատուիր: Հաթական թագաւորը շատ բարձր է. Հայասայի թագաւորը ստորադաս է: Հայասան չէր կրնար դաշնակցիլ երրորդ պետութեան մը հետ եթէ այդ ցանկալի չէր հաթական մեծ թագաւորին: Հայասայի թագաւորի իրաւունքները արտաքին քաղաքականութեան մէջ սահմանափակ էին: Այս դաշինքը պարտադիր էր ոչ միայն դաշնակցող երկու թագաւորներուն, այլ և անոնց ժառանգներուն համար: Դաշինքը երկու կողմերուն ալ կը պարտադրէր փոխադարձ գինական օգնութիւն, եթէ մէկն ու մէկու գահակալութեան վտանգ սպառնար: Համաձայնութիւնը կը դրուէր երկու երկիրներու ալ «հազար աստուածներու» հովանիին տակ, որ կը նշանակէր թէ դաշինք դրժողը կը պատուհասուէր աստուածներու կողմէ:

ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԵՐ.— Այս դաշինքը Հայասան
կը դնէր ստորադաս վիճակի մէջ. ան կը գտնուէր հաթա-
կան մեծ պետութեան շրջանակին մէջ և անոր հարկատուն
էր ու վասսալը: Դաշինքը ի զօրու մնաց մինչև Շուբի-
լուլու մայի մահը: Հայասայի մէջ այս համաձայնութեան
գէմ ընդհանուր դժգոհութիւն կար. մասնաւանդ մեծ ցեղա-
պետներու և հողատէր իշխաններու կողմէ: Դժգոհներու
գլուխը կանգնեց Հայասայի իշխաններէն մէկը Անիսար:
Ան միացաւ Հաթերու մնայուն թշնամիներու կառկասնե-
րու և իշուվա իշխանութեան հետ՝ ընդգէմ Հաթերու:
Յարձակեցաւ Հաթերու վրայ, վերցուց մեծաքանակ գե-
րիներ և աւերեց հաթական պետութեան արեւելեան սահ-
մանները: Այս յաղթանակները բարձրացուցին անոր դիր-
քը Հայասական ցեղախումբերու մէջ, անոր շուրջը հա-
ւաքուեցան Հաթերէն դժգոհ բոլոր ցեղապետերը, իրենց
ուժերը արամադրեցին Անիյասին: Այս ուժերով վերջինս
ոչ միայն ամբօրէն հաստատուեցաւ Բարձր Հայքի և Փոքր
Հայքի մէջ. այլ և տարածուեցաւ աւելի արեւելք և հա-
րու՝ առնելով իր իշխանութեան տակ և Հայասաներէ նոր
տոհմա-ցեղային միաւորներ և արիական ու ազիանիկ ժո-
ղովուրդներ: Ան հիմա կը ներկայացնէր պատկառելի զին-
ւորական ուժ, ունէր աւելի քան 12,000 հետեւակ և հեծ-
եալ կռուողներ և 700 ռազմակառքեր:

Անիյասի այս յաղթանակները կը զուգադիպէին հա-
թական կայսրութեան թուլացման շրջանին: Շուբիլուլու-
մայի մահէն ետք հաթական պետութիւնը կ'իյնայ անիշ-
խանութեան մէջ: Միայն Մուրսիլի I ի գահ բարձրանա-
լովը դէպքերու ընթացքը յիստուեցաւ: Անոր արձանագ-
րութիւնները որոշ կերպով կը պատկերացնեն ժամանակի
քաղաքական դէպքերը, որոնց մէջ նշանակալից դեր կը
խաղան Հայասայի տէրերը: Մուրսիլը (1339—1318) գահ
բարձրանալով քաւական յետոյ միայն կ'ըզբողուի Հայա-
սայի գործերով: Սկիզբը ան կը բանակցի Անիյասի հետ՝
խաղաղութեամբ լուծելու վիճելի հարցերը: Մուրսիլ զբաղ-

ուած էր ուրիշ ճակատներու վրայ, ուրիշ ապստամբու-
թիւններ ճնշելու գործով: Բանագնացներու միջոցով Հա-
յասայի թագաւորէն կը պահանջէ վերադարձնել վերցու-
ցած գերիները, յարգել հին դաշինքը և ենթարկուել իր
իշխանութեան, ընդունիլ Հաթերու գերիշխանութիւնը:
Անիյասը ոչ միայն ազատագրուեր էր հաթական լուծէն,
անջատուեր էր և կառուցեր առանձին պետութիւն, այլև
չարունակ կը յարձակէր և կ'աւարէր հաթական երկիր-
ները, կը տանէր մեծաքանակ գերիներ: Մուրսիլը շատ
անգամ բողոքեր էր այդ արարքներուն դէմ, և պահանջեր
էր դադրեցնել ասպատակութիւնները և վերադարձնել ա-
ւարն ու գերիները: Անիյասը ոչ մէկ զիջում չէր ընել,
կը շարունակէր յարձակումներով թուլացնել Հաթերու պե-
տութիւնը:

ՀԱՅԱՍՏԱՅԻ ԱՆԿՈՒՄԸ.— Մուրսիլը իվերջոյ կ'ընդհատէ
բանակցութիւնը և կը պատրաստուի արշաւելու Հայասա-
մի գործերը կը կեդրոնացնէ Տիգրիսի ակունքներու մօտ:
Անգեղ բերդի շուրջը: Անոր հետ կը միանան աւելի հարաւ՝
Խարանի մէջ հաւաքուած իր բանակները: Այս մեծ զօրա-
բանակը Մուրսիլի գլխաւորութեամբ կ'ուղղուի արեւելք և
կը հասնի վանայ լճի արեւմտեան ափերը: Կը գրաւէ Ա-
րածանի հովիտը, Հայասայի հարաւ-արեւելեան նահանգ-
ները, որոնք շատ քիչ էին կապուած Հայասայի կեդրոնի՝
Փոքր Հայքի հետ: Յաղթական արշաւանքի հետեւանքով
բազմաթիւ ցեղախումբեր, բերդեր և քաղաքներ՝ պատ-
ուիրակներ կ'ուղարկեն Մուրսիլի մօտ՝ խնդրելու որ իրենց
չկողոպտէ, չըսպաննէ, այլ ընդունի իրենց իր հպատակնե-
րու շարքը: Անոնք կ'առաջարկեն ուղարկել իրենց Հա-
տուշաշ և մուծել հաթական բանակի մէջ: Հաթ թագաւո-
րը կ'ընդունի անոնց առաջարկը և միայն մէկ քաղաքէն
2000 գերի կը տանի «հետեւակ և կառամարտիկ» զօրք
ընելու համար: Վանայ լճի ափերէն ան կը թեքուի դէպի
հիւսիս-արեւմուտք և կը մտնէ Բարձր Հայքի և Ալիս ու
Եփրատ գետերի շուրջ տարածուող հողամասը, որ կը կազ-

մէր բուն Հայաստանը, Ազիի քաղաքական և ռազմական կեդրոնը: Հոս անոր առաջ կ'ելլան Հայաստանի ցեղապետները և իշխանները և կը խնդրեն՝ չկոտորել իրենց: Հետաձգութիւն այն է, որ անոր ընդառաջողը, անոր հետ բանակցողը Անի-յասը չէ, անոր անունը չի յիշուիր, ան դուրս է եկած քաղաքական սուպարէզէն սպաննութեամբ կամ յեղափոխութեամբ և իշխանութիւնն անցած է Հայաստանի ցեղապետներու ձեռքը, որոնք հիմա կը բանակցին Հաթերու հետ: Ասոնք է, որ կը խոստանան ծառայութիւն, կ'ուզեն մտնել հաթական բանակի մէջ, կը համաձայնին վերադարձնել գերիները և հարկ վճարել: Մուրսիլը այս բոլորը ի նկատի ունենալով չի կործանիր Հայաստանի քաղաքները, բայց առատորէն գերիներ կը տանի՝ իր զօրքի թիւը ըստուարացնելու համար: Ան կ'ազատէ նաեւ հաթ գերիները:

Այսպէս հաթ հայաստական յարաբերութիւնները կը մըտնեն նոր փուլի մէջ: Հաթ թագաւորը Հայաստանի իշխաններէն հաւատարմութեան երդում կը պահանջէ: Ան իր «ծառայութեան» մէջ կ'առնէ այդ իշխանները: Հայաստան այլեւս չունի կեդրոնական իշխանութիւն մը: Հաթ արքունիքը առանձին-առանձին իշխաններու, ցեղապետներու հետ կը կապուի: Անոնց վրայ կը նշանակէ ընդհանուր կառավարիչ մը՝ փոխարքայ մը:

XIV-րդ դարու վերջերէն մենք այլեւս տեղեկութիւն չունինք Հայաստանի քաղաքական կացութեան մասին: Հաթական արձանագրութիւններուն մէջ անոնց անունը այլեւս չի յիշուիր: Անոնք ոչ կազմակերպուած պետութիւն են, ոչ ալ վտանգաւոր զինական ուժ: Քաղաքականապէս անոնք կը բաժնուին բազմաթիւ իշխանութիւններու, որոնց մրցութիւնը թոյլ չի տար ուժերու նոր կեդրոնացում ստեղծելու: Այս բանին հակառակ են նաեւ հաթ թագաւորները:

Անկախ Հայաստանի անկումէն յետոյ Հաթերը սկսան հալածել անոր կենսունակ և ռազմունակ ղեկավարութիւնը: Շատերը մտան հաթական բանակները, դարձան փորձուած զինուորներ և գացին կոտելու ուրիշ ճակատներու վրայ:

Ոմանք կեդրոնացսն Հատուչաշի արքունիքի մէջ՝ աւելի մօտ ըլլալու հաթ թագաւորնեբուն, ապրելու անոնց հսկողութեան տակ, իսկ շատերն ալ լքեցին Հայասան, անցան արեւելք՝ Արածանի և Արաքսի շուրջը համախմբուեցան, բնակեցան իրանական և տեղական ազիանիկ ցեղերու հետ: Հայասայի քաղաքական քայքայման հետեանքը զգացին նաև Հաթերն իրենք: Մեծցող, արչաւող Ասորեստանը իր հարուածներն ուղղեց Տիգրիսի և Արածանի շուրջն ապրող ցեղերուն դէմ, որոնք չկրցան պաշտպանուիլ, քանի որ իրենց ուժերը սպառեր էին Հաթերու տուած հարուածներէն և տեղափոխուեմերէն: Ասորեստան դիւրութեամբ տէր դարձաւ այդ գետային շրջաններուն և առաջացաւ մինչև հաթական հողերը: Հայասայի ռազմիկները կը կոուէին Փոքր-Ասիական ուրիշ ճակատներու վրայ հաթ պետութեան պաշտպանութեան համար, մինչ իրենց հայրենիքը ռանակոխ կ'ըլլար նոր և ահաւոր թշնամիին: Ասորեստանի կողմէն: **ՀԱՅԱՍՏԱՅԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻԻՒՆԸ.**— Հայասայի ներքին կեանքի, դասերու ընկերային կազմի մասին մենք շատ քիչ բան գիտենք: Հաթական աղբիւրները այդ մասին ոչինչ կը յայտնեն: XV—XIV րդ դարերուն Հայասան արդէն կազմաւորուած հասարակութիւն էր: Ան պետութիւն էր, ունէր թագաւոր, բանակ, ցեղապետները դարձեր էին կալուածատէր իշխանութիւններ: Հասարակութիւնը շերտաւորուած էր: Հոն ուր կայ թագաւոր, իշխաններ, խոշոր հողատէրեր, ռազմի դաս, ուր կան գերիներ, քանազատներ», այլևս հոն նախնական, հաւասարներու հասարակութիւնը դոյութիւնը պահել չի կրնար:

Հայասան պետութիւն մըն էր, որ կազմուած էր բազմաթիւ տոհմա-ցեղային միաւորներէ. ասոնք լիզուակից և ցեղակից տարրերէ էին բաղկացած: Այդ պետութիւնը սոհմերու, ցեղերու իւրայատուկ դաշնակցութիւն մըն էր ամենէն զօրեղ, մեծ ցեղի իշխանութեան տակ: Ամեն տոհմա-ցեղային միաւոր ունէր իր իշխանը, որու հովանիին տակ կ'ապրէր, որու ղեկավարութեան տակ դուրս կուգար կոուի:

Այս իշխանները կը կազմէին զինուորական դասը և շարունակ կ'ուսնէին մէջ էին և իրարու և զուրախ ցեղերու հետ: Երբեմն անոնք կը հաւաքուէին գերիշխան տոհմի, ցեղի շուրջը, որու իշխանը կ'ըլլար թագաւոր, մեծ իշխան և անոր առաջնորդութեամբ կ'երթային կոուի: Ռազմի այս դասը կ'ապրէր Հայաստանի անմատչելի լեռնաշխարհի՝ ամբողջներուն, բերդերուն մէջ: Անոնք շրջապատուած էին զինակիցներով, սազմի ընկերներով, և երկրի իրական տէրերն էին: Անոնց բերդերու, զղեակներու շուրջ, որ պարսպապատ էր, աստիճանաբար կը հաւաքուէր ոչ-զինուորական հասարակութիւն մը — հովիւներ, գիւղացիներ, արհեստաւորներ, որոնք ապաստան, ապահովութիւն կ'որոնէին: Պարխապի շուրջը կը կառուցէին տուներ, արհեստանոցներ, բնակչութիւնը կ'աշխատէր մօտակայ դաշտերուն մէջ, իր հարստութիւնը կը հաւաքուէր ամբողջներու մէջ, պարխապներէ ներս: Զինուած իշխանը, իր հովանին կը տարածէր անդէն, աշխատաւոր գիւղացիներու, արհեստաւորներու վրայ, կուտար անոնց կեանքի և գոյքի ապահովութիւն: Երբ ամբողջ շուրջը այս աշխատաւորներու թիւը մեծնար՝ նոր պարխապ կը կառուցուէր ապահովութեան համար: Կ'ըստեղծուէր կեդրոն մը միջնաբերդը՝ ուր կը բնակէին իշխանն ու իր զինակիցները, յետոյ կը կազմուէր քաղաքը՝ միջնաբերդի շորս կողմը նոր պարխապի մէջ: Քաղաք և ամբողջ արհեստաւորներու ու գիւղացիներու բնակավայրերն էին:

Ըսինք որ Հայաստանի պետութիւնը տոհմերու, ցեղերու դաշնակցութիւն մըն էր, դաշնակից տոհմերու պետերը, իշխաններն էին, որ զինուոր կուտային թագաւորին և կը կազմէին անոր բանակը: Այդ իշխանները թագաւորին հետ մասնակից էին դաշինքներու, համաձայնութիւններու կընքումին: Անոնք է, որ կեդրոնական իշխանութեան անկումէն ետքը՝ մնացին իբրև երկրի իրական տէրերը և իրենց անմատչելի ամբողջներէն կը կառավարէին իրենց կալուածները և ապահովութիւն կուտային հովիւներուն,

գիւղացիներուն: Հաթական արձանագրութիւնները կը յիշեն թազմաթիւ քաղաքներու անուաններ, որոնք իրօք մեծ ու փոքր գիւղեր են, աւաններ կառուցուած ամրոցներու, դղեակներու, բերդերու շուրջը: Բերդերու ամրոցներու շուրջը կը տարածուէին ընդարձակ դաշտեր, արտեր, արօտավայրեր: Հաւանաբար անոնք սեփականութիւնն էին բերդատէրերու. այդ հողերու վրայ կ'աշխատէին գիւղացիները, որոնց իրաւական կացութեան մասին մենք տեղեկութիւն չունինք:

ԳՐՕՆԸ.— Տեսանք, որ Հաթ-Հայասա դաշինքի պահպանումը կը դրուէր երկու կողմերու աստուածներու հովանիի տակ: Դաշնագրի բեկոր մը պահեր է Հայասայի աստուածներու անուանները: Կ'երեւի, որ ամեն քաղաք, աւան և ամրոց ունէր իր հովանաւոր աստուածը: Հայասայի աստուածները մեծ մասամբ բնութեան հետ են կապուած և Հայասայի բնակչութիւնը բնապաշտ է: Ան կը գտնուի հաթական-փոքր-ասիական կրօնական գաղափարներու շրջանակի մէջ: Անոնք կը պաշտէին Տեօուբը, հաթական աշխարհի մեծագոյն աստուածը: Ան Պախուդէա քաղաքի աստուածն էր, որու պաշտամունքը սակայն ընդհանրացած էր ամբողջ Հայասայի մէջ: Հայասայի մէջ Տէշուբի պաշտամունքը փաստ է, որ իրենք Հայասաները ցեղագրօրէն Փոքր Ասիական միջավայրին կը պատկանէին: Իօտարը կը յիշուի իբրև Պագտէս քաղաքի աստուած: Գիտենք, որ ան ասուրա-բաբելական աստուածուհին է, անոր պաշտամունքն ալ ընդհանրացած էր արեւելքի մէջ: Փոքր Ասիոյ և ընդհանրապէս լեռնային գօտիի մէջ իշտարի պաշտամունքը մուտք կը գործէր սեմական գաղթականներու միջոցով: Ինչպէս Հայասայի ժողովուրդը բազմաշերտ էր, պէտք է ենթադրել, որ անոր կրօնական աշխարհն ալ, աստուածներն ալ բարդ ծագում ունէին: Ազգագրական իւրաքանչիւր միաւոր իր հետ բերեր էր աստուածներու շարք մը: Այդպէս էր նաև Հաթերու և Միտանիներու մօտ: Իշխանութեան կեդրոնացումը, բոլոր ցեղերու աստի-

ճանական ձուլումը պէտք է ընդհանրացնէր այս բազմաթիւ աստուածներէն մէկուն պաշտամունքը, բայց կրօնական հոլովոյթի այդ աստիճանի մասին մենք տեղեկութիւն չունինք: Քաղաքական զարգացման փուլերն ալ մեզ պարզ չեն: Հայասաներու կրօնական գաղափարներու հոլովոյթը մնաց անկատար, թերի: Անշուշտ այս բազմաթիւ աստուածներ պէտք է ունենային իրենց տաճարները. ինչպէս արեւելքի ուրիշ վայրերու մէջ և հոս ալ անոնք կցուած պէտք է ըլլային իշխանական պալատին, ամրոցին: Հաւանաբար իշխանը այդ աստուծոյ քրմապետն էր և անոր պայծառացման, անոր հեղինակութեան համար հոգացողը: Տաճարը, աստուածը երեւի ունէր նաև իր նիւթական հարքսուքիւնը:

III. ՆԱՅԻՐԻ ԺՈՎՈՒՐԴՆԵՐ

ԱՆԻՇԵԱՆՈՒԹԻԻՆ ԸՄԻՏԱՆԻ ԱՆԿՈՒՄԷՆ ԵՏՔԸ. — XI V—XIII-րդ դարերը Մերձուոր Արեւելքի լեռնային գօտիի մէջ քաղաքական մեծ յեղաշրջումներու դարեր են: XIV-րդ դարի վերջին կ'իյնայ Միտանի պիտուքիւնը. գըրեթէ միաժամանակ Հայասայի պետութիւնը կը դադրի գոյութիւն ունենալէ: Այս երկու պետութիւններու անկումը կը կատարուի Հայթերու ձեռքով: Բայց շահուողները կ'ըլլան միայն Ասուրները, որ հիւսիսային Միջագետքի արեւելեան մասին մէջ կը կազմակերպուին որպէս մեծ պետութիւն: XIV-րդ դարէն Ասորեստանի պատմական առաքելութիւնը կ'ըլլայ թոյլ չտալ, որ հնդեւրոպական ցեղախումբերը՝ հիւսիսէն և արեւելքէն իջնան հարաւ, ու տիրեն սեմական աշխարհին: Ան կը գառնայ քանի մը դար շարունակ սեմական աշխարհի պաշտպանը և անոր բոլոր ժողովուրդները մէկ իշխանութեան տակ հաւաքողը: Որքան ասեն գոյութիւն ունէր Միտանին, այնքան ասեն Սուբարիներուն և Միտանիներուն վտանգ չէր ըսպառնար: Բայց Միտանիի անկումէն ետք կացութիւնը կը

փոխուելի: Ժամանակաւոր անիշխանութենէն կ'օգտուին սե-
մական վաչկատուները, արամէական ցեղերը. կը բարձրա-
նան Եփրատի ափերը և կը հաստատուին հիւսիսային Մի-
ջագետքի մէջ: Միտանի-Սուբարի քաղաքները և գիւղերը
կը կործանուին, վաչկատուները կը շարժուին հիւսիս և կը
ճնշեն Միտանի բնակչութեան վրայ: Արամէական ցեղերը
կը մտնեն Խարուր գետի հովիտը, կը հասնին անոր ա-
կունքները և նախ քան նստակեաց դառնալը կ'աւերէն և
կ'աւարեն ամեն ինչ: Վաչուզանին կը կործանուի: Արա-
մէական վաչկատուն պետ մը XI-րդ դարու սկիզբները Մի-
տանիի աւերակներուն վրայ կը կառուցէ սեմական իշխա-
նութիւն մը: Այս անիշխանութեան հետեւանքով հիւսիսա-
յին Միջագետքի բնակչութեան՝ Միտանիներու եւ Սուբա-
րիներու մեծ մասը հարաւէն հիւսիս կը քաշուի, աւելի ա-
պահով վայրեր կ'որոնէ Տաւրոսեան լեռներու մէջ և անոր
հիւսիսը: Ասոր հետեւանքով Փոքր-Ասիական և արիական
աարքը կը թռչնայ Հիւսիսային Միջագետքի մէջ. ընդ-
հակառակն սեմական աարքը կը զօրանայ: Սուբարի Մի-
տանիները հիւսիսային Միջագետքէն դուրս ընելը մեծ
գաղթաշարժի միայն առաջին փուլն է: Ասորեստանցիք կը
շարունակեն այդ դործը: Անոնք կը գրաւեն Խարուրի ե-
զերքները, Հիւսիսային Միջագետքը, վերջ կուտան Արա-
մէացիներու ստեղծած անիշխանութեան և կը հասնին Մի-
տանիներու հետեւէն: Անոնք շարունակ պայքարելով Տիգ-
րիսի ակունքներու շուրջը հաստատուած բնակչութեանց
հետ՝ անոնց կը քշեն հիւսիս:

ՆԱՅԻՐԻ — Ասորեստանի արձանագրութեանց մէջ մենք
կը հանդիպինք Նայիրի անունին: Այսպէս կը կոչուէր Ա-
րեւմտեան Տիգրիսի աւազանը: Տիգլաթ-Պարսուար I-ի Ժա-
մանակ XI-րդ դարուն Նայիրին քաղաքական գաղափար է.
քսաներեք թագաւորներ միացեր էին դիմադրելու համար
Ասորեստանին: Ան իր մէջ էր առած Տիգրիսէն դէպի հիւ-
սիս գտնուող հողերը մինչեւ Արածանի գետի միջին հոսան-
քը, մինչեւ Մանազկերտ և վանայ լիճի ափերը: Վերջինս

կը կոչուէր «Նայիրի ծով»։ Այս հողաշերտը երկու դար առաջ կը պատկանէր Հայաստաներուն. ինչպէս կ'երեւի անոնք լքեր էին և հոտեղ կազմակերպուած էր նոր իշխանութիւն Նայիրեան իշխաններու դաւեակցութիւնը։ Նայիրեան այս իշխանութիւնները հարաւէն գաղթող Միտանացիներու ուժերու շնորհիւ աւելի հզօրացան, ռազմապէս մեծցան։ Ասոնք էին որ բերին որոշ տեղանուններ և տուին նոր վայրերուն։ XIV-րդ և XIII-րդ դարերուն «Նայիրի երկիր»ը կը կոչուէր Խաբուր և Բալիս գետերու աւազանը. արեւմուտքէն ան կը հասնէր մինչև Եփրատ, կեդրոնը Տիրպէթիւրի դաշտն էր։ XI-րդ դարուն այդ անունը կը տրուէր արեւմտեան Տիգրիսի ակունքներու և Արածանիի մէջ ինկած հողամասին։

Աս կը նշանակէ, որ Նայիրիի ցեղերը սեմական ժողովուրդներու՝ Արամէացիներու և Ասորեստանցիներու ճընշման տակ հետզհետէ քաշուեցան հիւսիս՝ հայկական լեռնաշխարհի արեւմտեան և հարաւի շրջանները. անոնք նոր երկիրներն ալ վերակոչեցին Նայիրի։ Այս գաղթը կատարուեցաւ աստիճանաբար. առաջին կայանը Տիգրիսի միջին հովիտն էր. երկրորդ կայանը՝ Արածանի հովիտը. գաղթողները ցրուեցան Վանայ լիճի շուրջ։ Այսպիսով Հայաստանը ցայիւրացաւ։ Դրսեկներուն այս երկիրը բոլորովին անձանօթ չէր։ Հարաւային Հայաստանը մաս կը կազմէր Միտանի պետութեան։ Տեղական ցեղերու որոշ մասը լեզուական և ցեղական կապեր ունէր թէ՛ Փոքր-Ասիական Սուրարիներու և թէ՛ արիական Միտանիներու հետ։ Ասոնց երեւալը, զանգուածային գաղթը կը մեծցնէ բնիկներու ռազմունակութիւնը. եկողները կը բերեն վարչական և ռազմական մեծ փորձառութիւն։ Ասոնց՝ Վանայ լիճի և Արածանիի ափերուն հաստատուելով կ'ուժեղնայ Նայիրեան ցեղերու դաւեակցութիւնը։ Այս միութիւնը կանոնաւոր և սիւսական պայքար կը մղէ Ասորեստանի դէմ, որ գաղթողներու ետեւէն ինքն ալ կը թափանցէ սկիզբը Տիգրիսի, ապա Արածանիի հովիտը։ Սկիզբը Նայիրեան այս դաշնակցութեան

մէջ կը մտնեն 23, ապա 60 «Թագաւորներ» որոնց մասին կը յիշէ Տիգլաթ-Պալասարը իր արձանագրութեան մէջ: Ան պարտութեան կը մատնէ ամենքն ալ և կը հասնի մինչեւ Մանազկերտ. հոն կը կանդնեցնէ արձանագրութիւն մը, որուն մէջ Վանայ ծովը կ' նուանէ «Նայիրի ծով»: Այս արչաւանքի հետեւանքով Ասորեստանցիք հաւանաբար հասան Եփրատի ափերը, բռնեցին հաթական աշխարհի ձախ թեւը: Բայց Եփրատը չանցան, այլ դէպի հիւսիս արեւելք դառնալով Քարձրացան Արածանիի ափերով մինչև Բագրեւանդ, գրաւելով հարաւային Հայաստանի միծագոյն մասը: Սակայն Ասորեստանցիք թէ այս անգամ և թէ աւելի ուշ չհաստատուեցան Հայաստանի մէջ. անոնք միայն կ'աւարէին, կ'աւերէին և գերիներ կր տանէին: Աւելի ուշ անոնք ջանացին, որ հայկական բարձրաւանդակի վրայ ռազմունակ մեծ ուժ մը չստեղծուի իրենց թիկունքը, բայց այս ալ չյաջողուեցաւ անոնց:

Ասորեստանեան արձանագրութեանց մէջ Նայիրեան դաշնակցութեան անդամները կը կոչուէին «քազաւորներ»: XIII-րդ դարուն Սալմանասար I կը գրաւէ անոնց յիսուն քաղաքները: Եթէ ի նկատի ունենանք, որ Նայիրեան ցեղերու միութիւնը բռներ էր Վանայ լիճի, Արածանիի ափերը մինչև Բագրեւանդ, պարզ կ'ըլլայ, որ այդ 23 թագաւորութիւնները շատ փոքր քաղաքական միւտներն էին: Անոնց իշխանութիւնները շատ աւելի փոքր էին քան նախարարական Հայաստանի միջին կալուածատիրոջ հողերը: Եւ անոնց քաղաքներն ալ միայն ամրոցներ էին, բերդեր բնականօրէն պաշտպանուած, անառիկ ժայռերու վրայ թառած, կամ արհեստական պարիսպներով շրջապատուած: Քաղաքը այդ ժամանակ միայն պաշտպանութեան վայր էր. շրջակայ հովիտներու, դաշտերու հովիւ և երկրագործ բնակչութեան ապաստան ծառայող: Ահա այսպիսի քաղաքներու բերդերու տէրերն էին որ կը կոչուէին «Թագաւորներ». անոնք միայն բերդատէրեր էին, ցեղապետներ, որոնք ամենայն հաւանականութեամբ որոշ իրաւունքներ ունէին

դաշտային բնակչութեանց և անոնց հողերուն եւ եկամուտներուն վրայ :

Տիգրատ-Պալասարի օրով Նայիրեան դաշնակցութեան գլուխը կանգնած էր Դայաեմի ցեղի թագաւորը՝ Սինը : Այս իշխանութիւնը կը գտնուէր սկիզբը Արածանիի ստորին հասանքին շուրջը : Դայաեմի ցեղի վարիչները Ուրարտուէն առաջ փորձեցին քանի մը անգամ Նայիրեան ժողովուրդներէն կազմել ուժեղ դաշնակցութիւն մը : Անոնց զլխաւորութեամբ է, որ տեղի ունեցաւ Նայիրեան ցեղերու ինքնապաշտպանութիւնը Ասորեստանի դէմ : Տիգրատ-Պալասարէն ետքը Նայիրեան ցեղերը դիմեցին հակայարձակման և ոչ միայն թօթափեցին ասորական լուծը, այլ և վերագրուեցին Հայաստանի հարաւը գտնուող շատ մը հողամասեր, ուր հաստատուեր էին Ասուրները : Ազատագրուեցան Իշթուան, Դարիան, Ալգին, Շուպրիան, Կասկան, Մուշկին, Ուրումին և ուրիշ շրջաններ, բոլորն ալ հարաւրեւմտեան Հայաստանի մէջ : Հոսկէ ալ Նայիրեան ցեղախումբերը մտան հիւսիսային Միջագետք և արշաւեցին Ասորեստանեան հողերու վրայ : Շուրջ երկու դար, մինչեւ Ասուրնագիրալը (884—860) Նայիրցիները ազատ կը մնան հարաւէն կատարուող յարձակումներէն : Միայն Ասուր-Նադիրալը նորէն կը վերսկսի Նայիրեան արշաւանքները և կը գրաւէ 250 քաղաքներ, բերդեր : Ոն տեղացիներէն կը բռնագրաւէ ցորեն, գարի, յարդ, անասուններ, ինչ որ ցոյց կուտայ մէկ կողմէն Նայիրեան ցեղերու ընկերային կացութիւնը, միւս կողմէն կը նշէ թէ ինչ նպատակի համար Ասուրները կ'արշաւէին Հայոց լեռնաշխարհը : Վերջինս ունէր անոնց համար ոչ միայն ռազմա քաղաքական նշանակութիւն, այլ և տնտեսական արժէք :

Բայց Նայիրեան դաշնակցութիւնը միայն չգարձաւ, ան չտակածեց աւելի սերտօրէն միացած պետական միաւոր մը : Զորս հարիւր տարի Նայիրեան դաշնակիցները կռիւ մղեցին Ասորեստանի դէմ, բայց չկրցան սոսմա-ցեղային միութենէն բարձր միութիւն մը ստեղծել :

ցեղերէն անցնիլ պետութեան: Այս տոհմա-ցեղային միութիւնը կամ Նայիրեան դաշնակցութիւնը կեանքի կը կոչուէր միայն պատերազմներու ժամանակ, երբ ընդհանուր ուժերով պէտք էր պաշտպանել ցեղերու ընդհանուր շահերը: Խաղաղութեան շրջանին ցեղերը կ'ապրէին իրենց ինքնուրոյն կեանքով, մեկուսացած, կը գործէին առանձին ու իրենց համար: Գուցէ Նայիրեան պետութիւնն ստեղծելու համար, այդ դաշնակցութեան մէջ կը մրցէին ուժեղ տոհմա-ցեղային միաւորներ՝ Գայաիները, Ուրարտացիները: Մինչ այդ իններորդ դարու սկիզբէն Ասորեստանը դուրս կաւար անիշխանութենէն և իր զէնքերը կ'ուղղէր Նայիրեան ցեղերու դէմ: Գուցէ արտաքին այս վտանգին ազդեցութեան տակ Հայաստանի հարաւը Նայիրեան դաշնակցութեան մէջ կատարուեցաւ յեղաշրջում մը՝ բազմաթիւ ցեղերու շրջանակէն բարձրացաւ Ուրարտուն և փորձեց կազմակերպել անոնց սւժերը իր զեկաւարութեամբ, Նայիրին ներքին հոլովոյթի ենթարկուելով դարձաւ Ուրարտու: Այդ կերպով քաղաքական նոր հեռանկար բացուեցաւ անոնց միացեալ ուժերու առաջ:



Գ. ԳԼՈՒԽ

ՈՒՐԱՐՏՈՒ

ԾԱԳՈՒՄԸ.— IX-րդ դարու կէսերուն քայքայուեցաւ Նայիրեան դաշնակցութիւնը: Անոր շարքերէն կը բարձրանայ Ուրարտուն, որ սկիզբը միայն այդ դաշնակցութեան անդամներէն մէկն էր: Նոյն դարու վերջերուն մոռացութեան կը տրուի Նայիրի անունը և անոր կը փոխարինէ Ուրարտուն: Ան ոչ միայն առաջնութիւն կ'ըստանայ Նայիրեան ցեղերու մէջ, այլ կը դառնայ միակ ղեկավար ուժը, և կը կառուցէ աւելի կեդրոնացած և ուժեղ պետութիւն: Հայկական բարձրաւանդակի վրայ կը կատարուի քաղաքական այն հռչակոյթը, ինչ որ տեղի էր ունեցեր Միջագետքի, Եգիպտոսի և ուրիշ վայրերու մէջ, այսինքն ցեղական միութիւնէն հասարակութիւնը կ'անցնի պետական միութեան: Նայիրիի այս հռչակոյթը տեղի ունեցաւ Ասորեստանի ճնշման տակ:

Ուրարտուն Հայաստանի հարուն ապրող բնիկ ցեղերէն մէկու կամ ցեղախումբի մը անունն է: Տիգրիսի ափերով անոնց մէկ հատուածը անցեր էր հիւսիս և մտեր Տարօն, հոնկէ ալ շարժուեր էր վանայ լիճի հիւսիսը, Հայոց Առբերան գաւառը և հասկէ ալ ցրուեր էր նոյն լիճի արեւելեան ափերուն վրայ: Այսպէսով Մուշի դաշտէն, Տարօնէն, Ուրարտացիք դիմեցին հիւսիսէն արեւելք և աղեղնաձեւ շրջապատեցին վանայ լիճը: Անոնց մէկ ուրիշ հատուածն ալ արեւելքէն մտեցեր էր վանայ լիճին: Անոր արեւելեան եզերքներուն վրայ Ուրարտացիք հանդիպեցան Բիւցեղին, որոնց հետ միախառնուելով կազմեցին այն ուժեղ կեդրոնական ցեղախումբը, որ այնուհետեւ պիտի ղեկավարէր ներաւտուի պետութիւնը:

Ուրարտական արձանագրութեանց մէջ կը յիշուին Ուրուդ մարդիկ, որոնք թագաւորէն կ'ըստանան պարէն, մթերք, կենդանիներ և հողեր: Հաւանաբար այս Ուրուդները Ուրարտացիներն են, անոնց իշխող, ղեկավար խաւը, ռազմի ազնուականութիւնը, որ կազմուած էր բազմազան խմբաւորումներէ և որ միայն ցեղային ընդհանուր անուն կը կրէր: Այս «Ուրուդները» կազմակերպուելով և ընդունելով իրենց մէջ ուրիշ, յատկապէս Ռիա ցեղի մարդիկը աստիճանաբար դարձան ընկերային իշխող խաւ, դաս:

Ուրարտուի պետութիւնը կը սաղմնաւորուէր Վանայ լիճի հիւսիս-արեւմուտքը. հոս էին անոր գլխաւոր բերդերը, քաղաքները: Հոս, Տարօնի մէջ, Արածանիի ափին անոնք իրենց կ'ենթարկեն տեղական ցեղերը, կը պայքարին իրենց մրցակից ուժերու դէմ: Սկիզբը անոնց մայրաքաղաքը Արգասկուն էր. գուցէ այսօրուան Մանազկերտը, որ կարաւանային ուղիներով միացած էր արեւելքի, հիւսիսի և արեւմուտքի հետ: Ուրարտուի քաղաքական զարգացման այս սկզբնական շրջանին անոնց իշխանութիւնը կը տարածուէր արեւմտեան Տիգրիսի սկունքներէն, Տարօնի վրայով մինչեւ Արածանի սկունքները: Դեռեւս անոնք չէին հասած Վանայ լիճի արեւելքը: Այս սահմաններու մէջ Ուրարտուն իմի հաւաքելով Նայիրեան բոլոր ցեղերը՝ ստեղծեց բաւական ընդարձակ պետութիւն մը: Բայց ան ենթակայ էր դուրսի՝ Ասորեստանի՝ յարձակումներուն, որով և անոր հարաւ-արեւմտեան գաւառները տեւական վտանգի տակ էին:

ԱՐԱՄԷ ԵՒ ՍԱԼՄԱՆԱՍԱՐ III.— IV-րդ դարու 80-ական թուականէն Ուրարտուի քաղաքական կեանքի վարիչը Արամէն է: Անոր դէմ է, որ երկարատեւ կռիւներ կը մղէ Սալմանասար III-րդը: Արամէի օրով ալ Ուրարտուի քաղաքական ծանրութեան կեդրոնը Վանայ լիճի արեւմտեան և հիւսիսային գաւառներն են. մայրաքաղաքը Արգասկուն է: Արամէն գահ բարձրացաւ 883 թուին (Բ. Ա.) և իշխեց մինչեւ 843 թիւը, քառասուն տարի: Արամէն մէկ կողմէն պաշտպա-

Ֆողովան կռիւներ կը մղէր Սալմանասարի գէմ, միւս կողմէն կ'ընդարձակէր իր երկրի սահմանները: Ասորեստանի թագաւորը սկիզբը հիւսիսային Սիւրիան նուաճելով էր զբաղուած որ Միջերկրականին հասնելու միակ ուղին էր. 858 թիւին Ասուրները գրաւեցին Ալշէն, և հոնկէ մտան Ուրարտու: Ըստ Ասորեստանեան արձանագրութեանց անոնք անցան Ալշէով, մասն Սուխնի, Դայեանի. գրաւեցին Արգասկու քաղաքը. Գիլգան և Խուրուշկիան: Սմեն տեղ Սալմանասար կ'աւերէր և աւարի կուտար: «Ուրարտացի Արամէի բերգափալա՜ Սուրուցային մօտեցայ, քաղաքին վրայ յարձակեցայ, անոր տիրեցի: Անոր զօրեւեհն ճատերը սպանցեցի... դէպի Նայիրի ծովն իջայ, զեմեւս ծովուն մեջ մխրցեցի, աստուածներուս զոհեր մատուցի. նոյն ժամանակ իմ անձխս պատկերը շինեցի»... Սալմանասարը յաջող արշաւանքով կրցաւ Ուրարտուին տիրել, հարուէն բարձրանալ, մտնել Էնզիտին, մեր Հանձիթը, անցնիլ Արամանին, մտնել Ալզէն, անցնիլ աւելի հիւսիս, Սուխնի երկիրը: Կտրել Դայեանի երկրի հարաւային սահմանները. մօտենալ Արաքսի ալուէնքներուն: Իջնալ հարաւ-արեւելք թուամէ երկիրը, յետոյ գրաւել Արգասկուն, Խուրուշկիան: Բայց այս յաղթանակը միայն պատժիչ արշաւախումբի ապաւորութիւն կը թողու: Ասուրական զերազանց ուժերու ճշման տակ Արամէն և տեղական իշխանները կ'ապաստանին անառիկ լեռներ և հոնկէ յարձակումներ կ'ընեն զրուտող բանակի վրայ: Այ Արամէն, ոչ ալ անոր շուրջը հաւաքուած իշխանները զինաթափ չեն ըլլար և Սալմանասարը երկարատեւ կռիւներէ խուսափելու համար կը լքէ Ուրարտուն՝ տանելով մեծ աւար և զերիներ:

Արամէն իրօք, հիմնադիրն է Ուրարտուի պետութեան: Ան է, որ կը միացնէ Նայիրեան ցեղերը և իր իշխանութիւնը կը պարտադրէ անոնց, կը կազմակերպէ անոնց ուժերը: Անոր գործի հմայքը և հեղինակութիւնը այնքան մեծ էր, որ իր մահէն ետքը նոր ստեղծուած պետութիւնը չքայքայուեցաւ, այլ յարատեւեց հաւանաբար Արամէէն

սերած հարստութեան տակ: Անոր օրով Ուրարտուն բաւա-
կան ընդարձակ պետութիւն էր դարձած — ան կը պարու-
նակէր հայկական բարձրաւանդակի հարաւային նահանգ-
ները: Անոր սահմանները հասեր էին Արածանիի հովիտով,
մինչեւ Հայկական Պարի հարաւային լանջերը, Բագրեւան-
դը: Մրեւելեան սահմանագիծը այն լեռնաշղթան էր, որ
Մասիսէն կ'ընթանար դէպի հարաւ և կը բաժնէր Իրանա-
կան աշխարհը Վասպուրականէն: Հարաւէն ան հասեր էր
Մեծ Զարի և արեւելեան Տիգրիսի ակունքները, իջեր էր
մինչեւ Բաղէշի կիրճը, ուրկէ Ասորները յաճախ իրենց
յարձակումները կ'ընէին: Ան հասեր էր Եփրատ՝ Արածանիի
և արևմտեան Տիգրիսի մօտերը: Նման պետութիւն սահղ-
ծելու համար անհրաժեշտ էր ոչ միայն ռազմական ուժ,
նիւթական հարստութիւն, այլ և պայծառ գաղափար, մը-
շակուած ծրագիր: Արամէն կ'առաջնորդուէր այն գաղա-
փարով, թէ նոր պետութիւնը պէտք էր ապահով դարձնել՝
տալով անոր բնական սահմաններ՝ Հայկական Պարը՝ Զագ-
րօշեան լեռնաշղթան, Տաւրոսի անցքերը, Եփրատ և Բիւ-
րակնեան լեռներու արեւելեան լանջերը: Այս սահմաննե-
րուն մէջ կ'ապրէին բազմաթիւ ցեղեր, կը խօսէին շատ մը
լեզուներ, ժողովուրդը կ'ըզբաղուէր երկրագործութեամբ
և անասնապահութեամբ և ծանօթ էր մետաղներու և բազ-
մաթիւ արհեստներու:

Սարգուրին, Լուտիպրիսի որդին պետութեան կեդրոնը
հիւսիսէն կը փոխադրէ արեւելք, Արզասկուն կը փոխարին-
ուի Տոււպայով, որ Իլիա ցեղի կեդրոնն էր: IX ըդ դարու
երեսնական թուականին Ուրարտացիներու միայն այն հատ-
ուածը, որ Բաղէշի կիրճերով քարձրացեր էր հիւսիս, կ'ըս-
կըսի քաղաքական դեր խաղալ: Թէպէտ Տուշպան աւելի
մօտ էր Ասորեստանի սահմաններուն, բայց մինչ այդ հե-
ռաւոր Արզասկուն էր, որ կրկն էր ասուրական հարուածը:
Բաղաքական կեդրոնի փոփոխութեամբ Ուրարտուն
կը նուիրուի երկու հարցերու լուծման: Առաջինը կա-
սեցնել Ասորեստանի վսանգը, երկրորդ շարունակել Արա-

մէջ գործը՝ հայկական բարձրաւաճողակի նուաճումը եւ ամբողջացումը: Հարաւային ճակատի վրայ Ուրարտուի թագաւորներու ճիգը ուղղուած էր թոյլ չտալու, որ Ասորեստան մտնէ լեռնային գօտին, և սահմանափակել զայն սեմական աշխարհի, անապատային գօտիի շրջանակին մէջ: Երկու ուժերու այս պայքարը տեղի կ'ունենար Ուրմիոյ լճի շուրջը, Մեծ Զաբի ափերուն: Հոս՝ Ուրարտուն և Ասորեստանը կը մրցէին Մուսասիր լեռնային աշխարհի համար, որ բնական ուղի մըն էր Մեծ Զաբի ափերով իջնելու Ասորեստանի վրայ: Ուրմիոյ լիճի հարաւարեւելիան ափերուն Մանայի երկիրը և Պասուան կուսախնձոր էին երկու կողմերու համար. իւրաքանչիւրը կ'ուզէր իր քաղաքական ազդեցութեան շրջանակի մէջ առնել այդ երկուքը և ապահովել իր գերիշխանութիւնը այս լեռնոտ, ռազմապէս կարեւոր աշխարհներու վրայ: Տուշպայի ապահովութեան գօտին Զագրօշեան լեռներու արեւելեան լանջերն էին, Ուրմիոյ լիճը, Մեծ Զաբը: Նոյն պայքարը՝ ռազմական ապահով գօտիներ ստեղծելու համար տեղի կ'ունենար նաև Եփրատի ափերուն, Տիգրիսի ակունքներու մօտ Ուրարտուի թագաւորները կը ջանային այս շրջաններու ընդոր մեծ ու փոքր անկախ իշխանութիւնները միացնել և պարլսպ կանգնել Ասորեստանի առջև: Այս պայքարը երբեմն Ուրարտացիք մինակ կը տանէին, երբեմն դաշնակիցներու հետ, որոնք արեւելքի մէջ կ'ըլլային արիական ցեղերը, իսկ արեւմուտքի մէջ հաթական ժողովուրդները: Այս վերջինները փոքրացեր էին, ընկճուեր, բայց քանի մը փոքր պետութիւններ էին կազմեր Եփրատի ափերուն: Ուրարտուի այս պայքարներուն մէջ դաշնակցային պետութեան կազմաւորումը տեղի տուաւ ուժեղ, կեդրոնաձիգ միապետութեան, որ այնքան անհրաժեշտ էր տեւական պատերազմներու մէջ գտնուող Ուրարտացիներուն: Քաղաքական և ռազմական իշխանութիւնը կեդրոնացաւ միակ թագաւորի ձեռքը, որ ուրարտական ազնուական ռազմի ուժերու աջակցութեամբ կը կատարէր իր նուաճումները:

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԻԱՆԴԱԿԻ ԳՐԱԻՈՒՄԸ.— Այս գործի սկիզբը դրեր էր Արամէն, բայց անոր մահով դրաւուած երկիրներն ու ջեղերը ապստամբեցան և Ուրարտուն նորէն ամփոփուեցաւ իր նեղ սահմաններուն մէջ: Բայց հարաւի մեծ պետութեան դէմ յաջողութեամբ պայքարելու համար՝ անհրաժեշտ էր Հայոց բարձրաւանդակի ուժերու կիզրոնացումը մէկ իշխանութեան ներքեւ: Տուշպա հաստատուելէն հտք Ուրարտույի զեկավարները զբաղուեցան այդ էական հարցով: Մեցուաց (800—780) իր նուաճումները կատարեց Եփրատէն մինչև Ուրմիոյ լիճը և հայկական Տաւրոսէն մինչև Հայկական Պար, վերագրուեց Արամէի նուաճած երկիրները: Ան աւելի առաջ գնաց, մտաւ Արարատեան դաշտը, Արաքսի հովիտը: Արածանին իր ամբողջ ընթացքով դարձաւ Ուրարտական գետ: Կարելի է ըսել որ Մենուան հիմնադիրն է Ուրարտական մեծ նուաճողականութեան: Ան անցաւ Եփրատը, մտաւ հաթական աշխարհը, իսկ Ուրմիոյ լիճի ափին գրաւեց Մուսասիւրը եւ Մահայի երկիրը: Այս վերջին երկու երկիրներու գրաւումը անոր առաջնութիւն տուին Ասորեստանի վրայ, որուն քաղաքական կեդրոնները, այս կերպով կը վտանգուէին: Արգիթսիմ (780—755) շարունակեց հօր նուաճումները Հայաստանի մէջ: Ան մէկ կողմէն գործեց Ուրարտուի հիւսիսը վերագրուեց Բագրեւանդը, Բասէնը, Մանազկերտը, Արածանիի ամբողջ հովիտը, Արարատեան դաշտը, անցաւ Արաքսը և վերանուաճեց «բարբարոսներու», «լուլուներու» երկիրը: Ան Արաքսի հովիտին մէջ հիմեց բերդաքաղաք մը՝ Արգիթսիսիսիսի, որ յետագային մեր Արմաւիրը եղաւ: Այս բերդը յենարան մըն էր և պիտի հսկէր Արարատեան դաշտի պաշտպանութեան վրայ: Միւս կողմէն՝ Հրազդանի օփերով Արգիշտին բարձրացաւ հիւսիս և հասաւ Սեւանայ լիճը: Սարիղամիշի գիծով ան մտաւ Վանանդ, Կարսի շըրջանը և հասաւ մինչև Չրլոք լիճը և մտաւ Շիրակ, Ախաւրեանի ափերը: Արածանիի ափերով ան իջաւ մինչև Եփրատ մտաւ հաթերու երկիրը, գրաւեց Մելիթսիմէն, որ հա-

Թական իշխանութեան մը կեդրոնն էր: Բազմահազար Հաթեր գերեց և փոխադրեց Տուշպա: Ծոփաց աշխարհի թագաւորը հարկատու դարձաւ: Արգիշտին գրեթէ ամբողջացուց Հայոց աշխարհի նուաճումը և հայկական լեռնաշխարհի մէջ առաջին մեծ պետութիւնը հիմնեց: Անոր որդին Սարգուրի II (755—730) նորէն կը վերագրաւէ իր հօր նուաճած երկիրները, կը հասնի մինչեւ Կովսերի երկիրը, Սեւ ծովի ափին, կը նուաճէ Ճորոխի հովիտը, ապա Եփրատն օնցնելով տէր կը դառնայ Կոմագնիսի: Նորէն յաջող արշաւանքով մը կը նուաճէ Մանայի պետութիւնը և Ուրմիոյ լիճի ափերը, ուր Ասորեստանի գործակալները կը փորձեն արգիլել, որ Ուրարտուն այս երկիրներու մէջ ամուր հաստատուի:

ՍԱՐԳՈՒՐԻ II ԵՒ ԱՍՈՐԵՍՏԱՆ.— VIII-րդ դարուն Ասորեստանի դէմ ճակատող մնացեալ էր միայն Ուրարտուն: Այս վերջինի թագաւորը Սարգուրի II-րդ կը կոռէր ոչ միայն իր պետական անկախութեան համար, այլեւ Եփրատի շուրջ ստեղծուած հաթ-սեմական փոքր իշխանութիւններու ազատութեան համար: Ասոնք Սարգուրի II-րդի օրով հաւաքուեցան Ուրարտիի շուրջը: Ուրարտուի թագաւորը իր առջեւն ունէր մեծ, տազանդաւոր մրցակից մը՝ Տիգլաթ-Պալասար III: Սարգուրիին հետ դաշնակցեցան Հիւսիսային Սիւրիոյ արամէական իշխանները, Կումուխը, Մելիտինէն, Գումգումը: Ան լաւ կ'ըզգար թէ ինչ արժէք ունէր Հիւսիսային Սիւրիան իր պետութեան պաշտպանութեան համար. Եփրատի և Միջերկրական ծովի մէջ ինկած երկիրները պէտք է ըլլային Ասորեստանի գերիշխանութեանէն ազատ և դաշնակից Ուրարտուի: Միւս կողմէն ան Տիգրիսի ակունքներէն իջնալով կ'ապաստակէր Հիւսիսային Միջագետքը՝ մինչեւ այժմեան Տիարպէթիը: Հաթ, արամէական, հրէական երկիրները, փիւնիկեան քաղաքները Սարգուրին կը նկատէին իբրեւ իրենց ազատարարը և կ'որոնէին անոր բարեկամութիւնը: Սարգուրին Եփրատէն մինչեւ Տիարպէթիը կը կտրէր Ասորեստանի հազորակցութեան ուղիները, կը յափշտակէր մթերքները, հացը, մե-

տաղները, որոնք կը զրկուէին գրաւուած և հարկատու երկիրներէն Ասորեստան:

747 թիւին Ասորեստանի գահը կը բարձրանար Տիգլատ-Պալասար III: Ան լաւ ծանօթ էր Սարգուրի ծրագիրներուն, անոր դաշնակիցներու պատրաստութեան: 743 թիւին ան անցաւ Եփրատը և պաշարեց Կուսուխի-Կոմոգէնի Արբադ բերդը: Իր հերթին Սարգուրին իր բանակները կ'ուղղէր Եփրատի ափերը, դաշնակիցներու օգնութեան հասնելու: Անոր միացան Կոմոգէնի, Մելիտինէի, Գամգուսի, Ագուսիի թագաւորները:

ԿՈՒՄՈՒԽԻ ՃԱԿԱՍԱՄԱՐՏԸ 743.— Երկու հակառակորդ բանակներու հանդիպումը տեղի կ'ունենայ Կուսուխի մէջ, Եփրատի ափին: Ճակատամարտը կը տեւէ ամբողջ օր մը: Երեկոյեան դէմ ուրարտական այրուծին և մարտականքերը ցրիւ կուգան: Ատկէ առաջ դաշնակիցները լքեր էին կռուի դաշտը. ուրարտական բանակը կը մատնուի ահաբեկման: Սարգուրին, ըստ Ասորեստանեան արձանագրութեան կը կորսնցնէ եօթանասուն հազար կռուողներ. զինակցութիւնը կը քայքայուի և դաշնակիցները կ'ենթարկուին յաղթողին: Սարգուրին կը լքէ կռուի դաշտը և մէկ քանի թիկնապահներով կ'անցնի Եփրատը: Ան կը կորսնցնէ ոչ միայն ճակատամարտը, այլ և իր ռազմականքերը, արքայական վրանները, թագաւորական զարդերը. չարժական գահը: Տիգլատ-Պալասար այս բոլորը կ'այրէ, խրախճանքներ կը կազմակերպէ ի պատիւ Ասուր աստուծոյ, որ անոր պարգեւեր էր այս յաղթանակը. «Սարգուրի Ուրարտացիք ինձմէ ապսամբեցաւ, կ'արձանագրէ Տիգլատ-Պալասար III, Մասի-Իսուի հետ դաւեագրութիւն ըրաւ. Կիսուսն ու Խալի Երկրի մէջ, որ Կուսուխի քաղաքի մէկ վիճակն էր, զարկի միջեւ եղծումը, անոր ամբողջ կարասին առի: Զեմբու սարսափէն զարհուրեցաւ, իր կեանքը փրկելու համար միակ, միայնակ փախսական գնաց»:

736 թ. ԱՐՇԱԽԱՆԻՔ ՈՒՐԱՐՏՈՒ.— Ասորեստանը Սարգուրիի դէմ սկսած կռիւը վերջացած էր համարեր: Բայց


Հումմախի ճակատամարտէն հտքը ան անմիջապէս շյար-
ձակեցաւ Ուրարտուի վրայ: Ան աւելի լաւ համարեց նախ
լուծել սեմական աշխարհի առկախ մնացած հարցերը, հաս-
տատուիլ Միջերկրականի ավերուն: Միայն 736 ին Տիգ-
րատ-Պալաստր մեծ բանակով մտաւ Ուրարտու: Առանց մեծ
դիմադրութեան ան հասաւ Ուրարտուի մայրաքաղաքը՝
Տուշպան: Գրաւուած շրջանները աւարի մատնեց և գերի-
նեք վերցուց: Պաշարեց և գրաւեց նաև Տուշպան, միայն
միջնաբերդը ազատ մնաց գրաւումէ: Հոն ալ տպաստաներ
էր Սարգուրին: «Իւր քաղաքն Տաւրուսայի մեջ զանի փա-
կեցի. անոր բազմաթիւ պատերազմովները նոյնի դուռներու
առջեւ սպաննեցի... Լայնասարած Ուրարտուի մեջ եօթանա-
սուց կրկին ժամ տեսող նանայարհի՛ վերէն մինչեւ վա-
րեաւեցի. հաւասարագօր ոսոխ մը շկար»: Ապա վերա-
դառնալով Ասորեստան՝ իր պետութեան կցեց սահմանային
քաղմաթիւ շրջաններ, քաղաքներ ու գաւառներ, նշանա-
կելով անոնց վրայ բերդակալներ, կառավարիչներ «Իբրեւ
հոգաբարձու»:

ԶԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ. — Սարգուրիի պարտութեան հետեւան-
քով Ուրարտուի ծայրամասերուն մէջ կ'ընկառուի անջատո-
ղական շարժումներ, որով անոր յաջորդը՝ Ռուսա I (730—
714) նախ կ'ըզբաղուի այդ շարժումները ճնշելով: Կը վե-
րագրաւէ Սեւանայ լիճի ափերը և կը մտնայ Սիւնեաց աշ-
խարհը: Ան նոր գրաւումներէ կը խուսափի, բայց կ'աշ-
խատի պահել այն, ինչ որ հայրը ժառանգութիւն էր թո-
ղեր իրեն: Հիւսիսը՝ ան կը վերագրաւէ քսանմէկ երկիր-
ներ, բնակչութեան մէկ մասը կը փոխադրէ Բիւնա: Ու-
րարտուն ծանր հարուած էր ստացել Եփրատի ափին. այ-
ժըմ Ասորեստանը գերիշխան տէրն էր արեւմտեան շրջանի
և իր ձեռքն էր Ուրարտուի պաշտպանողական գծերը, ու-
ղիները: Ուրարտուի պարտութեան հետեւանքները անմի-
ջապէս զգացուեցաւ Մերձաւոր Արեւելքի մէջ. 732 թիւին
ինկաւ արամեական Գամասկոսը, իսկ տասը տարի յետոյ
722 թիւին ինկաւ Իսրայէլի թագաւորութիւնը: Փիւնիկ-

եան քաղաքներն ալ հարկատու եղան Ասորեստանին: Որքան ատեն որ մեծ էր ու հզօր էր Ուրարտուն, անոնք այս կամ այն չափով կը պահէին իրենց անկախութիւնն ու ազատութիւնը: Ինկաւ Ուրարտուն, յաղթողը իր բոլոր ուժերը ուղղեց ասոնց դէմ և վերջ տուաւ անոնց անկախութեան ու գլխատեց կամ տեղահան ըրաւ անոնց կենսունակ և գործօն տարրերը:

ՌՈՒՍԱ 1. (730—714).— Ռուսան մօտ տաս տարի ոչ մէկ բան ձեռնարկեց Ասորեստանի դէմ. բայց անոր դէմ պայքարելու մաքէն չէր հրաժարած: Անոր օրով Ասորեստանի մէջ կ'իշխէր հզօր թագաւորներէն մէկը՝ Սարգոնը. ան ալ զբաղուած էր ապստամբ երկիրներու շարժումները ձնչելով: Ռուսան կ'օգնէր Սարգոնի թշնամիներուն ամեն տեղ. կը ջանար անոնց ուժերը միացնել, համադրել և զինել: Ան յատկապէս ամրացուց իր պետութեան հարաւարեւելեան սահմանները: Գալիք ճակատամարտը պիտի ըլլար Ուրմիոյ լիճի շուրջը, Մանայի, Մուսասիրի համար, Ջար գետի ափին: Հոս է, որ Ասորեստանի և Ուրարտուի շահերը կը հակադրուէին: Շահերու այդ հակադրութիւնը լուծուեցաւ Եփրատի ափերուն վրայ յօգուտ Ասորեստանի: Ռուսան յարձակեցաւ Մանայի վրայ, որու թագաւորը դուրս էր եկեր Ուրարտուի օգրեցութեան շրջանակէն և դաշնակցեր Ասորեստանի հետ, իր երկիրը արամադրելով անոր: Այս բանը ռազմական մեծ առաւելութիւն կուտար Ասորեստանին, կը վտանգէր Տուչպան: Սարգոնը, որ կը գործէր Արևմուտքի մէջ, շտապեց արեւելք: Ան 722 թ. վերջ տուաւ Իսրայէլի պետութեան, և իր ուժերը կեդրոնացուց Ջար գետի հովիտ, Ուրմիոյ լիճի ափերը պայտապանելու համար: Առանց զժուարութեան ան գրաւեց Մանան և ապստամբ քաղաքներու բնակչութիւնը փոխադրեց Եփրատի ափերը և Հիւսիսային Սիւրիա: Ռուսան քաչեց իր բանակները Մանայէն, չհամարձակեցաւ ճակատամարտ տալ Սարգոնին: Ծիչդ այդ ժամանակ, երբ երկու թշնամի թագաւորներու յարաբերութիւնները լարուած էին, 717

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԻՐԱՐՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ



Թիւին, հաթական Կարկեմիւի թագաւորութիւնը ապստամբեցաւ Սարգոնի դէմ: Անուղղակի կերպով այս ապստամբութեան մասնակից էր Ռուսսան, որ կ'աշխատէր իր հակառակորդը զբաղեցնել, ուր որ կրնար: Բայց Սարգոն ջարդեց ապստամբները, վերջ տուաւ Կարկեմիւի պետութեան:

Այս նշաւաւոր երեւոյթ մըն է արեւելքի պատմութեան մէջ: Հաթական վերջին իշխանութիւնն էր, որ կը կործանուէր: Հաթերը շուտով թռնեցին ապագգայնացման ճամբան և ձուլուեցան սեմական ժողովուրդներու հետ: Կարկեմիւի անկումը ծանր հարուած մը եղաւ Ռուսսայի համար: Ան այլեւս հարաւ արեւմուտքի մէջ ոչ մէկ դաշնակից ունէր. բաւորը խորտակուեցան Ասորեստանի հարուածներուն տակ: Ան մինակ մնաց: Փորձեց Ասորեստանի դէմ հանել Եփրատէն մինչեւ Ուրմիոյ լիճը ապրող կէս հաթական, կէս արիական ու սեմական ցեղերը և ցեղապետները, որոնց համար շատ ծանր էր Սարգոնի լուծը, բայց անյաջող: Սարգոն մէկիկ մէկիկ ջարդեց ամենքն ալ: Սկսաւ Զիկարթուի թագաւորով, քանդեց Մանայի քաղաքները ջարդեց Մարերը, արամէական ցեղապետները: Ռուսան ի վերջոյ որոշեց անձամբ կռուի դուրս գալ Սարգոնի դէմ: 716 թիւին ան մտաւ Մանայի երկիրը. զըրաւեց քսաներկու քաղաքներ, ամրոցներ: Բայց այս բոլորը մեծ արժէք չունեցան. Զաբի հովիտը մնաց Սարգոնի ձեռքը: 724 թիւին իր հերթին Սարգոնը մտաւ Մանա, վերաբրաւեց Զիկարդուն և կը պատրաստուէր արշաւել Ուրարտու, բայց Ռուսան ինքը ընդառաջ գնաց Սարգոնին, թոյլ չտալու համար, որ ասուրական բանակը մասնէ իր երկիրը: Երկու բանակները իրարու հանդիպեցան Ռաուշ կերան մօտ:

ՌԱՌԻՇ ԼԵՐԱՆ ՃԱԿԱՏՍՄԱՐՏՐ 714.— Արեւելքի գերիշխանութեան համար էր, որ կը մղուէր այս կռիւը: Ան վերջացաւ Ռուսայի պարտութեամբ. անոր բանակները ջարդուեցան և գերի ինկան: Սարգոնը կրնար համարել

իրեն արեւելքի անմրցելի տէրն ու տիրականը: Ռուսան կորսնցուց և բանակ և դաշնակիցներ և հազիւ փախաւ կռուի դաշտէն: Իր հայրը պարտուեր էր արեւմուտքի մէջ, ինքն ալ կը պարտուէր արեւելքի մէջ: Սարգոնը հետապընդեց զայն և Մուսասիրի լեռներու մէջ նորէն ջարդեց: Տեղի ունեցաւ ահաւորը՝ Սարգոնի ձեռքն ինկաւ Մուսասիր արքայան փաղաք, ուր կը գտնուէր Խալդ աստուծոյ տաճարը. Ասորեստանի թագաւորը քանդեց Ուրարտուի հովանաւոր աստուծոյ տաճարը, քրմութիւնը գերի տարաւ, աւարեց տաճարական հարստութիւնը: Այս չտեսնուած հարուած մըն էր, որուն մինչ այդ՝ չէր ենթարկուեր Ուրարտուն: Սարգոն Մուսասիրէն կը պատրաստուէր մտնելու Ուրարտական հողերը: Այս պարտութեան ընթացքին հանգիստ չէին պետութեան հիւսիսային նահանգները, ոչ միայն տեղական ցեղերը կ'ապստամբէին, այլև նոր ուժեր էին երեւցեր հիւսիսային սահմաններու վրայ՝ Քիմրները և Սկիւթացիք: Ռուսան՝ զօրք ալ չուէր. նոր բանակ կազմելու փորձերը անցան անյաջող: Անոր վրայ ծանրօրէն կ'ազդէր Մուսասիրի տաճարի կործանումը: Հայրենասէր թագաւորը չկրցաւ տոկալ այս բոլորին և անձնասպան եղաւ: Ռուբա Ուրարտուի քաղաքը Մուծաձիւր փաղաքին կործանիլը, իր Քաղդէա աստուծոյն աւարի առնուիլը լսեց՝ իր ձեռքով իր գօտիին երկաթի դառուցով ինքզինքն ի կենաց գրաւեց:

ՀԵՏՏԻԱՆՔԸ. — Ռաուշ լեռան ճակատամարտը արեւելքի պատմութեան մեծագոյն դէպքերէն մէկն էր: Վերջ կը գտնէր Ուրարտ-Ասուրական մրցութիւնը: Յաղթանակը կը մնար վերջինին: Ուրարտուն սպառեր էր իր ուժերը և հազիւ կրնար իր վէրքերը բուժել, աւերակները վերականգնել: Ան այլեւս արեւելքի միջազգային քաղաքակառուցութեան վարիչ գործօն չէր: Ան պահեց իր գոյութիւնը իրեն պետութիւն, բայց զրկուեցաւ առաջուայ դիրքէն, ան դարձաւ բարեկամ ու հարկատու Ասորեստանին: Անոր վարիչները Ասորեստան կը շրջէին պղինձ, երկաթ, գէնք,

ուսումնական և ձիեր: Ասորեստանը գրաւեր էր հարաւէն Տուշպայի վերեւ իշխող լեռները և անոր կուսակալները հոնկէ աշաւուրջ կը հակէին Ուրարտուի մայրաքաղաքին վրայ և միշտ զեկուցումներ կը զրկէին հոն սեղի ունեցող դէպքերու մասին: Ասուրները արդէն տէր էին Ուրմիոյ լիճի ափերուն, Մուսասիրին, արեւմուտքի մէջ անոնք հասեր էին Արածանի գետաբերանը: Երեք կողմէն անոնք օղակեր էին Ուրարտուն՝ պահելով իրենց ձեռքին մէջ անոր ուսումական բոլոր կարեւոր դիրքերը: Ուրարտուի հիւսիսն ալ հանգիստ չէր, հոն հաստատուեր էին քիմրական և սկիւթական ցեղերը: Ուրարտուի թագաւորները մեծ ճիգ ըրին ազատելու և իրենց ձեռքը պահելու այդ նահանգները: Բայց և այնպէս անոնք հոս ալ նախկին դիրքերը վերականգնել և գրաւել չկրցան:

ՆՈՒ ՈՒԺԵՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ, ԿԻՄՐՆԵՐ ԵՒ ՍԿԻԹՆԵՐ.
— Երկու դարաւոր մրցակիցներու թուլնալը նպաստուոր պայմաններ ստեղծեց Մերձաւոր Արեւելքի մէջ նոր ուժերու երեւալուն: Ոչ Բիմրները, ոչ ալ Սկիւթները առաջին անգամ չէ, որ հիւսիսային Հայաստանի և իրանի մէջ կ'երեւային: Անոնք տեւական շփման, առևտրական յարաբերութեան մէջ էին արեւելքի հետ: Կովկասեան կիրճերէն սկիւթական ցեղերը կը թափանցէին Այսրկովկաս: Միայն Ուրարտուի թուլացման հետեւանքով այդ թափանցումը փոխուեցաւ արշաւանքի: Անոնք կ'ապրէին Սև ծովու հիւսիսային ափերուն, մեծ գետերու եզերքներուն, Տանուբէն սկսած մինչեւ Ազովի ծովը: Կիմր և Սկիւթ անունները ընդհանուր որակումն էին այն ժողովուրդներուն, որոնք վաչկատուն կեանք կը վարէին, դիւրութեամբ կը գաղթէին՝ կամ նոր արօտատեղիներ և կամ նոր հայրենիք որոնելու: Անոնք ազգագրական տեսակէտէն խառն էին. մեծ մասամբ իրանական՝ խառնուած հարէթական-փոքրասիական ժողովուրդներու հետ:

Բիմրները ութերորդ դարուն երեւացին Այսրկովկասի արեւմտեան մասերու մէջ, ուրկէ թափանցեցին Կասպա-

դովկիա: Հայ պատմագիրները այս երկիրը կ'անուանէին Գաւիւրք, որ աղաւաղուիմն է Կիմըր անուան: Սկիւթները ընդհակառակը կը գործէին Կուռի, Արաքսի շուրջը. Աստըրպատականի մէջ, մարտկան ցեղերու դէմ: Եօթերորդ դարու վերջերը անոնք ալ անցան արեւմուտք, հասան մինչեւ Պաղեստին: 649 թիւին Կիմրներու և Սկիւթներու միացեալ բանակները պարտութեան մատնեցին Ասորեստանը: Ուրարտուն ամենէն շատ տուժեց Կիմրներու արշաւանքէն: Անցնելով Կովկասեան կիրճերով՝ անոնք սկիզբը հաստատուեցան Ուրարտուի հիւսիսը՝ այժմեան Ախալքալակի, Ախալցիայի, պատմական Ջաւախքի մէջ: Հաստատուելով այդ վայրերու մէջ՝ Ուրարտուին հարկատու դարձան. յետոյ նաև դաշնակից: Օգտուելով Ուրարտուի պարտութենէն և ներքին քայքայումէն թէ Կիմրները և թէ սկիւթական ցեղերը տարածուեցան հարաւ, գրաւեցին Շիրակը և Վանանդը:

Կիմրներու մեծ մասը մտաւ Փոքր Ասիա և հաստատուեցաւ Կապադովկիոյ մէջ, բայց անոնք բոլորովին չլքեցին Հայաստանը. անոնց մէկ հատուածը հաստատուեցաւ Շիրակի և Վանանդի մէջ. անոնց կեդրոնը դարձաւ հետագայի հայկական Գիւմրին — Կիւմարին, որ կը նշանակէ Կիմրներու երկիր: Այսրկովկասի տեղանուններէն շատերը Կիմր-սկիւթական ծագում ունին և այդ հետեւանք է Կիմր-սկիւթական ցեղերու այնտեղ հաստատուելու, Ուրարտուի թուլացումէն յետոյ: Անոնք Շիրակէն, Վանանդէն իջան նաև Արարատեան դաշտ և վերջինս նախ քան Հայ-Արմէններուն ձեռք անցնելը՝ երկար ժամանակ մնաց սկիւթական ցեղերու իշխանութեան տակ: Հինգերորդ դարուն դեռ Հիւսիսային Հայաստանը հայացած չէր: Ուրարտուի ժառանգները հոն՝ այն բազմաթիւ Կիմր սկիւթական ցեղերն էին, որոնք տարածուեր էին Սև ծովէն մինչեւ Աստըրպատական-մարտկան աշխարհը: Սկիւթական ցեղերու հետքերն ալ մնացին Հայաստանի տեղանուններու մէջ: Հայոց Ուտի գաւառի մէջ Շակաեկն անունով շրջան մը

կայ. իսկ Արցախի մէջ կար Շիկաբաբ, որ ըստ գիտուններու կը նշանակէ «Սկիւթներու ժայռ»: Հին Աղուանից աշխարհի մէջ ալ կար Շաֆի շրջանը: Սկիւթներու մէկ հատուածն ալ տեղաւորուեցան Արաքսի ձախ ափին Գողթան քաւառի մէջ. ներկայիս անոնք կը կոչուին զոկ, որ լեզուաբանօրէն կը ծագի սակ բառէն. անոնք հետագային հայացան, բայց պահեցին իրենց լեզուն, որ կը համարուի Հայոց լեզուի մէկ բարբառը:

ՀԵՏԵՒԱՆՔԸ.— Ոչ Կիմրները և ոչ ալ Սկիւթները մեծ թիւ չէին կազմեր. անոնք արշաւողներ էին և կը գործէին շատ ընդարձակ տարածութեան վրայ՝ Պարսկաստան, Փոքր Ասիա, Սիւրիա, Պաղեստին: Իրենց սահմանափակ ուժերը ցրուեցին մեծ սահմաններու վրայ և ամեն տեղ մնացին տեղացի մեծամասնութեանց մէջ որպէս անարժէք փոքրամասնութիւն, որով և ձուլուեցան տեղացիներու հետ: Այս պատճառով ալ անոնք ոչ ազգագրօրէն, ոչ ալ քաղաքական տեսակէտէն չյաջորդեցին ոչ Ուրարտուին, ոչ Ասորեստանին, ոչ ալ Փոքր Ասիական փոքրիկ իշխանութեանց: Բայց Կիմրներու և Սկիւթներու արշաւանքը մեծ հետեւանքներ ունեցաւ արեւելքի համար: Անոնք լսախտեցին արեւելքի հաւասարակշռութիւնը, հարուածեցին Ուրարտուն և Ասորեստանը. թուլցուցին զանոնք. նպաստեցին նոր ուժերու՝ Մարերու և Բարեւոնի հանդէս գալուստ և նուզղակի կերպով անոնք արեւելքի ժողովուրդներուն այն համոզումը ներշնչեցին, թէ կարելի է ազատագրուիլ Ասորեստանի գերիշխանութենէն: Այդ ազատագրման գործի գլուխն անցան Մարաստանն ու Բարեւոնը: Այն նոյն ժամանակներուն հայկական բարձրաւանդակի մէջ տեղի ունեցան քաղաքական, ազգագրական մեծ յեղաշրջումներ: Ուրարտուն ինկաւ եւ անոր յաջորդեց Հայաստանը եւ Ուրարտունի փոխարինեց՝ Հայը:

Դ. ԳԼՈՒԽ

ՈՒՐԱՐՏՈՒԻ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ, ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

ԵՒ ՄՇԱԿՈՅՅՈՒ

ԾԱԳՈՒՄԸ.— Ուրարտուն բազմաթիւ ցեղերու, ցեղախումբերու դաշնակցութիւն մըն էր. իր նախկին դաշնակիցները, Նայիրեան ցեղերը մտեր էին այդ միութեան մէջ, բայց կորսնցուցեր էին իրենց ղեկավար Ղիրքը: Այդ ցեղերը ներքին հոլովոյթով վերածուեցան մեծ և փոքր աւատական իշխանութիւններու, ուր իրաւունքը և նիւթական հարստութեան աղբիւրները տոհմէն, ցեղէն անցան տոհմապետին, որ և դարձաւ իշխան, տէր, տանուտէր: Ասոնք հարուստ էին, զինուած, ասոնց զէնքով է, որ Ուրարտուն ընդարձակուեցաւ գրաւեց հայկական բարձրաւանդակը: Ուրարտուի թագաւորն ալ այս իշխաններու շրջանակէն բարձրացող իշխան մըն էր, ան կը գործէր, կը կռուէր անոնց օգնութեամբ: Ամբողջ պետութիւնը կազմուած էր մեծ ու փոքր երկիրներէ, թագաւորութիւններէ, որոնք տոհմա ցեղային հիմքեր, արմատներ ունէին: Անոնք հաւաքուած էին Ուրարտուի, Տուշպայի շուրջը: Ուրարտուի կազմի մէջ կը մտնէին այնպիսի երկիրներ, որոնք ունէին իրենց անցեալը, կռուեր էին Ասորեստանի դէմ, ստեղծեր էին տեղական, տոհմա ցեղային միութիւններ: Այսպէս էր Ծուպանին, մեր Ծոփքը, այսպէս էր Ալշի երկիրը, մեր Աղձնիքը, Հայաստանի հիւսիս-արեւմտեան կողմերը Ուրարտունէն առաջ կը հզօրանար Դայաէնի երկիրը, կամ Ուրարտուական Դիաեռլին, որ երբեմն կը կանգնէր հիւսիսային ցեղերու ապստամբութեան զլուխը: Ասոնց յաջորդեց Ուրարտուն, հզօրացաւ, ստեղծեց կեդրոնացած

ուժեղ պետութիւն: Իր ներքին ապահովութեան համար ան պայքար մղեց այս ցեղերու, անոնց տեղական միութիւններու դէմ, ցրուեց զանոնք զանազան վայրերու մէջ, ջլատեց անոնց ուժերը:

Ուրարտու զինու զօրութեամբ ստեղծուած պետութիւն մըն էր: Որքան ալ որ Հայաստանի բարձրաւանդակի վրայ անոնք միեւնոյն լեզուէն խօսող, միեւնոյն ծագումն ունեցող ցեղերու հանդիպեցան, բայց և այնպէս անոնց լուծը ծանր կուգար հեռու և մօտիկ այդ ցեղերուն: Անոնք չէին ենթարկուեր Ուրարտուին: Մայրամասերու մէջ միշտ տեղի կ'ունենային ապստամբութիւններ, երբեմն ալ բազմաթիւ աւատաւէր իշխանութիւններ կը միանային Ուրարտուի դէմ: Ասոր հետեւանքով նուաճումով կառուցուած իշխանութիւնը կը դառնար անկայուն, սահմանները անորոշ: Այս է պատճառը, որ Ուրարտուի տաղանդաւոր թագաւորները տեւական արշաւանքներ կ'ընէին դէպի ապստամբ գաւառները, նորէն վերագրաւելու և իրենց ենթարկելու: Արգիշտին արշաւեց այն երկիրները, որոնք նուաճեր էր Մենուան, իսկ Սարգուրին կը վերանուաճէ այն ցեղերը, որոնց նուաճեր էր Արգիշտին: Այս ապստամբութիւնները, ներքին տարածայնութիւնները կը կասեցնէին պետութեան կառուցումը, անոր մասերու միասնականութիւնը: Ասոր հետեւանքով Ուրարտուի պետութեան կառուցումը երբեք չամբողջացաւ, չլրացաւ, ան ինկաւ իր քաղաքական միաւորման ճամբու վրայ: Ամեն բան կախուած էր կեդրոնական իշխանութենէն, եթէ ան թոյլ էր, կամ ժամանակաւորապէս թուլցեր էր, ապա ամբողջ պետութիւնը քայքայման վտանգի տակ էր: Մայրամասերու մէջ անջատուականութիւնը խիստ չափերու կը հասնէր: Այդ պարագային՝ ամեն ինչ նորէն պէտք էր սկսիլ՝ հաւաքել, կարգի բերել, նուաճել երկիրները, իշխանութիւնները: Ուրարտուն քանի մը անգամ այդպիսի քայքայող տագնապի ենթարկուեցաւ. երբ Սարգուրին պարտուեցաւ Տիգրաթ Պաւսարէն՝ ամբողջ հիւսիսը ապստամբեցաւ և անջատուե-

ցաւ: Ռուսան երբ պարտուեցաւ և անձնասպան եղաւ՝ Ուրարտուի բոլոր մասերու մէջ դժգոհ տարրերը ապստամբեցան:

ԳՐԱԻՌՈՒԱԾ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԿԱՌԱՎԱՐՆԵՐԸ — Գրաւուած երկիրներու մէջ Ուրարտացիք կը պահէին բանակներ՝ կարգու կանոնի վրայ հսկելու և կը հիմնէին բերդեր, շատ անգամ ալ տեղական իշխաններու բերդերը կը գրաւէին, կը վերաշինէին և կը դարձնէին զինուորական կեդրոնատեղի, կայազօր: Զօրքը կ'ապրէր տեղացիներու միջոցներով: Տուչպայէն կ'ուղարկուէին կառավարիչներ իշխանապետութիւն մը կառավարելու համար: Կը մշակուէր շրջաններու վարչութեան գաղափարը. ասոնք կ'ըլլային փոքր՝ իրենց մէջ կ'ամփոփէին այս կամ այն լեռնաշխարհը, գետահովիտը: Ղրկուած կառավարիչները մեծ լիազօրութիւններ կ'ունենային: Անոնք հարկեր կը հաւաքէին, երկրի խաղաղութեան վրայ կը հսկէին: Տեղական իշխանները որպէս կասկածելիներ կը զրկուէին Տուչպա, երբեմն ալ ուրարտական կառավարիչներու հսկողութեան տակ կը շարունակէին վարել իրենց իշխանապետութեան գործերը: Հարկը կուտային մթերքներով, անասուններով, մետաղներով: Յաճախ Ուրարտացիք ալ Ասորեստանի գործելակերպին կը դիմէին՝ գրաւուած երկիրներու բնակիչները տեղահան կ'ընէին մեծ զանգուածներով, կը փոխադրէին գլխաւորապէս Բիանայի շրջանը, Տուչպա, ուր կը զարգանար խառն և բազմատարր բնակչութիւն:

ԽԱՆՈՒԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ ԿԸ ԴԱՌՆԱՅ ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ.— Նուաճուած երկիրը կեդրոնի հետ կապելու մէկ միջոցն ալ խալիբ աստուծոյ պաշտամունքի համապետական դարձնելն էր: Խալիբ պետական միութեան խորհրդանիշն էր. ան՝ տինաստիական աստուած էր: Ան Ուրարտուի պահապանն էր: Ամեն տեղ անոր համար տաճարներ կը կառուցուէին, քրմական դաս մը կը հաստատուէր անոր սպասարկելու համար: Գրաւուած երկիրներու մէջ բերդերու, ամրոցներու հետ միաժամանակ կը բարձրանար խալիբին նուիրուած

տաճարը. կառավարիչներու հետ միասին՝ կ'ուղարկուէին քրմական խումբեր: Նուաճուած հողերու մէկ մասը կը նուիրէին Խալդ աստծոյն: Տեղական, ցեղական աստուածները չէին հալածուեր, բայց ստորագաս կը համարուէին և որեւէ ձեւով կը կապուէին Խալդի հետ, իբրև անոր գործակիցը, օժանդակը: Նոր կառուցուած տաճարներու մէջ աղօթքներ, մաղթանքներ կ'ընէին ուրարտական լեզուով: Այս լեզուն պաշտօնեաներու, զօրքի և քուրմերու միջոցով կը տարածուէր բուն ուրարտական շրջաններէն դուրս, նուաճուած երկիրներու մէջ: Տեղերու մէջ ալ կ'ըստեղծուէր խաւ մը, դաս մը, որ ամենօրեայ չվման մէջ էր ասոնց հետ, կ'իւրացնէր անոնց լեզուն, կրօնական գաղափարները: Շատերը իբրև ստորագաս պաշտօնեաներ կը ծառայէին Ուրարտացիներու մօտ և շահեր ունէին անոնց հետ գործակցելու: Ուրարտուի լեզուն անոնց շատերու լեզուին մօտ էր, ազգակից էր, միայն աւելի զարգացած, աւելի բարձր աստիճանի էր հասած քան իրենցը:

ՊԵՏԱԿԱՆ ՀՈՂԵՐ.— Նուաճուած երկիրներու մէջ Ուրարտուի կառավարիչները կը բռնագրաւէին տեղացիներու հողերէն մաս մը և կը դարձնէին պետական հողեր: Նախկին իշխանական տուներու հողերը, տաճարներու, աստուածներու հողերը, Ուրարտուի թագաւորական ընտանիքի սեփականութիւնը կը դառնային: Այս հողերու, այգիներու որոգման համար է, որ թագաւորները ջրանցքներ կը կառուցէին, եղածը կը նորոգէին: Հիւսիսային նահանգներու վարչական կեդրոնը Արգիթեսիլիին էր. այնտեղ սահմաններու պաշտպանութեան համար մեծ բանակ կը պահուէր. հոն կը նստէր թագաւորի ներկայացուցիչը, որ տեսակ մը փոխարքայ էր Հիւսիսային շրջանները կառավարելու: Լիթերորդ դարուն քաղաքական կեդրոն կը դառնար Կարմիր բլուրի վայրը, այսօրուայ Երեւանի մօտ. ան աւելի մօտ էր սահմաններուն, ուր արդէն երեւցեր էին Գիմրները և Սկիւթները:

ՈՒՐԱՐՏՈՒԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸ.— Ուրարտուն առա-

ջինն էր, որ գլուխ բերաւ Հայոց լեռնաշխարհի մէջ ապարող ցեղերու միութիւնը: Ան առաջինն էր, որ ծրագրուած ձեռք փորձեց կրօնի, բանակի, վարչութեան միջոցով ըստեղծել մէկ պետութիւն, որ աստիճանաբար պիտի առաջնորդէր ուրարտական ժողովուրդի միակազմութեան: Միայն իրարու քով ապրող ցեղերը, սն փորձեց միացնել: Ուժեղ ցեղերուն դիմադրական կորովը թուլցուց՝ բաժնեկով, ցըրուելով զանոնք, պայքարեցաւ ցեղերու ներքին անհաշտութեան դէմ, ջանաց համաուրարտական միութիւն մը ստեղծել: կրօնը, լեզուն, վարչութիւնը, բանակը, քուրմն ու պաշտօնեան այս նպատակին պիտի ծառայէին: Բայց այս փորձը կիսատ մնաց, Ուրարտուի ուժերը այս նպատակը իրագործելու համար անբաւարար էին, և անոր քաղաքական տիրապետութիւնն ալ կարճատեւ եղաւ: Ան՝ իր ուժերը աւելի շուտ սպառեց տեւական կռիւներու մէջ, քան նուիրեց շինարար ստեղծարար աշխատանքի, բայց իր հնարաւորութեան սահմանին մէջ ան մեծ գործ կատարեց: Ուրարտուն մինչեւ վերջն ալ մնաց բազմացիղ և բազմալեզու պետութիւն, որուն բաղկացուցիչ մասերը շատ քիչ էին միացած իրարու հետ: Նուաճուած երկիրներու մէջ անոնք փոքրամասնութիւն էին — զօրք, պաշտօնեայ և քուրմ: Անոնք ունէ տեղ գաղութ չհաստատեցին, ինչպէս կ'ընէին շատ աւելի ուշ՝ Յոյները, Հռոմէացիք: Իրենք՝ Ուրարտացիք հոծ զանգուածներով հաստատուելը էին միայն հարաւային Հայաստանի մէջ վանայ լիճի շուրջը: Պետութեան մէջ անոնք միայն վարիչ փոքրամասնութիւն էին:

ԹԱՂԱՒՈՐԸ.— Մշտական կռիւները, նուաճուած ցեղերու ապստամբութիւնները՝ խորապէս ազդեցին Ուրարտուի պետական կազմաւորման վրայ: Յաղթանակներու, յաջողութեան համար անհրաժեշտ էր իշխանութեան կեդրոնացումը մէկու, թագաւորի ձեռքը: Անկէ կը բղխէր ամեն իշխանութիւն և օրէնք: Ան զինուորական հրամանատար էր, քաղաքական վարիչ էր, մեծ քրմապետ էր: Ան է, որ կը նշանակէր բարձր պաշտօնեաներ, քուրմեր: Ան գերագոյն

դատաւոր էր: Անոր անձը-սուրբ էր: Իրօք երկրի գերա-
գոյն տէրը Խալդ աստուածն էր, Թագաւորը միայն անոր
ներկայագուցիչն էր: Ան կը գործէր Խալդի հովանիի տակ.
Խալդն էր, որ կը ներշնչէր անոր այս կամ այն գործը,
չինարարութիւն կամ պատերազմ: Արձանագրութեանց մէջ
Խալդը կը կոչուի «տէր», հրամայող, իշխող, ձիւ սերը»,
իսկ Թագաւորը իրեն կ'անուանէ «մարդկանց հիւանալի հե-
վիւ»: Ասորեստանեան արձանագրութեան մը մէջ կը յիշուի
թէ Ուրարտուի Թագաւորները պղնձեայ ամաններ, բա-
ժակներ, Թասեր նուիրական գինիով կը լեցնէին և կը նուի-
րէին Խալդ աստուծուն: Սրբազան գինին տօնական արա-
րողութեանց պահուն կը գործածէին:

Թագաւորի գործերու մէջ պատերազմականը առաջին
տեղը կը գրուէր: Ան անձամբ կ'առաջնորդէր իր բանակը,
Ուրարտուի Թագաւորները լաւ զօրավարներ էին: Անոնք
կը պտնէին մնայուն բանակ, որուն մէջ դեր կը խաղային
«Ուրուտ» մարդիկ: Ուրարտուն ընդօրինակներ էր Ասորես-
տանի ռազմի կազմակերպութիւնը: Կռիւներու մէջ պե-
տութիւնը ռազմականացաւ, ամեն բան տրամադրուեցաւ
պետութեան պաշտպանութեան համար. այդ նոյնը աւելի
մեծ չափով կատարուեցաւ Ասորեստանի մէջ: Ստեղծուեցաւ
արհեստով զինուորներու դաս մը: Ուրարտացիք ունէին
հեծելազօրք, մարտակառքեր, հետեւակ բանակ. վերջինները
լաւագոյն կռուողները էին Ուրարտուի լեռներու մէջ:

Թագաւորները միայն մարտիկներ չէին, այլ կը ղեկա-
ւարէին նաեւ երկրի շինարարութիւնը: Հայաստանի բոլոր
կողմերը մնացեր են անոնց շինարարութեան հետքերը: Ա-
սոնք մասամբ կապուած են երկրի պաշտպանութեան հետ՝
բերդեր, ամրոցներ են, բայց մեծ մասը կապուած է երկ-
րի տնտեսութեան, ջրանցքաշինութեան, ուղղման հետ:
Բոլոր Թագաւորները թողեր են շինարարութեան վերաբե-
րող արձանագրութիւններ, որոնք կը յիշատակեն այգե-
գործութեան, պարտէզներու, ուղիներու կառուցման, շէն-
քերու, պալատներու և տաճարներու շինութեանց մասին:

Շինարարական այս մեծ ձեռնարկութեանց գլուխ գործաքնէ Մեհնուայի մեծ ջրանցքը, որ մօտ եօթանասուն քիլոմետր երկարութիւն ունէր և ջուր կը մատակարարէր մայրաքաղաքին: Հայոց առասպելաբանութիւնը ասոր շինութիւնը վերագրեց Շամիրամ թագուէին: Մենուայ իր մէկ արձանագրութեան մէջ կը մեծարէ իր տիկինը՝ Թուրիան. անոր յիշատակը յաւերժացնելու համար այգիներ կը տնկէ և հեռուներէն ջրանցքով ջուր կը բերէ:

Արհեստական ոռոգման ենթարկուելու են վաղարշապատի՝ Զուարթնոցի այգիները. Արմաւիրի՝ հողերը, Ուրմիոյ մէջ Ուլիսա քաղաքի հողերը, Վանի շրջակայքը: Անոնց ջրանցքներու հետքերը դեռ կը մնան Արագածի շուրջը: Արարատեան դաշտի մէջ խաղողի մշակութիւնը զարգացած էր, և կը կազմէր գլխաւոր հարստութեան աղբիւրը. հարաւի մէջ կը գերակշռէր հացաբոյսերու մշակութիւնը. խաղողի որթը կը կոշուէր «ծառ գինու»:

ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ. — Այս բոլորը՝ հող, բոյս, ջրանցքներ, պետութեան, արքայական սեփականութիւն էին: Ջրանցքներու շինութիւնը, ամեն տեսակ երկրագործութիւն կը պահանջէր ոչ միայն ընկերային որոշ, ուժեղ կազմակերպութիւն, պետական-վարչական կարգ, այլ և մեծ քանակութեամբ աշխատող ձեռքեր, և որակուած ու մասնագիտացած ճարտարապետներ: Հողը հիմնական աղբիւրն էր հարստութեան, որու արտադրութիւններով կ'ապրէր հասարակութիւնը: Հողը արքայական, պետական, տաճարական սեփականութիւն էր: Երկրի տէրերը տաճարներու կը նուիրէին անասուններ, պարտէզներ տնկարաններ և խաղողի այգիներ: Անասնապահութիւնը նոյնպէս մեծ տեղ կը բռնէր երկրի հարստութեան մէջ: Հայոց լեռնաշխարհը ընտիր արօտատեղիներով, սառնորակ ջրերով շատ կը նըպաստէր անոր զարգացման: Անասուններու մեծ հօտեր ունէին պալատը, շրջաններու կառավարիչները, տաճարները: Բոլոր աշխատանքները կը կատարուէին հողերու վրայ հաստատուած գիւղացիական զանգուածներու միջո-

ցով: Ասոնց իրաւական դրուժեան մասին, մանր հողատէր-
ներու գոյութեան մասին, ազատ թէ ճորտ ըլլալու մասին
դժուար է բան մը ըսել: Անոնց մեծագոյն մասը կ'աշխա-
տէր պետական, տաճարական հողերու վրայ: Ուրարտուի
մէջ շատ մեծ թիւ կը կազմէին նաեւ ստրուկները: Անոնք
մեծ մասամբ պատերազմական գերիներ էին, որոնց յետոյ
կը վաճառէին. Ուրարտացիք շատ յաճախ կը տեղահանէին
նուաճուած երկիրներու բնակիչները՝ Հաթերը, Արմէնները,
հիւսիսային ցեղերը, Ասուրները, Մանայի ցեղերը. ասոնց
մէջէն արհեստաւորները, մետաղագործները կը յայտա-
բարուէին պետական սեփականութիւն, ստրուկ և կը գոր-
ծէին հսկողութեան տակ պետական նպատակներու համար:

ԱՐՀԵՍՏՆԵՐ ՄԵՏԱՂԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ.— Գիւղատնտեսա-
կան և Զրաբաշխական այս գործերը կը կատարուէին ար-
հեստաւորներու և որակուած ճարտարապետներու ղեկավա-
րութեամբ: Մենուայի Զրանցքը, Տուշպայի միջնաբերդը,
Մուսասիրի տաճարը և շատ ուրիշ ձեռնարկներ անկարելի
պիտի ըլլար կառուցել առանց հմուտ արհեստաւորներու,
լաւատեղեակ մասնագէտներու: Ասոնք պէտք է ունեցած
ըլլային շատ բարձր ճարտարապետական ծանօթութիւն-
ներ, գիտական իմացութիւններ: Պէտք է ըլլային ոչ միայն
հմուտ քանուորներ, այլև ունենային կատարելագործուած
գործիքներ հսկայ ժայռերը փորելու, հարթելու, գծագրե-
լու, քանդակելու համար: Աշխատանքի բաժանումը և մաս-
նագիտացումը մեծ չափերու էր հասեր Ուրարտուի մէջ:
Շատ արհեստներ օժանդակ էին երկրագործութեան: Ու-
րարտուի մէջ արտակարգ զարգացման էր հասեր նաեւ մե-
տաղագործութիւնը, քարակոփութիւնը, ոսկերչութիւնը:
Այս վերջինը Ուրարտացիներէն անցաւ Հայերուն, վանե-
ցիներուն, որոնք հայոցած Ուրարտացի են և մինչեւ հիմա
ալ տաղանդաւոր ոսկերիչներ:

ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ.— Թէ ուրարտական և թէ ասուրական
արձանագրութիւնները մեզ շատ ցայտուն կը պատկերա-
ցըննն ուրարտական տնտեսութեան աստիճանը: Ուրարտուն

երկրագործներու և հովիւներու երկիր էր: Բնակչութեան ստուար մեծամասնութիւնը կ'ապրէր գիւղերու մէջ: Քաղաքները վարչական կեդրոններ էին և պաշտպանութեան ամրոցներ, հան կեդրոնացած էին արհեստները, անոնք կ'ապուած էին պաշտպանութեան և ռազմի գործերու հետ: IX-րդ դարուն Ասուր-Բանիպալը յարձակելով Ուրարտուի վրայ կը խլէ մեծ հարստութիւն. «ձիեր, ջորիներ, արջառ, ոչխարներ եւ հունձք առի»: Բայց Ուրարտուն հարուստ էր նաեւ մետաղներով: Սարգոնը Մուսասիրի կողոպուտը նկարագրելով կը յիշէ հոնկէ վերջուցած հարստութիւնը. «690 ջորի, 920 եօ, 100.225 ոչխար առի սարի, 18 մնաս ոսկի, 160 սաղանդ, 2 5 մնաս արծաթ, անագուպղինձ, պատուական փարեր, անհամար գոյնգոյն կերպասներ, զգեստներ, երկաթ»: Այս թուարկումին կը հետեւին զէնքերու, վահաններու, ռազմականքերու թուարկումը: Այս բոլորը ցոյց կուտայ, որ մետաղներու գործածութիւնը լայն չափերու էր հասեր Ուրարտուի մէջ: Բայց նկատելի է, որ երկաթն աւելի քիչ է, քան պղինձը և անագապղինձը:

ԳԻՐ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Հայկական լեռնաշխարհի վրայ Ուրարտական սեպագրերէն առաջ գործածուեր է գրութեան ձեւ մը, որ շատ մօտ է եղած պատկերագրութեան: Վանի պեղումներու ընթացքին գտնուեր են աղիւսատախտակներ, որոնք ծածկուած են եղեր պատկերագրերով, անոնք կը պատկերեն կեդանիներու գլուխներ, բոյսեր: Նոյն պատկերագրերը գտնուած են զանազան անօթներու, կնիքներու և մետաղէ առարկաներու վրայ: Բայց ամենէն հետաքրքրականը ներկայիս Հայաստանի նորագիւտ արձանագրութիւններն են: Արագածի շուրջը գտնուած են պատկերագրեր. նոյնը գտնուած է նաեւ Սեւանայ լիճի շուրջը կատարուած հնագիտական հետախուզութեանց ժամանակ: Հոս, մեծ ժայռերու վրայ փորուած կան պատկերագրեր: Հետազոտութիւնները ցոյց տուին, որ այս գիւտը համատարած է Հայաստանի մէջ: Անոր հետքերը նկատելի են Արարատեան դաշտի, Շիրակի մէջ: Այս փաստերը կ'ապացուցեն, որ Հայաստանի մեզ Ուրարտացիներէն առաջ ապրեր է

ժողովուրդ մը, որ իր մեքերը արտախայսեր է պատկերագրերով: Որով Ուրարտուի սեպագրերը առաջին գիրը չեն Հայաստանի հողի վրայ, այլ երկրորդը: Ո՞վ է առաջին գիրը յօրինուը և գործածողը՝ չենք գիտեր, բայց Ուրարտուի սեպագրերը, անոնց զարգացումը չեն, որովհետև անոնք փոխ են առնուած Ասորեստանէն: Նախաուրարտական այդ ժողովուրդը հասեր է մշակոյթի բարձր աստիճանի մը, որ ստեղծեր է մտքի, հոգիի արտայայտութեան այդ ձևը: Երկար մտքաուսմներէն ետքն է, անշուշտ, որ ան իր տեղը զիջեր է Ուրարտացիներուն: Անյայտ այդ ժողովուրդէն մեզ ոչինչ չէ հասեր, բացի պատկերագրերէն, որի ընթերցումը մինչև ես հիմա չէ կատարուած:

ՈՒՐԱՐՏՈՒԻ ԳԻՐԸ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ.— Ուրարտուի սեպագրերու հնարիչները և տէրերը թագաւորներն են: Անոնք է, որ գրի կարիք ունէին, անոնք և քուրմերը: Մէկը իր գործերը, յաղթանակներն է, որ պէտք է գրի առնէր, և թողուր գալիք սերունդներուն. միւսը իր աստուածներու պատգամները կը յաւերժացնէր և զայն կը փառաբանէր: Ամբողջ Արեւելքի մէջ գիր ու գրականութեան հնարողները այս երկու ղեկավար խաւերն են եղեր: Տեւական շփման մէջ ըլլալով Ասորեստանի հետ՝ Ուրարտացիք անոնցմէ վերցուցին սեպագրերու գործածութիւնը: Այս բանը կատարուեցաւ IX-րդ դարու կէսերուն, երբ ըսկիզբ կ'առնէր Ուրարտուի պետութիւնը: Սարգուրին՝ իր առաջին արձանագրութիւնը կը փորագրէ Ասուրերէն ու սեպագիր նշաններով: Բայց կ'անցնի հազիւ սերունդ մը և անոր որդին Իսպուռնին ասուր լեզուն կը փոխարինէ ուրարտերէնով և կը կազմէ ուրարտական առաջին արձանագրութիւնը: Ասոր համար ասուրական սեպագրերը կը յարմարեցնէ ուրարտական հնչիւնին, վանկային սխտեմին, կը կրճատէ, կը պարզացնէ, ուրիշ խօսքով կ'ազգայնացնէ: Իսպուռնի այս բարենորոգութիւնը նշանակալից երեւոյթ է Հայաստանի պատմութեան մէջ: Ուրարտուի պատմութեան յուսաբանութիւնը հիմա հնարաւոր է հիմնել նաեւ տեղական, ազգային աղբիւրներու վրայ: Սեպագրերու գիւտը

ցուցանիչ մըն է զարգացող ինքնաճանաչութեան: Ուրարտուն IX ըդ դարէն սկսեալ կը մտնէ Մերձաւոր Արեւելքի գիր և գրականութիւն ունեցող ժողովուրդներու շարքը:

Ուրարտուի գրականութիւնը արձանագրական է: Ան մեծ կոթողներով ցրուած է Հայաստանի բոլոր կողմերը: Ուր որ հասեր են Ուրարտուի թագաւորները, հոն ալ բարձրացուցեր են իրենց արձանագրութեան քարակոթողները: Մինչեւ հիմա գտնուած են երկու հարիւրէն աւելի այդպիսի արձանագրութիւններ: Անոնց բովանդակութիւնը աղքատ է, միակողմանի: Բոլոր արձանագրութիւնները կ'ըսկսուին ինչպիսի փառաբանութեամբ, ապա կուգայ կազմողի մասը: Վերջն ալ անէժքի բաժինը: Ուրարտական արձանագրութիւնները մշակեր են որոշ և պայտօնական գրելաձև և լեզուի տեսակէտէն ալ անոնք աղքատ են, պէտք է ենթադրել, որ ուրարտական ամբողջ բառամթերքը և քերականական կառոյցը չէ արտայայտուած արձանագրութեանց մէջ: Ուրարտացին անշուշտ ունեցեր է իր ժողովրդական վէպը, դիւցազներգութիւնները, հերոսներու փառաբանութիւնը: Այդ մեծ նուաճումներ և տեւական կռիւներ ընող ժողովուրդը չէր կրնար իր երգերը, վէպը չունենալ, որոնց մէջ կը փառաբանուէին ազգային հերոսները, յաղթողները: Բայց այս բոլորը չէ արտայայտուած արձանագրութեանց մէջ: Անոնք բերանացի պատմուեր են, երգուեր և անցեր են սերունդէ սերունդ: Անոնք չեն կորեր. պէտք է ենթադրել, որ անոնք պէտք է անցած ըլլան Ուրարտացիներու յաջորդ և ժառանգ Հայերուն, որոնք իւրացնելով այդ բոլորը՝ պատմեր են հայերէն:

ԿՐՕՆԸ. — Ուրարտուի թագաւորները իրենց ռազմական-քաղաքական գործը սերտօրէն կը կապէին ամառուածներու հետ, յատկապէս Խալդ աստուծոյ հետ: Սկիզբը անոնք ունէին կրօնական նախնական պատկերացումներ. բնութիւնը լեցուցեր էին բարի և չար ոգիներով: Իւրաքանչիւր տոհմ, ցեղ ունէր իր պահապան ոգին: Բայց պատմական շրջանին այս բազմաթիւ աստուածներու մէջ որոշ կարգ կը մտնայ: Կը մշակուի տասուածներու աստի-

Ճանաչողութեամբ, յաջորդականութիւնը: Կրօնական կեանքին վերաբերող արձանագրութեանց մէջ առաջին տեղը կը բռնէ «Մենքի դրան» արձանագրութիւնը: Անոր հեղինակը Խաչունին է և իր որդին Մենուան IX-րդ դարու վերջին: Այստեղ յաջորդական ձեւով՝ ըստ գիրքի, արժէքի, յիշուած են Ուրարտուի գլխաւոր և երկրորդական աստուածները, որոշուած է նաև անոնց մատուցուելիք զօհերու քանակը: Այս բազմաթիւ աստուածներու գլուխը կանգնած է իջալի աստուածը, որու գլխաւոր տաճարը կը գտնուէր Ուրարտուի սահմաններէն դուրս՝ Մուսասիրի մէջ: Ան հաւանորէն ուրարտական այն հաստուածի աստուածն էր, որ հարաւէն բարձրանալով հասեր էր Վանայ լիճի արեւելեան ափերը, միաձուլուելու Բիա ցեղի հետ. գրաւեր Մուսասիրը և անոր աստուածը իջալի կապեր էր իր հզօրութեան հետ: Հետագային, երբ պետութեան կեդրոնը փոխադրուեցաւ Տուշպա, իջալի դարձաւ իշխող տան հովանաւոր աստուածը: Իջալին է երկրի իրական տէրը և բոլոր գործերու վարիչը: Բոլոր արձանագրութիւնները կ'ըսկսին իջալի փառաքանութեամբ: Ան է, որ կ'առաջնորդէ ուրարտական բանակը և յաղթութիւն կը պարգևէ: Անոր կը տրուին «նոզայուլին», «ամենակալին», «եսկողին», «եխնուլին» որակումները: Ամենէն շատ կը գործածուի «վեհին», «մեծին» մակերբը: «Մենքի դրան» արձանագրութիւնը ցոյց կուտայ ոչ միայն աստուածներու կարգը, անոնց յարգն ու գիրքը, այլ և Ուրարտուի հասարակական ու քաղաքական կառոյցի պատկերը: Ամեն «քաղաք», «երկիր» ունէր իր աստուածը, որը տեղ էր գտեր ուրարտական աստուածներու շարքին: Ուրարտուն հաւաքեց իր շուրջը նախրեան ցեղերը և անոնց աստուածներն ալ տեղ գտան ուրարտական կրօնական ամբողջութեան մէջ: Իջալի Ուրարտուի քաղաքական հզօրութեան խորհրդանիշն է: Ան սկիզբը եղեր է ցեղի մը շրջանի մը աստուածը, և հաւանաբար այդ ցեղը ապրեր է Չաբ գետի ակունքներու մօտ՝ Մուսասիրի մօտերը: Ուրարտուի հզօրացման հետ կը ծաւալուի նաև իջալի պաշտամունքը՝ տեղական և ցեղական աստուածը

կը դառնայ համապետական աստուած: Արձանադրութեանց մէջ երբեմն իրաւորի հետ կը յիշուին Տէյեքբա և Արդիմիմի աստուածները: Անոնք միշտ կը յիշուին իրաւորէն հաջը՝ տնկէ ստորագաս են. բայց իրաւորի հետ կը կազմեն երրորդութիւն մը անոր առաջնութեամբ: Աստուածէ ետքը կուգան տեղական և ցեղական աստուածները: Եւ այդ կարգով ալ աստուածներուն մատուցուող զոհերու քանակը կը պակսի: Աստուածները կ'ըստանան կենդանիներ, թռչուններ, հաց, գինի: Ոչխար և արջա՝ զոհաբերութեան ամենէն յարգի կենդանիներն էին: Չոհաբերութենէն իրաւոր կ'ըստանար մեծագոյն բաժինը՝ 17 արջառ, 34 ոչխար, մինչ Տէյեքբան՝ 6 արջառ և 12 ոչխար. Արդիմիմի՝ 4 արջառ և 8 ոչխար: Մնացած աստուածները աւելի պակաս:

Այսպիսի բարդ կազմակերպուած կրօնական աշխարհը պէտք է ունենար իր քրմական դասը: Թագաւորն ինքը քրմապետ էր: Բայց քրմական դասի մասին արձանագրութիւնները ստոյգ տեղեկութիւն չեն տար: Տաճարները շատ հարուստ են. անոնց շտեմարաններու մէջ կը հաւաքուին մեծադէմեր, մթերք, զէնք: Տաճարական հարստութիւնը կը գտնուէր աստուածներու հովանիին տակ և կը համարուէր անձեռնմխելի: Մշակուել էր բանաձեւ մը տաճարական ինչքը բռնագրաւողներու դէմ: «Ով զոհակեցնողանիցերը հայտի դուռներէն դուրս թանի եւ ոչնչացնել ձգի... թող հայքը անոր անունը երկրի վրայէն ջնջի: Ով որ այս արձանագրութիւնը սրբաւարտիցի դուրս հանի, ով որ այդ ջարդի, ով որ մեկ ուրիշին քե՛զ գնա ջարդի, թող յանցաւորի անունը՝ հայք, Տեքբա եւ Արդիմի աստուածները Մուսասիբի երկրէն բնաջնջեն»:

Ուրարտուի կրօնը՝ զարգացած, միաւորման ուղին բռնած պետութեան մը կրօնն էր, որ կ'ընթանար զուգընթաց ցեղերու, տոհմերու համաձուլումին: Անոր հետ զոյգ կ'երթար նաեւ ուրարտական ցեղերու և ժողովուրդներու աստուածներու համաձուլումը. բայց այս երկուքն ալ կլիսասա մնացին և լրման չը հասան:

ՄԱՍՆ ՎԵՑԵՐՈՐԴ

Ի Ր Ա Ն

Ա. ԳԼՈՒԽ

ԻՐԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

Իրանը Մերձաւոր Արեւելքի ամենէն արեւելեան նր-
կիրն է: Ան կը տարածուի Պարսից ծոցի, Օմանի ծովի և
Կասպից ծովի մէջ՝ հարաւէն հիւսիս: Արեւելքէն՝ Միջին
Ասիայէն ան կը բաժնուի Հինտուգուշ և Սուէյման լեռնե-
րով: Իսկ արեւմուտքէն անոր սահմանը Չաքրօշեան լեռ-
նաշղթան է, որով կը բաժնուի Միջագետքէն և Հայաստա-
տանէն: Հնդկաստանէն կը բաժնուի Ինտոս գետով:

ԻՆՒԿՐՈՒԹԻՒՆԸ. — Իրանի բարձրաւանդակը գրեթէ
ամեն կողմէն շրջապատուած է լեռնաշղթաներով. ասոնք
արգելք կ'ըլլան ծովերու խոնաւութեան երկրի ներսը թա-
փանցելուն, այդ պատճառով ալ կեդրոնական մասերուն
մէջ գոյացած է ընդարձակ անապատ մը՝ Լադ անապատը,
որ երբեմն եղեր է ծովի յատակ: Ներկայիս շատ տեղեր
ծածկուած է աղի շերտով, ծովէն մնացեր են քանի մը
լճակներ, որոնց ջուրն ալ աղի է:

Բարձրաւանդակը ցամաքային կլիմայ ունի. ձմեռը
ջերմաստիճանը կ'իջնէ մինչեւ — 30⁰. ամառը կը բարձրա-
նայ 40⁰-45⁰: Այսպիսի պայմաններուն մէջ բնակելի յար-
մար վայրեր են լեռնալանջները, հովիտները, զուգահեռ

լեռնաշղթաներու մէջ ընկած ընդարձակ դաշտագետինները։ Դաշտերն ու հովիտները լեցուած են լաւայով, գետերի բերած տիղմով, հետեւապէս արգաւանդ են։ Զմրան՝ լեռները կը ծածկուին ձիւնի հաստ շերտով, գարնան ձիւնը կը հալի և ջուրը բազմաթիւ գետակներով և գետերով կը մտնէ խոր ձորերու հովիտներն ու դաշտերը։ Այնան՝ անձրեւներ կուգան։ Միայն բարձրաւանդակի հիւսիսային և արեւմտեան մասերն են, որ ունին այս նպաստաւոր պայմանները, լեռնոտ են, ջրառատ և հողն արգասաբեր է։ Ուստի և բնակչութիւնը կեդրոնացած է այս վայրերու մէջ։ Բնակելի տեղեր են կասպից ծովի հարաւ արեւմտեան ասփերէն, Ատրպատական, մինչև Զաքրօշեան լեռները, ապա գուգահեռ ընթացող լեռներով մինչև Պարսից ծոցի մօտերը։ Այստեղ՝ Իրանի հարաւարեւմտեան եռանկիւնին կը կազմուի Էլամը, լեռնոտ երկիր մը, որ կ'իջնայ և կ'իջիէ հարաւային Միջագետքի վրայ։ Միջագետքի հիւսիսը, այժմեան Բուրտիստանի մէջ երկու լեռնաշղթաներ իրար կը կտրեն, Տաւրոսեան և Զաքրօշեան լեռնաշղթաները և կը ստեղծեն լայնածաւալ լեռնաշխարհ մը՝ կորդուաց աշխարհը, որ ռազմական մեծ արժէք կ'ունենայ իր շրջապատող երկիրներուն և անոնց մէջ կազմաւորուած պետութիւններուն համար։ Կորդուաց աշխարհը անյիշելի ժամանակներէն ապաստան է եղած ամեն լեզուներով խօսող և զանազան ծագում ունեցող ժողովուրդներու։ Իրանի բարձրաւանդակի վերեւ յիշուած եռանկիւնին՝ հասպից ծով - Զագրօեան լեռներ - Պարսից ծոց՝ Իրանի արգասաբեր երջանն է։ Հոն կ'աճի ցորեն, գարի, եգիպտացորեն։ Կը մշակուի պղտղատու ծառեր՝ ծիրան, կեռաս, խնձոր, սալոր և խաղող։ Այս եռանկիւնին մէջ՝ հիւսիսը կլիման մեղմ է, չորս եղանակները կանոնաւոր կը յաջորդեն իրարու, հարաւը տաք է, խոնաւ և շատ տեղեր՝ ծովամերձ վայրերու մէջ՝ վատաւորը։ Մթնոլորտային տեղումները բաւարար են, լեռներն ալ ծածկուած են անտառներով։

ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆ. — Արեւմտաքի գուգահեռ լեռներու

լանջերուն դաշտերու մէջ է, որ կը հաստատուին Իրանի նախապատմական և պատմական ժողովուրդները: Հիւսիս՝ Մարբը՝ գլխաւոր քաղաքն ունենալով Էկրասանը, հարաւ՝ Պարսիկները, որոնց քաղաքական կեդրոնը՝ Պետոպօլիսն էր: Պարսից ծոցի մերձակայ լեռնաշխարհի մէջ, Գարուն գետի արեւմտեան կը տարածուի Էլամը՝ Շոք քաղաքով, որ արեւելքի հնագոյն քաղաքակրթութեան կեդրոններէն մէկն է: Էլամիք, Մարբը և Պարսիկները՝ իրենց հայրենիքի մէջ հաստատուելէն ետք՝ մնայուն շփման մէջ կը մտնան Միջագետքի ժողովուրդներու հետ: Այդ շփումով անոնք իւրացուցին Սումէր-սեմական քաղաքակրթութեան տարրերը:

ԷԼԱՄ.— Իրանի պատմութիւնը Մարբու և Պարսիկներու հանդէս գալով չէ որ կ'ըսկսի: Անոր հարաւ-արեւմըտեան գաւառներուն մէջ արդէն կ'ապրէին ցեղեր, որոնք առաջին պատմական ժողովուրդն էին Իրանի մէջ: Ասոնք կը պատկանէին Փոքր-Ասիական ժողովուրդներու թիւին, որոնք Իրանի մէջ հաստատուելէն անյիշելի ժամանակներէն, գաղթել էին Հայաստանի վրայով, որուն նախնակա՛ն բնակիչներն ալ Փոքր-Ասիական էին: Էլամի գլխաւոր քաղաքը, Շոքը՝ իր հողերուն տակ պահեր է մշակութային քանի մը շերտեր տարբեր ժամանակներէն և տարբեր ժողովուրդներու ձեռքով ստեղծուած: Սումէր-Ակադացիներէն շատ առաջ Էլամը բնակչութիւն ունէր, որոնք Անզիտներ կը կոչուէին ոչ սեմական էին, ոչ արիական: Հետագային Փոքր Ասիական ցեղերը փոխարինեցին Անզիտները:

Շոշի հնագոյն շերտերուն մէջ կը հանդիպինք ոչ միայն քարէ գործիքներու և զէնքերու, այլ և պղինձէ և երրեմի ալ երկաթէ՝ սուր, նիզակ, դանակ, հայելի, ինչպէս և շատ նուրբ հիւսուածքի կտորներու: Շոշի դամբանները մեզ առատ նիւթ կը մատակարարեն Էլամներու հոգեւոր-կրօնական աշխարհը հասկնալու համար: Անոնք կը հաւատային ուրիշ կեանքի մը գոյութեան. գերեզմաններու մէջ գրտնուեցան կաւանօթներ, կերակուրի մնացորդներ, ամաններ

խմիչքներու համար, կենդանիներու ոսկորներ: Այս բոլորը կը դնէին մեռածի հետ՝ այն հաւատքն ունենալով, որ ան շարունակելու է իր կեանքը և որ կարիք պիտի ունենայ այս աշխարհի ինչքերուն: Էլամցիները տեւական կռիւներու մէջ էին դաշտաբնակ Սումէրներու և Ակադացիներու հետ՝ աւարի, հօտերու, արօտավայրերու, մետաղներու, շինանիւթերու համար: Անոնք մինչեւ եօթներորդ դար պահեցին իրենց անկախութիւնը և եղան բնական միջնորդներ երկու աշխարհներու՝ Իրանի և Միջագետքի միջեւ: Անոնց մէջէն առաջ եկաւ վաճառականներու դաս մը, որ սումէրական արտադրութիւնները կը փոխադրէր Իրանի բնակիչներուն և անոնցիւններն ալ կը բերէր Միջագետք: Այս տնտեսական փոխանակութեան կապերով Միջագետքի քաղաքակրթութիւնը պատուաստուեց Էլամին մէջ: Էլամի վաճառականները կ'իջնային Պարսից ծոց և առեւտրական յարաբերութեան մէջ կը մտնային արաբական թերակղզիի արեւելեան մասի բնակիչներուն հետ: Առեւտրական կապերուն կը յաջորդէին քաղաքական և զինուորական յարաբերութիւններ: Էլամցիները շարք մը յաղթական կռիւներ մղեցին Սումէրներու, Ակադներու դէմ. գրաւեցին անոնց քաղաքները: Էլամի Շոշ քաղաքի մէջ է գտնուած Նարամ-Սինի և Համուրաբի օրէնքներու քարակոթողները. յաղթական կռիւներէն յետոյ Էլամի թագաւորները այս բոլորը փոխադրած են իրենց երկիրը: Անոնք փորձեցին մրցիլ Ասորեստանի հետ, թոյլ չտալ, որ ան իջնայ հարաւային Միջագետք, միշտ կ'օգնէին Բաբելոնին՝ ապստամբելու Ասորներու դէմ: Սարգոն II. և Սենեքերիմ քանի մը անգամ արշաւեցին Էլամ, բայց մեծ արդիւնք ձեռք չբերին: Միայն Ասուր Բանիբալը (661—640) քսան տարուայ կռիւներէն ետք հաշուեյարդարի ենթարկեց Էլամական խնդիրը, վերջ տուաւ անոր անկախութեան: Այնուհետեւ Էլամի պատմութիւնը կը կապուի Իրանի բարձրաւանդակի արիական ժողովուրդներու՝ Մարերու և Պարսիկներու պատմութեան հետ:

ԻՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ա. ՄԱՐԱԿԱՆ ՇՐՋԱՆ

ԾԱԳՈՒՄԸ.— Մարերը և Պարսիկները հնդեւրոպական ժողովուրդներու արեւելեան կամ արիական ճիւղին կը պատկանին: Անոնք երրորդ հազարամեակի վերջերուն մտան Փոքր Ասիա Հաթերու, Միտանիններու հետ գրեթէ միաժամանակ: Մինչ Հաթերը մնացին Փոքր Ասիոյ մէջ, Միտանինները իջան Հիւսիսային Միջագետք, Մարերը անցան Իրանի բարձրաւանդակը և հաստատուեցան անոր Արեւմտեան և հիւսիսային մասերու մէջ — գրաւեցին անոր անտառապատ, կանաչաւուն, ջրառատ և արգասաբեր հովիտները, որոնք կ'իշխէին Միջագետքի վրայ: Անոնց մէկ մասը տեղաւորուեցաւ Ուրմիոյ լճէն հարաւ-արեւելք և կը կոչուէին Մահայի: Եկրատանէն մինչև Զար գետը և Զաքրոշեան լեռները կը տարածուէին Մադայները, և երկիրն ալ կը կոչուէր Մադայի երկիր: Մարերը հիւսիսէն հասեր էին մինչև Արաքս, իսկ արեւելքէն անոնք հասեր էին Կասպից ծով: Աւելի հարաւ, մինչև Պարսից ծոցը հաստատուեր էին Պարսիկները. իրենց երկիրը կը կոչուէր Պարսուա: Էլամի թուլացումով անոնք գրաւեցին նաև այդ լեռնոտ շրջանը և էլամները ձուլեցին իրենց մէջ:

Մարերը և Պարսիկները լեզուակից էին ու ազգակից: Հնդեւրոպական ժողովուրդներու՝ արիական մէկ ուրիշ հատուած հաստատուեր էր Արալեան լճի և Ինտոս գետի մէջ ինկած ընդարձակ տափաստաններու մէջ: Ասոնք մեծ մասամբ վաչկատուն ցեղեր էին: Ասոնցմէ մեծ հատուած մըն ալ կ'ապրէր Սև և Կասպից ծովի մէջ ինկած տափաստաններու մէջ: Թէ հիւսիսի, թէ արեւելքի այս արիացի-

ները շարունակ շարժման մէջ էին՝ ի խղնիր լաւ արօտա-
տեղիներու իրենց հօտերու համար: Միջին Ասիոյ աստի-
ճանական չորացման հետեւանքով՝ տափաստանները դար-
ձան անապատներ և արեւելեան արիացիները զանգուած-
ներով գաղթեցին Հնդկաստան, կասպից ծովի հարաւային
ափերով անցան արեւմուտք, ուր հանդիպեցան իրենց ցե-
ղակից և լեզուակից ժողովուրդի մը՝ Մարերուն: Անոնք
իրանի արեւմուտքին մէջ դարձան նստակեաց և աստիճանա-
բար ձուլուեցան Մարերու ու Պարսիկներու հետ: Բայց մէկ
զգալի մասը շարունակեց ապրիլ արեւելքի մէջ Արալեան
լճի և Ինտոսի մէջտեղ ինկած վայրին մէջ և թափառա-
չըրջիկ, վաչկատուն կեանք ունէր, և տեւական արշաւանք-
ներ կ'ընէր նստակեացներու վրայ:

Մարական օմնմեր. — Անասնապահութենէն երկրագոր-
ծութեան անցնելով՝ Մարերն ու Պարսիկները դեռ երկար
ժամանակ պահեցին իրենց տոհմական կառոյցը: Եւ Մա-
րերու ապա Պարսից սիտուէթիւնները միայն տոհմերու մի-
ութիւններ էին մէկ զօրեղ, իշխող տոհմի տիրապետու-
թեան տակ: Տոհմերը կը բաժնուէին գերդաստաններու,
մեծ նահապետական ընտանիքներու, ուր քանի մը սե-
րունդներ կ'ապրէին միասին՝ նահապետի մը իշխանութեան
տակ: Ամեն գերդաստան աշխատաւորական-տնտեսական
միութիւն մըն էր: Ամեն ինչ իրենք կը պատրաստէին,
դուրսէն շատ քիչ բան կը գնէին: Տոհմերը յաճախ կը
կռուէին իրարու հետ, որպէսզի ձեռք ձգեն ինչ որ իրենց
կը պակսէր:

Ամեն գերդաստան կրօնական միութիւն մըն էր. ու-
նէր իր հովանաւոր ոգին, իսկ ամեն տոհմ իր տոհմային
աստուածը: Յատուկ պաշտամունքի առարկայ էին նախ-
նիքները, որոնցմէ ոմանք տոհմի յիշողութեան մէջ դար-
ձեր էին առասպելական հերոսներ, ոգիներ և կը հովանա-
ւորէին իրենց տոհմակիցները: Մարերը բաժնուած էին
վեց տոհմերու, որոնք միեւնոյն ծագումն ու կրօնն ունէինք
նոյն լեզուն կը խօսէին: Մինչեւ VIII-րդ դարը անոն,

Վ'ապրէին բաժան-բաժան, տոհմէն բարձր, միացնող կապ մը չկար և պետութիւնը գոյութիւն չունէր: Յեղերու կեդրոնացումը կը կատարուէր աստիճանաբար Ասորեստանի Տնշման տակ: Միաժամանակ տոհմի ներսը կը կատարուէր յեղաշրջում մը: Տոհմի նախկին հաւասարութիւնը կը վերանար, կ'ըստեղծուէր անհաւասարութիւն:

ԴԱՍԱՅՆԱՅՈՒՄ.— Տոհմապետները վեր բարձրացան տոհմի միջավայրէն և դարձան իշխանաւորներ, լաւ զինուած, մշտական կռիւներու մէջ. անոնց շուրջ հաւաքուեցան մեծազանգուած կուռողներ, որոնք կապուած էին իրենց առաջնորդին: Կռիւներէն, արշաւանքներէն անոնք կ'ըստանային իրենց աւարի բաժինը: Իշխանը տէր դարձաւ մեծ հարստութեան — հօտերու, երամակներու, արօտատեղիներու և հողերու: Անոնք իւրացուցին այն բոլորը ինչ կը պատկանէր երբեմն տոհմին: Անոնք այլեւս հաւասարներու մէջ առաջինը չէին, այլ գերադաս, զինուած փոքրամասնութիւն մը կ'իշխէր տոհմի միւս անդամներու վրայ: Իսկ անոնք ալ դարձան գեղջուկ, ռամիկ, շինական — զուրկ հողէ և կապուած իշխանին և անոր հողին: Մարապարակական ցեղերու ընկերային կացութիւնը մեղի ծանօթ է այս աստիճանի վրայ՝ զինուորական ազնուականութիւն մը որ իշխանութեան և նիւթական հարստութեան տէրն է, որ կ'արտադրէ կրօնի սպասաւորներ՝ քուրմեր: Այս վերջինները կրօնը կը ծառայեցնեն իրենց շահերուն, տաճարը կը դառնայ կալուածատէր: Ի վերջոյ իշխողներու գերդաստաններէն առաջ կուգայ ընտանիք մը, ամենէն ուժեղը, հարուստը, ամենէն շատ զօրք ունեցողը, որ կը դառնայ թագաւոր և միւս իշխաններու հետ կը կառավարէ երկիրը:

Մարերու տոհմապետները խոշոր կալուածներ ունէին, անոնց հարստութեան աղբիւրը ոչխարներու, կովերու ու եզերու հօտերն էին և ձիերու ու ջորիներու երամակները: Այս բոլորը վաճառքի կը հանէին Միջագետքի և Էլամի շուկաներուն մէջ: Երկրագործութիւնն ալ զարգացաւ անոնց մօտ, հողատէր իշխանները տոհմէն գրաւեր էին արօտատե-

ղիները, դաշտերը և վերածեր իրենց անձնական սեփականու-
նութեան, Գիւղացիները հող չունէին: Հովիւները կը պա-
հէին ոչ թէ տոհմական համայնքի, այլ զինուորական-ազ-
նուականներու հօտերը: Լեռնային գօտիի բոլոր կողմերէն
այս իշխող դասը կ'ըստանար մետաղներ՝ պղինձ, անագա-
պղինձ, ոսկի, արծաթ: Անոնց զէնքերը մետաղեայ էին:

Մարերը բռներ էին Զագրօշեան լեռներու կիրճերը,
որոնք կը տանէին Միջագետք. անոնք տէր էին առեւտրա-
կան ուղիներուն, որոնք կը միացնէին Իրանի բարձրա-
ւանդակը Բարելոնին, Ասորեստանին: Ասորեստանցիք մեծ
ճիգ քրին այդ ուղիներուն տիրանալու, անցան Իրան և
սկսան դանդաղօրէն գրաւել անոր արգասարեր եռանկիւնը:
Այս կռիւներու մէջ իրենց ուժերը փորձեցին Սալմանասար
III, Շամսի-Ադադ IV-րդ, Տիգլաթ Պալասար III, վերջինս
մէկ արշաւանքով միայն գերեց աւելի քան 60.000 Մարեր:
Սարգոն II ամրացուցած քաղաքներ կանգնեց մարական
սահմաններու վրայ, և անոնց մէջ հաստատեց Սամա-
րիայէն բերած Հրեաները: Անոր օրով մենք կը տեսնանք
մարական ցեղերը միացած մէկ «տան», իշխանութեան տակ,
որ և տուաւ անոնց առաջին թագաւորը. կռիւներու մէջ
Սարգոնը գերի բռնեց Դեյսկիճ, որ հաւանաբար Մարերու
առաջին թագաւորն էր:

ԴԵՅՈՎ.— Ահա Ասորեստանի այս վտանգի և յաղթա-
նակներու հետեւանքով մարական վեց տոհմերը կը միանան
և իրենցմէ մէկը կը յայտարարեն թագաւոր. կը միացնեն
իրենց բանակները թագաւորի հրամանատարութեան տակ
և կ'ըսկսին պայքարի Ասորեստանի տիրապետութեան դէմ:
Դեյսկը եկբատանը կը դարձնէ իր մայրաքաղաք, կը շըր-
ջապատէ եօթը զուգահեռ պարիսպներով. վաճառականնե-
րը, քուրմերը և զինուորական ղեկավարութիւնը կը կեդ-
րոնացնէ հոն: Կ'ըստեղծէ կեդրոնական վարչութիւն, կը
կառուցանէ շէնքեր, կը կազմակերպէ արքայական պահա-
կախումք, կը մշակէ պալատական արարողութիւն. յօրինակ
թագաւորին մօտենալ կ'արգիլուի, ան կ'անջատուի իր

ժողովուրդէն: Ազնուականներու հետ կը բաժնէ իշխանութիւնը, բայց կը ջանայ դառնալ միապետ և բարձր պաշտօններ կուտայ իր ազգականներուն: Ան կ'ընդօրինակէ Ասորեստանի պալատական և վարչական կազմակերպութիւնը:

Մարական թագաւորները թէև ստեղծեցին մարական տոհմերու դաշնակցութիւնը մէկ տոհմի իշխանութեան տակ, բայց իրենք մնացին հարկատու Ասորեստանին: Այնուհետև անոնց բովանդակ ճիգը պիտի ըլլար՝ ազատագրելի օտարի գերիշխանութենէն:

ՀՐԱՆԱՍ.— Դէյոկի որդին Հրահատը (655—633) կը շարունակէ իր հօր միացնող գործը. կ'ընդարձակէ պետութիւնը, կը տիրէ հարաւին, պարսկական ցեղերուն: Զագրօշի ամբողջ լեռնաշղթան Մասիսէն մինչև Էլամ և Պարսից ծոց անոր իշխանութեան տակն է. իր ուժերը ան չափեց նաև Ուրարտուի հետ, բայց անյաջող: Ուրարտական թագաւորները յամառօրէն կը դիմադրէին արիացիներուն: Ասոր հետևանքով Հայաստանը չիրանացաւ, թէպէտ շատ վաղ ժամանակներէն անոր բնակչութեան մէջ, իրանական տոհմեր գոյութիւն ունէին: Անոնք փոքրամասնութիւն մըն էին փոքր Ասիական ծագում ունեցող մեծամասնութեան մէջ: Հրահատը փորձեց ազատագրուիլ Ասորեստանէն. ապստամբեցաւ, բայց պարտուեցաւ և սպաննուեցաւ:

ՊԱՐՍԻԿՆԵՐ.— Մարերու նման ասոնք բաժնուած էին տասը տոհմերու՝ որոնցմէ վեցը նստակեաց էին, չորսը վազկատուն, անասնապահ: Պարսիկներն ալ նոյն տոհմական կազմը ունէին, ինչ որ Մարերը: Ասոնք ալ սկզբնական շրջանին բոլորովին անկախ կ'ապրէին և իրարու դէմ կը պայքարէին: Ասոնց մասնակի միութիւնը կատարուեցաւ Պասարգասի մէջ ապրող մեծ տոհմի շուրջը: Բայց ընդհանրապէս Պարսից տոհմերու քաղաքական միացումը շատ աւելի ուշ տեղի ունեցաւ քան Մարերունը: Պարսիկ տոհմերը շատ աւելի հեռու էին Ասորեստանի անմիջական հարևաններէն քան Մարերը: Բայց Պարսիկ տոհմերու մէջ

ալ կատարուեցաւ ընկերային նայն յեղաշրջումը՝ ինչ որ տեսանք Մարերու մօտ: Առաջ եկաւ հարստացած և զինուած դաս մը՝ զինուորական ազնուականութիւնը: 635 թիւին Մարերու Հրահատ թագաւորը՝ օգտուելով իր գերիշխանի՝ Ասորեստանի թուլութենէն, յարձակեցաւ Պարսիկ տոհմերու վրայ և գրաւեց անոնց լեռնային շրջանները: Այս գրաւման հետեւանքով Պարսից նշանաւոր գերդաստաններէն մէկը՝ Աֆեմեհեմեհեհերը լքեցին Պասարգատը և գաղթեցին Էլամ: Իր գաղթող զինուորներով այդ գերդաստանի պետը գրաւեց Էլամի լեռնային շրջանները և իշխեց հին քաղաքակրթութեան տէր, բայց մեղկացած և ռազմունակութիւնը կորսնցուցած Էլամիներուն վրայ: Անոնք այստեղ Մարերէն և Ասորերէն անկախ իշխանութիւն մը ստեղծեցին: Դար մը յետոյ, այս Աքէմէնեանները պիտի կանգնէին Պարսիկներու գլուխը և ստեղծէին արեւելքի քաղաքական միութիւնը:

Այժմ Հրահատը՝ Պարսից ցեղերուն տիրելէն ետքը, ունէր աւելի հզօր բանակ, որ ուղղեց Ասորեստանի դէմ. բայց ոչ յաղթանակ տարաւ, ոչ ալ ազատագրուեցաւ անոնցմէ, կռուի մէջ սպաննուեցաւ: Մար-Ասորեստանեան կռիւները շարունակուեցան անոր որդու Կիաքսարի օրով (633—584):

ԿԻԱՔՍԱՐ ԵՒ ՄԱՐԱՊԱՐՍԿԱԿԱՆ ՅԵՂԵՐՈՒ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ.— Կիաքսարը կազմակերպեց մարա-պարսկական բանակը, որուն համար օրինակ ծառայեց Ասորեստանի բանակներու կազմութիւնը: Մեծ տեղ տուաւ հեծելազօրին, աղեղնաւորներուն: Մարերը և Պարսիկները լաւագոյն ձիաբոյժներն էին: Անոնց այրուածին եօթներորդ դարու կէսերուն թէ թիւով և թէ որակով շատ աւելի բարձր էր քան Ասորեստանեանը, որուն ուժերը մաշուեր էին Փռիւգացիներու, ապա Կիմրիներու և Ակիւթներու դէմ մղած կռիւներու մէջ: Պարսիկները պատանի հասակէն կը վարժուէին ձիավարութեան և նետաձգութեան: Զիւլարու թիւնը, նետաձգութիւնը և ճշմարտախօսութիւնը անոնց

կրօնի մէջ կը համարուէին մարդու ամենամեծ առաքի-
նութիւնները: Կիաքսարի սուաջ դրուած էր իր ժամանակի
ամենէն կենսական հարցը՝ Ասորեստանէն ազատագրուիլը:
Անոր հայրը այս նպատակով միացուց մտաւ պարսկական
ցեղերը, իսկ ինքը միացեալ բանակով պիտի խորտակէր
Ասուրներու զերիշխանութիւնը Արեւելքի մէջ: Գործի յա-
ջողութեան համար ան դաշինք կնքեց Բաբելոնի իշխանի
Նապուպոլասարի հետ: Մտաւ թագաւորը 628 թիւին ար-
շաւեց Ասորեստանի վրայ և պաշարեց Նինուէն:

Ասուր-Բանիպալը մինակը դիմագրել չէր կրնար ըմ-
բոստացած վասալին. ան օգնութեան կանչեց Սկիւթացի-
ները, անոնց մղեց Մարբուս վրայ: Սկիւթացիք Արաքսն
անցնելով մտան Մարաստան: Կիաքսարը թողուց Նինուէի
պաշարումը, կռուի մէջ պարտութիւն կրելով Սկիւթացի-
ներէն, դաշինք կնքեց անոնց հետ, յետոյ խորամանկու-
թեամբ անոնց պետերը կոտորեց խնճոյքի պահուն: Բայց
Ասորեստանը շատ կարճ ժամանակով միայն ազատուեցաւ
Մարբուս վասալէն: Սկիւթացիներն ալ մտացին անդեկ և
նահանջեցին հիւսիս և արեւմուտք՝ ուրիշ ճակատներու
վրայ բախաւ և աւար որոնելու: Ասուր-Բանիպալի մահէն
յետոյ: Կիաքսարը հորէն արշաւեց Ասորեստան և իր դաշ-
նակից Բաբելոնցիներու հետ պաշարեց Նինուէն: 612 թուին
միացեալ ուժերով զրաւեցին Նինուէն, որուն վերջին թա-
գաւորը Շին Շար Իշուը փախաւ հիւսիսային Միջագետքի
Խոտան քաղաքը: Բայց Բաբելոնի ուժերը զրաւեցին Խոտա-
նը և վերջին մահացու հարուածը տուին Ասորեստանին:

ՄԱՐԱԿԱՆ ԿԱՅՐՈՒԹԻՒՆ. — 612 թուին Նինուէի ան-
կումը դարձակէտ մըն է Արեւելքի պատմութեան համար:
Հսկայ կայսրութիւն մը մէկ հարուածով կ'ոչնչանայ, ազ-
գեր ու ցեղեր կ'ազատագրուին բոնութենէն, ոչնչացումէն,
կոտորածէն: Կիաքսարը պայքարելով մտաւ-պարսկական
ցեղերու ազատագրութեան համար՝ միաժամանակ միւս
ճշուած ժողովուրդներու ազատարարը կը հանդիսանայ:
Հիմա Ասորեստանի տեղը կը բռնեն նոր պետութիւններ:

նոր ազդեր կ'երեւան պատմութեան բեմին վրայ և նոր հասարակչութիւն կ'ըստեղծուի պետութեանց մէջ: Մարերը և Բարեւազիք՝ Ասորեստանի մեծածաւալ պետութիւնը կը բաժնեն իրենց մէջ: Ամբողջ Իրանը կը մտնայ քաղաքական մեծ վերիվայրումներու շրջանակին մէջ: Մարերը կը գրաւեն Հայկական լեռնաշխարհը և կը մխրճուին արեւմուտք՝ Փոքր Ասիա, ուր կը հանդիպին Լիգիայի թագաւորութեան, որ կը կասեցնէ անոնց թափանցումը Փոքր Ասիոյ խորքերը: Երկարատեւ կռիւններէն վերջ 585 թուին կը վերջանայ մարա-լիգիական պայքարը Փոքր Ասիոյ տիրապետութեան համար: Ըստ կնքուած դաշինքի Ալիս գետը կը դառնայ քաղաքական սահման երկու պետութեանց մէջ: Մարերը տէր կը դառնան լեռնային գօտիի միջին երկիրներուն՝ Հայաստանին, Այսկովկասին:

Ասորեստանի անկումէն յետոյ, Բարելոնը քաղաքականապէս վերածնուեցաւ և կազմեց սեմական ժողովուրդներու միութիւնը: Անոր իշխանութեան տակ ինկան Հիւսիսային Միջագետք, Սիւրիա, Պաղեստին: Միւս կողմէն ազատագրուեցաւ Եգիպտոսը և վերահաստատեց իր անկախութիւնը և մշակութային մեծ վերելք ունեցաւ: Ազատագրական ընդհանուր հոսանք մը անցաւ արեւելքի վրայով: Փիւնիկեան քաղաքները, արամէական քաղաք-պետութիւնները, Յուդան, կարծեցին թէ Ասորեստանի անկումով իրենք այլեւս ազատ ու անկախ կեանքով պիտի ապրին: Երբ ասուրական բանակները և գործակալները փոխարինեցին բարելոնական բանակն ու պաշտօնէութիւնը՝ ամեն տեղ ծայր տուաւ նոր դժգոհութիւն և ապստամբութիւն: Բարեւազիք խտորէն ճնշեցին այդ ազատագրական շարժումները և իրենց ծանր լուծը դրին Արամէացիներու, Փիւնիկեցիներու և Հրէաներու վրայ:

ԼիԴԻԱ.— Հաթական կայսրութեան անկումէն յետոյ, XII ըդ դարուն, Փոքր Ասիոյ մէջ ստեղծուեցան մեծ ու փոքր պետութիւններ, որոնցմէ ամենէն աչքատուն Լիգիան էր: Եօթներորդ դարու վերջին և վեցերորդի սկիզբներուն

ան արեւիլքի պատմութեան մէջ տնտեսական և քաղաքական ատաջնակարգ ոյժ էր: Անոր սահմանները Ալիս գետէն կը հասնէին մինչեւ Եգէեան և Սև ծովերը: Այս ձեւով ան իր ձեռքին պահեր էր Իրանէն, Միջագետքէն և Սիւրիայէն եկող առեւտրական բոլոր մեծ դժերը: Ան կը գտնուէր հիւնական կամ յունական և սեմական ու իրանական աշխարհի մէջ և ժառանգորդն էր հին՝ հաթական քաղաքակրթութեան: Իր բնակչութիւնն ալ խառն էր, հիմնական խաւը՝ Փոքր Ասիական էր, հաթական, բայց վերնախաւը՝ իշխողը հնդեւրոպացի զինուած ազնուականութիւնն էր, որ երկրի հարբստութեան տէրն էր և պետութեան ղեկավարը: Մայրաքաղաքը Սարգան էր:

ՅՈՒՆԱԿԱՆ ՔԱՂԱՔՆԵՐ.— Լիդիան տարածուեցաւ Եգէեան ծովու ափերուն, հասաւ մինչեւ Մարմարա իր մէջ առաւ բազմաթիւ յոյն քաղաքներ: Ասոնք ունէին իրենց ինքնավարութիւնը, վաճառականներ էին, արհեստաւորներ: Յունական այս քաղաքները կենդանի կապ կը պահէին իրենց մայր հայրենիքի՝ Յունաստանի հետ և բարձր քաղաքակրթութեան տէր էին: Յոյն քաղաքաբնակները կը կարդային Հոմերոսի Իլիականը և Ողիսականը, կը խօսէին միեւնոյն լեզուն, պաշտամունք կը մատուցանէին միեւնոյն աստուածներուն: Եգէեան ծովի եւրոպական և ասիական ափերուն Յոյները կ'ապրէին նոյն հանրային կեանքը, ունէին նոյն տաճարները, թատրոնները և մարզադաշտերը: Բայց հակառակ որ անոնք միեւնոյն լեզուական և մշակութային միութեան կը պատկանէին, տնտեսական ասպարէզին մէջ անոնք մրցորդ էին: Արտաքին շուկաներու մէջ անոնք կը հանդիպէին իբրեւ մրցակիցներ, հակառակորդներ: Նիւթական այս հակադրութիւնը թոյլ չտուաւ որ Յոյները միանան, կազմեն համայնական պետութիւն մը: Այս մրցութեան անոնք թուրքան և Փոքր Ասիոյ ծովափնեայ շրջաններու մէջ Լիդիայի թագաւորները օգտուեցան այդ հանգամանքէն՝ ու գրաւեցին Փոքր Ասիոյ յունական քաղաքները, պահելով անոնց ինքնավարութիւնները, թէեւ

հարկի ենթարկելով: Լիդիան հաթական մշակոյթի հետ միաժամանակ ժառանգեց նաեւ յունականը: Յոյն իմաստունները, գիտունները երեւացին Սարդաշի պալատին մէջ: Լիդիական թագաւորները «հելլենասէր» կը յայտարարէին իրենց: Կը հովանաւորէին յունական կրօնը, մեծ նուէրներ կը ղրկէին Զեւսի, Ասորոնի տաճարներուն և մեծ ձեռնարկներէ ու գործերէ առաջ միշտ կը հարցնէին Դելֆեան պատգամախօսի կարծիքը: Յոյն Փոքր-Ասիական քաղաքները թէպէտ ինքնիշխար էին, բայց Լիդիայի թագաւորը իւրաքանչիւրի մէջ ունէր իր ներկայացուցիչը:

ԱՌՆԻՏՈՒՐԸ.— Թէ իր աշխարհագրական դիրքով և թէ իր հարստութեան շնորհիւ Լիդիան դարձաւ Փոքր Ասիոյ առաջնակարգ պետութիւններէն մէկը: Երկրի հանքային հարստութիւնները, որ պետական սեփականութիւն էին, կը մշակէին սարուկներու աշխատանքով: Շատ հաւանական է, որ առաջին դրամը Լիդիայի մէջ շրջանառութեան մտած ըլլայ: Եղէեան ծովեզերքի յոյն քաղաքները միացած էին Յունաստանի, Պալքաններու հետ մէկ կողմէն, Պարսկաստանի, Ուրարտուի, Սիւրիոյ հետ միւս կողմէն: Կարկէմիշը գլխաւոր հանգույցն էր Փոքր Ասիան և սեմական աշխարհը միացնող: Լիդիայի ստեղծած Փոքր-Ասիական խաղաղութեան մէջ V-VI-րդ դարուն և VI-րդ դարու առաջին կիսուն յոյն-լիդիական քաղաքները մեծ վերելք ունեցան: Միջազգային առեւտուրէն կ'օգտուէին թագաւորները ոչ միայն սուրբ, մաքս վերցնելով, այլև անձամբ առեւտուրին մասնակցելով: Ան բաժնեատէր էր առեւտրական ընկերութեանց, կարաւանները ամեն ուղղութեամբ կը փոխադրէին պալատական ապրանքները: Թագաւորի շտաբարաններուն մէջ կուտակուած էր ոսկիի և արծաթի մեծ քանակութիւն: Ան արեւելքի ամենէն հարուստ թագաւորն էր:

ԲԱՆԱԿԸ.— Լիդիայի թագաւորները սորվեր էին ամեն ինչ դրամով գնելու. կը կարծէին թէ երկրի պաշտպանութիւնն ալ դրամով կարելի է գնել: Անոնք չունէին միայուն

աղղային բանակ. անոնց զօրքը վարձկան էր, հաւաքուած հարեւան ժողովուրդներէն, գլխաւորապէս Յոյներէն, որոնք եօթերորդ և հետագայ դարերուն առատօրէն զինուորներ կը տրամադրէին Եգիպտոսին և Մերձաւոր Արեւելքի մեծ ու փոքր պետութիւններուն: VII-րդ դարուն Լիդիոյ մեծ վճարանք չէր սպանար. Ասորեստանը կը քայքայուէր. Մարերը նոր կը կազմակերպուէին, Յոյները վաւանգաւոր չէին ռազմական անսակէտէն, Քրմրները արեւմտեան Փօքը Ասիան չվտանգեցին: Այս բոլորը նպաստաւոր էին՝ Լիդիոյ ընդարձակման, մեծնալուն, հարստանալուն: Ուժեղացած և հարստացած Լիդիոյ թագաւորները վեցերորդ դարուն փորձեցին քաղաքական դիր խաղալ արեւելքի մէջ: Իբրև քաղաքական խորհրդականներ անոնց պալատի մէջ կը ծառայէին Յոյները: Ասոնք լաւատեղեակ էին արեւելեան պետութիւններու ներքին կեանքին և միջազգային յարաբերութիւններուն: Սարգայի պալատը լի էր նման զիւանագէտներով: Այսպիսի պայմաններու մէջ էր Լիդիոն, երբ Մարերը, ապա Պարսիկները երևացին իր սահմաններուն վրայ:

ԱՃՏԱՀԱԿԸ.— Կիւքսարին յաջորդեց իր որդին Աժտահակը (584—550): Ան չունէր իր հօր ընդունակութիւնները՝ ոչ դիւանագէտ էր, ոչ շինարար, ոչ ալ զինուոր: Կ'ուզէր խալաղութիւն, կը պահէր իր սահմանները և անձնատուր էր զեխութեան ու խրախճանքներու: Անոր անուշով պալատի բարձր պաշտօնեաներն էին կառավարողները: Ան ուշադրութիւն չի դարձուց իր պետութեան ամենամեծ զանգուածի Պարսիկներու մէջ կատարուող ներքին շարժումներու վրայ: Պարսիկները առաջնութիւն ունէին բանակի մէջ: Բացի պալատական պաշտօնեաներէն, անոնք ամենուրէք տեղական բարձր պաշտօնէութեան մեծամասնութիւնը կը կազմէին: Մեծցեր ու հարստացեր էր նաև Պարսից զինուորական ազնուականութիւնը, որոնց համար անհաճոյ էր Մարերու իշխանութիւնը: Մարերու անմիջական հսկողութենէն հեռու՝ Էլամի մէջ Աքեմէնեան

տոհմէն Կիւրոսը կը կազմակերպէր Պարսից ուժերը: Ան սկիզբը Էլամի Թագաւոր էր. գահ կը բարձրանար 558 թիւին: Ութը տարի յետոյ ան Պերոսպոլիսը գրաւեց և յայտարարուեցաւ Պարսից Թագաւոր, և մեծ բանակով յարձակեցաւ Աժտահակի վրայ, սպաննեց սնոր և դարձաւ Իրանի տէրը: Մարական ազնուականութիւնը կը միանայ անոր: Մարա-պարսկական պետութիւնը կը դառնայ պարսկա-մարական, որպէսզի քիչ ետքը մոռացութեան տրուի մարականը և նոր ազգ մը՝ Պարսիկները կառուցեն՝ Պարսից պետութիւնը: Կիւրոսի երեւան գալու ժամանակ Լիտիայի Թագաւորը Կրէսոսն էր: Ան Կիւրոսը համարեց թշնամի, որովհետեւ գահընկեց և սպաննուած Աժտահակը իր փեսան էր և դաշնակիցը: Նոր թարմ ուժի մը յայտնուիլը իր սահմաններու վրայ վտանգաւոր էր և կասկածելի:

Բ. ԳԼՈՒԽ

ԻՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՊԱՐՍԻՑ ՇՐՋԱՆԸ

ԿԻԻԲՈՍ. — Նախ քան Կիւրոսը երեք Աքեմէնէան թագաւորներ իշխեր էին Շոշի մէջ: 558 թիւին Կիւրոս էլամի թագաւոր էր, հեռուէն միայն ենթակայ Մարաց թագաւորին: Անոր մասին մենք չատ քիչ բան գիտենք, եղածն ալ առասպելախո է, վիպական, որ կը հաղորդէ Հերոդոտը: Ըստ վերջինիս Կիւրոսը Աժտահակի թոռն էր. կ'ապստամբէր իր մեծ հօր դէմ, կը դաշնակցէր մարական ազնուականներու հետ: Ներքին այս կռիւները կը տեւեն ութը տարի: Կիւրոսը կը պաշարէ Եկրատանը, կը գրաւէ և անոր հարստութիւնը կը փոխադրէ Շոշ: Այս բանը տեղի կ'ունենայ 550 թիւին:

Քաղաքական այս յեղաշրջումը կը փոխէ միջազգային կացութիւնը. Լիտիան դուրս կուգայ Պարսիկներու դէմ: Խնդիրը ոչ թէ իր ազգակցին՝ Աժտահակին պաշտպանելու մասին էր, այլ այն մասին, թէ ով է տէր դառնալու լեռնային գօտիին՝ Լիտիան թէ Պարսկաստանը: Այդ հարցը Մարերն ու Լիտիացիք լուծեր էին համաձայնութեամբ՝ 585 թիւին դաշինքով: Դաշնակցող կողմերէն մէկը այլևս չկար, դաշինքը իզօրու չէր: Կրէսոսը կազմակերպեր էր լեռնային գօտիի արեւմտեան թևը, Կիւրոսը տէր դարձաւ արեւելեան մասին: 550 թիւի յեղաշրջումէն ետքը Կրէսոսը կը տեսնէր, որ Պարսիկներու հետ բաղխումը անխուսափելի էր, ուստի նախաձեռնութիւնն առաւ իր վրայ: Սկսաւ նախ դաշնակիցներ փնտռել: Սպարտան անոր տրամադրից իր բանակի մէկ մասը: Հակապարսկական զինակցութեան մէջ մտան Եգիպտոս, Բաբելոն, որոնք Մարերու անկումով խախտուած կը տեսնէին Արեւելքի քաղաքական հաւասարակշռութիւնը:

Կ'անցի Ալիս դեհալը: Կիւրոս կը դիմաւորէ թշնամին և Պտերիայի՝ հին հաթական մայրաքաղաքի Հատուշաչի մօտ մեծ Զարդ կուստայ Լիտիական վարձու բանակին: Լիտիացիները կը նահանջեն, Պարսիկները կը հետապնդեն և կռուի մէջ կը մոցնեն նաև ուղտեր, որոնց տեսքը և անախորժ հոտը փախուստի կը մատնէ Լիտիացիները: Կրէստոսը Սարդայի մէջ կը վերակազմէ իր բանակը՝ գարնան կռիւներու համար, իսկ Կիւրոս անակնկալի կը բերէ թշնամին՝ ձմրան մէջ կը կտրէ Փոքր Ասիան և կը հասնի ու կը պաշարէ Սարդան: Քաղաքը կը գրաւէ, Կրէստոսն ալ գերի կը բռնէ. անոր անբաւ հարստութեան տէր կը դառնայ և կը փոխադրէ Եգիպտոսն: Կրէստո՝ Պարսից արքունիքի մէջ կ'պարի 20 տարի և կը մեռնի 525 թուին: Այս յաղթանակով Պարսից պետութիւնը կը դառնայ ընդարձակ կայսրութիւն մը, որու սահմանները կը հասնին մինչև Եգէյտան ծովը, Կովկասեան լեռները, Պարսից ծոցը և Տաւրոսեան լեռնաշղթան: Ան կը գրաւէ լեռնային գօտին ամբողջութեամբ:

Փոքր Ասիոյ գրաւումով՝ ան ժառանգը դարձաւ հաթական երբեմնի հզօր պետութեան շրջաններուն, նախկին ուրարտական պետութեան, որ անոր օրով աստիճանաբար կը դառնար Հոյաստան: Անոր իշխանութեան տակ մտան Կովկասեան շատ մը ցեղեր ու ժողովուրդներ: Պարսից պետութեան ազգազրական և լեզուական կազմը կ'ըսկսէր բարդանալ: Յունական բաղմամբիւ քաղաքներ ինկան Կիւրոսի իշխանութեան տակ: Պարսից թագաւորը յարգեց նոնց ինքնավարութիւնը, բայց հարկ վճարելու պայմանով: Յունական քաղաքներու համար մշակուած Լիտիական կարգը նոյնը մնաց նաև Պարսից իշխանութեան տակ: Յոյները բան մըն ալ չահեցան, իրենց առջև բաղուեցաւ Պարսից պետութեան ընդարձակ շուկաները, իսկ Պարսիկներն ալ անմիջական, հարեւան դարձան եւրոպական Յունաստանին: Տասնեակ դարերու անջատումէն ետքը հնդեւ-

րոպական ժողովուրդներու երկու թեւերը՝ արիականը եւ յունականը՝ վերհանդիպեցան իրարու Եգէշեան ծովի ափերուն, թէև ոչ իբրև բարեկամներ:

ԻՄԱՆԻ ԱՄԻՈՂՋԱԿԱՆ ԳՐԱԽՈՒՄԸ.— Հերթական հարց էր անապատային գօտիի գրաւումը, Միջերկրական ծով հասնիլը: Բայց մինչ այդ Կիւրոսի առջև կար իրանի բարձրաւանդակի արեւելեան մասի նուաճման հարցը: Մինչ այդ՝ Կիւրոսի իշխանութեան տակ էին իրանի արևմտեան լեռնային մասերը՝ եռանկիւնին՝ Կասպից ծովի հարաւային ափերէն, Զագրոսի լեռներով մինչև Պարսից ծոց: Իրանի արեւելքը կ'ապրէին Պարսիկներուն ցեղակից եւ լեզուակից բազմաթիւ ցեղեր, որոնց մեծ մասը վաչկատուն էին. անոնք իրենց հօտերով կը կտրէին հսկայական տարածութիւններ՝ մինչև Ինտուս գետ եւ Արալեան լիճ: Իրանի, Միջին Ասիոյ եւ Հնդկաստանի սահմաններուն ըստեղծուեր էր ռազմական մեծ ուժ: Արիական այդ վաչկատունները՝ լաւապէս զինուած եւ լաւ կազմակերպուած՝ կը մտնային իրանի խորքերը՝ կ'աւերէին, կ'աւարէին եւ նորէն կը դառնային Միջին Ասիական իրենց թագստոցները: Անոնց արշաւանքներու հետեւանքով իրանի արեւելքի մէջ նստակեաց-երկրագործ տարրը պահսեր էր եւ լքեր հեռացեր Կասպից ծովէն հարաւ-արեւելք եւ Սիր-Տարիայի եւ Ամու-Տարիայի մէջ ինկած արգասաբեր հողերը: Ահա այդ թափառաշրջիկ ցեղերը պէտք էր զսպել եւ պարսից իշխանութեան տակ առնել իրանի արեւելեան այդ շրջանը:

Այդ նպատակը Կիւրոսը իւրագործեց վեց տարուայ մէջ, 545—539 ին ան հասաւ մինչև Սիր-Տարիայի ափերը, հպատակեցուց եւ զինաթափ ըրաւ Սկիւթացիները. կառուցեց Կիւրուպիս ամրոցը, որ ռազմի կեդրոն պիտի ծառայէր արեւելեան սահմաններու պաշտպանութեան համար: Թետոյ անցաւ հարաւ՝ ներկայ Աֆղանիստան եւ գրաւեց Գապուլի շրջանը: Այսպէսով ան տիրեց Արալեան մեծ լիճէն մինչև Ինտուս գետն ինկած տարածութեան՝ Սագտան-

եային, Բակդերիային, Գեղրոզէին: Այս յաջող արշաւանքներու հետեւանքով տասնեակներով արիական վաշկատուներ ցեղեր ինկան Պարսից իշխանութեան տակ և կենդանի հազորակցութեան մէջ մտան արեւմտեան Իրանի իրենց լեզուակիցներու և ազգակիցներու հետ: Անոնց մէկ մասը՝ Կիւրոս մտցուց իր բանակներու մէջ: Ըլլալով ռազմունակ և թարմ ուժեր, անոնք բարձրացուցին իր բանակին զինուորական որակը: Պարսիկները Ինդոս գետը հասնելով յարաբերութեան մէջ մտան Հնդկիկներու հետ, արիական այն հատուածին, որմէ բաժնուեր էին աւելի քան հազար տարի առաջ: Հնդկերոպական ժողովուրդներու երեք հատուածները՝ յունա-պարսկա հնդկական, այսպէսով կապուեցան իրարու հետ և արեւմուտքէն, հիւսիսէն ու արեւելքէն օդակցին հարաւի սեմական աշխարհը:

ԲԱՔԵԼՈՆԻ ԳՐՈՒՌՈՒՄԸ.— Իրանի ամբողջական գրուումէն յետոյ Կիւրոսը՝ նոր ուժերով զօրացած՝ ուղղուեցաւ արեւմուտք, ուր իբրեւ անկախ պետութիւն կը մնային Բաբելոնը, որ իր մէջ առեր էր Արգասաբեր կիսալուսնի երկու թեւերը և Եգիպտոսը: Լիւբիայի անկումէն վերջը եռեակ զինակցութիւնը քայքայուեր էր: Ոչ Բաբելոն, ոչ ալ Եգիպտոս չիորձեցին օգտուիլ Կիւրոսի արեւելեան իրանի մէջ զբաղուած ըլլալէն: Անոնք իրարու հետ, թէև սաշնակից, բայց հաշտ չէին և կը պայքարէին Արգասաբեր կիսալուսնի արեւմտեան թեւի և Միջերկրականի փերուն համար: Բաբելոնի թագաւոր Նաբոնիդը ոչ քաղաքական, ոչ ալ ռազմական գործերով կ'ըզբազուէր: Ան կրօնական վեճեր կը յարուցէր: Պետութեան բոլոր քաղաքներու աստուածներու արձանները Բաբելոն հաւաքեց, բան մը որ անոր դէմ կը հանէր քրմական դասը և թէ բոլոր ժողովուրդները և նահանգային կառավարիչները, Բաբելոնի ազնուականութիւնն ալ դժգոհ էր Նաբոնիդէն որ քմահաճօրէն կը կառավարէր և երկրի օրէնքները, իրենց արտօնութիւնները չէր յարգեր: Այս կացութեան մէջ գտնուող Բաբելոնը Կիւրոսին պիտի չի կրնար դիմադրել: Անոր

քարձր դասը կը մտածէր դուստրիկ թագաւորին դէմ և կապուել կիւրոսի հետ: 539 թիւին Պարսիկները մտան Բաբելոնի սահմանները: Մայրաքաղաքը պաշարուեցաւ, բայց երկարատեւ կռիւներ չեղան: Բաբելոնի բանակի հրամանատար Գոթրիաս իշխանը միացաւ կիւրոսին և քաղաքը յանձնեց անոր գրեթէ առանց դիմադրութեան: Նաբոնիգ քերի ինկաւ, իր որդին ալ սպանուեցաւ: Յաղթողը մտաւ Բաբելոն և գնաց Մարդուկ աստուծոյ տաճարը՝ անոր ձեռքէն առնելու Բաբելոնի թագաւորութիւնը: Քուրմերը յայտարարեցին որ այդ աստուծոյ կամքն էր և կիւրոսը հռչակուեցաւ Նարուպալասարի ու Նաբուգոդոնոսորի յաջորդ:

Բաբելոնը սեմական ժողովուրդներու ստեղծած վերջին մեծ պետութիւնն էր: Անոր անկումով արեւելքի քաղաքական առաջնութիւնը ինկաւ հնդեւրոպական Պարսիկներուն ձեռքը: Սեմականները արեւելքի քաղաքական և մշակութային առաջնութիւնը պահեցին իրենց ձեռքը աւելի քան 2000 տարի, սկսած Սարգոն I. մինչեւ Նաբոնիգ: Անոնք այս ժամանակաշրջանին յաջորդաբար կառուցին Ագադէի, Բաբելոնի, Ասորեստանի և Նոր Բաբելոնի պետութիւնները: Արգասաբեր կիսալուսնի արեւելեան թիւին վրայ հզօրացող այս պետութիւնները փորձեցին և յաջողեցան իրենց իշխանութեան տակ առնել նաեւ սեմական ժողովուրդներու արեւմտեան հատուածը՝ Արամէացիները, Փիւնիկէցիները, Հրէաները և քաղմաթիւ վաշկատուն, անապատի սեմականներ: Անոնք երկար դարեր պայքարեցան հիւսիսէն արշաւող Փոքր-Ասիական, ապա հնդեւրոպական ցեղերու դէմ և պահպանեցին անապատային գօտին սեմականներու համար: Այդ նպատակը յաջողեցան իրագործել, և իբրեւ մեծ հետեւանք, ունեցաւ այն՝ որ ներկայիս իսկ այդ գօտին անախօս ժողովուրդներու հայրենիքն է:

ԿԻՒՐՈՍ ԱԶԱՏԱՐԱՐ. ՀՐԷԱՆԵՐՈՒ ՆԵՐԳԱՂԹԸ. — Բաբելոնի գրաւումէն յետոյ կիւրոս հետեւեցաւ հպատակ ազգերու և օտար աստուածներու նկատմամբ հանդուրժող քաղաքականութեան: Վերահաստատեց քուրմերը իրենց իրա-

ւունքներու մէջ, և բոլոր աստուածներն ալ իրենց տա-
ճարներուն: Տաճարական կալուածները վերադարձուց իրենց
տէրերուն: Ոչ մէկ հալածանք հանեց աստուածներու դէմ:
536 թիւին ան յատուկ հրովարտակով թոյլատրեց, որ
Հրէաները վերադառնան իրենց հայրենիքը, վերաշինեն
Երուսաղէմի տաճարը, հաւաքուին Տապանակ Ուխտի շուր-
ջը: Տասնեակ հազարաւոր Հրէաներ, յիսուն տարի Բաբելոնի
գերութեան մէջ մնալէն ետքը՝ վերադարձան իրենց
հայրենիքը: Բայց հազարաւոր ընտանիքներ ալ մնացին
Բաբելոն, անոնք ամուսնացեր էին բաբելական աղջիկնե-
րու հետ, տուն տեղ էին դարձեր, հարստացեր էին, որով
չներգալթեցին Երուսաղէմ: Կիւրոս իր մէկ արձանագրու-
թեան մէջ կ'ըսէ. «Ես միացուցի բոլոր ժողովուրդները, եւ
թոյլատրեցի վերադառնալ իրենց հայրենիքները իրենց աս-
տուածներուն հետ: Թող աստուածները, որոնք ես վերահաստա-
տեցի, տան ինձի երկար կեանք»:

Այս մեղմ հանդուրժող վերաբերմունքը, օտար աս-
տուածներու և ազգերու իրաւունքները յարգելը, նոր երե-
ւոյթ էր արեւելքի պատմութեան մէջ, այս վերաբերումը
կը բղխէր Զրադաշտական կրօնի սկզբունքներէն:

ԿԻՒՐՈՍ.— Անոր կայսրութիւնը իր մէջ առաւ Միջերկ-
րականի փոփոխութիւնը և Ինտոս և Սիր Տարիայի մէջ
ինկած երկիրները: Այս իսկական կայսրութիւն էր, բազ-
մաթիւ ազգերու և ցեղերու միութիւն, բազմազան կրօն-
ներու խառնուրդ: Կիւրոս կը պատրաստուէր Եգիպտոս
արշաւելու, երբ նորէն իրանի արեւելքը ծագեցաւ սկիւ-
թական ցեղերու ապստամբութիւնը: Ան շտապեց այդ վաչ-
կատուններու դէմ և հոն ալ սպաննուեցաւ 529 թիւին:
Անոր մարմինը փոխադրուեցաւ Պասարգաս ուր թաղուեցաւ:

Կիւրոս արիական առաջին մեծ նուաճողը եղաւ: Ան
Պարսիկներու գերիշխանութիւնը հաստատեց Մերձաւոր Ա-
րեւելքի մէջ: Զինուորական մեծ տաղանդ ունէր, լաւ
ոազմագէտ, ինչպէս նաեւ խելացի քաղաքագէտ, մերժեց
Ասորեստանի և Բաբելոնի կռուավարելու դաժան միջոցնե-

ըր, յարգեց նուաճուած ժողովուրդներու սովորութիւնները, լեզուն, կրօնը, պահեց անոնց ինքնավարութիւնը: Ան չպարտադրեց ոչ մէկուն ոչ Պարսից լեզուն, ոչ ալ կրօնը: Հազուադէպ պարագաներուն միայն բռնութեան դիմեց. աւելի շատ հովանաւոր էր. քան իշխող: Ան կարգի ու խաղաղութեան ներկայացուցիչն եղաւ և ոչ թէ աւերի և աւարի կործանիչ ուժը:

ԿԱՄԲՈՋ.— (529—522) Կիւրոսին յաջորդեց իր որդին՝ Կամբիզը: Ան զուրկ էր իր հօր մեծ կարողութիւններէն և մեծ հոգիէն: Դաժան էր և կոպիտ: Ուր իր հայրը ողորմած էր և ներող, ան թունոտ էր և պատժող. 529—526 թ. ան զբաղուեցաւ զանազան ապստամբութիւններ ճնշելով. սպաննեց իր եղբայրը Բարդիան՝ այն պարզ կասկածով թէ կրնար ապստամբիլ իր դէմ. երբ ինքը Իրանէն բացակայէր: Այդ սպաննութիւնը գաղտնի պահուեցաւ: Պարսիկ մեծամեծները կը կարծէին թէ Բարդիան կ'ապրի և կը գտնուի Մարաստանի ամրոցներէն մէկուն մէջ: 525 թ. Եգիպտոսի Ամասիս թագաւորը մեռաւ: Ան քայքայեց էր երկրի ռազմի ուժը, որ մեծ մասամբ յոյն վարձկաններէ կը բաղկանար: Նաւաստորմիղն ալ Յոյներու և Փիւնիկէցիներու ձեռքն էր: Ամասիսին յաջորդեց Պսամետիկ III. ան ոչ զինուորական կարողութիւն և ոչ ալ քաղաքական հոտառութիւն ունէր: Կամբիզը որոշեց էր գրաւել Եգիպտոսը և ամբողջացնել հօր գործը: Պարսից բանակը կեդրոնացեց էր Պաղեստինի մէջ Գազայի շուրջը. Կամբիզ գաշնակեցեցաւ անապատի վաշկատուններու հետ, որոնք հազարաւոր ուղտեր տրամադրեցին, զօրք և կենսամթերք փոխադրելու համար: Պելուզի մօտ փարաւոնը պարտուեցաւ, բայց վճռական ճակատամարտը տեղի ունեցաւ Մեմֆիսի մօտ, փարաւոնը գերի ինկաւ և զլիտատուեցաւ: Կամբիզը գրաւեց ամբողջ Եգիպտոսը, որով լրացաւ բովանդակ Մերձաւոր Արեւելքի Պարսից կայսրութեան մէջ մտնելը: Նախկին բազմաթիւ մրցող և մշտապէս կռուող, պայքարող պետութիւններու փոխարէն, այսպէսով ստեղծուեցաւ

միայն մէկ մեծ կայսրութիւն: Արեւելքի բոլոր մեծ պետտութիւնները աշխատեցին ստեղծել այդ միութիւնը, բայց ամենն ալ միայն սահմանափակ շրջաններուն մէջ կրցեր էին այդ գլուխ բերել, Պարսիկներուն լիճակուեցաւ այս գողափորի լիակատար իրականացումը:

ԿԱՄՔԻՋԻ ԱՆՅԱՋՈՂՈՒԹԻԻՆՆԵՐԸ.— Կամքիզը չբաւարանալով իր կողմէի գրաւումով: Հոս կառավարիչ նշանակեց Արիանդէսին, իսկ ինք՝ գնաց գրաւելու Կարթագէնը՝ արեւմուտքի մէջ և Հապէշիստանը՝ հարաւի մէջ: Արեւմուտք արշաւող բանակը պէտք է անցնէր Լիպլիայով: 524 թիւին 50,000-նոց այդ բանակը կորուսեցաւ, ոչնչացաւ անապատի մէջ: Հապէշիստանի նուաճման բանակի գլուխն անցաւ ինքը՝ թագաւորը, բայց նուբիական անապատներու մէջ կանգ առաւ. անկարելի էր յաւաջանալ, ամեն ինչ թշնամի էր իրեն այս անձանօթ երկրին մէջ: Կամքիզը նահանջեց մեծ կորուստներ տալով: Այս անյաջողութիւնները և բանակներու կորուստը շատ ծանր ազդեց իր վրայ, կորսնցուց իր հոգեկան հաւասարակշռութիւնը: Իր անյաջողութեան պատճառը համարեց Եգիպտացիները և պատժեց անոնց. հետզհետէ աստ ամներու արձանները կործանեց, տաճարները ւեւերեց, եգիպտական ղեկավարները կոտորեց: Խանգարուած հոգեկան լիճակով որոշեց վերադառնալ Պարսկաստան, ուր սկսուեց էին հակապետական շարժումներ: Սիւրիոյ մէջ Կամքիզին ղեկուցին, որ Պարսկաստան ապստամբուեց է իր դէմ մոգի մը՝ Գուլադայի առաջնորդութեամբ յայտարարելով որ ինք Բարդիան է, Կամքիզի սպաննած եղբայրը: Այս լուրերու ազդեցութեան տակ Կամքիզին ընկերացող մարապարսիկ բարձրաստիճան անձերու մէջ ևս միտք ծագեցաւ լքել Արքան: Չտակալով այս հարուածներուն արքայից արքան ինքնասպանութիւն գործեց 522 թիւին:

ԱՊՍՅԱՄՔՈՒԹԻԻՆՆԵՐ ԵՒ ԱՆԻՇԵԱՆՈՒԹԻԻՆ.— Անոր ժահով ամբողջ ներկերտ կայսրութիւնը մատնուեցաւ անիշխանութեան: Շարժման մէջ մտան նաև Պարսից եօթը

նշանաւոր տոհմերը, որոնց հետ միասին և որոնց ուժերով կիւրոս կատարած էր իր նուաճումները: Անոնք քաղաքական խոշոր դեր էին ունեցեր իբրև կիւրոսի խորհրդականները: Մեծ նուաճումները անոնց ապահովեր էր մեծ հարստութիւն: Կամբիզի ժամանակ անոնք մեկուսացած էին իշխանութենէն. անոնց անձը և հարստութիւնը վտանգի տակ էր, անհաւասարակշիռ և կասկածոտ թագաւորի կողմէն: Պարսկական եօթ տոհմերու իշխանները՝ Կամբիզի ինքնասպանութեան համար չէին ցաւեր, բայց չէին ալ ուզեր, որ ղեկավարութիւնը քուրմերու-մոզերու ձեռքն անցնի և կայսրութիւնը մատնուի անիշխանութեան: Պարսիկ ազնուականութեան այս ղեկավար շրջանակէն է, որ շուրս կուգան կարգի և իշխանութեան կողմնակիցները: Անոնց առաջին հարուածը հասաւ մոզերուն, որոնք ենթարկուեցան կտորածի: Իրենց հողերը գրաւուեցան, իրենց կողմնակիցները հալածանքի ենթարկուեցան: Այս առաջին գործին կը յաջորդէ երկրորդը՝ իրենցմէ մէկուն վշտասպի որդի Իարհնիւն կը յանձնեն թագաւորութիւնը: Այս գործին մեծ մասնակցութիւն կը բերէ նոր արքայից արքայի հայրը, որ Հիրկանիայի կառավարիչն էր: Դարեհը յայտարարեց, որ ինքը ազգակցական կապերով կապուած է Աքէմէնեաններու տան հետ, ժառանգն է կիւրոսի և Կամբիզի: Այդպէսով ան կ'ուզէր օրինակութիւն տալ գահի գրաւման:

Բուն Աքէմէնեաններու հարստութեան վերանալը, իշխող տոհմէն ուղիղ գիծով արքայական թեկնածու չգրտնուիլը նպաստեց ապստամբութեան և անիշխանութեան ծաւալման: Դարեհը եօթը տարի 522—515, զբաղուեցաւ այս ապստամբութիւնները ճնշելով: Միջագետքի մէջ ունի Նի-Տիգրու բէլ յայտարարեց իրեն Նարոնիդի որդի և գրաւեց Բաբելոնը ու դարձաւ թագաւոր Նաբուգոդոնոսոր III-րդ անունով: Անհրաժեշտ եղաւ երկու տարի պայքարիլ այդ ապստամբութիւնը ճնշելու համար: 519 թիւին Մարերը հաւաքուեցան ունի Հրահատի շուրջ, որ իբր թէ

Կիաքսարի որդին էր. ան յայտարարեց իրեն Մարաստանի թագաւոր. իլերջոյ ան ալ պարտուեցաւ և մահուան դատապարտուեցաւ: Պարսկաստանի մէջ ալ երեւան եկաւ երկրորդ կեղծ Բարդիա մը, սակայն յաջողութիւն չունեցաւ և ևս ալ գերի ինկաւ և կախուեցաւ: Էլամի իշխաններէն մէկը յայտարարեց իրեն թագաւոր Շոշի մէջ: Բայց ձերբակալուեցաւ և մահուան դատապարտուեցաւ: Մեծ թէ փոքր չափով շարժումներ տեղի ունեցան Եգիպտոսի, Փիւնիկէի, Սիւրիոյ և Փոքր Ասիոյ մէջ: Ապստամբեր էր նաև Հայաստանը, որ դեռ Մարտիու ժամանակէն կապուած էր իրանական աշխարհի հետ: Հայ ապստամբներու դէմ Դարէհ ուղարկեց հայ զօրավար մը, Դադարչէսին, որուն ապստամբները քանի մը անգամ ջարդեցին և դուրս բրին Հայաստանէն. իլերջոյ պարսիկ զօրավարի առաջնորդութեամբ Դարէհի բանակը յաղթեց Հայերը և հաստատեց Հայաստանի մէջ իր իշխանութիւնը:

Ապստամբութիւնները ճնշելէն ետք՝ Դարէհ Բիսուդէնի ժայռի վրայ արձանագրեց իր յաղթանակները, որուն մէջ մանրամասն կը պատմէ թէ որոնք և որու առաջնորդութեամբ ապստամբեցան և թէ ինչպէս և ինչ ուժերով ինք ճնշեց այդ շարժումները:

ԱՊՍԱԼԱՐՔՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ.— Ապստամբութիւնը պատճառները Պարսից կայսրութեան ընդարձակութեան, բազմաթիւ ազգեր, բազմազան կրօններ, լեզուներ ունենալն էր: Պարսիկները ամեն տեղ պահեցին հին կարգը, կառավարական ձևերը, հաստատութիւնները, ինչ որ գտան իրենց նուաճումներու ժամանակ: Կիւրոսը ասուրական Սարգոն թագաւորի կառավարական եղանակը ընդօրինակեց, զրաւուած երկիրները զրկեց բարձր պաշտօնեաներ օգնականներով: Տեղական վարիչ դասին չվստահեցաւ, բայց նոնց դէմ հալածանք չհանեց: Անոնց մեծ մասը մեկուսացուց, մէկ մասն ալ իր պալատին մէջ պահեց: Կամբիզը հալածանք հանեց Եգիպտոսի դարաւոր ղեկավարութեան դէմ, որ ստեղծեր էր հին աշխարհի լաւագոյն վարչութիւն-

ներ: Կիւրոս հանդուրժեց արեւելեան ազգերու, կրօնը, յարգեց քրմական դասի իրաւունքները Կամբիզը կոտորեց Եգիպտոսի քուրմերը: Ամոն աստուծոյ տաճարը կործանեց, Ապիս եզը վիրաւորեց, ոչնչացուց աստուածներու արձանները, քանդեց արքայական զերեզմանները, հանեց անոնց մուճիւնները, այրեց Ամասիս փարաւոնի մուճիւնն: Կիւրոսը հպատակ ազգերուն կը թողուր իրենց լայն ինքնավարութիւնը, ազատութիւնը: Անոնք կրնային ոչ միայն խաղաղութեան մէջ ապրիլ, այլեւ կրնային իրենց ուժերը հուաքել, միատեղել և անկախութեան մասին մտածել: Կամբիզի հալածանքները, բռնութիւնը միեւնոյն արդիւնքի կը հանգէր, ձգտում ազատուելու օտար բռնութեանէն: Պարսից իշխանութիւնը չէր թափանցեր խորապէս հպատակներու կեանքին մէջ, որով ազատութեան ընդարձակ սահման կը թողուր, որ մատչելի չէր իշխողին:

Միւս կողմէն, Պարսից պետութեան մէջ կ'ապրէին նուրբ, բարձր մշակոյթի տէր Բարեւացին, Եգիպտացին, պարզունակ թափառականի կենցաղ ունեցող անապատի պետեհիները և արեւելեան արիացիները, քաղաքաբնակ և հարուստ, ինքնավար կեանքի վարժուած յոյնը և փիւնիակէցին, տոհմական կեանքով ապրող հայը: Ասոնց բոլորի համար Պարսկաստանը օտար տիրապետութիւն էր, հեռուէն եկած, որու ազդեցութիւնը քիչ էր զգալի: Տիրապետող և տիրապետուած իրարու ոչ մէկ բանով կապուած էին, իրար չէին ճանչնար. իրական տէրերը դարձեալ կը մնային ժողովուրդէն բարձրացած իշխանները, քուրմերը, հարստացած ընտանիքները, հին արքայական տան ժառանգները, թէեւ կորսնցուցեր էին շատ բան՝ դիրք, հարստութիւն եւ այլն: Թէ Կիւրոսի ընձեռնած ազատութիւնը, թէ Կամբիզի բռնութիւնները նպաստաւոր պայմաններ էին ապրստամբելու, ազատագրուելու: Ապստամբութիւնը տեղի ունեցաւ, բայց յաջողութիւն չունեցաւ: Այս շարժման մասնակցեցան Մարերը, անոնք սկսան, միւսները շարունակեցին: Մարերու ազնուական իշխանները կ'ուզէին տէր

դառնալ երկրի ղեկավարութեան: Մոգերու դասն ալ կը փորձէր իր իշխանութիւնը տարածել Պարսից ազնուական դասի վրայ: Արեւելեան վաչկատուն արիացիներն ալ կ'ապրստամբէին վաչկատունի անիշխանական կեանքի և ազատութեան համար: Ուրեմն կայսրութեան ներսը գոյութիւն ունէին ուժեր, որոնք շահագրգռուած էին Պարսից պետութեան փլուզումով: Ապստամբները յաջողութիւն չունեցան, որովհետեւ թիւով քիչ էին, ամեն ազգի վարիչ դասը միայն: Այդ ապստամբութիւնը նախկին դիրքերը կորուսած ղեկավարութեան շարժումն էր, ժողովուրդը անոնց հետ չէր: Կար և այն, որ ապստամբները ընդհանուր ճակատ չէին կազմեր: Իւրաքանչիւրը կը գործէր իրեն համար և իրեն յարմար ձեւով ու յարմար դատած ատեն: Դարեհը ջարդեց այս ամենքն ալ առանձին-առանձին: Ապստամբութիւնները ճնշելէն յետոյ Դարեհ որոշեց հիմնովին փոխել կայսրութեան վարչութիւնը:

ԱՌՆԻՏՐԱԿԱՆ ՆՈՐ ՈՒՂԻ.— Բայց նախքան վարչական բարենորոգումներուն անցնիլը յիշենք Դարեհի և իր յաջորդներու քաղաքական գործերը: 512 թ. Դարեհ արեւելքի մէջ՝ Ինդոսի վերին հովիտին մէջ հիմնեց հնդկական սատրապութիւնը՝ որ պիտի հսկէր, որպէս գինուորական մարզ, արեւելեան արիացիներու շարժումներուն: Ինդոսի գետաբերանին մօտ կազմեց նաւատորմիդ մը, որ յոյն Սկիլասի հրամանատարութեամբ մտաւ Հնդկաց ովկիանոսը և ընթանալով Գիդրոգայի ափերով դէպի արեւմուտք՝ հասաւ Պարսից ծոց: Այս ձեւով Մերձաւոր Արեւելքը ծովային ուղիներով կը միանար հեռաւոր արեւելքի հետ և կարաւանային առեւտուրին կը միանար ծովային առեւտուրը: Հնդկական ապրանքները՝ մետաքս, ոսկի, համեմունքներ, թանկագին քարեր, փղոսկր, որ մինչ այդ ցամաքային ճանապարհով և մեծ վտանգներով կը բերուէին Միջերկրականի ափերը, այժմ աւելի ապահով և գիւրին ուղիներով կը հասնէր Պարսից կայսրութեան արեւմտեան նաւահանգիստները: Նեղոսի մէկ թեւով Միջերկրականը կը միանար

կարմիր ծովին, այս ուղիով ալ արեւելեան արտադրութիւնները կը հասնէին փիւնիկէի, Եգիպտոսի և յունական փոքր Ասիական քաղաքները: Ընդհանրապէս Պարսից կայսրութեան ծաւալումը, անոր ստեղծած խաղաղութիւնը մեծապէս նպաստեց արեւելքի տնտեսական վերելքին և ազգերու, ժողովուրդներու իրարու հետ շփուելուն:

ՍԿԻԹԱԿԱՆ ԱՐՇՈՒՒՆՔՆԵՐԸ. — Մերձաւոր Սրելելքի բոլոր երկիրները վեցերորդ դարու վերջերը միացած էին մէկ իշխանութեան տակ: Այդ միացեալ իշխանութեան տակ խաղաղութիւնը ապահոված էր, բայց սահմաններու վրայ գոյութիւն ունէին ուժեր, որոնք պարբերաբար կը խախտէին այդ խաղաղութիւնը իրենց արշաւանքներով: Այս վաչկատուները օղակեր էին Պարսից կայսրութիւնը արեւելքէն, հիւսիսէն և արեւմուտքէն: Անոնք Սեւ ծովէն, Դանուբէն մինչեւ Արալեան լիճը, ինչոս գետը տեւական վտանգի տակ կը պահէին կայսրութիւնը: Ասոնք ընդհանուր անունով կը կոչուէին սկիւթական ցեղեր, ազգակից էին արիական Պարսիկներուն, բռներ էին տափաստաններն ու Միջին Ասիոյ անապատային վայրերը, հրաշալի ձիավարներ էին, լաւ զինուած ու կազմակերպուած: Ասոնց արեւելեան հատուածի դէմ՝ Կիւրոսը երկար ժամանակ կռուեցաւ և հպատակեցուց իրեն, անոնց ուժերը ցրուեց, մէկ մասն ալ իր բանակին մէջ առաւ, անոնց մէկ հատուածն ալ կապուեցաւ հողի հետ, գարձաւ երկրագործ: Արեւմտեան հատուածը կ'ապրէր Սեւ ծովու հիւսիսային ափերուն վրայ, Դանուբէն մինչեւ Կասպից ծով և Վոլկա գետը: Ասոնք՝ այն ցեղերն էին, որ հնդեւրոպացիներու ցրուումէն, բաժանումէն ետքը մնացեր էին տափաստաններու մէջ: Անոնց կենցաղի, ընկերային կացութեան մէջ մեծ փոփոխութիւն չէր կատարուած, վաչկատուն կեանքը չէին լքեր, աւարը և աւերը չէին փոխարիներ խաղաղ երկրագործական կեանքի: Աւելի ուշ անոնց կեանքի մէջ որոշ փոփոխութիւն կը մտնէր Սեւ ծովու շուրջը կառուցուած յունական քաղաքներու հետ շիման հետեւանքով: Հոս ալ


տեղի կ'ունենար նստակեացի և թափառաշրջիկի տեւական պայքարը, որմէ շատ կը տուժէին յունական առեւտրական քաղաքները: Միւս կողմէն ամբողջ Փոքր Ասիան, Այսըրկովկասը այդ վտանգի ներքեւ էր: VIII—VII-րդ դարերուն անոնք հիւսիսէն խուժեցին հարաւ, թուլցուցին Ուրարտուն, Ատրեստանը, անոնց զինուած խումբերը ողողեցին կապադովկիան, Սիւրիան, Մարաստանը: Պեսարապիայէն անոնք կը մտնէին Թրակիա և Մակեդոնիա, ուրկէ դիւրու-թեամբ՝ նեղուցներով և Եգէեան կղզիներով կը մխրճուէին Փոքր Ասիա: Յոյն քաղաքները ծովերու և ցամաքի վրայ նաւատորմիդ և զօրք կը պահէին անոնց դիմադրելու համար, բայց սկիւթական մեծ բանակներուն դիմադրել՝ իրենց ուժէն վեր էր: Դարեհ իր կայսրութեան հիւսիսային և արեւմտեան սահմանները ասոնց դէմ պաշտպանելու համար ձեռնարկեց սկիւթական արշաւանքները:

515 թուին Դարեհը կ'անցնի նեղուցները, կը մտնէ Թրակիա, կ'անցնի Դանուբը և կը թափանցէ Պեսարապիա, արեւմտեան: Սկիւթացիներու բանակավայրը: Անոր հզօր նաւատորմիդը կ'ընթանար փերուէն մօտիկ՝ տանելով ցամաքային բանակի համար զէնք և պարենաւորում: Սկիւթացիք առանց դիմադրական փորձի կը նահանջեն՝ տանելով իրենց ետեւէն թշնամի զօրքերը: Պարսիկները կը մըխըրճուին անծանօթ և վտանգաւոր տափաստաններու մէջ: Նահանջելով՝ Սկիւթացիները կ'ոչնչացնէին բոլոր բնակավայրերը, պարէնը, իրենց հետ կը տանէին կին, երեխայ և անասուններ: Պարսից բանակը կտրուեցաւ նաւատորմիդէն, մնաց առանց պարէնի: Յետնուպահ զօրքը բաժնուեցաւ առաջապահ գործօն բանակէն: Պարսիկները պաշարուեցան: Այսպէս՝ թշնամին իրենց տափաստաններուն խորը քաշելով, Սկիւթացիները անցան հակայարձակման: Անոնք սրգեգրեցին բարթիզանական կռիւներու եղանակը: Բազմաթիւ խումբերու բաժնուած, լաւ ծանօթ տեղական պայմաններուն, Սկիւթացիք կը յարձակէին Պարսիկներու վրայ, կը բաժնէին, կը քայքայէին անոնց ուժերը: Պար-

L'EMPIRE DE DARIUS

(521-486 av. J.-C.)

Les chiffres romains les n°
des satrapies d'après Hérodote



տից հեծեալ բանակը վարժ էր բաց դաշտի մէջ մեծ ճակատամարտներու, իսկ Սկիւթացիք վարժ էին յանկարծակի յարձակումներու և բարթիզանական կռիւներու:

ՆԱՀԱՆՋԸ.— Դարեհի զօրավարները հարկադրուեցան նահանջել. անոնք թողուցին բազմահազար զքրիներ, լքեցին հիւանդները, վիրաւորները, սովահարները: Նահանջը աւելի ծանր էր: Ամեն քայլափոխին կը հանդիպէին Սկիւթացիներուն. ասոնք կը հետապնդէին, կը յարձակէին յետնապահներու վրայ: Սկիւթական զօրաբանակ մը փորձեց աւելի առաջ հասնիլ Դանուբ և քանդել գետի կամուրջները՝ արգիլելու համար նահանջող, պարտուած բանակի զետն անցնիլը: Բայց Պարսիկները նախատեսելով այս վտանգը, լարեցին իրենց ուժերը և Սկիւթացիներէն առաջ հասան Դանուբի ափերուն և ապահովեցին մնացած զօրքի նահանջը:

Այսպէս՝ Դարեհի արշաւանքը Եւրոպայի հարաւ-արեւելքի մէջ ոչ միայն դրական հետեւանքներ չունեցաւ, այլեւ թուլցուց անոր զինուորական ուժը և խախտեց անոր քաղաքական վարկը հպատակ ժողովուրդներու մօտ: Այս անյաջողութիւնը ունեցաւ մեծ հետեւանք կայսրութեան ապագայի համար: Անոր մէջ ապրող ժողովուրդները ազատագրուեցան այն պատրանքէն՝ թէ Պարսից բանակը անպարտելի է: Անոնք այն համոզման եկան, որ կարելի է ազատագրուիլ Պարսից իշխանութենէն: Այս մտայնութեան հետեւանքն է Փոքր Ասիական յոյն քաղաքներու ապստամբութիւնը, որոնց օգնութեան հասան Յուուստանի քաղաքները: Սկսաւ երկար պատերազմ մը յոյն քաղաքացետութիւններու և Պարսից կայսրութեան մէջ: Առաջին անգամ Եւրոպական հողի վրայ կազմակերպուած մէկ ժողովուրդ՝ յոյնը՝ դուրս եկաւ Ասիոյ մէջ կազմաւորուած լայնածաւալ Պարսից կայսրութեան դէմ: Այս կռիւները ոչ միայն նոր հողեր գրաւելու համար չէին, այլեւ երկու քաղաքական ձեւերու արեւմտեան՝ ինքնավար, ժողովրդական քաղաք պետութեանց և արեւելեան բացարձակ միապետու-

թեան կռիւն էր: Թէպէտ պարտուած և քայքայուած ըսկիւթական կռիւներու մէջ, Պարսիկները իրենց ձեռքը պահեցին Թրակիան, յունական բազմաթիւ քաղաքներով: Կայսրութիւնը դարձաւ եւրոպական պետութիւն: Սահմանակից էր Յունաստանին: Թրակիան դարձաւ ռազմի մարզ՝ այդ ուղղութեամբ կատարուող սկիւթական արշաւանքներու դիմաց: Պարսիկներու ձեռքն ինկան նեղուցները: Անոնք հիմա իրենց ձեռքն ունէին այն անցքերու հսկողութիւնը, որով Սև ծովի բոլոր ափերու յայն քաղաքները կը կապուէին Մայր-Հայրենիքի՝ Յունաստանի հետ: Այս կերպով յունական աշխարհի բախտը տնօրինողը կը հանդիսանար արքայից արքան՝ Դարեհը:

ՓՈՒՐՐ ԱՍԻԱԿԱՆ ՅՈՅՆԵՐՈՒ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ.— 499 թիւին Փոքր Ասիական յոյն քաղաքները ապստամբեցան Դարեհի դէմ: Ատոր պատճառը Պարսից իշխանութեան մըշտական միջամտութիւնն էր, քաղաքներու ներքին գործերու մէջ: Անոնք կ'օգնէին ազնուական դասին, քաղաքներու գործերը իրենց ձեռքը պահելու և պարսկասէր հոսանք մը ստեղծելու դիտումով: Միև կողմէն Պարսիկները կը հովանաւորէին փիւնիկեան քաղաքները ընդդէմ Յոյներու մրցութեան: Առաջինները աւելի վստահելի էին, փիւնիկեան նաւատորմի զի վրայ կռթնած Պարսիկները տէր դարձան Եգիպտոսին և Միջերկրականի ափերուն: Յոյնը միշտ քիչ թէ շատ կասկածելի էր: Յոյն քաղաքները իրենց թիկունքն ունէին Յունաստանի ծաղկած հարուստ քաղաք-պետութիւնները:

Պարսիկներու յենարանը Միջերկրական ծովուն մէջ փիւնիկեան առևտրական և ռազմական նաւատորմի զն էր: Իւզանդիոնի, նեղուցներու դրաւումը, Թրակիայի տէր ըլլալը, Եգիպտոսը Պարսից ձեռքին ըլլալը սեղմեր էր յունական աշխարհը: Միջերկրականի արեւելեան աւազանը աւելի շուտ պարսկական էր, քան յունական: Փոքր Ասիական յոյն քաղաքներու ապստամբութիւնը և Յունաստանի մի քանի քաղաք-պետութիւններու միջամտութիւնը Աթէն-

քի գլխաւորութեամբ՝ առաջացուց յոյն-պարսկական երկարատեւ պատերազմը: Դարեհի օրով Աթէնքը անցաւ յուսական ազատութիւնները և քաղաք-պետութեան կառոյցը պահելու, պաշտպանելու շարժման գլուխը: Պարսից հակայ քանակը շարդուեցաւ Մարաթոնի ճակատամարտին մէջ (490 թ.): Դարեհի որդին Բուքսեսը շարունակեց կռիւնները: 481 թիւին սկսաւ պարսիկ մեծ արշաւանքը գէպի Յունաստան՝ ծովով և ցամաքով: 480 թիւին Աթէնքի, Սպարտայի, Պելոպոնէսի միացեալ ուժերը ոչնչացուցին Բուքսեսի նաւատորմիղը Սալամինի մէջ: Այս կռիւներով Յունաստանը ազատագրուեցաւ Պարսից տիրապետութեան վտանգէն: Պատերազմը շարունակուեցաւ, բայց Փոքր Ասիական յոյն քաղաքներու ազատագրութեան նպատակով: Միկալէրի ճակատամարտը քայքայեց Եգէյեան ծովի մէջ Պարսից նաւատորմիղը: Կղզիները, քանի մը Փոքր Ասիական ազատագրուած քաղաքներ Աթէնքի գլխաւորութեամբ կազմեցին հասարչական կոնցրետներն մը: Կռիւր շարունակուեցաւ Փոքր Ասիոյ տիրապետութեան համար և վերջացաւ միայն 449 թիւին Կալլեսանի դաշինքով: Ըստ այս համաձայնութեան Եգէյեան ծովը կը մնար Յոյներուն, Փոքր Ասիական յոյն քաղաքներն ալ կ'ազատուէին: Պարսիկներու ձեռքը մնաց Եգիպտոս, Պաղեստին, Սիրիա և Փիւնիկէ: Ան դեռ ծովային մեծ ուժ ունէր, Փիւնիկեան նաւատորմիղը դեռ անոր յենարանն էր: Յոյները յաջողեցան փիւնիկեան-արամէական վաճառականները դուրս ընել Եգէյեան ծովէն, Փոքր Ասիայէն, Սեւ ծովէն. բայց սեմական աշխարհը Եգիպտոսը մնաց Փիւնիկէցիներու ձեռքը: Միաժամանակ Միջերկրականի արեւմտեան աւազանի մէջ ալ անոնք կը մրցէին իրարու դէմ Կարթագենի գլխաւորութեամբ: Ամեն տեղ՝ ծովերու վրայ, Յոյները և Փիւնիկէցիք կը հանդիպէին որպէս մրցորդներ. անոնք կը մրցէին առեւտրական շուկաներու, հում նիւթեր ձեռք բերելու համար: Այս է պատճառը, որ Յոյները Պարսիկներու դէմ կռուելով իրենց հարուածները կ'ուղղէին Փիւնիկէցիներուն, երբ կ'արշաւէին Եգիպտոս:

ՊՈՐՄԻՅ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՆԿՄԱՆ ՇՐՋԱՆ.— Քսէրքսէսը Պարսից վերջին մեծ և տաղանդաւոր արքայից արքան էր. ան սպանուեցաւ 465 թիւին: Գահ բարձրացաւ Արտաքսէս I. (465—424): Իրմով սկսաւ աննշան և անտաղանդ իշխողներու շարք մը, որոնց ժամանակ Պարսից կայսրութիւնը դանդաղօրէն թուլցաւ: Սատրապները կը ջանային անջատուիլ, հիմնել տեղական իշխանութիւններ: Եգիպտոսի մէջ միշտ վառ էր անկախութեան զգացումը. քուրմերը և իշխանները կանգնած էին այդ շարժման գլուխը. Արտաքսէրքսէսը զսպեց այդ շարժումը, իսկ անոր յաջորդի Իարեհ II-ի օրով Եգիպտոսը նորէն ապստամբեցաւ և անկախացաւ ու վաթսուէն տարի ազատուած մնաց Պարսիկներու իշխանութեանէն: Եգիպտոսին՝ իր ազատագրութեան համար մղած կռիւներու մէջ օգնեցին Յոյները՝ յոյս ունենալով տիրանալու անոր շուկաներուն: Ներքին այս քայքայումը նոր թափ կ'ըստանար Արտաքսէս II-ի օրով (404—358): Անոր կրտսեր եղբայրը Կիւրոս Փոքր, փաքր Ասիոյ սատրապ էր, բայց կ'ուզէր գահին տիրանալ: Յոյն վարձկաններէն կազմեց բանակ մը և կռուեցաւ եղբօր՝ Արտաքսէրքսէսի դէմ: Գրաւեց ամբողջ Փոքր Ասիան, բայց ատով ալ չբաւակաւնացաւ, անցաւ Անդիտաւրոսը, Կիլիկիոյ վրայով մտաւ Միջագետք: Բաբելոնի մօտերը ան հանդիպեցաւ իր եղբօր բանակին՝ 401 թիւին. յոյն վարձկանները յաղթանակեցին, բայց Կիւրոս Փոքրը սպանուեցաւ և Յոյները այլեւս որոշ նպատակ չհետապնդելով նահանջեցին: Այս նահանջը կատարուեցաւ Հայաստանի վրայով: Բանակի հրամանատարը՝ Քսենոֆոնը կը նկարագրէ այն վայրերը, որոնց վրայէն տեղի կ'ունենար «բիւրից նահանջը»: Քսէնոֆոնի այս նկարագրութիւնը մեծ արժէք ունի Հայոց պատմութեան նախնական շրջաններու համար. Արտաքսէրքսէս II-ի օրով ապստամբեցաւ Փոքր Ասիան, որու հրահրողները այն յոյն համայնքներն ու քաղաքներն էին, որոնք դեռ Պարսից իշխանութեան տակ կը գտնուէին: Անոնց հետ կը գործակցէին տեղական ժողովուրդներու բարձր, ղեկավար դասը,

սատրապները: Պարսիկները ճնշեցին այս շարժումները, բայց յոյն քաղաքներուն շնորհնցին տեղական լայն ինքնավարութիւն: Քանի մը վայրերու մէջ առաջ եկան սատրապական հարստութիւններ՝ սատրապութիւնը կ'ըսկսէր դառնալ ժառանգական. սատրապները կ'աշխատէին տեղական ժողովուրդներու ղեկավարներու հետ հաշտ ապրիլ, դառնալ անոնց պետը քան կեդրոնական իշխանութեան ներկայացուցիչը:

Գ. ԳԼՈՒԽ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԵՏՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԻՑ ԿԱՅՄՐՈՒԹԻՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

ՊԱՐՍԻՑ ԿԱՅՄՐՈՒԹԻՒՆԸ.— Կիւրոսը և Կամբիզը կառուցին կայսրութեան արտաքին շէնքը, իսկ Դարեհը տուաւ անոր վարչական միութիւն: Պարսիկները Մերձաւոր Արեւելքը միացուցին մէկ պետութեան մէջ. անոնք լրացուցին, ամբողջացուցին այն, ինչ որ փորձեր էին փարաւոնները, Բաբելոնի և Ասորեստանի թագաւորները: Այս միութեան հետեւանքով Պարսից կայսրութեան մէջ մտան Մերձաւոր Արեւելքի բոլոր ազգերն ու ժողովուրդները: Անոնցմէ շատերը բռնեցեր էին հարուստ պատմական կեանք, ստեղծեր էին ոչ միայն որոշ պետականութիւն, այլև բարձր հոգեւոր մշակոյթ, ոմանք միացեր էին ընկերային կառոյցի և մշակոյթի ցած աստիճանի վրայ: Մէկ քանին կրօնական գաղափարներու մէջ հասեր էին շատ բարձր սկզբունքներու, սերտօրէն միացուցեր էին կրօնն ու բարոյական թելադրանքները, աստուածներու բազմազանութենէն հասեր էին միաստուածութեան գաղափարներու շէնքը, ուրիշներ դուրս էին եկեր տեղական տնային տընտեսութենէն և թեւակոխեր էին համաշխարհային տնտեսութեան սահմանները: Պարսից կայսրութիւնը համադրութիւն մըն էր բազմազան ազգերու, ցեղերու, լեզուներու, ընկերային կազմի, տնտեսութեան զարգացման աստիճաններու: Այն բոլոր ժողովուրդները, որոնք կամայ թէ ակամայ մտեր էին կայսրութեան մէջ շատ ալ իրարու հետ կապուած չէին: Անոնք իրենց պատմական անցեալը ապ-

քեր էին մեկուսացած, իսկ երբ հանդիպեր էին իրարու, հանդիպեր էին իբրև թշնամիներ: Բայց եւ այնպէս կռիւններու, տիրապետութեան, առևտրական կապերու, հոգեւոր-կրօնական հաղորդակցութեանց շնորհիւ արեւելքի բոլոր ժողովուրդները՝ մանաւանդ Արգասաբեր կիսալուսնի շուրջը հաւաքուածները կը ճանչնային իրար, կը գործակցէին իրարու հետ տնտեսութեան, կրօնի, գրականութեան և արուեստի միջոցով: Պատմական երկար դարերու աշխատութեան հետեւանքով ստեղծուեր էր արեւելքի ժողովուրդներու մշակութային ու քաղաքական միութիւն: Այդ բանին ամենամեծ նպաստը բերաւ Պարսից կայսրութիւնը:

ՊԱՐՈՒՅ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ.— Ընկերային տեսակէտէն նոր կայսրութեան մէջ Պարսիկները ամենէն պարզ կազմն ունէին: Անոնք հովիւներ էին և գիւղացիներ, և այդպէս ալ մնացին մինչեւ վերջը: Քաղաքը իբրև տնտեսութեան ուրոյն ձև շատ քիչ դեր կը խաղար անոնց կեանքի մէջ: Քաղաքը միայն վարչական կեդրոն էր, ուր կը նստէր կեդրոնական իշխանութիւնը, կամ անոր ներկայացուցիչը: Ան միաժամանակ ամրոց էր, ապաստան և պաշտպանութեան վայր: Արիական միւս ցեղերէն բաժնուելէն ետքը՝ մինչեւ մեծ կայսրութիւն կազմելը Պարսից ընկերային կարգը մեծ փոփոխութիւն չկրեց: Այս է պատճառը, որ Պարսից մեծ թագաւորները տնտեսութեան զարգացման համար կը դիմէին արամէական վաճառականներու օժանդակութեան: Պարսիկ վաճառականներու դաս չկար: Արամէացիք բռնեցին անոր տեղը: Արքայից արքաները երկրի կառավարութեան համար մեծապէս կ'օգտագործէին այն բոլոր կառավարական ձեւերը, որ գործադրեր էին իրենցմէ առաջ Եգիպտացիք, Բաբելացիք և Ասորները: Անոնք շատ յաճախ միջազգային բարդ հարցերը լուծելու և անոնց ստեղծակ ըլլալու համար՝ իրենց պալատին մէջ կը պահէին յոյն դիւանագէտներ, ստեղծարարներ: Ասոնց երբեմն կը յանձնուէր պաշտօն ներկայացնելու Պարսից իշխանութիւն-

նը օտար երկիրներու մէջ, կամ բանակցելու պետութեանց հետ: Բանակի ղեկավարութեան մէջ մեծ դեր ունէին յոյն զօրավարները: Եգիպտացիք, Բաբելոնացիք կը մտնէին համակայսերական վարչութեան մէջ և իրենց ուժերը կը ծառայեցնէին Պարսից պետութեան համար: Պարսիկը երբեք ծովագնաց չդարձաւ թէև Պարսից հսկայածաւալ կայսրութիւնը հասեր էր բազմաթիւ ծովերու եզերքներն՝ կասպից, Սև, Եգէյնան, Միջերկրական, Կարմիր ծովերուն և Հնդկաց ովկիանոսին: Ան ծովային հսկայ պետութիւն էր. բայց ծովային հաղորդակցութիւնը կը գտնուէր Փիւնիկէցիներու և Յոյներու ձեռքը: Այսպիսով արքայից արքաները իրենց կառուցած մեծ կայսրութեան պահպանման, նիւթական հարստութեան, վարչութեան համար կ'օգտուէին կայսրութեան մէջ գտնուող բոլոր ժողովուրդներու կարողութենէն, պատմական փորձէն: Պարսից կայսրութիւնը իրօք գարծն է այն բոլոր սզգեբու եւ ջանգեբու, որոնք երկու հաբիւր արքիէն աւելի ապրեցան անոր հովանիին տակ: Պարսկական էր միայն իշխող տունը՝ Աքէմէնեանները:

ՊԱՐՍԻՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԸՆԿԵՐԱՅԻՆ, ԱՆԱՐՂԱՐՈՒԹԻՒՆԸ.— Պարսիկները իրանի բարձրաւանդակին վրայ հաստատուելով դարձան երկրագործ, պահեցին իրենց տոհմական կազմը, գերդաստաններու բաժանումը: Ամեն տոհմ մէկ կրօնական, քաղաքական և տնտեսական միութիւն էր: Տեսանք որ, տոհմական այս կառոյցը աստիճանաբար քայքայուեցաւ և առաջ եկաւ իշխող, ուժեղ, զինուած փոքրամասնութիւն մը, որ տէր դարձաւ նաև տոհմի հարստութեան: Հողը սկիզբը տոհմական էր, ան հարուստ և ուժեղ ընտանիքներու ձեռքն էր: Հողին վրայ աշխատողն ալ դարձաւ նոր հողատէրի ռմարդը», այսինքն կորսնցուց իր հողն ու իր աշատութիւնը և ամբողջութեամբ կապուած մնաց իշխողներուն: Ստեղծուեցաւ խոշոր կալուածատիրութիւն: Մանր հողատիրութիւնը վերցուեցաւ, որ Աքէմէնեաններու օրով հազուադիւտ էր: Մարական վեց մեծ տոհմերը և

Պարսից տասը տոհմերը՝ վերածուեցան այդպիսի խոշոր կալուածատէր ընտանիքներու: Հողագուրկ գիւղացիներու կացութիւնը շատ ծանր էր. մշտական աշխատանք ուրիշներու համար, կիսաքաղց և չարքայ կեանք: Աշխատաւոր գիւղացիութեան այս թշուառ դրութիւնը կ'արտացոլար Աւետոյի սկզբնական «գաթաներու» մէջ: Ամենուրէք «անարդարութիւնը կը կռուէր արդարութեան» դէմ, «մեծերը կը տանջէին «փոքրերը»: Ընկերային անհաւասարութեան և գիւղական այս միջավայրէն, բողոքի ձայներ կը լսուէին՝ ազնուական հողատէրերու դէմ: Հողագուրկները յոյսը կը դնեն «արդար և ուժեղ» թագաւորի վրայ: Անոնք կը պահանջեն «արդար դատարան»: Մարերու թագաւոր Դէյոկը կը փորձէ սանձահարել կալուածատէրերը, քիչ մը թեթեւցնել հողագուրկ գիւղացիներու դրութիւնը: Ան ամենուրէք արքայական դատարաններ կ'ըստեղծէր, ուր պէտք էր քննուէին հողային և վարձքի վէճերը: Գիւղացիներու վրայ յենուելով է, որ Դէյոկը դարձաւ մարական թագաւոր, բացարձակ իրաւունքներով, որուն հակառակ էին խոշոր ազնուական ընտանիքները:

Ընկերային այս անհաւասարութիւնը և գիւղացիութեան տառապանքը արձագանգ է գտեր Զրադաշտի ուսմունքի մէջ: Ան ոչ միայն նոր կրօնի հիմնադիր է, այլև ընկերային բարենորոգիչ: Անոր խօսքերն ուղղուած են մեծերուն, ղեկավարներուն՝ «խնդրելու համար, որ հովանաւորեն աշխատանքներ՝ բռնակալներու դէմ»: Այդ հովանաւորութիւնը պէտք է տարածուէր նաև ընտանի և պիտանի բոլոր անասուններու վրայ. անոնց ալ պէտք էր պաշտպանել վատ և անխիղճ տէրերու դէմ: Անարդարութեան համար, ըստ Զրադաշտի, մարդիկ պատասխանատու պիտի ըլլան Ահրու-Մազդայի առաջ, որ բարութեան և արդարութեան սերմանողն է: Եւ օրէնսդիր մարդարէն կը խնդրէր իր գերագոյն տիրոջմէն հաստատել արդար, բայց ուժեղ իշխանութիւն, որուն բազուկի զօրութիւնը զգան բոլոր անարդար, կեղեքիչ պետերը: Գաթաներէն մէկու

մէջ «ողջակէզի եզան գանգատը» կայ, որը զոհաբերուող, կեղեքուող գիւղացիի գանգատն է: Այստեղ եւս չարամիտ, չարագործ ուժերու, մեծերու դէմ՝ պաշտպան և հովանաւոր տիրոջն է, որ կը դիմեն և օգնութիւն կը խնդրեն: Այդ տէրը ԱհրուՄագդան է անկէ դուրս չարութիւն մարմնացնող ոգիներ կան, բայց տառապող գիւղացիութիւնը իր յոյսը կը կապէ բարի և արդար աստուծոյ հետ: Եւ եթէ ան չի օգներ ընկերային անարդարութենէն տառապողներուն այս սչխարհի մէջ, ապա աչխատողը հատուցում պիտի ստանայ միւս կեանքի մէջ. արդարները պիտի մտնան դրախտ, իսկ անարդարներն ու չարերը պիտի երթան դժոխք: Այսպիսով ընկերային անհաւասարութիւնը և անկէ ըղխող անարդար հարստահարութիւնը կ'ըստանայ կրօնական գունաւորում և ընկերային հարցը կը յուժուի ոչ թէ այս աչխարհի վատ ու անարդար կարգերու փոփոխութեամբ, այլ հանդերձեալ կեանքի մէջ՝ հատուցման խոստումով:

ԱԶՆՈՒԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԻՒՂԱՅԻՈՒԹԻՒՆ. — Ա. քէմէն-եաններու ժամանակ Պարսից հասարակութիւնը քիչ փոփոխութեան կ'ենթարկուի: Մարերու ժամանակ ստեղծուած կացութիւնը աւելի եւս կը շեշտուի: Երկրի հարստութեան տէրերը մար և պարսիկ «տոհմապետներն» են, կալուածատէր ազնուականները: Անոնք են յենարանը գահի, անոնց ուժերով է, որ արքայից արքան նուաճումներ կ'ընէ, և կը վարձատրէ զանոնք նոր կալուածներով, շարժական և անշարժ հարստութեամբ: Ինքը՝ Ա. քէմէնեան տոհմը այդ ազնուական միջավայրէն բարձրացած թագաւորական տուն մըն է. ան մէկ կողմէն կը հետապնդէ տոհմական շահեր՝ կայսրութիւնը Ա. քէմէնեան տոհմի սեփականութիւնն է. միւս կողմէն կը հարստացնէ մար-պարսիկ ազնուականութիւնը, անոնց կուռուղ ուժը իրեն հետ ունենալու համար: Այս տեսակէտէն ան կը վարէ դասային-ազնուապետական քաղաքականութիւն:

Բայց արքայից արքաները կը ջանային քաղաքական

մարզի մէջ իրաւագուրկ դարձնել խոշոր կալուածատիրութիւնը՝ պահելով անոնց տնտեսական, հողային արտօնութիւնները: Աքէմէնեաններու օրով գիւղացիութեան կացութիւնը չփոխուեցաւ, մնաց նոյնը, թէեւ արդարութեան կոչը չդադրեցաւ հնչելէ: Հողերուն զգալի մէկ մասը Աքէմէնեան ընտանիքի սեփականութիւնն էր, գրաւուած, նուաճուած երկիրներու մէջ անոնք տէր դարձան նախկին իշխող հարստութեանց սեփականութեան, ինչպէս և բռնադրակեցին իրենց դէմ կռուողներու հողերը: Թագաւորական և կալուածատիրական հողերը կը մշակուէին հողին կապուած գիւղացիութեան և ստրուկներու միջոցով ասոնք կը կատարէին նաեւ անձնական աշխատանքներ կալուածներու մէջ, ինչպէս և կը մասնակցէին պետական շինարարութեան: Ճորտացած, անագատ գիւղացիութիւնն ու ստրուկներն էին, որ ճանապարհներու, կամուրջներու, ամրութիւններու, բերդերու շինութեանց համար կ'աշխատէին: Անոնք էին, որ պատերազմի ժամանակ զօրքի համար ժրթեք, զէնք կը փոխադրէին: Կ'սլուածատէրերը իրենց կալուածներու մէջ ունէին դատական իրաւունքներ արքայից արքայի «արդար դատարանի» գաղափարը կը մնար միայն խօսք, չիրականացող բարի ցանկութիւն: Բուն Պարսկաստանի մէջ Պարսից պետութիւնը իրօք բաղմամբիւ մարսպարսկական ցեղերու դաշնակցութիւն մըն էր Աքէմէնեաններու գլխաւորութեամբ:

ԱՐՔԱՅԻՑ ԱՐՔԱՆ.— Պարսից կայսրութիւնը կառուցուեցաւ նոյն սկզբունքներու վրայ, ինչ որ իրմէ առաջ ստեղծուած արեւելքի մեծ կայսրութիւնները: Պետութիւնը կը նոյնացուէր թագաւորի անձի հետ: Ամբողջ բնակչութիւնը կ'աշխատէր տնօր համար: Ան էր օրէնքի, դատի և վարչութեան աղբիւրը: Ան ունէ մէկուն պ տասխանատու չէր, չկար հասարակական ուժ մը, դաս մը, որ անկէ հաշիւ պահանջէր իր գործերու համար: Ան պատասխանատու էր միայն իր տիրոջ «Ահրու-Մազդայի» առաջ. ան կը համարուէր Ահրու-Մազդայի արդարութեան պաշտպանը: Աստ-

ուած, յաւիտենական բարին, արքայից-արքայի միջոցով է, որ բարին կը սերմանէր և անարդարութիւնը կը պատժէր: Պարակաստանի մէջ թագաւորը աստուած չէր, ոչ ալ աստուծոյ որդի, սակայն ան զրադաշտական կրօնի պաշտպանն էր և իր անձը սերտօրէն կը միանար կրօնի հետ, որ չափով որ Զրադաշտը արդարութեան պահպանման համար թագաւորին և իր աշխարհիկ իշխանութեան տեղ կուտար: Մեծն արքան իր հպատակներու կեանքի և գոյքի տէրն էր, թէպէտ պետութեան մէջ գոյութիւն ունէին դասային աստիճանաւորումներ, ընկերային տնտեսական մեծ տարբերութիւններ, հարուստներ և աղքատներ, ազդեր ու ցեղեր: Սակայն ասոնք բոլորը հաւասար էին՝ իբրև կախում ունեցողներ էին արքայից արքայէն, բոլորն ալ կրնային կորսնցնել այն ինչ որ ունէին, և գտնէին այն, ինչ որ չէին ունեցեր: Ոեւէ տեղ, պաշտօն, դիրք մէկը կրնար գրաւել այնքան, որքան այդ հաճելի կրնար ըլլալ թագաւորին: Ան չէր ճանչնար իր հանդէպ և իրմէ չբղխող իրաւունք, հաստատութիւն, վարչութիւն ամեն ինչ անկէ կը բղխէր և անոր մէջ կը վերջանար: Որով՝ ոչ թէ օրէնքն է որ կ'իշխէր Պարսից պետութեան մէջ, այլ արքայից արքայի կամքը: Տեսականի մէջ այդ կամքը պէտք է արտայայտիչը ըլլար Ահրու-Մազդայի արդարութեան, գործնականի մէջ ան երբեմն կը դառնար քմահաճոյք, բռնակալութիւն:

Իր իրաւունքներէն մէկ մասը ան կրնար փոխանցել ուրիշներուն: Ե՛րասեղծուէր պաշտօնէութիւն, որոնք միայն գործադրողներն էին թագաւորի կամքին, հրահանգներուն: Թագաւորի երկրորդ յենարանը զօրքն էր: Պաշտօնեաներու միջոցով ան կը կառավարէր գրաւուած երկիրները, իսկ զօրքի միջոցով նուաճումներ կ'ընէր ու կարգ կը պահէր: Արքայից արքան ունէր քանի մը մայրաքաղաքներ, ուր թագաւորի հետ կը գտնուէր կեդրոնական վարչութիւնը: Ան ձմեռը կ'անցնէր Բաբելոնի մէջ, գարնանը՝ Շոշի մէջ, ամառը՝ Եկբատան կամ Պերսեպօլիսի մէջ: Այսպիսով ան

մօտ կ'ըլլար իր կայսրութեան երկու մեծ հատուածին՝ սեւ-մական և արիական աշխտրհներուն: Ան շատ բան իւրացուցեր էր Բարեկոնի պալատական արարողութենէն. կ'ապրէր շքեղ պալատներու մէջ, կը շրջապատուէր մեծ շքախումբով, պալատական պաշտօնեաններով: Անոր քով կար պետական խորհուրդ մը, որուն անդամները Պարսից տոհմերու գլխաւորներն էին: Անոնք թագաւորին հետ կը խորհրդակցէին պետական բոլոր կարեւոր հարցերու մասին: Բայց պետական խորհուրդը օրէնսդրական մարմին չդարձաւ, ընդհակառակը՝ որքան արքայից արքայի նիւթական հարստութիւնը մեծցաւ նուաճուած երկիրներով, ստացած հասոյթներով, այնքան ան ջանաց ազատագրուիլ Պարսից մեծ տոհմերու քաղաքական ազգեցութենէն: Գլխաւոր պաշտօնները կը տրուէին Պարսից տոհմերու պետերուն, արքայից արքան խստիւ կը հետեւէր անոնց անձին և գործին: Պալատի մէջ գոյութիւն ունէին գործավարութիւններ՝ մինիստրներ՝ իրենց օգնականներով, բազմաթիւ դպիրներով: Ասոնք կը խմբագրէին օրէնքները, արքայից արքայի հրամանները և կ'ուղղէին տեղական վարչութիւններուն, սաարապներուն, Պետական-կառավարական գործերէն դուրս՝ պալատի ամենէն սիրած զբաղումը որսորդութիւնն էր, որուն կը մասնակցէին ինքը՝ արքայից արքան և իր պալատական իշխանները, բարձր պաշտօնեանները: Պատերազմը յաճախադէպ երեւոյթ էր արեւելքի մէջ, ոչ միայն նուաճումներ ընելու համար, այլեւ աւարի, գերիներ վերցնելու, հարստանալու և իշխողի փոռքին համար: Ինչպէս Ասորեստանի մէջ, Պարսկաստանի մէջ ալ ճարքայից արքանն ինքը անձամբ կ'առաջնորդէր իր բանակը: Կիւրոսը բոլոր կռիւներուն անձամբ կը մասնակցէր. այդպէս էր և Կամբիզը, Դարեհը և Բսէրքսէսը:

ԲԱՋԱՄԱԶԳԵԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻԻՆ — ԱՆՅԵԱԼԻ
ՓՈՐՁԸ — Արեւելքի մէջ քանի մը անգամ ստեղծուեցան բողմազգեան կայսրութիւններ: Անոնց ղեկավարներու առաջ ալ դրուած էր համապատասխան վարչութեան մը

Քշակութիւնը: Եգիպտոսի XVIII-րդ հարստութեան և Բարեխոնի հին կայսրութեան և Ասորեստանի սկզբնական շրջաններուն՝ նուաճուած երկիրները կը պահէին իրենց աւանդական հաստատութիւնները, տեղական իշխանական տունները: Լէսոնք միայն հարկ կուտային իշխանութեան, կ'օգնէին անոր իրենց օժանդակ բանակներով: Մնացած գործերու մէջ՝ նուաճողը չէր մտնէր: Ժողովուրդները կ'ապրէին իրենց հնամենի կարգ ու սարքով: Բայց այս միջոցներով կարելի չէր ստեղծել բազմազգեան պետութիւն մը, որ պահէր իր գոյութիւնը երկար ժամանակ և ըլլար ամուր և հիմնուոր: Նուաճուած երկիրներու իշխանները կը ջանային ազատուիլ օտարի լուծէն, անկախանալ, իրենց զօրքը և հարըստութիւնը ուրիշին չտայ: Այդ պատճառով ալ տեւական կռիւներ նուաճուածի և նուաճողի մէջ: Փարաւոնները որոշ փոփոխութիւն մտածեցին այս վերաբերումի մէջ: Նուաճուած երկրի ռազմական կարեւոր կէտերու վրայ զօրք պահեցին, ամրոցներ կառուցին: Այս զօրաբանակներու պետերը կ'ըստանային արտակարգ լիազօրութիւններ ոչ միայն զինուորական գործերը, այլև վարչական, հարկային և քաղաքական գործերը վարելու համար: Անոնք միայն զօրավարներ չէին, այլև փոխարքաներ:

Կայսերական վարչութեան մէջ նոր ուղղութիւն ժրտցուց Ասորեստանը՝ յատկապէս Ասորբանիպալը: Գրաւուած երկիրները ան համարեց Ասորեստանի կայսրութեան անբաժանելի մասը. տեղական հաստատութիւնները, վարչական կարգը փոխարինեց ասորականով նշանակեց նահանգապետներ և որ ամենէն կարեւորն է հաստատեց համակայսերական պաշտամունք մը: Ասորը յայտարարեց համակայսերական աստուած, միաժամանակ հպատակ ժողովուրդներէն կը պահանջէր աստուածային պաշտամունք մատուցանել նաև Ասուր աստուծոյ տեսանելի ներկայացուցիչ Թագաւորին: Կրօնը, աստուածներու պաշտամունքը պէտք է ծառայէին և զօրացնէին բազմազգեան կայսրութեան հիմերը: Հակառակ այս միջոցներուն հպատակ,

Յուշադրութեամբ աստուծոյ կողմէն կ'ապստամբէին իրենց կրօնի, իրենց աստուածներու առաջնութեան, իրենց անկախութեան համար: Ասոնց Ասուրները կը պատասխանէին դաժանօրէն:

Նոր քարեկոնակիան պետութիւնը հետեւեցաւ Ասորեստանի օրինակին: Մեզ ամենէն յայտնի տեղահանումը հրէական ժողովուրդի գերութիւնն է: Այս քաղաքականութիւնը կրնար միայն ժամանակաւորապէս ահաբեկել նուաճուած ժողովուրդները, քայքայ ազատագրուելու ճիգը և ոգին անոնց մէջ մեղցնել չէր կրնար: Հետագայ նոր քայլը քաղմագրեան կայսրութեան կառավարելու հարցին մէջ ըրին Պարսիկները:

Երկու վարձու թիւեր.— Պարսից վարիչները Դարեհ վշտասպեանի գլխաւորութեամբ կը ջանային վերցնել թուր տարբերութիւնները, պետութիւնը կառուցող ժողովուրդի և նուաճուած ազգերու մէջ: Գրաւուած երկիրները աստիճանաբար դարձան մեծ կայսրութեան վարչական մասերը, որոնք կը կառավարուէին կեդրոնէն զըրկուած կառավարիչներով, փոխարքաներով: Պարսիկները առաջին անգամ մշակեցին այնպիսի պետութեան մը գաղափարը, որ կապուած չէր որոշ ազգի, տեղի, անցեալի հետ: Բազմազգեան այս կայսրութեան վարչական բաժանումը չէր կատարուեր ազգային հիմերու վրայ, այլ վարչական շրջաններով, որոնց մէջ մէկ ազգային միաւորը կրնար մէկ քանի վարչական միաւորներ կազմել կամ քանի մը տարբեր ժողովուրդներու հատուածներ կրնային միանալ մէկ վարչական շրջանի մէջ:

Տեսանք որ, մինչև Դարեհի պետական վարչական նոր քարենորոգումները Պարսից կայսրութեան մէջ ապրող թուր ժողովուրդները պահեր էին իրենց տեղական ազգային ինքնավարութիւնները, իրենց հայրենիքներու միութիւնը և ամբողջականութիւնը իրենց ընկերային կառոյցը: Կիւրոսի ստեղծած պետական մեքենան այնքան զարգացած և նուրբ չէր, որ մասնիկ հպասակ ազգերու ներքին գործերու մէջ: Բազմազգեան տեսակէտէն ալ Կիւրոսը չի վերա-

ցուց տեղական իշխանութիւնները. այլ պահանջեց միայն զօրք և տուրք: Այս քաղաքականութեան հետեւանքով եգիպտացիք պահեցին իրենց նոմերու վարչութիւնը, հրէաները իրենց ազգային-կրօնական համայնքը՝ քահանայապետներու գլխաւորութեամբ. անոնք տաճարի շուրջը հաւաքուած ազգային-կրօնական միութիւն էին. Յոյները կ'ապրէին և կը գործէին իրենց քաղաք-պետութեանց ինքնավարութեան մէջ Հայերն ունէին իրենց տոհմական կառոյցը... Դարեհը այս բոլորը չվերցուց, բայց ասոնցմէ բարձր մշակեց վարչութիւն մը, որ համակայսերական բնոյթ ունէր: Եթէ տեղական առանձնայատուկ գիծերը կայսրութեան բազմազանութիւնը ի յայտ կը բերէին, ապա մէկ և ընդհանուր ստեղծուած վարչական սիստեմը անոր վիուժիւնը, մէկ ըլլալը պէտք է հաստատէ՝ միւլտիլինգ բազմազանութեան մէջ: Ստեղծուեցաւ երկու կառավարական եղանակ՝ տեղական-ազգային և համապետական: Առաջինը կը բղխէր իւրաքանչիւր ժողովուրդի պատմական անցեալէն, ընկերային կառոյցէն, երկրորդը՝ այն մտածումէն թէ կայսրութիւնը մէկ է և անոր բազմակի մասերը մէկ վարչութիւն պիտի ունենան: Առաջինը միտում ունէր անջատելու, պառակտելու, երկրորդը՝ միացնելու: Դարեհը սատարական վարչութիւնը գործադրելով ջանաց միացնել եգիպտացին, փիլէիկէցին, յոյնը, հրէան, արամէացին, բաբելացին, հայը և շատ ուրիշները մէկ պետութեան մէջ: Բայց անոր փորձը հետեւողականօրէն մինչև վերջը չկատարուեցաւ և համապետական վարչական բաժանման տակ մեծցան այն ուժերը, որոնք կայսրութեան քայքայման, պառակտման պատճառ դարձան: Այս երկու վարչութեան յարաբերութենէն կախուած էր կայսրութեան ապագան:

ԴԱՐԵՀԻ ՍԱՏՐԱՊՈՒԹԻԻՆՆԵՐԸ.— Դարեհը մշակեց և գործադրեց սատրապութիւններու վարչութիւնը: Ան աստիճանաբար տիրողի և տիրուածի տարբերութիւնը հասցուց նուազագոյնի: Մարաստանը և Պարսկաստանն ալ ենթարկուեցան սատրապական բաժանման: Վասական ինքնա-

վար երկիրները դարձան սատրապութիւններ, որոնք կը կառավարուէին կեդրոնէն զրկուած բազմ կարավարիչով մը՝ սասրապով: Սատրապը վարչութեան զաւթն էր, իրեն վստահուած երկրի պետը: Կառավարելու մէջ՝ իրեն կ'օգնէր քարտուղարը, որ իրաւունք ունէր արքայական գիւանի հետ կապ պահելու առանց սատրապի իմացութեան: Սատրապի գործառնութեան սահմանը շատ ընդարձակ էր. ան կը հսկէր սատրապութեան կարգ ու կանոնին, խաղաղութեան, ապահովութեան վրայ, կը ղեկավարէր շինարարութիւնը, կը հովանաւորէր երկրագործութիւնը, արդիւնաբերութիւնը, կ'ըզբաղուէր տուրքերու, հարկերու գանձումով. կը պատժէր յանցանքները, դատ կ'ընէր և արդարութիւ ը կը վերահաստատէր: Բայց ան հպատակ ժողովուրդներու ներքին կեանքի մէջ չէր մտնէր, անոնց ընտանեկան յարաբերութիւնները, կրօնական աշխարհը, ժառանգական իրաւունքները սատրապը և ընդհանրապէս կեդրոնական իշխանութիւնը չէին հետաքրքր: Այդ բոլորը թողուած էին հպատակ ազգերու ղեկավարներուն:

Սատրապութեան մէջ զօրքերու հրամանատարութիւնը յանձնուած էր առանձին մտրդու և ոչ մէկ կապ ունէր սատրապի հետ: Քաղաքներու և միջնաբերդերու պաշտպանութիւնն ալ առանձին գործ էր, որ անջատ էր հրամանատարէն: Արքայից արքան կառավարելու մէջ մտցուցեր էր յեխանութեան բաժանման սկզբունքը՝ քաղաքացիական և զինուորական իշխանութիւնը պէտք չէր մէկ ձեռքի մէջ կեդրոնանար՝ ոչ սատրապի, ոչ զօրահրամանատարի: Այս կեդրոնացումը կրնար վտանգաւոր ըլլալ կեդրոնական իշխանութեան համար: Սասրապը, Բարսուղարը և զօրահրամանատարը միանգամայն ինքնուրոյն ուժեր էին և անմիջականօրէն ենթակայ արքայից արքային:

Բացի վերոյիշեալ մնայուն պաշտօնակատերէն, արքայից արքան ամեն տարի կեդրոնէն յատուկ քննիչներ կը զրկէր սատրապութիւնները լայն լիազօրութիւններով օժտուած, տեղն ու տեղը քննիչու սեղական իշխանութեանց գործերը,

լսելու բողոքները, պատժելու անիրաւութիւնները: Իննիչ մարմինը կազմուած կ'ըլլար արքայից արքայի ամենէն հաւատարիմ մարդոցմէ. անոնք կը կոչուէին «արքայի աչհերն ու ակափօցիներ»: Անոնք իրենց տրամադրութեան տակ ունէին յատուկ զօրաբաժին իրենց որոշումները գործադրել տալու համար: Անոնց զեկուցումներու հիման վրայ արքայից արքան կուտար իր որոշումը սատրապներու, զօրահրամանատարներու մասին՝ պահել իրենց պաշտօնի մէջ, հեռացնել, վարձատրել, թէ պատժել:

ՀԱՐԿԸ.— Սատրապներու գլխաւոր գործը հարկերու գանձումն էր. ամեն սատրապութիւն հարկատուական միութիւն մըն էր: Հարկը կը հաւաքէին բերքերով և դրամով: Տուրքերը յարմարեցուած էին սատրապետութեան գլխաւոր արտադրութեան, հարստութեան: Սատրապները կ'որոշէին տուրքի քանակը, իսկ պաշտօնեաները կը հաւաքէին: Փոքր Ասիան բաժնուած էր չորս հարկային միւտներու կամ սատրապութիւններու: Առաջինի մէջ կը մտնէր Յոնիան, Կարիան, Լիկիան որ կը վճարէր չորս հարիւր տաղանդ արծաթ դրամ երկրորդը՝ Միսիան, Լիտիան և ուրիշ քանի մը գաւառներ՝ կը վճարէին հինգ հարիւր տաղանդ, յետոյ Փռիւքեան, Պաֆլագոնեան, Հելիոպոնտը՝ 360 տաղանդ, Փիւնիկէն, Պաղեստինը կը վճարէին 350 տաղանդ, իսկ Եգիպտոսն առանձին՝ 600 տաղանդ: Ասոնք Պարսկաստանէն առաջ ալ հարուստ երկիրներ էին, հարուստացած էին երկրագործութեամբ և միջազգային առեւտուրով: Բացի դրամական տուրքերէն սատրապութիւնները կը վճարէին նաև բնատուրք: Եգիպտոսը կը հայթայթէր 120,000 զինուորի համար ցորեն: Հիւսիսային Իրանը կը վճարէր 100,000 ոչխար, 4000 ջորի և 3000 ձի. Բարբելոնը 500 երիտասարդ ներքինի, Կիլիկիան 360 ճերմակ ձի. հնդկական սատրապութիւնը կը շրջէր որսի ձիեր և ոսկէ սուրբեր — չորս հազար տաղանդի արծէքով, Հայաստանը չորս հազար նժոյգներ: Ամեն երեք տարի Հայէջստանէն կ'ըստացուէր որսի և պատերազմական փիղեր:

Վրաստանը հինգ տարին անգամ մը կը վճարէր հարիւր տղայ և հարիւր աղջիկ արքայական պալատի ծառայութեան համար: Այս ձեւով արքայից արքայի գանձարանը հսկայական հարստութիւն կը հաւաքուէր՝ ձոյլ ոսկիով և արծաթով: Այս բոլորը կը պահուէր անոր մայրաքաղաքներու մէջ՝ Բարեյոնի, Շոշի, Պրեսեպոլիսի՝ ինչպէս և քանի մը ամրոցներու մէջ: Բնական բերքերը կը ծախսուէին տեղին վրայ բանակի և սատրապական պաշտօնէութեան համար, իսկ մէկ մասն ալ կը զրկուէր կեդրոն, ԴՐԱՄԸ.— Մետաղներու գործածութիւնը իբրև փոխանակութեան միջոց գոյութիւն ունէր Եգիպտոսի և յատկապէս Բարեյոնի մէջ: Այդ դիւրացուց վաճառականութիւնը: Բայց այդ բանը աւելի դիւրացուց Լիթիան: Ան ունէր ոսկիի և արծաթի հանքեր: Ութերորդ դարուն այս մետաղներէն դրամ կը ձուլէին կտր ձեւ տալով և որոշելով անոր կշիռը. ան կը կրէր թագաւորի կամ որեւէ խորհրդանշող պատկեր: Պետական վարչութիւնը կ'ապահովէր այդ դրամներու շրջանառութիւնը: Դարեհը նոյն գործը կատարեց Պարսից կայսրութեան մէջ: Իր գանձատուններու ձոյլ մետաղներէն ան դրամ կտրեց՝ որոշելով անոնց կշիռը. դրամեց իր նկարով և շրջանառութեան դրամ կայսրութեան մէջ. ասոնք «դարեհականներն» են, մետաղի կտր կտոր. ոսկիէ, արծաթէ և պղինձէ: Ոսկի դրամ կտրելը Դարեհը վերապահեց իրեն, իսկ արծաթ և պղինձ դրամներ կրնային կտրել նաև սատրապները: Դրամի մէկ մասը միշտ կը պահուէր կայսերական գանձատուններուն մէջ: Դարեհի դրամական այս բարենորոգումը ընդարձակ պետութեան մէջ մտցուց դրամական նոյնութիւն, որ շատ նպաստեց վաճառականութեան: Դրամական բարենորոգումէն օգտուողներն եղան գլխաւորապէս կայսրութեան մէջ ապրող օտար ժողովուրդները՝ Արամէացիք, Յոյները, Փիւնիկէցիք, որոնք նւերուած էին միջազգային առևտուրին: Բնիկ պարսիկ տարրը քիչ օգտուեցաւ, որովհետև ան հովիւ էր և գիւղացի, պարսիկ ազնուականութիւնը իր հա-

բըստուժիւնը չմտցուց վաճառականութեան մէջ և դրամական հարստութեան տէր չդարձաւ: Անոր հարստութեան աղբիւրը միշտ մնաց հողը, մեծ կալուածատիրութիւնը: Մինչ յոյնի, արամէացիին, փիւնիկէցիին, մասամբ հրէային հարստութեան աղբիւրը, առեւտուրն էր, արդիւնաբերութիւնը, դրամը: Պարսից կայսրութեան մէջ ստեղծուեցաւ երկու դասեր՝ հողատէր ազնուականութիւնը և դրամատէր քաղքենին:

Եթէ սատրապետութիւնը ներմուծեց վաքչական միօրինակութիւն, Դարեհի դրամական բարենորոգութիւնն ալ նպաստեց տնտեսական միութեան: Կայսրութեան բոլոր մասերը այս կամ այն չափով միացան իրարու հետ նիւթական արտադրութիւններու փոխանակութեամբ: Այս փոխանակութեան նպաստեց Դարեհի մէկ ուրիշ ձեռնարկը, որ քաղաքական նպատակ ունէր թէև, բայց շատ նպաստեց տնտեսութեան վերելքին:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԵՍ ՃԱՄԲԱՆԵՐԸ.— Տեսանք, որ Դարեհը առաջին եղաւ, որ կապեց Հնդկաստանը ծովային ուղիներով Պարսկաստանի հետ: Ան նորոգեց Նեղոսի ջրանցքը, որ կը կապէր Միջերկրականը Կարմիր ծովի և Հնդկաց ովկիանոսի հետ: Ծովային այս ճամբաներով հեռաւոր Արեւելոյի, Հապէշիստանի և արեւելեան Աֆրիկէի ապրանքները կը հասնէին Միջերկրականի արեւելեան նաւահանգիստները: Այս գիծը կ'օգտագործէին Հնդիկները, Արաբները և Փիւնիկէցիք: Բացի ծովային այս ուղիէն, որ հեռու էր, դուրս էր Պարսկաստանէն, Դարեհը կառուցեց ցամաքային շարք մը ուղիներ գինուորական-քաղաքական նպատակներու համար: Արքայական այս խճուղիներէն մէկը կ'ըսկսէր Եգէյեան ծովու մօտերէն, կը մտնէր Սարդա, կը կտրէր ամբողջ Փոքր Ասիան, Փոխգիոյ, Կապադովկիոյ և Կիլիկիոյ վրայով՝ Եփրատն անցնելով կը հասնէր Էլամ՝ Շոշ: Այս գիծը կը միացնէր՝ Պարսից ծոցը և Եգէյեան ծովին: Գիծ մըն ալ Պարսկաստանը Միջագետքի, Սիւրիոյ և Պաղեստինի վրայով կը միացնէր Եգիպտոսին:

իրանի արեւմտեան երկիրները՝ երրորդ գիծով մը կը միանային արեւելեան երկիրներու հետ՝ Միջին Ասիոյ, Հընդկաստանին :

Այս ուղիները կը ծառայէին կայսրութեան մասերը իրարու հետ կապելուն, անոնց մէջ հազորդակցութիւնները դիւրացնելուն: Այդ ուղիները վերապահուած էին արքայական՝ սուրհանդակներուն, սատրապներու և պաշտօնական մարդոց, ինչպէս և բանակներու տեղափոխութեան: Բայց անոնք ծառայեցին ապրանքներու և արտադրութիւններու փոխադրութեան և կայսրութեան բազմակի մասերը տնտեսապէս իրարու հետ կապելուն: Աստիճանաբար Պարսկաստանը դուրս կուգար փակ տնային տնտեսութեան շրջանակէն և մասնակից կ'ըլլար Մերձաւոր Արեւելքի տնտեսութեան հոլովոյթին:

Արքայական ուղիներու վրայ կառուցուած էին կայաններ, ուր ամեն պահ պատրաստ կը գտնուէին ձիեր և սուրհանդակներ: Արքայից արքայի հրամանները, հազորդուհները արքունիքէն, սուրհանդակով կը դրկուէին հեռաւոր սատրապներուն: Սուրհանդակները կարճ ժամանակի մէջ այդ հրամանները կը հասցնէին մօտակայ կայանը. կը փոխանցէին երկրորդ սուրհանդակին, որ կազմ ու պատրաստ կ'ըսպասէր և իր հերթին արքայական հրամանները հետեւեալ կայանի մէջ կը յանձնէր երրորդին և այսպէս մինչեւ որոշուած վայրը հասնիլը: Հին աշխարհի համար արտակարգ արագութեամբ կեդրոնի հրամանները կը հասնէր ծայրագաւառներուն: Նոյն ձեւով սատրապներուն, և անոնց քարտուղարներուն զեկուցումները արագութեամբ և մեծ կանոնաւորութեամբ կը հասնէին արքայական պալատը:

Սասրապական վարչութիւն, դրամական բարենորոգումն, հաղորդակցութեան մեծ օւղիների կառուցումն՝ ահա ինչ միջոցներով Դարեհը փորձեց ստեղծել և կառավարել բազմազգեան կայսրութիւնը: Ասոնք բոլորը միացնող, զօղող

գործօններ էին և շատ հեռու էին այն միջոցառումներէն, որ կը գործադրէին Ասորեստանը, Բաբելոնը: Ասոնց վրայ կ'աւելնար նաև արամեական լեզուն:

ԱՐԱՄԷԱԿԱՆ ԼԵՁՈՒՆ.— Պարսիկները ոչ մէկ ժողովուրդի չպարտադրեցին ոչ իրենց լեզուն, ոչ ալ Ահրու Մազդաշի կրօնը: Պարսկերէնը պարսիկ ժողովուրդի լեզուն էր և կը խօսուէր միայն Պարսկաստանի մէջ. նոյնիսկ կայսրութեան հեռաւոր նահանգներու հետ պալատը յարաբերութիւններ կը պահէր ոչ թէ պարսկերէնով և էլամական սեպագրերով, որ իւրացուցեր էին, այլ արամէրենով և արամէական նշանագրերով: Այս լեզուն ամենէն տարածուածն էր կայսրութեան մէջ:

Դեռ Ասորեստանի տիրապետութեան օրով ան հաղորդակցութեան ամենէն յարմար միջոցն էր: Ան նոյնիսկ Ասորեստանի մէջ կը մրցէր ասուրերէնի հետ: Արամէացի առեւտրականները իրենց ձեռքն էին առեր կայսրութեան ցամաքային, կարաւանային առեւտուրը: Անոնց նշանագրերը շատ աւելի պարզ էին, դիւրամատչելի: Անոնք հոն չիւնագիր նշաններ էին, որոնք դիւրութեամբ կ'իւրացուէին միւս ազգերու կողմէ: Բայց արամերէնը նաև վերնախաւի՝ պաշտօնէութեան, առեւտրական դասի լեզուն էր: Արքունիքը այդ լեզուն ոչ ոքի չէր պարտադրեր: Լիդիան, Փիւնիկէն, Հրէաները, Յոյները, Եգիպտացիք կը շարունակէին խօսիլ, գրել և ստեղծել իրենց ազգային լեզուներով և նշանագրերով: Ահրու-Մազդաշի պաշտամունքն ալ բռնի կերպով ոչ մէկ ազգի չպարտադրուեցաւ: Ատոր փոխարէն արքայից արքան ջանաց տեղական աստուածներու կողմէն ճանչուիլ իրեւ օրինաւոր թագաւոր: Բաբելոնի մէջ Պարսից արքան նոյն Մարդուկի ներկայացուցիչն էր, անոր ընտրեալը, ան նոր հարստութիւն էր, բայց հինի իրաւունքներով: Նոյնը և Եգիպտոսի մէջ: Այս երկու երկիրներու մէջ արքայից արքան մեծագոյն յարգանքը կը մատուցանէր աստուածներուն, այս ժողովուրդներու պատմական անցեալին, և կը պահէր անոցն իրաւունքները:

ՊԱՐՍԱԿԱՆ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ.— Արտակարգ այս հան-

դուրսդուրեցան հետեւանքով արեւելեան ազգերը իրանացման, պարսկականացման չենթարկուեցան, չձուլուեցան: Ընդհակառակը՝ մեծ ու փոքր ազգերը մշակութային մեծ վերելք ունեցան, ազգային ինքնապահպանման մէջ մեծ յառաջդիմութիւն ձեռք բերին, Հրէաները դարձան ազգային կրօնական համայնք, խմբագրեցին իրենց օրէնքները, հաւաքուեցան սաճարի շուրջը և ապրեցան համասուամբ ազգային կեանքով: Յոյները թէեւ նիւթական, քաղաքական կապերով կապուած էին Պարսից պետութեան հետ, բայց հոգեւոր-մշակութային կապերով միացած մնացին մայր հայրենիքին՝ Յունաստանի հետ և հոնկէ կ'ըստանային իրենց ազգային ներշնչումները: Արամէական և փիւնիկեան քաղաքները գրաւեցին կայսրութեան շուկաները և արտակարգօրէն հարստացան: Հայերը Պարսից իշխանութեան տակ աստիճանաբար հայացողցին իրենց հարեւան ցեղերը և սաղմուտորեցին Հայոց ժողովուրդը:

Պարսից պետութիւնը ճնշող, հալածող չէր, ան մեծ ու փոքր ազգերու դաւեակեցուքիւմ մըն էր տիրող ազգի՝ Պարսիկներու առաջնորդութեամբ: Պարսկաստանը արեւելքին տուաւ խաղաղութիւն. չկային սահմանային վէճեր, չկային ներքին ընդհարումներ, կռիւներն ու վէճերը փոխադրուեցին հեռաւոր սահմաններու վրայ, որոնք պաշտպանուած էին սահմանապահ մնալուն բանակներով: Չկար ներքի և դուրսի վաչկատուն ցեղերու յարձակումը, կար կեանքի և գոյքի ապահովութիւն: Հայը, յոյնը, լիդիացին, սեմականները, փիւնիկէցին, եգիպտացին՝ կայսրութիւնը պահեց խաղաղութեան մէջ: Պարսից այս խաղաղութիւնը տեւեց երկու հարիւր տարիէ աւելի: Այս երկու դարձում մէջ մշակուեցան այն բոլորը՝ քաղաքակրթական արժէքները որոնց համագումարը մենք կը կոչենք իրանականութիւն, այսինքն արեւելեան ազգերու միահամուռ ճիգերով մշակած՝ մշակութային քաղաքական և տնտեսական ստեղծագործութիւնը: Աքէմէնեանները ազգերու խաղաղ գործակցութեամբ արեւելքը առաջնորդեցին դէպի մշակութային միութիւն, իրանականութեան:

Դ. ԳԼՈՒԽ

Կ Ր Օ Ն

ԲՆՈՒԹԵԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ.— Մարերն ու Պարսիկնե-
րը մինչև Զրադաշտական կրօնի գաղափարներու մշակու-
մը՝ ունէին կրօնական այնպիսի ըմբռնումներ, հաւատք,
որ յատուկ էր արեւելքի ուրիշ վաչկատուն ժողովուրդնե-
րուն: Նոյն ընկերային պայմանները կ'ըստեղծեն միևնոյն
կրօնական գաղափարները: Մարա-պարսկական ցեղերը բը-
նապաշտներ էին, կ'աստուածացնէին բնութեան ուժերը:
Իրանական ցեղերը կը պաշտէին Չերմութիւնը, լոյս պար-
գեւեոյ արեւը, «գիշերային արեւը»՝ լուսինը փայլփլուն
աստղերը, արգաւանդ հողը և կենսարար ջուրը: Դեռ չկար
այն գիտակցութիւնը, որ այդ բոլորը մէկ գերագոյն ուժի,
ոգիի արտայայտութիւններն էին: Անոնք իրարու հետ միա-
ցած չէին, կը գործէին ցիրուցան, անջատ: Բնութեան բա-
րի աստուածներու հետ զուգահեռ գոյութիւն ունէին չար
ազիներ, դեւեր, որոնք շարունակ կը հալածէին մարդիկը
և հսկառակ կը գործէին բարի ոգիներու: Անապատի խոր-
շակը, թունաւոր սողունները, հիւանդութիւնները, ձմեռը
իր ցուրտերով, սառնամանիքներով՝ չար ոգիներու գործն
էին: Ամառը և գարունը պայծառ, լուսաւոր օրերը, ծա-
ղիկները և պտուղները՝ բարութեան ոգիի մարմնացումն
էին: Աստուածներուն և բնութեան ոգիներուն կը զոհաբե-
րէին անասուններ, անոնց հաճելի էր կրակի վրայ խորո-
ված միսը: Զոհաբերութեան պահուն կ'երգէին ոգիներուն
նուիրուած հոգեւոր երգեր: Անասուններու զոհաբերումը
ցոյց կուտայ մարա-պարսկական ցեղերու ընկերային դրու-
թիւնը՝ խաշնարածներ էին: Արտակարգ յարգանք ունէին
անոնք կովի և շան հանդէպ. ասոնք մեծ դեր կը կատա-
րէին վաչկատուն ժողովուրդներու կեանքին մէջ:

ՆԱԽՆՆԻՔՆԵՐՈՒ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ.— Բնութեան ուժերու
պաշտամունքի հետ մարա-պարսկական ցեղերու մէջ մեծ

յարդ ունէր նախնիքներու պաշտամունքը: Այս յատուկ էր արիական բոլոր ժողովուրդներուն: Ան մշակուեցաւ միջա-
վայրի մը մէջ, ուր հայրիշխանութիւնն էր տիրապետողը: Մարերն ու Պարսիկները շատ երկար ապրեցան տոհմական կեանքով՝ նախքան պետութիւն ստեղծելը: Ուստի անոնց ընկերային կացութիւնը խորապէս արտայայտուեցաւ կրօնի մէջ: Ամեն տոհմ կրօնական միութիւն մըն էր, ունէր իր հովանաւոր ոգին աստուածը, որ մեռած նախահօր, տոհմի հիմնադրի ոգին էր: Սերունդներու երեւակայութեան մէջ ան երբեմն կը դառնար առասպելական անձնաւորու-
թիւն, գերբնական ուժի տէր, իր տոհմի առաջնորդը, մեծ գործեր կատարողը: Տան մէկ անկիւնը կը բարձրանար օճախը, որ նուիրուած էր տոհմի պահապան ոգիին. հոն միշտ կը վառէր կրակը, որ անշէջ պիտի պահուէր: Տոհմապետը օճախի առաջ նախնիքներու ոգիին զոհ կը մատուցէր, տոհմի անդամներու հետ անոր վառաբանութեան երգեր կ'երգէր և կը խնդրէր անոր հովանին և օժանդակութիւնը:

ՄՈՊԵՐԸ.— Տիեզերական, բնութեան ուժերուն պաշտամունք մատուցանելու համար մարապարսկական հասարակութեան մէջ գոյութիւն ունէին մոգերը. անոնք եգիպտական քուրմերը յիշեցնող դասն էին: Անոնք ոգիներու, աստուածներու սպասաւորներն էին: Անոնք մարական ցեղ մըն էին սկզբնապէս: Մարական միւս ցեղերը հաստատուեցան որոշ հողերու վրայ, որ դարձաւ անոնց տոհմական սեփականութիւնը: Մոգերու տոհմը շունչէր իր տոհմական հողամասը. անոնք ցրուեցան միւս տոհմերու մէջ և կ'ըպասարկէին անոնց կրօնական կարիքներուն: Ստեղծուեցաւ դաս մը, որուն միայն վերապահուած էր համա-մարական տօներուն արարողութիւններու, ծէսերու կատարումը և աստուածներուն զոհաբերումը: Ինչպէս Բաբելոնի մէջ քուրմերը կրօնի, գիտութեան, կախարդութեան մասնագէտներն էին, անոնց միայն մասաշէլի էր այդ բոլորը, այնպէս ալ մարապարսկական ցեղերու մէջ մոգերը ոչ

միայն աստուածներու սպասաւորներն էին, այլ և գիտութեան, յատկապէս բժշկութեան, աստղագիտութեան գիտակաները, անոնց մասնագէտներն էին: Բժշկութիւնն ալ կախարդութիւն մըն էր: Կախարդական միջոցներով կարելի էր չար ոգին դուրս բերել հիւանդի մարմնէն. թախամաններն ալ միջոցներ էին՝ մարդոց հեռու պահելու չար ոգիներէն: Մոգերու այսքան ընդարձակ գործունէութիւնը և մանաւանդ անոնց կապը ոգիներու և աստուածներու հետ՝ շատ մեծ ազդեցութիւն էր վերապահեր անոնց հասարակութեան բոլոր դասերու մէջ: Անոնք վառ կը պահէին կրակարանները, զոհեր կ'ընէին: Պարսիկները կրակարանները կը կառուցէին բարձր տեղերու, բլուրներու վրայ: Մարապարսկական ցեղերը իրենց աստուածներուն համար բացի ատրուշաններէն չէին կառուցեր տաճարներ, չէին բարձրացներ արձաններ: Մեռելներու պաշտամունքն ալ շատ պարզունակ էր անոնց մօտ: Դիակը չէին թաղեր, այլ կը դնէին բնակավայրերէն հեռու, անմարդաբնակ տեղ մը, ուր թռչունները կ'ուտէին անոնց միսը:

ԱՀՐՈՒՄ-ՄԱԶԻԱ.— Տիեզերքի բազմաթիւ ոգիներու մէջ սկզբնապէս կարգ և կապ չկար: Մոգերը աստիճանաբար անոնց մէջ մտցուցին որոշ կապ, ազդեցութիւն և աստիճանաւորում: Իրանական միտանիներու մէջ այս աստիճանաւորումը աւելի պարզ էր: Բազմահարիւր ոգիներու մէջէն արդէն բարձրացիր և աստուածութեան հասեր էին Միթրան, Ինտրան, Վարունան, Ագնին, Սուրիան: Ինչպէս միտանական հասարակութենէն բարձրացեր էր ու կը կառավարէր զինուորական ազնո ական դաս մը, այնպէս ալ ոգիներու շրջանակէն դուրս ելան և առաջնութիւն ստացան քանի մը ոգիներ՝ անոնք դարձան աստուածներ: Միտանի ազնուականներու այդ աստուածներն են, որ անոնց կ'առաջնորդէին դէպի կռիւ, յաղթանակ: Մարապարսկական տոհմերու կրօնական գաղափարներու ընթացքը շատ ալ պարզ չէ: VIII-րդ դարէն սկսած անոնք ծանօթ էին Միքրայից, բայց այդ ժամանակներէն անթիւ

ողիներու շարքէն կը բարձրանար Վիսսուսուքեան ոգին: Ահրու-Մազդան, որ շրջապատուած էր բարի ոգիներով: Անշուշտ այս ժամանակներէն ալ կատարուած է աստուած-ներու ըստ ընտանիքներու բաժանումը, անոնց մէջ ազգակցական կապի որոշումը: Ահրու-Մազդայի կրօնը մշակուեցաւ մոգերու շրջանակին մէջ: Այդ կրօնին մէջ բնութեան ուժերու հակադրութիւնը շեշտուած էր, բայց անոր բարոյական-ընկերային կողմը անմշակ էր, անկատար: Ահա սկզբնական Ահրու-Մազդայի այս կրօնն էր, երկուութեան սկզբունքը, որ մղեց Զրադաեսը վերամշակելու, լրացնելու Ահրու-Մազդայի ուսմունքը: Մոգերը Ահրու Մազդայի վարդապետութեան տուեր էին դասային բնոյթ: Հողատէր-ազնուականութեան շահերն է, որ մոգերու կրօնը կը պաշտպանէր: Իրենք ալ հարստութիւն օւնէին ցրուած մարական ցեղերու մէջ. անոնք ալ նոյն ազնուական ծագումն օւնէին: Այս ընկերային անարդարութեան դէմ է, որ իր նոր կրօնա-բարոյական ուսմունքը մշակեց Զրադաշտը:

ԶԻԱԿԱՆՆԵՐ. — Զրադաշտի անձի և գործի մասին ստոյգ տեղեկութիւններ չկան: Ոմանք անոր տպրած կը համարեն Քր. 5-6 հազար տարի առաջ. բայց ամենայն հաւանականութեամբ ան տպրեր է եօթերորդ կամ վեցերորդ դարերու մէջ: Ան մեռած պէտք է ըլլայ Աքէմէնեաններու հաջրատութեան հաստատուելէն առաջ: Ան ծնած է Մարաստանի մէջ, իսկ իր պատանեկութիւնը և երիտասարդութիւնը տպրեր է Բակտրիոյ մէջ՝ տեղական թագաւորին պալատը: Հոս ան կը տեսնէ մէկ նստակեաց աշխատասէր արիական ժողովուրդ, որ կ'ապրէր կասպից ձովի և Հինտուգուշ լեռան մէջ ինկած ընդարձակ տարածութեան վերայ և կ'ըզգրազէր երկրագործութեամբ: Հոն կ'իման խիստ էր՝ ամառը արտակարգօրէն տաք, ձմեռը խիստ ցուրտ: Բնութեան այս հակադրութիւնը պէտք է տեղ գտներ Զրադաշտի կրօնի մէջ: Միւս կողմէն խաղաղ և երկրագործ ժողովուրդը տեւական յարձակման ենթակայ էր միջին ասիական տափաստաններէն եկող արշաւողներու կող-

մէն: Նստակեաց ցեղերը յամառ ջանքերով և զինուած հաղիւ կը պաշտպանէին իրենց ռենեցածը վաշկատուններէն: Զրադաշտի ընկերային ուսմունքի մէջ, աշխատաւոր երկրագործ դասակարգի այս յարատե ճիգն ու պայքարն է, որ արձագանգ կը գտնէ:

Երեսուն տարեկանին Զրադաշտ մխրճուեցաւ ոգեկան որոնումներու մէջ: Զինք չէին բաւարարեր մոգերու մշակած ծէսերը, զոհաբերութիւնները, աւանդութիւնները: Երկարատե ներքին անորոշութենէ ու տառապանքներէ ետքը ան մշակեց իր կրօնական-բարոյական վարդապետութիւնը:

ԶՐԱԴԱՇՏԻ ԿՐՕՆԸ.— Զրադաշտի ուսմունքի մէջ մարապարսկական ժողովրդական կրօնը մաքրուած է, բիւրեղացած, դարձած բարձր բարոյական կրօն: Ժողովրդական պաշտմունքէն ան վերցուցած է բնութեան մէջ գործող երկու ուժերու՝ բարի և չար ոգիներու սկզբունքը: Զրադաշտը այս սկզբունքները կիրառեց մարդկային հասարակութեան մէջ: Ըստ իր վարդապետութեան նախապէս գոյութիւն ունէր բարձրագոյն աստուած մը. ան ամբողջութեամբ լոյս էր: Ան կը խորհրդանշէր լոյսը, արեւը և կրակը. կը կոչուէր Ահրու-Մազդա. անկէ կը բղխէին բովանդակ կեանքը, իմաստութիւնը, բոլոր առաքինութիւնները, բոլոր բարութիւնը և գեղեցկութիւնը: Բարձրագոյն և բարի աստուծոյ հետ և անոր հակադիր գոյութիւն ունէր չարութեան ոգին, ուրկէ սկիզբ կ'առնէին բոլոր ախտերը: Այս երկու նախադասականները բնութեան և մարդկային հասարակութեան մէջ կը գործէին ու կը կատարէին իրենց դերը: Կեանքի և մահուան գոյութիւնը, առողջութիւնն ու հիւանդութիւնը, ախտերն ու առաքինութիւնները, գիտութիւնն ու անգիտութիւնը, գիշերն ու ցերեկը, անապատն ու արգաւանդ հողը՝ ապացոյց էին, որ կար երկու ուժ, գոյակ, իրարու հակադիր, իրերամերժ: Բարի ուժը Ահրիմանը: Այս երկուութիւնը տիեզերական էր, ան կար բնութեան

մէջ, կենդանական աշխարհի մէջ, մարդկային հասարակա-
կան կեանքի մէջ, Անոնք միացնել, ամեն ինչ մէկ Գոյակէն,
մէկ ուժէն բղխեցնել անկարելի էր: Բարութեան և առա-
քինութեան, լոյսի մարմնացում Անրու-Մազդան չարու-
թեան ծնունդ տալ չէր կրնար. և ընդհակառակը՝ Ահրիմա-
նը առաքինութիւններ սերմանել անկարող էր: Ուստի կր-
կու նախածին ուժերը գոյութիւն ունէին իրարմէ անկախ
և կը գործէին իրարու հակառակ: Երկու այս նախածին
ուժերը միմեկ չէին, անոնք ունէին գործակիցներ, շրջա-
պատուած էին ոգիներով՝ հրեշտակներով և դեւերով: Ահ-
րու-Մազդան Ահրիմանի դէմ կը կռուէր «երկնքի բանակ-
ներով», որոնց գլուխը կանգնած էին վեց մեծ ոգիներ՝
սրբազան անմահներ. անոնք կը կոչուէին «բարի միաք»,
«լուսագոյն առաքինութիւն», «ցանկալի իշխանութիւն»,
«անմահութիւն», «առողջութիւն», «ընդհանուր առատու-
թիւն»: Ասոնք կ'առաջնորդէին Ահրու-Մազդայի հազարա-
ւոր ոգիներէ կազմուած բանակը՝ «սուրբերու բանակը»: Ասոնք
երկրորդական կարգի աստուածներն էին: Անոնք
կ'ապրէին արեւմտաքի լեռներու վրայ և լուսաւորուած
էին հազար արեւներով: Ահրիմանն ալ իր հերթին ունէր
գործակիցներ՝ շար ոգիներ: Անոնց գլուխը կանգնած էին
վեց դեւեր՝ կործանիչ վեց ուժեր. ասոնք կ'առաջնորդէին
Ահրիմանի հազարաւոր դեւերը: Անոնք կը բնակէին լեռկ,
սառցապատ լեռներու վրայ:

Բովանդակ տիեզերքը իր հակադրութիւններով, հա-
կասութիւններով այս երկու ուժերու մրցման դայտն էր.
ինչպէս և մարդը ինքը, անոր հոգեկան աշխարհը: Ինչ էր
վերապահուած մարդուն այս երկու տիեզերական ուժերու
պայքարի մէջ: Շատ բան. ան պէտք է օժանդակէր բա-
րութեան ոգիին, դառնար գործակիցը Ահրու-Մազդայի և
գործօն պայքար մղէր չարութեան դէմ:

ԶՐԱԴԱՇՏԻ ԲԱՐՈՅԱԳԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԸ.— Մարդու առա-
ջին պարտականութիւնը աշխատիլն է. առ աստուածահա-
ճոյ գործ է. «ով կ'աշխատի, աւելի մեծ գործ կը կատարէ»

ֆան քաւր հազար զոհաբերութիւն ընելը»։ Ահրու-Մազդաշի համար ամենէն հաճելին երկրագործական աշխատանքն է այս կը նշանակէ կռուիլ անապատի դէմ, պակսեցնել անպըտուղ հողի քանակը, մշակել լեռնալանջերը, ջրանցքներ կառուցել, ուղիներ շտկել։ Տուներ կառուցելը, օճախներ հիմնելը, կրակը վառ պահելը, բազմանդամ ընտանիք ունենալը, ծնունդը և ամուսնութիւնը հաճելի են Ահրու-Մազդաշին։ Ան կը պահանջէ, որ անասուններու հօտերը բազմացնեն, կենդանիները հովանաւորեն դաշտն ու արտերը պտուղներով, բանջարներով լեցնեն, լեռնալանջերը, արօտատեղիները ոչխարներով և հորթերով։

Զրադաշտ կ'ըսէ Պարսից սրբազան մատեանի՝ Զենդ-Աւեստայի մէջ. «ան որ իր տունը կը կառուցէ, կը նոխացնէ, իր անասուններու թիւր կը բազմապատկէ, սիրով կը վարուի իր կնոջ, երեխաներու հետ. ով հողը կը մտակէ, ջուրը մախուր կը պահէ, ով իր հագին կը մաքրէ ախտերէ եւ կիրփերէն, ան, ով որ ցորեքը կ'անցնէ, ան կ'օգնէ բարի աստուծոյ յաղթանակին»։

Ահրու-Մազդաշի պահանջած երկրորդ մեծ առաքինութիւնը նեմարիս խօսիլն է։ Անոր հետեւողները պիտի խօսին ճշմարիտը և գործին ճշմարիտը։ Սուտը, կեղծիքը Ահրիմանի ստեղծածներն են և անոր զէնքերը։ Մաքուր ախտի ըլլալ ոչ մը այն խօսքով, լեզուով այլ և գործով։ Զենդ-Աւեստան կը պահանջէ մարմնական և հոգեկան մաքրութիւն՝ բարոյական և ֆիզիքական հիւանդութիւններէն ու ախտերէն ազատ մնալու համար։ Այսպիսի մեծ առաքինութիւններ Մերձաւոր Արեւելքի մէջ դեռ մէկը չէր քարոզեր։ Զրադաշտը իր հետեւողներէն կը պահանջէր բարոյական ճիգ՝ ինքն իր դէմ պայքարելու, իր ախտերէն հրաժարելու և կատարելագործուելու համար։ Ան ճիգի և կատարելագործութեան կրօն էր։ Այս տեսակէտէն ան նախընթաց աստիճանն է քրիստոնէութեան, որուն մէջ նոյնպէս ճիգը և կատարելութեան գաղափարը առաջնակարգ տեղ ունին։ Զրադաշտ կրօնն ու բարոյականութիւնը սեր-

տօրէն կապակցուեցաւ իրարու և ասով դարձաւ Մերձաւոր Արեւելքի սմենէն մեծ բարոյական մտածողներէն և քարոզիչներէն մէկը: Անոր բարոյական գաղափարն'ըր կ'ընդգրկեն ընտանեկան, աշխատանքի, անհատի և դասերու բոլոր յարաբերութիւնները: Այս կողմէն ան նման է Մովսէսին, որու տասնաբանեայ պատուիրանները կը կարգաւորեն իսրայէլի հասարակութեան բոլոր գործերը: Կրօնա-բարոյական նման ուսմունք մենք տեսանք Նիզպտոսի մէջ. բայց հոն արդարութեան, առաքինի կեանքի պահանջը՝ կապուեցաւ եգիպտական ազգային աստուածներու հետ. տեսանք բարոյական սկզբունքներու մշակումը հրէական կրօնի մէջ. բայց անոր գլխաւոր մտահոգութիւնը «ընտրեալ ժողովրդի», հրէութեան պահպանումն էր: Զրադաշտի կրօնը գերազանցօրէն նախաձայնեց ինք փրկութեան և առաքինութեան ուղին ան ցոյց կուտայ բոլորին՝ առանց ազգութեան և դասային խտրութեան: Ան նաեւ մաքրկայնական կրօն է արդարութիւն, աշխատանք, ճշմարտութիւն կը պահանջէ իր հետեւողներէն: Ան կը քարոզէ բարձրանալ՝ մօտենալ յաւերժական լուսաւոր Աստուծոյն՝ ոգեկան ճիգերով և կատարելագործումով: Այս է պատճառը որ ան սեւլի հրկար ապրեցաւ քան Ա. քէմէնեաններու կայսրութիւնը և անոր հետագայ զարգացումը տեղի ունեցաւ Պարսից պետութեան և ազգութեան սահմաններէն դուրս՝ Հռոմէական կայսրութեան մէջ:

ՄԱՍՆ ԵՕԹԵՐՈՐԴ

Ա. ԳԼՈՒԽ

ԱՂԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՑԻ, ՊԱՐՍԻՑ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ՓԼՈՒՋՈՒՄԸ

ՅՈՒՆԱՍՏԱՆԸ.— Չորրորդ դարու կէսերուն Յունաստանը թուլցեր էր: Քաղաք-պետութեան սկզբունքը յաղթանակեր էր ամենտեղ: Համազգային միութիւն մը, յունական պետութիւն մը չստեղծուեցաւ: Քաղաքներու դաշնակցային սկզբունքն ալ չիրականացաւ: Պառակտուած և իրարմէ անջատ քաղաք-պետութիւնները տեւական կռիւններու մէջ էին: Հինգերորդ դարու երկրորդ կիսուն Պէլուպոնէսեան պատերազմը, որ տեւեց չուրջ երեսուն տարի (432—404) մաշեց կռուող կողմերուն՝ Աթէնքին և Սպարտային, քամեց անոնց ուժերը: Աթէնքը, որ ստեղծեր էր յունական շարք մը քաղաք-պետութիւններու դաշնակցութիւնը և յաջողութեամբ կը պաշտպանուէր Պարսիկներու դէմ, այդ կռիւններու մէջ պարտուեցաւ. ան իր քաղաքական և անտեսական առաջնութիւնը զիջեց Սպարտային, որ քսան տարիէն աւելի իր գերիշխանութիւնը հաստատեց Յունաստանի վրայ (403—382) և ամենուրեք յենարան եղաւ ազնուապետական իշխանութեանց: Բայց այդ գերիշխանութեան դէմ դուրս եկան ազատութեան և անկախ կեանքի վարժուած քաղաքները: Կ'ազատագրուի Թէբէն (379) և կեդրոնական Յունաստանի մէջ կը հաստատէ իր առաջ-

նութիւնը: Աթէնքը կը վերահաստատէ իր գեմոկրատիկ սահմանադրութիւնը: Թէրէն այնքան ուժեղ էր, որ նոյն իսկ կը մտնէր Պէլոպոնէս:

Միաժամանակ միջքաղաքային այս կռիւներու հետ մեկն մէկ քաղաք-պետութեան մէջ տեղի կ'ունենային քաղաքացիական կռիւներ՝ հասարակութեան խոնարհ խաւերու և իշխողներու, աղնուական, հողատէր դասերու մէջ: Պէլոպոնէսեան պատերազմներէն մինչեւ Յունաստանի՝ Մակեդոնիոյ ենթարկուելը (432-346) անցեր էր ութսուն և վեց տարի. ատկէ յիսուն և հինգ տարին յունական քաղաքները անցուցին պատերազմներով: Ներքին կռիւներն ու յեղափոխութիւնները սովորական երեսոյթ էին: Չորրորդ դարուն անոնք կ'ըստանային ընկերային ընոյթ՝ դասերն ու դասակարգերը կը պայքարէին իրարու դէմ հողի վերաբաժանման և հին պարտքերու գեղջման համար: Ընկերային և քաղաքական այս պայքարներու և անիշխանութեան մէջ Յունաստանը թուլցաւ, աղքատացաւ, բնակչութիւնը պակսեցաւ՝ կռիւներու և գաղթի հետեւանքով: Անոր միջազգային արժէքն ալ ինկաւ, չունէր նախկին զօրաբանակը և նաւատորմիդը: Իրենց հայրենիքէն գաղթող Յոյները զանգուածներով կը լեցնէին արքայից արքայի բանակները որպէս վարձկաններ: Ինչ որ կը կորսնցնէին յոյն քաղաքները՝ կարծէք կը շահէր Պարսկաստանը, որ Արտաքսէս Օքսոսի օրով վերածնունդի սոր փորձեր կ'ընէր, կը կեդրոնացնէր իր ուժերը: Պարսկաստանը դեռ մեծ ուժ էր Միջերկրականի արեւելեան աւազանին մէջ և Յունաստանի քաղաքական կեանքի մէջ մեծ դեր կը խաղար: 387 թ. ան կնքեց Սպարտայի հետ Անալկիդի խաղաղութիւնը, որ անոր թողուց փոքր Ասիոյ բոլոր յոյն քաղաքները: Ան նորէն Եգէեան կղզիներու տէրը դարձաւ: Պարսկաստանը կը միջամտէր յունական գործերուն:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ.— Այս պայմաններու մէջ Աթէնքի մէջ յառաջ կուգայ քաղաքական մէկ հոսանք, որուն գլուխը կանգնած էր Խոկրատը: Ան կը մտածէր, թէ

յունական քաղաքները թուլցեր են, «անիմաստ» կռիւն-
բու մէջ անոնք մաշեր են իրենց ուժերը՝ չնկատելով թէ
ինչպէս իրենց սահմաններու վրայ կը բարձրանար Պարս-
կաստանը: Վերջինս Յունաստանի դարաւոր և մահացու
թշնամին է: Յոյները կրնան ազատուիլ այդ վտանգէն մի-
այն համայունական գործակցութեամբ: Բայց Յունաստա-
նի մէջ չկար այդ ուժը, որ միացնէր բոլորին: Եղած
կենսունակ ուժերը Աթէնքը և Սպարտան քայքայեր էին
իրարու: Անշուշտ այս ինկատի ունէր մէկ ուրիշ քաղա-
քական գործիչ՝ Էսփինը, որ նոյնպէս համայունական միու-
թեան կողմնակից էր. բայց այդ միութեան հնարաւորու-
թիւնը Յոյներու մէջ չէր գտներ: Ան Պարսկաստանի դէմ
կռուելու համար առաջ կը քաշէր Մակեդոնիան, որ նոր,
թարմ ուժ էր Յունաստանի հիւսիսը ստեղծուած: Հոս 360
թիւին դահ կը բարձրանար Ֆիլիպ Մակեդոնացին: Ան մի-
ացուց Մակեդոնիոյ բաժան-բաժան մասերը, կազմակերպեց
իր ժամանակի լաւագոյն բանակը: Մէկը միւսի հետեւն
ան գրաւեց ծովեզերեայ յունական քաղաքները՝ մէկ կող-
մէն հասաւ մինչեւ Սև ծով, միւս կողմէն իջաւ Եգէյան
ծով, ձեռք ձգեց Թրակիան, մտտեցաւ նեղուցներուն և ա-
ռաւ իր հովանիին տակ միջամտեց յունական քաղաք պե-
տութիւններու ներքին գործերուն: Բայց ան լաւ կը հաս-
կընար, որ ինքը յունական քաղաքներու շարքին հաստատ
տեղ կրնայ գրաւել միայն այն պահուն. հրը գլուխ անց-
նէր Յոյներու դարաւոր տենչերու իրականացման, կռուէր
Պարսկաստանի դէմ, հեռու վանէր անոր Եգէյանի ափե-
րէն, ազատագրէր Փոքր Ասիական յոյն քաղաքները:
Բայց ասոր համար պէտք էր միացնէր Յունաստանը և իր
հետ ունենար անոր զօրքը, նաւատորմիղը: Միւս կողմէն
Ֆիլիպի քաղաքական ծրագիրները յայտնի էին Պարսկաս-
տանին: Վերջինս Արտաքսէրքսէս Օք ուսի օրով գաղտնի
պատուիրակներ կ'ուղարկէր յոյն քաղաքները՝ խանգարե-
լու այդ ծրագիրը, և մեծ քանակութեամբ դրամ կը ծախ-
սէր կաշառելու յոյն քաղաքական գործիչներուն:

ՅՈՒՆԱԿԱՆ, ԴԻՄԱՇՐՈՒՄԸ.— Յոյն քաղաքական միտքըն ալ պառակտուած էր Յունաստանի առաջ գրուած հարցերու առաջ: Էսխիմը կողմնակից էր յունական միութեան Մակեդոնիոյ առաջնորդութեամբ: Ան կ'ուսուցանէր, որ Պարսկաստանն է Յոյներու միակ թշնամին: Ան կը հասկընար, որ Մակեդոնիոյ գերիշխանութիւնը հարուած մը պիտի ըլլար յունական մանր ու մեծ քաղաք պետութիւններուն, բայց այդ աւելի փոքր չարիք մըն էր քան պարսկական վտանգը: Համագգային միութիւնը և յոյն հայրենիքի ապահովութիւնը պիտի ըլլայ միակ նպատակը և եթէ Յոյները իրենք չեն կրնար այդ միութիւնը ստեղծել, թող ստեղծէ դուրսէն եկող ուժը՝ Մակեդոնիան: Բոլորովին հակառակ տեսակէտ ունէր Դեմոսթէնը, Աթէնքի մեծագոյն ճարտասանը և քաղաքական գործիչը: Ան կը մտածէր յոյն քաղաքներու ազատութիւնը փրկելու մասին: Իսկ այդ ազատութիւնները ան կը նոյնացնէր քաղաքպետութիւններու գոյութեան հետ: Միայն այն էր, որ կ'ապահովէր ամեն ազատութիւն անոր միջավայրի մէջ մարդը կը դառնար քաղաքացի: Ֆիլիպը խորհրդանիշն էր միապետութեան. ան ամենամեծ թշնամին էր յունական ազատութիւններու. ուստի Մակեդոնիայէն պէտք է վախնալ, և ոչ թէ հեռուոր Պարսկաստանէն: Դեմոսթէնը յայնպէս համահելլենական գաղափարի կողմնակից էր. բայց ան չէր ուզեր, որ այդ միութիւնը գլուխ գայ քաղաքական ազատութիւններու ոչնչացումով:

ՖԻԼԻՊԸ ՅՈՒՆԱՍՏՐՈՒՄԻ ՄԷՋ.— Բայց Ֆիլիպի համար Յունաստանի գրաւումը և անոր ուժերու իր հետ ունենալը կենսական հարց էր: 338 թիւին ան իր բանակով չարժուեցաւ Յունաստանի վրայ և Շերմենի գաշտին մէջ ջարդեց անթէնական զօրքը: Ատկէ ետքը ան կորընթոս քաղաքի մէջ համագումարի հրաւիրեց յոյն բոլոր քաղաքներուն ուր մեկնաբանեց իր քաղաքական ծրագիրը: Համագումարը կազմեց համայունական զինուորական միութեան ծրագիրը, ընդունեց Պարսկաստանի դէմ պատերազմ յայ-

տարաբերու առաջարկը և Ֆիլիպն ալ ընտրեց միացեալ յոյն-մակեդոնական բանակներու սպարապետ: Ատկէ ան-միջապէս ետքը մակեդոնական զօրաբանակ մը երեւաց նեղուցներու ասիական փերուն. ան պիտի հետախուզէր Փոքր Ասիական ծովամերձ շրջանները: Բայց Ֆիլիպի անականկալ մահը փոխեց ամեն ինչ. ան սպաննուեցաւ իր զստեր ամուսնական խրախճանքի ժամանակ՝ 336 թիւին:

ԱՂԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՅԻՆ.— Ֆիլիպի սպաննումէն ետքը, հակառակ պալատական դաւադրութիւններուն, բանակը ճանչցաւ սպաննուած թագաւորի որդուն՝ Աղեքսանդրին որպէս օրինական ժառանգ: Ֆիլիպի մահը պատճառ եղաւ, որ պետութեան մէջ ապստամբութիւններ ծագին:

Յունաստանն ալ ապստամբեցաւ, մանաւանդ, երբ լսեց թէ Աղեքսանդրը անհետ կորեր է Իլիրիական լեռներու մէջ: Թէքէն և Աթէնքը անցան յոյն ապստամբներուն գլուխը: Բայց Աղեքսանդրը Դանուբի փերուն իր թշնամիներուն պարտութեան մատնելէն ետքը յաղթական բանակներով երեւաց Թէքէի դռներուն առաջ. քաղաքը գրաւեց յարձակումով, աւերեց և բնակչութեան մէկ մասն ալ գերի տարաւ: Խնայեց Աթէնքը: Ապա հրաւիրեց կորնթոսի երկրորդ համագումարը՝ ժողովը անոր ճանչցաւ համայունական միութեան գլուխ, յոյն մակեդոնական միացեալ բանակներու սպարապետ: Ան քսան տարեկան էր, երբ գահ բարձրացաւ: Անոր դաստիարակը՝ յոյն մեծ փիլիսոփայ Արիստոտէլն էր: Երիտասարդ թագաւորը մեծցաւ յոյն մշակոյթի ներշնչումներով. բարեկամ էր և հովանաւոր յոյն գրականագէտներու և արուեստագէտներու: Բայ ան չէր բաժներ իր ուսուցչի քաղաքական տեսակէտները: Ամենէն սիրած գիրքը Հոմերոսի Իլիականն էր և յոյն ողբերգակ գրողները: Ան բազմակողմանի ընդունակութիւններով օժտուած երիտասարդ մըն էր, պայծառ գիտակցութեամբ, փայլուն երեւակայութեամբ, որոնք պիտի ծառայէին իր անսահման փառասիրութեան: Անոր նկարագրի մէջ հակադիր գծեր կը միանային իրարու. բարի էր, զգա-

յուէն, մարդամօտ, բայց և բռնկուող, խրատխճանքի սիրահար, հարսեցող, արու ընթացքին ընդունակ էր ամեն վատ բաներու:

ԲԱՆԱԿԸ.— Իր բանակը մեծ չէր քանակով, ան մօտ 40.000 զինուոր ունէր. ասոնցմէ 12.000 Մակեդոնացիներ էին, կորընթական միուեթիւնը տրամադրեր էր անոր 7.000 զինուոր, հինգ հազար ալ վարձկան զինուորներ ունէր, 8.000 զինուորներ ալ Թրակացի օթանդակներ: Այրուծին կազմուած էր 5.000 ձիաւորներէ, որոնցմէ միայն 1.800 Մակեդոնացիներ էին: Երիտասարդ թագաւորն ունէր պաշարման գործիքներ, ճարտարապետական զօրաբաժին և 160 նաւերէ կազմուած նաւատորմիդ մը, որ տրամադրեր էր անոր կորընթական միուեթիւնը: Նաւատորմիդը, համեմատած Պարսկաստանի հետ թոյլ էր: Վերջինս ունէր փիւնիկեան նաւատորմիդը, ինչպէս և Փոքր Ասիական յուսական նաւահանգիստները:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԸ.— Պարսկաստանը ոչինչ չընձեռնեց մակեդոնական վտանգի դէմ: Գիտենք, որ անոր ամենամեծ չարիքը իր չափազանց ընդարձակութեան մէջ էր, իր բազմազգեան, բազմակրօն ըլլալու մէջ, տնտեսական և մշակութային միութիւն չունենալու մէջ: Սատրապական վարչութիւնն ալ փոխանակ կեդրոնացման միտումին ծառայելու, նպաստեց տեղական առանձնայատկութիւններու մշակման: Աղեքսանդրի դէմ ան չունէր ազգային բանակ, յոյն վարձկանները պիտի պաշտպանէին Պարսկաստանը յոյն-մակեդոնական զօրքերու դիմաց: Պարսկազմի ժամանակ արքայից արքան կրնար հանել մեծ բանակ, բայց խառնիճաղանչ, անզէն, անկարգ և անգիտակից բանակ: Պարսից արքունիքը ոչ մէկ բան չըրաւ դիմագրաւելու հիւսիս-արեւմուտքէն եկող վտանգը: Գուցէ ատոր պատճառն այն էր, որ վերջին գործունեայ և տաղանդաւոր թագաւորը՝ Արտաքսէրքսէս Օքսոսը արժանացաւ Ֆիլիպի բախտին, սպանուեցաւ և ժամանակ մը երկիրը մատնուե-

ցաւ անիշխանութեան: Աղեքսանդրի դիմաց կանգնած էր 'Իարեհն III Կոստանոսը, որ երբեմն Հայաստանի սատրապ էր եղեր և ոչինչ չէր ըրեր՝ իր վարչական-քաղաքական կարողութիւնները ցուցահանող: Պարսկաստանի գէմ կռուելով Աղեքսանդրը գործ պիտի ունենար յոյն վարձկաններու հետ, որոնք փորձուած էին, լաւ զինուած և թշնամօրէն տրամադրուած իրեն հանդէպ:

ՓՈՒՔՐ ԱՍԻՈՅ ԳՐԱԻՈՒՄԸ.— (334—333) Գրանիկ գետի ուփին Աղեքսանդրը կը հանդիպի Պարսից բանակին: Վերջինս կազմուած էր 20.000 յոյն վարձկաններէ և 120.000 սսիացիներէ: Բանակի հրամանատարը յոյն զօրավար Մեմնոնն էր: Փոքր ընդհարումէն ետքը ասիացիներէն կազմուած հեծելազօրքը նահանջեց անկարգ. Մակեդոնացիք տարին առաջին յաղթանակը. 20.000 յոյն վարձկանները, որոնք ազատուեր էին կոտորածէն, ուղարկուեցան Մակեդոնիա՝ տաժանակիր աշխատանքներու համար:

Այժմ Աղեքսանդրի առաջ րաց էր Փօքր Ասիան. Սարդան անձնատուր եղաւ առանց կռուի: Դեմոկրատիկ յեղափոխութիւն մը անդի ունեցաւ Նփեսոսի մէջ, երբ Աղեքսանդրի զօրքը մօտեցաւ անոր: Միլէսը երկար ժամանակ դիմադրեց. իր զօրավարներէն մէկը նուաճեց Փսիւզիան: Փոքր Ասիան կորած էր Պարսից կայսրութեան համար: Յոնիական և էսլիդեան բոլոր քաղաքները ազատագրուեր էին. ամեն տեղ վերահաստատուեր էր դեմոկրատական սահմանադրութիւնը: Բայց այս գրաւումը սմուր չէր: Աղեքսանդրը ծովու տէրը չէր. ան վստահութիւն չուներ յոյն նաւատորմիղի վրայ, ուստի արձակեց անոնց: Պարսից նաւատորմիղը օժանդակ ունենալով վարձկաններուն, վերագրաւեց Քիոսը, Լէսոսը, Կայա Միլէտը Հալիկարնէսը: Մեծ տատանումներէն ետքը Դարեհը որոշեց իր բանակները կեդրոնացնել և ճակատամարտ տալ Աղեքսանդրին: Ատոր համար ան Նգէեան ծովէն ետ կանչեց իր նաւատորմիղի և բանակներու մէկ մասը:

ԻՍՈՍԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 333 Թ. — Աղեքսանդրը Փռիւղիոյ մէջ էր, երբ ստացաւ Մակեդոնիայէն նոր և թարմ քանակներ: Ճնն անցաւ կիլիկիա, Իսոսի ափին հանդիպեցաւ Պարսից քանակին, որուն գլուխը կանգնած էր Դարեհը: Վերջինիս զօրքը կը հասնէր աւելի քան հարիւր հազարի: Այստեղ երկրորդ անգամ Աղեքսանդրը ջարգեց Պարսիկներուն, Դարեհը հազիւ փախաւ: Այս կողմի մէջ ան հանդիպեցաւ մեծ դիմադրութեան թէ Պարսիկներու և թէ յոյն վարձկաններու կողմէն: Ան յաղթանակ տարաւ. բայց մեծ կորուստներով Անոր ձեռքն ինկան Դարեհի սայրը, կինը, երեխաները. որոնց հետ ան վարուեցաւ արժանավայել ձեւով: Իսոսի ճակատամարտէն ետքը յաղթողի առաջ բացուեցաւ Սիւրբիոյ և Փիւնիկէի դուռները: Դարեհը փոքր բանակով անցաւ Եփրատ: Պարտութիւնը և տրքայական ընտանիքի քերի իյնալը ծանր հոգեկան բեկում առաջացուց անոր մէջ. ան լաւ համարեց քանակցիլ յաղթողի հետ և փրկել իր պետութենէն այն, ինչ որ դեռ կարելի էր փրկել: Բայց անոր այս փորձը յաջողութիւն չունեցաւ: Իսկ յաղթողը չհետապնդեց Դարեհին, չգնաց Միջագետք. այլ գիմեց դէպի հարաւ՝ գրաւելու ծովեզերեայ շրջանները:

Փիւնիկի եւ Եփրատի նոսրացումը. — Աղեքսանդրի զօրավարներէն Պարմենիոնը գրաւեց Դամասկոսը, ուր կը գտնուէր արքայից արքայի գանձերու մէկ մասը: Փոքր Ասիան գրաւուած էր, բայց ծովը մակեդոնական չէր ետքէեականի մէջ Պարսից նաւատորմիղը կ'իշխէր: Պարսկական ոսկին Յունաստանի մէջ դաշնակիցներ կը շահէր: Սպարտան կանգնած էր հակամակեդոնական հոսանքի գլուխը: Դէմոսթէնէսի իմաստուն խորհրդով Աթէնքը չնղոք մնաց: Աղեքսանդրը որոշեց գրաւել Փիւնիկէն՝ Պարսից ծովային ուժի խարխալը: Բացի Տիրոսէն և Գազայէն ոչ մէկ տեղ դիմադրութեան չհանդիպեցաւ: Տիրոսը եօթ ամիս պաշարուած մնաց. 332 թ. Օգոստոսին ան ալ յանձնուեցաւ. դիմադրող բանակը կոտորուեցաւ: Այս դէպքերու ազդե-

ցութեան տակ Եգէականի և Միջերկրականի պարսկա-փիւնիկեան նաւատորմիղը եկաւ Փիւնիկեան նաւահանգիստանէ՛րը և յանձնուեցաւ Աղեքսանդրին:

Փիւնիկէի գրաւումէն ետքը Աղեքսանդր մտաւ Իգիպսոս, նաւատորմիղը անոր կ'օգնէր, Նեղոսի վրայով ան հասաւ մինչև Մեմֆիս: Եգիպտոսի սատրապը չդիմադրեց անոր: Եգիպտոսը Պարսից կայսրութեան օրով եղեր էր բոլոր հակապարսիկ շարժումներու ոգին և այժմ Աղեքսանդրը ան ընդունեց որպէս ազատարար: Վերջինս ալ մեծ յարգանքով կը վերաբերէր Եգիպտոսի հանդէպ, իր շքեղ մշակոյթի, փառաւոր անցեալի համար: Ան զոհեր մատուցեց Ապիս աստծուն, այցելեց Պտահի տաճարը: Ան մտաւ Ուլազիսը, այցի գնաց Ամոն աստծու տաճարին. այստեղ եգիպտական քուրմերը յայտարարեցին անոր Ամոն Ռա աստծու որդի: Ան դարձաւ փարաւոններու յաջորդը և իրաւատէրը եգիպտական գահի: Այժմ ան դարձաւ անմահ, կենդանի աստուած: Աղեքսանդրը վերին Եգիպտոս չարչաւեց. անոր պէտք էր միայն ծովափնեայ շրջանները. հոս ան հիմնեց քաղաք-նաւահանգիստ մը Աղեքսանդրիան, որ քիչ յետոյ եղաւ Արեւելեան Միջերկրականի մեծագոյն առեւտրական և մշակութային կեդրոններէն մէկը: Փիւնիկէի և Եգիպտոսի գրաւումը ապահովեց անոր թիկունքը որեւէ յարձակումներէն: Այժմ ան կրնար շարժուիլ Պարսից կայսրութեան խորքերը:

ԱՐՔԵԼԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ, 331.— Դարեհը կը պատրաստուէր Աղեքսանդրին դիմադրելու Միջագետքի մէջ: Մինչ այդ ան նորէն հաշտութիւն առաջարկեց յաղթողին: Ան պատրաստ էր Փոքր Ասիան մինչև Ալիս գետը, և մինչև իսկ Եփրատը զիջիլ Աղեքսանդրին, պայմանով որ մնացած մասը իրեն ըլլայ: Աղեքսանդրը մերժեց. ան կ'ուզէր Պարսից կայսրութիւնը ամբողջութեամբ. կ'ուզէր կառուցել Եւր-ասիական համաշխարհային կայսրութիւն մը, որու մէջ իր ժամանակի քաղաքակիրթ ամբողջ աշխարհը

ամփոփուած ըլլար: Դարեհի առաջարկները Աղեքսանդրը տարաւ իր զօրավարներու ժողովին, Պարմենիոնը այդ առաջարկները համարեց ընդունելի: «Ես ալ կը համաձայնէի, պատասխանեց Աղեքսանդրը, եթէ Պարմենիոնը ըլլայի»: Եզրպոտոսէն 331 թ. ամրան Աղեքսանդրը անցաւ Միջագետք և Նինուէ քաղաքէն ոչ հեռու Արբելայի դաշտին մէջ տեղի ունեցաւ վճռական ճակատամարտը: Աղեքսանդրը ունէր իր ձեռքին տակ այնքան զօրք, որքան արշաւանքներու սկիզբը. պարսկական բանակը շատ աւելի էր քանակով և լաւ ալ սպառազինուած էր. ան իր մէջ զինուորներ ունէր կայսրութեան ըտլոր ազգերէն: Զախ թելի վրայ Պարմենիոնի ղէմ կը գործէին հնդկական և պարթեւական հեծելազօրքը. կռուի մէջ այս թեւը կ'ընկրէի. Աղեքսանդրը օգնութեան կը հասնի և ետ կը վանէ թշնամին: Պարսիկները այդ պահուն կը մտնեն Մակեդոնական բանակի կեդրոնը և հոն կ'ըզբաղուին աւարով: Աղեքսանդրը օժանդակ և յետնապահ քանակով կը վերահաստատէ կարգը և ըտլոր ճակատներէն կ'անցնի հակայարձակման և փախուստի կը մատնէ թշնամին: Արքայից արքան կը թողու ուղմաճակատը. Աղեքսանդրը կը հետապնդէ անոր և կը հասնի Արբելայի զըզեակը, ուր Դարեհը թողեր էր իր ուղեգոյքը, կապոցները: Արբելայի ճակատամարտը փլուզում մըն էր ոչ միայն Պարսից բանակի, այլ և կայսրութեան համար: Դարեհի ուղմաճակատի լքումով բանակը մնաց անգլուխ, երկիրն ալ անտէր: Արքայից արքան կը մտածէր նոր ուժեր հաւաքել Մարաստանի մէջ, բայց իզուր. նոր զօրք կազմել չյաջողեցաւ: Դարեհը փախաւ Իրանի կեդրոնական գաւառները, իսկ Պարսից կայսրութեան քաղաքները մէկը միւսի ետեւէն ինկան Աղեքսանդրի ձեռքը: Շոշը և Բարելոնը առանց կռուի յանձնուեցան յաղթողին: Բարելոնը անոր շքեղ ընդունելութիւն ըրաւ. ան այդպէսով վրէժ կը լուծէր Դարեհի վշտասպեանէն, որ սրբապղծեր էր իր տաճարները: Շոշի մէջ ան ձեռք ձգեց արքայական գանձէն մաս մը. հոնկէ անցաւ Պերսէպոլիս, ուր գտաւ անսահման քանա-

կութեամբ ոսկի և արծաթ: Աքէմէնեան թագաւորները հոս էին հաւաքեր ամբողջ կայսրութեան հարստութիւնը: Պերսեպոլիսի մէջ Աղեքսանդրը հրդեհեց արքայական պալատը՝ որ պիտի խորհրդանշէր՝ Պարսից կայսրութեան վախճանը: 330 թ. յաղթական թագաւորը անցաւ հիւսիս՝ Եկբասանի վրայ, Դարեհը՝ լսելով, որ Աղեքսանդրը իրեն կը հետապնդէ՝ կը փախչի Կոսպից ծովի արեւելեան կողմերը: Մակեդոնացիք կը գրաւեն Եկբաստանը: Պարմենիոնին այնտեղ կառավարիչ նշանակելով Աղեքսա՝ դրը կը հետապնդէ Դարեհին: Պարսից պատմութեան այս բախտորոշ շրջանին Բակդրիան յայտարարեց իրեն անկախ՝ տեղակաւ սատրապի գլխաւորութեամբ: Յյստեղ կը ձերբակալուի և կ'ըսպաննուի Դարեհը: Սատրապը յոյս ունէր թէ իր այս դաւաճանութեան համար կը վարձատրուի Աղեքսանդրէն: Բայց վերջինս սպաննուած թագաւորի դիակին կուսայ արքայավայել պատիւներ և կը թաղէ Պերսոպոլիսի մէջ: 330 թիւին որոշ էր Պարսից կայսրութեան բախտը. կը վերջացար իրանական ազնուականութեան եւ Ահեմէնեան հարսութեան գերիշխանութիւնը արեւելի մեզ, ինչպէս ասկէ առաջ սկսած եւ վերջացած եր եգիպտականը, հարթականը եւ Ասորեստանիցը: Աղեքսանդր Մակեդոնացի յաղթութիւններով Մերձաւոր Արեւելքի մէջ քաղաքական առաջնութիւնը կ'անցնէր հնդեւրոպական ժողովուրդներու արեւմտեան հատուածին՝ Յոյներուն և Մակեդոնացիներուն:

ԲԱԿՏՐՈՒՅՑ ԵՒ ՍՈՔՐԱՆՆՈՅ ԳՐԱՒՈՒՄԸ.— Իրանի բարձրուանդակի նուաճումը ամբողջացած չէր: Աղեքսանդրը հետապնդեց Դարեհի սպաննիչներուն: Բակդրիոյ ինքնակոչ թագաւորը՝ Բասսը փորձեց դիմադրել. բայց անյաջող. Աղեքսանդրը գրաւեց Բակդրիան և հասաւ մինչև Հինտուզուշ լեռը: 329ին ան անցաւ Ամու-Տարիա, Օքսուս գետը, նուաճեց Սոգդանիան և հասաւ մինչև Մարկանդա՝ այսօրուայ Սամարղանդը: Իրանի արեւելքի մէջ ան մնաց մօտ երկու տարի. ան շատ էր հեռացեր Յունաստանէն, Մակեդոնիայէն ու Միջերկրականի եզերքներէն: Անոր բա-

ցակայութիւնը և միջին ասիական հարցերով զբաղուելը ընդհանուր դժգոհութիւն առաջացուց և հակառակորդները օգտուեցան ատկէ: 'Նոյնիսկ' երիտասարդ թագաւորի շըրջապատէն ալ դժգոհներ շատ կային: Աղեքսանդրի նուաճողական տենչը սահման չունէր, իսկ իրեն հետեւողները յոգներ և ձանձրացեր էին անվերջ կռիւններէն: Դժգոհութիւնն այն աստիճանի հասաւ, որ իր գործակիցները որոշեցին ահաբեկել թագաւորին: Այդ ձեռնարկի գլուխն անցեր էր Պարմենիոնի որդին Յիլիոսաւր: Աղեքսանդրը անոր գլխատեց՝ ապա սպաննեց անոր հօրը՝ Պարմենիոնին, ետքէն ալ իր թիկնապահ բանակի հրամանատարին: Աւելի ուշ նոր դաւադրութիւն յայտնաբերուեցաւ, որոնց հեղինակներուն Աղեքսանդրը խստօրէն պատժեց:

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՆՈՒԱՃՈՒՄԸ.— Ներքին անհամաձայնութեան և պառակտման այս մթնոլորտի մէջ Աղեքսանդր որոշեց նուաճել Հնդկաստանը: Ան արդէն յարաբերութեան մէջ էր Ինտոսի վերին հովտի իշխաններու հետ: Կարուլի հովիտով ան 120,000-նոց բանակի գլուխն անցած մտաւ Հնդկաստան, բայց այստեղ ան հանդիպեցաւ տեղական ցեղերու շատ ուժեղ դիմադրութեան: Ան անցաւ Ինտոս գետը, յաղթեց տեղական իշխաններուն, բայց և այնպէս անոնց պահեց իշխանութեան գլուխը: Ամբողջ Պէնկալը ենթարկուեցաւ անոր: Բայց Աղեքսանդրը ատկէ առաջ երթալ չկրցաւ: Մակեդոնական բանակը չուզեց հետեւիլ անոր այս անձանօթ և խորհրդաւոր երկրի մէջ: Ան իջաւ Ինտոսի փերով մինչև գետաբերանը՝ ճանապարհին կրուուելով բազմաթիւ ցեղերու հետ, որոնց երկիրներով ան պիտի անցնէր: Ինտոսի գետաբերանէն մակեդոնական բանակի մէկ մասը ծովային ճանապարհով ուղղուեցաւ դէպի արեւմուտք՝ մինչև Պարսից ծովը և Միջագետք: Մաս մըն ալ ուղարկուեցաւ Բակտրիա, հոնտեղ ծագած ապստամբութիւնը ճնշելու: Բանակի մեծ մասը իրեն՝ Աղեքսանդրի գլխաւորութեամբ կտրեց Իրանի բարձրաւանդակը արեւելքէն արեւմուտք: Ան անցաւ Գիւրթսէյի, Կարամանի նա-

հանգնեցրով, ճանապարհին մեծ կորուստներ ունեցաւ և
ենթաթկուեցաւ մեծ չարչարանքներու: Յայն-մակեղոնական
գօրքը կ'անցնէր անապատ վայրերով, անոր պարենաւո-
րումը շատ անկատար էր, կը պակսէր ջուրը և ուտելիքը:
Ինչի մը ամիսէն ծովով ընթացող բանակը երեւաց Նփրատի
գետաբերանին, իսկ Աղեքսանդրը մնացած բանակով հասաւ
Շոշ — 324 թ. Պարսնան: Թագաւորը հաստատուեցաւ Բա-
բելոն, ուր ան զբաղուեցաւ նոր արշաւանքի մը ծրագիրը
կազմելով՝ այս անգամ Ղէպի Արապիա. բայց հիւանդա-
ցաւ տենդով և մեռաւ 323 թ. Յունիսին՝ ընդամենը 32
տարեկան հասակին:

Բ. ԳԼՈՒԽ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆԸ

ՍԱՀՄԱՆՆԵՐԸ.— Տասնեւմէկ տարուայ մէջ Աղեքսանդրը կառուցեց մէկ ընդարձակ մինչ այդ չտեսնուած կայսրութիւն: Անոր պետութիւնը կը տարածուէր Մակեդոնիայէն՝ Տանուբէն մինչեւ Ինտոս գետը, Նեղոսէն մինչեւ Սիր Տարիա գետը, Կովկասեան լեռներէն մինչեւ Արարիա և Կասպից ծովէն մինչեւ Պարսից ծոց: Այս մէկ շատ ընդարձակ կայսրութիւն էր, որու սահմաններուն մէջ այժմ ստեղծուած են բազմաթիւ պետութիւններ՝ Պուլկարիան, Յունաստանը, Եռեկոսլաւիայի մեծ մասը, Թուրքիան, Հայաստանը, Վրաստանը Սիւրիան, Լիբանանը, Պաղեստինը, Եգիպտոսը, Միջագետքը, Իրաքը, Պարսկաստանը, Աֆղանիստանը, Պենջապ կամ արեւմտեան Հնդկաստանը: Այս ընդարձակ, ծաւալուն կայսրութիւնը ստեղծուեր էր մէկ հանձարեղ երիտասարդ թագաւորի ռազմի կարողութեամբ: Կայսրութեան բազմակի մասերը իրարու միացնող, զօդող ոչինչ գոյութիւն չունէր բացի յաղթողի անձէն: Պարօից կայսրութեան անկումով և նոր պետութեան ստեղծումով, Աղեքսանդրի առաջ կը դրուէր շատ մը կարևոր հնարքեր, որոնց լուծումէն կախուած էր կառուցուելիք պետութեան ապագան: Նախ ինչ բնոյթ պիտի ունենար նոր պետութիւնը:

ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԲՆՈՅԹԸ.— Աղեքսանդրը Մակեդոնացիներու համար օրինաւոր թագաւոր էր, յոյնի համար անյունական միութեան սպարապետն էր միայն: Բայց յաղթութեանց հետեւանքով ան հսկայ կայսրութեան գլուխն էր կանգնած, տիրեր էր արեւելքի ժողովուրդներուն, որոնք տարբեր քաղաքական և կրօնական ըմբռնումներ

ունէին: Ինչ էր անոնց վերաբերումը նոր Թագաւորի հանդէպ: Արեւելքի մէջ իշխանութիւնը սերտօրէն կապուած էր կրօնի հետ. թէ փարաւոնի, թէ արքայից արքայի իշխանութիւնը աստուածային էր, անոնք կ'իշխէին կամօքն աստուծոյ: Բաժնել իշխանութիւնը կրօնէն Աղեքսանդրի համար կ'ըլլար մեծագոյն սխալը: Արեւելքցին այդ երկուքը բաժնել չգիտեր: Մէկը միւսի աղբիւրն է և յենարանը: Աղեքսանդրը ամենուրեք ազգային աստուածներու կողմէն ընդունուեցաւ որպէս իրենց երկիրներու իրաւական տէր և քուրմերու կողմէն յայտարարուեցաւ աստուած և աստուածորդի: Հին արեւելքի մտածողութիւնը սահման չէր դնէր աստուածայինի և մարդկայինի մէջ: Ուստի և անոր ըմբռնումով աստուած կրնար մարդանալ, այնպէս ինչպէս անոր հնամենի նախնիները կը մտածէին թէ աստուած կրնայ մարմնանալ բոյսի, կենդանիի մէջ: Աստուծոյ այս մարդկայնացման գաղափարը մնաց և հետագայ կրօններու, մանաւանդ քրիստոնէութեան մէջ:

Տարակոյս չկայ, որ արեւելքի բնակչութեան մեծ մասը կը հաւատար Աղեքսանդրի աստուածային ծագման: «Աստուածային Աղեքսանդրի» առասպելը հիմա ալ տարածուած է իրանական աշխարհի մէջ: Հսկայական կայսրութեան կործանումը երիտասարդի մը ձեռքով չէր կրնար հրաշք չհամարուել սնտոխապաչտ ու նախապաչարուած արեւելքցիներու կողմէն: Այդ մեծ գործը անոնք կը վերադրէին միայն գերբնական ուժ ունեցողին: Եգիպտոսի և Բաբելոնի մէջ անոր իշխանութիւնը աստուածային համարուեցաւ: Ամենուրեք անոր աստուածային պատիւներ կ'ընծայէին: Ասոր հակառակ էին յուսկական բանապաշտները և մտածողները: Երբ երիտասարդ Թագաւորը պահանջեց, որ Յոյներն ալ իրեն աստուածային պատիւներ տան՝ յոյն փիլիսոփաները պատասխանեցին արհամարհանքով և հեգնանքով. Աղեքսանդրի աստուածացման հակառակ էին նաեւ Մակեդոնացիք. անոնք սովոր չէին Թագաւորի առաջ խոնարհելու, զո՛հ մատուցանելու: Այս պահանջը կը վիրաւորէր

անոնց ինքնասիրութիւնը: Ճիշդ է յուսական միտքն ալ սահման չէր դնէր աստուածայինի և մարդկայինի մէջ, բայց Աղեքսանդրի աստուածացման անոնք դէմ էին գրլխաւորապէս քաղաքական նկատումներով: Այդ բանը կ'ամրացնէր անոր մենատիրութիւնը Յունաստանի մէջ և վերջ կուտար ամեն ազատութեան: Այս բոլորը անջրպետ մը առաջացուցին Աղեքսանդրի և իր սպայակոյտի ու լանակի մէջ:

ՆՈՐ ՎԱՐՉՈՒԹԻԻՆԸ. — Աղեքսանդրը սկիզբէն նոր կայսրութիւնը կը կառավարէր ժամանակաւոր կառավարիչներու միջոցով, որոնք բռներ էին պարսիկ պաշտօնեաներու տեղը: Անոնց գլխաւոր նպատակը պիտի ըլլար հաւաքել տուրքերը և հասցնել Աղեքսանդրին իր նուաճումները շարունակելու համար: Այդ ժամանակաւոր կառավարիչները հնագանդութեան մէջ պիտի պահէին ժողովուրդին, որոնք յաճախ այստեղ ու այնտեղ կ'ապստամբէին նոր տիրողներու դէմ: Շոշի և Բաբելոնի մէջ Աղեքսանդրը մշակեց կայսրութիւնը վարելու նախագիծը: Ան պահեց սատրապական սիստեմը, որ շուրջ երկու հարիւր տարուայ անցեալ ունէր: Սատրապութեան գլուխը ան դրաւ Մակեդոնացիներուն կամ Պարսիկներուն: Վերջիններս ծանօթ էին իրենց երկրին, լու վարչագէտներ էին: Սատրապը ներքին գործերու, վարչութեան, ապահովութեան վրայ կը հսկէր. անոր կից գոյութիւն ունէր զինուորական հրամանատարը, որու ձեռքն էր կեդրոնացած սատրապութեան մէջ եղած զօրքերու ղեկավարութիւնը. առանձին վարչութիւն էր հարկահաւատքութիւնը՝ պետական գանձերու հրահանգութիւնը: Այսպիսով Աղեքսանդրը գնաց 'Իարեհ Վըշտասպեանի' իշխանութեանց բաժանման ուղիով: Վարչական այս բաժանումի մէջ շարք մը երկիրներ կը վայելէին լայն ինքնավարութիւն. այսպէս՝ Նգիպոսի ինքնավարութիւնը քրեթէ կը հասնէր անկախութեան: Ներքին բոլոր գործերը կը գտնուէին Նգիպոսացիներու ձեռքը: Փիւնիկեան քաղաքները շարունակեցին իրենց ինքնավար պայտքութիւնը,

ոմանք նոյնիսկ ունէին թագաւորներ, բայց Աղեքսանդրի գերիշխանութեան տակ: Ինդոսի եզերներուն ստեղծուած պետութեան համար Աղեքսանդրը միայն հովանաւոր էր: Փոքր Ասիական յոյն քաղաքները կը շարունակէին իրենց ինքնավար կեանքը, բայց Աղեքսանդրի հսկողութեան տակ: Յոյնը միշտ մնաց քիչ թէ շատ կասկածելի թագաւորի աչքին: Աղեքսանդրի սատրապական սխտեմը կը ջանար պահել տեղական ազգերու իրաւունքներն ու զարգացման պայմանները հաշտեցնելով այս մէկ և համաշխարհային միապետութեան միտող կայսրութեան հետ:

ՄԻՈՒԹԵԱՆ ՄԻՏՈՒԽՐ.— Ամենէն շատ Աղեքսանդրին կը մտահոգէր նոր կայսրութեան ապագան և իր զօրքին թուական պակասութիւնը: Թէ իր արշաւանքներու սկիզբին և թէ վերջին քիչ կը վստահէր Յոյներուն: Եւ հակառակը յոյն վարձկանները յամառօրէն կը պաշտպանէին Պարսից կայսրութիւնը: Միւս կողմէն Մակեդոնիոյ մարդկային ուժերը մեծ չէին: Ան տուեր էր բանակներ իր ուժերէն վեր չափով: Նոր զօրք և հրամանատարութիւն անոնք անկարող էին հասցնել: Երիտասարդ թագաւորը դեկավարութիւնը միշտ վերապահեց անոնց թէ վարչութեան և թէ բանակի մէջ, բայց և այնպէս անհրաժեշտ էր գործօն ուժերու մեծ քանակ՝ վարչութեան, զօրքի, սուրհանդակային կապին համար: Այդ գործօն ուժերը կրնար մատակարարել միայն պարսիկը, որ մօտ երկու և կէս դար վարեր էր արեւելքի քաղաքական բախտը: Աղեքսանդրը բարձր կը գնահատէր Պարսիկներու վարչական կարողութիւնները, վատ կարծիք չունէր նաեւ անոնց զինուորական ընդունակութեանց մասին: Ուստի ան որոշեց մօտեցնել իր պետութեան երկու ամենէն կենսունակ օտարերուն՝ Պարսիկներուն եւ Մակեդոնացիներուն, ձուլել անոնց՝ գոնէ զօրքի եւ վարչութեան մէջ: Ինքն իսկ օրինակ տուաւ. Բակտրիայի մէջ ան ամուսնացաւ այդտեղի սատրապի դստեր՝ Բոսանի հետ, աւելի ուշ Շոշի մէջ ամուսնացաւ Դարեսի դստեր՝ Սասիրայի հետ: Ան իր սպայակոյտի անդամներու

և զօրավարներու մէջ բաժնեց պարսիկ իշխանուհիներուն և սատրապներու աղջիկներուն: Աւելի քան տաս հազար Մակեդոնացիներ հետեւեցան Աղեքսանդրի օրինակին և ամուսնացան Պարսկուհիներու հետ: Թագաւորը անոնց առատօրէն կը վարձատրէր, կ'ապահովէր անոնց նիւթակտնը: Միւս կողմէն պարսիկ գիւնուորներ մտան բանակի մէջ, նախկին զօրավարներէն շատերը մնացին իրենց բանակներուն գլուխը: Իրեն՝ Թագաւորի թիկնապահ բանակը կազմուած էր Պարսիկներէն: Անոր մէջ տեղ գտան 30.000 երիտասարդ Պարսիկներ: Այս ձեւով երիտասարդ Թագաւորը կը փորձէր հաշտեցնել և պետութեան վերակառուցման գործին լծել երէկուայ թշնամիներուն՝ պարսկին և մակեդոնացիին: Սակայն ստեղծել պարսկա-մակեդոնական վարիչ դաս և զօրաբանակ շատ դժուար էր: Շատ տարբեր էին երկու ժողովուրդներու պատմական աւանդութիւնները, դարերով մշակուած կենցաղն ու հոգեբանութիւնն ու շահերը:

ԳԱՂՈՒԹՆԵՐ.— Աղեքսանդրի ղեկավար միտքը՝ երկու ազգերու աստիճանական մօտեցումը գլուխ բերելու համար հիմնուեցան շարք մը քաղաքներ: Ասոնցմէ մէկ քանին սահմանապահ ամրութիւններ էին, որոնց շուրջը դանդաղօրէն հաւաքուեցաւ առևտրականն ու արհեստաւորը: Քանի մը հատը կառուցուեցան մեծ առևտրական ուղիներու միացման կէտերուն և դարձան տնտեսական փոխանակութեան կեդրոններ: Այս քաղաքներուն մէջ կեդրոնացան ամեն կողմէն հաւաքուած բնակչութիւն: Աղեքսանդրի մահէն հտքը սկսաւ Յոյներու գաղթը դէպի այս նոր կառուցուած քաղաքները: Աղեքսանդրի նուաճումները նպաստեցին Յոյներու զանգուածային գաղթումներուն յորենց հայրենիքէն, որ արդէն տնտեսապէս աղքատացած էր, քաղաքականապէս ալ անկայուն կացութեան մէջ էր: Ատկէ առաջ ալ յոյնը կը գաղթէր, կը դառնար վարձկան, այժմ ան կը գաղթէր մեծ չափով. կու գար հաստատուելու նոր քաղաքներու մէջ, որ հիմներ էր Աղեքսանդրը և երկրի վաճառականութիւնը, արդիւնաբերութիւնը, արհեստ-

ները կ'առնէր իր ձեռքը: Ան հարիւր հազարներով իր հասընթիւքէն մեկնեցաւ արեւելք՝ Փոքր Ասիա, Եգիպտոս, Սիւրիա, Միջագետք, Իրան մինչեւ հեռաւոր Բակդրիա եւ Հնդկաստան: Եթէ իշխանութիւնն ու բանակը կը գտնուէր Մակեդոնացիներու ձեռքը ապա տնտեսութիւնը՝ առեւտուրն ու արդիւնաբերութիւնը ձեռք առին Յոյները: Անոնք հաստատուեցան քաղաքներու մէջ: Դէպի Մերձաւոր արեւելք գալով յոյն գաղթականները բերին իրենց զարծր մշակոյթը ամենէն կոտարելագործուած լեզուն. իրենց դպրոցները, քաղաքային ինքնավարութեան աւանդութիւնները, յոյն ի բնատուր հետաքրքրութիւնը, ճաշակը, քննադատական միտքը, իրենց կենցաղը: Անոնց արեւելքի մէջ զանգուածօրէն հաստատուածով կ'ըսկսուի արեւելքի պատմութեան մէկ նոր շրջանը՝ հելլենակա յոյնացի: Այս ժամանակաշրջանը կը տեւէ մինչեւ Հռոմի՝ արեւելքին տիրապետելը: Այդ շրջանը մակեդոնական ծագում ունեցող տինաստիներու տիրապետութեան շրջանն է և յոյն մշակոյթի՝ լեզուի գերակայութիւնը արեւելքի մէջ:

Եգիպտոսի մէջ յայտնի դարձաւ Աղեփաւնդիա քաղաք նաւահանգիստը, Սիւրիոյ մէջ Իսոսի ծովածոցին կառուցուեցաւ Աղեփաւնդիան, այսօրուայ Աղեքսանտրիթը, Իրանի բարձրաւանդակը շինուեցաւ ասիական Աղեփաւնդիան՝ Հեփթա: Երկու Աղեքսանդրիաներ կառուցուեցան Հինտուգուշի ստորոտը՝ Կանդահարը, երեք Աղեքսանդրիաներ հիմնուեցան, Բակդրիայի մէջ, մէկն ալ Փեհզսայի մէջ Ինտոսի միւս կողմը՝ այսօրուայ Հայդարաբադ: Այս և ուրիշ քաղաքներու սկզբնական բնակիչներ մակեդոնական վէթերաններն էին, որոնք ազատուելի էին զինուորական ծառայութենէն, յոյն վարձկանները և տեղական բոլոր ազգերէն մարդիկ, որոնք մասնակից եղան առեւտուրին:

Գ. ԳԼՈՒԽ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻ ՅԱԶՈՐԴՆԵՐԸ

ԿԱՅՄՐՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

ՇԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Աղեքսանդրի մահէն ետքը կայսրութեան գոյութեան հարցը դրուեցաւ իր ամբողջ ծաւալով: Աղեքսանդրն էր անոր ստեղծողը և անոր անձի հետ ալ կապուած էր կայսրութեան բախտը: Ան դեռ ձեւաւորուած չէր, կառուցուած չէր անոր կազմակերպուիլը դեռ ընթացքի մէջ էր: Ան ստեղծուելը էր յաջող ազգական գործողութիւններու մէջ: Անոր կեդրոնախոյզ ոյժերը աւելի շատ էին քան կեդրոնաձիգ գործօնները: Այս ուժերը գոյութիւն ունէին, կը գործէին Պարսկաստանի օրով, կը գործէին նաև Աղեքսանդրի կենդանութեան օրով: Ան ժամանակ չունեցաւ աւելի հաստատուն հիմքերու վրայ դնելու նոր կայսրութիւնը: Կայսրութեան ստեղծող ուժը զօրքն էր, մեծ զօրավարի մահէն ետքը ան ալ կը փորձէ լուծել գահակալական հարցը: Բայց զօրքի առաջնորդները կը դրժէին օրինակութեան սկզբունքը և կը հետապնդէին անձնական նպատակներ: Արքայական ընտանիքի անդամները զոհ գացին սկսուած կռիւններու մէջ մէկը միւսի ետեւէն, Աղեքսանդրի եղբայրը՝ Արհիդէն, մայրը, տպա թագաւորի մահէն քիչ յետոյ ծնած դաւակը՝ Ալիքսանդր II. ասոր մայրը՝ Բոնսանը սպաննուեցան: Թագաւորի զօրավարներէն մէկը Պերդիկասը յանձն առաւ գահի խնամակալութիւնը, բայց երբ կռիւններու մէջ օրինական ժառանգները մեկուսացուե-

ցան, ապա սպաննուեցան, օչ ոք այլևս չէր ուզեր որեւէ բանով զիջիլ միւսին: Սկսաւ մէկ ծանր ու երկարատեւ պայքար Աղեքսանդրի զօրավարներու մէջ մեծ նուաճողի ժառանգութեան համար: Գլխաւոր հարցն այն էր, թէ կարելի՞ է պահել կայսրութեան ամբողջականութիւնը, թէ պէտք է անդամահատել բաժնել ան զօրավարներու մէջ:

ՊԱՅԲԱՐ ԱՂԵՔՍԱՆԴՐԻ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ՆԱՄԱՐ.—

Աղեքսանդրի զօրավարներէն ոչ մէկը չէր ժառանգեր անոր քաղաքական ծրագիրները, չունէր անոր հեռատեսութիւնը և կայսրութեան վերակառուցման անոր սկզբունքները: Բայց և ոչ մէկը չէր ուզեր միւսին զիջիլ և ոչ ոք չէր բաւականանար մէկ սատրապութեամբ միայն: Ոչ ոք ալ չունէր զօրքի վրայ այն հեղինակութիւնն ու հմայքը, որ կարենար անոր միջոցով իշխել միւս մրցակիցներու վրայ: Պերդիկասը Մակեդոնիոյ կառավարիչ նշանակեց Անտիպատին, Եգիպտոսը յանձնեց Պտլեմէին իսկ Փոքր Ասիան ինկաւ Անտիգոնին: Բայց այս միայն առաջին բաժանումն էր: Աղեքսանդրի մահուան լուրը առնելուն պէս Յունաստանը ապստամբեցաւ: Դէմոսթէնը վերադարձաւ Աթէնք և գլուխ բերաւ Մակեդոնիոյ դէմ յոյն քաղաքներու զինակցութիւնը: Բայց չարք մը յաղթանակներէն ետքը Անտիպատէրը ճնշեց ապստամբութիւնը, Աթէնքը անձնատուր եղաւ. դամոկրատիկ սահմանադրութիւնը վերաքննութեան ենթարկուեցաւ. միայն հարուստները պահեցին իրենց քաղաքական իրաւունքները, Դէմոսթէն թոյն ընդունեց չիւնալու համար թշնամիներու ձեռքը (322): Այս դէպքերէն քիչ յետոյ Պերտիկասը սպաննուեցաւ և Անտիպատէրը մընայ միակ հեղինակութիւնը և մեծ բանակ ունեցողը: Կարծէք թէ կայսրութեան միութիւնը պիտի պահուէր Անտիպատէրի գերագոյն իշխանութեան տակ: Բայց ան ալ մեռաւ 319 թիւին և իր մահէն առաջ որպէս յաջորդ նշանակեց Աղեքսանդրի հին զօրավարներէն մէկուն՝ Պոլիպերտոնը՝ փոխանակ իր որդու՝ Կասանդրի: Վերջինս ապստամբեցաւ Պոլիպերտոնի դէմ օգնութիւն ստանալով Պտղեմէն,

Անտիգոնէն և Սելեւկիոսէն, որ արդէն Բաքելոնի սատրապ էր: Այս կռիւններու մէջ ամենէն ականաւոր դէմքը հանդիսացաւ Անտիգոն Միականին, որու լաւագոյն զինակաւնը տաղանդաւոր Տիմիթրի Պոլիորկեսն էր՝ քաղաքներու նաւաճողը: Ան աւելի ընդունակ էր Աղեքսանդրի կայսրութեան միութիւնը պահելուն, բայց անոր իշխանութիւնը միւս մրցակիցներու կողմէն շնորհունուեցաւ: Անոր դէմ է, որ ուղղեցին իրենց զէնքերը մրցող զօրավարները Իպսոսի նակասամաթսին 301 թիւին: Անտիգոնը սպաննուեցաւ կռուի դաշտին մէջ. իսկ Տիմիդրին շարունակեց կռիւը հակառակորդներու դէմ: Իպսոսի ճակատամարտը որոշեց Աղեքսանդրի կայսրութեան բախտը. եթէ մինչ այդ մտածողներ կային թէ կարելի է պահել կայսրութեան միութիւնը, այժմ բոլորը համոզուեցան, որ քաժանուժը միակ միջոցն է խաղաղութիւն և հաշտութիւն վերահաստատելու: Իպսոսի ճակատամարտէն յետոյ կռիւնները քանի մը անգամ դադարեցան, կնքուեցան համաձայնութիւններ կռուող կողմերու մէջ, բայց նորէն խախտուեցան նոր կռիւներով: 283 թ. Տիմիդրինը մեռաւ, 283 թիւին Սելեւկիոսը սպաննուեցաւ, սպա սպաննուեցաւ Լիսիմաք: Ասոր մահով վերջացաւ Աղեքսանդրի մեծ զործակիցներու շարքը: Ասպարէզ էին իջեր նոր մարդիկ, նոր օերունդ, որոնք այլևս կապուած չէին իրենց նախորդներու աւանդութիւններուն: Անոնք ուղղակի կը դիմէին որոշ և պայծառ նպատակի՝ երկիրներ գրաւելու և թագաւորութեան հիմնադիր դառնալու: 280 թիւերուն մեծ կայսրութեան աւերակներուն վրայ կ'ուրուագծուէին երեք պետութիւններ. 1. Մակեդոնիան, ուր վերջնականապէս հաստատուեցան, Անտիգոնեանները. Անտիգոն Միականի ժառանգները 2. Եգիպտոսի մէջ վերահաստատուեցան Պտոլեմեանները կամ Լաժիդները. 3. Ասիոյ մէջ Սելեւկեանները՝ Սելեւկիոս զօրավարի ժառանգները: Մակեդոնիոյ մէջ Անտիգոնի հարստութիւնը յաջորդեց Ֆիլիպի և Աղեքսանդրի հարստութեան: Մակեդոնացիք շուտով հաշտուե-

ցան տեղական գորավարներէն բարձրացող այս հարստութեան հետ: Աստիճանաբար ան դարձաւ ազգային-մակեդոնական իշխանական տուն: Անտիգոնեաններու տիրապետութեան տակ էր Յունաստանը, ուր անոնք գլխաւոր քաղաքներու մէջ կը պահէին բանակ: Թէ Եգիպտոսի և թէ Ասիոյ մէջ նոր հարստութիւններու իշխանութիւնը հիմնուած էր միայն նուաճումի վրայ: Նուաճուած երկիրները անոնց խորթ էին. անհարազատ և շկար անոնց և նուաճողներու մէջ ոչ պատմական ու մշակոյթի, ոչ ալ ազգակցական լեզուական կոպ: Նուաճողները իրենց իշխանութիւնը կը պահէին միայն զօրքի վրայ յետուած: Տեղական բնակչութիւնը կը հպատակուէր անոնց, ինչպէս հպատակուէր էր անոնց նախորդներուն: Երեք այս պետութիւնները կոչուեցան Հելլենիստիկան՝ մշակութային այն մեծ շարժումներու պատճառով, որ տեղի ունեցաւ Մերձաւոր Արեւելքի մէջ Աղեքսանդր մեծի և անոր յաջորդներու օրով մինչև Հռոմի արեւելքի մէջ հաստատուիլը:

I. ԵԳԻՊՏՈՍ

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ, ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐ. — Թէ Պտղէմէեանները և թէ Սելևկեանները չէին հրաժարուեր քաղաքական միահեծանութեան և համաշխարհային կայսրութիւն կազմելու միաքէն: Անոնցմէ իւրաքանչիւրը կ'ուզէր իր երեկուայ դաշնակցի նկատմամբ պրաւել ռազմական ապահով դիրք: Ապա իւրաքանչիւրն ունէր իր ներքին հրատապ հարցերը: Պտղէմէեաններու պետութեան կեդրոնը Նեղոսի հովիտն էր, ուստի և անոր պարագայումը, ապահովութիւնը կը դառնար գլխաւոր հարցը: Պէտք էր ապահովել սահմանները կամ ապահով և բնական սահմաններ գծել Եգիպտոսի համար: Հարաւր ան հասեր էր մինչև Նուբիա, Արեւմուտքէն ան գրաւեց Սիրէնէիկան, Հիւսիսէն՝ նուաճեց Կիպրոսը, Արեւելքէն ան վէճի մէջ էր Սելևկեաններու հետ Սիրիոյ համար: Այս բոլոր ուղղութեամբ ան կ'ընթանար փարաւոններու գծած ճամբաներով: Տելուրան վտանգուած էր ծովէն, որովհետև Մի-

Պերկրական ծովի վրայ կը նաւարկէին և Սելեւկեան և Մովսէսիական ռազմանաւերը: Ով Միջերկրականի վրայ ունենար մեծ և ուժեղ նաւատորմիչ, անոր համար Եգիպտոսը կը դառնար հարուստ աւարի նիւթ: Ատկէ բացի Եգիպտոսը զիւրութեամբ կրնար նուաճուիլ ցամաքէն. անով իր ձեռքն ունենար Պաղեստինը և Փիւնիկիէի ծովեզերքը առանց մեծ ճիգերու կրնար տէր դառնալ Եգիպտոսին: Այս ուղիներով էին եկեր փարաւոններու շրջանին նուաճողները և յաւկապէս Հիւքսոսները: Եգիպտոսի ապահովութիւնը կը պահանջէր ունենալ մեծ նաւատորմիչ Միջերկրական ծովի վրայ և ցամաքային բանակ ասիական ճակատի վրայ: Ռազմական կարեւոր հարց էր՝ զրաւել Պաղեստին-Փիւնիկեան գիծը և իր ձեռքն ունենալ Արեւելեան Միջերկրականի ամենէն բանուկ և հարուստ ծովեզերքը: Նուաճողական այս միտումը ունէր և իր ճեշտական պահանջը՝ անոր անհրաժեշտ էր Լիբանանի շինափայտը, սկէտք էր Միջերկրականի առևտուրը պահել իր ձեռքին և Աղեքսանդրիան դարձնել Միջագոյսին առևտուրի կեդրոն, թուլցնել Փիւնիկեան քաղաքներու առաջնութիւնը արեւելեան վաճառականութեան մէջ Նեղոսը, կարմիր ծովը դարձնել գլխաւոր ուղին արեւելեան Աֆրիկէի, հնդկական ապրանքներու փոխադրութեան համար, պայքարիլ Պարսից ծոց Բաբելոն-Եփրատեան գծի գլխաւոր առևտրական ուղիի դէմ: Ուրիշ խօսքով քաղաքական և տնտեսական հարցերու մէջ Պտոլէմէեանները կ'ընթանային փարաւոններու շաւիղներով: Իշխող հարստութիւններն ու դերակատարները կը փոխուէին, բայց երկրի, պետութեան քաղաքականութեան հիմնական գիծը կը մնար միևնոյնը:

ԱՂԵՅՍԱՆՆԻՍԻԱՆ.— Պտոլէմէեաններու օրով Եգիպտոսի քաղաքական ծանրութեան կեդրոնը թեքուեցաւ դէպի ծով ան դարձաւ Միջերկրականեան պետութիւն: Անոր նիւթական հարստութեան աղբիւրը իր երկրի արտադրութիւնն էր, գլխաւորապէս հացը և այն բոլոր բարիքները, որ կարմիր ծովով կամ Նեղոսի ընթացքով Հնդկաստանէն,

Արապիայէն, Հապէշիտանէն, հարաւ-արեւելիան և կեդ-
րոնական Ափրիկէէն կը հաւաքուէին Աղեքսանդրիոյ մէջ։
Այս քաղաքը դարձաւ հսկայ շտեմարան մը արեւելեան և
հարաւային երկիրներու բարիքներու, որոնք այնուհետեւ
եգիպտական նաւերով կը փոխադրուէին դէպի Փոքր Ասիա,
Եւրոպայ։ Նոր շուկաներու գրաւումը Եգիպտոսի առեւտուրի
համար հանգիսացաւ գլխաւոր խնդրի։

ՊՏՈՒԼԵՄԷՍԱՆՆԵՐՈՒ ՔՈՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ.— Այս
նպատակներով Պտոլէմէ Է գրաւեց Տիրոսը և Սիդոնը, նուա-
ճեց կիպրոսը և Դեկոսը։ Ան դաշինք կնքեց Յունաստանի
հետ. սկիզբը մակեդոնական թագաւորի, ապա յունական
քաղաքներու հետ. ան կը ձգտէր Միջերկրականի արեւել-
եան աւազանի տիրապետութեան. ատոր համար անհրա-
ժեշտ էր ունենալ Յոյներու գործակցութիւնը։ Ասոր համար
ալ տեղի ունեցաւ երեք մեծ պատերազմներ Եգիպտոսի զե-
կավարութեամբ։ Առաջինը 279-271 տեղի ունեցաւ Պտոլէ-
մէ II-ի (285—246) և Անտիոքոս I-ի միջեւ (281—261)։
Ան վերջացաւ Եգիպտոսի կատարեալ յաղթութեամբ։ Պտո-
լէմէ II գրաւեց Կիլիկիան, Պամփիլիան, Լիկիան, Փոքր
Ասիոյ Միջերկրական ափերը, Հալիկարնէս, Միլէտ քաղաք-
ները, Կիկլադիան կղզիները, Սամոսը իտանոսը։ Եգիպ-
տոսը հասաւ մինչև նեղուցները։ Յոյն քաղաքները միշտ
դժգոհ Սակուդոնիայէն իրենց ազատագրութեան յոյսը կա-
պեցին Եգիպտոսի հետ։ Միջերկրականի բարիքներն ու ա-
ռեւտուրը այժմ ուղղուեցան դէպի Աղեքսանդրիա, որ բըւ-
ներ էր Աթէնքի տեղը և դարձեր էր ծովային առեւտուրի
գլխաւոր կեդրոնը։ Երկրորդ պատերազմին, վարձկաններու
ապստամբութիւնը օգտագործելով Անտիոքոս II (261-246)
յարձակեցաւ Եգիպտոսի վրայ և յաջողեցաւ նպաստաւոր
պայամաններով դաշինք կնքել՝ 253 թիւին, որ ամրացաւ
խնամիական կապերով՝ Անտիոքոս II ամուսնացաւ Պտոլէ-
մէ II-ի աղջկայ՝ Բերեցիկայի հետ, որ որպէս օժիտ բերաւ
Փոքր Ասիական հողերը։ Բայց այս դաշինքը և բարեկա-
մութիւնը երկար չտևեց, 246 թիւին պալատական դաւադ-

րուժեանց զոհ գացին Անտիոքոս II և Բերենիկան: Այս յեղաշրջումը պատճառ դարձաւ երրորդ պատերազմի Պտոլէմէ III Ի (246—221) և Սելեւկիոս II-ի (246—223) մէջ: Այս պատերազմը աննպաստ ընթացք ունեցաւ Սելեւկեաններու համար: Եգիպտացիք գրաւեցին ամբողջ Սիւրիան, անցան Եփրատը, հասան մինչեւ Տրգրիաւ: Միջերկրական ծովը իր բոլոր նաւահանգիստներով կորած էր Սելեւկիոս II-ի համար: Եգիպտացիք գրաւեցին Եգէեան կղզիները, հասան մինչեւ Հելեսպոնտ, իրենց հսկողութեան տակ առին Սև ծովի առեւտուրը և նեղուցները: Պտոլէմէ III կատարելապէս տէր էր արեւելեան Միջերկրականի, անոր բոլոր կղզիներուն և նաւահանգիստներուն և Սև ծովու անցքերուն: Անոր օրով Եգիպտոսը հասաւ իր քաղաքական հզօրութեան և նիւթական հարստութեան բարձր աստիճանին: Աղեքսանդրիան, որ մինչև այդ հելլենիստական աշխարհի տնտեսական առևտրական կեդրոնն էր, այժմ կը դառնայ նաև մտաւոր կեդրոնը. դէպի Աղեքսանդրիա կը դիմեն ժամանակի մեծագոյն մտաւորականները, գիտնականները, փիլիսոփաները, բանաստեղծները: Բայց Միջերկրականի այս մենատիրութիւնը երկար չի տևեր: Պտոլէմէ IV-րդը (222—205) դեռևս կը պահէր Եգիպտոսի առաջնութիւնը ծովերու վրայ, իր ձեռքն էր Սիւրիան, բայց Պտոլէմէ V-րդը պարտութեան կը մատնուի մակեդոնական Ֆիլիպ V-րդ թագաւորի կողմէն, որու դաշնակիցն էր Սելեւկեան Անտիոքոս III-րդը: Ֆիլիպ V-րդի օրով Մակեդոնիան ռազմապէս կը զօրանայ, ան ինքը կ'ուզէր տէր կանգնիլ Եգէեան ծովուն, անոր կղզիներուն նեղուցներուն: Տնտեսական այս հարցերու վրայ կ'աւելնուր նաև քաղաքականը, որքան փոքր Ասիական ամերուն, Եգէեան ջուրերու վրայ Եգիպտացիները իշխէին՝ Յունաստանը միջո, տեւական ապստամբ կացութեան մէջ էր ըլլալու: Անտիոքոս III-ի և Ֆիլիպ V-րդի ռազմի ճնշման տակ, Եգիպտոսը ընկրկեցաւ և երրորդ դարու վերջերուն ան ծովերու իր հզօր տիրապետութենէն պահեր էր միայն կիպրոսը և Սիրէնէիկը: Իսկ երկ-

որորդ դարու սկզբին ան այնքան թուլցեր էր ու վտանգուեր որ Հռոմը 196 թիւի դաշինքով անոր վերցուց իր հովանիին տակ:

II. ՍԵԼԵՒԿԵԱՆՆԵՐ

ՍԱՀՄԱՆՆԵՐԸ.— Աղեքսանդրի կայսրութեան մեծագոյն մասը բաժին ինկաւ Սելեւկեաններուն: 327 թիւին Սելեւկիոս I Բարեկոնի սատրապն էր: Քաղաքացիական կռիւներու ժամանակ ան ընդարձակեց իր իշխանութիւնը, հասաւ մինչև ինտոս գետը, տէր դարձաւ Իրանին, Իպսոսի ճակատամարտէն ետքը անոր բաժին ինկաւ Սիւրիան, Հայաստանը, Փռիւգեան: Իր պետութեան կեդրոնը, Տիգրիսի ափերուն ան հիմնեց Անտիոքոս քաղաքը: Փոքր Ասիայէն ան անցաւ Հելեսպոնտը և գրաւեց Թրակիան և Մակեդոնիան: Բայց այս վայրերը երկար ժամանակ մաս չկազմեցին Սելեւկեան իշխանութեան: Այս պետութիւնը արհեստական միութիւն մըն էր, որու բազմակի մասերը իրարու հետ ոչ մէկ կապ չունէին. վարիչ ուժն ալ՝ Սելեւկիոսը և իր մակեդոնական գործակիցները մեծ չէին բոլոր այս երկիրներուն զինու զօրութեամբ միացած պահելու, ուստի իր ծագման օրէն իսկ սկսաւ անոր քայքայումը: 306—304 թիւի նոր կայսրութեան ամենէն հեռաւոր մասերը՝ Ինքոսի գետահովիտը բաժնուեցաւ անկէ: Արեմուտքէն թափանցող Կէլտերը գրաւեցին Փոքր Ասիոյ կեդրոնական մասերը՝ Փռիւգեան և հիմնեցին Ղալաթիոյ պետութիւնը: Նոյն Փոքր Ասիոյ մէջ աստիճանաբար անջատուեցան Սելեւկեաններէն՝ Բիւթանիան, Կապադոկիան, աւելի ուշ Հայաստանը: Իսկ Սեւ ծովու հարաւային ափերու ամբողջ երկարութեամբ անկախացաւ Պոնոսք (301). այնտեղ հաստատուեցաւ Եւպատրոնեոս հարսուրթիւնը: Պերգամը երրորդ դարու կէսերուն անկախացաւ: Ուրեմի աստիճանաբար Փոքր Ասիան դուրս եկաւ Սելեւկեաններու իշխանութենէն՝ մասամբ սեփական ուժերով, մասամբ դուրսի օժանդակութեամբ:

Հոս Սելեկեանները կորսնցուցին յուսական նաւահան-
գիստները հարուստ քաղաքները և արգասաբեր ծովեզեր-
եայ շրջանները, Պերգամի գանձերը, Փոքր Ասիոյ խիտ
բնակչութիւնը և որակուած զինուորները, յունական բարձր
մշակոյթի երկրամասերը: Բայց այս անգամահատման գոր-
ծողութիւնը միայն Փոքր Ասիոյ մէջ չէ, որ կը կատար-
ուէր: Աւելի մեծ չափով ան տեղի ունեցաւ Իրանի: Բարձ-
րաւանդակին վրայ, որ բնակեցուած էր իրանական ժողո-
վուրդներով՝ Պարսիկներով, Մարերով, Բակտրիացիներով,
Պարթեւներով ասոնք ամենէն քիչ ենթարկուեցան հելլե-
նիզմին, թիւե անոնց մէջ ստեղծուեցաւ հասարակական
մէկ վերնախաւ, որ իւրացուց յունական քաղաքակրթու-
թեան տարրերը, բայց այդ ժողովուրդները ամբողջու-
թեամբ պահեցին իրենց լեզուները և կրօնը և հեռաւոր Սե-
լեկեաններուն չենթարկուելու միտումը: 250 թ. Բակտրիան
կ'անկախանայ, այնտեղ կ'ըստեզծուի հելլենասէր և յունա-
կան մշակոյթը իւրացուցած մէկ հարստութիւն, որ կը
յենուի յոյն գաղթականներու և յոյն վարձկան բանակի
վրայ: Բայց ամենամեծ հարուածը Սելեկեաններուն կու
տան սկիւթական ծագում ունեցող Պարթեւները, որոնց շըր-
ջանակէն կ'ելնէ Արշակունիներու իշխող հարստութիւնը
(250 թ.): Ասոնք շուտով անցան յարձակման և շատ կարճ
ժամանակի մէջ հարկադրեցին Սելեկեաններուն նահանջել
և իրենց գիջիլ Իրանի բարձրաւանդակը:



ՍԵԼԵԿԵԱՆՆԵՐԸ ԵՒ ՊՏՈՒԷԼԷՆՆԵՐԸ.— Սելեկեան-
ներու համար Փիւնիկիւն, Պողոստինը Սիւրիան նոյսքան
անհրաժեշտ էին, որքան Պտղէմէկեաններու: Առանց այս
երկիրներու, մանաւանդ առանց ասոնց նաւահանգիստնե-
րու Սելեկեան պետութիւնը կը գառնար ցամաքային պե-
տութիւն, կը կտրուէր յունական աշխարհէն, ուրկէ ան
կ'ըստանար վարձկան զօրք, իր նոր կառուցուող քաղաք-
ներու համար յոյն և մակեդոնացի բնակչութիւն. ասոնք
էին իր իշխանութեան յենարանը: Կտրել Սելեկեաններուն
Միջերկրականէն՝ կը նշանակէր անոր զոյութեան հիմերը

խախտել: Միևս կողմէն կայսրութեան մէջ կատարուող դէպքերը, մեծ ու փոքր ազգերու ապստամբութիւնները՝ կը մղէին անոր դէպի Միջերկրականի փեերը, ուր աւելի զգալի էր հելլենիզմի ազդեցութիւնը և ուր կար յոյն ու հելլենացած բնակչութիւն: Իրանեան ազգերու քաղաքական անկախութիւն ձեռք բերելով՝ միայն Սիւրիան էր, որ կը մնար անոնց յենարանը: Այս դէպքերու ազդեցութեան տակ Միջագետքէն մայրաքաղաքը կը փոխադրուի Անտիոք:

Որքան Իրանը, Միջագետքը և Միջին Ասիոյ մէկ մասը Սելեւկեաններու ձեռքն էր, Արեւելքի բարիքներու տէրը անոնք էին այս բարիքները դէպի արեւմուտք տանող ցամաքային ուղիները անոնց ձեռքն էր. այս հարստութեանէն օգտուելու համար տնոնք պիտի ջանային Միջերկրականի նաւահանգիստները պահել իրենց ձեռքին և անմիջապէս առեւտրական կապերով կապուիլ Յունաստանի և Միջերկրականի արեւմտեան աւազանի հետ: Տեսանք որ հեռաւոր արեւելքի, Հնդկաստանի և Արաբիոյ առեւտուրի ծովային ուղիները կը գտնուէին Պտոլէմէեաններու ձեռքը. անոնք այս առեւտուրի համար ապահովեցին Միջերկրականի, Եգէեան կղզիներու, Յունաստանի շուկաները: Նոյն նպատակին կը ձգտէին Սելեւկեանները. հոսկէ ալ տեւական պատերազմներ երկու մրցորդ ուժերու մէջ: Երբորդ դարուն Պտոլէմէեաններն է, որ յաջողութիւն կ'ունենան և իրենց մենատիրութիւնը կը հաստատեն Միջերկրականի արեւելեան աւազանի մէջ: Անոնք Յոյներու բարեկամութիւնը շահելու համար յայտարարեցին իրենց յունական ազատութիւններու պաշտպան. անոնք կը մտածէին Եգէեան կղզիներէն և յոյն քաղաքներէն ստեղծել դաշնակցութիւն մը, որ պէտք է ուղղուած ըլլար Մակեդոնիոյ Անտիգոն-հաննիսոս դէմ: Բայց Մակեդոնիան ասոր հետ հաշտուիլ չէր կրնար. անոր համար անկարելի էր Յունաստանի վրայ իշխել, առանց Եգէեան ծովու: Երկրորդ և երրորդ դարուն Եգէեան ծովու և կղզիներու տիրապետութեան հարցը

Le morcellement de l'EMPIRE SÉLEUCIDE et de l'EMPIRE MAURYA

au milieu du 2^e siècle av. J.-C.



ՍԵԼՆԻԿԵԱՆ ԿԱՅՄՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱՀԱՏՈՒՄԸ

կը մնար հելլենիստական պետութիւններու արտաքին քաղաքականութեան գլխաւոր խնդիրը:

ՍԵԼԵՒԿԵԱՆ ՍՈՒՐԻՈՑ ԿԱԶՄՈՒԻԼՂ.— 300 թ. Սելեւկիոսը Որոնդէսի վրայ կառուցեց Անտիոքը: Հետագային ան դարձաւ հելլենիստական պետութիւններու գլխաւոր քաղաքներէն մէկը: Մայրաքաւառներու անջատումով մասկեդոնական բանակները, որոնք ցրուած էին ամբողջ Ասիոյ մէջ կեդրոնացան Սիւրիա և հարեւան երկիրները՝ Գոմոջէն, Օսրոյէն: Այս տեղերը անոնք հիմնեցին զինուորական գաղութներ, ստացան հողեր և դարձան արտօնեալ բնակչութիւն տեղացիներու հանդէպ: Երկրի ամբողջ վարչութիւնը անցաւ Մակեդոնացիներու ձեռքը. Սիւրիայէն ստեղծուեցաւ մէկ նոր Մակեդոնիա. բազմաթիւ տեւանուներ փոխուեցան և ստացան նոր մակեդոնական անուններ: Նոր պետութեան համար Սիւրիան կը ներկայացնէր ռազմական դիրք՝ հոնկէ կարելի էր իշխել Փոքր Ասիոյ վրայ՝ Կիլիկիան դուռներէն անցնելով: Եփրատի եւ Բաբելոնի վրայով դիւրութեամբ կարելի էր մտնել Իրան: Սակայն Սիւրիան նոր ստեղծուած կայսրութեան կեդրոնը չէր. ան արտակեդրոն դիրք ունէր և չէր կրնար իր շուրջը հաւաքել կայսրութեան մնացած մասերը: Աւելի յարմար էր Միջագետքը որպէս կեդրոն, բայց ան ալ հեռու էր յունական աշխարհէն, Միջերկրականէն, որու ափերուն պիտի լուծուէին ժամանակի ամենէն գլխաւոր քաղաքական հարցերը: Ուստի Սելեւկեանները Միջագետքէն փոխադրուեցան Միջերկրականի ափերը. ասոր հետեւանքով Սիւրիոյ նկատմամբ կայսրութեան արեւելեան մասերը դարձան միայն յաւելուած, որ շատ թոյլ կապերով միացած էր կեդրոնին: Շուտով այդ թոյլ կապն ալ կտրուեցաւ: Բայց այս ընտրութիւնը կը նշանակէր, թէ անոնք կը հրաժարուին Աքէմէնեան կայսրութեան մեծագոյն մասէն և կը լքեն Աղեքսանդրի ծրագիրը՝ համերաշխ գործակցութիւն իրանական և յայն-մակեդոնական ուժերու մէջ՝ համաշխարհային միապետութիւն ստեղծելու համար:

ՓՈՒՔՐ ԱՍԻԱՆ.— Ոչ պակաս կարեւոր էր Մելեկեաններու համար Փոքր Ասիան: Այստեղ Լիսիամաքի անկումէն ետքը անոնք հաստատուեցան: Փոքր Ասիան ազգերու, ցեղերու, քաղաքներու, մշակոյթի խառնարան մըն էր, որ դիւրութեամբ կրնար դառնալ ազգամիջեան կռիւներու թատերաբեմ: Եգիպտոսը ազգագրական տեսակէտէն միատարր էր, Սիւրիոյ և յատկապէս Փոքր Ասիոյ մէջ իրարու հետ կը մրցէին բազում ազգեր, ցեղեր և լեզուներ: Այդ պատճառով ալ Եգիպտոսի և Սիւրիոյ պայքարներու ժամանակ ամենէն բարդ հարցերը այս վայրերէն է որ կը ծագէր: Փոքր Ասիոյ անկախացած պետութիւններէն ամենէն հետաքրքիրը Պերգամոն է:

ՊԵՐԳԱՄՈՆ.— Աղեքսանդրի զօրավարներէն մէկը, Լիսիամաք, Փոքր Ասիական իր կալուածները պահելու համար ռազմական յենարան դարձուց Պերգամը՝ յունական մէկ քաղաք Գաիկ դետի ափին: Մելեկեաններու դէմ մղած կռիւներու մէջ Լիսիամաք սպաննուեցաւ, անոր նոր տէրը՝ Փիլիսքեր շարունակեց կռիւը, չի հնազանդեցաւ Մելեկիոսին (238 թ.): Այս ժամանակէն ալ Պերգամը սկսաւ իր անկախ պետական կեանքը: Քիչ ետքը ան ընդունեց Սիւրիոյ հովանին, բայց Եվմեհ I ի (263) օրով ան բոլորովին անկախացաւ: Անոր մեծադոյն դէմքերէն էր Ասալլա I. (241—191), ան երկար կռիւներ մղեց Ղալաթացիներու դէմ և յաջողեցաւ անոնցմէ ազատագրել Փոքր Ասիոյ արեւմտեան և կեդրոնական մասերը: Ան հովանաւորեց յոյն քաղաքներուն, ազատեց անոնց Ղալաթացիներուն պարբերաբար կրկնուող արշաւանքներէն, խաղաղութիւն և սընտեսական բարգաւաճում տուաւ անոնց: Իր պետութիւնը ընդարձակեց և մեծ ջանք տարաւ առետուրի և արդիւնաբերութեան համար նիւթապէս հարստացաւ և պահեց ուստեղ զօրաբանակ: Արեւելքի պատմութեան մէջ ան հետաքրքիր է նաև այն բանով, որ առաջինը եղաւ Հռոմի քաղաքական կշիռը արժէքաւորող արեւելեան գործերու մէջ և գործակցեցաւ անոր հետ: Յենուելով Հռոմի վրայ Պեր-

գամի տէրները կեդրոնական և հարաւարեւմտեան Փոքր Ասիայէն կազմեցին մեծ պետութիւն մը: Պերգամի պետութեան ուժեղացումով Սելեւկեանները նահանջեցին Փոքր Ասիայէն:

ԱՆՏԻՈՒՌՈՍ III ՄԵԾԸ.— Երրորդ և երկրորդ զարերուն Սելեւկեանները ընկրկեցան ամեն կողմէն, կեդրոնացան Սիւրիոյ մէջ, դարձան Սիւրիոյ պետութիւն: Բայց անգամ մըն ալ անոնք հաւաքեցին իրենց ուժերը և փորձեցին վերագրաւել կորսնցուցած երկիրները և վերակազմել Սելեւկեան կայսրութիւնը: Անտիոքոս III Մեծը ժամանակ մը կասեցուց անոր անկման գործողութիւնը: Տեսնաք, որ ան սկիզբը պարտուեցաւ Պտղէմէ I Վ-էն և անոր զիջեց հարաւային Սիւրիան և Պաղեստինը: Բայց ատկէ ետքը ան պարտութեան մատնեց քաղմաթիւ ինքնազուլս սատրապութիւններուն 212-էն մինչև 204 թիւը, յաղթական արշաւանք կատարեց Միջագետք, Իրան և հասաւ մինչև Ենտոսի ափերը: Ամեն տեղ վերահաստատեց իր գերիշխանութիւնը: Միանալով Ֆիլիպ V-ըրդի հետ ան պատերազմեցաւ Եգիպտոսի դէմ և պարտութեան մատնեց անոր, քայց այդ պահուն արեւելեան գործերուն միջամտեց Հռոմը: Վերջինս իր զէնքերն ուղղեց նախ Ֆիլիպ Մակեդոնացիի դէմ, Կիցոսեմալի ճակատամարտի մէջ 197 թիւին, անոր պարտութեան մատնեց, ապա իր բանակները ուղղեց Անտիոքոս Մեծի դէմ: Վերջինս միջամտեր էր Հռոմի և Ֆիլիպի վէճերուն. փորձեր էր օգնել Ֆիլիպին, զօրք էր ուղարկեր Պալքանները, բայց անյաջողութիւն էր կրեր: Յունաստանի մէջ ան պարտուեցաւ Թէրմոպոլի մօտերը և իր բանակները հանեց Եւրոպայէն: 190 թիւին Մագնեզիոյ դաշտին վրայ տեղի ունեցաւ Հռոմի և Սելեւկեան թագաւորի մէջ վճռական ճակատամարտը Անտիոքոս պարտուեցաւ: և 188 թիւին կնքեց Ապամեի դաշինքը: Սելեւկեանները հրաժարեցան Փոքր Ասիայէն, դադարեցան ծովային ուժեր ունենալէ: Ամեն կողմէն անդամահատուած, ուժասպառ և աղքատացած Սելեւկեան հարստութիւնը դեռեւս տէր էր

Սիւրբիոյ, մինչեւ առաջին դարը, երբ Տիգրան մեծը գրաւեց Սիւրբիան, Անտիոքը դարձուց իր մայրաքաղաքներէն մէկը: Բայց Տիգրանի անյաջողութիւններէն ետքը Պոմպէտը արեւելքի բազմաթիւ հարցերու հետ լուծեց նաև Սելեւկեաններու խնդիրը: 63 թիւին ան Սիւրբիան յայտարարեց հռոմէակոն հանրապետութեան նահանգներէն մէկը:

ՍԵԼԵՒԿԵԱՆՆԵՐԸ ԵՒ ՀՐԷՈՒԹԻՒՆԸ.-- Տիրոսի պաշարման ժամանակ Աղեքսանդրը պահանջեց Հրէաներէն ընդունիլ իր իշխանութիւնը: Քահանայապետը իր պատասխանի մէջ կը յայտնէր, թէ իրենք Դարեհին հաւատարիմ ըլլալու երդում են ըրած, չեն կրնար դրժել իրենց երդումը: Բայց Տիրոսի անկումով՝ Հրէաները յարմարեցան նոր պայմաններուն և 332 թիւին հպատակեցան յաղթողին: Միակ ժողովուրդն էր, որ Պարսից իշխանութենէն գոչ էր, չփորձեց ապստամբիլ անոր դէմ: Քաղաքական անկախութեան կորուստէն ետքը ան Պարսից կայսրութեան մէջ ապրեցաւ որպէս ազգային-կրօնական համայնք մը հաւաքուած իր սինագոգի, տաճարի շուրջը: Քահանայապետը դարձաւ անոր ներկայացուցիչը՝ արտաքին աշխարհի առաջ:

Ժողովուրդն ալ ապրեցաւ իր կրօնով, Զանաց պահել Եհովայի պատուիրանները, օրէնքները, մեկուսացաւ ուրիշներէն և սպասեց մեսիային որ պիտի գար անոր փրկելու: Աղեքսանդրը բարեացակամ էր Հրէաներու հանդէպ, անոնց արտանութիւնները պահեց, իսկ երբ հիմնեց Եգիպտոսի Աղեքսանդրիան՝ Հրէաներու բաւական մեծ թիւ փոխադրուեցաւ այնտեղ և հիմք դրաւ այդ քաղաքի հրէական գաղութի: Անոր մահէն ետքը Պտղէմէն գրաւեց Պաղեստինը, միացուց Եգիպտոսին: Բայց բազմաթիւ անգամ այդ երկիրը անցաւ ձեռքէ ձեռք՝ Պտղէմէեաններու և Սելեւկեաններու կռիւներու մէջ: Միայն 203 թ. ետքը Պաղեստինը վերջնականապէս մաս կազմեց Սելեւկեան կայսրութեան: Երկու իշխանութեանց ժամանակ ալ Հրէաները ունէին ազգային-կրօնական ինքնավարութիւն: Անտիոքոս

Մեծ ի օրով գոյութիւնն աւելի ճեղքակոյտս մը, որ իր նիստերը կը գումարէր Երեւասողմի մէջ՝ քահանայապետի նախագահութեամբ: Բայց հելլենիստական միապետներու տիրակալութեան ժամանակ հոս կը թափանցէ յունական մշակոյթը՝ յոյն-մակեդոնական պաշտօնէութեան և զօրքի միջոցով: Բազմաթիւ քաղաքներ ձկը հելլենական: Շատ մը քաղաքներ կը հիմնուէին Մակեդոնացիներուն կողմէն. անոնց բնակչութիւնը մեծ մասամբ Յոյներ էին: Նոր կառուցուած քաղաքները օժանդակուեցան յունական քաղաքներու բոլոր յարմարութիւններով: Ունէին լայն պողոտաներ, բազմաշարկ շէնքեր միջնակարգ դպրոց, թատրոն, մրցադաշտ և կրկէս: Ամենուրեք տարածուեցաւ յոյն լեզուն, յունական հիւսուածեղէնը, և բազմաթեանակ բարիքներ երեւացին Պաղեստինի բոլոր քաղաքներու մէջ: Հրէութեան մէջ որոշ մաս կ'ընդառաջէր քաղաքակրթական այս նոր հոսանքին, կ'իւրացնէր յունարէնը, հրէական իր անունները կը յարմարեցնէր նոր օտար հնչիւններուն կը նմանեցնէր, կը ձեւափոխէր: Սելեւկեան իշխանութեան տակ հրէութեան նորանոր զանգուածներ գաղթեցին կայսրութեան ուրիշ մասերը՝ զիսաւորուպէս առեւտրական քաղաքները և նուիրուեցան առեւտուրին: Ասոնք է, որ կազմեցին հրէութեան այն հատուածը, որ կոչուեցաւ դիսպորա—սփիւռք: Օտար քաղաքներու մէջ ալ հաստատուելով Հրէաները կը պահէին իրենց ազգային կրօնական արտօնութիւնները: Ատոր համար իսկ անոնք կ'ապրէին խմբուած, միեւնոյն թաղամասի մէջ: Աղեքսանդրիան դարձաւ սփիւռքի հրէութեան ամենամեծ կեդրոնը. նոյնիսկ օտար հողի վրայ՝ Եգիպտոսի մէջ անոնք կառուցեցին նոր տաճար Եհովային համար:

ՀՐԷԱԿԱՆ ԱՊՍՏՈՒՄԲՈՒԹԻՒՆ. — Յոյն-հրէական գործակցութիւնը կրնար երկար շարունակուիլ եթէ Սելեւկեան միապետները յարգէին Հրէաներու ազգային կրօնական իրաւունքները: Բայց Անտիոքոս IV ըդ 169 թ. սկսաւ հաւածել հրէութիւնը. ան աւարեց Երուասողմի տաճարը և

կոտորեց Հրէաներուն, Անտիոք փոխադրեց բաղարջ հացի սեղանը և եօթնաթեւեան աշտանակները: 168 թ. կրկնուեցաւ նոյն բանը. ան աւերեց և աւարեց տաճարական հարստութիւնը, այրեց Երուսաղէմը: Ապա արգիլեց Ենոփայի զոհաբերութիւնը, շաբաթ օրը տօնելը և թլպատումը, երբայական գրքերը այրեց և նոյն տարուայ վերջին Երուսաղէմի տաճարի մէջ տեղաւորեց Իւպիտէրի արձանը և պահանջեց միայն անոր զոհեր մատուցանել: Հրէութիւնը իր անցեալին մէջ կորսնցուցեր էր շատ բան, իր պետութիւնը, Յոյներու թափանցումով կը վտանգուէր անոր լեզուն, բայց ան պահեր էր իր կրօնը և անոր հետ կապուած սրբութիւնները, ծէսերը, արարողութիւնները: Ան աղգ էր և շողկապեալ միութիւն միայն իր կրօնով: Անտիոքոս VI-րդ կը հարուածէր այդ կրօնին՝ միութեան զերջին կապը կը խորտակուէր: Ասոր դիմաց հրէութիւնը ըմբոստացաւ: Շարժման գլուխը կանգնեցաւ քահանայական դասը, որովհետեւ ամենէն շատ ան կը տուժէր հարուածէն՝ կը կորսնցնէր իր դիրքը, իր հարստութիւնը: Մասաթիա քահանան անցաւ ապստամբներու գլուխը: Ապրտամբութիւնը ծագեցաւ 167 թ. և տեւեց շատ երկար ու անցաւ քանի մը փուլերով:

Կռիւնները սկիզբը պարտիզանական բնոյթ կը կրէին. հրեայ հայրենասէրները յանկարծակի կը յարձակէին մակեդոնական բանակներու վրայ, քաղաքներու և ամրոցներու մէջ, կը պաշարէին անոնց՝ նախքան անոնց միանալը: Հրէութիւնը կրցաւ առաջին շրջանին համախմբել ապրտամբ ուժերը. կազմակերպել անոնց: Այս պատրաստութեան մէջ մեռաւ Մատթիան 166 թիւին և զործի ղեկավարութիւնը ինկաւ անոր որդուն՝ Յուդայի ձեռքը: Ան դարձաւ վերածնունդ հրութեան հերոսը: Յուդան իսկական հիմնադիրն է հրէական անկախութեան: 166 թիւին Սելեուկեան բանակներու վրայ ան տարաւ փայլուն յաղթանակներ. ասոր հետեւանքով ան կոչուեցաւ «Մակկարէ» որ կը նշանակէ «մուրճ»: Յաղթական կռիւններէն ետքը Յուդան

վերահաստատեց Եհովայի պաշտամունքը, տաճարը մաքրուեցաւ և հրեաներու կեանքին մէջ բռնեց իր նախկին տեղը, Անտիոքոս IV-րդին յաջորդեց իր որդին Անտիոքոս V-րդը (164—162): Ան շարունակեց կռիւները հրէութեան դէմ. 163 թիւին տեղի ունեցաւ Բեսուրաի ճակատամարտը: Յուդան հարկադրուեցաւ նահանջի և յոյն-մակեդոնական բանակը պաշարեց Երուսաղէմը: Բայց հրեաներուն՝ կործանումէն փրկեց Սելեւկեան կայսրութեան ուրիշ վայրերու մէջ տեղի ունեցող ապստամբութիւնները: Անտիոքոս V որդի կացութիւնը այնքան վատ էր, որ ան խաղաղութեան դաշինք առաջարկեց Յուդային: Կրօնական ազատութեան սկզբունքը վերահաստատուեցաւ, վերականգնուեցաւ հալածանքներէն և ապստամբութենէն առաջ եղած կացութիւնը: Պաղեստինը նորէն մաս կը կազմէր Սելեւկեան պետութեան, բայց ունէր իր ինքնավարութիւնը: Միայն թէ Սելեւկեան ղեկավարներու համար այս խաղաղութիւնը լոկ զինադադար մըն էր. դըժգոհ էին անկէ նաև հրէութեան ծայրայեղները, որոնք կը ձգտէին բոլորովին անջատուիլ Սելեւկեաններէն: Այսպիսի միջոցառումի մէջ 160 թիւին նորէն վերսկսեցան կռիւները. Յուդան մեծ յաղթանակ տարաւ յոյն մակեդոնական բանակներու վրայ: Աղասայի ճակատամարտը մեծ ազդեցութիւն թողուց հրէութեան վրայ: Այնուհետև ամեն տարի այդ կը տօնէին որպէս «Նիկանոցի օր», պարտուած և սպաննուած Սելեւկեան զօրավարի անուհով: Բայց 160 թիւի Մայիսին մէկ նոր ճակատամարտի մէջ Յուդայի զօրքը ջարդուեցաւ և ինքն ալ սպաննուեցաւ կռուի մէջ:

ԱՊՍԱՄԲՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԸ ԵՒ ՀՐԷԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹԻՒՆԸ. — Շարժման ղեկավարութիւնն անցաւ Յուդայի կրտսեր եղբօր՝ Յովքսաբանին: Յորդանանի ափին մղած մէկ ճակատամարտը վճռական արդիւնք չտուաւ. թշնամի կողմերը պահեցին իրենց դիրքերը. երկու տարի 160-էն մինչև 158 թիւը խաղաղ անցաւ, բայց այս թիւին Սելեւ-

կեանք զօրաբանակ մը պաշարուեցաւ և անձնատուր եղաւ։ Բանակի հրամանատարը խաղաղութիւն կնքեց։ Սեւեակեանները չհաշտուեցան ասոր հետ, երկու կողմերն ալ մնացին իրենց դիրքերու վրայ։ Սեւեակեան կայսրութեան մէջ ներքին ապստամբութիւնները անպակաս էին, քաղաքներ, ազգեր ու ցեղեր ամեն ճիգ կ'ընէին ազատագրուելու օտարի իշխանութենէն, նոյնիսկ Սիւրիան հանգիստ չէր։ Միւս կողմէն քահակալական պայքարը և պալատական դաւադրութիւնները անպակաս էին։ Սեւեակեանները այս պայմաններու մէջ անկարող էին իրենց բոլոր ուժերը հանել ապստամբ հրէութեան դէմ՝ վերջիններուն կ'օգնէին սփռուքի հրէութիւնը՝ յատկապէս Եգիպտոսի հարուստ հրէութիւնը. անոնք կ'ուղարկէին և դրամ և կամաւորներ շնորհաբերէին Սեւեակեաններու վրայ։ Վերջիններս այնքան թուլցած էին, որ արքայական գահի բոլոր թեկնածուները օգնութիւն կը խնդրէին նաև Յովնաթանէն։ Ան հրէական շահերը ի նկատի ունենալով, մերթ այս, մերթ միւս թեկնածուին կ'օգնէր։ 143 թիւին ան սպաննուեցաւ Սեւեակեաններու դաւադրութեամբ և հրեայ ապստամբներու գլուխն անցաւ Յովնաթանի մեծ եղբայրը՝ Սիմոնը որ ունէր լաւ բանակ, կազմակերպուած իշխանութիւն։ Ան Դիմետրուս II նիկատորէն ձեռք բերաւ Պաղեստինի ապահարկ ըլլալու օրէնքը։ 142 թիւին կնքուեցաւ դաշինք երկուքի մէջ, որով հիմնաւորուեցաւ անկախ Պաղեստինը Աստուծոյ հարստութեան տակ։ Այս տոհմն էր տարած անկախութեան պայքարը, ան ալ կանգնեցաւ իշխանութեան գլուխը։ 139 թիւին Սիմոնը անկախ Հրէաստանի առաջին դրամը կտրեց։ Չորս և կէս դար օտարներու՝ Բաբելոնի, Պարսիկներու, Սեւեակեաններու իշխանութեան տակ մնալէն ետքը Հրէութիւնը դարձաւ ազատ ազգ իր պետութեան մէջ ամփոփուած։

Դ. ԳԼՈՒԽ

ՆԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ

ՊԵՏՈՒԹԻՒՆԸ, ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

ԵՒ ՄՇԱԿՈՅԹԸ

Հելլենիստական միապետութիւններու մէջ իշխանութիւնը կը գտնուէր մակեդոնական ծագում ունեցող միապետներու ձեռքը: Ասոնց յենարանը Յոյներէն և Մակեդոնացիներէն կազմուած վարձկան բանակն էր. ասոնց կից կար ժամադակ բանակ «բարբարոսներէն», այսինքն արեւելքի բոլոր ժողովուրդներէն կազմուած, որոնք մասնակից չէին յոյն քաղաքակրթութեան: Այս բանակը կը կազմուէր յատուկ գործակալներու միջոցով, որոնք Յունաստան, Մակեդոնիա, Թրակիա, Փոքր Ասիա և այլուր շրջելով կը հաւաքէին զինուորներ, հելլենիստական թագաւորութիւններու համար: Երկրորդ յենարանը յոյն բնակչութիւնն էր, որ մեծազանգուած ձեւով կը գաղթէր Փոքր Ասիա, Եգիպտոս: Այս գաղթը տեղի կ'ունենար տարրերային ձեւով՝ Յունաստանը չէր կրնար կերակրել մեծ բնակչութիւն. հարուստ արեւելքի դռները բաց էին անոնց առաջ. նոր իշխողները կը խրախուսէին Յոյներու գաղթը թէ իրենց պետութիւններու պաշտպանութեան և թէ հարստացման համար, եկուորները կը կազմէին արտօնեալ դաս, հասարակութեան բարձր խաւը, անոնցմէ դուրս կուգային պետական պաշտօնեաները: Յոյնը և Մակեդոնացին տեղացիներու հետ համեմատած փոքրաթիւ էին, բայց վարիչ, կազմակերպուած, զինուած խաւն էին:

ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ՄԻԱՊԵՏՆԵՐՈՒ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ.—

Ասոնք օտար էին տեղական բնակչութեանց, եկուորներ էին ու նուաճող: Ու եթէ անոնք հաստատուեցան, ու երկար իշխեցին արեւելքի մէջ, պատճառն այն է, որ ասիական ժողովուրդները անկազմակերպ էին, հալածուած ու մասամբ բնաջնջուած էին անոնց վարիչ դասերը և որ ամենէն կարեւորն է՝ արեւելեան աստուածներու քուրմերը միացան հելլենիստական միապետներու գործին և նպաստեցին ասոնց տիրապետութեան: Նոր թագաւորները ջանացին կազմակերպել լաւագոյն ձեւով տեղացիներու աշխատանքը և անոնց շահագործումը: Արեւելքի մէջ այս նոր բան մը չէր. ատկէ առաջ ալ ազգային-բնիկ իշխողներու ուժն ու հարստութիւնը հիմնուած էր աշխատաւորներու՝ գիւղացիներու, արհեստաւորութեան, ստրուկներու աշխատանքի շահագործման վրայ: Հելլենիստական շրջանի թագաւորները անոնց գործի շարունակողներն էին: Ամբողջ երկիրը իր բոլոր հարստութեամբ պետութեանն էր, իսկ պետութիւնը կը նոյնանար թագաւորի անձի հետ: Ասոնք առանց հակակշռի կը տնօրինէին երկրի հարստութիւնը. բնակչութեան շահերը կը զոհաբերէին իրենց տինաստիական շահերուն: Այս գործելակերպը բնաւ դէմ չէր արեւելեան մտայնութեան:

ԻՍԽԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՔԸ.— Հելլենիստական թագաւորներու իշխանութիւնը հիմնուած էր նուաճման իրաւունքի վրայ: Ոչ ոք չէր հարցնէր նուաճուած ժողովուրդներու կամքը՝ ինչպէս մինչ այդ չէին հարցնէր արեւելքի բոլոր իշխողները: Ան մէկ իրաւունք ունէր միայն՝ հպատակուիլ նոր տիրողին, ինչպէս ժամանակ մը կը հպատակուէր իրենց շարքէն բարձրացող տիրողներուն: Աղեքսանդր Մակեդոնացին արեւելքի մէջ՝ ամենուրեք յայտարարուեցաւ յաջորդ տեղական իշխող հարստութիւններու և որպէս այդպիսին անոր աստուածային ծագում վերագրեցին: Հելլենիստական թագաւորները համարեցին իրենց Աղեքսանդրի յաջորդներ և պահանջեցին, որ նոյն աստուածային

պաշտամունքը իրենց ալ մատուցուի: Տիրազ մտայնութեանը այս պահանջը հակառակ չէր: Նոր հարստութիւնները՝ Պտղէմէեան և Սելեւկեան յայտարարուեցան աստուածներէն սերած և անոնց թագաւորներն ալ աստուածային իշխանութեան տէրեր:

Թագաւոր-աստուածը թացարձակ իշխանութիւն ունէր իր երկրի, անոր բնակչութեան, հարստութեան, կեանքի և գործի վրայ: Ասոր հետեւանքով ալ անոնց իշխանութեան մէջ երկգիմի բան մը կար. Յոյներու և Մակեդոնացիներու համար անոնք միայն Աղեքսանդրի յաջորդներ էին. այն Աղեքսանդրի, որ յունական միութեան սպարապետն էր և մակեդոնական թագաւոր. տեղական բնակչութեան համար անոնք արդէն հանգամ՝ արեւելեան աստուածային զօրութեան տէր հին թագաւորներու ժառանգներն էին:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԵՐԿՈՒ ԶԵՒ. — Հելլենիստական միապետութիւնները երկու ազգաբնակչութիւն ունէին շատ ու ժողովրդականութեամբ — եկուոր յոյն-մակեդոնական և բնիկ տեղականը: Տեղականը, բնիկը անձանօթ էր որեւէ ինքնավարութեան: Ան միայն ենթարկուիլ գիտէր վերէն եկող հրամաններուն թագաւորին և անոր քաղմաստիճան պաշտօնէութեան: Ան սովոր էր ամեն բան վերէն սպասելու: Յոյները գարեք շարունակ մեծ ու փոքր քաղաք-պետութիւններու մէջ մարզուեր էին ինքնավար ձեւով իրենց հարցերը լուծելու: Հրեաները օտարներու իշխանութեան տակ կազմակերպուած էին որպէս ազգային-կրօնական համայնք, որ իր լուր գործերը ինքը կը վարէր: Իշխանութիւնը չփոքրեց յոյն քաղաքներու ինքնավարութիւնները ոչնչացնելու, քայքայ ջանաց կրճատել անոնց քաղաքական իրաւունքները, թայլ չտուաւ, որ պետութեան մէջ անոնք պետութիւն գառնան: Անոնցմէ հարկ կը վերցնէին, քայքայ շատ աւելի պակաս քան տեղացիներէն և ինքնավար քաղաքներու համաձայնութեամբ:

Եթէ յոյն քաղաքները գաղբեցան գոյութիւն ունենալ որպէս պետութիւն սպա տնտեսապէս անոնք հզօրացան,

որովհետեւ անոնց առեւտուրի առաջ բացուեցան, ընդարձակ շուկաներ: Նոր ստեղծուած պետութիւնները մեծ էին և աւելի խիտ բնակչութիւն ունէին քան արեւելեան հին միապետութիւնները: Եգիպտոսը ունէր աւելի քան 100000 քառ. քիլոմետր տարածութիւն, եօթ միլիոն բնակչութեամբ: Սելեւկեան պետութիւնը տարածուած էր չորս միլիոն քառակուսի քիլոմետրի վրայ և ունէր երեսուն միլիոն բնակչութիւն: Այս հսկայ պետութիւնը մէկ ընդարձակ և ազատ շուկայ էր յունական ինքնավար քաղաքներու բարիքներու համար:

ՅՈՅՆԵՐՈՒ ՅՐՈՒՄԸ.— Աղեքսանդրէն առաջ ալ Յոյները կը լքէին իրենց հայրենիքը և կը գաղթէին դէպի արեւմուտք: Այս գաղթի հետեւանքով բովանդակ Միջերկրականի տփերուն Յոյներ հաստատուեցան: Անոնք ամենուրեք գործօն, շարժուն տարր էին, առևտուրը, արհեստները առին իրենց ձեռքը, իսկ արուեստներուն, թատրոնին, փիլիսոփայութեան ու քաղաքական մտածողութեան տուին նոր թափ: Աղեքսանդրէն ետքը յունական գաղթը ուղղուեցաւ դէպի արեւելք: Աղեքսանդրը անոնց առաջ բացաւ հարստանալու, յառաջդիմելու լայն հնարաւորութիւններ: Յունաստանէն կը գաղթէին բոլոր դասերը՝ գիւղացին, արհեստաւորը, որակուած մտաւորականը, զինուորը և հարստացած առեւարականը:

Աղեքսանդրէն առաջ հինգերորդ և չորրորդ դարերուն Միջերկրականի թնտեսութեան՝ առևտուրի և արդիւնաբերութեան կեդրոնը Աթէնքն էր, իր ժամանակի ամենէն հարուստ, ճոխ քաղաքը, Յունաստանի մտաւորական կեանքի օճախը, ան էր քաղաքական վարիչը ամբողջ Յունաստանի քաղաք պետութիւններու: Այժմ հելլենիստական միապետութիւններու ստեղծումով քաղաքական և տնտեսական կեանքի առանցքը փոխուեցաւ: Տնտեսութեան մէջ Աղեքսանդրիան բռներ էր Աթէնքի տեղը. ան կապուած էր հեռաւոր Արեւելքի, Հնդկաստանի, արեւելեան Ափրիկէի, Արաբիոյ շուկաներուն հետ, ինչպէս և Միջերկրականի շուր-

Չը զսնտուող բոլոր երկիրներու հետ: Անոր հետ միասին տնտեսութեան մէջ մեծ դեր կը խաղան Միլիթը, Եփեսոսը, Պերգամը, Հոսդոսը: Արեւելքի բոլոր նաւահանգիստները արտակարգ շարժման մէջ էին. անոնք արտածումի և ներմուծումի մեծ կեդրոններէն մէկն էին՝ Աղեքսանդրիոյ հետ միասին: Հոս է, որ կը մշակուին քաղաքական, ռազմական ծրագիրներ՝ կռիւներու, երկիրներ գրաւելու, պետութիւններ կառուցելու կամ կառուցուածք քայքայելու նպատակով: Չնայեած արեւելքի քաղաքական բաժանումին, շնայեած յարատեւ կռիւներուն հելլենիստական արեւելքը տնտեսական տեսակէտէն մէկ մեծ միութիւն էր, մէկ հսկայ շուկայ, ուր կը հանդիպէին հեռաւոր ու մերձաւոր Արեւելքի բարիքները, վաճառականները: Հելլենիստական արեւելքի մէջ ստեղծուեք էր առևտրա-արդիւնաբերողներու մէկ դաս, քաղքենի, դրամատէր դասը, որ մեծ մասամբ յոյն էր իր անձնակազմով, բայց կային եւ տեղացիներ՝ փիւնիկէցի, սիւրիացի, եգիպտացի: Քաղքենի, պուրժուական այս դասը ինքն իր մէջ հատուած էր թաղում խմբաւորումներու. անոնք վաճառականներ, արդիւնաբերողներ, սեղանաւորներ, կապալառուներ էին. նաւերու և փոխադրական այլ միջոցներու տէրեր. քաղաքներու մէջ ունէին շէնքեր, մեծ կայաններ, մթերանոցներ: Առևտուրին և արդիւնաբերութեան մեծապէս կը նպաստէր ընդհանուր զբաւանիքը, որոնք մեծ վստահութիւն կը վայելէին արեւելեան շուկաներու մէջ և դիւրութեամբ կը փոխանակուէին ուրիշ գրամներով կամ բարիքներով: Երբորդ դարուն տիրապետողը եգիպտական դրամն էր: Համաշխարհային այս զարգացող տնտեսութեան կը նպաստէր ծաւալուած լեզուն: Ան նոր քաղաքակրթութիւն կը բերէր, նոր գրականութիւն, ան պետական լեզու էր. մեն տեսակ հաղորդակցութեանց միջոց: Անոր առաջ տեղական լեզուները նահանջեցին, իջտն հասարակութեան խոնարհ խաւերուն, դարձան բարբառներ: Նախկին՝ արեւելքի միջագային արամէական լեզուն ասպարէզէն քշուե-

ցաւ: Տեղական և ազգային լեզուներէն վեր կը բարձրա-
նար մէկ և համաշխարհային լեզու՝ յոյն լեզուն, որով կը
խօսէին և եգիպտական և սելեւկեան քաղաքաբնակը, եւ
Փոքր Ասիոյ յոյնն ու յունացածը և Իրանի ու Միջին Ա-
սիոյ զօրքը, վարիչ դասը, առևտրականն ու մտաւորակա-
նը: Անոր տարածողներն եղան վաճառականը, փիլիսոփան,
դերասանը, բժիշկը, զօրքը պաշտօնեան:

ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԸ.— Յունական մշակոյթի
այն շրջանը, որ կը հետեւի Աղեքսանդրի ասիական տի-
րապետութեան, կը հոչուի հելլենիստական: Ըստ ոմանց ան
արեւելքի մէջ մեծցած և արեւելեան մշակոյթով յագեցած
յունական մշակոյթի նոր աստիճանն է, որ կը զարգանայ
հելլենիստական թագաւորներու հովանիին տակ: Այս տե-
սակէտը միակողմանի է: Ճիշդ է Աղեքսանդրը Զանաց ա-
րեւելեան ժողովուրդներուն մօտեցնել, ձուլել յունական
մշակոյթի միջոցով, բայց յաջողութիւն չունեցաւ և անոր
յաջորդներն ալ չհետեւեցան այդ օրինակին: Արեւելքի,
ինչպէս և Յունաստանի մէջ յունական մշակոյթը քաղաք-
ներու մէջ ստեղծուեցաւ և հոն մեծցաւ: Ան յոյնի, մակե-
դոնացիի և հելլենացած ու քաղաքներու մէջ հաստատուած
տեղացիներու մշակոյթն էր: Աստիք բոլորը կը խօսէին
յոյն լեզուով: Այս շրջանակէն դուրս էր գիւղը. գիւղա-
կան զանգուածը կ'ապրէր իր ուրոյն կեանքով. կը պահէր
իր ազգային ասիական լեզուները, որ շատ տեղերու մէջ
բաժնուեցան բարբառներու: Ան կը պահէր իրեն արեւել-
եան աւանդութիւնները, կ'ապրէր իր փակ գիւղական
տնտեսութեան մէջ, քաղաքի բարիքներու կարիքը չունէր,
քաղաք չէր յաճախեր: Քաղաքներն ալ այս ընդարձակ
գիւղաբնակ երկիրներու հետ համեմատած շատ փոքր էին:
Անոնց ազդեցութեանց շրջանակն ալ սահմանափակ էր:
Ստեղծուեր էր երկու աշխարհ՝ քաղաքը՝ ուր իշխողը յոյն
լեզուն էր և յոյն մշակոյթը, գիւղը, ուր կը տիրապետէին
տեղական լեզուները և հինաւուրց անցեալի աւանդութիւն-
ներն ու կենցաղը:

Այսպիսի խիստ բաժանման հետեւանքով դժուար է մտածել, թէ արեւելեան հին քաղաքակրթութիւնները կըրնային խոր ազդեցութիւն թողնել յունական մշակոյթի վրայ և ստեղծել անոնցմէ նոր բան մը: Ապա կար և այն հոգեբանական վերաբերումը որ յոյնը դարեր շարունակ մշակեր էր: Անոր համար արեւելքցին «բարբարոս» էր, այսինքն մշակութապէս ետ մնացած, որմէ բան չունէր սպասելիք և սորվելիք: Տեղացին ալ հաշտ չէր անոր հետ, կը ջանար քիչ հանդիպիլ անոր և ասոր հետեւանքով անոնց մէջ չփռւմները հազուադէպ էին, սահմանափակ:

Ասոր պատճառով ալ կարելի է ըսել, որ հելլենիստական մշակոյթը շարունակութիւնն է հին յունական մշակոյթի: Այժմ միայն մենք կը նկատենք նոր նիւթերու մշակումը՝ արեւելեան պատմութեան, առասպելներու արկածախնդրութեանց: Մէկ բանի մէջ միայն նկատելի է արեւելեան ազդեցութիւնը՝ կրօնի մէջ: Ատ ալ այն պատճառով, որ դրսեկ տիրողները սերտ յարաբերութեան մէջ էին տեղական աստուածներու հետ՝ կապելով տիրակալելու իրաւունքը հին հարստութեանց հետ և ստանալով քահնանոցմէ: Ասոր հետեւանքով կրօնական շատ ըմբռնումներ և ծէսեր մտան Յոյներու մէջ: Յոյն միաքը՝ դարերու հովոյթով հասեր էր փիլիսոփայական և դրակա՞ն: Գիւտութիւններու հասունութեան, ստեղծեր էր որոշ գիտական և փիլիսոփայական սխտեմներ, հելլենիստական դարերուն ան դուրս կուգայ իր հունէն և խորապէս կ'ենթարկուի արեւելքի կրօններուն:

Հելլենիստական քաղաքակրթութեան բնորոշիչ գիծն այն է, որ ան դարձաւ համաշխարհի, իր մէջ առաւ բովանդակ Միջերկրականի աւագունը, արեւելքի լեռնային և անապատային գօտին, մինչեւ Միջին Ասիա, Հնդկաստան: Ան ստեղծեց քաղաքաբնականներու մշակոյթ: Ամենուրեք, բոլոր քաղաքներու մէջ բնակչութիւնը կ'ապրէր միեւնոյն մշակութային կենցաղային շրջանակի մէջ, կը յաճախէր միեւնոյն թատրոնը, կը լսէր միեւնոյն երգը և նուագը,

կը տեսնէր միեւնոյն ղերասաններուն՝ միեւնոյն ողբերգութիւններու մէջ, կը յաճախէր միեւնոյն դպրոցները, կ'ըստանար միեւնոյն հոգեկան և ֆիզիքական դաստիարակութիւնը. Աթէնքի, Աղեքսանդրիոյ, Պերգամի, Անտիոքի բարձրագոյն դպրոցներու մէջ ալ յոյն գիտուններն ու փիլիսոփաները կը դասախօսէին միեւնոյն նիւթերը, Եւմիայն ան, որ կը կրթուէր այս դպրոցներու մէջ, ով կը կարգար Հոմէրոսը, Պլատոնը և Սոփոկլէսը՝ կը դառնար քաղաքակիրթ մարդ:

Հելլենիստական քաղաքներն ալ հիմնովին կը տարբերուէին արեւելեան հին ձեւի քաղաքներէն: Անոր անհրաժեշտ մասերն էին լայն պողոտաները, քանի մը յարկանոց շէնքերը, հանրային հաստատութիւններ՝ թանգարան, թատրոն, տարրական և միջնակարգ դպրոցներ, գրադարաններ, զուարճութեան վայրեր, քաղաքներէն դուրս վիլլաներ և այդ բոլորէն բարձր քաղաքի պաշտպան աստուծոն նուիրուած տաճարը: Հելլենիստական այս քաղաքը գրաւչութիւն ունէր նաեւ տեղացիներու համար, որոնք կը հաստատուէին այնտեղ, կը նուիրուէին առեւտուրի, ճարտարարուեստի, արհեստներու. կ'իւրացնէին յոյն քաղաքներու կենցաղը, իրենց որդիներուն կ'ուղարկէին յոյն դպրոցներու: Առոնք ալ հետագային կը մասնակցէին յոյն մշակոյթի տեղծման, կը գրէին յունարէն, որով կ'ըստեղծուէր մշակոյթ մը, որուն վրայ աշխատեցան ոչ միայն յոյնը, այլև յունացած տեղացին:

Յոյն լեզուն և հելլենիստական մշակոյթը ոչ ոքի չէին պարտադրեր ոչ Սելեւկեանները ոչ ալ Եգիպտոսի Պտղեմէեանները: Ան կը տարածուէր, կը դառնար համալսարհային, որովհետեւ շատ աւելի բարձր էր, կատարեալ և տիրող ղեկավար խաւի. նիւթապէս հարստացածի մշակոյթն էր, լեզուն էր: Յունարէնով կարելի էր հարստանալ, գիրքի հասնիլ. յառաջդիմել: Այս ընդհանուր փաստէն մէկ չեղում կատարեց Անտիոքոս I V-րդ երբ փորձեց հրէութեան մէջ բռնի ուժով տարածել հելլենիզմը: Արեւելեան ասիա-

կան միջավայրի մէջ, սակայն յոյն մշակոյթը կորսնցուց իր ազգային բնոյթը և դարձաւ յունարէն խօսող բոլոր ազգերու և դասերու մշակոյթ դարձաւ հելլենիստական:

ԿրՕՆԸ.— Հելլենիստական կրօնը ընթացաւ արեւելքի լաւագոյն և խորունկ կրօններու ուղիներով, այսինքն կրօնը և բարոյական գաղափարները կապակցեցան իրարու հետ: Ասոր մեծապէս նպաստեց նաեւ ստոյիկեաններու իմաստասիրութիւնը, որ նախապատրաստեւ էր յոյնին նոր բարոյական ըմբռնումներու համար: Անոնք կ'աշխատէին անհատական և ընկերային հարցերու վրայ: Արեւելեան կրօններու ազգեցութեան տակ կ'ըզբաղուէին մահուան և անմահութեան հարցերով: Այս հարցը կը կապուէր անհատի այս աշխարհի մէջ վարած կեանքի հետ: Հելլենիստական միջավայրի մէջ ծնունդ կ'առնէր բարոյական հասունցման գաղափարը:

Յունական կրօնական արարողութիւնները, ծէսերը, միստերիաները լայնօրէն կը տարածուէին արեւելքի մէջ և այնտեղ տեղական աստուածներու համար մշակուած արարողութիւններու հետ միանալով՝ կը դառնային Յունաստան և կը բռնէին արեւմուտքի՝ Հռոմի ուղիին: Եթէ մէկ կողմէն արեւելքը կը յունականանար, ապա նոյն հելլենիզմի շրջանին և քիչ մըն ալ ետքը՝ արեւմուտքը կ'ընդունէր արեւելքի կրօնական-բարոյական գաղափարները և անոնց հետ կապուած խորհրդաւորութիւնները: Յոյնին կը շլացնէր արեւելեան կրօններու խորհրդաւորութիւնները, ճոխութիւնը, հարստութիւնը: Յաճախ ան այս բոլորը կ'ենթարկէր իմաստասիրական քննարկման: Բայց յոյնի ճկուն, արուեստաւար հոգին, ներդաշնակութեան հետապնդող միտքը արեւելեան կրօններու կոպիտ, զգայական կողմերը կը շտկէր, անոր կուտար աւելի գեղարուեստական և բարոյական կատարելիութիւն: Ծէսերն ալ կը նրբացնէր, արտայայտութեան ձեւերը կը շտկէր: Ասոնց հետ միասին ծնունդ կ'առնեն նոր Աստուածներ, Եգիպտոսի մէջ Սաւապիսը: Աննուրեք կ'ընդհանրանար Փոքր Ասիական Այլ Դիցուհի:

պաշտամունքը: Ան կը յեղաշրջուի իր ոգեկան կեանքով, իր պահանջներով: Աստուածները կը դառնան արդարութեան, մաքրութեան և բարի գործերու ներշնչողներ: Յունական մտքին բնու անձանօթ չէր Աստուածութեան մարդացումը. ան աշխարհ կ'իջնէ թագաւորներու, վարիչ դէմքերու մէջ, կը մարդանայ փրկելու համար. բարիք ընելու համար մարդկութեան: Հոսկէ ալ հելլենիստական թագաւորներու տիրոջասւտումը — Սոտէր՝ փրկիչ, Թէոս՝ Աստուած, Եվերգէր՝ բարեգործ, նոր Դիոնիսիոս, նոր Հե-րակէս:

ՀԱԿԱԿՐՕՆԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐ.— Կրօնական այս նոր համադրութիւններուն և նոր կրօնական գաղափարներու մշակման հետ հելլենիստական հասարակութեան մէջ կը զարգանար հակակրօնական և նիւթապաշտական տեսութիւններ: Անոնք կը պնդէին, որ մենք չունինք հաւաստի իմացութիւններ, զգայականը խաբուսիկ է, աստուածները մեզ համար անյայտ էակներ են, որոնց մասին մենք բան մը չգիտենք և անկարող ենք իմանալու: Անոնք մեր գննութեան ենթակայ չեն: Այս տեսութիւնը կը քանդէր ամեն կրօնի հիմք: Ան հետեւողականօրէն կը հասցնէր անաստուածութեան: Ասոնք կը հեղնէին հելլենիստական թագաւորներու և թագուհիներու աստուածացումը: Իմացաբանական հոսանք մը՝ սկեպտիզիմը՝ կը մերժէր թէ մարդը ունի կամ կրնայ հասնիլ կատարեալ ճշմարտութեան, հաւաստի իմացութեան: Այս ուսմունքը կասկածի տակ կ'առնէր և ժխտումի կ'ընթարկէր ամեն բարոյական և գիտական գաղափար, աստուածներու, հոգիներու գոյութիւնը: Նիւթապաշտները չունէին և չստեղծեցին աւելի բարձր տեսութիւններ և գաղափարներ. անոնք կ'աստուածացնէին յաջողութիւնը, բախտը. այս աշխարհի վայելքները, ամեն բան անոնց ուսմունքի մէջ կը սահմանափակուէր այս կեանքով: Այս բոլորը՝ շատ աւելի մատչելի էին հելլենիստական մարդուն, նոյնիսկ հաճելի, ուստի և նիւթապաշտութիւնը, ամեն ինչ կասկածի և մերժումի են-

թարկող ուսմունքները լայնօրէն կը տարածուէին քաղաքներու բոլոր խաւերու մէջ :

ԱՐՈՒԵՍՏ ԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆ.— Արուեստի և գիտութեան մէջ հելլենիստական միտքը մեծ յառաջդիմութիւն կ'ընէ : Յունական շրջանին արտակարգ կատարելութեան էր հասեր ողբերգութիւնը, այժմ ան տեղի կուտայ գրական նոր սեռերու առաջ . կ'ըստեղծուի Էպոսը . վէպը, որ ամենէն յարմար ձեւն էր նոր կեանքի վերարտադրութեան, երբ կատարուեր էին այնքան խոշոր աշխարհակալութիւններ, նուաճումներ, երբ մարդիկ ցուցահաններ էին այնքան մեծ հերոսութիւններ, կամքի ուժ, երեւան էին բերեր գերմարդկային ճիգեր : Նոր միջավայրի մէջ կը զարգանար կոմեդիան, կատակերգութիւնը : Անոր համար կեանքը կ'ըստեղծէ նոր տիպեր : Ասոնք գործի մարդիկ էին, նոր հարստացածները, որոնք իրենց ընտանեկան և ընկերային կեանքի մէջ երեւան կը բերէին բացասական գիծեր : Ասոնց շրջանակի մէջն է, որ կը զարգանայ արտակարգ նիւթապաշտութիւնը և այս աշխարհի հաճոյքներու ու վայելքներու պաշտամունքը : Կատակերգութեան փայլուն դէմքը Աթէնացի Մենանդրն է : Կատակերգութեան հետ կը ծաղկին նաև գրական նոր տեսակներ՝ պատմուածքներ, նկարագրութիւններ ուր ցայտուն ձեւով կը տրուէին հելլենիստական քաղաքներու մանր-քաղցենիներու ամենօրեայ կեանքը : Գրական այս ճիւղը մեծ վարպետութեան է հասեր Սոփրոնի մօտ : Հակառակ քաղաքի ժխորին և ախտերուն Թեոկրիթը յուզիչ գծերով կը նկարագրէ գիւղական կեանքի մաքրութիւնը և պարզութիւնը : Անոր բռնին տակ կենդանութիւն կ'ըստանան գիւղը, դաշտերը, անտառները, քրքջացող առուակները, աղբիւրները, հովիտները և երկրագործներու բնական և հասարակ կեանքը : Այսպիսի գրականութիւն, բնութեան և գիւղի իդիլիկ պատկերացումը ամենէն տարածուածն էր հելլենիստական շրջանին, որ կը ցուցահանէ քաղաքաբնակ մարդոց յոգնածութիւնը, ձանձրոյթը իրենց միապաղաղ կեանքէն և նորոյթներ որոնելը :

Բայց հեղինիստական շրջանին ոչ մէկ բան գուցէ այնքան կատարելութեան չհասաւ, որքան գիտական մտածողութիւնը: Շատ մեծ նուաճում կատարուեցաւ փորձնական գիտութիւններու մէջ: Դժբախտաբար այս դարերու աշխատանքներու մէկ զգալի մասը կորած են, մեզ չեն հասեր: Բայց յամարձակօրէն կարելի է ըսել, որ XI-X-րդ դարու մեծագոյն գիւտերու սկզբունքները մատնանշուած են հեղինիստական դարաշրջանի գիտութեանց մէջ: Լեւոն-Ֆիլը ըրաւ իր գիւտերը մարդակազմութեան մէջ. ան մեկնաբանեց ուղեղի դերը, պարզեց մարդու ջղային սիստեմը, լուսարանեց արեան շրջանառութեան խնդիրը: Աղեքսանդրիոյ մ. ջ կ'ապրէր Էվկլիդը, երրորդ դարուն. ան առաջին անգամ երկրաչափական պարզ տեսութենէն մշակեց: Մինչեւ հիմա ալ անոր տեսութիւնները ինկած են մեր երկրաչափական իմացութիւններու հիմքը: Նոյն երկրաչափութեան մէջ մեծ դեր խաղաց Արխիմեդի ուսումնասիրութիւնները: Ան հիմնադիրն է Մեքենայագիտութեան: Ասղագիտութիւնը մեծ զարգացման հասաւ այս շրջանին: Էրատոսթենը կը փորձէր ապացուցել, որ երկիրը գնդաձեւ է, Արիստարխը առաջինը եղաւ կարծիք յայտնող, թէ արեւը աւելի մեծ է երկրէն և որ երկիրը կը դառնայ արեւի, միաժամանակ և իր առանցքի շուրջը: Հիպարխը որոշեց երկրի հեռաւորութիւնը՝ արեւէն և լուսինէն: Բայց ասոնք միայն հանճարեղ կուսումններ էին, որ հին աշխարհի մէջ մեծ տարածում չունեցան: Ընդհակառակը աւելի հասկնալի էր հին դարու մարդոց մտքին Պտղեմէի տեսութիւնը, ըստ որում երկիրը մէկ հարթ շրջանակ է, որ անշարժ է և անոր շուրջը կը դառնայ արեւը, լուսինը և ուրիշ մարմիններ: Այս տեսութիւնը մարդոց մտքերու վրայ իշխեց աւելի քան հազար հինգ հարիւր տարի:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ.— Աղեքսանդրի արշաւանքով Յոյներու աշխարհագրական հորիզոնը ընդարձակուեցաւ, անոնք ծանօթացան նոր երկիրներու և նոր ժողովուրդներու հետ: Մինչեւ հինգերորդ դարը անոնց

Ծանօթ էր Միջերկրականնան աշխարհը. անոր կարելի էր կցել Սեւ ծովի, Կարմիր ծովի եզերքները: Անոնք ծանօթ էին Փոքր Ասիոյ, Եգիպտոսին, Միջագետքին, նոյնիսկ իրանին, բայց այս ծանօթութիւնը թեթեւակի էր. յաճախ անճիշտ:

Աղեքսանդրէն յետոյ միայն Յոյներու առաջ բացուեցան նոր երկիրներ, կենդանական և բուսական նոր աշխարհներ, անտեսական և լեզուական ուրոյն շրջաններ: Յոյները հասան մինչեւ Միջին Ասիա, Հնդկաստան: Կովկասեան լեռներէն մինչեւ Հնդկաց ովկիանոսս, Արաբիա, Արեւելեան Ափրիկէ: Այս բոլորը կը դառնան անոնց քննութեան, անտեսական օգտագործման առարկան: Այս երկիրներու մասին կը գրուին գիրքեր, ուսումնասիրութիւններ: Աշխարհագրական այս գիւտերը ոչ միայն կ'ազդեն հելլենիստական աշխարհի անտեսութեան վրայ, այլեւ տեսական մտածողութեան վրայ: Հեղինակները նկարագրելով նոր ժողովուրդներու կեանքը՝ երբեմն իրականութիւնը կը խառնէին երեւակայականի հետօ Միաժամանակ՝ քաղաքական մեծ յեղաշրջումներու հին կայսրութեան փլուզումի ազդեցութեան տակ կ'ըսկսուի հետաքրքրութիւն մը արեւելեալ ազգերու անցեալի նկատմամբ: Շարք մը պատմագիրներ կ'ուսումնասիրեն Ս. Մակեդոնացիի պատմութիւնը, անոր նուաճումները: Հելլենիստական թագաւորներն ալ ունէին իրենց պալատական պատմագիրները: Կը գրուին և առանձին երկիրներու պատմութիւնք, Մանիքոնը, որ դպիր էր և քրմապետ երրորդ դարու առաջին կիսուն կը գրէ Եգիպտոսի ամբողջական պատմութիւնը: Ան Եգիպտոսի պատմութիւնը կը դասաւորէ ըստ իշխող արքայական տուհերու: Անոր աշխատանքը կորեր է և մեզ հասեր է միայն անոր համառօտութիւնը ուրիշներու ձեռքով կատարուած: Նոյն երրորդ դարու սկիզբներուն Բաբելոնի մէջ Պերոզ քուրմը ասորա-բաբելական աղբիւրներու վրայ կը գրէ Միջագետքի պատմութիւնը: Դժբախտաբար ան ալ կորեր է և մեզ հասեր են հատուածներ ուրիշներու միջոցով:

Այսպիսով մենք կը տեսնենք, որ մշակոյթի ընդհանուր պատմութեան մէջ հիլլիենիստական դարաշրջանը ամենէն հարուստ շրջաններէն մէկն է, ամենէն բեղմնաւորը: Ան նոր հիմերու վրայ դրաւ գիտական մտածողութիւնը, նոր բարոյական սկզբունքներ տուաւ կրօնին և տնտեսական հոլովոյթի առաջ նոր ուղիներ բացաւ, իրօք ստեղծեց համաշխարհային տնտեսութիւն, ուղղակի թէ անուղղակի ան արեւելեան ժողովուրդներու ազգային ինքնաճանաչութեան գալուցն նպաստեց, որ քիչ ետքը պիտի արտայայտուէր բազմաթիւ ազգային քաղաքական շարժումներով: Յոյները եւրոպական առաջին քաղաքակրթութիւնը պատուաստեցին արեւելքի մէջ, անոնցմէ ետքը պիտի գային Հռոմէացիք, որոնց իշխանութեան տակ բարձրացաւ և պայծառացաւ արեւելեան ժողովուրդներու ազգային գիտակցութիւնը, որու հետեւանքով սկսաւ երկարատեւ պայքար մը՝ արեւելքի և արեւմուտքի մէջ:



ՄԱՍՆ ՈՒԹԵՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆ

Ա. ԳԼՈՒԽ

ՆՈՐ ԺՈՂՈՎՈՒՐԴ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ.— Եօթերորդ դարու վերջերուն Մերձաւոր Արեւելքի լեռնային գօտին ենթարկուեցաւ քողաքահան մեծ յեղաշրջման: 612 թ. Ասորեստանը ինկաւ: Արեւելքի հաւասարակշռութիւնը խախտուեցաւ: Երեւացին երկու նոր ուժեր՝ արիական Մարաստանը և սեմական Բաբելոնը: Քիչ մը ետք, 585 թ. ինկաւ Ուրարտուն, գրեթէ աննկատելի: Ան ալ սպառեր էր իր ուժերը Ասորեստանի, հիւսիսային ցեղերու, Սկիւթ-կիմրներու դէմ մղած կռիւններու մէջ: Բայց գեռեւս եօթերորդ դարու կէսերուն ան փոքրացեր էր, կորսնցուցեր էր իր ծայրամասերը, մասամբ ասով պէտք է բացատրել Ասորեստանի հանդէպ ունեցած իր նուաստեցուցիչ դիրք բռնելը: Ան աղքատացեր էր և թուլցեր: Ուրարտուի քաղաքական յաջորդները Հայաստանի մէջ Մարերն էին. անոր վրայով է, որ անոնք հասան Փոքր Ասիայ: Հայաստանը անոնց համար կարեւոր չրջան մըն էր՝ Փոքր Ասիայ վրայ իշխելու: Կիմրներն ու Սկիւթացիք առաջ բերին լեռնային գօտիի մէջ ցեղերու, ժողովուրդներու մեծ տեղաշարժ, տեղահանութիւններ: Իրենք, արշաւողները՝ ոչ մէկ տեղ չբռնեցին, բայց նստակեացներուն ալ հանեցին իրենց տեղերէն և ցրուեցին ամբողջ լեռնային գօտիի մէջ: Հինը, հաստատուն կարգը քանդեցին, բայց նորը չստեղծեցին: Անոնց գործած փլուզումներէն օգտուեցան ուրիշները:

ԱՐՄԷՆՆԵՐԸ.— Տեսանք, որ Ուրարտական պետութիւնը մեծ ու փոքր ցեղերու, տոհմացեղային միութիւններու դաշնակցութիւն մըն էր: Իրենք, Ուրարտացիք՝ այդ պետութեան մէջ թիւով քիչ էին և կեդրոնացած հարաւը՝

Վանայ լճի շուրջը: Անոնք փորձեցին դէնքի զօրութեամբ գրաւած երկիրները ուրարտացնել, բայց այդ բանը մասամբ միայն յաջողեցաւ: Իրենց անմիջապէս շրջապատող ցեղերուն անոնք ձուլիցին իրենց մէջ, բայց ծայրամասերու մէջ յաջողութիւն չունեցան, որու պատճառով այնտեղերու ցեղերը պահեցին իրենց զոյւթիւնը և պայքարեցան Ուրարտուի դէմ: Անոնք այս կամ այն չափով ենթարկուեցան ուրարտական մշակոյթին. անոր ազդեցութեան տակ քայքայուեցաւ տոհմական կառոյցը և ստեղծուեցան իշխանութիւններ. հասարակութիւնը դասայնացաւ: Բայց այս տոհմէն վեր ելնող իշխաններն է, որ կանգնեցին հակաուրարտական շարժման գլուխը: Ուրարտուի անկման պահուն, անոր մէջ կային ուժեր, որոնք կրնային անոր ժառանգութեան տէր դառնալ: Այս ժառանգորդներէն մէկը՝ Արմէններն էին, միւսը Հայասանները: IX րդ դարու ուրարտական արձանագրութիւնները կը խօսին Հայաստանի հարաւ-արեւմուտքը ապրող Արմէններու մասին, որոնք յայտնի կ'ըլլան նաեւ Ուրմէն անունով: Արգիշտի I Նոյն վայրերու մէջ կը յիշէ Ուրման երկիրը: Այս անունով յայտնի ցեղախումբերը անշուշտ ապրեր են այդտեղ նախքան Ուրարտուի հզօրանալը և տոհմային կառոյցէն զիմեր են ցեղային միութիւններուն, և այդ բանը կատարուի է գլխաւոր ցեղի՝ Արմէններու գերիշխանութեան տակ: Բայց մինչև Ուրարտուի հզօրանալը անոնք աւելի բարձր քաղաքական միութիւն չստեղծեցին:

ԱՐՄԷՆՆԵՐՈՒ ԱՆՅԵԱԼԸ.— Թէ երբ և ինչ պայմաններու մէջ Արմէնները հաստատուեր են Հայաստանի մէջ՝ դժուար է ըսել: Բայց անոնց կազմաւորման մէկ մեծ շրջանը անցեր է Փոքր Ասիոյ մէջ, հաթական պատմութեան և մշակոյթի շրջանակի մէջ: Անոնք, գոնէ անոնց վարիչ դասը, ռազմի խաւը հնդեւրոպական ծագում ունէր: Փոքր Ասիոյ մէջ անոնք երկար կ'ապրին, թերեւս 1800-էն մինչև 1200 թիւը: Այնտեղ տեղի կ'ունենայ հաթական ցեղերու և Արմէններու խաչաւորումը: Արմէնները կը հաթանան՝

ղեզուով, մշակոյթով, կրօնով: Կ'իւրացնեն բազմաթիւ քառեր, քերականական ձեւեր, աստուածներու պաշտամունքը և անոնց անուաները:

Մեզի անյայտ պատճառներով Արմէնները կապաղով-կիայէն կ'անցնին Եփրատը և կը մտնեն այն երկիրը, որ ամենէն առաջ կը դառնայ Նայիրի, ապա Ուրարտու և ետքն ալ Հայաստան: Այս գաղթաշարժը կատարուած պիտի ըլլայ մինչև XI-րդ դարը: IX-րդ դարուն արդէն կը տեսնենք Հայաստանի հարաւ-արեւմուտքը արմենական ցեղերու կեդրոնացումը: Հոս անոնք ինկան մասամբ ազիանիկ, մասամբ սեմական ցեղերու մէջ և տեղի ունեցաւ անոնց և տեղացիներու մէկ նոր խաչաւորում, նոր ձուլում: Ասոր հետեւանք անոնց Փոքր Ասիական մարդաբանական տիպարը աւելի պիտի շեշտուէր: Արմէնական ցեղերու այն հատուածը, որ անցաւ Եփրատէն արեւելք, իր հոլովոյթի մէկ շրջանը պիտի անցնէր ուրարտական պետութեան մէջ և ինչպէս անոր ենթակայ բոլոր ցեղախումբերը ան ալ որոշ չափով պիտի ենթարկուէր ուրարտական քաղաքական և քաղաքակրթական կեանքին: Իրենց նոր տճելավայրի մէջ հաստատուելով՝ անոնք սերտ յարաբերութիւն պահեցին Եփրատէն արեւմուտք՝ կապաղովկիոյ հաթական միջավայրի մէջ ապրող իրենց լեզուակից և ազգակից ցեղերու հետ: Իսկ նոր երկրի մէջ անոնք բռներ էին այն վայրերը, ուր իրենցմէ առաջ ստեղծուեր էր Նայիրեան դանակցութիւնը:

ՀԱՅԱՍՏԱՅԻՆԵՐԸ. Ծանօթացանք Հայասայի քաղաքական հոլովոյթի հետ: XIII-րդ դարէն այլեւս անոնց մասին տեղեկութիւն չուրինք: Նոյն դարու վերջին պատմութեան բնմէն կը չքանայ նաև Հաթ պետութիւնը: Այդ երկուքը ստեղծուեր էին միասին և կ'անհետանային միասին: Իայց ինչպէս Հաթերը վերապրեցան Եփրատի շուրջը, հիւսիսային Սիւրիոյ մէջ կառուցուած մանր ու մեծ պետութիւններու մէջ. այդպէս ալ հայասական ցեղերը զրկուելով քաղաքական կեանքէն չկորան, այլ ապրեցան

հայկական բարձրաւարակի հիւսիս-արեւմտեան գաւառներու մէջ: Փոքր Հայքէն անոնք մտան Բարձր Հայք, ապա Արաքսի ափերով մտան Վանանդ, Շիրակ, դէպի հարաւ՝ Բիւրակնեան լեռներով իջան Վանայ լիճի հիւսիս-արեւմուտեան եզերքները: Այս վայրերու մէջ անոնք կը հանդիպէին իրանական ցեղերուն, ասիական և կովկասեան ժողովուրդներու հատուածներուն: Կռուով թէ խաղաղութեամբ անոնք տեղ կը գրաւեն հիւսիսային Հայաստանի մէջ: Անոնց ցեղախումբերը տարբեր անուններով, տարբեր բարբառներով կը խառնուին տեղացիներու հետ: Թերեւս ասոնք է որ նախքան Ուրարտուն կը փորձեն իրենց և օտար ցեղերու ուժերը համախմբել՝ ստեղծելու տոհմա-ցեղային պետութիւն մը. բայց այդ փորձը չի յաջողիր: Հայասայի հիւսիսային և արեւմտեան հատուածները IX-րդ դարէն կ'իյնայ Ուրարտուի իշխանութեան տակ և կ'ենթարկուի անոր մշակութային և քաղաքական ազդեցութեան:

ՀԱՅԱՍՏԱՅԻ ՀՆԴԵՒԻՐՈՊԱՑՈՒՄԸ.— Բայց Հայասաներու գլխաւոր աճելավայրը նորէն մնաց Փոքր Հայքը, Հայասաներու բնօրրանը: XII-րդ դարուն, գուցէ քիչ մըն ալ առաջ ան ենթարկուեցաւ հնդեւրոպական ցեղերու արշաւանքին: Հաթական կայսրութեան փլուզումի հետեւանքով, շուրջ 1200 թիւերուն, ընդհանուր անիշխանութիւն ծայր տուաւ ամբողջ Փոքր Ասիոյ մէջ: Նորեկ Փռիւզներու հարուածներու տակ հնդեւրոպական Արմէններու մեծ հատուած մը մտաւ Հայաստ, Փոքր Հայք: Ասոնք էին, որ բերին Հայոց լեզուի հնդեւրոպական բառամթերքը, կրօնական գաղափարները: Փռիւզ-արամէական այս ցեղախումբերը խաչաւորուեցան, ձուլուեցան Հայասաներու հետ: Այս ձուլման կը նպաստէր այն, որ երկուքի ղեկավար դասըն ալ միեւնոյն ծագումն ունէր, վարք ու բարքով ալ. կենցաղով ալ անոնք մօտ էին իրարու: Արմէնական ցեղերու աստուածը՝ Սաբաձիոս վերապրեցաւ յետագայ Հայոց մէջ, բան մը, որ կը ցուցահանէ հնդեւրոպական տարրի դերը հայութեան կազմաւորման մէջ: Ուրեմն Փոքր Հայ-

քի մէջ կատարուեցաւ Հայոց ժողովուրդի գոյացման առաջին մեծ գործողութիւնը: Հայութիւնը սկիզբէն և եթ երեւան կողքայ որպէս մարդաբանական և լեզուական երկուութիւն:

ԱՐՄԷՆՆԵՐՈՒ ԾԱՒԱՆՈՒՄԸ.— Որքան Ուրարտուն կար, գոյութիւն ունէր, Արմէնները կը կազմէին անոր բազադորիչ տարրերէն մէկը: Բայց եթերորդ դարու ան կը թուինայ, անկէ կ'անջատուին իր ծայրամասերը և առաջին հերթին Արմէնները: Ուրարտուն անկարող էր պաշտպանել անոնց, ուստի Արմէնները հաւաքեցին իրենց շուրջը տեղական ցեղերուն, համադրեցին իրենց ուժերը պաշտպանուելու երբեմն Ասորեստանի, երբեմն կիմըր-սկիւթական ցեղերու դէմ: Այս նոր միութիւնը կազմուեցաւ արմենական ցեղերու ղեկավարութեամբ, ուստի անոնց բռնած երկիրն ալ, որ երբեմն Նայիրի երկիր էր, կոչուեցաւ Արմինա, այսինքն Արմէններու երկիր, հայրենիք: Մեծցող Արմէններու առաջին թագաւորը եղեր է Պարոյր: Ան Ասորեստանի հիւսիս-արեւմուտքի սահմաններուն վրայ կազմեր էր մեծ ուժ և կ'ըսպառնար անոր: Եւ այն այնքան մեծ էր, որ եթերորդ դարու վերջին Մարերը և Բաբելոնացիք անոր օժանդակութեան կը դիմեն Նինուէի վրայ յարձակուելու համար:

Ուրարտուի թուլացման հետեւանքներէն մէկն ալ այն կ'ըլլայ, որ անպաշտպան սահմանները կը բացուին դուրսի վաշկատուն, խաշնարած ժողովուրդներու առաջ: Եփրատի միւս կողմէն հաթական երկիրներէն Արմէններու և Հաթերու մեծ զանգուածներ կ'անցնին Եփրատը և կողքան միանալու իրենց լեզուակիցներուն և ցեղակիցներուն: Ասոնց ճնշման տակ է, որ կ'ըսկսուի արմենական ցեղերու ցրուումը դէպի հարաւ-արեւելք՝ Տաւրոսի ուղղութեամբ: Վեցերորդ դարու քսանական թիւերուն Դարեհի արձանագրութիւնները ցոյց կուտան, որ Հայաստանի մէջ առաջնութիւնը ինկեր է Արմէններու ձեռքը: Ըստ ոմանց նոյն դարու սկիզբներուն անոնք տէր էին դարձեր նաև Ուրար-

տուրի գահին: Անոր վերջին թագաւորը Ռուսան III-րդ, որ կը կողուի՝ Երիմէնի՝ Երիմէնի կամ Արմինի որդի հաւանաբար արմէնական ծագում ունենար: Եթէ այս ճիշդ է, ապա կը նշանակէ, որ Արմէններու մեծ հատուած մը զինուորական ծառայութեան մէջ է մտեր Ուրարտուի մէջ և յարմար պահուն անոնց պետերէն մէկը գրաւեր է ուրարտական գահը:

ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ԴՈՒՐՍ.— Ասորեստանի անկումով արմենական ցեղերու առաջ կը բացուի հիւսիսային Միջագետքի դառնները: Անոնք Տիգրիսի օվերով կ'իջնեն հարաւ, կը դիմեն մինչեւ կալայէն, Ադիարէն: Անոնց հարաւ իջնելու հետ է, որ կը կապուի Արախայի պատմութիւնը: «Արախա անոսն արմենացին» Բաբելոնի երկրորդ ապստամբութեան ժամանակ ան իրեն կը յայտարարէ Բաբելոնի թագաւոր: Հաւանաբար ան ինքնակոչ մէկը չէր, ոչ ալ բախտախընդիր: Թերեւս Արմէններու ռազմի ազնուական տուներէն մէկը ազգակցական կապերով կապուեր էր Բաբելոնի իշխող տան հետ, ինչպէս Ուրարտուի մէջ: Անկէ է, որ դուրս կուգայ Արախին: Անշուշտ ան մինակ չէր, իր հետ ունէր մեծաքանակ զինուած հետեւողներ: Ան յենուած պիտի ըլլար իր հետ եկած Արմէններու վրայ: Վեցերորդ դարու վերջերուն Դարեհն ալ իր ծառայութեան մէջ ունէր հայ զօրավարներ, որոնցմէ մէկն ալ «Դատարչէս արմէնն» էր. ան ալ մինակ չպիտի ըլլար Պարսից բանակի մէջ: Ան ունէր իր արմէն գործակիցները, զինուորները: Արմէններու մէկ մասն ալ կը գործէին Փոքր Ասիոյ մէջ: Այսպիսով՝ մենք կը տեսնենք, որ անոնք շատ կը նմանին իրենցմէ առաջ արեւելքը ողողող քիմրական և սկիւթական ցեղերուն: Տեղ մը չէին հաստատուիր, հողին չէին կպած, կապուած էին իրենց առաջնորդին, լաւ զինուած էին, սպառազինուած թափառիկներ. անոնք միշտ կը համախմբուէին տաղանդաւոր զօրավարի մը շուրջը և կը նետուէին արկածախնդրութեան մէջ: Կը վաճառէին իրենց ռազմի ուժը և պարսկին և բաբելոնացիին և ուրարտացիին:

Բայց անոնց ուժերու ցրումը, իրենց ռազմունակութիւնը ուրիշ նպատակներու ծառայեցնելը ունեցաւ իրենց համար ծանր հետեւանքներ: Անոնց Հայաստանի բարձրաւանդակէն դուրս ծաւալուելու հետ միաժամանակ մեր լեռնաշխարհի մէջ ամուր ձեւով կը հաստատուէին Հայասաները: Անոնք գրաւեր էին հիւսիսային Հայաստանը և կ'իջնէին հարաւ: Ասոնց ծաւալումը ժամանակ մը կանգ առաւ նախ Ռւրարտուի ստեղծման հետեւանքով, ապա աւելի ուշ քիմեր սկիւթական արշաւանքներով:

ՀԱՅԻՍՏԱՆԱՐԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ.— Ուրարտուի անկման շրջանին հայկական բարձրաւանդակի վրայ գոյութիւն ունէր երկու հասարակութիւն՝ հիւսիս-արեւմուտքի մէջ Հայասայականը, որ իր մէջ առեր էր այդ շրջանի բոլոր ցեղերուն, կազմեր էր ցեղերու դաշնակցութիւն մը. հարաւարեւմուտքը՝ Արածանի գետաբերանին, Տիգրիսի ակունքներու շուրջը՝ Տարօնի մէջ ստեղծուեր էր արմեհակացի, որ միացուցեր էր այդ վայրերու ցեղերուն: Վանայ լիճի արեւելքը հաւաքուեր էին ամեն կողմերէն Ուարտացիները: Հայասաները և Արմէնները սկիզբը կը գործէին առանձին. անոնց մեծացումը կը կատարուէր տարբեր ուղղութեամբ: Բայց պարտուելով Պարսիկներէն, դուրս քշուելով Բարելոնէն Արմէնները կեդրոնացան հայկական հողերու մէջ: Ասոնք է, որ Տարօնի մէջ, Արածանիի շուրջը կը հանդիպին Հայասաներուն: Այս հանդիպումը բախտորոշ նշանակութիւն կ'ունենայ Հայաստանի համար: Տեղի կ'ունենայ երկու տոհմացեղային միութիւններու խաչաւորումը, ձուլումը: Թերեւս այս գործողութիւնը կատարուեր է խաղաղ ձեւով առանց մեծ կռիւններու, առանց ցնցումներու: Այս գործողութիւնը կատարուեր է քանի մը դարերու մէջ: Մեզ յայտնի չէ այդ գործի զարգացման փուլերը: Այս միացումի, ձուլումի մէջ առաջին դերը կը կատարեն Հայասաները: Անոնք է որ բռներ էին Հայաստանի մեծագոյն մասը, անոնք իրենց ուժերը չցրուեցին Հայաստանէն դուրս. Թերեւս շատ աւելի քաղաքակիրթ էին, քան զինս.

ուած Արմէնները: Իրենց ուժի, ձուլման կարողութեան հետեւ անքով ալ անուանին տուին այս նոր միութեան, նոր ժողովուրդը ինքն իրեն կոչեց Հայ, երկիրն ալ Հայաստան: Ինչ կը վերաբերի Արմէն անուան, ապա այն իսպառ չկորաւ: Ան մնաց Պարսից արձանագրութեանց մէջ, մնաց յոյն աշխարհագրագէտներու և պատմաբաններու մօտ՝ հայութեան տրուող անուն. Օտարը շարունակեց հայուն այդպէս կոչել՝ անոր կազմիչ տարրերէն մէկու անունով: Այս մեծ գործի՝ հայութեան ստեղծման առաջին գործողութիւնը կատարուեր է XII-րդ դարուն Փոքր Հայքի մէջ. շարունակուեր է ան հայկական հողերու վրայ VII—VI-րդ դարերուն և վերջացեր է Արտաշէսի և Տիգրան Մեծի ժամանակ II—I-րդ դարուն: Այդ Հայոց Պատմութեան առաջին հազարամեակն է և անոր իմաստը նոր ժողովուրդի ստեղծումն է:

ԵԶՐԱԿԱՏՈՒԹԻՒՆ.— Հայութիւնը կառուցուած է երկու լեզուական և մարդաբանական տարրերէ: Փոքր Ասիական միջավայրի մէջ արդէն հայութեան կազմիչ տարրերը միաւորուած կ'երեւան: Թէ Հայասանները և թէ Արմէնները սերտօրէն կապուած են Փոքր Ասիոյ լեզուական և մարդաբանական միջավայրին. ընդհանրուպէս ըսուած՝ Հայասանները նախապէս ետ են, ազիանիկ են, Արմէնները Հայերու հետ են՝ անոնց մէջ գերակշռողը հնդեւրոպական տարրն է: Հայաստանի մէջ փոխազգական հանդիպումը Փոքր Հայքի մէջ հիմք է դրեր, սաղմնաւորեր է հայութիւնը: Հայարմենական բոլոր ցեղերու մէկ իշխանութեան տակ հաւաքելը երկրորդ դարու սկզբին Հայաստանի մէջ՝ աւարտումն է հայութեան ստեղծման մեծ գործողութեան: Ան իր կազմաւորման մէջ էր երբ հաստատուեցաւ Հայաստանի մէջ և տէր դարձաւ Ուրարտուի ժառանգութեան:

ԻՆՉ ԵՂԱՒ ՈՒՐԱՐՏԱՅԻՆ.— Այս հակայ վերիվայրումներու մէջ երկրի նախկին տէրերը, Ուրարտացիք ոչ մէկ դեր չեն խաղար: Անոնք դէպքերու կեդրոնը չեն և դադրեր են ղեկավար ըլլալէն: Մայրագաւառներէն նահան-

Չելով կեղրոնացիք են, հաւաքուեր են Վանի Տուշպայի շուրջը: Այս վայրերն է, որ շատ երկար ժամանակ ազատ մնաց Արմէններու գրաւումէն նոյնիսկ մինչեւ չորրորդ դարը: Քաղաքական անկումէն ետքն ալ Ուրարտացիք պահեցին իրենց ազգային գոյութիւնը Վանայ լիճի ափերուն և ոչ թէ ցրուեցան ամբողջ Այսրկովկասի մէջ, ինչպէս շատերը կը կարծեն: Բայց վեցերորդ դարու կէսերուն կ'ըսկսի արմէն-ուրարտական պայքարը արօտատեղիներու, դաշտավայրերու համար: Կիւրոսը անոնց մէջ խաղաղութիւն կ'ըստեղծէ: Ուրարտացիք մնալով իրենց հայրենիքի մէջ՝ շատ աւելի ուշ մտան հայութեան կազմի մէջ, հայացան: Վանեցիք հայացած Ուրարտացիքն է: Պետութեան ծայրամասերու մէջ կային Ուրարտացիներ որպէս զօրք, պաշտօնեայ, քուրմ. անոնց մեծամասնութիւնը մնաց իր գտնուած տեղը, ոչնչացաւ կամ ձուլուեցաւ տեղացիներու մէջ: Եօթերորդ դարէն Հայաստանի հարաւը դէպքերու թերմունքով ստեղծուեր էր երկու հասարակութիւն՝ արմեճականը և ուրարտականը: Ասոնք աստիճանաբար կը մօտենան իրարու, կը գործակցին արօտատեղիի, դաշտավայրերու, ջուրի շուրջը, կը միանան ընդհանուր պաշտպանութեան համար. ասոր հետեւանքով դանդաղօրէն Հայաստանի հարաւի մէջ կը կառուցուի մէկ հասարակութիւն, արմենականը, որ այնքան բազմերանգ տարրեր կ'առնէ իր մէջ: Այս գործի հետ միասին ան ինքը կը միանայ Հայաստաներուն՝ հանդիպելով անոնց Տարօնի մէջ, Արածանի ափերուն, Վանայ լիճի հիւսիսը:

Բ. ԳԼՈՒԽ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԱՐԵՐՈՒ ԵՒ ՊԱՐՍԻԿՆԵՐՈՒ

ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ

ՄԱՐԵՐՈՒ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ.— Հայութեան հետագայ կազմաւորումը տեղի ունեցաւ օտար իշխանութեանց տակ: Հայոց լեռնաշխարհի մէջ քաղաքական տեսակէտէն Ուրարտացիներուն յաջորդեցին Մարերը: Վեցերորդ դարու սկզբէն ասոնք Ուրարտուի վրայէն հասան մինչեւ Ալիս գետը. Ուրարտուն ընդունեց անոնց գերիշխանութիւնը: Մարերը դաշնակից էին Արմէններուն, կը խրախուսէին անոնց ուժեղացման Ուրարտուի սահմաններու մէջ: Եթէ ճիշդ է, որ արմէն իշխաններէն մէկը վերջին Ռուսան ուրարտական քահն էր բարձրացեր, ապա այդ կրնար ըլլալ միայն Մարերու համաձայնութեամբ: Մարերու իշխանութեան տակ Հայաստանի մէջ կը շարունակուէի հոլովոյթի նոյն գողձողութիւնը՝ ցեղերու համաձուլումը, համադաշնակցութիւնը և նոր ազգութեան սազմնաւորումը: Մարական իշխանութեան ժամանակ Հայերը պահեցին իրենց ինքնավարութիւնը, ընկերային՝ տոհմական կարգը, որու մէջ սակայն տեղի կ'ունենար մեծ յեղաշրջում: Սատրապական վարչութեան ստեղծողները Մարերն էին: Հայերն ալ ինկան այդ վարչութեան տակ: Բայց անոր հովանիին տակ հայութիւնը ունէր իր ներքին կազմակերպութիւնը: Ան ունէր իր թագաւորը: Վերջինի իշխանութիւնը կը տարածուէր արմէնական բոլոր ցեղերու վրայ. թագաւորը ունէր, քառասուն հազար հետեակ և ութ հազար հեծեալ զօրք: Ան հարուստ էր և հարկ կուտար Մարերուն: Այդ բոլորի համար անհրաժեշտ էր, որ հայութիւնը կազմող ցեղերը բռնած ըլլային ցեղերու միաւորման ուղին և գրաւէին ընդարձակ տարածութիւն և ունենային կեդրոնական իշխանութիւն մը:

Յոյն պատմագիր և զօրավար Քսենոֆոնը կը յիշէ, որ Հայաստանը Մարերու իշխանութեան տակ առանձին թագաւորութիւն մըն էր, ան չի յիշեր Հայոց թագաւորի անունը: Անոր որդին Տիգրանը Կիւրոսի գործակիցն էր: Թէ Կիւրոսը և թէ Տիգրանը մարական թագաւորի հարկատուներն էին: Անոնք կը գործակցին իրարու հետ, Տիգրանը կը մասնակցէր Կիւրոսի կռիւներուն, իսկ Հայաստանը մարական իշխանութեան ամբողջ տեւողութեան ընթացքին կը մնար որպէս կիսանկախ պետութիւն մը: Անոր պարտականութիւնը մարական թագաւորի հանդէպ հարկային էր և զինուորական: Մարերը Հայերուն կը համարէին իրենց հաւատարիմ դաշնակիցը, ընդհակառակը Ուրարտացիք միշտ մնացին կասկածելի: Հայերը Մարերու թոյլատուութեամբ արեւմուտքէն՝ Եփրատի ափերէն տարածուեցան դէպի հարաւ արեւելք, դանդաղօրէն բռնագրաւեցին Ուրարտուի արեւմտեան և հարաւային նահանգները: Ուրարտացիք իհարկէ լաւ աչքով չէին նայիր հայ-արմէններու այս գրաւումին: Անոնք երկար ժամանակ մնացին թշնամի թէ հայ արմէններու և թէ Մարերուն: Ինչպէս կ'երեւի ասոնց թշնամութիւնը յաճախակի ընդհարումներու տեղի կուտար: Երկու ժողովուրդները Հայաստանի հողամասը բաժնեւէին իրենց մէջ: Նուաճողներու ճնշման տակ Ուրարտացիք կ'ապաստանին լեռնալանջերուն, աւելի բարձունքները, կը լքեն դաշտերն ու մարգագետինները. հայ-արմէնները կը հաստատուին հովիտներու, դաշտավայրերու մէջ: Բայց իրենց աշխատանքի հետեւանքով՝ երկուքն ալ անջատ և մեկուսացած ապրիլ չէին կրնար: Կիւրոսը կը հաշտեցնէ անոնց՝ Ուրարտացիք լեռներէն դաշտ կ'իջնեն, կ'ըզբաղուին երկրագործութեամբ, հայ-արմէնները լեռ կը բարձրանան՝ լաւագոյն արօտատեղիներ որոնելու՝ իրենց անասուններու համար: Տնտեսական այս գործակցութիւնը նպաստաւոր գետին կը հարթարէ երկուքի յաճախակի շփման և միաձուլման:

ՀԱՅԵՐԸ ՊԱՐՄԻՅ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ — Մարերու քաղաքական գերիշխանութիւնը Մերձաւոր Արեւելքի վրայ երկար չտեւեց: Վեցերորդ դարու կէսերուն անոնց՝ Իրանի մէջ յաջորդեցին Պարսիկները, որոնց մէջէն բարձրացաւ Աքէմէնեաններու արքայական տոհմը: Ասոնց իշխանութեան գալուցիւ կը քայքայուի արեւելքի մէջ ստեղծուած քաղաքական հաւասարակշռութիւնը: Բովանդակ Մերձաւոր Արեւելքը կ'իյնայ Աքէմէնեաններու իշխանութեան տակ: Ասոնց իշխանութեան տակ՝ սկզբնական շրջանին ցեղերն ու ժողովուրդները պահեցին իրենց տեղական, ազգային, ցեղային կառոյցը և ընկերային ու քաղաքական վաղուց մշակած ձևերը: Ասոնք մէկ-մէկ ինքնավար միաւորներ էին՝ արքայից-արքայի հովանիին տակ: Հայաստանն ալ պահեց քաղաքական այն կառոյցը, որ ստեղծեր էր վաղ ժամանակներուն և որ պահեր էր մարերու գերիշխանութեան տակ: Արքայական այն տոհմը, որ հայ-արմէններու վրայ կ'իշխէր մարերու ժամանակ, շարունակեց իշխել նաև Աքէմէնեաններու առաջին երկու թագաւորներու օրով: Իրանի մէջ կատարուած 550 թիւի քաղաքական յեղափոխութիւնը բան մը չփոխեց Հայաստանի մէջ: Տէրն էր, որ փոխուելու էր, իսկ տիրոջ հանդէպ հղած պարտաւորութիւնները մնացեր էին միեւնոյնը: Այս կացութիւնը հիմնովին փոքրուեցաւ միայն Դարեհ վշտասպեանի օրով՝ համակայսերական մեծ ապստամբութենէն յետոյ:

ՀԱՅԵՐՈՒ ԱՊՍԱՄԲՈՒԹԻՆԸ ՊԱՐՄԻԿՆԵՐՈՒ ԴԷՄ.— Հայերու և միւս հպատակ ժողովուրդներու ապստամբութիւններու մասին կը պատմէ ինքը՝ Դարեհը Բիսութենի արձանագրութեան մէջ: Արքայից արքան Հայերու ապստամբութիւնը ճնշելու համար անոնց դէմ կ'ուղարկէ «Դասաբեկս անունով արմենացի մը»: Հայ ծագումով զօրավարին ան կը հրամայէ՝ «Գնա՛, նուանէ այդ ապստամբ ժողովուրդը, որ չի հպատակիր ինձի, զարկ անոք»: Հետեւեալ հատուածներու մէջ Դարեհը մանրամասն կը պատմէ Հայերու ապստամբութեան ընթացքի մասին: Դարեհի բանակներուն կ'օգնէ Ահրու-

Մագդան: «Ահրու-Մագդայի շնորհիւ յազօրեցիցեմք»: Արձանագրուած թեան մէջ ճշգրտօրէն կ'որոշուին ճակատամարտներու տեղերը, ժամանակը՝ ամիսով և օրերով: Հայոց ապստամբութիւնը կ'երկարի, ապստամբները լաւ կազմակերպուած էին, միացած անշուշտ իրենց թագաւորի գերիշխանութեան տակ, որ մի գուցէ Տիգրանը ըլլար՝ կիւրոսի գործակիցը: 560-ական թուերուն ան երիտասարդ էր. նոր ամուսնացած և ընկերակից էր կիւրոսին. Դարեհի օրով ան հասուն, ծերութեան դիմող իշխան մըն էր և կրնար կանգնիլ հայկական բանակներու գլուխը:

Հայկական ուժերը հինգ ճակատամարտ կուտան Պարսիկներուն, դուրս կ'ընեն անոնց իրենց երկրէն, կռիւները կը շարունակեն Հիւսիսային Ասորեստանի մէջ: Իրօք Հայերը ոչ թէ պարտուեր էին սկիզբէն և եթէ, ինչպէս կը պատմէ արձանագրութիւնը, այլ յաղթեր էին, ջարդեր Պարսից ուժերը: Ատոր համար էր, որ վերջին ճակատամարտը տեղի կ'ունենար Հայաստանէն դուրս: Հայերու յաղթանակներու ազդեցութեան տակ արքայից-արքան կը փոխէ իր բանակներու հրամանատարութիւնը, գործի կը կանչէ Պարսիկ մը Վաւիլոսա անունով, որպէս հրամանատար: Վերջինս լաւ կը համարէ դատարկել Հայաստանը և գործել Պարսկաստանին մօտիկ շրջաններու մէջ: Բայց Հայերու ուժերը անսպառ չէին. իրենց երկրէն դուրս մղած կռիւները անյաջող ելք ունեցան: Իր հրամանատարին Դարեհը կ'ուղարկէ նոր թարմ կուռղ ուժեր. Հայերը կը պարտուին. Պարսիկները կը մտնեն Հայաստան և կը վերագրաւեն զայն ամբողջութեամբ: Միայն ասկէ ետքն է, որ Աքէմէնեաններու իշխանութիւնը կը հաստատուի Հայաստանի մէջ: Հայ-պարսկական այս կռիւները տեղի կ'ունենանային Հարաւարեւելեան Հայաստանի Զարի հովտի մէջ, Ռեւանդուզի շրջանը. պատմական Հայաստանի Աղձնիքի և Կորճալքի մէջ: Վեցերորդ դարու կէսերուն Հայերը հասեր էին այս շրջանները և այսպիսով արեւմուտքէն և հարաւէն շրջապատեր էին Ուրարտուն, այսինքն Տուշպա քա-

դաքի շրջանը, ուր դեռեւս Ուրարտացիք կ'ապրէին մեծ զանգուածներով:

ԱՍՏՐԱՊԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ. — Ապստամբութիւնները ճշն-
շեւէն վերջը Դարեհ կայսրութիւնը բաժնեց նոր վարչական
մասերու: Ան ծրագրեր էր ինքնավար միութիւնները վեր-
ցնել և բազմազգեան կայսրութիւնը վարել այնպիսի վար-
չութեամբ մը, որ ի նկատի չունենար տեղական և ցեղա-
կան առանձնայատկութիւնները: Հայաստանի մէջ ալ կի-
րարկուեցաւ սատրապական վարչութիւնը: Ան բաժնուեցաւ
երկու՝ XIII և XVIII-րդ սատրապութիւններու: Մինչեւ
հինգերորդ դարու վերջերը՝ Ք. Ա. այս սատրապութեանց
մասին մենք տեղեկութիւն չունինք: Գիտենք, որ անոնք
կ'ընդգրկէին բովանդակ Հայաստանը իրեն բազմաթիւ ցե-
ղերով, գիտենք, որ այս սատրապութիւնները հարկային և
զինուորական պարտաւորութիւններ ունէին Պարսից ար-
քունիքի հանդէպ: Գիտենք, նաեւ, որ ապստամբեանց
ճնշումէն ետքը, այլեւս խօսք չկայ Հայոց թագաւորի մա-
սին: Դարեհը ջնջեր էր թագաւորութիւնը և անոր փոխա-
րէն նշանակեր էր պարսիկ սատրապ մը: Հինգերորդ դա-
րուն, Հայաստանը ամփոփուած էր մէկ սատրապութեան
մէջ, սատրապն ալ Օրոնդասն էր Հայոց երուանդը, ան
պարսիկ առաջնակարգ ազնուական ընտանիքէն կը ծագէր:

Բայց այդ ժամանակի Հայաստանի սահմանները բնաւ
չէր համաձայներ աւելի ուշ ստեղծուած Մեծ Հայաստանի
սահմաններուն: Քր. Առ. հինգերորդ դարուն Հայաստանը
կը բաժնուէր երկու շրջաններու. արեւելեան Հայաստանը
որ կը տարածուէր Տաւրոսեան լեռներու և Վանայ լիճի ու
դէպի արեւելք ինչպէ՛ս հողերու մէջ, իսկ արեւմտեան Հա-
յաստանը կը պարունակէր արեւմտեան Տիգրիսի ակունք-
ները — մինչեւ Արածանի հովիտը, Տարօնը մինչեւ Փոքր
Հայք՝ սահման ունենալով Եփրատը: Դեռեւս Հիւսիսային
Հայաստանը՝ Արարատեան դաշտը իրեն շրջապատող դա-
ւառներով, իրենց մէջ ապրող ցեղերով Հայաստանի մաս
չէին կազմեր: Եւ Պարսից սատրապութեան մէջ ալ չէին

մտած : Այս սահմաններու ժէջ ամփոփուած Հայաստանը օղակուած է եղբր բազմաթիւ ցեղերով, տոհմերով՝ մասամբ ուրարտական, մասամբ Փոքր-Ասիական և իրանական ծագումով և շեղուով : Ասոնք է, որ հետագայ գարեթուն աստիճանաբար պիտի միաւորուէին Հայերու հետ, երբ Հայաստանի սահմաններն ընդարձակուէր և իր մէջ առնէր Արածանի և Արաքսի հովիտները, Սեւանայ լիճը շրջապատող լեռները : Օրոնտաս սատրապը Հայաստանը շրջապատող բոլոր ցեղերէն վարձկաններ կ'առնէր իր քանակի մէջ, հայկական այրուձին կը կազմէր անոր զօրքի միջուկը :

Ին,ՔնԱՎԱՐՈՒԹԻՒՆ.— Ըսինք, որ սատրապական վարչութեան գործադրութեամբ Հայաստանէն վերցուեցաւ նախկին թագաւորական տոհմը : Բայց փնայ այն ինքնավարութիւնը, որ ունէին Հայերը թէ Մարերու օրով և թէ Կիւրոսի ժամանակ : Սատրապը գերագոյն իշխանութեան ներկայացուցիչն էր : Ան չէր մտներ Հայերու ներքին կեանքի մէջ : Փաստօրէն, ինչպէս ամենուրեք, Հայաստանի մէջ ալ գոյութիւն ունէր երկու իօխանութիւն՝ դրսեկինը՝ սասրապակացը և ներքինը՝ տոհմապետականը, որ ներքին հոյովոյթով ձեւափոխուեցաւ իօխանապետութեան :

ՀԱՅԵՐՈՒ ՊԱՊԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԵՏ.— Հայաստանը իրեն օղակող ցեղերու հետ կը կազմէր հարկային միաւոր մը : Ան հարկ կուտար Պարսկաստանին, հարկ և զինուոր և դրանով ալ կը վերջանար անոր պարտականութիւնը իշխողի հանդէպ : Հարկը կուտային գրամով և բնատուրքով : Հայերը և հարեւան ցեղերը կը վճարէին 400 տաղանդ, որ կը հաւասարէր 13,056 քիլոգրամ արծաթի : Բացի ասկէ Հայերը արքունիք կը զրկէին տարեկան 20,000 ձի : Այս տուեալները յունական աղբիւրներուն են, և կը պարունակեն մօտաւոր ճշմարտութիւն : Իայց ճիշդ է նըշուած փաստը, որ Հայերու նիւթական հարստութեան զգալի մէկ մասը կ'երթար Պարսկաստան : Հարկի այս քանակը ցոյց կուտայ, որ ան պէտք է եղած ըլլայ հարուստ երկիր

մը և որ անոր բարեկեցութեան աղբիւրը՝ մետաղագործութիւնն էր ու անասնապահութիւնը: Դարեհը Հայաստանէն կ'առնէր զօրք, բան մը, որ կ'ընէին Մարերն ալ: Հայոց բանակը կը մասնակցէր Պարսից արշաւանքներուն: Դարեհի օրով անոնք մասնակցեցին սկիւթական արշաւանքներուն, յոյն-պարսկական պատերազմներուն: Հայ զօրքը որպէս ուրոյն զօրասիւն կը յիշուի նաև Քաէրքսէսի բանակի մէջ: Հայերը զինուած էին Փռիւգիացիներունման և կը գտնուէին Դարեհի փեսայ Արտաքսէսի հրամանատարութեան տակ:

Գ. Գ Լ ՈՒ Խ

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԿԱՌՈՅՑԸ

Հայաստանի պատմութեան մարա-պարսկական շրջանը տեւեց վեցերորդ դարու սկիզբէն մինչեւ 330 թիւը, երկու և կէս դարէն աւելի: Այս շրջանը կը կոչենք սաստապական ԵՐԿԱՆ, ինկատի ունենալով, որ հետագային Հայաստանը երկու անգամ ալ մաս կազմեց Պարսկաստանի:

ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ.— Սատրապական Հայաստանի էին բնակչութիւնը դեռ Ուրարտուի օրով ստեղծեր էր բարձր մշակոյթ. անոր տնտեսութիւնը շատ բարդ էր, բազմաճիւղ և զարգացած: Արմէններու և Հայասաներու օրով ան աւելի պարզունակ դարձաւ, բայց մարա-պարսկական իշխանութեան ժամանակ ան նորէն բռնեց վերելքի ուղին: Հայերը երկրագործ էին ու անասնապահ: Անոնց մեծ մասը նստակեաց էին, բայց ունէին քոչւորական տնտեսութիւն: Այսինքն ամեն գարնան վերջերուն դաշտերու և հովիտներու բնակչութեան մէկ մասը իրենց անասուններու հետ կը բարձրանային հայկական լեռները և ամառուայ վերջերուն նորէն կ'իջնէին դաշտերը, ուր ցրուած էին անոնց գիւղերը: Հայութեան ընկերային և նիւթական կեանքի պատկերը լաւապէս գծուած է Քսէնոֆոնի «Անաբազիսի» կամ «Նահանգ Բիւրոց» գրքի մէջ: Ըստ այս նկարագրութեան Հայաստանը զի դական երկիր էր, երկրագործութեան հետ սերտօրէն միացած էր անասնապահութիւնը: Անասնապահութիւնը այնքան զարգացած է եղեր, որ յոյն պատմագիր շերտոտը Հայերուն կ'անուանէ «անասուններով հարուստ» ժողովուրդ: Ասոր շատ կը նպաստէր Հայաստանի խոտաւէտ և ջրառատ լեռները: Քոչւորական՝ այս կենցաղը Հայերուն յատուկ չէր միայն: Ուրարտացիք ալ

գարնան կը բարձրանային լեռները: Եւ սկիզբը հայռաբար-
տական հարցը այս քոչուորական խնդրի կարգադրութեան
կը վերաբերէր:

Հայաստանի մէջ Ուրարտացիք թողեր էին քաղաքա-
կըրթական մեծ ժառանգութիւն. անշուշտ Հայերը կը փոր-
ձէին շահագործել այն. անոնք օգտուեցան Ուրարտացիներ-
րու ամբուլթիւններէն, բերդերէն, ջրանցքներէն, բայց
դիւրութեամբ չիւրացուցին արհեստները՝ ժայռաչինու-
թիւնը, ասկերչուլթիւնը և ուրիշ նուրբ և բարդ արհեստ-
ներ: Քսէնոֆոնի ժամանակ հայկական գիւղերու մէջ ա-
ռատ ուտելիք է եղած՝ հաց, միս, գարի, գարեջուր, հաւ,
ընդեղէն: Քսէնոֆոնը յաճախ կը յիշէ հայկական ձիերու
մասին, որոնք սովորաբար կ'ուղարկուէին Պարսկաստան:
Այգեգործութիւնը նոյնպէս բարձր զարգացման էր հասած:
Այս բոլորը դարաւար անցեալ ունէր: Ըսինք, որ տնտե-
սութեան հոլովոյթին շատ էին նպաստեր Ուրարտացիք և
երբ սկզբնական մեծ շարժումներու, տեղափոխութեան և
գաղթի շրջանն անցաւ, երբ Պարսից իշխանութեան տակ
կեանքն աւելի հաստատուն և կայուն ձեւ ստացաւ, ձեւա-
ւորուեցաւ Հայոց հասարակութիւնը, ապա ուրարտական
ժառանգութեան իւրացումը Հայերու կողմէն ստացաւ ա-
ւելի մեծ ծաւալ: Հայերը դարձան ուրարտական տնտե-
սութեան, հայտնի ժառանգը:

ՔԱՂԱՔՆԵՐՈՒ ՊԱԿԱՍՆՆԵՐ— Հայաստանի մէջ քաղաք-
ներ չկային, հետեւապէս չկար նաև քաղաքի հետ կապուած
աշխատանքը՝ բազմազան արհեստները: Հայերու մէջ գար-
գացաւ անասնապահութեան և երկրագործութեան հետ
կապուած արհեստները: Ուրարտական քաղաքները սաղմի,
վարչական և տնտեսութեան կեդրոններ էին Հայերը քա-
ղաքաբնակ չէին: Սատրապութեան շրջանին Պարսից սատ-
րապը և իրեն օգնականները կ'ապրէին ամրոցներու, դըղ-
եակներու մէջ: Ասոնք ալ սաղմի և վարչութեան կեդրոն-
ներ էին: Գիւղերը կը կառուցուէին ամրոցներու մօտ:
Գիւղը տնտեսական միութիւն մըն էր, կը բաւարարէր ինքն
իրեն: Շուկայի գաղափարը չկար:

ՏՈՂՄԸ.— Գիւղը նաև տոհմական միութիւն մըն էր, այսինքն երբեմն վաչկատուն, միշտ չուող, շարժուն տոհմը հաստատուելով հողի վրայ, կ'ապրէր տոհմերով. տոհմական կապը երկրագործութեան անցնող հասարակութեան մէջ ալ դեռ երկար ժամանակ կը մնար ամենէն կենսունակը: Գիւղերու գլուխը կանգնած էին գիւղապետերը կամ կոմարխաները. ասոնք տոհմապետներ են. կ'օգնեն Պարսից իշխանութեան ներկայացուցիչներուն գիւղերը կառավարելու, հարկերը հաւաքելու մէջ: Անոնք նաև իրենց գիւղական համայնքի շահերու պաշտպաններն են իշխանութեան առաջ: Ընկերային տեսակէտէն այդ շրջանը կարելի է կոչել տոհմապետական կամ կոմարխային: Բայց Հայերու ընկերային հոլովոյթի այս առաջին աստիճանն է. ան հազարաւոր տարիներու անցեալ ունէր մարա-պարսկական իշխանութեան տակ ան ոչ թէ կազմակերպուեցաւ և հիմնաւորուեցաւ, այլ աստիճանաբար քայքայուեցաւ տեղի տալով մէկ ուրիշ աւելի բարձր աստիճանի հասարակական կեանքի: Ընդհանուր անապահովութեան, տեւական կռիւններու, նոր աճելաւայր գտնելու համար եղած կռիւններու մէջ տոհմական կարգը կը քայքայուի, կը կազմուին աւելի կենսունակ տոհմա-ցեղային միութիւններ՝ ընդհանուր շահերու պաշտպանութեան համար: Ասոնց գլուխը կը կանգնէր իշխան մը, որ բարձրացեր էր տոհմապետներու մէջէն, համաձայնութեամբ կամ կռիւններով ենթարկեր էր իրեն միւսներուն: Ան երբեմն կը կոչուէր «թագաւոր»։ Յոյները ասոնց կը կոչէին «բազիլիաւս»: Այսպիսի թագաւոր էր կիւրոսի ժամանակուայ Հայոց իշխանը: Ան ուղմի մեծ ուժ ունէր՝ քառասուն հազար հետեւակ և ութ հազար հեծեալ:

ԴԱՍԱՅՆԱՅՈՒՄ.— Իշխանի, թագաւորի առաջացումով տոհմի մէջ կը կատարուի մեծ յեղաշրջում: Հողք, արօտատեղին, անասուններու հօտերը նախկին տոհմերէն կ'անցնին նոր տոհմապետ իշխանին: Տոհմի մնացած անդամները կ'իյնան ստորադաս վիճակի, կը դառնան հպատակ, կ'աշխատին և կը գործեն իշխանի համար:

Նոր իշխաններու բարձրացման շատ նպաստեց տեւահան կռիւները, շարժուն կեանքը, նոր նուաճումները. ասոնց հետեւանքը կ'ըլլան նոր անհաւասարութիւններու առաջ գալը: Իշխանները, թագաւորները կը հարստանան ավարով, գերիներով, հողերով, կը կազմեն աւելի մեծ բանակ, կը շրջապատուին զինուած և միայնուէ կռուողներով, իրենց իշխանութեան տակ կ'առնեն նոր ցեղեր: Այս գործողութեան արդիւնքն է մարական շրջանի Հայոց թագաւորութիւնը և հայ թագաւորի բաւական մեծ բանակ ունենալը: Մարապարսկական և քիչ մը ուշ սելեւկեան շրջաններու Հայոց հասարակութեան այս հոլովոյթը կը շարունակուի, ան կը շերտաւորուի. կ'ըստեղծուի կորովի, խիզախ, ռազմունակ վերնախաւ մը: Ան կը դառնայ վարիչ, իշխող դաս: Ան է, որ հետագային դանդաղօրէն պիտի ամբողջացնէր Հայոց բարձրաւանդակի գրաւումը, կատարէր այնտեղ ապրող բազմաթիւ ցեղերու միութիւնը: Ան էր հայացնող ուժը, առանց անոր գոյութեան Հայաստանի հայացումը տեղի չէր ունենար: Պարսկաստանը այս գործին նպաստեց ստեղծելով ներքին խաղաղութիւն ընդարձակ կայսրութեան մէջ, ան պաշտպանեց նաև Հայաստանը արտաքին ուժերու արշաւանքէն: Ահա այս խաղաղութեան և ապահովութեան մէջ, Հայաստանի մէջ ապրող տոհմերը, ցեղերը աստիճանաբար՝ շփումներու, խաղաղ կենսակցութեան, կռիւներու մէջ կը միանան, կը ձուլուին ստեղծելու համար հայութիւնը: Այս գործի գլուխը կանգնեցան հայ-արմէնական ցեղերը: Մարապարսկական իշխանութեան օրով վարիչ դասէն բարձրացեր էր տոհմ մը, որ կանգնեց էր բոլորի գլուխը: Առաջ կուգար, կը հիմնուէր պետութիւնը եւ իջող ճարտութիւնը:

Սատրապութեան հաստատումով միայն կեդրոնական իշխանութիւնը վերցուեցաւ, բայց նոր ստեղծուող վարիչ խաւը պահեց իր գոյութիւնը: Ան Հայաստանի զանազան մասերու մէջ հիմնեց տեղական իշխանութիւններ՝ որոնցմէ շատերը ցեղական հիմքեր ունէին: Ասոնք է, որ մինչև

Սրտաշիտեան հարստութիւնը վարեցին հայութեան ստեղծման գործը: Աքէմէնիեանները արգելք չեղան այս գործին: Անոնք Իրանի մէջ նուիրուած էին նոյն գործին՝ իրանական բազմաթիւ ցեղերու, տոհմերու միացման, ի մի հաւաքման: Անոնց այս ճիգը Հայաստան չհասաւ, ուստի վերջինս մնաց իր բախտին իր մէջ ստեղծուած ուժերու մրցութեան: Իսկ այս հոլովոյթը կ'ընթանար, ինչպէս ըսինք՝ ցրիւ. պառակտուած ուժերու, ցեղերու հաւաքման, լեզուներու միաւորման և մէկ ժողովուրդ ստեղծելու ուղիով: Այս գործի համար պակաս նշանակալից չէր և այն, որ վեցերորդ դարէն ետքը դուրսէն որեւէ մեծ զանգուած չժտաւ Հայաստան: Եղան աննշան մանր թափանցումներ, բայց ասոնք չէին կրնար փոխեր ստեղծուած յարաբերութիւնը: Ոչ պակաս նշանակալից էր և այն բանը, որ Պարսից և Սելեւկեան կայսրութեան մէջ Հայաստանը մեկուսացած էր, մեծ դէպքերու կեդրոնը չէր. ան ոչ ռազմավայր էր, ոչ ալ առևտրական մեծ ուղիներու հանգոյց: Այս մեկուսացման մէջ ալ սաղմնաւորուեցաւ և կառուցուեցաւ հայութիւնը իր վարիչ դասի ղեկավարութեամբ, որուն մէջ առաջնութիւնը կը պատկանէր Հայերուն և հայացած Արմէններուն: Այս գործողութեան ընթացքը մեզ համար մութ է. բայց անոր մասին կրնանք դատել ստեղծուած հետեւանքով՝ այսինքն հայութեան դասայնացումով եւ հայ ազնուականութեան ղեկավարութեամբ մեկ հայութեան ստեղծումով:



Դ. ԳԼՈՒԽ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՍԵԼԵԻԿԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ

Աքէմէնեաններու կայսրութեան անկումով Հայաստանը շատ կարճ ժամանակ կ'ապրի մեկուսացած և բոլորովին անկախ: Ոչ Աղեքսանդր Մակեդոնացին, ոչ անոր գործակիցները Հայաստան չմտան: Ան արեւելքի մէջ տեղի ունեցող մեծ դէպքերէն հետո էր: Մակեդոնացիներու համար ան չունէր ոչ քաղաքական ոչ ալ տնտեսական մշակութային արժէք: Միայն Պարսկաստանի և անապատային գօտիի նուաճումէն յետոյ թէ Աղեքսանդրը և թէ անոր զօրավարները կը փորձեն Հայաստանն ալ մուծել իրենց կայսրութեան մէջ: Աքէմէնեան բանակներու մէջ Հայերն ալ կը կռուէին Աղեքսանդրի դէմ, բայց կայսրութեան կործանումէն ետքը Հայաստանի սատրապը բոլորովին կը մեկուսանայ համապետական գործերէն և կը ջանայ միայն իր սատրապութիւնը պահել:

Մեծ նուաճողի մահէն ետքը անոր զօրավարները բաժնեցին կայսրութիւնը իրենց մէջ, բայց բաժանումի ենթարկուած երկիրներու ցուցակներու մէջ չի յիշուիր Հայաստանի անունը: Պէտք է ենթադրել, որ չորրորդ դարու վերջին Սելեւկեանները դեռեւս չէին հաստատուեր ոչ Մեծ, ոչ ալ Փոքր Հայքի մէջ: Անոնք փորձեր էին ըրեր, զօրավարներ էին ուղարկեր Հայաստանը գրաւելու, բայց անյաջող: Միայն իվերջոյ երկու Հայաստանն ալ կ'իյնան Սելեւկեաններու գերիշխանութեան տակ, միայն թէ այս կ'ըլլայ անուանական: Սելեւկեաններու իշխանութիւնը աւելի զգալի չէր քան Աքէմէնեաններունը:

ՄԵՄ ՀԱՅՔ.— Աքէմէնեաններու իշխանութեան օրով Հայաստանի վրայ սատրապ էր նշանակուած Օրոնդասը,

պարտիկ Վիրգարնայի ազնուական տոհմէն: Այս տոհմը շատ
քուսակեց իշխել Հայաստանի վրայ երկար ժամանակ: Այս-
տեղ ալ տեղի ունեցաւ այն, ինչ որ ուրիշ սատրապութիւն-
ներու մէջ. սատրապները կ'աշխատէին իրենց քարձր պաշ-
տօնը ժառանգութիւն թողնել հետնորդներուն, պահել այն
իրենց տոհմի մէջ: Թրոնգասը, որ մեր Երուանդն է, ստեղ-
ծեր էր Հայաստանի մէջ սատրապական իշխող հարստու-
թիւն մը՝ Երուանդեան, որ հինգերորդ դարէն գրեթէ
չընդմիջեալ ձեռով իշխեց Հայաստանի վրայ մինչև Արտա-
շեստաններու երևալը: Պարսից իշխանութեան թուլացման
հետևանքով Երուանդեաններու և կեդրոնական իշխանու-
թեան մէջ յարաբերութիւնները հագուաղէպ էին, Թրոն-
գոս—Երուանդեանները ասոր հետևանքով ոչ թէ կեդրոնա-
կան իշխանութեան ներկայացուցիչներ դարձան այլ տեղա-
կան ժողովուրդներու պետերը, ղեկավարները: Նոր միջա-
վայրի մէջ անոնք հայացան, իրենց շահերը նոյնացուցին
հայերէն բարձրացող ազնուականներու շահերու հետ և
փորձեցին կատարել հայկական գործ: Սելեւկեաններու ժա-
մանակ հաւանաբար Երուանդեանները՝ հայ իշխաններու
օժանդակութեամբ հարաւէն հիւսիս շարժուելով գրաւեցին
իրենց սատրապութեան մէջ չմտնող հողամասերը՝ Արարատ-
եան դաշտը, Արաքսի հովիտը: Իրենց կեդրոնը գարձուցին
Արմաւիրը, որ ուրարտական բերդ մըն էր, այն վերակոչե-
ցին Արմաւիր. աւելի ուշ անոնցմէ մէկը հիմներ է Երուան-
դակեցը և դարձուց այն մայրաքաղաք. Արմաւիրէն
և Երուանդակերաէն Երուանդեան հարստութիւնը ջանաց
գրաւել հիւսիսային Հայաստանը և հասնիլ Արարատեան
դաշտը օղակող բնական սահմաններուն:

Երուանդեանները իրենց կը կոչեն թագաւորներ, բայց
կը գտնուէին Սելեւկեաններու գերիշխանութեան տակ: Այս
ալ կ'արտայայտուէր հարկ տալով և երբեմն ալ զինական
օգնութիւն մատուցանելով: Բայց ընդհանրապէս Երուանդ-
եանները գործեր են միանգամայն ինքնազուխ, որպէս
անկախ իշխաններ. անոնք պայքարեր են Սելեւկեաններու

դէմ իրենց ազատութեան համար: Անոնք Հայաստան մուծեր են հելլենիստական մշակոյթը, իրենց արձանագրութիւնները յոյն լեզուով կը կազմէին: Երամալրի մէջ մեծ յարգ ունէին յունական աստուածները. ասոնց համար տաճարներ կը կառուցուէին: Այս Երուանդիանները, ինչպէս ըսինք Հայաստանի վրայ իշխեր են մինչեւ երկրորդ դարու սկիզբը և կոիւններէն յետոյ միայն իրենց տեղը զիջեր են նոր իշխող հարստութեան՝ Արսաւրսեաններուն:

ՓՈՔՐ ՀԱՅՔ.— Հայութեան նախնական հայրենիքն էր Փոքր Հայքը՝ Հայերու գաղթումներով՝ ան բոլորովին չամայացաւ, հոն մնաց խիտ հայ բնակչութիւն. բայց իր շուրջը հասունցան ուժեր, որոնք ազդեցին անոր քաղաքական բախտի վրայ: Ան քաղաքական տեսակետէն միշտ անջատուած մնաց Մեծ Հայքէն. անոր պատմութիւնը աւելի շատ կապուած է Կապադովկիոյ և Պոնտոսի պատմութեան հետ, քան Մեծ Հայքի: Ան այս երկիրներուն կը մօտենար տնտեսական պատճառներով Պոնտոսի վրայով կը հասնէր Սեւ ծովուն, Կապադովկիոյ վրայով Մոփաց աշխարհին և Հելլենիստական Սիւրիոյ քաղաքներուն: Աքէմէնեաններու օրով Փոքր Հայքը շրջապատող շարք մը ցեղերու հետ կը կազմէր արոյն սատրապութիւն: Ինչպէս ամեն սատրապութիւն ան ալ երկու վարչութիւն ունէր՝ դուրսիցը՝ սատրապականը և ներսը՝ իր լայն տեղական ինքնավարութիւնը, իր իշխանները: Աքէմէնեաններու անկումէն ետքը՝ Փաքր Հայքն ալ ձեռք բերաւ իր անկախութիւնը, բայց շուտով Սելեւկեանները յամառ փորձեր կ'ընէին զբաւելլու այն: Չորրորդ դարու վերջերուն այնտեղ հաստատուեցաւ Նեոպտոլեմեոս զօրավարը, որու ընդարձակ պետութեան միայն մէկ մասն էր Փոքր Հայքը: Բայց անոր իշխանութիւնը երկարատեւ չեղաւ. Հայերը ապստամբեցին: Ենթոյ դէմ: Միայն Եվմեգետի հաշտարար քաղաքականութիւնն է, որ ի վերջոյ Հայերուն կը պահէ նախ զանազան զօրավարներու, ապա Սելեւկեաններու իշխանութեան տակ: Ասոնք Փոքր Հայքի մէջ ունէին իրենց ներ-

կայացուցիչը՝ փոխարքան. բայց երկրի տէրերը իրօք հայկական միջավայրէն բարձրացած իշխաններն էին, որոնցմէ մէկը հաւանաբար պատասխանատուութիւն ունէր Սելեւկեան փոխարքայի առաջ: Հայերը հարկ կուտային հեռաւոր Սելեւկեան թագաւորին և այս ալ յաճախ չէին ընէր. ամեն ինչ կախուած էր երկու կողմերու ուժերէն: Երբ Սելեւկեանները թուլնային՝ ապա Հայերը կը փորձէին այդ հարկն ալ չտալ: Ընդհանրապէս Փոքր Հայքի մէջ դուրսի ուժի տիրապետութիւնը միայն անուանակա՛ն էր:

ԾՈՓԱՅ ԱՇԽԱՐՀ.— Ծոփքը աշխարհագրօրէն մաս կը կազմէր Մեծ Հայքի և կը գտնուէր անոր հարաւ-արեւ-մրտեան անկիւնը. անոր արեւմտեան սահմանը Եփրատ գետն էր, հիւսիսէն կը հասնէր Արածանիին, հարաւը Տաւրոսեան լեռներուն. ընդարձակ եռանկիւնաձեւ աշխարհ մըն էր, արգասաբեր եռանկիւնաձեւ շրջան մը Հայաստանի մէջ: Ան նաև երկու՝ սեմական և Փոքր Ասիական երկիրները միացնող գիծ մըն էր, անոր վրայով կ'անցնէին առևտրական մեծ ուղիները՝ Միջագետքէն, Հիւսիսային Սիւրիայէն դէպի Կապադովկիա, Պոնտոս, Փոքր Հայք: Ան սահմանակից էր հելլենիստական երկիրներուն: Եւ եթէ Մեծ Հայքի մէջ հելլենիստական մշակոյթը շատ թոյլ ձեւով միայն կ'արտայայտուէր, ապա Ծոփաց աշխարհի մէջ ան շատ աւելի ուժեղ էր, իր շրջանակի մէջ առեր էր հասարակութեան միջին դասերը: Մեծ Հայքի մէջ այս մշակոյթը կ'իւրացնէին տեղական թագաւորը, իշխանական ընտանիքները. Ծոփաց աշխարհի մէջ ան կը պատուաստուէր առևտրական դասի մէջ, որ միշտ հաղորդակցութեան մէջ էր Սիւրիոյ և Միջագետքի հելլենիստական մեծ կեդրոններու հետ: Այս կապը տնտեսական առևտրական էր և մշակութային: Եւ ասոր հետեւանքով ալ Ծոփաց աշխարհի մէջ է, որ կը հիմնուին առաջին քաղաքները: Այստեղ երրորդ դարէն կ'առաջանայ հայկական ուժեղ իշխանութիւն մը, որու գլուխը կանգնած էին յաջորդաբար քանի մը թագաւորներ: Երրորդ դարուն նշանա-

ւոր դէմք է Արշամը, (240 թ. շուրջ) որ հիմներ էր Արես-
մաես քաղաքը: Ան հաւանաբար Մոփքի անկախութեան
հիմնադիրն է. օգուտ քաղելով Սելեւկեաններու ներքին
կռիւներէն իր երկիրը կը յայտարարէ անկախ: Անոր կը
յաջորդէ իր որդին՝ Քսէրքսէսը, որ կ'ըսպաննուի Անտիո-
քոս III-րդի զաւարուութեամբ: Քիչ մը ուշ այս նոյն Ան-
տիոքոս III-րդը վերահաստատելով իր իշխանութիւնը Մեծ
Հայքի և Մոփքի վրայ՝ նոր մարդիկ կը հաստատէ այս
երկիրներու բախտը վարելու համար: Թերեւս ան վերջ էր
տուեր Երուանդեաններու հարստութեան Մեծ Հայքի մէջ
և իշխանութիւնը յանձներ էր Արսաեսիսին. բայց որպէս
Սելեւկեան փոխարքայի: Այս Արտաշէսն ալ Երուանդեան
հարստութեան մօտ կանգնած մարդ մըն էր: Իշխանութե-
նէն հեռացուած Երուանդեան տոհմը ասոր դէմ կը պայ-
քարի գահին տիրելու համար: Անտիոքոսը Մոփքի կառա-
վարիչ կը նշանակէ Ջարիադիսին, մի գուցէ նախկին իշ-
խանական տոհմի անդամներէն մէկուն, որ աւելի հաւա-
տարմութիւն ցուցահանած ըլլար իրեն: Սակայն ասոնք
երկար ժամանակ չմնացին Սելեւկեաններու իշխանութեան
տակ և հաւատարիմ Անտիոքոս III-րդին: Մագնիզիոն
նշանաւոր ճակատամարտէն տարի մը ետքը՝ 189 թիւին,
այս երկու իշխանութիւններն ալ ապստամբեցան և ձեռք
բերին իրենց երկիրներու անկախութիւնը:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ.— Այսպիսով մենք կը տեսնենք որ
Հայաստանի մէջ երբեք քաղաքական իշխանութիւնը չէ
վերացեր. Հայաստանի մէջ երբեք օտարի իշխանութիւնը
ամուր, հաստատուն չէ եղեր: Որքան կանգուն և ուժեղ է
եղեր հայրենի ազնուական դասը և անոր շրջանակէն բարձ-
րացող «թագաւորը» նոյնքան սահմանափակ է եղեր օ-
տարի, դրսեկի իշխանութիւնը: Ասոնց տիրապետութեան
տակ Հայաստանի բոլոր մասերու մէջ կատարուեր է նոյն
գործողութիւնը՝ ուժեղացումն ազնուական իշխանութիւ-
նեւ, կեդրոնացումն անոնց ուժերու, հասարակութեան
դասերու բաժանումն, խոտր կալուածախրութեան սեղմու-

մը եւ անազատներու, ռամիկներու յառաջանալը: Միւս կողմէն Հայաստանի այս երեք մասերը երբեք չմիացան մէկ իշխանութեան տակ: Իշխանութեան կեդրոնացումը երեք վայրերու մէջ կատարուեցաւ անջատօրէն: Չսեղծուեցաւ մէկ եւ միացեալ Հայաստան: Փոքր Հայքը տընտեսապէս և քաղաքական տեսակէտէն սերտօրէն միացած էր՝ Պոնտոսին. Ծովաց աշխարհը՝ հելլենիստական աշխարհի հետ կապուած էր առևտրական բարդ կապերով: Ան աւսնէն հարուստն էր, ամենէն հելլենացածը, ընկերային տեսակէտէն ալ ամենէն բարդը, ունէր դաս մը՝ հարուստ առևտրականներու, քաղաքաբնակ խաւ մը, որմէ զուրկ էր Մեծ Հայքը: Ծովաց աշխարհի բնակչութիւնն ալ ամբողջովին հայկական չէր: Ան ցեղերու, ժողովուրդներու հանդիպատեղի էր, Հայերու հետ հաւասարազօր ուժ կը ներկայացնէին սեմական ցեղերը, որոնքմեծ մասնակցութիւն ունէին առևտուրի մէջ: Ասոնք ալ տրամադիր չէին աւելի սերտ ձեւով միանալու Մեծ Հայքի հետ: Այս ազգազրական և տնտեսական պատճառներու վրայ կ'աւելնար և այն, որ թէ Փոքր Հայքի և թէ Ծովաց աշխարհի իշխող տուները չէին ցանկար առաջնութիւնը զիջիլ Մեծ Հայքին:

ՄԱՍՆ ԻՆՆԵՐՈՐԴ

ՀՈՍՍԸ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

Ա. ԳԼՈՒԽ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՒՈՎՈՅԹ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՒՈՎՈՅԹԸ.— Հոռմը սկիզբը ցեղախումբերու միութիւն մըն էր, ապա դարձաւ հանրապետութիւն և վերջացաւ որպէս մեծ, համաշխարհային կայսրութիւն: Իր հզօրութեան շրջանին ան կը ոտարածուէր երեք աշխարհամասերու վրայ, որոնք շրջապատեր էին Միջերկրական ծովը: Հոռմէական պետութիւնը կառուցուեցաւ աստիճանաբար. բազմաթիւ սերունդներ քանի մը դար աշխատեցան այդ գործի վրայ: Բանի մը գիւղերու, անջատ համայնքներու միացնողը էտրուսկներն էին, որոնք կ'ապրէին Հոռմէն հիւսիս: Անոնք ընդարձակելով իրենց պետութիւնը գրաւեցին Տիբերի գետաբերանը և տէր դարձան Հոռմի գիւղական համայնքներուն: Անոնց գերիշխանութեան տակ այդ համայնքները վարժուեցան գիւղատնտեսական աշխատանքներու, ջրաբաշխութեան: Էտրուսկները չորցուցին ճահիճները, անցուցին Եւրոպայի անուղղակի ձեւով նպաստեց հոռմէական համայնքներու միութեան: Եւ միացեալ ուժերով անոնք դուրս ըրին Էտրուսկներուն: Բայց ընդօրինակեցին տիրողներէն շատ բան՝ վարչութիւնը, հասարակական աշխատանքը, ջրաբաշխու-

Թիւնը և համայնական ժողովները: Շուտով Հոռմը ինքը ընթացաւ նուաճումի ուղիով: Արդէն մեծցած, դարձած քաղաք-պետութիւն ան սեղմուած և մեկուսացած ապրիւ չէր կրնար: Գտնուելով թերակղզիի կեդրոնը ան իր նուաճումները կ'ընէր ամեն ուղղութեամբ: Երբեմն և յաճախ կը պարտուէր. ծանր տագնապններու կ'ենթարկուէր, բայց իր աննկուն կամքը, իր յամառութիւնը կը փրկէր անոր: Անընդհատ կռիւներով ան չորրորդ դարուն առաւ Իտալական թերակղզին իր իշխանութեան տակ: Գրաւեց Լացիոմը, Վոլսկը, Յարինիան, Էտրուսկիան, Սաբինան, Ռաճփիան: Ասկէ ետքը իջաւ հարաւ, գրաւեց Մեծ Յունաստանի առեւտրական, հարուստ քաղաքները, որոնք կազմակերպուած էին որպէս քաղաք-պետութիւններ: Յոյն քաղաքներէն միայն Տարէնթոնը փորձեց դիմագրել Էպիրոսի Թագաւոր Պիրոսի օգնութեամբ, բայց պարտուեցաւ: Երրորդ դարու սկզբին ամբողջ թերակղզին Հռոմի իշխանութեան տակ էր: Նուաճուած երկիրներուն ան տուաւ նոր կողմակերպութիւն, քայքայեց բոլոր տեղական, շրջանային և ցեղական խմբաւորումները, միութիւնները, բաժանեց անոնց, արգիւնց քաղաքներուն և տոհմերուն կապուելու իրարու հետ: Բաժանեց, որ աիրելը դիւրին ըլլայ: Իւրաքանչիւրը առանձին կապուեցաւ Հռոմի հետ: Բանի մը հատը անոնցմէ յայտարարուեցան դաշնակից քաղաքներ, ստացան հռոմէական քաղաքացիի իրաւունք: Ասոնք ինքնավար միութիւններ էին: Իտալական թերակղզիի յունական քաղաքներու մեծ մասը հռչակուեցան որպէս դաշնակիցներ և առանձին դաշինքներով կապուեցան Հռոմի հետ:

ՊԱՏԵՐԱԶՄ ԿԱՐԹԱԳՒՆԻ ԴԷՄ.— Թերակղզիի բոլոր մասերու գրաւումով հարեւան ու շրջապատող ծովերուն հասնելով՝ ան տէր դարձաւ լաւագոյն նաւահանգիստներու, առեւտրական քաղաքներու ու առեւտրական մեծ նաւատորմիղի: Հոռմը իրերու բերմունքով դարձաւ ծովային պետութիւն: Ան այժմ ուզէր չուզէր պիտի պաշտպանէր իրեն հպատակ էտրուսկ և յոյն քաղաքներու, առեւտրա-

կաններու շահերը, որոնք շատոնց վաճառականութեամբ կ'ըզբաղուէին: Բայց հոս ան կը հանդիպէր մեծ ուժի մը՝ Կարթագէնը, որ քանի մը դար արեւմտեան Միջերկրականի վաճառականութիւնը պահեր էր իր ձեռքին: Եթէ արեւելքի մէջ սեմական տարրը աստիճանաբար ընկրկեցաւ և վեցերորդ դարու կիսուն իր առաջնութիւնը զեջեցաւ արիական Պարսիկներուն, ապա արեւմուտքի մէջ սեմական մէկ հատուածը՝ Կարթագէնը շարունակեց առաջնութիւն ունենալ մինչև երրորդ դարու վերջերը: Հոս մրցութիւնը տեղի կ'ունենար սեմականներու արեւմտեան մէկ փոքր հատուածի և հնդեւրոպական Հռոմէացիներու մէջ: Ինչպէս արեւելքի, այնպէս ալ արեւմուտքի մէջ վերջնական յաղթանակը տարին հնդեւրոպական ժողովուրդները:

Միջերկրականի արեւմտեան աւազանին մէջ նոր շուկաներ գրաւելու համար Կարթագէնի հետ կը մրցէին էտրուսկները, Յոյները: Հռոմը ժառանգեց անոնց ռազմական և տնտեսական հարցերու լուծումը: Երբորդ դարուն Հռոմի առաջ դուած էր Միջերկրականի արեւմտեան աւազանի տէր դառնալու հարցը: Հոս ան գործ ունեցաւ միայն Կարթագէնի հետ: Առաջին փիւնիկեան պատերազմը տեղի ունեցաւ 264–241 թուերուն: Կարթագէնը պարտուեցաւ, Հռոմը գրաւեց Սիկիլիան, ապա հետագայ տարիներուն բռնագրաւեց Գորսիքան, Սարտինիան և ոտք դրաւ սպանական հողի վրայ: Միւս կողմէն ծանր հարուածներէն Կարթագէնը շուտով կը կազդուրուի, նոր գրաւումներ կ'ընէ Ափրիկէի և յատկապէս Սպանիոյ մէջ: Հռոմը հակառակորդի այս վերածնունդի հետ չի հասուիր կ'ըսկսուի երկրորդ փիւնիկեան պատերազմը 218-էն մինչև 201 թիւը: Հռոմը ծանր տաքնապի մէջ կ'իյնայ: Կարթագէնի հանճարեղ զօրավար Հանիբալը պատերազմի կեդրոն կը դարձնէ Իտալիան: Տրասիմէնի և Քանի ճակատամարտներու մէջ Հռոմը ահաւլի պարտութիւններ կը կրէ: Անոր բոլոր կրուողները, ազնուական ընտանիքներու զաւակները՝ կ'իյնան ճակատամարտներու մէջ: Բայց ան չընկճուի, անոր կը փրկէ

Հանիբալի մէկ սխալը՝ ան ուղղակի Հոռմի վրայ չգնաց։ Վերջինս ալ օգտուելով տակէ կը հաւաքէ իր բոլոր ուժերը՝ պատերազմի գործողութիւններու կեդրոն կը դարձնէ Ափրիկէն։ Կը Զանայ Հանիբալին պահել յաւայիոյ մէջ, իսկ Սկիպիոն զօրավարին մէկ քանակով կը զրկէ Ափրիկէ։ Կարթագէնացիք այդ օրհասական կացութեան ժամանակ ետ կը կանչեն Հանիբալին. որոշիչ ճակատամարտը տեղը կ'ունենանայ Ջաւալի մէջ, Կարթագէնի մօտ. Հռոմէացիք կը տանին կատարեալ յաղթանակ. կը կնքուի 201 ի դաշինքը, ըստ որու Կարթագէնը կը հրաժարի Սպանիայէն, իր ռազմական նաւատորմը կը յանձնէ անոր կ'ընդունի Հոռմի հովանաւորութիւնը։ Փիլիպիեանց երեսուրդ պատերազմը տեղի ունեցաւ երկրորդ դարու կէսերուն և վերջացաւ 146 թուին, Կարթագէնի կատարեալ աւերումով։ Այժմ արեւմուտքի մէջ չկար որեւէ ուժ Հոռմի դէմ։

Կարթագէնի պարտութեամբ Հռոմը տէր դարձաւ անոր շուկաներուն, Յոյներն ալ Հոռմի հովանիին տակ իրենց ձեռքը կ'առնեն արեւմուտքի վաճառականութիւնը։

ԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ.— Երկրորդ դարը Հոռմի պատմութեան մէջ մեծ արշաւանքներու և նուաճումներու դար է։ Հռոմը կը փորձէ տէր դառնալ արեւելեան Միջերկրականին։ Միւս կողմէն անոր քաղաքականութեան գլխաւոր խնդիրը կ'ըլլայ՝ թոյլ չտալ, որ Իտալիոյ մօտիկ մեծ պետութիւն մը ստեղծուի։ Իսկ այդ ուժը ստեղծուած էր. Մակեդոնիան Իլիրիայի վրայով հասեր էր Ատրիադիկ ծովուն. ան կը ծրագրէր ռազմական նաւատորմիդ մը կառուցել այդ ծովու վրայ. այս բանը մեծ վտանգ էր Հոռմի համար. իսկ Ֆիլիպ V-րդը Մակեդոնիոյ թագաւորը դաշինք կնքեց Սելեւկեան Անտիոքով III ի հետ։ Անոնք կ'ուզէին լախտել, չեղեալ համարել այն հաւասարակշռութիւնը, որ ստեղծուած էր արեւելքի մէջ Հոռմի հպօրացումը նոր գործօն էր Արեւելեան Միջերկրականի շուրջն ստեղծուած պետութիւններու համար։ Կարթագէնը Հոռմի լքեմ կ'ուսուցի օգնութիւն խնդրեց Եգիպտոսէն, բայց ան

մերժեց, բարեկամական դաշինք կնքեց Հոռմի հետ և ցորեն ուղարկեց անոր: Բայց երկրորդ դարու սկզբին արեւելեան գործերու մէջ Եգիպտոսը այլեւս տեղ չունէր, ան այնքան թուլցեր էր, որ նոյնիսկ ընդունեւր էր Հոռմի հովանին: Արեւելքի մէջ առաջնակարգ գործօն ուժերն էին Սիւրիոյ Սելեւկեանները և Մակեդոնական թագաւորը Ֆիլիպ V-ը: Ասոնք ալ կ'ուզէին եղած կարգը փոխել յօգուտ իրենց, կ'ուզէին վերացնել փոքր իշխանութիւնները՝ Հռոդոսը, Բիւզանդիան, Պերգամը և ուրիշ բազմաթիւ քաղաք-պետութիւններ, որոնք անոնց իշխանութենէն դուրս կը գտնուէին, բայց արտակարգօրէն հարստացեր էին միջազգային առեւտուրի մէջ: Հարուստ այս քաղաքներն ու իշխանութիւնները վտանգուած կը տեսնէին իրենց գոյութիւնը Սելեւկեաններու և Ֆիլիպի քաղաքական նպատակներէն: Եղած կացութենէն, Մակեդոնիոյ տիրապետութենէն դժգոհ էին նաեւ յունական քաղաքները, որոնք մակեդոնական իշխանութեան տակ կորսնցուցեր էին իրենց քաղաքական ազատութիւնները և ենթարկուեր ծանր հարկերու: Ֆիլիպի և Անտիոքոսի նուաճողական միտումները այս քաղաքներուն և իշխանութիւններուն ձգեցին Հոռմի գիրկը: Հոռմն ալ, փիւնիկեան երկրորդ պատերազմէն ետքը, Ֆիլիպ Մակեդոնացիի նուաճողական ճիգը խեղդելու համար բանակներ ուղարկեց Մակեդոնիա և Յունաստան:

ՊԱՏԵՐԱԶՄ ՄԱԿԵԴՈՆԻՈՅ ԴԻՄ.— Այս պատերազմին նոյներու համակրանքը Հոռմի հետ էր. անոր կը նկատէին որպէս անողորմարար: Էտոլիական յոյն դաշնակցութիւնը, Պերգամը, Հռոդոսը իրենց նաւատորմիզը դրին Հոռմի տրամադրութեան տակ: ԿիմոսէՖալի ճակատամարտի մէջ 197 թիւին, Ֆիլիպ V-ը կը պարտուի, կ'ընդունի Հոռմի հովանաւորութիւնը, կ'ոչնչացնէ իր նաւատորմիզը. մեծ ռազմատուգանք կը վճարէ: Հոռմէական զօրավար Ֆլամինիներ հանդիսաւորապէս կը յայտարարէ Յունաստանի ազատութիւն հռմէական ժողովուրդի անունէն: Պարտութենէն ետքը Ֆիլիպը պահեց Մակեդոնիոյ հողերու ամբողջ

Ղուծիւնը, բայց երբեք չհաշտուեցաւ իր պարտութեան հետ. գաղտնի կը պատրաստուէր նոր պատերազմի համար: Այս պատերազմն ու ապստամբութիւնը տեղի ունեցաւ անոր որդու Պեռսեի օրով 172 թիւին Մակեդոնացիք նորէն յաղթուեցան: Պերսէն գերի ինկաւ և հռոմէական զօրավար Պուլ-էմիլի շքախումբի մէջ տարուեցաւ Հռոմ: Մակեդոնիան որպէս պետութիւն դադրեցաւ գոյութիւն ունենալէ: Ան բաժնուեցաւ չորս նահանգներու, որոնք ոչ մէկ կապ չունէին իրարու հետ: Քանի մը տարի ետքը Մակեդոնացիք նորէն ապստամբեցան և անոնց միացան յունական քաղաք-պետութիւնները, որոնք մակեդոնական ճնշումներէն ազատագրուելով ինկեր էին աւելի դաժան հռոմէական լուծի տակ: Ասոնք միջամուխ կ'ըլլային անոնց ներքին կեանքին, քաղաքական կռիւներուն յենարանը կը գառնային ազնուապետական հոսանքներուն և կը պայքարէին դեմոկրատիկ շարժման դէմ: Յոյն մակեդոնական միացեալ բանակները խիստ պարտութիւն կրեցին. Հռոմէացիք դաժանօրէն վարուեցան ապստամբներու հետ, աւերեցին, աւերեցին բազմաթիւ քաղաքներ, հարուստ և ճոխ կորընթոս քաղաքը ոչնչացուցին, տասնհակ հազարաւոր բարձրորակ Յոյներ գերի տարուեցան Հռոմ: Մակեդոնիան և Յունաստանը դարձան հռոմէական նահանգներ 146 թիւին:

ՊԱՏԵՐԱԶՄ ԱՆՏԻՈՒՔՈՍ III-ՐԴԻ ԴԵՄ. Արեւելքի մէջ ուժ մը միայն մնացեր էր, որ չէր հրաժարի իր նուաճողական միտումէն: Անտիօքոս III ըր զ'ուզէր գրաւել Փոքր Ասիան, որ կը ծառայէր անոր համար որպէս պաշտպանողական խարխիւս. կ'ուզէր թուլցնել Պերզամը, որու համարանքը Հռոմի հանդէպ յայտնի էր անոր: Սկիզբը Հռոմը տրամադիր չէր միջամտելու ասիական գործերու մէջ: Ան կ'ուզէր համաձայնութեան գալ Անտիօքոսի հետ, պայմանով, որ անոր նուաճումները Ասիոյ սահմաններէն դուրս չգան: Սեւեկեան թագաւորը սխալ հասկցաւ Հռոմի այս դիրքորոշումը. ան այդ բանը համարեց թուլութեան նշան: Անոր քաղաքական խորհրդատուն էր Հռոմի ամենէն ոխե-

րիմ թշնամին՝ Հանիբալը, որ փախեր էր արեւելք Չամա-
յի անյաջող ճակատամարտէն ետքը: Ան կը ջանար Անտիո-
քոսին հանել Հռոմի դէմ՝ խոստանալով միաժամանակ Ա-
րեւմտաքէն կարթագէնի օգնութիւնը: Յոյն էտոլիական
դաշնակցութիւնը սկսաւ կռիւներ Հռոմի դէմ և խնդրեց
Անտիոքոս III-էն զինական օգնութիւն: Ան համաձայնեցաւ
և զօրք ուղարկեց Յունաստան: 191 թիւին Հռոմը պա-
տերազմ յայտարարեց Անտիոքոսին. կռիւները երկար
չտեւեցին և վերջացան Անտիոքոսի ամբողջական պարտու-
թեամբ: Ան պարտուեցաւ Յունաստանի մէջ, ետ քաշեց իր
զօրքը, ապա Փոքր Ասիոյ մէջ Մազնեզիայի մօտերը 190
թիւին մեծ պարտութիւն կրեց. Եգիպտոսը, Հռոդոսը,
Պերգամը, նոյնիսկ Մակեդոնիան Սելեւկեաններու դէմ էին
և Հռոմի դաշնակիցներ: Խաղաղութեան դաշինքէն կ'երեւ-
ւայ, որ Հռոմը միտում չուներ Սելեւկեան թագաւորու-
թիւնը վերցնելու. անոր նպատակն էր՝ թոյլ չտալ որ
արեւելքի մէջ իրեն հզօրութեան դիմաց ստեղծուի վտան-
գաւոր ուժ մը: Ուստի Անտիոքոս III-ըդին կը թելադրէ
համապատասխան դաշինք մը: Վերջինը պիտի ընդմիջտ
հրաժարէր Փոքր Ասիայէն, իր զօրքերը պիտի հանէր հոն-
կէ, յաղթողին պիտի յանձնէր իր ամբողջ ռազմական նա-
ւատորմիդը: Այս կէտը շատ կարեւոր էր Հռոմի շահերու
տեսակէտէն: Այս ձեւով ամբողջ Միջերկրականը բաց կ'ըլ-
լար անոր նաւատորմի առաջ. ան այժմ իր նաւերով կը
հսկէր նեղուցներէն սկսած մինչեւ Եգիպտոս: Անտիոքոս III
կը պարտաւորուէր նաև մեծ ռազմատուգանք վճարել: Ան
պահեց Սիրիան, բայց այստեղ ու այնտեղ կրճատուած ու
քայքայման վտանգի տակ, Իսկ արեւելիան մեծ ու փոքր
պետութիւնները դարձան Հռոմի արբանեակ իշխանութիւն-
ներ. անոնց ազատութիւնը կախուած էր Հռոմէն: Անոնք
յարմարուեցան Հռոմի արեւելիան քաղաքականութեան.
այլեւս դաշնակիցներ չէին ինչպէս պատերազմի ընթաց-
քին, այլ միայն կամակատարներ: Հռոմի՝ Փոքր Ասիոյ մէջ
ամուր հաստատուելու մէջ խոշոր դէպք էր Պերգամի թա-

գաւոր Ատալլա III-րդի մահը 133 թիւին: Ան կը մեռնէր անգաւակ և իր պետութիւնը կը կտակէր Հոռմին: Իսկ վերջինս ալ երկու տարի յետոյ զայն յայտարարեց իր առաջին Պրովինցիան՝ նահանգը ասիական հողի վրայ:

ՆՈՐ ԿԱՅՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ.— Մակեդոնական և սելեւկեան պետութիւններու անկումէն ետքը Մերձաւոր Արեւելքի մէջ կ'ըստեղծուին քանի մը մեծ ու փոքր անկախ պետութիւններ: Արդէն կար Եգիպտոսը, բայց երրորդ դարու վերջերուն թուլցած էր. այժմ երկրորդ դարուն ան աւելի խստորէն զգաց Հոռմի ծանրութիւնը, թէեւ անկախ էր: Նոր ստեղծուած պետութիւնները կը տարածուէին փոքրը Ասիական բարձրաւանդակի վրայ, անոնք շարունակ մրցման և կռիւններու մէջ էին, որմէ կ'օգտուէր միայն Հոռմը՝ միշտ երեւան գալով խաղաղացնողի և հաշտարարի դերին մէջ: Այս պետութեանց մէջ երբեք գործակցութիւն չստեղծուեցաւ. ասոր դէմ էր նաև Հոռմը: Յեղադրական, մշակութային և քաղաքական հակադրութիւններն ալ խիստ էին: Փոխանակ գործակցութեան իւրաքանչիւրը կ'աշխատէր գերիշխել միւսներու վրայ: Այնպէս էր Պերգամը, որ երրորդ և երկրորդ դարերուն առաջնակարգ դեր կը խաղար Փոքր Ասիոյ մէջ և հանդիսացաւ նշանաւոր կեդրոն հելլենիստական մշակոյթի: Առաջին դարուն անոր տեղը կը բռնեն Պոնտոսը և Հայաստանը: Ասոնց դէմ ալ Հոռմի քաղաքականութիւնը նոյնն էր, թոյլ չտալ, որ ասիացիները մինակ կամ գործակցութեամբ ստեղծեն պատկառելի ուժ մը, որ իր առաջնութիւնը հաստատէ արեւելքի մէջ: Ուստի ան սկիզբը հակառակեցաւ Պերգամի ընդարձակման երկարամեայ կռիւններ մղեց Պոնտոսի և Հայաստանի դէմ ապա երբ այս ուժերուն փոխարինեցին Պարթեւներու պետութիւնը՝ անոնց դէմ ալ դարաւոր պատերազմներ սկսաւ:

ՀՌՈՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԻ ՉԵՒՐ.— Երկրորդ դարէն և առաջին դարու սկիզբէն Հոռմը գաղութային պետութիւն մըն էր: Անոր գաղութները սփռուած էին Միջերկրականի

բոլոր եզերքներուն: Այս գաղութներէն ամենէն նորը, բայց ամենէն արժէքաւորները կը գտնուէին արեւելքի մէջ. անոնք ունէին հին և բարձր քաղաքակրթութիւն: Մեծ նուաճումներէն ետքը Հռոմի առաջ կը դրուէր այդ երկիրները կառավարելու հարցը: Պէտք էր գտնել վարչական մէկ ձեւ, որ մէկ կողմէն բաւարարէր տեղական բնակչութեան, միւս կողմէն ապահովէր Հռոմի տնտեսական ու քաղաքական շահերը: Հռոմը իր գաղութային վարչակազմ կազմակերպութեան մէջ չառաջնորդուեցաւ տեղական բնակչութեան շահերը յարգելու միտումով. անոր համար նոր գրաւուած շրջանները միայն չահագործման առարկայ էին: Բազմապիսի ձեւերով քաղաքական և տնտեսական չահագործման ենթարկուեցան Պերգամը՝ Փոքր Ասիական մեծ ու փոքր պետութիւնները, ապա քիչ մը ուշ Սիւրիան, Եգիպտոսը:

Ճնշումի և չահագործման այս քաղաքականութիւնը կ'առաջացնէր իր հակաշարժումը: Քանի մը անգամ արեւելքը ծառայաւ արեւմուտքի՝ Հռոմի գէմ՝ միշտ ղեկավարուելով Փոքր Ասիական ժողովուրդներու ազատագրութեան երազներով: Նուաճումներու հետեւանքով Հռոմը ունեցաւ ոչ միայն դաշնակիցներ, որոնք այս կամ այն չափով իրաւունքներ ունէին, ոչ միայն հռոմէական քաղաքացիի իրաւունքներով օժտուած քաղաքներ ու խմբակցութիւններ, այլև հպատակներ: Հպատակի գաղափարը անծանօթ էր յունա-հռոմէական մտածողութեան որ սակայն գտան Մերձաւոր Արեւելքի մէջ: Նոր գրաւած երկիրներու մէջ ընդհանրապէս չ'ուղղորդուեցաւ ոչ քաղաքացիներ էին, ոչ դաշնակիցներ, այլ միայն օտարներ ու հպատակներ:


ՅՈՅՆ ՓՈՔՐ ԱՍԻԱԿԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԸ.— Յունաստանի և Փոքր Ասիոյ յայն քաղաքներուն Հռոմը տուաւ ինքնավարութիւն, աւելի ճիշտ պահեց այն, ինչ որ անոնք ունէին հելլենիստական միապետութիւններու օրով: Իսկ անոնք պահեր էին իրենց մագիստրոսները, խորհուրդները, համայնական ժողովները: Այս կազմակերպուած մարմինները

Հռոմը ծառայեցուց իր նպատակին համար. անոնց միջոցով կը գանձէր իրեն հասնելիք տուրքերը՝ առանց միջամտելու անոնց ներքին գործերուն. Հռոմի անմիջական վարչութեան ենթակայ էր միայն քաղաքներէն հեռու և անոր շրջագծի մէջ չմտնող հողերը, որոնց բնակիչները մեծ մասով տեղացիներ էին: Քանի մը քաղաքներու ալ, որոնք խառն բնակչութիւն ունէին, ան շնորհեց ինքնավարութիւն միայն անոր համար, որ սկիզբէն և եթ նպատակ էին իրեն՝ հաստատուելու արեւելքի մէջ: Բոլոր յոյն ինքնավար քաղաքները իրօք այլևս ազատ քաղաքներ չէին, քաղաքապետութիւններ չէին, այլ արտաքին քաղաքականութիւն վարելու իրաւունքէն զրկուած և գերիշխանութիւն կորսնցուցած միաւորներ: Հելլենիստական մեծ ու փոքր թագաւորները, իշխանները գրեթէ ամբողջութեամբ ենթակայ էին Հռոմին: Անոնց գործերը կը տնօրինէր Պերգամի պրէտորը, Հռոմի լիազօրը՝ բացարձակ իրաւունքներով օժտուած: ՊՐՈՎԻՆՅԻԱՆԵՐ.— Իրկրորդ դարուն Հռոմը կը հետեւէր տեղական անկախութիւնները և իշխող հարստութիւնները պահելու քաղաքականութեան: Բայց աստիճանաբար ան հրաժարեցաւ ասոյէ և մուծեց պրովինցիաներու դրութիւնը, որոնք վարչական միաւորներ էին և որոնց վարիչները կը նշանակուէին Հռոմի սենատէն: Այս վարիչները կուգային իրենց բազմապիսի օգնականներով, քարտուղարներով: Պրովինցիաներու կառավարութեան եղանակը թնաւ չէր ապահովեր տեղացիներու ոչ իրաւունքն ու շահերը, ոչ ալ անոնց նկատմամբ կը կիրառէր արդարութիւնը. բաւարարուած չէին հելլենիստական քաղաքները, որոնք ոչ միայն ինքնավարութեան էին սովոր, այլև քաղաքապետութիւններու ազատութեան: Հռոմի սենատը և արեւելք եկող բարձր պաշտօնեաները պրովինցիաներու վրայ կը նայէին որպէս «Հռոմէական ժողովուրդի» սեփականութեան: Պրոկոնսուլը և պրէտորը կը նշանակուէին ծերակոյտի անդամներէն, անոնք առանց վերահսկողութեան և կառավարէին իրենց յանձնուած շրջանները: Այդ լիա-

գօրութիւնը անոնց կը տրուէր մէկ տարուայ համար, ուստի անոնք կը ջանային որքան կարելի է մեծ շահ ապահովել: Պրովինցիաները չէին կառավարուեր, այլ կը հանրատահարուէին:

Բացի ձերակոյտէն, որ խոշոր պաշտօնները կը վերապահէր իրեն անդամներուն և կը դառնար պրովինցիաներու մէջ ղեկավար ուժ, Հռոմի մէջ կար և երկրորդ, ասպետներու դասը, որ անոր առեւտրա-արգիւնաբերական դասն էր: Պատերազմի հետեւանքով ան իր ձեռքը կուտակեր էր խոշոր դրամագլուխ: Պատերազմներէն ետքը այդ դրամագլուխը անհրաժեշտ էր գործի դնել: Պետութիւնը բռնազրաւեր էր արհեսլքի մէջ նախկին իշխողներու կալուածները, տաճարական հարստութիւնները, անտառներ, նաւահանգիստներ, ձկնարաններ, արօտատեղիներ, երկաթի, ոսկիի, պղինձի հանքեր: Այս բոլորը շահագործելու համար պէտք էր խոշոր դրամագլուխ: Բայց պետութիւնն ինքը իր պաշտօնեաներու միջոցով չէր շահագործեր այդ հարստութիւնները, այլ կը յանձնէր դրամատէր կապալառուներուն:

ԿԱՊԱԼԱՌՈՒՆ.— Ստեղծուեր էր դրամատէր-բուրժուական դաս մը, որ իր դրամը կը գործադրէր մեծ կապալներ վերցնելու համար: Անոր շահերը համաձայն էին ձերտկուտական պրովինցիաներու շահերուն: Երկուքն ալ կը նայէին իրենց յանձնուած, կապալով վերցուցած շրջանին որպէս շահագործման առարկայի: Մէկը կը շահագործէր տեղացիներուն, միւսը՝ պետութիւնը և ժողովուրդը: Այս բոլորը աղիտաբեր եղան արհեսլքի համար: Արեւելեան քաղաքները ենթարկուեցան բազմատեսակ հարկերու, որոնք կը հաւաքուէին քաղաքային խորհուրդներու միջոցով: Ասոնց անդամները կ'ըլլային ամենէն հարուստ և ազդեցիկ քաղաքացիները: Սկիզբը անոնք ընտրովի էին, ապա պրոկոնսուլը ինքը կը նշանակէր, նշանակուածները հարուստներէն կ'ըլլային, որպէսզի իրենց հարստութեամբ պատասխանատու ըլլային տրուելիք հարկերու համար: Ամեն ինչ



LA RÉPUBLIQUE ROMAINE ET L'ORIENT

au moment de la guerre de Mithridate
(92 av. J.-C.)

ՀՌՈՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԻՒՆԸ ԵՒ ԱՐՄԵՆԻԲ

ճնթարկուած էր հարկի, ապահարկ չէր ոչ ոք, ոչ մէկ աշխատանք և ոչ մէկ կտոր հող: Քաղաքները չկրնալով վճարել ծանր հարկերը պարտքով դրամ կը գտնէին: Ահա այդ պահուէն անոնց «օգնութեան» կը հասնէին սեղանաւորները, որոնց կեդրոնք Հոռոմէն էր, բայց որոնք ունէին իրենց բաժանմունքները Փոքր Ասիոյ բոլոր քաղաքներու մէջ: Ասոնք մեծ դրամագլուխի տէրեր էին, և մեծ առևտուրով ալ դրամ կուտային քաղաքներուն և քաղաքացիներուն, արեւելքի իշխաններուն, խոշոր կալուածատէրերուն: Ասոնք մէկ անգամ պարտքի տակ իյնալով՝ այլեւս չէին կրնար ազատուիլ և սեղանաւորները կը գրաւէին կամ իրենց հրակողութեան տակ կ'առնէին անոնց շարժական և անշարժ սենեցուածքը, հարստութիւնը: Արեւելքի ամենէն ծաղկած քաղաքներն ինկան պարտքի տակ: Պրոկոնսուլները սեղանաւորներու հետ կը գրաւէին քաղաքներու հարստութիւնը և ամենէն առաջ քաղաքային խորհուրդներու անդամներու ինչքն ու գոյքը:

ՀԵՏԵԻԱՆՔԸ.— Այս ձեւի հարստահարութեան կ'անթարկուէին Փոքր Ասիոյ նոր կազմուած պրովինցիաները և Հռոմին դաշնակից փոքր պետութիւնները, որոնք դեռեւս չէին յայտարարուած հռոմէական նահանգ, այլ պահեր էին իրենց ստուերային անկախութիւնը՝ կապաղովկիան, Բիթանիան: Հռոմի պրոկոնսուլներու կապալառուներու և սեղանաւորներու այս շահագործումը ունեցաւ շատ ծանր հետեւանք նաեւ հելլենիստական մշակոյթի համար: Այդ քաղաքները յոյն և յունացած բնակչութեան կեդրոններ էին: Անոնք գրականութեան, արուեստի, դպրոցներու օճախներ էին: Առեւտուրի և արդիւնաբերութեան մէջ հարըստացած քաղաքացին յենարանն էր հելլենիստական մշակոյթի: Անոնք մեկենաս կը հանդիսանային գրողներու, փիլիսոփաներու, կը գեղեցկացնէին հայրենի քաղաքները, կ'օժտէին յարմարութիւններով՝ արձաններով, թատրոնով, մրցադաշտով, գրադարաններով: Հռոմի իշխանութեան տակ քաղաքն ու քաղաքացին ազատացան, շինարարու-

Թիւնը կանգ առաւ, դիր աւ գրականութիւն մնացին առանց նիւթական յենարանի: Հռոմի տնտեսական քաղաքականութիւնը ոչ թէ նպաստեց հելլենիստական մշակոյթի վերելքին, այլ միայն վայրէջքին: Անոր իշխանութեան տակ արեւելքի տնտեսական, քաղաքական և մշակութային յառաջդիմութիւնը կանգ առաւ: Բայց Մերձաւոր Արեւելքը իր մէջ սւժեր ունէր, որոնք պիտի ծառանային արեւմուտքի դէմ ազատագրելու Փոքր Ասիան և իր ժողովուրդներուն: Այդ շարժման գլուխը պիտի կանգնէր առաջին դարուն՝ Պոնտոսը:

Բ. ԳԼՈՒԽՆ

ՊՈՆՏՈՍ ԵՒ ՄԻԶՐԴԱՏ ԵՒՊԱՏՈՐ

Է ՊՈՆՏՈՍ

ՍԱՀՄԱՆ ԵՒ ԲՆԱԿԶՈՒԹԻՒՆ.— Առաջին դարուն (Քր. Ա.) Մերձաւոր Արեւելքի ամենամեծ, հզօր և կազմակերպուած պետութիւնը Պոնտոսն էր: Փոքր Ասիական պետութիւններէն միայն ան էր, որ պահեր էր իր անկախութիւնը, գերիշխանութիւնը և չէր ճանչնար Հռոմի այս կամ այն աստիճանի բարեկամութիւնն ու հովանաւորութիւնը: Ան ինկած էր Սեւ ծովու հարաւային ափերուն: Ան սահմանակից էր՝ արեւմուտքէն Բիւթանիոյ, հարաւէն Կապադոկիոյ, հարաւ-արեւելքէն Փոքր Հայքին, իսկ հիւսիսէն անոր ափերը կ'ողողէին Սև ծովու ջուրերը: Բնակչութիւնը խառն էր. հիմնականը Փոքր Ասիոյ հնագոյն ցեղերու մնացորդներն էին՝ Տարարէները, Մասքերը, Կոլխերը, Մակրոնները, Խալիքները, Ծաները, Տաոխները, Սասպէյրները: Այս ցեղերը կամ ամբողջութեամբ կամ հատուածներով կը գտնուէին Պոնտոսի պետութեան մէջ. ասոնցմէ շատերէն հատուած մըն ալ մաս կը կազմէր Հայաստանի, Իբէրիոյ բնակչութեան: Միևնոյն ցեղական հատուածները դարձան կռուցիչ ատաղձը հայ, վրացի. պոնտական ժողովուրդներու: Հիմնական այս խաւի վրայ կուգային աւելնալու հնդեւրոպական շերտ մը արեւմուտքէն, արիական շերտ մը արեւելքէն: Վերջինս թափանցեց Պոնտոս Աքէմէնեաններէն առաջ և անոնց կայսրութեան ժամանակ: Այստեղ հաստատուեցան պարսիկ ազնուական ընտանիքներ, ստացան մեծ կալուածներ, դարձան վարիչ դաս և իրանական մշակոյթը տարածեցին պոնտական բնակչութեան մէջ: Իրանական այդ վարիչ դասէն բարձրա-

ցաւ նաև արքայական հարստութիւնը՝ Եւպատրոցներու ըն-
տանիբ: Աքէմէնեան կայսրութեան փլուզումէն ետքը ա-
նոնք մնացին Պոնտոսի մէջ, Ադեքսանդրի մահէն յետոք
ստեղծուած արեւելքի անիշխանութիւնը նպաստեց, որ ա-
նոնք հռչակեն իրենց՝ Պոնտոսի թագաւոր:

Պարսիկներէն առաջ այստեղ հաստատուեր էին յոյն
քաղութիւնք. որոնք հելլեն մշակոյթի օժախներ էին: Ասոնք
կեդրոնացած էին ծովամերձ քաղաքներու մէջ՝ Սինոպի, Ա-
մասիոյ, Տրապիզոնի մէջ: Առևտրական կապեր ունէին
Յունաստանի, Սեւ ծովի հիւսիսը, Խրիմի ափերուն կա-
ռուցուած յոյն քաղաքներու հետ: Պոնտոսի տեղական բը-
նակչութեան անբարեացակամ արամադրութեան հանդէպ
յոյն քաղաքներուն անհրաժեշտ էր թագաւորներու հովա-
նին: Արքունիքը աստիճանաբար կը հելլենտանար. պաշտօ-
նական լեզուն Յունարէնն էր, դրամներու վրայ մակագրը-
ուած էր յունարէն: Հինգերորդ և չորրորդ դարերուն,
իրանական լեզու, կենցաղը, վարչութիւնը և պարսիկ աղ-
նուականութիւնն էր, որ իր շուրջը կը հաւաքէր Պոնտոսի
բազմաթիւ և այլատարր ցեղերուն՝ ստեղծելու համար
պոնտական ժողովուրդը. բայց այս աշխատանքը անկա-
տար մնաց, ցեղերու և լեզուներու այդ համաձուլումը
չկատարուեցաւ: Երրորդէն մինչև առաջին դարու կէսերը
այդ գործողութիւնը փորձեց հելլենիզմը՝ յոյն մշակոյթը՝
արքունիքի ղեկավարութեամբ. այս փորձն ալ անյաջող
անցաւ, որովհետև հելլենիզմը մնաց նեղ շրջանակի մէջ,
ան քաղաքներու փոքրաթիւ հատուածի և արքունիքի
մշակոյթ էր պոնտական ցեղերու գանգուածները անոր
անհաղորդ էին: Այս բանը Եւպատրոցներու ամենամեծ պա-
կասն էր:

ՄԻՀՐԻՄԱՏ ԵՒՊԱՏՈՐ. Պոնտական պետութեան հիմնա-
դիրը Միհրդատ Է էր (302-226): Թէ ականաւոր հիմնադիրը
և թէ իր յաջորդները ընդարձակեցին պետութեան սահ-
մանները, սակայն անոր մեծ սցաման և հզօրացման գործը
կը կապուի Միհրդատ Եւպատրի անուան հետ (111-63)՝

Անոր քաղաքական ծրագիրները շատ ընդարձակ էին: Նախ ուժեղացուց Պոնտոսը. այս բանի մէջ անոր կ'օգնէին Յոյները իրենց դրամով: Բանի մը միջազգային առևտրական ուղիներ կը վերջանային Սև ծովու նաւահանգիստները, որոնք Պոնտոսի մէջ էին: Նիւթապէս հարստացած՝ ան պահեց մեծ և բարձրորակ բանակ ու ռազմական նաւատորմիդ:

Այս ուժերու վրայ յինուած ան ջանաց Սև ծովու փերուէն կառուցել մեծ պետութիւն մը, ինչպէս Հռոմը ըստեղծեր էր Միջերկրական ծովու փերուէն: Այս նպատակով ան գրաւեց Պոնտոսէն արեւելք ինկոզ ծովեզերեայ շրջանները՝ Կովիսիան, անցաւ Սև ծովու հիւսիսային ափերը, ուր անոր կը կանչէին այդ վայրերու յոյն քաղաքները՝ պաշտպանելու իրենց ընդդէմ սկիւթական ցեղերու: Այնուհետեւ ան կը ծրագրէր անցնիլ Վոսիոս և Պալքանեսան թիրակզին, պահել իր ձեռքին նեղուցները. միայն այդ պարագային իրագործելի կ'ըլլար անոր Սև ծովեան քաղաքական ծրագիրը: Ան կ'ուզէր կապուիլ Յունաստանի և Մակեդոնիոյ հետ. իսկ Փոքր Ասիոյ մէջ կը ծրագրէր բռնազրաւել Բիւթանիան, Պաֆլագոնիան և ասիական ափերով մօտենալ նեղուցներուն:

Քաղաքական այս ընդարձակ ծրագիրը ուղղուած էր Հռոմի արեւելեան տիրապետութեան դէմ, որ եթէ իրականութիւն դառնար պիտի քայքայէր անոր ամբողջ պետական շէնքը: Այս ծրագրի գործադրութեան, Սև ծովեան ուժեղ նաւատորմիդի կառուցման գործին մէջ անոր կ'օժանդակեն թէ Պոնտոսի և թէ Խրիմի յունական քաղաքները. անոնք կարիք ունէին կեդրոնական և ուժեղ իշխանութեան: Բայց անոնք կ'ուզէին, որ Միհրդատի ղէնքը աւաջին հերթին ուղղուած ըլլայ հիւսիսային Սկիւթացիներու և ուրիշ ցեղերու դէմ: Միհրդատի բանակը մեծ մասամբ վարձկաններէն էր կազմուած, հոն տեղ կը գտնէին Պալքաններու և Փոքր Ասիոյ բոլոր ազգերէն և ցեղերէն զինուորներ: Հռոմէն բոլոր դժգոհ տարրերը կը

կապուէին Միհրդատի հետ: Անոր այս պատրաստութիւնները և քաղաքական միտումները լայնօրէն կ'արձագանգէին Յունաստանի և Մակեդոնիոյ մէջ: Միհրդատի քաղաքականութիւնը բազմաթիւ համակիրներ ունեցաւ Փոքր Ասիոյ մէջ, որ կորսնցուցեր էր իր անկախութիւնը և կը հեծէր Հռոմի իշխանութեան տակ: Այստեղ միայն Ասիացիներու փոքրաթիւ խումբ մը հաւատարիմ էր Հռոմին ասոնք փշրանքներ կ'ըստանային հռոմէացի կապալառուներէն, սեղանաւորներէն: Ոմանք ալ տիրացեր էին ստորադաս պաշտօններու և իրենց դիրքն ու նիւթական բարեկեցիկ դրութիւնը պարտական էին Հռոմի իշխանութեան: Բացի ասոնցմէ և անուանապէս միայն իշխող թագաւորական տուններէն, բոլոր մնացած դասերը դժգոհ էին Հռոմէն և պատրաստ էին ընդվզելու անոր դէմ. եթէ ղեկավար մը ունենային: Հռոմի գրաւած նահանգներու մէջ այդ ղեկավարը չստեղծուեցաւ: Ան պիտի գար դուրսէն, Պոնտոսէն: Միհրդատի գաղտնի գործակալները թէ Յունաստանի, թէ Փոքր Ասիոյ մէջ կը ջանային նպաստաւոր տրամադրութիւն ստեղծել դէպի իրենց տէրը: Նոյնիսկ Պոնտոսի թագաւորը կը փորձէ Ապանիոյ մէջ կեդրոնացած Հռոմէացի ապստամբներու հետ կապել և մշակել գործունէութեան ընդհանուր ծրագիր: Այսպիսով ան կը մտածէր լայն հիմքերու վրայ դնել Հռոմի դէմ ըլլալիք պայքարը: Իսկ անոր քաղաքական ծրագրի հիմքը ինկած էր գաղափար մը՝ «աբելեիք»՝ աբելիցիցիստներն, որ կը նշանակէր Փոքր Ասիան՝ ասիացիներուն: Ոչ մէկ ծրագրի շուրջը այնպէս չէր կարելի համախմբել արեւելեան ժողովուրդներու ուժերը՝ որքան այդ: Ազատագրական այս նպատակը իրականացնելու համար պէտք էր դուրս ընել Հռոմէացիներուն Փոքր Ասիայէն, Եգէյեան ծովէն, Միջերկրականի արեւելեան աւազանէն և անոր տեղը հաստատել կէս իրանական, կէս հելլենիստական-Պոնտական միապետութիւնը:

II. ՀՌՈՄՊՈՆՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶԲԸ

Միևրդատ Եւպատորը կ'ուժեղանար ռազմական և քաղաքական տեսակէտէն, բայց չէր ուզեր անմիջապէս պատերազմիլ Հռոմի հետ: Գիտէր իր հակառակորդի ռազմական գերազանցութիւնը, ուստի կ'ուզէր յետաձգել բաղխումը և հաւաքել իր շուրջը արեւելքի բոլոր ուժերուն և հզօրանալ անտեսապէս և ռազմապէս: Բայց երկու բան եկան արագացնելու զէպֆերու ընթացքը:

ԻՏԱԼԱՅԻՆՆԵՐՈՒ ԱՊՍՏՈՄՐՈՒԹԻԻՆԸ.— Երկրորդ դարու մէջ Հռոմը քանի մը անգամ ենթարկուեցաւ ներքին ապստամբութիւններու, ապստամբեցան գիւղացիութիւնը և քարուկները: Գիւղացիները հողագործ էին եղեր, ստրուկներու կացութիւնը անտանելի էր. ասոնց աշխատանքի վրայ էր հիմնուած Հռոմի ազնուական-ձերակուտական դասի, կալուածատէրերու, սեզանաւորներու և կապալառուներու հարստութիւնը: Հողային բարենորոգումները մեծ արդիւնքի չհասցուցին, իսկ ստրուկներու ապստամբութիւնները գաւթանօրէն ճնշուեցան բարձր, իրաւատէր ու հարուստ դասերու կողմէն: Նոյն երկրորդ դարու վերջերուն Հռոմի ընկերային և քաղաքական իրաւակարգէն դժգոհները իրենց իշխանութեան տակ առին Միջերկրական ծովը և կը ջանային Հռոմը անդամալուծել, կտրել անոր արեւելքի իր հարուստ գազութիւնէն: Բայց Հռոմի համար ամենէն վտանգաւորը իտալական ցեղերու ապստամբութիւնն էր. անոնք կը կոչուէին նաեւ դաւնակիցներ, որովհետեւ կռիւններու ժամանակ անոնք Հռոմին կը մատակարարէին օժանդակ, դաշնակից բանակ: Անոնք թէպէտեւ մեծ ծառայութիւն էին մատուցեր Հռոմին նուաճումներ, ընկու համար, սակայն թէ աւարէն շատ քիչ բաժին էին ստացեր, թէ Հռոմի քաղաքացիի իրաւունքները չէին ստացեր, չնայած որ բազում անգամ այդ խոստացուեր էր անոնց: Անոնց

առաջ փակուած էին պետական և հանրային պաշտօնները: 90 թ. իտալական ցեղերը ապստամբեցան կռուով ձեռք բերելու այն, ինչ որ խաղաղ միջոցներով անկարելի եղաւ: Անոնց միացան ամբողջ Միջին և Հարաւային Իտալիան: Գիւղացիական բոլոր ուժերը գինւակոչի ենթարկուեցան Հռոմի դէմ կռուելու: Ազատութիւն խոստացուեցաւ այն ստրուկներուն, որոնք կը միանան իրենց հետ: Ապստամբները ընտրեցին իրենց հրամանատարը, երկու կոնսուլներ ներքին և արտաքին գործերը վարելու համար, կազմեցին ծերակոյտը հինգ հարիւր անդամներէ բաղկացած և 90 թ. վերջին յայտարարեցին իրենց բաժանումը և անկախութիւնը Հռոմէն: Այս անջատումը ամենէն ծանր հարուածն էր, որ կ'ըստանար Հռոմը: Եթէ Միջին և Հարաւային Իտալիան բաժնուէր, անկախանար, ապա քայքայուելու էր անոր հսկայ գաղութային պետութիւնը, որ իր գոյութեան, ապահովութեան և հարստութեան հիմքն էր: Ուստի Հռոմը լարեց իր բոլոր ուժերը դաշնակիցներու ապստամբութիւնը ճնշելու համար: Անոնց դէմ ուղարկուեցան Հռոմի երկու լաւագոյն զօրավարները՝ Սուլլան և Մարիուսը: Միաժամանակ ծերակոյտը ընդունեց օրէնք մը, ըստ որու հռոմէական քաղաքացիի իրաւունք կը խոստանային անոնց, որոնք զէնք չէին բարձրացուցեր Հռոմի դէմ: Ծերակոյտը հրատարակեց մէկ օրէնք եւս, ըստ որու նոյն իրաւունքը կը խոստացուէր անոնց, որոնք վաթսուն օրուայ մէջ վար կը դնէին իրենց զէնքերը: Հռոմի այս խոստումները ունեցան իրենց հետեւանքները՝ դաշնակիցները պառակտուեցան, իսկ Հռոմը տարաւ կատարեալ յաղթանակ: Թէ ստրուկներու, թէ գիւղացիութեան և թէ դաշնակիցներու ապստամբութիւնը չափազանց թուլցուցին Հռոմը, իր ուժերու առաւելագոյնը ան գործադրեց ներքին ճակատի վրայ: Արեւելքը ջանաց Հռոմի այս կացութենէն օգտուիլ:

ԲԻԻԹԱՆԻՈՅ ԴԻՐՔԸ.— Միհրդատը կառուցեց Սեւ ծովեան պետութիւն մը. ան իրօք յունական քաղաքներու պետութիւն էր: Իր վրայ վերցնելով Սեւ ծովեան յոյն քա-

զաքներու ապահովութիւնն ու հովանաւորութիւնը, ան պատասխանատու դարձաւ նաեւ անոնց ազատ առեւտուրի համար: Սեւ ծովեան քաղաքներու առեւտուրը յաւանկան աշխարհի հետ էր, իրենց մայր երկրի, Եգէեան ծովու փղզիներու, հելլենիստական աշխարհի հետ: Թէ Միհրդատի և թէ յոյն քաղաքներու համար անհրաժեշտ էր նեղուցներու ազատութիւնը: Մինչ Փոքր Ասիոյ հռոմէական կապալառուներու և սեղանաւորներու ճնշման տակ՝ Բիւթանիոյ թագաւորը, որ Հռոմի հովանիին տակն էր, կը փակէր նեղուցները Սեւ ծովեան յոյն քաղաքներու վաճառականութեան առաջ: Ոչ միայն այսքան: Նիկոմեդիա թագաւորը կը յարձակի Պոնտոսի վրայ և կ'ապատակէ մինչեւ Ամասիսը: Հռոմը չի լսեր Միհրդատի արդարացի բողոքները, ուստի 88 թուին վերջինս կ'ըրմէ հակայարձակման Բիւթանիոյ թագաւորի դէմ:

Հռոմը Փոքր Ասիական բանակներու հրամանատար Աքիլիոսիճն կը հրամայէ կոպադոկիոյ և Բիւթանիոյ թագաւորներուն հաստատել իրենց զահերու վրայ: Միհրդատը նախ կը փորձէ բանակցիլ, համաձայնութեան գալ Հռոմի զօրավարի հետ, բայց անյաջող: Պատերազմը կը դառնայ երկու մեծ ուժերու մէջ անխուսափելի: Հռոմը արեւելքի մէջ երկու զօրաբանակ ունէր՝ մէկը Ասիա նահանգի մէջ, միւսը Կիլիկիոյ մէջ: Իսկ անոր նաւատորմիդը կեդրոնացած էր նեղուցներու մօտ. Բիւզանդիոն քաղաքը: Արեւելեան Միջերկրականի մնացած ռազմակաները հաւաքուեցան Եգէեան ծովու Փոքր Ասիական նաւահանգիստներու մէջ: Միւս կողմէն Միհրդատ Եւպատորը կրնար ռազմադաշտ հանել 300.000-նոց բանակ մը և 300 պատերազմական նաւեր: Անոր օգնութեան կողգային յունական քաղաքներու կամաւորները, Փոքր Հայքի զօրաբանակը, ռուսական տափաստաններէն հաւաքուած բարբարոսներու զօրքերը:

88 թ. ԿԻԻԻՆՆԵՐԸ.— Ութսուն ութ թուին Հռոմը և Պոնտոսը արգէն կռուի մէջ էին: Միհրդատը իր մեծ բանակը բաժնեց երկու մասի: Հիւսիսային բանակը Ամասիա-

յէն պիտի մտնէր Բիւթանիա, հասնէր Մարմարայի օփերը և գրաւէր Նեղուցները: Այս բանակը իրեն յանձնուած ռազմական խնդիրը լուծեց. Չարդեց Բիւթանացիներուն, ապա Աքիլիուս զօրավարին: Հարաւային բանակը մտաւ Ասիա և հոս Չարդեց Ասիոյ և Կիլիկիոյ պրոկոնսուլին: Հռոմէական նաւատորմիդը անձնատուր եղաւ և Միհրդատը Սեւ ծովէն նեղուցներու վրայով իր ռազմանաւերը մտցուց Միջերկրական ծով: Փոքր Ասիան այս դէպքերու ազդեցութեան տակ ապստամբեցաւ: Ընդհանուր ոգեւորութիւն կը տիրէր ամբողջ ասիական ժողովուրդներու մէջ, յատկապէս յոյն հայրենասէրներու, որոնք Հռոմի իշխանութեան տակ կորսընցուցեր էին և իրենց ազատութիւնը և հարստութիւնը. Միհրդատը անոնց համար ազատարար էր: Հռոմը արեւելքի մէջ կը պաշտպանէր աղետականներու, սակաւաթիւ մեծահարուստներու շահերը, կը յենուէր անոնց վրայ և անոնց հետ միասին կը ճնշէր հասարակ ժողովուրդին և դաժանօրէն կը պատժէր ամեն մէկ դեմոկրատիկ և ժողովրդական շարժում: Թէ որքան տաժանելի էր, ատելի ասիացիներու համար Հռոմի իշխանութիւնը. Կերեւայ անկէ, որ Միհրդատի Փոքր Ասիա մտնելու իսկ օրերուն տեղի քննեցաւ բոլոր քաղաքներու, կղզիներու, կեդրոնացման կայաններու մէջ Հռոմէացիներու կտորածը: Քանի մը օրուայ ընթացքին սպաննուեցան 80.000 Հռոմէացիներ. ասոնք բարձր պաշտօնեաներ էին. կապալառուներ սեղանաւորներ, հոմէացի ընտանիքներ, որոնք կալուածներու տէր էին, կ'ապրէին իրենց կալուածներու մէջ հասարակ աշխատաւորներ, մինչեւ անգամ ստրուկներ. . . Ասիական ժողովուրդներու ցասումն էր, վրիժառութիւնը ընդդէմ կեղեքիչներու և բռնացողներու: Հռոմի հեղինակութեան, ուժին կը հասնէր ամենէն ծանր հարուածը: Նոյն 88 թ. Միհրդատը գրաւեց նաեւ Դելոս կղզին, որ Հռոմի ստրկավաճառման ամենամեծ կեդրոնն էր, հոս ալ Չարդեցին Հռոմէացիներուն: Խալիան և Հռոմը Դելոսի անկումով կը զրկուէին ստրուկներէն և անոնց աշխատանքէն:

թ. ամառը ապստամբութիւնը ծաւալուեցաւ Յունաստանի մէջ: Աթէնքը առաջինն եղաւ Հռոմի դէմ զէնք բարձրացնող: Աթէնքին հետեւեցան միւս քաղաքները: Անոնց պատգամաւորները խնդրեցին Միհրդատին օգնել իրենց: 88 թ. վերջին պոնտական բանակները Միհրդատի որդի Արիարատի հրամանատարութեամբ մտան Եւրոպա, գրաւեցին Թրակիան և Մակեդոնիայէն մաս մը: Այս երկիրներու կռուող ուժերը միացան պոնտական ուժերուն, որուն մաս կը կազմէր նաեւ Փոքր Հայքի այրուձին: Պոնտական բանակներու Թրակիոյ մէջ երեւալը ապստամբութեան մասնակից ըրաւ նաեւ անոնց, որոնք մինչ այդ երբեք չէին բռնել: Բուն Յունաստանէն բացի՝ ապստամբեցան Եգէեան ծովու կղզիները, բացի Հոռոսէն: Ամենուրեք հալածուեցան և ահաբեկուեցան Հռոմէացիները և անոնք, որոնք Հռոմի շահերուն կը ծառայէին: Բոլոր քաղաքներու մէջ Հռոմէացիք հաստատելին սակաւապէտքութիւն մը, փոքր, բայց հարուստ դասի իշխանութիւնը: Ասոնք՝ այս հարուստ-ազնուապետական դասն էր, որ այժմ կը հալածուէր Հռոմէացիներու հետ միասին: Թէ Յունաստանի, թէ Փոքր Ասիոյ մէջ ստեղծուած շարժումը ազգային ազատագրական էր, բայց ան ունէր նաեւ ընկերային կողմ:

ԸՆԿԵՐԱՅԻՆ ՅԵՂԱՓՈՒՆՈՒԹԻՒՆ.— Արեւելեան ժողովուրդներուն իրեն հետ կապելու համար Միհրդատ Եւպատորը կը դիմէ աւելի արմատական միջոցներու: Ազգային ազատագրական շարժումը քիչերուն է, որ կը կապէր իրեն հետ. ասիական մեծ զանգուածները Հռոմի ճնշումը, շահագործումը կ'ըզգային ոչ որպէս այս կամ այն ազգութեան անդամ, այլ որպէս հարստահարուած, կեղեքուած դաս՝ կապալառուներու, սեղանաւորներու և անոնց գործակից տեղացիներու կողմէն: Միհրդատը յայտարարեց սուրբերու թեթեւացում, տարիներու ընթացքին անվճար մնացած սուրբերը ան ոչնչացուց. յայտարարեց գալիք հինգ տարին ապահարկ: 87—86 թ. ան շարք մը ընկերային բարե-

նորագումներ մուծեց փոքր Ասիոյ մէջ. բոլոր քաղաքներու ազատութիւնը և ինքնավարութիւնը վերահաստատեց: Քաղաքները ստացան դեմոկրատիկ վարչութիւն: Տեղական բնիկներուն թէ օտարներուն ան շնորհեց քաղաքացիական իրաւունքներ: Սեղանաւորներուն և կապալառուներուն, ինչպէս և ասիացի անոնց գործակիցներուն, գիւղերէն և քաղաքներէն հասնելիք բոլոր պարտքերը ջնջուեցան, հողագործներուն և բնաւ հող չունեցողներուն հող բաժնուեցան: Հռոմէական, իտալական ծագում ունեցող կալուածատէրերու հողերը, ինչպէս և պետական հողերը բռնագրաւուեցան և բաժնուեցան գիւղացիներու, խոշոր կալուածատիրութեան փոխարէն ստեղծուեցաւ մանր հողատիրութիւն:

Միհրդատը յայտարարեց ստուկներու ազատութիւն, որով ծանր հարուած հասցուց հռոմէական ծերակուտական դասուն, պրոկոնսուլներուն կապալառուներուն, խոշոր կալուածատէրերուն, որովհետեւ տնտեսական բոլոր ձեռնարկներու մէջ աշխատանքը կը կատարէին ստրուկները: Այս ազատագրութեան հետեւանքով 15 000 ազատագրեալներ միացան Միհրդատի Եւրոպա արշաւող բանակներուն և կռուեցան Յունաստանի մէջ Հռոմի դէմ: Հետաքրքիր է և այն, որ Քիոս կղզիի բնակիչները հաւատարիմ մնացին Հռոմին. ապստամբները գրաւեցին կղզին, անոր բնակիչները աքսորուեցան Կողքիս իրենց իսկ ստրուկներու հակութեամբ:

Ընկերային այս յեղափոխութիւնը չտեսնուած երեւոյթ էր արեւելքի պատմութեան մէջ: Ան ազատագրեց խոնարհ խաւերը, ոմանց դարձուց քաղաքացի, ոմանց հողի տէր հուշակեց, ոմանց ազատագրեց, հանեց ստրուկներու շարքէն: Միհրդատը իր այս միջոցառումներով հանդիսացաւ իրօք ազատարար, արեւելքի ամենէն մեծ յեղափոխական դէմքը, բայց սրանով իսկ ան իր դէմ հանեց հասարակութեան բարձր խաւին: Բոլոր հարուստները, յոյն բարձրարակ մտածողները, տեղական ծագում ունեցող հողատէ-

րերը, պաշտօնեաները, քաղաքներու վարիչ գասերը դժգոհ մնացին ազատարար թագուորի այս միջոցառումներէն: Ստեղծուեցաւ մէկ մեծ բազմութիւն, որոնք հարկադրուած միայն Միհրդատի հետ էին, բայց պատրաստ էին ապստամբելու յարմար պարագային: Եւ իրօք պատերազմի և յեղափոխութեան այդ օրերուն սկսան ներքին շարժումներ, որոնք աւելի ուժեղացան, երբ Հոռմը նորէն երեւաց արեւելքի մէջ:

ՍՈՒԼԼԱՆ ԱՐԵՒԵԼԻՔԻ ՄԷՋ.— Արեւելքի մէջ կ'իյնար, կը թուլնար ոչ միայն Հոռմի հեղինակութիւնը, որ կրնար իր անդրադարձումներն ունենալ նաեւ արեւմուտքի մէջ, այլեւ Հոռմը կը զրկուէր իրեն հարուստ գաղութներէն, տուրքերէն, հացի շտեմարաններէն: Ուստի կենսական անհրաժեշտութիւն մըն էր արեւելեան գաղութներու վերագրուումը: Արեւելքի ապստամբութեան իսկ սկիզբէն Հոռմը փորձեց հաշտուիլ իտալական դաշնակիցներու հետ. առանց ատոր անկարելի էր Միհրդատ Եւպատորի դէմ կռուելու: Ան բաւարարեց մասամբ դաշնակիցներուն: Քաղաքացիական-դաշնակցային կռիւներէն ետքը Հոռմի մէջ կը ծագէր հարց մը՝ ով պէտք է առաջնորդէր հոռմէական բանակները դէպի արեւելք՝ Դեմոկրատներու պարագլուխը՝ Մաքիոսը թէ ազնուականներու պարագլուխը՝ Սուլլան. առաջինի բանակը Հոռմի մէջ էր, իսկ երկրորդի բանակը կը գտնուէր՝ Կամպանիոյ մէջ: Հարցը կը վերաբերէր երկու կուսակցութեան քաղաքական գերիշխանութեան: Առանց Հոռմի մէջ ամուր յենարան ունենալու անկարելի էր յաղթել արտաքին ճակատներու վրայ: Սուլլան նախ իր բանակները կ'ուղղէ Հոռմի վրայ, կը գրաւէ քաղաքը, կը կոտորէ դեմոկրատներուն, փախուստի կը մատնէ Մարիուսին, կը վերահաստատէ ձերականոյտի հեղինակութիւնը և ատկէ ետքը միայն յաղթական զօրաբանակով կը շարժուի արեւելք: 87 թ. հինգ լէգէոններով Սուլլան հասաւ Թէսալիա, գրաւեց Բեոթիան, ապա պաշարեց Պիրեյը և Աթէնք: Սուլլայի զօրավարներէն մէկը մեկնեցաւ արեւելք ի մի

հաւաքելու հռոմէական ցրուած նաւատորմիչը: Պաշարուած Աթէնքը սովի մասնուեցաւ և 86 թ. անձնատուր եղաւ: Յոյն ազգասամբնեռուն օգնութեան հասաւ Միհրդատի մէկ նոր բանակը: Բայց պարտուեցաւ Թէրմոպոլիսի մօտերքը: Երկրորդ բանակ մը Դոռիլաուսի գլխաւորութեամբ հասաւ Եվբէա, բայց երկու օրուայ ճակատամարտի մէջ Սուլլան մեծ յաղթանակ տարաւ անոր վրայ: Սուլլան մաքրեց Յունաստանը Միհրդատի զօրքերէն, որոնք ծովով և թրակիոյ վրայով նահանջեցին. անոնց միացան յոյն դեմօկրատները և հայրենասէրները: Սուլլան յաղթեց ոչ միայն իր բանակի ռազմունակութեամբ, այլ յոյն հարուստներու, ազնուականներու և կայուածատէրերու աջակցութեամբ: Ասոնք ամենուրեք կը խփէին Միհրդատի բանակներու թիկունքէն:

ԴԱՐԻԱՆՈՍԻ ԴԱՇԻՆՔԸ.— Պատերազմը Եւրոպայէն կը փոխադրուէր Փոքր Ասիա: Միհրդատի կացութիւնը կը դառնար վտանգաւոր: Փոքր Ասիոյ մէջ ալ դժգոհները ոտքի ելան, սկսաւ դաւադրութիւն և բանակի մէջ: Պոնտական հրամանատար Արխիլէժը դաւաճանեց իր տիրոջը: Միհրդատի բանակն ալ ահաբեկուած էր. ան թիւով գերազանց էր հռոմէական բանակէն, բայց անկազմակերպ էր, անտիսիբլին և ոգեւորուած չէր Միհրդատի պատերազմական նպատակներով: Փոքր Ասիական կռիւները կրնային ծանր հետեւանքներ ունենալ անոր համար: Միհրդատին այս կացութենէն փրկեց Հռոմի մէջ տեղի ունեցած նոր յեղաշրջումը: 84 թիւին Մարիուսը նորէն զբաւեց Հռոմը. զեմօկրատները յաղթանակեցին: Սուլլան հարկադրուեցաւ վերադառնալ Հռոմ և փրկել պետութիւնը և վարչաձեւը, վերահաստատել ձերակոյտը և ազնուապետական կառավարութիւնը: Ան չբաղեց իր յաղթանակներու պտուղը: Երկու կողմերը՝ Սուլլան և Միհրդատը 84 թիւին համաձայնութեան եկան վերջ տալու պատերազմին: Կնքուեցաւ Դաւոյտոսի դաշինքը: Ըստ դաշինքին կը վերահաստատուէր 88 թիւէն առաջ եղած կացութիւնը: Բիւթանիոյ և Կապադովիոյ թագաւորները կը վերահաստատուէին իրենց

գահերուէն: Միհրդատը կը դատարկէր Հոռմի Փոքր Ասիական նահանգները, ուր պիտի վերահաստատուէր Հոռմի իշխանութիւնը: Ան 2000 տաղանդ պատերազմական տուգանք պիտի վճարէր. Սուլլային պիտի տրամադրէր ձօթանասուն ռազմանաւեր: Առաջին Միհրդատեան կռիւները վերջացան Հոռմի յազթանակով: Միհրդատը մաքրեց Փոքր Ասիան, անոր հետ իրենց տունն ու տեղը լքեցին տասնեակ հազարաւոր հայրենասէրներ ու յեղափոխական գործիչներ. բոլոր ազատագրուած սորուկները, որոնց նորէն կ'ըսպառնար ստրկութիւնը: Հոռմի իշխանութեան վերահաստատումը սկսաւ հայածանքներով և կոզոպուտով: Բանի մը քաղաքներ հիմնովին կործանուեցան, քանի մը հատը աւարի ենթարկուեցան: Հազարաւոր մարդիկ սպանուեցան, տասնեակ հազարաւորներ գերի տարուեցան Հոռմ: Փոքր Ասիոյ վայ զրուեցաւ 2000 տաղանդ տուգանք, ապա ան պիտի վճարէր 88—84 յեղափոխական թուականներու չգանձուած տուրքերը: Աւելի քան վեցամիս հոռմէական յազթական բանակները կ'ապրէին Փոքր Ասիական քաղաքներու հաշուին, բաւարարելով իրենց բոլոր պահանջները. բնակչութիւնը պիտի հայթայթէր անոնց ամեն ինչ և տար դրամական մեծ հատուցում ամեն զինուորի: Արեւելքի մէջ նորէն երեւցան Հոռմի կապալառուները, պրոկոնսպիւնները և սեղանաւորները: Ասիան նորէն ինկաւ տնտեսական քայքայման և քաղաքական բռնակալութեան մէջ:

Գ. ԳԼՈՒԽ

ՊԱՐԹԵՒՆԵՐԸ

ԻՐԱՆԻ ՆՈՒԱՃՈՒՄԸ

ՊԱՐԹԵՒՆԵՐԸ. — Մերձաւոր Արեւելքի պատմութեան մէջ խոշոր դեր են խաղացեր Պարթեւները, որոնց ուժը արեւելքի մէջ կ'երեւար Սելեւկեաններու թուլացման հետեւանքով: Հոսմէացիք անուղղակի ձեռով նպաստեցին Պարթեւներու հզօրացման և Մերձաւոր Արեւելքի մէջ ամուր դիրք գրաւելուն այն բանով, որ հելլենիստական մեծ ու փոքր պետութիւններու, յատկապէս Սելեւկեաններու թուլացման և անկման պատճառ դարձան: Պարթեւները Աքէմէնեաններու փլուզումէն ետքը միակ ասիական ժողովուրդն էին, որ կ'երեւային մեծ ծրագիրներով՝ դուրս հանել եւրոպացիներուն Ասիայէն. և երբ այս ծրագիրը չի յաջողուեցաւ, անոնց քաղաքական նպատակը՝ Եփրատեան սահմանագիծը պաշտպանելը դարձաւ:

Պարթեւաստանը Բիսութէնի արձանագրութեան մէջ կը յիշուի որպէս ուրոյն նահանգ: Պարթեւներն ալ սկիւթական ցեղերուն մօտ կ'ապրէին, իրանական ցեղեր էին, խառնուած միջին ասիական տեղացիներու հետ: Պարթեւները խաչնարած էին, արօտատեղիներու համար շարունակ կը թափառէին, կը մտնէին հարեւան երկիրներ՝ կը կրօնէին, կ'աւարէին և անասուններ և հօտեր կը տանէին ու դերիներ կը վերցնէին: Պարսկաստանի իշխանութիւնը անոնց վրայ քիչ կ'ըզգացուէր, միայն հարկ կուտային Աքէմէնեաններուն: Բայց երկուքի՝ պարսկի և պարթեւի մէջ ընդհանուր շատ բան կար. երկուքն ալ արիացիներ էին, ցեղակից էին, երկուքն ալ գրեթէ միեւնոյն լեզուն կը

խօսէին. մէկը՝ պարթեւականը միայն անզարգացած, չկատարելագործուած դրութեան մէջ էր: Ան երկար ժամանակ մնաց որպէս տեղական և ցեղական լեզու, որպէս տեսակ մը գաւառաբարբառ: Միայն իր հզօրացումէն և իրանի գրաւումէն ետքը այդ լեզուն կը դառնայ պետական և ազգային լեզու Իրանի մէջ: Ընկերային կացութեամբ ալ անոնք յետամնաց էին. սկիզբը կ'ապրէին տոհմերով. անոնց գլուխը կանգնած էին տոհմապետները: Տոհմա-ցեղային կեանքը բնական հոլովոյթով առաջացուց դասայնացած հասարակութիւն: Տոհմապետը իւրայուց հողն ու հօտերը, դարձաւ տէր, իրաւատէր, իշխան: Հասարակական այս հոլովոյթի մասին մենք բան մը չգիտենք: Միայն երբ տեղի կ'ունենար հոլովոյթի յետագայ փուլը, երբ իշխաններու շարքէն մէկը կ'ըստեցծէր Պարթեւներու պետութիւնը և կը դառնար թագաւոր, այդ շրջանի մասին է, որ մենք քիչ թէ շատ տեղեկութիւններ ունինք:

ՊԵՏՈՒԹԵԱՆ ԾԱԳՈՒՄԸ.— Աղեքսանդրի մահէն քիչ ետքը Պարթեւ ցեղերը ինկան Սելեւկեաններու իշխանութեան տակ: Օտարներու իշխանութեան տակ Իրանի բարձրաւանդակի զանազան վայրերու մէջ յառաջացան քաղաքական կեդրոնացումներ՝ կէս յունա-մակեդոնական, կէս իրանական իշխանաւորներու ճիգերով: Ասոնք կ'ուզէին անջատուիլ Սելեւկեաններէն, հարկ և զօրք չտալ անոնց և իրենց երկիրներու հարստութիւնը պահել իրենց: Այս նպատակով յեղաշրջում տեղի ունեցաւ Բակտրիոյ մէջ, ինտոսի շուրջը Նման քաղաքական յեղաշրջում էր նաև Պարթեւաստանի մէջ կատարուածը երրորդ դարու կէսերուն:

Պարթեւներու արքայական տոհմը իրօք Պարթեւ ծագում չունէր: Անոնց թագաւորները Դայերու տոհմէն էին սերած: Ասոնք իրանական վաչկատունք էին: Սկիզբը Մարերու հետ կ'ապրէին Իրանի հիւսիսային մասերու մէջ. տպալքեցին այդ հողերը, շարժուեցան արեւելք և շարունակ կը թափառէին Իրանի և Թուրքիստանի սահմա-

նագլուխներուն: Դայերը զանազան տոհմերէ էին կազմուած: Անոնց՝ Ապարնիի տոհմէն սերուած էր Արեակը, որ դարձաւ Դայերու միացնողը և նուաճումներու ուղին բռնողը: Երրորդ դարու կէսերուն Ապարիններու տոհմը լքեց իրեն արօտավայրերը, յարձակեցաւ հարուստ Պարթեւաստանի վրայ և նուաճեց այն: Պարթեւներու նկատմամբ Արշակունիները իրօք նուաճողներ էին: Պարթեւ ցրուած, բաժան-բաժան ցեղերուն անոնք տուին քաղաքական միութիւն: Պարթեւաստանի մէջ ամրանալով անոնք քիչ յետոյ պիտի սկսէին նոր նուաճումներ: Անոնց տոհմապետը՝ պարթեւ ժողովուրդի և երկրի նուաճումէն ետքը դարձաւ Թափալար և հիմք դրաւ Արեակունիներու հարսութեան 250 քուիմ: Ան կ'արշաւէ Բակտրիա, հարուստ հելլենիստական քաղաքները գրաւելու, հաւանաբար այդ կռիւներու մէջ ալ ան կ'ըսպաննուի: Արշակի եղբայր Տրդատը (248—214) կը գրաւէ Հիբկանիա և անոր մայրաքաղաքը Շադրակարտան, այսօրուայ Սատրապղը:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՂՈՎՈՅՈՒԹՅՈՒՆ.— Ասկէ ետքը Պարթեւները կը դիմեն արեւմուտք ազատագրելու Իրանը Սելեւկեանցներէն: Բակտրիայի Դէստոր II-ի հետ դաշնակցելով ան կը ջարդէ Սելեւկեաններու բանակը, բռնորովին կ'անկախանայ, հպատակութեան երդում կ'առնէ պարթեւ ցեղապետներէն և կ'ընդունի արքայից-արքայ տիտղոսը, այն ինչ որ ունէին Աքեմենեանները: Տրդատը իր նախորդին՝ Արշակին դասեց աստուածներու շարքը, և անոր պատկերը կնքեց իր դրամներու վրայ՝ ընդօրինակելով այդ Սելեւկեաններէն: Ան կ'ուղէր իր հարստութիւնը ազգակցական կապերով կապել Աքեմենեաններու հետ և այս ձեւով ամուր կացուցանել իր իշխանութիւնը Իրանի վրայ: Տրդատը կը հիմնէ առաջին արքայական պալատը, մօտաւորապէս այժմեան Աբիվերդ քաղաքի մօտերքը, բայց մայրաքաղաքը, գործերու կեդրոնը մնաց Հեկասոմբիլի մէջ: Անոր յաջորդից իր որդի Արշակ II (214—196): Ան շարունակեց Պարթեւներու շարժումը դէպի արեւմուտք՝ կապիտական դռներով գրաւեց Եկբասանը, սակայն պարտուեցաւ Անտիոքոս III-էն. վերջինս գրաւեց

անոր մայրաքաղաքը և հասաւ մինչեւ Հիրկանիա, մտաւ Բակորիա, բայց Սելեւկեաններու ռազմա-քաղաքական այս մեծ յաջողութիւնները մնայուն հետեւանք չունեցան. 190 թ. Անտիոքոսը կը պարտուի Մագնէզիոյ ճակատամարտի մէջ:

Ազգերն ու ցեղերը, որոնք կ'ապրէին Սելեւկեան լայնածաւալ կայսրութեան մէջ նորէն կը փորձեն ապստամբուիլ, անջատուիլ: Պարթեւներու ընկրկումը միայն ժամանակաւոր էր: Արշակի փոխարէն իշխանութեան գլուխը կը կանգնէր Հրահասթ. ան կը գրաւէ Կասպից ծովու հարաւարեւելեան ափերը, կը հաստատուի Տաբարիստանի, այժմեան Մագանդարանի մէջ: Անոր ձեռքը կ'իյնար Կասպիական դուռները, ուրկէ քիչ ուշ պիտի մտնեն Մարաստան: Հրահասթը յաջորդ կը նշանակէ Միհրդաթից (174-136) որը իր երկարատեւ թագաւորութեան ընթացքին Պարթեւներու փոքր պետութիւնը կը դարձնէ իրանական մեծ կայսրութիւն: Այս գործի համար Արեւելքի միջազգային կացութիւնն ալ նպաստաւոր էր, Սելեւկեանները բոլորովին թուլցրել էին, Հռոմը անոնց ծանր հարուածներ էր հասցուցեր, բայց ղեռ ինքը ամբօրէն հաստատուած չէր արեւելքի մէջ, ուստի և Պարթեւներու առաջ ոչ մէկ կազմակերպուած և հզօր ուժ չկար: Ան գրաւեց Մարաստանը անցաւ Զագրօշեան լեռները, գրաւեց Միջագետքը. իսկ արեւելքի մէջ ան վերագրաւեց Հերկանիան, Մարգիանիան, այժմեան Մերվը, հասաւ մինչեւ Հնդկաստանի սահմանը: Միհրդատին կը յաջորդէ Հրահաս II. (134-128): Ասոր օրով Սելեւկեանները ի մի կը հաւաքէին իրենց վերջին ուժերը՝ վերագրաւելու համար կորսնցուցած արեւելեան նահանգները: Անտիոքոս V II-րդ կը վերագրաւէ Մարաստանը, բայց զոհ կ'երթայ Հրահասի դաւադրութիւններուն՝ անոր դէմ հանելով հարազատ եղբայրը: Բայց ինքն ալ տարի մը ետքը զոհ կ'երթայ սկիւթական արշաւանքներու ժամանակ: Անոր յաջորդ Արտաբան II րդը կ'ըսպաննուի 123 թիւին և երկրի զանազան մասերու մէջ կ'երեւան ինքնակոչ թագա-

ւորնեք: Պարթև պետութիւնը ժամանակ մը կ'իյնայ անիշ-
խանութեան մէջ. Սկիւթացիք արեւելքէն և հիւսիսէն
կ'իջնեն և իրենց իշխանութեան տակ կ'առնեն երկրի մեծ
մասը: Կարծէք Արշակունիներու տիրապետութիւնը վեր-
ջանալու էր:

Բայց երկիրը այս քայքայումէն, անիշխանութենէն
հանեց Միհրդատ II-րդ Մեծը (124—87): Ան Արշակունիներու
հարստութեան մեծագոյն ղէմքերէն է. ան հաւաքեց պա-
ռակտուած հողամասերը, պայքարեցաւ տեղական ինքնա-
կոչ թագաւորներու դէմ, արմատախիլ ըրաւ անիշխանու-
թիւն սերմանող տարրերուն: Ապա մեծ ուժերով ջարդեց
Սկիւթացիներուն և Պարթեւաստանը ազատեց անոնց հար-
կատու ըլլալէն: Ասկէ ետքը ան իր զէնքը կը դարձնէ ա-
րեւմուտք՝ կը հասնի մինչեւ Եփրատ՝ Միջագետքի և Հա-
յաստանի սահմաններուն: Այս ան շրջանն էր արեւելքի
պատմութեան, երբ Փոքր Ասիոյ մէջ տեղի կ'ունենային
խոշոր քաղաքական դէպքեր՝ Պոնտոսը պայքար էր սկսեր
Հռոմի դէմ: Միհրդատ II-րդի յաղթանակներով նվաճուած
իր քաղաքական և մշակութային դիրքերը կը զիջէր Պար-
թեւներուն, արեւելեան իրաւիզմին: Սելեւկեան իշխանու-
թեան տակ մնացին Հիւսիսային Սիւրիան և Կիլիկիան:
Տեսանք, որ երկրորդ դարու մէջ արեւմուտքէն եկող Հը-
ռոմն ալ կը հարուածէր Սելեւկեան պետութիւնը: Նշանա-
կալից է նաև այն, որ Միհրդատ II-րդն է, որ առաջին
անգամ դիւանագիտական յարաբերութեան կ'ըսկսի Հռոմի
հետ:

Պարթեւներու պատմութեան հետեւեալ փուլերուն վե-
րահասու կ'ըլլանք Մերձաւոր Արեւելքի մէջ տեղի ունեցող
դէպքերու հետ զուգահեռ:

ՊԱՐԹԵՒ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻԻՆԸ.— Պետու-
թեան գլուխը կանգնած էր թագաւորը, որը աստուած հո-
վանիին տակ էր: Մեռած թագաւորի ոգին միւս կեանքէն
կը թեւարկէր իր յաջորդին և իր ժողովրդին. ուստի և
անոր ոգին, ինչպէս և նախահօր ոգին պաշտամունքի ա-

ուարկայ էր: Պարթեւ թագաւորը տեսութեան մէջ օրէնըս-
դիր է, գերագոյն դատաւոր, զօրքի հրամանատան, ան է
կանգնած վարչութեան գլուխը: Իրականութեան մէջ անոր
իրաւունքները սահմանափակուած են: Պարթեւ պետու-
թիւնը աւաթական կամզ ունէր: Յեղապետները դարձեր
էին խոշոր կալուածատէրեր, իւրացուցեր էին քաղաքա-
կան իրաւունքներ: Թագաւորը ճանչցեր էր անոնց իրա-
ւունքները և արտօնութիւնները և անոնց մասնակցու-
թիւնը իշխանութեան:

Թագաւորը ինքը աւատական իշխան մըն էր, անոր
իշխանութիւնը կը տարածուէր իր անմիջական կալուած-
ներու վրայ, միւս աւատատէրերու նկատմամբ ան քիչ
իրաւունքներ ունէր, անոր ալ գործադրութիւնը կախուած
էր իր և աւատատէրերու ուժերու փոխ-յարաբերութենէն:
Պարթեւ պետութիւնը այդպիսի բազմաթիւ կալուածատէր
իշխանութիւններէն էր կազմուած՝ ենթակայ մէկ կալուա-
ծատիրոջ, որ իւրացուցեր էր թագաւոր կամ «արքայից
արքայ» տիտղոսը: Պարթեւ քանի մը ցեղեր խաչնարած
էին, վաչկատուն. անոնց յեղապետները շատ քիչ կը ճանչ-
նային թագաւորի գերիշխանութիւնը:

Թագաւորի մօտ գոյութիւն ունէր պետական խորհուրդ
մը, որուն անդամները պարթեւ օգնուական դասէն էին:
Այս խորհուրդն է, որ կը սահմանափակէր թագաւորի իրա-
ւունքները: Անոր անդամներն էին, որ կ'ըլլային զինուո-
րական և վարչական բարձր պաշտօնեաներ: Անոնք կը
կազմէին վարիչ դասը, հողի և նիւթական ուրիշ հարըս-
տութեանց հետ միասին իւրացուցեր էին նաեւ բարձր իշ-
խանութիւնը: Բացի արտօնեալ դասի այս խորհուրդէն կար
և արքայական ընտանիքի անդամներու խորհուրդը: Այս եր-
կուքի համաձայնութեամբ է, որ կը նշանակուէին թագա-
ւորները, թէեւ ընդհանրապէս ժառանգական սկզբունքը կը
պահուէր: Թէ պետական կամ արտօնեալներու և թէ ար-
քայական ընտանիքի խորհուրդները շատ հին ժամանակ-
ներէն է, որ գոյութիւն ունէին, կուգային տոհմական շըր-

Չանէն: Եօթը մեծ տոհմեր առաջնակարգ դիրք ունէին պետութեան մէջ, ըստ իրենց ծագման հաւասար էին արքայական տոհմին և արտօնուած էին ժառանգաւոր կառավարելու իրենց երկիրները: Ասոնք պետութեան խոշոր պաշտօնները, գործակալութիւնները բաժնեւէր էին իրենց մէջ՝ զինուորական, հազարապետութեան, արքունի կալուածներու կառավարութիւնը կը գտնուէր առանձին տոհմերու ձեռքին և ժառանգական էր անոնց մէջ: Այս դասէն է նաեւ որ դուրս կուգային սատրապները, որոնք կ'ուղարկուէին ոչ-պարթեւական, բայց նուաճուած երկիրները կառավարելու: Ասոնք ալ կը դառնային խոշոր կալուածներու տէր և կը ջանային իրենց պաշտօնները ժառանգութիւն թողնել իրենց ընտանիքներու մէջ: Ասոնց իշխանութեան սահմանը շատ լայն էր, և կը հիմնուէին աւատական սկզբունքի վրայ: Արքայից արքայի նկատմամբ անոնք վասալներ էին, կը պարտաւորուէին անոր զինուորական ուժ մատակարարել և հարկ տալ. իսկ իրենք ալ իրենց հերթին տէրեր էին սատրապութեան մէջ ապրող ազատ հողատէր ազնուականներու նկատմամբ, ասոնք ալ նոյն պարտականութիւններն ունէին իրենց սատրապ-իշխանի հանդէպ: Այս բոլորը՝ թագաւոր, արքայական ընտանիք, կալուածատէր, արտօնեալ դաս, սատրապ և նահանգային հողատէրեր՝ կը կազմէին մէկ դաս՝ ազատներու դասը, որոնք իւրացուցեր էին երկրի ամեն տեսակի նիւթական հարուստութիւնը և իրաւունակ, իրաւատէր դասն էին:

ԱՆՆԶԱՏՆԵՐ.— Պարթեւ հասարակութեան երկրորդ դասը անազատներն էին, ստրուկները: Ստրուկներու թիւը շատ մեծ էր, որովհետեւ պարթեւ ազատները սովորութիւն չունէին անոնց ազատագրելու կամ ծախելու: Ազատներու թիւը մեծ չէր, ասոր պատճառով ալ ստրուկները կ'առնուէին բանակի մէջ, անոնք ազատներու հետ միասին կը սորվէին զինուորական արհեստը, նշանաձգութեան և ձիավարութեան: Որքան հարուստ էր ազատը՝ այնքան անոր ստրուկներու թիւը շատ կ'ըլլար: Ստրուկներն ունէին թա-

գաւորը, ազնուականութիւնը: Պարթեւներու կեանքի բնորոշ կողմն այն էր, որ հակում ունէին ձիավարութեան: Անոնք գրեթէ ձիերէն վար չէին իջներ, կը կռուէին, կ'ուտէին և կը հանգստանային ձիերու վրայ: Անոնց խորհրդակցութիւններն ալ, ինչպէս առեւտուրը տեղի կ'աւնենային ձիերու վրայ: Ազատները ստրուկներէն կը տարբերուէին միայն այն բանով, որ կը շրջագայէին ձիով, իսկ ստրուկները հետեւակ էին: Երկրագործութեան անցած ցեղերու հողերը կը մշակուէին ստրկական աշխատանքով: Զիավարութեան հակումը Պարթեւներէն ստեղծեց զինուորական հրաշալի դաս մը, որ անմրցելի էր տափաստաններու մէջ:

ՆՈՒԱՃՈՒԱԾ ԵՐԿԻՐՆԵՐԸ.— Իրանի բարձրաւանդակին մէջ և անոր շուրջը Պարթեւները կառուցեցին ընդարձակ կայսրութիւն: Ան իր մէջ բացի բուն պարթեւական երկրէն կը պարունակէր Մարաստանը, Ասորեստանը, Միջագետքը, Պարսկաստանը, Ադիաբէնը, Օսրոյէնը, Բակարիան, Սոգդանիան: Ասոնք բոլորը երբեմն մաս կը կազմէին Սելեւկեան իշխանութեան — անջատուեցան անկէ և նախքան Պարթեւներու պետութեան մէջ մտնելը՝ կազմեցին անկախ պետութիւններ: Յետոյ միայն Պարթեւները գրաւեցին այս բոլոր երկիրները՝ եփրատէն մինչեւ Ինդոս և Միջին Ասիա ու ստեղծեցին Պարթեւական Կայսրութիւնը: Անոնք այս երկիրներու վրայ կը նայէին, որպէս իրենց տոհմական սեփականութեան և կը ջանային նուաճուած երկիրներու վրայ թագաւորներ նշանակել իրենց տոհմէն, ազգակիցներէն, տեղական արքայական հարստութիւնները փոխարինել պարթեւ Արշակունիներով: Այս պարագաներու մէջ Արշակունիներու աւագ ճիւղը բոլորի նկատմամբ առաջնութիւն կը վայելէր, անոր թագաւորը կը կոչուէր արքայից արքայ, իսկ կազմիչ իշխանութեան պետերը կը կոչուէին արքաներ:

Այս առումով պարթեւ պետութիւնը մեծ ու փոքր պետութիւններու դաւեցակցութիւն մըն էր՝ ենթակայ կեդրոնի՝

պարթեւ Արշակունիներուն: Կազմիչ մասերու փաստական կախումը կ'երեւար հարկ տալու և զինուորական ուժ մատակարարելու մէջ: Կեդրոնական իշխանութիւնը չէր մըտներ կայարութիւնը կառուցիչ մասերու ներքին գործերու մէջ, չէր ալ կրնար, որովհետեւ պետութիւնը շատ թոյլ էր, անոր վարչութիւնը շատ անբաւարար նման գործի համար: Ուստի միեւնոյն պետութեան մէջ կ'ապրէին բազմաթիւ ազգեր, որոնք նուազագոյն պարտաւորութիւններ կատարելով կեդրոնի հանդէպ, կ'ապրէին միանգամայն ազատ իրենց ներքին գործերու մէջ:

Դ. ԳԼՈՒԽ

ԱՐՏԱՇԻՍԵԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՅՈՒՄՆ

ԱՐՏԱՇԵՍ 1.

ԵՐԵՔ ՀԱՅԱՍՏԱՆ.— 190 թիւի Մազնէզիոյ ճակատամարտը որոշիչ նշանակութիւն ունեցաւ արեւելեան ժողովուրդներու համար: Սելեւկեանները Հռոմին զիջեցին Փոքր Ասիան. Սիւրիան այլեւս երկրորդական պետութիւն էր: Հռոմը Փոքր Ասիոյ մէջ ստեղծեց անկախ պետութիւններ, որոնք փաստօրէն ենթարկուած էին անոր: Ան չէր ուզեր, որ Փոքր Ասիական նոր իշխանութիւններէն մէկն աւելի ռոմեացիանայ, չէր թոյլ տար որ անոնց մէջ գործակցութիւն ստեղծուի: Պարտուած Սելեւկեանները կորսնցուցեր էին հպատակ ժողովուրդներու մէջ իրենց հեղինակութիւնը, Մազնէզիոյ ճակատամարտէն քիչ ետքը սկսաւ Հրէութեան երկարատեւ պայքարը իրեն անկախութեան համար: Պարթեւները այլ աւելի մեծ ռոմեացի կը շարժուէին դէպի արեւմուտք: Ազատագրական այս շարժումներու շարքին կը դասուի նաև 189 թիւի Հայերու ապստամբութիւնը: Փոքր Ասիոյ ազատագրումէն ետքը սպասելի էր, որ Հայաստանն ալ չմնայ Սելեւկեան լուծիտակ: Մեծ Հայաստանի կառավարիչ Արտաշէսը, և Ծոփաց աշխարհի կառավարիչ՝ Զարիադէսը, ապստամբեցան Սելեւկեան Անտիոքոս III-րդի դէմ: Վերջինս դեռևս Մազնէզիոյ պարտութենէն չէր սթափուեր, ուստի ապստամբներու դէմ բան մը չկրցաւ ընել: Դիւրութեամբ Արտաշէսը

և Զորբիադէսը անցան իրենց երկիրներու իշխանութեան գլուխը: Իրենք մինչև 189 թիւը կը կառավարէին Հայաստանը Սելեւկեաններու անունէն: Այժմ կը կառավարեն որպէս գերիշխան տէրեր: Երկրի վարչութեան մէջ բան մը չփոխուեցաւ, ամեն բան շարունակուեցաւ առաջուց նման. փոխուեր էին միայն գերիշխան Սելեւկեանները: Անոնց փոխարիներ էին երկու հայ կամ հայացած իշխաններ: Տեսանք, որ սկիզբէն և եթէ Հայաստանը բաժնուեցաւ երեք անկախ պետութիւններու: Հարաւարեւմտեան Հայաստանը՝ Ծոփաց աշխարհը անկախացաւ ոչ միայն Սելեւկեաններէն, այլ և չուզեց միանալ Մեծ Հայաստանին: Մինչ այդ ան ունեցեր էր իր ինքնուրոյն կեանքը, կապուած էր սուրիական և փոքր Ասիական աշխարհին, անոր հողին վրայ կը հանդիպէին հայը, սեմական և փոքր Ասիական ժողովուրդները. ան դեռ ամբողջովին հայացած չէր: Ան միջազգային առևտրական այն ուղիի վրայ կը գտնուէր. որ Եփրատեան գծով կը մտնէր փոքր Ասիա, կապադովկիա, հոնկէ ալ Պոնտոս և Սև ծով: Ծոփաց աշխարհը մօտ կը գտնուէր սելեւկիան մշակոյթի կեդրոններուն և կենդանի հաղորդակցութեան մէջ էր անոնց հետ: հելլենիստական մշակոյթը այստեղ ավելի հիմք ունէր տարածուելու. հոն է, որ հիմնուեցան առաջին առևտրական քաղաքները: Ծոփաց աշխարհի թագաւորներն է, որ առաջին դրամները շրջանառութեան մէջ դրին:

Եթէ ինկատի ունենանք փոքր Հայքը, որ նոյնպէս անկախ պետութիւն էր, որ երբեք չմիացաւ Մեծ Հայքին, ապա կը տեսնենք, որ Հայաստանը երկրորդ դարուն քաղաքական միութիւն չէր ներկայացներ, այլ բաժնուած էր երեք պետութիւններու: Այս երեք պետութիւններէն ամենէն մեծը և ապագայ ունեցողը՝ Մեծ Հայքն էր, իսկ անոր անկախութիւն տուողը Արտաշէսն էր: 189 թիւին մէկ անգամէն տեղի ունեցաւ երկու բան՝ Հայաստանը անկախ պետութիւն դարձաւ, այնտեղ, որպէս գերիշխան տէրեր թագաւորեցին Արտաշէսի յաջորդները: Հիմնուեցաւ Ար-

քաւիսեան հարսուիքիւնը, որը անկասկած որոշ աստուածային կապերով կապուած էր սատրապական շրջանի ինքնավար Հայաստանի Երուանդեան հարստութեան հետ:

ԱՐՏԱՇԵՍ 1.— Տէր դառնալով հարուստ և մեծ երկրի մը, անոր առաջին հարցերէն մէկը պիտի ըլլար իշխանութեան կեդրոնի խնդիրը: Ուր պէտք է հաստատուէր իշխող հարստութիւնը, ուրկէ պիտի կառավարէր այն իր երկիրը: Արտաշէսը հաստատուեցաւ Արարատեան դաշտը: Եթէ Ուրարտուի քաղաքական և մշակութային կեդրոնը հարաւն էր, Վանի լիճի շուրջը, ապա՝ Արտաշիսեան Հայաստանի կեդրոնը Արարատեան դաշտն էր: Ասոր պատճառը ան էր, որ Արաքսի ամրոցը հովիտը հայացած էր և այդ շրջանի հայութեան վրայ է, որ պիտի յենուէր նոր պետութիւնը: Բնական է, որ ան ցանկար նաև որքան կարելի է հեռու ըլլալ Սելեւկեաններէն: Եթէ Հայաստանը պիտի կառուցուէր Հիւսիսէն, եթէ անոր քաղաքական հաւաքման գործը պիտի սկսուէր Արարատեան գաշտէն, ապա կարելոր հարց մը պիտի լուծէր Արտաշէսը՝ ապահովել Արարատեան գաշտի պաշտպանութիւնը, ձեռք ձգել անոր վրայ իշխող լեռնաշղթաները: Հիւսիսային Հայաստանի ապահովութեան սահմաններն էին կուրի հովիտը. Մուշանի տափաստանները: Արտաշէսի առաջ գրուած էր մէկ ուրիշ հարց եւս. պէտք էր հաւաքել Հայաստանի լեռնաշխարհի մէջ ցրուած հայութիւնը: Իսկ ասոնք հարաւն է, որ ամենէն առաջ և մեծ զանգուածներով հաստատուէր էին: Հայաստանի հարաւն է, որ հայացեր էր դեռևս եթերորդէն հինգերորդ դարերուն: Հարաւն է, որ անոնք շուրջ էին հիւսիս, անցեր Հայկական Պարը և մտեր Արաքսի հովիտը և Արարատեան դաշտը: Արտաշէսը հարաւ պիտի իջնէր և հասնէր Եփրատի ափերը, Արածանիի գետաբերանը՝ տիրելու Մոփաց աշխարհին, Փոքր Հայքին, ուր Հայաստաներու քաղթէն ետքը մնացեր էր ստուարաթիւ հայութիւնը և կազմեր առանձին պետութիւն: Բայց երկու դէպքումն ալ Արտաշէսը յաջողութիւն չունեցաւ: Մոփաց աշխարհի, Փոքր

Հայքի թիկունքը կային ուժեր, Կապադոզիան և Պոնտոսը, որոնք չէին ուզեր այդ երկու իշխանութիւններու վերացումը, Մեծ Հայաստանի՝ իրենց սահմաններուն մօտենալը:

ՆՈՒԱՃՈՒՄՆԵՐԸ.— Յոյն աշխարհագրագէտ Ստրաբոնը կը հաղորդէ, որ Արտաշէսը կը նուաճէ Կասպիական երկիրները, Փայտակարանը, Վրացիներէն կը գրաւէ Գուգարքը, այժմեան Լոռիի շրջանը, ուր երկու ազգերու հատուածները՝ վրացիական և հայկական ցեղերը՝ կը հանդիպէին իրար: Հոսկէ ան կ'իջնէ Կուրի հովիտը: Անոր բանակները կը տիրեն Տայքին, Ճորոխի հովտին. կը նուաճեն Բարձր Հայքը, Կարինը և Դերջանը: Իջնելով հարաւ ան կը գրաւէ Վասպուրականը, կը հասնի Տաւրոսեան լեռներուն և Սիւրիացիներէն կը գրաւէ Տմորիքը: Այս հողամասերու գրաւման համար ան կուռեցաւ Վրացիներու, Մարերու, Կատաոններու, Խալիբներու, Մոսքերու, Սիւրիացիներու դէմ: Այս ձեւով ան մէկ իշխանութեան տակ հաւաքեց հայութեան այստեղ ու այնտեղ ցրուած հատուածները, կարգի հրաւիրեց դեռեւս չհայացած կամ կէս հայացած ցեղերը, իր պետութեան մէջ առաւ Հայաստանի բնական սահմանները: Արտաքսը հայութեան եւ Հայաստանի հողերու հաւաքողն է եւ անոնց պատկանութիւնը, ապահովութիւնը ու բնական սահմանները տուողը: Ան է, որ Գուգարքէն մինչեւ Տաւրոսեան լեռները և Կասպիականէն մինչեւ Եփրատ տարածուող հողերը դարձուց Հայաստան այս բառի քաղաքական իմաստով:

ՀԱՅՈՒՑ ԼԵՁՈՒՆ.— Նոյն յոյն գիտունը՝ Ստրաբոնը կ'ըսէ, որ այս ընդարձակ երկրի մէջ բոլորը կը խօսէին հայերէն: Անշուշտ այս չափազանցութիւն է: Շատ աւելի ուշ դեռ Հայաստանի մէջ կ'ապրէին ցեղեր, որոնք բոլորովին տարբեր լեզուներով կը խօսէին, հայացած չէին: Արտաշէսի օրով հայարմէններն է, որ կը խօսէին մէկ և ընդհանուր լեզուով, անոնք ալ այդ լեզուի տարածողներն եղան իրենց շրջապատող ցեղերու մէջ. ամենայն հաւա-

նականութեամբ հայերէնը ամենէն տարածուած և հասկը-
նալի լեզուն ըլլար Հայաստանի մէջ: Արտաշէսի ժամանակ
ստեղծուեր էր խաւ մը, որ եթէ չէր խօսեր հայերէն լեզ-
ուով, գոնէ կը հասկնար այն: Եւ հայերէնը դարձաւ գըլ-
խաւոր լեզու, որովհետեւ այդ լեզուով խօսող ցեղախում-
բերն էին, որ իշխանութիւնն առին իրենց ձեռքը: Այդ դե-
կավարութեան միջոցով հայերէնը դանդաղօրէն թափանցեց
ամեն տեղ ու տեղական լեզուներու ու բարբառներու կից
ու անոնցմէ բարձր՝ դարձաւ համահայկական լեզու: Բայց
այս գործողութիւնը կատարուեցաւ դարերու ընթացքին:
Արտաշէսը առաջին քայլն ըրաւ միայն և նպաստաւոր
պայմաններ ստեղծեց ատոր համար: Այս գործողութեան՝
համահայկական լեզուի ստեղծման համար խոչընդոտ կ'ըլ-
լային՝ Հայաստանի բնական-կլիմայական պայմանները և
մեր երկրի բնակչութեան ազգագրական-լեզուական բազ-
մազանութիւնը:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ. — Բաւական չէր Արարատեան դաշտը
պետութեան կեդրոն դարձնել, ապահովել այն ռազմական
ամուր պատնէշ-լեռներով, պէտք էր ունենալ վարչական-
քաղաքական հանգոյց մը, ուր միանային երկրի բոլոր
մասերը և ուրկէ կառավարուէր նոր պետութիւնը: Արտա-
շէսը Արաքսի ափին կը կառուցէ իր մայրաքաղաքը՝ Ար-
սաւատը: Յոյն պատմագիրները այս քաղաքի մասին կը
խօսին մեծ գովասանքով: Ան Հայաստանի տնտեսութեան,
վարչութեան և մշակոյթի կեդրոնն էր: Անկասկած ան կա-
ռուցուած պիտի ըլլար օտար ճարտարապետներու, վար-
պետներու ձեռքով և նմանութեամբ արեւելքի հելլենիս-
տական քաղաքներու: Ըստ աւանդութեան մայրաքաղաքի
կառուցման վրայ հսկեր է և անոր տեղը որոշեր է Հանի-
բալը, որ Անտիոքոս III-ի մօտէն փախչելով ապաստան էր
գտեր Արտաշէսի մօտ: Արտաշատի կառուցումը մեր պատ-
մութեան ամենէն կարեւոր փաստերէն մէկն է. ան երկար
ժամանակ շարունակեց մնալ որպէս քաղաքական և մշտ-
կութային կեդրոն, ասոր հետեւանքով ալ Արարատեան

դաշտը առաջնակարգ նշանակութիւնն ստացաւ մեր պատմութեան մէջ, Ան միջնաշխարհ էր: Արտաշատը միջազգային կարաւանային առեւտուրի գլխաւոր հանգոյցներէն մէկն էր: Իրանական աշխարհի առեւտուրը Սեւ ծովու նաւահանգիստներու հետ տեղի կ'ունենար Արաքսի հովիտով Արտաշատի վրայով: Ան դարձաւ տարանցիկ առեւտուրի խոշոր կեդրոն: Այդտեղ կառուցուեցան հիւրանոցներ, մթերանոցներ, գրասենեակներ: Արտաշատի բնակչութիւնն ալ միայն Հայեր չէին, այլ հոն կարելի էր հանդիպիլ արեւելքի բոլոր ազգերէն վաճառականներու: Հայոց մայրաքաղաքը տնտեսական-առեւտրական կապերով կապուած էր Մերձաւոր Արեւելքի բոլոր երկիրներու հետ: Եւ Հայաստանի թագաւորներու արտաքին քաղաքականութիւնը պիտի որոշուէր Հայոց քաղաքներու առեւտրական շահերով:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԻՋԱԶԳԻԱՅԻՆ ԱԶԴՈՒԿ.— Հայոց բնաշխարհը մէկ իշխանութեան տակ միացնելէն ետքը Արտաշէսը կը միջամտէ ժամանակի միջազգային բարդ գործերուն: Անոր կը հետաքրքրէր Փոքր Ասիոյ մէջ ստեղծուած կացութիւնը: Սելեւկեաններէն ազատագրուելէն ետքը Փոքր Ասիան կը մատնուի քաղաքական անիշխանութեան: Մասամբ այդ կ'ըստեղծէր Հռոմը, ելնելով այն տեսակէտէն՝ թէ տիրելու համար հակառակորդներուն՝ պէտք է բաժանել անոնց, իրեն ներկայութիւնը անհրաժեշտ դարձնելու համար պէտք էր անիշխանութիւն սերմանել տեղացիներու մէջ: Քաղաքական անկայունութեան պատճառներէն մէկն ալ նոր ստեղծուած մեծ և փոքր պետութիւններու աշխարհակայական միտումն էր: 180 թ. Պոնտոսի և Փոքր Հայքի միացեալ ուժերը կը պատերազմէին Պերգամի, կապագովկիոյ և Բիւթանիոյ դէմ: Ասոնց մէջ կնքուած դաշինքի մէջ կը յիշուի նաեւ Արտաշէսի անունը որպէս թագաւոր ըլլելու մասին Հայոց: Ան կը դառնայ միջազգային ուժ և անոր կամքը ի նկատի պիտի ունենային անոնք, որոնք Փոքր Ասիոյ բախտը կը դարբնէին նախքան Հռոմի անմիջական միջամտութիւնը արեւելեան գործերու մէջ:

ԳՈՒԻ ՍԵԼԵԻԿԵԱՆՆԵՐՈՒ ԴԷՄ.— Հայաստանի այս ու-
ժեղնալը և մեծ պետութիւն դառնալը վտանգաւոր հա-
մարուեցաւ իր հարեւաններու և յատկապէս Սելեւկեաննե-
րու համար: Անոնք չէին հաշտուիր Հայաստանի հորուստի
հետ: 165 թ. շուրջը Անտիոքոս IV-րդը արշաւեց Հայաս-
տան. այս կռիւններու մէջ Արտաշէսը պարտուեցաւ, բայց
ինչ հետեւանք ունեցաւ այդ պարտութիւնը չգիտենք:
161 թ. Մարաստանի սելեւկեան սատրապը Թիմարխը կ'ա-
պրտամբի իր տէրերու դէմ և կը յայտարարէ իրեն Մա-
րաց թագաւոր: Ան կը դաշնակցի Արտաշէսի հետ և անոր
օգնութեամբ կ'ընդարձակէ իր պետութեան սահմանները
մինչեւ Միջագետք: Մարաստանի անկախութիւնը կը հե-
ռացնէր Հայաստանի վրայէն Սելեւկեան վտանգը:

Այս բոլորը՝ պետութեան հիմնարկումը, մայրաքաղա-
քի կառուցումը, Հայաստանի սահմաններու ընդարձակու-
մը, միջազգային գիւտնագիտութեան մէջ դեր խաղալը
չէր կրնար չազդել ժամանակակիցներու մտքի վրայ: Հայ
ժողովուրդը Արտաշէսի գործերը երգեր է իր երգերուն
մէջ, անոր անուան շուրջը հիւսեր է վէպեր, զրոյցներ:
Անոր շուրջը հաւաքեր է նաև ուրիշներու գործերը, ստեղ-
ծեր է «Արտաօգեստան վկայ»: Եւ այդ զարմանալի չէ: Ար-
տաշէսը մինակ և կարճ ժամանակի մէջ այնպիսի գործեր
կատարեց, որուն համար ուրիշ պայմաններու մէջ սե-
րունդներու աշխատանք կը պահանջուէր:

ԱՐՏԱՇԷՍ I.-Ի ՅԱՋՈՐԴՆԵՐԸ.— Արտաշէսի մահէն մին-
չեւ Տիգրան II-ի գահ բարձրանալը անցեր էր վաթսուն
և հինգ տարի. (160—95): Օտար պատմագիրները մեզ ո-
չինչ ստոյգ բան չեն հաղորդեր այդ շրջանի մասին: Այդ
շրջանին կը մեծնայ Պարթևներու պետութիւնը: Օգտուե-
լով Սելեւկեաններու ներքին տեւական կռիւններէն Միհր-
դատ). կ'ընէ իր նուաճումները Իրանի արեւմուտքը և
Միջագետքի մէջ: Անոր գործը կը շարունակէ Միհրդատ
II Մեծը: Պարթևները կը մօտենան Հայաստանին, կը պա-
տերազմին Արտաւազդ առաջինի դէմ: Ան հաւանաբար Ար-

տաշէսի I-ի որդին էր, Հայոց ժողովրդական վէպն ալ
այդպէս կ'որոշէ անոնց կապը: Միհրդատ II նուաճեր էր
Միջագետքը և Ատրպատականը և միայն ատկէ ետքը ան
պատերազմեր էր Հայոց թագաւոր Արտաւազդի դէմ: Պար-
թեւները կը յաղթեն Հայաստանը, բայց չեն նուաճեր
այն: Արտաւազդի յաջորդը Տիգրան I ը կը շարունակէ
կռիւը Պարթեւներու դէմ բայց մեծ յաջողութիւն չի ու-
նենար. պարսուկութեան հետեւանքով Տիգրան I-ի որդին
պատանդ կը տարուի Պարթեւներու արքունիքը: Հօր մա-
հէն ետքը ան կը վերադառնայ Հայաստան գահակալելու:
Իր ազատագրման համար ան Պարթեւներուն կուտայ «եօ-
թանասուն հովիտները», որ Արտաշէս I գրաւեր էր Ատրը-
պատականէն: 95 թ. Տիգրան II-ը կը բարձրանայ Մեծ
Հայաստանի գահը:

Ե. ԳԼՈՒԽ

ՏԻԳՐԱՆ ՄԵԾ (140—56)

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԵՁ.— Տիգրանը ծնեւ է շուրջ 140 թիւին (Ք. Ա.). գահ է բարձրացեր 95 թիւին, քառասուն և հինգ տարեկանին. ան հասուն և կազմակերպուած մարդ էր, երբ Հայաստանի իշխանութիւնը առաւ իր ձեռքը: Ան մեռաւ 56 թիւին քառասուն և չորս տարեկանին. թագաւորաց 40 տարի: Անոր անձի, նկարագրի մասին մենք չստ ջիչ բան գիտենք. օտարներու պատմածներն ալ անվստահելի են ու միտումնաւոր: Տիգրանի նկարագրի, ծրագիրներու մասին մեզ պատկերացում կուտայ իր գործը: Անոր անունը կապուած է Մերձաւոր Արեւելքի մէջ առաջին դարուն կատարուած քաղաքական մեծ դէպքերու հետ: Ան հայութիւնը դուրս քերաւ միջազգային կեանքի ասպարէզ, զէնքի ուժով ըստեղծեց մեծ կայսրութիւն, ժամանակ մը ան եղաւ արեւելքի բախտի տնօրինողը: Բայց անոր վերելքը միայն իր հանճարի գործը չէր, այլ և քաղաքական այն կացութեան որ ստեղծուեր էր Մերձաւոր Արեւելքի մէջ:

ՀՌՈՄԸ.— Առաջին դարուն Հռոմը հասեր էր մինչեւ Եփրատ: Ան ամուր հաստատուեր էր Փոքր Ասիոյ մէջ. քանի մը շրջաններ կը կառավարէր Հռոմէն ուղարկուած կառավարիչներով: Մնացած մասերը պահեր էին իրենց տեղական իշխող տուները, սովորութական օրէնքները, անկախութիւնը, բայց կը գտնուէին Հռոմի գերիշխանութեան տակ: Անոնք ճիւղակեալ ժողովուրդի բարեկամն ու դաւնակիցն էին: Զրկուած էին արտաքին քաղաքականութիւն վարելու իրաւունքէն: Ներքին գործերու մէջ ալ պիտի ի նկատի ունենային Հռոմի տրամադրութիւնները:

Հոռոմէական կառավարիչները Պերգամէն և Կիլիկիայէն կը հսկէին Կապադովկիոյ, Բիւթանիոյ, Ղալաթիոյ և ուրիշ «անկախ» թագաւորութիւններու գործերու վրայ: Տեսանք, որ քաղաքական հզօրացման հետ Հոռոմը արեւելքը դարձուց տնտեսական շահագործման շրջան: Եւ այդ շահագործումը այնքան անտանելի էր, որ նոյնիսկ Հոռոմէացիք իրենք կը խոստովանէին: Տիս Լիվին պարզամտօրէն կը նըկարագրէ արեւելքի ծանր վիճակը Հոռոմի իշխանութեան տակ: «Ուր Հոռոմի կապալառուները մուտք կը գործէին, կ'ըսէ ան, հոն կը վերանաւ ամեն օրէնք, կը չֆանային դաւեակիցներու բոլոր ազատութիւնները»: Իսկ Հոռոմի մեծ քաղաքական գործիչներէն և հռետորներէն մէկը՝ Յիցերոնը կը խոստովանէր, որ արեւելքի մէջ ամենէն ատելի անունը հոռոմէականն էր: Փոքր Ասիոյ մէջ ընդհանուր այս դժգոհութիւնը պիտի արտայայտուէր միայն յեղափոխական շարժումներով:

ՍԵԼԵՒԿԵԱՆՆԵՐԸ. — Կարելի էր սպասել, որ հակահոռոմէական շարժումը կրնային ղեկավարել Սելեւկեանները: Բայց ինչպէս ըսինք, անոնք կ'ապրէին անկման շրջան մը: Կորսնցուցին Փոքր Ասիան, որով զրկուեցան իրենց ռազմական ուժի շտեմարանէն: Միջագետքը գիջեցան Պարթեւներուն՝ սնանկացան նիւթապէս: Հեռաւոր արեւելքի և Միջին Ասիոյ հետ կապող երկու առևտրական գծերը՝ Եփրատեան և Կարմիր ծովը իրենցը չէր: Եփրատեան գիծը ինկաւ Պարթեւներու ձեռքը, Կարմիր ծովը Եգիպտացիներուն էր: Միջերկրականն ալ անոնց առաջ փակեր էին Հոռոգոսի վաճառականական և ռազմական նաւատորմիդը: Ներքին կացութիւնն աւելի վատ էր. դաւադրութիւն արքունիքի մէջ, կռիւնք քաղաքներու՝ աղքատներու և հարուստներու մէջ, անկում և թուլացում հելլենիստական ինքնավար քաղաքներու, տուրքերու արտակարգ աճում, ժողովուրդի ընդհանուր դժգոհութիւն, կեանքի և գոյքի անապահովութիւն: Մերձաւոր Արեւելքի մէջ հելլենիզմը ամենուրեք իր վայրէջքը կ'ապրէր. թէ Հոռ-

մէացիները Փոքր Ասիոյ մէջ, թէ Սելեւկեանները Սիւրիոյ մէջ տնտեսապէս կը խորտակէին անոր հիմքերը: Սելեւկեանները իրենց ռազմի ուժը սպառեցին հրէութեան դէմ կռուելով: Վերջիններս հասեր էին ազգային-կրօնական ինքնաճանաչութեան, կը ջանային դառնալ առանձին պետութիւն՝ անջատուիլ Սելեւկեաններէն: Այս պայքարներու մէջ հրէութիւնը ազատագրուեցաւ, իսկ Սելեւկեաններու թագաւորները խիստ թուլցան. անոնք այլեւս անկարող գտնուեցան անապատի վաչկատուններու դէմ կռուիլ և քաղաքները ազատել անոնց յարձակումներէն: Այսպիսի պայմաններու մէջ Սելեւկեաններու հարուստ քաղաքներու բուրժուազին ուժեր կ'որոնէր դուրսը, որոնք իրենց երկրի մէջ կարչը վերահաստատէին. կեանքի և գոյքի ապահովութիւն տային և բաց ընէին արտաքին շուկաներու դռները:

ՊԱՐԹԵՒՆՆԵՐԸ. — Նոր թարմ ուժ էին ասոնք. բայց անոնք ալ փայլուն կացութեան մէջ չէին առաջին դարուն: Կազմեր էին ընդարձակ կայսրութիւն ճը Միջին Ասիայէն մինչև Եփրատ տարածուող: Անոնց պետութիւնը վաչկատուններու, թափառչիկ ցեղերու տիրապետութիւնն էր նստակեաց երկրագործներու և քաղաքներու վրայ: Անոնք շփուելով յոյն և մակեդոնական գաղութներու հետ հելլենիզմէն որոշ բան իւրացուցին. բայց այդ՝ անոնց մէջ ոչինչ չփոխեց: Պարթև թագաւորները կը կոչուէին «հելլենասէրներ», բայց անոնց հելլենասիրութիւնը արտաքին ընդօրինակումներէն այն կողմը չէր անցեր: Անոնք ներքէնապէս ալ թոյլ էին. տիրապետեր էին Պարսկաստանին, բայց պարսիկ ժողովուրդը անոնց հետ հաշտ չէր, թէև զրկուած իշխանութենէն անոնք հին պարսկական քաղաքակրթութեան պահողն էին և կեդրոնացած հարաւի մէջ կ'ըսպասէին իրենց հերթին: Միհրդատ I ի նուաճումներէն ետքը (171—138) իշխանութիւնը կը թուլնար. կէս աւատական, կէս վաչկատունի այդ իշխանութիւնը իր մէջ ունէր քայքայման բոլոր սաղմերը:

ՊՈՆՏՈՍ.— Արեւելքի ամենէն մեծ և կազմակերպուած ուժը Պոնտոսն էր, որ առաջնութեան հասաւ Միհրդատ Եւպատորի օրով: Տեսանք, որ ան ալ անցաւ Հռոմի դէմ մղուող պայքարի գլուխը: Բայց այդ պայքարը յաջողութեամբ տանելու համար ոչ միայն պէտք էր ունենար արեւելքի բոլոր դժգոհներու համակրանքը, այլև ուժեղ դաշնակից: Միհրդատ Եւպատոր իր հայեացքը կը դարձնէ Մեծ Հայաստանի թագաւոր Տիգրանին: Այս էր քաղաքական կապութիւնը Մերձաւոր Արեւելքի մէջ, երբ Տիգրանը գահ կը բարձրանար: Ան իր դիմաց չունէր կենսունակ և ռազմական մեծ պետութիւն մը: Պոնտոսը անոր մրցակիցը չէր և անոր թագաւորի հետ կրնար համաձայնութեան գալ:

ՏԻԳՐԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾԵՐԸ.— Անոր առաջին գործերէն մէկը Ծոփաց աշխարհի գրաւումն էր. 94 թ. անոր զօրքերը կը գրաւեն Ծոփքը: Այնտեղ, ուր անյաջողութիւն կրեց Արտաշէսը հարիւր տարի առաջ՝ յաջողեցաւ Տիգրանը: Կապադովկիան չհամարձակեցաւ արգիլել այս բանը. Ծոփաց աշխարհը կցուեցաւ Մեծ Հայքին և Արտաշեսեաններու իշխանութիւնը հասաւ մինչև Տիգրիսին ակունքները: Կար և Փոքր Հայքը՝ որուն բախտը որոշեր էր Միհրդատ Եւպատորը. ան իր թագաւորութեան սկզբին՝ 112 թուին գրաւեց Փոքր Հայքը և միացուց Պոնտոսին: Փոքր Հայքը այնուհետև ընդմիշտ բաժնուեցաւ Մեծ Հայաստանէն և բռնեց իր ուրոյն քաղաքական հոլովոյթի ուղին Տիգրանը Փոքր Հայքի ազատագրման հարցը չյարուցեց, այդ հարցը կը պառակտէր այն միութիւնը, որուն երկուքն ալ կարիք ունէին:

94 թուի ԳԱՇԻՆՔԸ.— Ծոփքի գրաւումով Մեծ Հայքը սահմանակից կը դառնար Կապադովկիոյ: Հիմա Տիգրանի առաջ կը դրուէր Կապադովկիոյ հարցը, որ միշտ հակառակորդ էր եղեր անոր: Այդ հարցը գոյութիւն ունէր նաև Միհրդատ Եւպատորի համար: Կապադովկիան Հռոմի հովանիին տակն էր և անոր թագաւորն ալ Արիոբարզան յայտնի հռոմէասէր էր, աւելի ճիշդ, կը մտածէր, որ երկու

Թարմ մեծցող պետութիւններու հանդէպ Կապաղովկիան կրնար իր գոյութիւնը պահել միայն Հռոմի զինական օգնութեամբ: Կապաղովկիան կրնար վտանգել Պոնտոսի և Հայաստանի թիկունքը, եթէ ան մնար թշնամի թագաւորի մը ձեռքը: Թէ Պոնտոսի և թէ Տիգրանի քաղաքական ծրագիրներու իրականացման համար անհրաժեշտ էր Կապաղովկիոյ գրաւումը: 94 թ. Միհրդատի և Տիգրանի դաշինքը այդ նպատակի համար էր: Տիգրանը զինական աջակցութիւն պիտի տար Միհրդատին Կապաղովկիան գրաւելու: Եւ որպէս վարձատրութիւն ան ստանալու էր գերիները ու աւարը երկիրը պիտի մնար Միհրդատին: Այս դաշինքը չէր ուղղուած Հռոմի դէմ, Տիգրանը ասով պարտաւորուած չէր զգար գործել Հռոմի դէմ. դաշինք ունէր սահմանափակ և որոշ նպատակ՝ Կապաղովկիոյ գրաւումը: 93 թ. հայ-պոնտական միացեալ ուժերը կը գրաւեն Կապաղովկիան և անոր թագաւորը՝ Արիոբարզան I. իր հետ առնելով պետական գանձերը կը փախչի Հռոմ: Նոր գրաւած երկրի վրայ թագաւոր յայտարարուեցաւ Միհրդատի անչափահաս որդի Արիարաթը:

Կապաղովկիոյ գրաւումը և դաշնակից պետութեան յանձնելը Տիգրանի համար ունէր նաեւ մէկ ուրիշ արժէք: Ան կը պատրաստուէր մեծ ռազմական գործողութիւններ սկսիլ Պարթեւներու դէմ, որոնց կը համարէր իրեն առաջին թշնամին: Հայաստանը կրնար մեծնալ և ընդարձակուիլ ի հաշիւ Պարթեւներու, որոնք տիրեր էին Հայաստանի շուրջը գտնուող երկիրները: Անհրաժեշտ էր նախ ապահովել թիկունքը: Թէ որքան վտանգաւոր կրնար ըլլար Կապաղովկիան Հայաստանի համար, կ'երեւայ այն բանէն, որ անոր թագաւորը հռոմէական բանագնացներու հետ միասին 91 թ. կը փորձէ Պարթեւներու հետ դաշինք կրնալ ընդէմ Տիգրանի և Միհրդատի:

Բայց Կապաղովկիան երկար չի մնար Հայերու և Պոնտացիներու ձեռքը. Կիլիկիոյ պրոկոնսուլ Սուլլան Հռոմի ձեռակոյտէն հրաման կ'ըստանայ վերագրաւել Կապաղով-

կիան և վերահաստատել այնտեղ Արիոքարզանին: Սուլլան կը վերագրուէ կապադոկիան, զուրս կ'ընէ հոնկէ Հայոց զօրքերը և նախկին թագաւորին գահ կը հանէ: Սուլլան այս հրահանգը կատարելէն ետքը կը հեռանայ երկրէն: Տիգրանի զօրավարները նորէն կը գրաւեն կապադոկիան: 91 թ. Բիւթանիոյ մէջ ալ գահակալական կռիւներ էին ծագած. կռուողներէն մէկը ապաւիններ էր Միհրդատ Եւպատորի օգնութեան: Հռոմը միջամտեց և հրահանգեց արեւելքի իր զօրավարներուն թէ Բիւթանիոյ և թէ կապադոկիոյ թագաւորներուն նորէն գահ բարձրացնել: Մինչ այդ պոնտական զօրքերը գրաւեր էին Բիւթանիան: Այս դէպքերէն ետքը 88 թ. կ'ըսկսուի Հռոմ-պոնտական պատերազմը:


ՏԻԳՐԱՆԻ ԿՈՒԻԻԸ ՊԱՐԹԵՒՆՆԵՐՈՒ ԴԷՄ.— Հէնց նոյն ժամանակներուն Տիգրանը իր զէնքը կը դարձնէ Պարթեւներու ղէմ, որոնք հարաւէն և արեւելքէն շրջապատեր էին Հայաստանը: Միհրդատ Բ. որ մեռաւ 88 թիւին. կառուցեր էր արեւելքի ամենամեծ, ընդարձակ և ուժեղ պտուտիւլք, հասեր էր Եփրատի ափերուն, կիլիկիոյ մօտերը, սահմանակից էր հոռմէական զաղութներուն և կը փորձէր համաձայնութեան գալ Սիլլայի հետ ընդդէմ արեւելքի երկու նոր և թարմ ուժերու՝ Պոնտոսի և Հայաստանի: Բայց Միհրդատ II-ի մահէն ետքը երկիրը կ'իյնայ անիշխանութեան մէջ. աւատատէր իշխանները և գահի թեկնածուները կը կռուէին իշխանութեան համար: Պարթեւները առժամանակ հրաժարեցան Միհրդատի արտաքին հակահայ քաղաքականութենէն: Ահա այդ պահուն է, որ Տիգրան II պատերազմ կ'ըսկսի Պարթեւներու ղէմ: Տիգրանը նախ կը գրաւէ այն եօթանասուն հովիտները, որոնք տուեր էր Պարթեւներուն ազատուելու պատանդ ըլլալէ: Հաւանաբար այդ հովիտները պէտք է ըլլային Հայաստանի հարաւ արեւելքը ինկած գաւառները, որոնք մէկ կողմէն Ատրպատականին սահմանակից էին, միւս կողմէն մօտ էին հիւսիսային Միջագետքին: Յետոյ Տիգրանը կը գրաւէ Մեծ Աղբակի

չրջանը ամբողջացնելով արեւելքէն իր երկրի բնական սահմանները: Միեւնոյն ժամանակ անոր զօրքի մէկ մասը կը գործէր Հայաստանի հիւսիսը և արեւելքը, անոնք կ'անցնին Փոքր Կովկասեան լեռնաշղթան, կը վերագրաւեն Կուրի հովիտը և հոնկէ ալ կը դիմեն դէպի արեւելք, մինչև Կասպից ծովը: Կուրի հովիտը և Փայտակարանը Սրտաչէսի օրով Հայաստանի մաս կը կազմէին, բայց տարբեր ցեղեր, ժողովուրդներ ունենալու և շատ քիչ հայացած ըլլալու հետեւանքով, չէին ենթարկուեր Հայաստանին, ուստի յաճախ կարիք կ'ըզգացուէր վերանուաճելու զայն: Մեծ Ալբակի գրաւումէն ետքը Տիգրանը կը յարձակի մէկ կողմէն Մարաստանի, միւս կողմէն Ադիաբէնի՝ նախկին Ասորեստանի վրայ: Տէր կը դառնայ ամբողջ Ասորպատականին, կը տիրէ Նինուէին, Արբելայի հարուստ գաշտերուն, որոնք եղեր են արեւելքի հնագոյն քաղաքակրթութեան վայրերը: Շատ հին ժամանակներէն այս վայրերը ունէին հայկական բնակչութիւն: Արմէններու մէկ թիւը Տիգրիսի ափերով իջեր էր Հիւսիսային Միջագետք և Ասորեստան: Տիգրանի բանակները օտար և անձանօթ շրջան չէ. որ կը մտնէին: Անչուշտ Տիգրանակերտի շինութիւնը հարաւի մէջ որպէս մայրաքաղաք հետեւանք էր այդ բանի, որ ան հայկական շրջանակէն դուրս չէր:

ՊԱՐԹԵՒՆԵՐՈՒ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ.— Թէ Ասորպատականի և թէ Ադիաբէնի կորչենրու ժամանակ Հայերը լուրջ դիմադրութեան չհանդիպեցան. տեղական ժողովուրդները անտարրեր էին դէպի Պարթեւ իշխանութեան անկումը, Հայերու հանդէպ ալ ակնյայտի թշնամութիւն հանդէս չբերին: Այս երկու շրջաններու անկումը նպաստեց, որ Հայաստանը շրջապատող մեծ և փոքր ժողովուրդները, որոնք Պարթեւ գերիշխանութեան տակ էին, կամովին հնազանդին Տիգրանին: Կորդուքը, մարական Ասորպատականի թագաւորները կ'ընդունին անոր իշխանութիւնը: Այնուհետեւ առանց մեծ ճիգերու Տիգրանը գրաւեց Օսրոյէնը, Եգեսիան, Մագգոնիան, Մծբինի իշխանու-

թիւնը՝ Հիւսիսային Միջագետքի մէջ: Այս վայրերու գրաւումով սեմական մեծ զանգուածներ կը մտնեն Տիգրանի պետութեան մէջ. ան այժմ տէր էր Եփրատեան գծի միջին հոսանքին. Պարթեւները կտրուեցան Հոռմի հետ անմիջական սահման ունենալէն: Անոնք կորսնցուցին Միջագետքը, Մարաստան-Ատրպատականը ևս անջատուեցան արեւմուտքի բարձր քաղաքակրթութենէն: Գրաւած երկրի իշխանները այժմ Տիգրանի հանդէպ այն պարտաւորութիւնները կը կատարէին, ինչ որ ունէին Պարթեւներու հանդէպ՝ այսինքն հարկ կուտային և պատերազմի ժամանակ ալ զօրք: Հին արեւելքը բացի ասկէ ուրիշ յարաբերութիւններ չէր ստեղծեր իշխողի և հպատակի մէջ: Այս յաղթութիւններէն ետքը Հայոց թագաւորը կ'իւրացնէ «արեւայից արեւայ» տիտղոսը, որ երբեմն Պարսից Աքէմէնիսներուէն էր, անոնցմէ անցաւ Պարթեւ թագաւորներուն, իսկ անոնցմէ ալ Հայոց թագաւորին: «Արքայից արքայ» անունը մէկ անիմաստ որակում չէր, այլ քաղաքական յարաբերութիւններու ցուցանիշ: Ան կը նշէ Հայոց թագաւորի առաջնակարգ դիրքը Մերձաւոր Արեւելքի մէջ: Անոր իշխանութեան տակ կը գտնուէին բազմաթիւ ազգեր, պետութիւններ, որոնք կ'ընդունէին անոր գերագոյն իշխանութիւնը և պարտաւորութիւններ ունէին անոր հանդէպ:

ՍԵԼՅԵՒԿԵԱՆՆԵՐՈՒ ԽՆԴԻՐԸ.— Այս նուաճումները Տիգրանը զլուխ բերաւ 89—85 թուերուն, այսինքն այն ժամանակ, երբ իր դաշնակից Միհրդատ Եւպատորը կը պատերազմէր Հոռմի դէմ: Այս յաղթանակներով պարթեւ պետութիւնը ընկրկեցաւ՝ կեդրոնացաւ Իրանի բարձրաւանդակը և արեւելքի քաղաքական ղեկավարութիւնը գիջեցաւ Հայաստանին: Իրօք ան կորսնցուց ոչ-իրանական երկիրները, բացի Ատրպատականէն: Են ժամանակաւոր մեկուսացումէն ետքը յետոյ նորէն առաջնակարգ ուժ պիտի դառնար արեւելքի գործերու մէջ: Միայն պարթեւական ուժի խորտակումէն ետքը Տիգրանի բանակները կանգնեցան Սիւրիոյ սահմաններու վրայ, ուր հաւաքուէր, կեդրո-



նացներ էր Սեւեւեկեան Թագաւորութիւնը՝ ամեն կողմէն իր պետութիւնը անդամահատուելէն ետքը: Եփրատի ավերուեն տէր եղողը իրերու բերմունքով պիտի ջանար հասնիլ Միջերկրական ծովուն: Այս է եղեր ներքին մղումը արեւելեան մեծ կայսրութիւններու, որոնք հիմնաւորուեցր էին իրանի, Միջագետքի մէջ: Ծիշդ է Սեւ ծովը Հայաստանին աւելի մօտ էր, բայց ան փակ էր անոր առաջ: Ան Պոնտոսի Միհրդատ Եւպատորի կենսական տարածութեան մէջ կը գտնուէր: Կասպից ծովը որու ավերուեն հասեր էր Տիգրանի բանակը առեւտրական-քաղաքակրթական արժէք չունէր: Ուստի Տիգրանը ոչ Սեւ ծով դիմեց, ոչ ալ Կասպից ծովուն մեծ արժէք տուաւ: Ան իջաւ հարաւ. Եփրատը և Միջերկրականի արեւելեան աւազանը անոր համար նոյնքան զրաւիչ, նոյնքան կենսական էին, որքան իրմէ առաջ ատեղծուած Մերձաւոր Արեւելքի մէջ կառուցուած պետութիւններու համար, որոնք դիմեր էին Միջերկրական: Եթէ Սեւ ծովը և Փոքր Ասիան Միհրդատ Եւպատորի կենսական տարածութիւնն էր, ապա Միջագետքը և Միջերկրականի արեւելեան եզերքները՝ Տիգրանինն էր:

Սեւեւեկեանները առաջին դարու սկիզբներուն կ'ապրէին մէկ ծանր ճգնաժամ: Իշխանութիւնը ոչ մէկ հեղինակութիւն ունէր. երկրի մեծ ու փոքր տէրերը, ցեղապետները, անջատողական միտումներ կը սնուցանէին: Երկրի մէջ չկար կեանքի և զոյքի ապահովութիւն: Երբեմնի մեծ և ծաղկած քաղաքները անկման շրջան մը կ'ապրէին, ճնշուած էին հարկերու ծանրութեան տակ, կորսնցուցեր էին իրենց ինքնավարութիւնները: Ատկէ բացի պառակտուած էին քաղաքական տեսակէտով: Անապատի վարչկատունները կ'ըսպառնային ծովեզերքի շուրջը կառուցուած հելլենիստական քաղաքներուն և նստակեաց բնակչութեան: Այս բանը ոչ միայն երկու տարբեր աշխատանքի և կենցաղի պայքարն էր, այլ և երկու ազգաբնական միաւորներու՝ սեմական Սիւրիացիներու եւ յոյն Մակեդոնացիներու: Գիւղացին և քաղաքացին այդ պայմաններու մէջ կ'ըզգա-

յին ուժեղ իշխանութեան կարիքը: Եւ քաղաքներու հասարակութիւնը կ'որոնէր այդ ուժեղ իշխանութիւնը: Ոմանք կ'ուզէին իշխանութիւնը յանձնել Միհրդատ Եւպատորին, որ արեւելքի մէջ հսկայ հեղինակութիւն էր ձեռք բերեր: Սակայն այս կը նշանակէր Սիւրիոյն ձգել Հռոմ-պոնտական մրցութեան մէջ, ոմանք իրենց աչքերը յառել էին Եգիպտոսի Պտղէմէեաններուն, բայց այս միտումը իրականացնել անկարելի էր, իր գոյութեան սկիզբէն անոնք թշնամական դիրք էին բռնելու դէպի Սիւրիոյն, անոնց յարաբերութիւնները երբեք բարեկամական չէին եղած, անոնք մրցորդ էին թէ ցամաքի և թէ ծովու վրայ: Բայց կար մէկը, որ կանգնած էր Սիւրիոյ սահմաններուն, որ թարմ և հզօր ուժ էր, յաղթեր էր Պարթևներուն, որ կրնար կարգ ու կանոն մուծել երկրի մէջ: Դա Տիգրանն էր: Ան շատ կողմնակիցներ ունէր սիւրիական քաղաքներու մէջ, որովհետեւ հայկական կայսրութեան մէջ մտնելը նորէն սիւրիական վաճառականներու առաջ պիտի բանար Լիփրատեան գիծը, համաշխարհային առևտուրի ուղին:

84 83 թ. Տիգրանը գրաւեց Հիւսիսային Սիւրիոյ բոլոր քաղաքները գրեթէ առանց դիմադրութեան, բացի Սելեւկիայէն, որ Անտիոքի նաւահանգիստն էր: Հոսկէ անոր բանակի մէկ մասն ուղղուեցաւ դէպի արեւմուտք՝ Դաեսայից Կիլիկիաց գրաւելու, միւս մասը դիմեց ծովափնեայ շրջանները, գրաւեց փիւնիկեան քաղաքները, սելեւկեան դինաստիան դադրեցաւ իշխելէ, բայց Սելլից թագուհին տեղէ տեղ փոխուելով երկար կռիւներ մղեց Տիգրանի դէմ: Սիւրիոյն յայտարարուեցաւ Հայաստանի կայսրութեան մէկ մասը, նշանակուեցաւ յատուկ փոխարքայ երկրի համար: Անտիոքը Հայոց թագաւորի մայրաքաղաքներէն մէկը դարձաւ: Անտիոքի գրաւումը անմահացնելու համար Տիգրանը իր պատկերով դրամներ հանեց շրջանառութեան: Սիւրիոյ կառավարիչ նշանակեց Բագարատ զօրավարին: Տիգրանի՝ Սիւրիոյ տիրելը բարիք մըն էր. ան բերաւ երկրին խաղաղութիւն, Բէզուկներու արշաւանքները

գաղարկացան, երկիրը ստացաւ կեանքի և գոյքի ապահովութիւն:

Այս ձեւով Տիգրանը տէր դարձաւ Արքայասարեր կիսալուանի՝ երկու թեւերուն և հասաւ Միջերկրական ծովուն: Այս նուաճումներու հետեւանքով հայութիւնը սերտ գործակցութեան մէջ մտաւ հելլենիստական մշակոյթի հետ: Իսղաքական ղէպքերու բերումով Տիգրանը մօտեցաւ Հրէաստանին: Կանգնելով Միջերկրականի օփերուն ան այժմ մտահազուցութիւն կը պատճառէր Եգիպտոսին, Հռոմսին: Ասոնք մեղկացած և քայքայուած Սելեւկեաններու փոխարէն իրենց առաջ գտան մէկ թարմ և ռազմունակ ուժ: Դէպքերու բերումով Տիգրանը իր առաջ գտաւ նաեւ Հռոմին, որ Միջերկրականի տէրն էր. 102 թուէն ալ Լեոնային Կիլիկիան Հռոմի նահանգներէն մէկն էր: Հռոմի շահերը այժմ կը վտանգուէին արեւելեան Միջերկրականի մէջ: Տիգրանը խուսափեր էր Հռոմին հանդիպելու, քայքայակալ անոր այժմ անոնք կը հանդիպէին Միջերկրականի ուփերուն, Հայկական լեռնաշխարհէն՝ ճշտ հեռու: Կռիւր ըլլալու էր անխուսափելի, միայն ժամանակի հարց էր:

Մինչ այդ Տիգրանը շուրջ քսան տարի խաղաղութիւն կը վայելէ և իր կայսրութեան ներքին միտքութիւն տալու մասին կը հոգայ:



Զ. ԳԼՈՒԽ

ՀՌՈՄ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ ԵՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՅՄՐՈՒԹԵԱՆ ՓԼՈՒԶՈՒՄԸ

ՀՌՈՄ-ՊՈՆՏԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ. — Դարգանոսի դաօչինքը զինադադար մըն էր երկու կողմերու համար ալ: 83 թ. Ասիոյ կառավարիչը՝ Մուրեան սկսաւ պատերազմը Միհրդատի դէմ: Ան տեւեց երեք տարի և Հռոմի համար ոչ միշտ յաղթական: Միայն Սուլլայի հրամանով այս պատերազմը դադրեցաւ և նախկին կացութիւնը վերահաստատուեցաւ: Ասկէ ետքը Միհրդատի պատուիրակները Հռոմի մէջ կը ջանային վերահաստատել տալ Դարգանոսի համաձայնութիւնը, դարձնել այն երկու պետութիւններու յարաբերութիւններու հիմք: Բայց այս բանը չյաջողեցաւ: Միհրդատ Եւպատորը համոզուեցաւ, որ Հռոմը Պոնտոսի հետ տեւական խաղաղութեան կողմնակից չէ, սկսաւ պատրաստուիլ պատերազմի:

Այդ նոյն ժամանակներուն, Հռոմի մէջ նոր շարժումներ սկսան՝ դեմոկրատ կուսակցութիւնը շարունակ կը պայքարէր Սուլլայի և արիստոկրատական կուսակցութեան դէմ: Այստեղ ու այնտեղ քաղաքացիական կռիւները կը բռնկուէին: Դեմոկրատները ի վերջոյ կեդրոնացան Սպանիոյ մէջ և ասկէ վարեցին պայքարը Հռոմի ազնուապետական կուսակցութեան դէմ: Միհրդատը լաւ ծանօթ էր Հռոմի ներքին ուժերուն, ուստի անոնց մէջ կ'որոնէ դաշնակիցներ: Ապստամբներու պարագլուխ Սերսորիուսի հետ ան կ'ըսկսի բանակցիլ՝ ընդհանուր ճակատ ստեղծել Հռոմի ազնուականներու՝ ձերակոյտի դէմ: Սերսորիուսը ասով մէկ ուժեղ դաշնակից կ'ունենար արեւելքի մէջ իր թըշնա-

միներու դէմ գործող: Սերտորիուսը և Միհրդատը կը դաշնակցէին հեռեւեալ պայմաններով Ասիան, որով կր կոչուէր նախկին Պերգամի անկախ թագաւորութիւնը, պիտի մնար Հռոմին, իսկ Բիւթանիան, Կապադովկիան և միւս գաղութները անցնելու էին Միհրդատին: Հռոմի դէմ դաշնակիցները գործելու էին միասին:

ՀՌՈՄ-ՊՈՆՏԱԿԱՆ ԿՈՒՆԵՐԸ.-- Հռոմի և Պոնտոսի մէջ պատերազմը սկսաւ 73 թիւին: Անոր պատճառը Բիթանիոյ անկախութեան վերացումն էր և անմիջապէս Հռոմի իշխանութեան տակ դրուելը: Ան հռոմէական մէկ նահանգ էր այժմ. հոն մուծուեց հռոմէական վարչութիւնը, բանակը: Ան հարուստ երկիր էր, հռոմէական կապուլաուսներու, սեղանաւորներու շահագործման ենթակայ: Անոր քաղաքները, հանքերը, նաւահանգիստները, մաքսատուները շատ մեծ եկամուտ կ'ապահովէին Հռոմի ծերակոյտին: Կար և երկրորդ առաւելութիւնը: Տէր դառնալով Բիւթանիոյ, Հռոմը իր անմիջական հսկողութեան տակ կ'առնէր Սեւ ծով տանող դռները՝ նեղուցները: Ամեն պարագային Հռոմի Միջերկրականի նաւատորմը կրնար մտնել Սեւ ծով և խորտակել Միհրդատի Սեւ ծովեան պետութեան ծրագիրը: Հռոմը կրնար փակել նեղուցները և Սեւ ծովի շուրջը կառուցուած հելլենիստական մեծ և փոքր քաղաքները տնտեսապէս կը քայքայուէին և կ'աղքատանային: Փակուած ու մեկուսացած պիտի մնար նաև Պոնտոսը:

73 թ. Միհրդատը ինքը նախայարձակ եղաւ. գրաւեց Բիւթանիան: Միաժամանակ պոնտական զօրքերը շարժուեցան Կապադովկիա: Հռոմէացիք ծանր կորուստներ ունեցան և պարտուեցան Քաղկեդոնի մօտ: Քիչ յետոյ Կիզիկոս քաղաքի մօտ Միհրդատը պարտութեան մատնուեցաւ Հռոմէացիներէն: Ան հարկադրուեցաւ նահանջել, լքել գրաւած երկիրները. պատերազմական բեմ դարձաւ բուն Պոնտոսը: Ծերակոյտը արեւելք էր ուղարկեր տաղանդաւոր, բայց ընչաքաղց զօրավար՝ Լուկուլլոսին: Քանի մը ճակատամարտներու մէջ ան կը ջարդէ Միհրդատին: Կը գրաւէ

Պոնտոսը: Միհրդատի ջանքերը Պոնտոսի լեռնային վայրերում մէջ կռիւնները շարունակել՝ իզուր անցան: Այ՛ ճգնաժամային կացութեան մէջ օգնութիւն խնդրեց իր որդի՝ Մաքսիմիան, որ Բոսֆորի կառավարիչն էր, Պարթեւնիսիսը, սկիւթական թագաւորներէն և Հայոց Տիգրանէն: Բայց ոչ ոք անոր օգնութեան չհասաւ: Իր որդին կը բանակցէր Հռոմէացիներու հետ հօր դէմ: Պարթեւնիսիսը և Սկիւթացիք չուզեցին օգնել անոր, որովհետեւ վստահութիւն չուէին անոր յաղթանակներու վրայ: Հայոց թագաւորը, որ դաշինքով պարտաւորուած չէր անոր օգնութեան գալու, չեզոք մնաց. չէր ուզեր Հռոմէացիներու հետ պայքարի մտնել: 71 թիւին Միհրդատ Եւպատոս պարտութիւն կրեց Լուկուլլոսէն Կաբիրայի մօտերը. ան կորսնցուց իր երկիրը, գահը և հազիւ կրցաւ փախչիլ արեւելք, իվերջոյ մտաւ Հայաստան և խնդրեց Տիգրանէն ապաստան: Տիգրանը չուզեց անձամբ հանդիպիլ անոր, մտածելով թէ այդ բանը կրնայ կասկածներ յարուցել Հռոմէացիներու մէջ: Պահեց Միհրդատին իրմէ հեռու, չի խորխուսեց անոր հակահռոմէական քաղաքականութիւնը: Բայց անոր այս վարքագիծը չփրկեց իրեն: Լուկուլլոսը յաղթելով Հռոմի մեծագոյն թշնամին՝ Միհրդատին, որոչեց յարձակիլ նաև անոր հաւանական թշնամիի՝ Տիգրանի վրայ: Վերջինս, ճիշդ է, չմասնակցեցաւ Միհրդատի հեռ՝ Հռոմի դէմ եղած կռիւններուն, բայց մտեր էր անոր կենսական տարածութեանց շրջանը Սիւրիա, դաշտային կիլիկիա, հաստատուեր էր Միջերկրականի ափերուն, օժանդակեր էր Միհրդատին՝ տէր դառնալու Կապադովկիային: Հայաստանը նոր միայն երեւան կը բերէր իր կարողական ուժերը, Տիգրանը անոնց զարգացման համար ստեղծեց անհրաժեշտ պայմանները: Բանի մը տասնեակ տարիներ յետոյ անոր դէմ ըլլալիք կռիւը աւելի դժուար պիտի ըլլար: Ուստի Լուկուլլոսը կ'որոշէ այժմ իսկ խորտակել հայկական կայսրութիւնը:

ԱՊՊԻՈՍ-ԿԼԱԻԿԻՈՍԸ ՏԻԳՐԱՆԻ ՄՕՏ.— Պոնտական պա-

տեքագնեքը վերջացնելէն ետքը, 71 թիւին Հուկուլլոսը Տիգրանի մօտ ուղարկեց պատուիրակ մը՝ Ապպիոս-Պլաւդիոսին՝ պահանջելու համար Միհրդատ Եւպատորինէ։ Վերջինս կը մերժէ Հռոմէացիներուն յանձնելու պոնտական թագաւորին՝ համարելով այդ հիւրասիրութեան օրէնքին դէմ և իր արժանապատուութեան անվայել մէկ գործ։ Հռոմի պատուիրակը ունէր նաև մէկ ուրիշ առաքելութիւն՝ յարաբերութեան մէջ մտնել Տիգրանէն դժգոհ տարրերու հետ և խոստանալ անոնց Հռոմի օժանդակութիւնը։ Ապպիոսը երկար ճանապարհ կտրեց ժինչև Հայոց կայսրութեան հարաւը տեսակցեցաւ Տիգրանի հետ։ 70 թիւին Հռոմէացիները երկար պաշարումէն ետքը գրաւեցին Պոնտոսի վերջին քաղաքները Հերակլեան և Սինոպը, ապա Ամիսոսը։ Հուկուլլոսը Պոնտոսի հետ վարուեցաւ որպէս նուաճուած երկրի՝ հելլենիստական քաղաքները մատնուեցան աւերի և աւարի։ Հերակլէս և Ամիսոս քաղաքները հրդեհեցին։ Ամենէն դաժան ձեւով հաւաքեցին ռազմատուգանքը. այս քողորը արագացուցին հելլենիստական քաղաքներու անկումը։ Ինչպէս սեղանաւորները, պրօկոնսուլները, այնպէս ալ Հռոմի արեւելք ուղարկուող զօրավարները իրենց ընչաքաղցութեամբ, յափշտակութեամբ թուլցուցին անոնց տնտեսապէս, որու հետեւանքով և հելլենիստական քաղաքակրթութիւնը դիմեց դէպի անկում։

ԼՈՒԿՈՒԼԼՈՍԸ ԱՍԻՈՑ ՄԼԶ.— Պոնտոսի ամբողջական գրաւումէն ետքը Հուկուլլոսը վերադարձաւ Ասիա, նախկին Պերգամը և զբաղուեցաւ տեղական և ընդհանրապէս հռոմէական զաղութիւններու խնդիրներով։ Խնդիրն այն էր, որ Դարդանոսի համաձայնութիւնէն ետքը տեղական ժողովուրդներ մատնուեր էին ահարկումի։ Անոնցմէ կը պահանջուէր վերջին հինգ-վեց տարիներու չափանձուած տուրքերը, քսան հազար աաղանդ ռազմատուգանք։ Քաղաքները վճարեր էին իրենց ունեցուածքը, վաճառեր էին անչարժ կալուածները և չէին բուարարեր Հռոմի ծերակոյտին և անոր հազարաւոր գործակատարներուն։ Այժմ եր

բեմնի հզօր, հարուստ և բարձր մշակոյթի տէր քաղաքները կրկնակի պարտքի տակ էին ինկեր. չէին վճարեր ամբողջութեամբ իրենց տուրքերը, մեծ գումարներ էին վերցուցեր սեղանաւորներէն մեծ տոկոսներով որուն տոկոսներն անգամ կը դժուարանային վճարել: Սեղանաւորները, ոչ թէ մայր գումարի, այլ տոկոսները գանձելու համար կը բռնադրուէին տեղացիներու, քաղաքարնակներու տները, հողերը այգիները: Քաղաքներէն կը բռնագրուուէին արձանները. մեծատաղանդ նկարիչներու պատկերները, իրենց գեղեցկութիւններէն կը մերկացնէին հասարակական շէնքերը, տաճարները: Շատ վայրերու մէջ պարտքերու փոխարէն երեխաներուն կը վերցնէին որպէս ստրուկ: Այս բոլորը կը փոխադրէին Հոռմ. այս ձեւով Հոռմը կը հարստանար Ասիական նահանգներու բարեկեցիկ կեանքը քայքայելով և հելլենիստական մշակոյթի ստեղծող դասն ու միջավայրը ոչնչացնելով:

ԼՈՒԿՈՒԼԼՈՍԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ.— Ասիան և ասիական նահանգները այլեւս անկարող էին տոկալ. ամենուրեք կը լսուէին բողոքի ձայներ: Շատերը փախեր էին քաղաքներէն և գիւղերէն. անոնցմէ շատերն ալ զինուած էին ու կը կռուէին իշխանութեան դէմ: Եւ եթէ ընդհանուր ապրստամբութեան չհասաւ մասնակի ըմբոստութիւնները, պատճառը միայն ղեկավարող դէմքի պակասն էր: Պոնտոսը գրաւուած էր Հոռմի կողմէն, յակ արեւելքի մեծագոյն դէմքն ալ՝ Միհրդատը՝ տարագրուած: Լուկուլլոսը նախքան Հայաստանի վրայ արշաւելը Ասիոյ մէջ որոշ բարենորոգումներ կ'ուզէր մուծել. ան իհարկէ չէր մտածեր տեղացիներու մասին. այլ կ'ուզէր, որ արշաւանքէն առաջ ռազմաճակատի թիկունքը հանգիստ ըլլայ և ապահով: Ան արգիլեց սեղանաւորներուն 12 տոկոսէն աւելի պահանջել պարտքերու դիմաց. արգիլեց, որ չվճարուած տոկոսներու համար, որ յաճախ մայր գումարէն աւելի շատ էր, տոկոսներ առնելը: Որոշեց, որ տոկոսի գումարը աւելի շատ չպիտի ըլլայ քան վերցուցած պարտքի գու-

մարը: Պարտքերը չվճարելու պարագային պարտատէրերը փրակունք ունէին բռնագրաւելու պարտատիրոջ եկամուտի միայն մէկ քառորդը:

Այս բարենորոգումները շատ քիչ թեթեւցոյցին Փոքր Ասիական նահանգներու բնակչութեան կացութիւնը, բայց Առկուլլոսի դէմ հանեցին բոլոր կապալառուները, սեղանաւորները: Ասոնք ալ անոր իշխանութեան անկման պատճառ դարձան:

ԼՈՒԿՈՒԼԼՈՍԻ ԱՐՇԱԽԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆ.— Միայն այս բոլորէն ետքը Լուկուլլոսը պատրաստուեցաւ Հայաստան արշաւելու: Ասոր համար ան ծերակոյտէ հրաման չունէր: Վերջինս անոր արեւելք էր ուղարկեր մի միայն Մինդատ Պոնտացիի դէմ վառելու: Բայց Լուկուլլոսը առանց Հռոմի համաձայնութեան ալ սկսաւ ռազմական գործողութիւնները Հայաստանի դէմ՝ յենուած իր հեղինակութեան վրայ միայն և այն մտայնութեան, որ յաղթողին ամեն ինչ կը ներուի:

69 թ. գարնան Լուկուլլոսը թողնելով իր բանակի մէկ մասը Պոնտոսի մէջ, անցաւ Եփրատը Մելիտինէի մօտերը և մտաւ Ծոփաց աշխարհ 60 հազար զինուորներով: Անոր կ'օգնէր Կապադոկիոյ թագաւորը պարէնով և զօրքով: Այս թագաւորին՝ Արիոբարզանին Տիգրանը և Մինդատը հինգ անգամ դուրս էին ըլեր Կապադոկիայէն և Հռոմն ալ հինգ անգամ անոր վերահաստատեր էր գահի վրայ: Ծոփքի բնակիչները ոչ միայն չզիմադրեցին Լուկուլլոսին, այլ ամեն կերպ օժանդակեցին անոր և հնազանդեցան: Ծոփքը ամբողջութեամբ հայացած չէր և չէր հաշտուեր իր անկախութեան կորուստի հետ: Լուկուլլոսի բանակները կը մտնեն Խարբեղի Դաւթը և հոնկէ ալ կը բռնեն հարաւարեւելք տանող ուղին. դէպի Տիգրանակերտ: Լուկուլլոսը որոշեր էր շարժուիլ Տիգրանակերտի, Հայաստանի նոր մայրաքաղաքի վրայ: Իթէ յաջողէր իր ռազմական ծրագիրը, գրաւէր Տիգրանակերտը, ան մէկ հարուածով կը բաժնէր բուն Հայաստանը կայսրութեան հարուստ և հելլենիստական մասերէն՝ Միջագետքէն, Սիւրիայէն: Տիգրանի կայսրու-

Թիւնը կը փլուէր, հարաւը կը բաժնուէր հիւսիսէն և Լուկուլլոսը կ'ուռնանար նոր դաշնակիցներ: Ծոփաց աշխարհէն Տիգրիսի ակունքներով Հռոմէացիք մօտեցան Տիգրանակերտին:

ՏԻԳՐԱՆԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— Լուկուլլոսը զօրքերու տեղափոխութիւնը կատարեց շատ արագութեամբ և մեծ գաղտնապահութեամբ: Ան Հայաստանին պատերազմ չէր յայտարարեր: Եւ միայն Հռոմէացիներու Ծոփաց աշխարհը մտնելէն ետքն է, որ Տիգրանը իմացաւ Լուկուլլոսի թափանցումի մասին: Տիգրանը պատրաստ չէր կռուի համար, ոչ զօրք էր կեդրոնացուցեր հարաւը, ոչ ալ մայրաքաղաքի պարիսպները ամրացուցեր էր: Հռոմէական բանակներու մօտենալու մասին խօսողները համարուեցան կասկածելի, պատժուեցան: Բայց այդ բոլորը իրականութիւն էր: Տիգրանը շտապեց հնարաւոր նախազգուշութիւնները ձեռք առնել: Նախ դատարկեց մայրաքաղաքի բնակչութեան մէկ մասը, ապա Լուկուլլոսի դէմ ուղարկեց մէկ զօրամաս՝ հրամայելով կասեցնել անոր առաջխաղացքը: Այդ բանակի առաջնորդ նշանակեց Մեհրուծան զօրավարին. Տիգրանը՝ մայրաքաղաքի պաշտպանութիւնը յանձնեց իր զօրավարներէն Մանկայոսին և ինքն ալ դիմեց դէպի հիւսիս՝ նախ Հայաստանէն չկտրուելու, ապա ռազմական պատրաստութիւններ տեսնելու համար:

Մեհրուծանի զօրագունդը դիմեց Լուկուլլոսի դէմ, բայց կասեցնել անոր առաջխաղացքը չկրցաւ իր 2000 հեծեակներով: Ինքը և իր բանակը ինկան հերոսաբար կռուի գաշտի մէջ: Ատկէ ետքը Լուկուլլոսի զօրքերը ուղղուեցան Տիգրանակերտ: Քաղաքը կը պաշտպանուէր հայ և օտար զօրքերով, յոյն և կիլիկեցի վարձկաններով: Հռոմէացիք փորձեցին մէկ յարձակումով գրաւել քաղաքը, բայց անյաջող: Կռուի մէջ մտցուցին քանդիչ մեքենաներ, բայց պաշտպան զինուորները վերէն կը թափէին քարիւղ և կ'այրէին մեքենաները. Հռոմէացիք հարկադրուեցան պաշարել Տիգրանակերտը: Այս պաշարումը նպաստա-

և որ էր Տիգրանին, որ Հայաստանի մէջ իր բոլոր նիւթական, մարդկային հարստութիւնը շարժման մէջ էր դրեր: Հոն ալ կը կազմէր նոր բանակներ, կը գինէր, կը վարժեցնէր և կ'ուղարկէր հարաւ: Ան այս ծանր պարագաներու մէջ միայն Միհրդատին հրաւիրեց իր մօտ, ընդունեց անոր արքայական պատիւներով: Տիգրանը կ'ըզգար իր ըրած սխալը, այն որ երկու տարի առաջ չէր միջամտեր Հռոմ-պոնտական կռիւներուն: Գուցէ դէպքերը այլ կերպ ընթանային: Այժմ ան ինքն է, որ կարիք ունէր Միհրդատի դործակցութեան և ռազմագիտական խորհուրդներուն: Փոխադարձ բացառութիւններէն ետքը անոնք կ'որոշեն միասին գործել և շարունակել կռիւը Հռոմի դէմ:

Ռազմական խորհրդակցութիւններէն ետքը Միհրդատը 10.000-նոց հայկական այրուձիու գլուխն անցած մտաւ Պոնտոս՝ վերագրաւելու, ապստամբեցնելու իր երկիրը: Իսկ Տիգրանը հայկական թարմ բանակով և իրեն ենթակայ թագաւորներու զօրքերով շարժուեցաւ հարաւ Տիգրանակերտին օգնութեան. 69 թիւին Հայոց թագաւորը Արածանիի հովիտով, Մուշի դաշտով կ'անցնի Տաւրոսը և կը մօտենայ Տիգրանակերտին: Ան կ'ըշտապէր ազատել մայրաքաղաքը պաշարումէն, որուն մէջ կը գտնուէին իր կանանոցը, գանձերը: Ան գիտէր թէ ինչ ծանր հետեւանքներ կրնար ունենալ Տիգրանակերտի գրաւումը իր կայսրութեան բախտի համար: Անշուշտ Տիգրանի այս միտումը հասկնալով է, որ Միհրդատը անոր ետեւէն կ'ուղարկէ Տակսիլ շարվարին՝ խորհուրդ տալու, որ Հռոմէացիներու հետ ըաց դաշտին մէջ ճակատամարտ չտայ, որովհետեւ հռոմէական մարզուած, լաւ զինուած բանակը այդպիսի կռիւներու մէջ անպարտելի էր: Միհրդատի բանակները զգացեր էին Հռոմի ուժի գերազանցութիւնը: Անոր զօրքը թիւով գերազանց էր, բայց անոր մէջ կը պակսէր կարգ ու կանոնը, որակով պակասաւոր էր, կազմուած էր հապճեպ, գիտակից չէր իր դերին, գործին: Բազմազգեան, բազմալիզուեան մէկ բանակ էր, որուն չէր հետաքրքրեր

մեծ թագաւորի ոչ քաղաքական, ոչ ալ տգատագրական նպատակները: Ասկէ շատ ալ տարջեր չէր Հայաստանի բանակները, որոնց մէջ մեծ թիւով վարձկաններ կային: Միհրդատը իր ռազմական փորձը ի նկատի ունէր, երբ խորհուրդ կուտար Տիգրանին բաց դաշտի մէջ ճակատամարտի չմտնել Լուկուլլոսին: Բայց Տիգրան ուրիշ մտահոգութիւն ունէր, որքան կարելի է շուտ ազատագրել մայրաքաղաքը. ուստի և չյսեց Միհրդատին:

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ. — Երկու թշնամի բանակները հանդիպեցան իրարու մայրաքաղաքի մօտերը, այն դաշտավայրի մէջ, ուր կը միանան Ֆարկանուսը և Բատմասուսը: Հայերը կռուի դաշտ կը նետեն շուրջ 80,000 մարդ, իսկ Հռոմէացիներու զօրքի թիւը շուրջ 15,000 էր, առանց հաշուելու դաշնակից թագաւորներու զօրաբանակները: Այս դաշնակիցներու հետ միասին Լուկուլլոս հաւանաբար ունենար 30,000-նոց մէկ զօրութանակ: Ճակատամարտը տեղի ունեցաւ 69 թ. Հոկտեմբեր 6-ին: Լուկուլլոսը բանակի մէկ մասը թողեր էր Տիգրանակերտը պաշարելու համար, իսկ մնացած մասով կ'ընդառաջէր Հայոց թագաւորին: Կռուի մէջ Տիգրանը կը պարտուի, անոր բանակները ծանր կորուստներ կ'ունենան ու անկանոն փախուստի կը դիմեն: Կռուի դաշտէն կը փախչի և Տիգրանը: Այս պարտութիւնը ծանր հետեւանք ունեցաւ Տիգրանի կայսրութեան համար: Առաջին հերթին կը որոշուի Տիգրանակերտի բախտը: Ճակատամարտէն ետքն ալ Հայերը կը դիմադրեն Հռոմէացիներուն. բայց մայրաքաղաքի կռուողները այլևս միակամ չէին. Տիգրանակերտի պարտութիւնը Յոյներուն և վարձկան զինուորներուն մղեց ապստամբութեան. անոնք կը միանան հռոմէական զօրքերուն և պաշտպանող բանակի հրամանատարը հարկադրութեամբ կ'ըլլայ քաղաքը յանձնել Լուկուլլոսին: Հռոմի զօրքը մտաւ քաղաք. աւերեց և աւարեց այն. անոնց միացան Յոյները, վարձկանները, բոլոր ոչ հայկական տարբերը, որոնց հաստատեր էր Տիգրանը իր նոր մայրաքա-

դաքը շէնցնելու համար: Թշնամիի ձեռքն անցաւ մեծա-
քանակ դրամ. Լուկուլլոսը թոյլ տուաւ, որ Յոյները և
ուրիշ գաղթականները մեկնին իրենց հայրենիքը:

Բայց շատ աւելի ծանր էին Տիգրանի պարտութեան
հաղափական հետեւանքները: Տաւրոսեան լեռնաշղթայէն հա-
րաւ ինկած բոլոր երկիրները անջատուեցան հայկական
կայսրութենէն: Աւելի ճիշդ՝ մէկ պարտութեամբ կայսրու-
թիւնը փլուզուածի ենթարկուեցաւ: Միջագետքը, Կորդուաց
աշխարհը, Սիւրիան, Դաշտային Կիլիկիան բաժնուեցան
Հայաստանէն: Հելլենիստական և սեմական աշխարհը այ-
լեւս կորած էր Տիգրանի համար: Միայն Հիւսիսային Մի-
ջագետքի Մծբին քաղաքն էր, որ կը գտնուէր Հայերու
ձեռքը: Հոս կուսակալ էր Տիգրանի եղբայր Գոռը:

Տիգրանակերտի անկումէն ետքը Լուկուլլոսի բանա-
կատեղին կուգան և հաւատարմութիւն ու հպատակութիւն
կը յայտնեն սեմական աշխարհի, յոյն քաղաքներու պատ-
ուիրակները, ցեղապետները, թագաւորները, ճիշդ այնպէս
ինչպէս ըրեր էին Տիգրանի հանդէպ տասնամեակներ ա-
ռաջ: Բայց Լուկուլլոսը դեռ ապահով չէր զգար իրեն:
Ճակատամարտ մը շահեր էր, բայց Տիգրանը իր տրամադ-
րութեան տակ ունէր Հայաստանի, Այսրկովկասի, Մա-
րաստանի ուժերը, Միհրդատ Եւպատորը մտեր էր Պոնտոս:
Հռոմէական զօրավարը մտեցներ էր Պարթեւներու պետու-
թեան. ինչ դիրք պէտք է բռնէր Պարթեւ Արշակունիներու
հանդէպ: Ան կ'երթար Սուլլայի ուղիով՝ հաշտութիւն և
դաշինք Պարթեւներու հետ. նոր ճակատ չպէտք էր բանար
քանի որ եղածը չէ վերջացեր, իսկ հայկական հարցը դեռ
լուծուած չէր:

ՄԻՋԱՋԳԱՅԻՆ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ.— Տիգ-
րանակերտի գրաւումը և Տիգրանի պարտութիւնը շատ
ճնշիչ և յուսահատ դրութիւն ստեղծեցին Հայաստանի ղե-
կավարութեան մէջ: Տիգրանը ընդմիշտ և մէկ անգամէն
կորսնցուց այն բոլորը, որուն վրայ աշխատեր էր քսան
և հինգ տարի: Այդ պայմաններու մէջ անոր յոյս և ոգի

ներչնչողը եղաւ Միհրդատ Եւպատորը, որ անձամբ եկաւ Հայոց թագաւորին մխիթարելու և յենարան ըլլալու: Անոր խորհրդով Տիգրանը ջանաց համաձայնութեան գալ Պարթեւներու հետ, որ այժմ պարտութենէն ետքը կրնային կարեւոր գործօն դեր խաղալ արեւելեան գործերու մէջ: Տիգրանը բանակցեցաւ Հրահատ III թղի հետ (70—57) և անոր զիջեց շարք մը երկիրներ, որոնք ինքը երբեմն բռնագրաւեր էր Պարթեւներէն: Միաժամանակ Միհրդատը ինքը նամակ կը գրէ Հրահատին մեկնաբանելով արեւելքի մէջ ստեղծուած կացութիւնը Հռոմի հոն հաստատուելէն ետքը: Կը համոզէր անոր, որ միանար իրենց՝ իրեն և Տիգրանին ընդհանուր թշնամիի դէմ, այլապէս անխուսափելի կ'ըլլայ Պարթեւներու ընդհարումները Հռոմի հետ, եթէ իրենք պարտուին: Պարթեւներու հետ միաժամանակ կը բանակցէր նաև Լուկուլլոսը յատուկ պատուիրակի միջոցով: Ան կը փորձէր խանգարելու, երևք արեւելեան պետութիւններու զինակցութիւնը, որ կրնար վտանգաւոր ըլլալ իրեն համար: Հրահատը այս առաջարկներու հանդէպ որոշեց չեզոք դիրք բռնել: Ան կը մտածէր թէ պատերազմը երկու հակառակորդ ուժերու մէջ կը ծառայէ իր ուժեղացման: Միև կողմէն Տիգրանը նոյպէս գոհ մնաց Հրահատի դիրքորոշումէն: Պարթեւները իրեն դէմ չեն, իրեն թիկունքը ապահով է, այս ալ մեծ յաղթանակ էր անոր համար. այժմ ան կրնար իր բոլոր ուժերը լարել Լուկուլլոսի դէմ: Ան Միհրդատի հետ, կը պատրաստուէր նոր պատերազմի: Զէնքի ընդունակ բոլոր մտրդիկ զօրահաւաքի ենթարկուեցան, ռազմամթերքի և պարենաւորման մեծ պատրաստութիւններ տեսնուեցան և կեդրոնացուցին ապահով վայրերու մէջ: Միհրդատի հետ եկած և աւելի ուշ Պոնտոսէն փախած սպայաւթիւնը առաջնակարգ դեր կը խաղար. անոնք Հայոց բանակը կը վարժեցնէին ու կը մարզէին և կ'ընդօրինակէին թշնամիի ռազմավարութիւնը: Հայոց բանակին որպէս օժանդակներ միացած էին իբերական, մարական գնդերը: Այժմ հայկական բանակը

փոքրացած էր, հարաւի գրաւուած երկիրներու զօրքերը
չկային: Փոքրաթիւ ըլլալը դժբախտութիւնն չէր, միայն
թէ ըլլար ռազմունակ և վարժուած

ԼՈՒԿՈՒԼԼՈՍԻ ԱՐՇԱԽՍԵՆԻՔԸ ԱՐՏԱՇԱՏ.— Տիգրանակեր-
տի գրաւումէն ետքը Լուկուլլոսը ժամանակ մը հանդիստ
տուաւ իր բանակին: Ան կ'ըսպասէր որ պարտուած և յու-
սալքուած Տիգրանը պատուիրակներ կ'ուղարկէ և խաղա-
ղութեան առաջարկներ կ'ընէ: Բայց Տիգրանի բանագնաց-
ները չէին երեւար. ուստի Հռոմի զօրավարը որոշեց ար-
չաւել Հայաստան և պարտադրել Տիգրանին իր պայժման-
ները: 68 թիւի ամառը ան շարժուեցաւ դէպի հիւսիս.
Մշոյ դաշտի մէջ զգաց, որ պարենաւորման գործը կը
դժուարանայ, հունձքը դեռ եղած չէր. միեւնոյն ժամանակ
ան հանդիպեցաւ Հայոց նոր, թարմ բանակներուն, որոնց
գլուխը կանգնած էին Միհրդատն ու Տիգրանը: Անոնք
նոր ռազմավարութեան կը հետեւէին. ճակատամարտի
դուրս չգալ Հռոմի հետ, այլ թուլցնել, մաշել անոր ու-
ժերը պարտիզանական կռիւներու մէջ: Ուժեղ էր յատկա-
պէս Հայոց այրուծին, որ կը գործէր թշնամիի թեւերուն
և թիկունքին արտակարգ արագութեամբ: Միւս կողմէն
ճակատ չկազմելով, չդիմադրելով Հռոմէացիներուն, երկու
թագաւորները երբեմն խոյս կուտային կռիւներէն՝ միւրը-
ճելու համար թշնամին երկրի խորքերը: Լուկուլլոսը կը
ջանար հանդիպիլ Հայոց թագաւորին, ստիպել անոր պա-
տերազմը ընդունելու, յուսալով պարտութեան մատնել ա-
նոր և հասնիլ Արտաշատին: Իսկ Տիգրանը, տեղեկանալով
որ Լուկուլլոսը կ'ուզէր ինչ գնով ալ որ ըլլայ հասնիլ Ար-
տաշատին, կը հասնի անոր ետեւէն և այժմեան Դարաքի-
լիսէի մօտերը կը հանդիպի Լուկուլլոսի բանակին: Վերջի-
նըս կը պատրաստուէր անցնիլ Արածանիի աջ ափը: Բայց
Տիգրանը ստիպեց անոր ճակատամարտը ընդունիլ ձախ ա-
փին: Անոր այրուծին ծանր հարուած հասցուց Հռոմէա-
ցիներուն, բնաջնջեց անոնց բանակի առաջապահներուն
68 թիւի սեպտեմբերին: Լուկուլլոսի բանակը չնայեած

կրած կորուստներուն կ'անցնի Արածանիի աջ ափը և կ'ուղղուի դէպի հիւսիս՝ Արտաշատ: Բայց այստեղ շոր անակնկալ: Չօրքը կը հրաժարի առաջ երթալէ, կը պահանջէ վերադառնալ Միջագետք: Զինուորական այս ապստամբութեան պատճառը ոչ միայն Հայաստանի շատ խիստ ձմեռն էր, որ արդէն սկսեր էր, այլեւ այն ծանր ու մեծ կորուստները, որ ունեցեր էր Լուկուլլոսը արչաւանքի սկիզբէն: Անոր դէմ կռիւ էին յայտարարեր Հայոց բնութիւնը, Հայոց գիւղական բնակչութիւնը, որ կը լքէր թշնամիին գրաւած գիւղերը և կ'երթար միանալու Տիգրանի բանակին, հայ զօրքին, որ բարթիզանական կռիւներուն մէջ միշտ յաջողակ էր: Լուկուլլոսը վաղուց կտրուած էր թիկունքէն, պարենաւորումը անկանոն էր, ինքը թշնամի երկրի մէջ, իսկ նպատակակէտը հեռու: Սովը և հիւանդութիւնը, տեւական լարուած դրութիւնը՝ թշնամիի անակընկալ յարձակումները, գցեցին հոռմէական բանակի ոգին: Անոնք կը պահանջէին լքել Հայաստանը: Չօրքին միացան և զօրավարները: Իգուր Լուկուլլոսը կը խնդրէր քիչ մըն ալ սպասել, առաջ շարժուիլ և անոնք բոլորը կը վարձատրուին Արտաշատի մէջ: Իսկ դասալիք մտայնութեամբ վարակուած զօրքը ոչինչ լսել չէր ուզեր: Այսպիսի բարոյսալքուած բանակով Լուկուլլոսը ոչինչ ընել չէր կրնար. կը հրամայէ նահանջել: Ան հասաւ Միջագետք փախչող զօրքով: Իր վրէժը լուծեց Մծքին քաղաքէն, որ դեռ Հայերու ձեռքն էր և ուր կառավարիչ էր Տիգրանի եղբայրը Գոռը: Մծքինի գրաւումը Լուկուլլոսի վերջին գործն էր:

ՆՈՐ ԿՈՒՆԻՆԵՐ.— Լուկուլլոսի նահանջով Տիգրանը և Միհրդատը որոշեցին պատերազմը շարունակել Պոնտոսի մէջ և շնչացնել Հայաստանի մէջ ցրուած հոռմէական բանակներու մնացորդները: Միհրդատը 8000 զինուորներու զլուխն անցած կրկին մտաւ Պոնտոս, ուր անոր մուտքը միայն բաւական եղաւ ապստամբութեան հրահրելու տեղացիներուն: Պոնտացիք ամենուրեք որսացին Հոռմէացիներուն, իսկ Տիգրանը կրկին գրաւեց Տիգրիսի շուրջ ինկած

աբաւառները. հռոմէական մէկ գրունդ պաշարուեցաւ Փանիի քերդի մէջ: Միւս կողմէն Ատրպատականի թագաւորը մտաւ Կապադովկիա, այրեց ու հրդեհեց այն: Հայ, մար և պոնտական ուժերը պիտի միանային Կապադովկիոյ հիւսիսը: Լուկուլլոսը կտրուելու էր Ասիայէն: Ան փորձեց անցնիլ Կապադովկիա, արդիւնը թշնամի բանակներու միացումը, քայց զօրքը չհետեւեցաւ անոր: Վերջինս կը պահանջէր վերադառնալ Իտալիա: Լուկուլլոս ստիպուեցաւ ոչ միայն հրաժարելու հայկական պատերազմը շարունակելէն, այլև Մծրինը և Միջագետքը լքելու: Լուկուլլոսը չկրցաւ ոչինչ ընել պոնտական իր բանակներու համար որոնցմէ 10 000 զինուոր Միհրդատը Զարդեց միայն մէկ Զիկիի մօտերքը՝ մէկ կիրճի մէջ: Հռոմէացիք այսպիսի պարտութիւն չէին տեսեր Քանի ճակատամարտէն ի վեր: Հայոց թագաւորն ալ նոր բանակներով կը պատրաստուէր մտնել Միջագետք: Այս բոլորը երերուն դարձուցին Լուկուլլոսի գիրքը: Նոյն իսկ իր զինուորները դաւադրութիւն մը կազմակերպեցին անոր հանդէպ, բայց անյաջող: Հռոմի ծերակոյտը 68 թ. անկէ առեր էր Կիլիկիոյ կառավարչապետութիւնը. 67 թ. ան հեռացուեցաւ Բիւթանիոյ կառավարչութենէն: Սեղանաւորները չէին ներքեր անոր հարկային բարենորոգումները, որ կը սահմանափակէր տեղացիներու շահագործումը: Անոնք տեւական յարաբերութեան մէջ էին Հռոմի սեղանաւորական մեծ տուններու, ծերակոյտի անդամներու հետ, Վր զեկուցէին Լուկուլլոսի մօտին, կը մեղադրէին, որ ան օգնութեան չէասաւ Զելայի ճակատամարտի հերոսներուն, որ ան ապօրինի կերպով է Հայաստանի վրայ յարձակեր, առանց ծերակոյտի համաձայնութեան: Ի վերջոյ ծերակոյտը կ'որոշէ հանգստեան կանչել արեւելքի մէջ ծառայութեան ժամանակը լրացուցած բոլոր զինուորներուն և ետ կանչել Լուկուլլոսին արեւելքէն ու անոր տեղ նշանակել Փլաբրիս կոնսուլին, որ Լուկուլլոսի փոխանորդն էր: Այսպէս անփառունակ վերջացուց Լուկուլլոսը իր ռազմական և քաղաքական կեանքը, որ այնքան փայլուն սկսեր էր:

Ան հանդիսացաւ խորտակողը արեւելեան ուժերու, բայց իր
յաղթանակներու դափնիները ուրիշներու գլուխները պիտի
զարդարէին: Ան իրեն դէմ հանեց Հռոմի և Ասիոյ մէջ իշ-
խող բոլոր դասերուն, զոհ գնաց անոնց սաղարանքներուն,
բայց և անոնց հետ միասին ան խորտակեց արեւելքի մշա-
կութային ուժերը՝ մեծապէս նպաստեց՝ հելլենիզմի թու-
լացման: Լուկուլլոսի յաղթանակներէն այլեւս բան չէր
մնացեր 67 թ. Ասիան նորէն բռնկուած էր ապստամբու-
թեամբ: Պոնտոսէն և Հայաստանէն Հռոմէացիները դուրս
էին քշուած, Կապադոկիան գրաւեր էին Հայերն ու Մա-
րերը, Բիւթանիան կռիւներու մէջ էր, Ասիան և Նեղոսց-
ները վտանգի տակ: Բայց այց բոլորը չէ. անիշխանու-
թեան էր մատնուած ամբողջ Միջերկրական ծովը, կղզի-
ները, Հռոմի և արեւելքի կապը խզուեր էր: Հռոմի գո-
յութեան վտանգ կ'ըսպառնար: Ով պիտի փրկէր Հռոմի
ընկերային-քաղաքական կառոյցը և վերադարձնէր անոր
արեւելքը:



Է. ԳԼՈՒԽ

ՊՈՍՊԷՆՈՍԸ ԱՐԵՒԵԼՔԻ ՍԷՋ

ԾՈՎԱԼՆԵՆՆԵՐԸ.— Մինչ արեւելքի տիրապետութեան համար կը պայքարէին երկու մեծ ուժեր՝ Մինրդատ-Տիգրանեան դաշնակցութիւնը և Հռոմը. Միջերկրական ծովուն վրայ կը կատարուէին բախտորոշ դէպքեր: Ան ինկեր էր ծովահէններու ձեռքը: Ասոնք կազմուեր էին հասարակութեան այն խաւերէն, որոնք դժգոհ էին Հռոմէն. անոր ընկերային կազմի խոնարհ, իրաւագուրկ և արհամարուած մասն էին: Ազգագրական և ընկերային տեսակէտէն բազմազանութիւն կը ներկայացնէին. հոն տեղ էին գտեր Սպանիայէն մինչեւ Միջերկրականի արեւելեան ամերը ապրող բոլոր ժողովուրդները: Հռոմի խստօրէն դասակարգային բաժանումը, խոնարհ դասերու հարստահարուիլը, ստրուկներու չարքաշ կեանքը, հպատակ ազգերու հանդէպ եղած արհամարհանքը, քաղաքներու և գիւղերու տեւական շահագործումը ստեղծեր էին Հռոմէն դժգոհ հսկայ բազմութիւն սը: Ասոնք է, որ կ'ապաստանէին ծովափնեայ լեռնային վայրերը, մեծ ու փոքր կղզիները. փոքր խումբերը կը միանային, կը կազմակերպուէին, ձեռք կը ձգէին նաւեր, նաւակներ, կը տիրէին արեւելքի և արեւմուտքի մէջ հողորդակցութեան բոլոր ուղիներուն, դադութային բարիքները կը գրաւէին: Ծովահէններու շարժումը, առաջին դարու 180-ական թիւերուն, վտանգաւոր բնոյթ ստացաւ Պոմպէլոսի ժամանակ: Ան կ'ըսպառնար ոչ միայն Հռոմի իշխող դասի տնտեսական սնանկացման, այլև Հռոմի գոյութեան: Ծովահէնները այնքան ուժեղ էին և այնքան վտանգաւոր Հռոմի իշխանութեան համար, որ անոնց հետ կապեր ստեղծեցին Սպանիոյ մէջ կեդրո-

նացած Սերդորիուսի ռամկավար ուժերը և արեւելքի՝ յեղափոխութեան պարագլուխ Միհրդատը: Այս ձեռով ամբողջ Միջերկրականը ապստամբութեան մէջ էր: Արեւելեան Միջերկրականի մէջ անոնց կեդրոնը Կիլիկիան էր, գործողութեան վայրը Եգէյեան ծովը: Ծովահէնները կը գրաւէին ծովամերձ քաղաքները, նաւահանգիստները, կրդզինները, իշխանութիւնը կ'առնէին իրենց ձեռքը կը բնաջընջէին Հռոմի պաշտօնէութիւնը, կը տուգանէին ժողովուրդը, կ'աւարէին: Անոնք գրաւեցին Դելոս կղ ին, որ արեւելքի ստրուկներու վաճառման գլխաւոր կեդրոնն էր, աւերեցին գլխաւոր սրբատեղիները: Ահա այսպիսի պայմաններու մէջ էր, որ Հռոմի ձերականոյր ընդունեց օրէնք մը՝ ծովահէններու դէմ կռուելու համար: Այս օրէնքը կը թելադրէր՝ երեք տարուայ համար մէկու մը անսաման լիազօրութիւններ տալ կռուելու ծովահէններու դէմ: Անոք իշխանութիւնը պիտի տարածուէր Միջերկրականի բոլոր անկիւններուն վրայ, իսկ ցամաքի վրայ ալ եօթանասուն և հինգ քիլոմետր խորութեամբ: Անոր տրամագրութեան տակ պիտի դրուէր 120,000-նոց մէկ բանակ, 500 նաւերէ կազմած նաւատորմիդ մը, պետական ամբողջ գանձը պիտի տրամադրուէր Հռոմի տիրապետութիւնը կայունացնելու համար: Ան ունենալու էր բացարձակ իշխանութիւն: Ծովահէններու դէմ պայքարելու գործը՝ յանձնուեցաւ Պոմպեոսին:

ՊՈՍՊԵՆՍԻ ՊԱՅՔԱՐԸ ԾՈՎԱՀԷՆՆԵՐՈՒ ԴԵՄ.— 67 թ. գարնան ան սկսաւ իր գործը: Միջերկրականի ընդարձակ տարածութիւնը բամեց իր օգնականներու մէջ: Անոր զօրահրամանատարները ըսներ էին ռազմական կարեւորութիւն ունեցող բոլոր կէտերը՝ Ճիպրայդարը, Բալարիան կղզիները, Մեսինայի նեղուցը, Մալթը, Եգէյեան քանի մը կղզիները, Դարտանելը, Վոսփորը, Փիւնիկիոյ ասփերը: 67 թիւի վերջերէն ակսաւ մաքրագործումը: Արեւմտեան Միջերկրականի մէջ այդ գործողութիւնը սեւեց քառասուն օր: Այս բանը ծանր հարուած մըն էր Սպանիոյ մէջ հաստատուած

Սերտորիոսին, որ այնուհետեւ երկար դիմադրել չկրցաւ: Արեւմուտքի ծովահէն ուժերու խորտակումէն ետքը Պոմպէտը իր ուժերը կեդրոնացուց արեւելք: Իր նաւատորմի զը կազմակերպեց և ամբողջացուց Պիքէյի մէջ. հոսկէ անոր մեծ մասը ուղղեց Կիլիկիա, որ վաղուց ծովահէններու կեդրոնավայրն էր: Ատալիայէն արեւելք ծովային մեծ ճակատամարտի մէջ ծովահէնները պարտուեցան: Անոնց հարիւրաւոր նաւերը այրեցան, իսկ շատերն ալ ամբողջ կազմով գերի ինկան Պոմպէտի ձեռքը: Այնուհետեւ մաքրագործումը շարունակուեցաւ Եգէյեան ծովի մէջ, ասիական ափերուն վրայ: Այս գործողութիւնները տեւեցին ընդամենը երկու ամիս: Ասկէ ետքն է, 67—66 թ. ձմեռը Պոմպէտը անցաւ Ասիա: Այդ այն ժամանակն էր, երբ Լուկուլլոսը պարտուած էր, անոր ամբողջ գործը փլուած և Հռոմի իշխանութիւնն ալ արեւելքի մէջ ծանր հարուած ստացած. ծովահէնութեան ոչնչացումը քիչ մը վերականգնեց Հռոմի հեղինակութիւնը, բայց արեւելքը դեռևս Հռոմի ձեռքը չէր, պատերազմը և ապստամբութիւնը այնտեղ կը շարունակուէր: Հռոմը արեւելքի մէջ ղեկավար, վարիչ ձեռք չունէր: 66 թ. Պոմպէտի բարեկամները Հռոմի մէջ օրինագիծ մը անցուցին, ըստ որում Միհրդատի և Տիգրանի դէմ մղուելիք պատերազմը կը յանձնուէր Պոմպէտին:

ՊՈՄՊԵՅՈՍԸ ԱՐՆԻԵԼԻՔԻ ՄԷՋ.— Ան կը նշանակուէր Բիւթանիոյ, Կիլիկիոյ և Ասիոյ բարձր կառավարիչ: Ծերակոյտի մէջ Պոմպէտի թեկնածութիւնը պաշտպանեց Կիկերոնը: Ան ռեպեկուէց հռոմէական հին աւանդութիւնը՝ հաւատա ի՛ր Քիսլոս իր յանձնառութեանց՝ պաշտպանել իրեն դաշնակիցներուն, որ կը նշանակէր, թէ պէտք էր Կապադովկիայի գահի վրայ վերահաստատել Արիստարգանին, որ վեցերորդ անգամ դուրս էր արուեր իր երկրէն: Հռոմի հեղինակութեան վերահաստատման անհրաժեշտութիւնը Կիկերոնը կը պատճառաբանէր նաև պետական շահի տեսակէտէն. Հռոմի տուրքերու հաւաքումը վտանգի տակ էր. մեծ հռետորը կը պաշտպանէր նաև սեղանաւորներու շահերը, որոնց կը կոչէր «հասարակութեան ընտանիք»:

Պոմպէոսի նաւատորմի զը նաւապաշարեր էր Ասիոյ
ափերը՝ Փիւնիկիայէն մինչեւ նեղուցները: Ինքը անցաւ
Գաղաթիա՝ տեսակցելու Լուկուլլոսի հետ. որը անոր պիտի
յանձնէր արեւելքի իշխանութիւնը և բանակի հրամանա-
տարութիւնը: Սկիզբը անոնց հանդիպումները և յարաբե-
րութիւնները բարեկամական էին, ապա խզուեցան: Պոմ-
պէոսը կը մեղադրէր անոր պատերազմի անյաջողութեան
մէջ, կը յիշէր անոր ընչաքաղցութիւնը: Լուկուլլոսը իր
հերթին կը մեղադրէր Պոմպէոսին իշխանատնչութեան և
դաւադրութեան մէջ: Ի վերջոյ Պոմպէոսը ընդունեց արե-
ւելքի բանակի հրամանատարութիւնը, Ասիոյ կառավար-
չութիւնը և խմբաւորեց ու կազմակերպեց իր ուժերը և
60,000-նոց բանակով գնաց Միհրդատ Ե, պատորի դէմ:

ՊԱՐԹԵՒՆԵՐՈՒ ԴԵՐԸ.— Հրահատ III-րդը պահեր էր
իր չեզոքութիւնը արեւելքի համար մղուող կռիւներու
մէջ: Միհրդատի եւ Տիգրանի առաջարկները անոր չբաւ-
րարեցին. մանաւանդ եռակողմանի միութեան դէմ կը գոր-
ծէր Տիգրանի որդին՝ Տիգրան Փոքրը: Ան ամուսնացած
էր Հրահատի աղջկայ հետ: Ան իր աներոջ կը դրդէր ոչ թէ
դաշնակցիլ իր հօր հետ, այլ անոր դէմ կռուի դուրս գալ:
Ան կը հետապնդէր տէր դառնալ Հայոց գահին: Պարթեւ-
ները համաձայնութեան չեկան Հայերու հետ հողային զի-
ջումներու խնդրի մէջ: Պոմպէոսն ալ նոր գործողութիւն-
ներու առաջ կանգնած ըլլալով, կ'ուզէր Պարթեւներու հետ
համաձայնութեան գալ: Անոր դեսպանները Հրահատին
կ'առաջարկեն դաշինք կնքել Հռոմի ժողովուրդի հետ.
ատոր համար անոնք կը համաձայնին: Հրահատին տալ Մի-
ջագետքը, որու վերաբերմամբ ակնկալութիւններ ունէին
նաեւ Հայերը: Պարթեւ պետութեան սահմանները պիտի
հասնէին մինչեւ Եփրատ: Ի վերջոյ՝ նոր կռուի ճակատ մը
չստեղծելու համար Տիգրանն ալ կը համաձայնի Միջա-
գետքը զիջիլ Պարթեւներուն: Բայց Հրահատը լաւ համա-
րեց Միջագետքը ընդունիլ Պոմպէոսի ձեռքէն, քան Տիգ-
րանի: Ան կը մտածէր թուլցնել երկու կռուող կողմերուն

և բռնել անոնց տեղը: Ան չէր պատկերացներ, թէ Հոռմը կրնար օր մը իրեն մեծագոյն թշնամիին դառնալ: Հոռմը հեռու էր, իսկ Տիգրանը և Միհրդատը մօտ էին և վտանգաւոր: Իգուր Միհրդատ Եւպատոր կ'ըզգուշացնէր անոր, թէ Պոմպէոսին միանալով ան նախ կ'օգնէ Հայաստանի կործանման, ապա իրեն՝ Պարթեւներու:

ՊՈՍՊԷՆՈՒՆ ԳՈՆՏՈՍԻ ՄԷՋ.— Պարթեւներու հետ համաձայնութեան գալէն ետքը 66 թ. Պոմպէոսը մտաւ Պոնտոս: Շնորհիւ իր զգուշաւոր գործողութիւններուն և զօրքի մեծ առաւելութիւններուն՝ ան Միհրդատին ծանր պարտութեան մատնեց Նիկոպոլիսի մօտերը՝ Լիկոս գետի ափին: Պոմպէոսը հարկադրուած եղաւ մէկ պարտութեանէն ետքը թողնել իր հայրենիքը և փոքրաթիւ բանակով փախչիլ արեւելք: Մեծ պայքարի գլխաւոր հերոսը դուրս կուգար կռիւններէն: Այլեւս ուժ չունէր, յոգներ էր և ինքը և իր երկիրն ու ժողովուրդը: Նոր յանձններ այլեւս կոռւի դաշտ հանել անկարող էր: Կար և այն, որ ասիական ժողովուրդները հրաժարուեցան անկէ. ան չհղաւ ազատարար: Հոռմէական լուծը փոխարինեց Պոնտականով, որ աւելի պակաս զգալի չէր քան առաջինը: Առաջին շրջանին ան իրօք փորձեց ազատագրել խոնարհ խաւերուն, ստրուկներուն, թեթեւցնել հարկերը, վերցնել պարտքերը, սակայն Սուլլայի յաղթանակէն ետքը ան հրաժարեցաւ այս բոլորէն: Միհրդատը ընդմիշտ հեռանալով Պոնտոսէն կ'ուզէր երթալ իր զաշնակից և գործակից Տիգրանի մօտ, բայց լսելով Հայոց արքունիքի մէջ տեղի ունեցած դէպքերու մասին, փոխեց իր միտքը և կողքիս վրայով անցաւ Սև ծովի հիւսիսային ափերը՝ հոն շարունակելու համար իր պայքարը Հոռմի դէմ: Հոռմը արեւելքի մէջ ազատ չունչ քաջեց, ան պայքարէն դուրս էր հաներ իր մեծագոյն թշնամիին: Պոմպէոսը այժմ կրնար իր զէնքը դարձնել Տիգրանի դէմ:

ԴԱԻԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅՈՅ ԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԷՋ. Այդ պահուն Հայաստանը կ'ապրէր ներքին քայքայման շրջան մը: Ինչպէս արեւելեան բոլոր արքունիքներուն մէջ, այն-

պէս ալ Հայոց պալատի մէջ անպակաս էին դաւադրութիւնները, ապստամբութեան ծրագիրները: Տիգրանի դէմ դաւադրութիւններ լարողները իրեն որդիներն էին, որոնք ունէին իրենց գործակիցները Հայոց ղեկավար դասի՝ ազնուականութեան շարքերու մէջ: Անոնց յինարան կ'ըլլային նաեւ օտար ուժերը. արքունիքները, որոնց համար ցանկալի չէր Հայաստանի մեծացումը: Միհրդատի աղջկան՝ Կլէոպատրայէն Տիգրանը քանի մը որդիներ ունէր. ասոնք զոհ էին գացեր զանազան դաւադրութեանց: Տիգրան Փոքրը ամենէն կրտսերն էր, ան թագաժառանգն էր, կ'ուզէր, որքան կարելի շուտ գահին տիրանալ: Բայց հայրը չէր մեռներ, ուստի ինքը՝ որդին կը դառնար դաւադրութեանց կեդրոն: Ան կը յենուէր իր աներոջ՝ Հրահատ III-ի վրայ, որ Հայաստանի թուլացման համար մեծ ճիգեր կ'ընէր: Անոր համար շատ նպաստաւոր պիտի ըլլար Տիգրանի անկումը և անոր որդու գահ բարձրանալը:

Երբ Տիգրան զբաղուած էր Լուկուլլոսի կռիւներով՝ Տիգրան Փոքրը ապստամբեցաւ հօր դէմ: Բայց հայրը ջարդեց որդու ուժերը և որդին փախաւ պարթեւ արքունիքը՝ Տիգրոն: Անոր զրդուժով Հրահատ III-ը պատերազմ յայտարարեց Հայաստանին: Երկուքը միասին պաշարեցին Արտաշատը, բայց գրաւել չկրցան: Հրահատը իր բանակի մէկ մասը թողուց Տիգրան Փոքրին, ինքը վերադարձաւ հարաւ՝ ձմեռելու: Տիգրանը յարձակեցաւ որդու վրայ ցրեց անոր բանակը և իրեն ալ դուրս ըրաւ Հայաստանէն: Տիգրան Փոքրը այս անգամ գնաց իր մեծ հօր՝ Միհրդատի մօտ: Այս հանգամանքը կասկած յարուցեց Տիգրանի մէջ՝ մի գուցէ իր դաշնակիցը՝ Պոնտոսի թագաւորը գործակից և դաւակից է իր որդուն: Միհրդատի պարտութենէն ետքը գրեթէ խզեց իր յարաբերութիւնը անոր հետ և զնահատեց անոր գլուխը հարիւր տաղանդ եթէ ողջ կամ մեռած մէկը բերէր իրեն: Միհրդատը պարտուած և տարագիր՝ միայն Հայաստանի ճանապարհին իմացաւ այս դէպքերու մասին, փոխեց իր ուղին, անցաւ հիւսիս: Իսկ Տիգրան Փոքրը լսե-

զով Պոմպէոսի յաղթանակներու մասին և կռահելով, որ պարտութեան հերթը պիտի հասնի իր հօրը՝ անցաւ հռոմէական զօրավարի մօտ, որ արդէն շորոխի հովիտէն կ'անցնէր Արաքսի հովիտը՝ Արտաշատի վրայ քայլելու: Այստեղ ան Պոմպէոսին առաջարկեց իր ծառայութիւնը Հայաստանի և իր հօր դէմ կռուելու համար՝ մտածելով, որ այս միջոցով կ'ըստանայ Հայաստանի գահը:

ՏԻԳՐԱՆԻ ՈՂՔՆԻԳՈՒԹԻԻՒՆԸ.— Տիգրանի համար ատեղծուեր էր քացառիկ և ծանր կացութիւն: Մէկ կողմէն անոր պետութեան հարաւային սահմանները կ'ապաստակէին Պարթիւները իրենց գերազանց և թարմ ուժերով, միւս կողմէն պարտուած և տարագրուած էր Հռոմի դէմ պայքարող մեծագոյն դէմքը՝ Միհրդատ Եւպատորը, որ տասնամեակներ եղեր էր իր գաշնակիցը և գործակիցը, երրորդ կողմէն պառակաւուած էր արքունիքը. Տիգրանի փոքրը իր կողմնակիցներու հետ կը գտնուէր թշնամիին բանակը, չորրորդ կողմէն Հայաստանը անվերջ կռիւներու մէջ կորսնցուցեր էր իր բանակը, դաշնակից և վասալ պետութիւնները լքեր էին, իւրաքանչիւրը կը փորձէր իր գլուխը փրկել: Հայոց զօրավարներուն և զեկավար դասի մէջ ալ դժգոհութիւններ կային Տիգրանի դէմ. ան երկար թագաւորեց և սպառեց երկրի նիւթական ու գինուորական ուժերը: Հայոց արքան իր կեանքի այդ դաժան օրերուն, գրեթէ մինակ էր մնացեր: Ան կ'ընէ մէկ յուսահատ քայլ՝ փրկելու համար այն ինչ որ կրնար փրկել: Պոմպէոսի մօտ դեսպաններ կ'ուղարկէ բանակցելու հաշտութեան համար: Տիգրանի փոքրը ամեն բան կ'ընէ խանգարելու այդ բանակցութիւնները, բայց անյաջող: Պոմպէոսի համար ձեռնտու էր Հայաստանի հետ խաղաղութեան դաշինք կնքելը և իր զօրքի ուժերը իրար տեղ չսպառել, որ այնքան անհրաժեշտ էր անոր ուրիշ ճակատներու համար: Հռոմէական բանակները մտան Արարատեան Դաշտը, գիմեցին Արտաշատ, ոչ մէկ տեղ հայկական բանակին չհանդիպեցան: Արտաշատէն քիչ հեռու հռոմէական զօրքը բանակ դրաւ: Այժմ հասեր էր

ծերունի թագաւորի կեանքի ամենէն ողբերգական վայրկեանը: Ոչ մէկ միջոց չունենալով պատուաբեր հաշտութիւն կնքելու, ան ինքը անձամբ կը ներկայանայ յաղթողին: Հռոմէական բանակ մտնելուն, անոր ստիպեցին իջնել ձիէն, գինթափուիլ և ապա շարունակել իր ուղին: Պոմպէոսի վրանը մտնելով՝ 75 ամեայ Հայոց թագաւորը, արեւելքի երբեմնի հզօր տէրը խոնարհեցաւ յաղթողի առաջ, իր թագը դրաւ անոր առաջ, իսկ Պոմպէոսը խորապէս ազդուելով Հայոց թագաւորի այս շարժումէն, ելաւ, գրկեց անոր, թագը կրկին դրաւ անոր գլուխը, նստեցուց իր քովը. խրախուսական խօսքեր ըսաւ ընկճուած թագաւորին և յայտնեց, որ ան ոչ միայն պիտի պահէ Հայաստանի թագը, այլև պիտի ըլլար Հռոմի ժողովրդի դաշնակիցը և բարեկամը: Տիգրան Փոքրը ներկայ էր այս տեսարանին, յոյս ունէր, որ պիտի ստանար իր վարձատրութիւնը, բայց Պոմպէոսը լքեց անոր և Հայաստանը թողուց իր իսկական տիրոջը: Եւ երբ Պոմպէոսը ի պատիւ Տիգրանի կազմակերպեց ճաշկերոյթ՝ Տիգրան Փոքրը չներկայացաւ:

ԱՐՏԱՆՍՏԻ ԴԱՆԻՆՔԸ.— 65 թ. Արտաշատի մօտ՝ հռոմէական բանակատեղիի մէջ Տիգրանի և Պոմպէոսի մէջ կնքուեցաւ դաշինք մը, որուն բովանդակութիւնը հետեւեալ կէտերու մէջ կ'ամփոփենք. Ա.) Տիգրանի կայսրութիւնը վերջ կ'ըստանար: Ան կը կորսնցնէր Սիւրիան, Արեւելեան Կիլիկիան, Փիւնիկէն, Կապադովկիան, Կորդուաց Աշխարհը, Ծոփքը: Անոր վերին հովանաւորութիւնը կը վերացուէր Մարական Ատրպատականի վրայէն: Բ.) Տիգրանը կը պահէր իր ձեռքին Մեծ Հայաստանը, որ ժառանգութիւն էր ստացեր առաջին ներկայացուցչէն՝ Արտաշէսէն: Այդ սահմանի մէջ ապրող ժողովուրդը հայն էր ու հայացած և հայացող ցեղերը: Գ.) Ծոփաց Աշխարհը յանձնուելու էր Տիգրան Փոքրին, որ հօր մահէն ետքը պիտի ժառանգէր նաեւ Յեծ Հայքը: Ըստ ոմանց Ծոփաց Աշխարհի հետ Տիգրան Փոքրը ստացաւ և Կորդուաց Աշխարհը: Ինչ կը վերաբերի դաշնագրի ռազմատուգանքին,

Տիգրանը տուաւ Պոմպէոսին 6.000 տաղանդ, որ այսօրուայ դրամով կ'ընէ ոչ պակաս 25 միլիոն ոսկի տուար. ան յանձն առաւ հռոմէական ամեն զինուորի վճարել 50 տրախմ. հարիւրապետներուն հազար տրախմ և զինուորական տրիբուններուն մէկ տաղանդ:

Տիգրան Փոքրը գոհ չմնաց դէպքերու այսպիսի դասաւորումէն և բողոքեց Պոմպէոսին: Վերջինը զրկեց անոր դաշնագրի մէջ յիշուած իրաւունքներէն, Ծոփքը յանձնեց Տիգրանին, իսկ Տիգրան Փոքրին ալ որոշեց տանիլ իր հետ Հռոմ, որ իր ներկայութեամբ արեւելքէն բերուող թագաւորներու, իշխաններու շարքին՝ աւելի ճոխացնէ յաղթողի մուտքը Հռոմ: Չնայեած, որ Հրահատ III բողոքեց այս վարմունքի դէմ, բայց Պոմպէոսը պատասխանեց, թէ հայրը իր որդու վրայ աւելի մեծ իշխանութիւն ունի՝ քան աներհայրը իր փեսայի վրայ: Եւ ընդհանրապէս Պոմպէոսի սիրալիր և արտաքնապէս մեղմ վերաբերմունքը Տիգրանի հանդէպ՝ կասկածներ արթնցուց պարթեւ արքունիքի մէջ և որը միայն հիմա հասկցաւ, որ Պոմպէոսի իրեն հետ կապած դաշինքը լուրջ մէկ միջոց էր Պարթեւներուն հեռացընելու արեւելեան գործերուն միջամտելէն: Եւ այժմ, երբ Պոմպէոսը հասեր էր իր նպատակին, բուրոսի ռարիշ լեղուով կը խօսէր Հրահատի հետ: Այս կ'երեւայ նաեւ այն բանէն, որ Պարթեւներու տիրոջը ան կ'անուանէ «արքայ», իսկ Տիգրանին կը շարունակէ կոչել «արքայից արքայ»: Ռազմատուգանքը Պոմպէոսը ստացաւ լրիւ, նոյնիսկ որոշած չափէն աւելի. ան վստահութեամբ կը վերաբերուէր Տիգրանին, որուն այժմ Պոմպէոսը կը կոչէր «Հռոմի ժողովրդի բարեկամ եւ դաւանակից»: Պոմպէոսը Հայոց թագաւորին յանձնեց կորդուաց Աշխարհը և Հիւսիսային Միջագետքէն՝ Մծբինը, որ պիտի հասնէր Հրահատ III ին: Վերջինս իզուր բողոքեց այս կարգադրութեան դէմ, նոյնիսկ զօրք կեդրոնացուց Միջագետքի սահմաններու վրայ: Բայց Պոմպէոսի միջամտութեամբ եւտնդամ յանձնաժողով մը սահմանային վէճը լուծեց յօղուտ Տիգրանի և հայկական

զօրքերը կանգնեցան Հիւսիսային Միջագետքի մէջ՝ Պոմպէտը կը յենուէր Հայաստանի վրայ, կ'ուզէր ստեղծել կենսունակ Հայաստան Պարթեւներու դէմ: Ան այնքան թոյլ պիտի ըլլար, որ վտանգաւոր չըլլար Հռոմի դէմ, բայց այնքան ուժեղ, որ կայսրինար պաշտպանել թէ իր և թէ Հռոմի շահերը արեւելքի մէջ Պարթեւներու դէմ: Հայաստանը թշնամի պետութենէն կը դառնար դաշնակից պետութիւն և իր վրայ կը վերցնէր նոր ծանր բեռ մը՝ ըլլալ հռոմէական շահերու յառաջապահը արեւելքի մէջ: Կ'ըսուէր Հայաստանի համար պատմութեան մէկ նոր շրջան՝ երկու հզօր ուժերու մէջ:

ԱՐԵՒԵԼՔԻ ԳՈՐԾԵՐՈՒ ԿԱՐԳԱՅՐՈՒԹԻՒՆԸ.— Հայաստանի հարցը լուծելէն ետքը Պոմպէտը կ'ենթարկէ նաև վրաստանը, կը հասնի մինչև Կասպից ծովու մօտերը, կայ պահելու համար հեռաւոր Չինաստանի հետ Ան կը մտածէր առևտրական ուղիի մը տէր դառնալ, որ Պարթեւներու հողերէն չանցնի և Պարթև իշխանութեան հսկողութեան տակ չըլլայ: Բայց ծով չհասաւ և այդ առևտրական գիծն ալ Պոմպէտի ժամանակ չստեղծուեցաւ: 64 թ. ան զբաղուեցաւ Պոնտոսի խնդիրներով: Հոս երկրի կեդրոնական մասերու մէջ ան կը հիմնէ քանի մը քաղաքներ. ասոնք կը տարածուին Ալիս Եփրատի միացնող գծի վրայ: Բրպէս քաղաքական միութիւն՝ Պոնտոսը դարբեցաւ գոյութիւն ունենալէն: Ան դարձաւ հռոմէական նահանգ, բաժնուեցաւ տասն և մէկ գաւառներու, որոնց գլուխը կանգնեցան Հռոմէն եկած բարձր կառավարիչներ: Կոմոզէնը և Կապադոկիոյ թագաւորութիւնները դեռ պահեցին իրենց գոյութիւնը, սակայն խստօրէն ենթարկուեցան Հռոմէն ուղարկուած զգիտողներու՝ հրահանգներուն: Ապա նոյն ժամանակները գրաւեց Դաշտային և Արեւելեան Կիլիկիան և ամբողջ Կիլիկիան միացուց մէկ նահանգային վարչութեան մէջ: 63 թ. Պոմպէտը զբաղեցաւ նաև Սեւ լիւկեաններու ժառանգութեան հարցով: Տիգրանի իշխանութեան փլուզումէն ետքը Սիւրբիան ինկաւ անիշխանու-

Թեան մէջ: Արաբական շէյխերը զանազան վայրերու մէջ հիմնեցին տեղական իշխանութիւններ, կը կոռւէին իրարու հետ առեւտրական քաղաքներուն տէր դառնալու համար: 60-ական թիւերուն սեմական աշխարհի ամենէն մեծ քաղաքական ուժը հրեականն էր, որ կը փորձէր նուաճումներ ընել նաև Պաղեստինէն դուրս: 64-63 թիւը Պոմպէոսը անցուց Անտիոքի մէջ և լուծեց Սելեւկեան և սեմական աշխարհի հրատուապ հարցերը: Ան մերժեց Սելեւկեան հարըստութեան վերահաստատումը Սիրիոյ վրայ և յայտարարեց ան հռոմէական նահանգ մը՝ որ պիտի կառավարուէր Հռոմի կուսակալով:

Այսպիսով արեւելքը ամբողջութեամբ ենթարկուեցաւ Հռոմին: Եւ Պոմպէոսը եղաւ այն բախտաւոր զօրավարը, որ քաղեց իրմէ առաջ Արեւելքի մէջ գործող հռոմէական հրամանատարներու՝ Սուլլայի, Լուկուլլոսի յաղթութեան պտուղները: Սուլլան թուլցուց արեւելքը, Լուկուլլոս յաղթեց անոր մեծագոյն ուժերուն: Պոմպէոս առանց մեծ ճիգերու իր գլուխը զարդարեց յաղթողի փառապսակով: Այժմ Հռոմի իշխանութիւնը աւելի ամուր էր և հիմնաւոր, արեւելքի ուժերը աւելի պառակտուած ու տկարացած: Կար մէկը, որ մօտիկ ապագայի մէջ պիտի մրցէր Հռոմի հետ, պարթեւ պեռտիւնը, որուն հետ մրցիլ Պոմպէոսի ծրարագրին մէջ չէր մտներ այդ օրերուն և մէկը, որ յարատեւ ապստամբ դրութեան մէջ էր, պայքարեր էր Սելեւկեաններու դէմ, ունէր կրօնական-ազգային պայծառ գիտակցութիւն: Այդ հրեութիւնն էր, որու հարցը 60 թուերուն նորէն նրբեան կռուար և որով պիտի զբաղուէր Պոմպէոսը:

ՀՐԵԱԿԱՆ ՀԱՐՅԸ.— Երկրորդ դարուն հրէութեան պայքարը վերջացաւ յաղթանակով. ան տիրացաւ իր անկախութեան: Բայց Սելեւկեանները չէին հաշտուեր Պաղեստինի կորուստի հետ և կը դաւադրէին անոր դէմ: Եան Հիբկան I-ի օրով (135-105) հրէութիւնը հասաւ իր ուժի բարձր աստիճանին: Սելեւկեաններու դէմ ան կը յենուէր արեւելքի մէջ ամբօրէն հաստատուած Հռոմի վրայ: Ան

գրաւեց Մամարան, ուր հաստատուած էին հեթանոսական կրօնական սրբութիւններ և տաճար. Հրէաները քանդեցին՝ ամբողջ քաղաքը և ձվամարաշին՝ ստացաւ դաւաճանի, ուրացողի իմաստ: Եւան Հիրկան կրցաւ ստեղծել Պաղեստինի քաղաքական ազատագրումը և հրէութիւնը նորէն հաւաքեց Ենովյայի շուրջը, որովհետև Սիւրիան անկարող գտնուեցաւ անոր դէմ դուրս դալու: Բայց եթանոսաւանական թուերուն Սելեւկեանները ինկան և Հայոց թագաւոր՝ Տիգրանը կանգնեցաւ Պաղեստինի սահմաններու վրայ. Ալէքսանդրա թագուհին (78—69) կանգնեցաւ երկու վտանգի առաջ: Երկրի մէջ սկսուեր էր քաղաքացիական կռիւ մը երկու կոչսակցութեանց՝ Փարիսեցիներու և Սադուկացիներու մէջ, իսկ դուրսը Սելեւկեան անգոր կտրտութեան շուրջը կը մղուէր պայքար. Հայոց բանակները կը տիրէին Հիւսիսային Միջագետքին, կը մօտենային Սիւրիոյ, ապա Պաղեստինին: Սադուկացիները ղեկավար՝ ազնուական դասն էին, հակուած էին հելլենիզմին, անոնց ձեռքն էր քահանայական դասը: Անոնք կը վաբէին աշխարհիկ քաղաքականութիւն և մեծապէս նախընտրուած էին հրէութեան քաղաքական վերածնութեան: Ասմոնեան քահանայապետ-թագաւորները կը ղեկավարէին ազգային քաղաքականութիւնը: Պատրաստ էին համաձայնիլ բոլոր այն ուժերու հետ, որոնք հրէակամ պետութեան վտանգ չէին սպառնար: Անոնք կառչած էին կրօնի հին աւանդութիւններուն և այդ սահմանի մէջ ոչ մէկ յառաջդիմութիւն չէին ընէր: Ընդհակառակը՝ Փարիսեցիներուն կը հետաքրքրէր միայն կրօնը: Անոնք անզիջող էին հելլենիզմի հանդէպ. ինչ որ հելլենիստական էր, օտար էր, ատելի էր անոնց համար, մերժելի էր: Անոնք կը խորասուզուէին օրէնքի, Ս. Գրքի ուսումնասիրութեան մէջ և հոնկէ կ'ըսպասէին իրենց հետաքրքրող հարցերու պատասխանը: Կրօնի մէջ ոչ մէկ զիջում չընելով անոնք պատրաստ էին շատ բան զիջիլ աշխարհիկ իշխանութիւնէն: Փարիսեցիներու ուսմունքի մէջ է, որ հրէական կրօնը այդ շրջանին կը հասնի իր կատար-

րեւութեան: Անոնց վարդապետութեան մէջ կը զարգանայ Մեսիայի դադափարը. որ հրէութեան տենչերու արտայայտութիւնն էր: Անոնք կը քարոզէին, թէ շուտով գալու է Մեսիան, Փրկիչը, իտէալական թագաւորը: Ենովան ուղարկելու է անոր իր ժողովրդի փրկութեան համար տարի յուծէն: Մինչ այդ հրէութիւնը պիտի ունենայ մեծ անկում, անցնէ տառապանքի շրջան մը: Պիտի գայ Եզրի մարգարէն, որուն միայն պիտի հետեւի Փրկիչը. մարդու որդին, որ միաժամանակ «Ուրի Ասուծոյ» է: Ան աշխարհ պիտի գայ ջնջելու հեթանոսներուն և չարագործներուն և վերահաստատելու Իււրթի քաղաւորութիւնը: Զարիքը և Սուար ջնջելէն ետքը Փրկիչը պիտի վերահաստատէ Երուսաղէմի վաղեմի փառքը և մեծութիւնը: Սփիւռքի հրէութիւնը պիտի հաւաքուին Պաղեստին, պիտի կասարուի հրէութեան միութիւնը՝ ազգային հաւաքումը: Եւ աշխարհի վրայ պիտի իշխէ Ասուծոյ թագաւորութիւնը, որուն կեդրոնը Երուսաղէմն է:

Գաղափարական-կրօնական և քաղաքական երկու հոսանքները կը պայքարէին իրարու դէմ, երբ Սիւրիոյ մէջ երեւաց Տիգրանը: Եւ Ալեքսանդրա թագուհին ժամանակաւորապէս ազատուիլ կրցաւ մեծ նուէրներ ուղարկելով անոր: Բայց ան հայկական արշաւանքէն փրկուեցաւ Լուկուլլոսի յարձակումներով Հայաստանի վրայ: Անոր յաջորդի Հիւկան 11-ի ժամանակ հրէական հարցի լուծման միջամտեց Պոմպէոսը. 63 թ. ան գրուեց Երուսաղէմը: Հռոմը իր ձեռքը հասցոց մինչեւ Երուսաղէմի տաճարին: Հրէութեան համար մէկ նոր կարգի սկիզբը կ'ըլլայ այդ գլոխաւումը: Ան կ'ենթարկուի Հռոմի գերագոյն իշխանութեան, բայց կը պահէ իր թագաւոր քահանայապետը: Ան ալիւս անկախ չէր, քայքայ գեոեւս հռոմէական նահանգ ալ չէր: Երկար պայքարը, որ հրէութիւնը մղեր էր Սելեւկեաններու դէմ, վերջացաւ Հռոմի հովանաւորութեամբ: Կ'ըսկըսուի հրէութեան ազգային գոյութեան մէկ նոր շրջան, որ մէկ գլուխը պիտի կազմէ արեւելքի մղած պայքարին՝ արեւմուտքի դէմ:

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Այստեղ մենք յիշելու չենք Մերծաւոր Արեւելքի վերաբերող սկզբնաղբիւրները, մասնագիտական գրականութիւնը, որոնք եւ մատչելի չեն մեր ընթերցողներուն եւ չպիտի ծառայեն անոր ընդհանուր պատմագիտական պատրաստութեան: Ընտրել ենք շատ ընդարձակ, անպարփակ գրականութենէն միայն այն ինչ որ մեր տրամադրութեան տակ կայ կամ որ մենք կարելոր ենք համարել նիւթի ընդարձակման, աւելի խոր ուսումնասիրութեան համար: Իւրաքանչիւր երկրի, ազգի, ապա պատմական շքջանի մասին վերցուցել ենք, յիշել ենք մէկ կարելոր աշխատանք, ապա ասոր որպէս լրացում յիշել ենք ուրիշ աշխատանքներ, որոնք պիտի լրացնեն առաջինը: Գլականութիւնը դասաւորել ենք լեզուական կարգով. ովքեր աւելի մանրամասն գրականութիւն եւ սկզբնաղբիւրներ կ'ուզեն ունենալ իրենց ձեռքի տակ, կ'ընան դիմել Ֆլանսերէն լեզուով հրատարակուած «CLO» պատմագիտական ուսմունքներու մատենաշարի առաջին եւ երկրորդ հատորներուն, որոնք ունին *Les peuples de l'Orient Méditerranéen* — ընդհանուր անունը: Առաջին հատորը կը վերաբերի Մերծաւոր Արեւելքի ասիական ազգերուն, երկրորդը Եգիպտոսին: Մենք յիշել ենք այստեղ մեծ մասամբ նորագոյն գրականութիւնը, որոնք մեզ վերահասու կ'ընեն Մերծաւոր Արեւելքի մէջ տեղի ունեցած վերջին պրպտումներուն եւ անոր պատմութեան մասին կառուցուած տեսութիւններուն:

ՀԱՅԵՐԷՆ

Խ. Սամուելեան՝ Հին Հայաստանի Կուլտուրան, Ա. հատոր, Քարէ Դար. Երեւան 1931 թ.: Պրոֆ. Ա. Խաչատրեան՝ Հայաստանի Սեպագր. Շրջանի Պատմութիւն, Շուրջ 3000—600 թ. Քր Առաջ, Վեբ. Եղիա Ս. Քասուցի՝ Նախահայկա՛յան Հայաստան, Նոր Քարային Շրջանէն 600 թ. Քր. Առաջ Պէյրութ, 1950: Գ. Գիւզալեան՝ Ուրուագիծ Հին Հայաստանի Պատմութեան, «ԱԿՕՍ» Երկամսեայ Հանդէս Ա—Ժ գրքերը, կը վերաբերի Հին Հայաստանի աշխարհագրական պայմաններուն եւ աղբիւրներուն: Գ. Ղափանցեան՝ Ուրարտուի Պատմութիւնը, Պետ. Համալսարանի Հրատարկ. 1940 Երեւան: Գ. Գիւզալեան՝ Հայաստանի Պատմութեան Շրջանները Ա. մաս մինչեւ 88 էջը: Շատ կարեւոր են նաեւ հետեւեալ գրութիւնները՝ Բ. Պիոսրովսկի՝ Հայ Ժողովուրդի Ծագման Հարցի Շուրջը, Տեղեկագիր Հայ. Ս.Ս.Ռ. Գիտութիւններու Ակադեմիայի 1945 N^o 6. Պիոսրովսկի՝ Հայաստանի Պատմութեան եւ Կուլտուրայի Հնագոյն Էտապները, 1944 N^o 3—4 Տեղեկագրի: Ա. Ղարիբեան՝ Հայ Ժողովրդի Պատմութեան Սկզբնաւորման Շրջանը, Տեղեկագիր Հ. Ակադեմիայի 1946 N^o 9: Յ. Մանգաղեան՝ Ֆէոտալիզմը Հին Հայաստանում, 1934 Երեւան. Նոյնի Քննական Տեսութիւն Հայ Ժողովրդի Պատմութեան, հատոր I. սկիզբէն մինչեւ Արշակունիներու հաստատումը Հայաստանի մէջ, 66 թ. Քր. յետոյ: Հր. Ք. Արմէն՝ Մեծն Տիգրան 1947, Անթիլիաս: Հ. Անառեան՝ Հայոց Լեզուի Պատմութիւնը, I. հատոր, Երեւան 1941:

ԱՆԳԼԵՐԷՆ

Անգլիական հսկայ գրականութենէն յիշենք ամենէն կարեւորները: Ամենէն առաջ պէտք է կարդալ հետեւեալ երեք գրքերը՝ 1. Hendrik Van Loon — *The History of*

Mankind — մեր նիւթին կը վերաբերի առաջին 88 էջերը : 2. H. G. Wells — *Outline of History*, կայ անգլիական եւ ամերիկեան բազմաթիւ հրատարակութիւններ, մեր նիւթին կը վերաբերի 130—320 էջերը : *Breasted — A History of the Early World*. Ginhand Company. 1946 թ ամենէն հարուստ եւ ներշնչող աշխատանքներէն մէկը : Այս երեք գրքերը թարգմանուած են նաեւ ֆրանսերէն : V Gordon Childe — *Man Moks himself* (*Thinker's Library*) London, 1941 թ. Նոյնի՝ *Progress and Archeology* (*Thinker's Library*) London 1945, M Rostovtzeff — *A History of the Ancient World, vol. 1. The Orient and Greece*, Oxford 1936. բազմաթիւ նկարներով : H. R. Hall — *The Ancient History of the Near East*, 1936 London : J. H. Breasted — *A History of Egypt, շատ արժէքաւոր եւ ճշիւ հրատարակութիւն*, 1941 London : Olmstead — *History of Palestine and Syria*, New York, London, 1939 : Sir P. Sykes — *A history of Persia*, Oxford 1935. Նոյնի — *Persia*, Oxford 1922 : Sidney Smith — *Early History of Assyria*, 1928, London : Leon V. King — *A History of Sumer-Akkad*. Նոյնի — *A History of Babylon*, London 1923, 1919 :

ՖՐԱՆՍԵՐԷՆ

Ամենէն լրիւ եւ կատարեալ գործն է *Alex. Moret*-ինը *Histoire de l'Orient* երկու հատոր. հնագոյն շրջանէն մինչեւ Պարսից պետութեան անկումը : Գիրքը առաջին մասն է *Les Presse Universitaires de France*-ի ձեռնարկած *Histoire Générale* ի : *Les Premières Civilisations* առաջին գիրքը *Peuples et Civilisations* շարքի, Նոյն հրատարակչականի. գործն է բազմաթիւ հեղինակներու. արժէքաւոր է վերջին 1950ի հրատարակութիւնը՝ ընդարձակ յաւելումներով. նոր գլուխներով : Leon Homo — *Histoire d'Orient*, Arm. Fayard 1945, Bed. Hrozny — *Histoire de*

l'Asie Antérieure de l'Inde et de la Crète. հեղինակը նշանաւոր հաժագէտ է, նոր մեկնաբանութիւններ կուտայ Մերձ. Արեւելքի պատմութեան, Իր աշխատանքը հասցուցեր է մինչեւ երկրորդ հազարամեակի սկիզբը. Jean Capart, G. Conteneau — Histoire de l'Orient Ancien, Hachette, 1946, G. Conteneau — Manuel d'Archéologie Oriental, Երեք հատոր, Aug. Picard 1927-1931. Նոյն հեղինակի, La Civilisation des Hittetes et des Metanniens. Նոյնի. La civilisation d'Assur et de Babylone, երկուքն ալ Payot-ի նշանաւոր Bibliotheque Historique-ի շարքի մէջ. Շատ արժէքաւոր է որպէս ներածութիւն պատմութեան հնագոյն շրջանները հասկնալու համար P. Loviosa Zambotti — Les Origines de la Diffusion de la Civilisation, Payot 1949, B. Waltz — La Question d'Orient dans l'Antiquité, Payot 1942, Raymond Weill — La Phénicie et l'Asie Occidentale. Collect. Armand Colin. 1939, Leon Wooley — Les Sumériens Payot, 1930, L. Delaporte — Les Hittites. l'Evolution de l'Humanité շարքին, 1936, La Renaissance du livre — Նոյն հեղինակի՝ La Mésopotamie. Les Civilisations Babylonienne et Assyrienne. Նոյն շարքի մէջ 1923, Al. Moret — Le Nil et la Civilisation Egyptienne, նոյն շարքի մէջ. 1926 թ. Ad. Lods — Israël, Des Origines au Milieu du VIIIe Siecle. Նոյն հեղինակի. Les Prophètes d'Israël et les Débuts du Judaisme. Նոյն հեղինակի՝ Le Monde Juif Vers le Temps du Jesus. երեք գրքերն ալ նոյն հրատարակչականի մէջ. Adontz N. — Histoire d'Arménie, Paris 1946. Ուրարտուի պատմութիւնն է եւ հայ ժողովրդի ծագման հետ կապուած հարցի քննարկումը. R. Grousset — Histoire de l'Arménie, 1. հատոր, Payot 1947. մեր նիւթի համար անհրաժեշտ է առաջին հարիւր էջերը, A. Dupont-Sommer — Les Arméens, 1949, W. W. Tarn — La civilisation Hellenistique, 1936, Payot, A. Moret — Rois et Dieux d'Egypte, librairie Ar. Colin, 1928. A. Moret et G. Davy — Des

Clans aux Empires. Organisations Social chez les Primitifs et dans l'Orient Ancien. (l'Evolution de l'Humanité) 1923. C. Huart — l'Iran Antique — Elam et Perse Alb. Michel, 1943.

ՌՌԻՍԵՐԷՆ

Ռոսսովցեվ շին Աշխարհի Պատմութիւն, 1924, Պերլին: Այս գործը որոշ յաւելումներով թարգմանուած է անգլերէն եւ ճոխացուած քաղմաթիւ նկարներով ռուսերէնը մէկ հատոր է, անգլերէնը երկու ստուարածաւալ հատորներ: Ա հատորը կը պարփակէ Արեւելքը եւ Յունաստանը: Բ հատորը Հոռմը: Ամենէն կարեւոր աշխատանքներէն մէկը: Ռոսովիչ՝ Հոռմէական կայսրութեան արեւելեան նահանգները: 1949 Մոսկուա — Լենինգրատ: Պիոսովսկի՝ Ուրարտուի Պատմութիւնը եւ Քաղաքակրթութիւնը, Հրատ. Հայ Գիտ. Ակադեմիայի 1944, Երեւան: Յ. Մանանդեան՝ Տիգրան Բ. եւ Հոռմ, թարգ. հայերէնէն 1943 թ. Երեւան: Նոյնի՝ Հայաստանի Առեւտուրի եւ Քաղաքներու Մասին — (V-րդ դարէն Քր. Ա. XV-րդ դար Քր. յետոյ) Երեւան 1930 թ Պրոֆ. Գ. Ղսփանցեան՝ Հաթական Աստուածները Հայերու Մօտ, 1940, Երեւան: Գ. Խալաթեան՝ Ուրուագիծ Հայաստանի Պատմութեան, 1910, Մոսկուա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	էջ
Երկու խօսք	3-4
Ներածութիւն՝ աշխարհագրական միջավայր	5-15

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԵԳԻՊՏՈՍ

Ա. Աշխարհագրական եւ ազգագրական միջավայր	17-26
Բ. Նախնական հասարակական կազմը և թիւնխսեան միապետութիւն	27-39
Գ. Մեմֆիսեան թագաւորութիւն 1) Պետական կեանք 2) Մշակոյթ	40-63
Դ. Թէբէյեան միապետութիւն 2160-1700	64-72

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՀՆԴԵՒՐՈՊԱՅԻՆԵՐԸ

Ա. Հնդեւրոպական ժողովուրդներ	73-85
Բ. Պայքար արեւելքի տիրապետութեան համար. Հիւքսոսնէրու արշաւանքը և Եգիպտոսի տիրապետութիւնը 1680-1580	86-92

Գ. Միտանի և Միտանի-եզիպտական մրցութիւնը	93-106
Դ. Հաթական մեծ պիտութիւնը և հաթ եզիպտական մրցութիւնը Մերձաւոր Արեւելքի համար	107-121
Ե. «Ծովերու ժողովուրդներու» արշաւանքը և Հաթերու պետութեան անկումը	122-126
Զ. Եզիպտական հասարակութիւնը և մշակոյթը Թէբէյեան կայսրութեան ժամանակ	127-139
Է. Միտանի և հաթ հասարակութիւնն ու մշակոյթը. 1) Միտանի. 2) Հաթ.	140-157

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՓՈՔԻ ՍԶԳԻՆՐՈՒ ՎԵՐԵԼՔԸ

Ա. Փիւնիկէ	158-177
Բ. Փիւնիկեան քաղաքակրթութիւնը	178-185
Գ. Իսրայէլ	186-199
Դ. Միացեալ թագաւորութիւն Պառակտուած Իսրայէլը	200-217
Ե. Իսրայէլի կրօնը	218-229

ՄԱՍՆ ԶՈՐՐՈՐԴ
ՍԵՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

Ա. Միջազեարք	230-235
Բ. 1) Սուամէրնեք. 2) Սեմական ժողովուրդներու մուտքը	236-246
Գ. Սեմական ժողովուրդները Միջազեարքի մէջ. Ակադացիք.	247-257
Դ. Բաբելոնի առաջին թագաւորութիւնը	258-269
Ե. Ասորեստան	270-289
Զ. Բաբելոնի երկրորդ կայսրութիւնը	290-295
Է. Ասորա-բաբելական մշակոյթը	296-321

ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ՈՒՐԱՐՏՈՒ

Ա. Նախնական շրջան	322-334
Բ. Սուբարի, Հայասա-Նայիրի.	335-354
Գ. Ուրարտու	355-369
Դ. Ուրարտուի պետութիւնը, հասարակութիւնը, մշակոյթը	370-382

ՄԱՍՆ ՎԵՑԵՐՈՐԴ
Ի Ր Ա Ն

Ա. Իրանական աշխարհ	383-386
Բ. Իրանական պատմութեան մարական շրջան	387-398

Գ. Իրանի պատմութեան Պարսից շրջան	399-417
Դ. Հասարակութիւնը և պետութիւնը. Պարսից կայսրութեան կազմակերպութիւնը	418-435
Ե. Կրօնը	436-443

ՄԱՍՆ ԵՕՔԵՐՈՐԴ

ՀԵԼԼԵՆԻԶՄԸ. ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԱՐԵՒԵԼԻՔ

Ա. Աղեքսանդր Մակեդոնացի. Պարսից կայսրութեան փլուզումը	444-456
Բ. Աղեքսանդրի կայսրութիւնը	457-462
Գ. Աղեքսանդրի յաջորդները. Կայսրութեան բաժանումը Հելլենիստական պետութիւններ	463-480
Դ. Հելլենիստական աշխարհի պետութիւնը, հասարակութիւնը և մշակոյթը	481-494

ՄԱՍՆ ՈՒՔԵՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏՅԱՆ

Ա. Նոր ժողովուրդ	495-503
Բ. Հայաստանը Մարերու և Պարսիկներու իշխանութեան տակ	504-510
Գ. Ընկերային կառոյցը	511-515
Դ. Հայաստանը Սելեւկեաններու իշխանութեան տակ	516-521

ՄԱՍՆ ԻՆՆԵՐՈՐԴ

ՀՌՈՍԸ ԱՐԵՒԵԼՐԻ ՄԷՁ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Ա. Հոռմի քաղաքական հոլովոյթը	522-534
Բ. Պոնտոս և Միհրդատ Եւպատոր	535-547
Գ. Պարթեւները — Իրանի նուաճումը	548-556
Դ. Արտաշիսեան հարստութիւնը և Հայաստանի անկախացումն. Արտաշէս 1.	557-564
Ե. Տիգրան Մեծ (140—56)	565-575
Զ. Հոռմ-հայկական պատերազմ և հայկական կայսրոյ թեան փլուզումը	576-590
Է. Պոմպէոսը Արեւելքի մէջ	591-603

Ք Ա Ր Տ Է Ձ Ն Ե Ր

1. Եգիպտոսը 3-րդ եւ 4-րդ հազարամեակներուն.—	40—41
2. Հիւստոնեռու կայսրութիւնը.—	88—89
3. ԱմենՏիս Գ.-ի ժամանակակից պետութիւնները.—	100—101
4. Հաքական եւ Եգիպտական պետութիւնները.—	116—117
5. Պաղեստին, Փիւնիկի եւ Սիւրիա.—	176—177
6. Միջագետք.—	232—233
7. Ասորեսանի կայսրութիւնը.—	276—277
8. Նոր Բաբելոնեան Երզանի պետութիւնները.—	296—297
9. Պասմական Հայասանի բնաշխարհը.—	324—325
10. Հայասանը Ուրարական պետութեան ժամանակ.—	364—365
11. Դարեհի կայսրութիւնը.—	412—413
12. Սելեւկեան կայսրութեան անդամահատումը.—	472—473
13. Հոռմի հանրապետութիւնը եւ արեւելք	532 533
14. Տիգրան Մեծի կայսրութիւնը.—	572 573

